

Գիրքը լուսապատճենվել և համացանցում է տեղադրվել [Գրքամոլ](#) [Նախաձեռնության](#) կողմից:

Բոլորի կողմից սիրված [Գրքամոլ](#)-ը սկսել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ինչ-ինչ պատճառներով ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:

Գրքամոլը, ունենալով իր ուրույն տեղը համացանցում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությունը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:



Միևեկ՝ ընթերցողներ, սրանք մեր առաջին քայլերն են այս ասպարեզում, և մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան մեզ օգնել այս հանրօգուտ գործում: *Էլեկտրոնային գրքերի պատրաստման և մեր կայքում դրանք ներկայացնելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չհետապնդում որևէ եկամուտ*, բացի հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասանելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ և օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք տանը ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող այս հանրօգուտ գործին, ապա գրեք Ձեր ցանկության մասին մեր էլ.- հասցեին՝ [grqamol@gmail.com](mailto:grqamol@gmail.com): Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

Գրքամոլ Նախաձեռնություն

2014 © Grqamol. All Rights Reserved.

URL: [www.grqamol.am](http://www.grqamol.am), e-mail: [grqamol@gmail.com](mailto:grqamol@gmail.com)

ԳՊՐՈՑԱԿԱՆ



ԳՐԱԳԱՐԱՆ

# ՎԻՃԱՌԻ ՀՅՈՒԳԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԵՐԵՔԸ

Դրքանոյ



ՎԻԿՏՈՐ. ՀՅՈՒԳՈ

ԻՆՆՍՈՒՆԵՐԵՔԸ

վեպ

Մտ  $\frac{84 (3)}{Հ 660}$

Ռուսերենից թարգմանեց  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

Հյուզո, Վ.

Հ 660 Իննսուներեքը: Վեպ. Դպր. միջին և բարձր տարիքի  
համար: /Ռուս. թարգմ. Հ. Հարությունյանը.— վերա-  
հրատարակություն.— Եր.: Սովետ. գրող, 1984.—

328 էջ:

«Իննսուներեքը» վեպում Վիկտոր Հյուզոն նկարա-  
գրել է ֆրանսիական առաջին բուրժուական հեղափոխության  
ժամանակաշրջանը՝ հանրապետության պատերազմը հակահեղա-  
փոխության դեմ:

Գրողը գեղարվեստական մեծ ուժով է պատկերել ժողովրդի  
մարդասիրությունը, նվիրվածությունը՝ հայրենիքին ու խաղաղու-  
թյան ձգտումը:

4808020000 (174)

Հ  $\frac{705 (01) 84}{}$

85 «S»

ԳՄԴ. 84. 4 ֆր



## ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈՅԻ «ԻՆՆՍՈՒՆԵՐԵԶԸ» ՎԵՊԻ ՄԱՍԻՆ

### I

Ֆրանսիական մեծ գրող Վիկտոր Հյուգոն (1802—1885) գյուղացիական ծագում ունեցող սպայի որդի է եղել: Հյուգոյի հայրը շատ անգամ է մասնակցել ֆրանսիական առաջին հանրապետության կոիվների և մապոլեոնյան արշավանքներին: «Իննսուներեքը» վեպում, նկարագրելով հանրապետության պատերազմը հակահեղափոխության դեմ Ֆրանսիայի հյուսիս-արևմուտքում (Բրետանում և Վանդեայում), Հյուգոն ասում է. «Իմ հայրը մասնակցել է այդ պատերազմին, նրա մասին ես կարող եմ խոսել ըստ ականատեսի պատմածի»:

Դեպի Վանդեա կատարած արշավանքի ժամանակ գրողի հայրը ծանոթացել է նաև սոցի մի նավապետի դստեր՝ Սոֆի Տրեմբյուշեի հետ, որի հետ էլ ամուսնացել է: Վիկտոր Հյուգոյի մայրը եղել է հեղափոխության կողմից տապալված Բուրբոնների դինաստիայի կողմնակից, ռոյալիստուհի: 1814 թվականին նա ցնծությամբ է ողջունել Բուրբոնների վերադարձը ֆրանսիական գահ: Հայրը համարյա չի ապրել ընտանիքի հետ. նա միշտ եղել է արշավանքների մեջ: Երեխաները մեծացել են ամբողջովին մոր, նրա բարեկամների և դաստիարակների ազդեցության տակ: Այդ միջավայրի քաղաքական աշխարհայացքը արտացոլվել է բանաստեղծի առաջին գրքի՝ «Ներքողների» մեջ (1822): Այդ գիրքը գրվել է դասական ոգով, որն այդ ժամանակ որպես գրական ոճ վերջնականապես ապրել էր իր դարը և, բացի այդ, կապված էր դեռ այն ժամանակ պատմության կողմից, դատապարտված կրոնական ու միապետական գաղափարների հետ:

Հյուգոն երկար կյանք է ունեցել, որի ընթացքում աշխատել է անխոնջ: Իրենից հետո նա թողել է մոտ հարյուր հիսուն հատոր ստեղծագործություններ՝ քնարական ոտանավորներ, մեծ ու փոքր պոեմներ, դրամաներ ու վեպեր: Նրա վեպերից առավել մեծ հռչակ են ստացել «Փարիզի Աստվածամոր տաճարը», «Թշվառները», «Ծովի աշխատավորները», «Մարդը, որ ծիծաղում է» և «Իննսուներեքը»:

Դեռ երիտասարդ հասակում Հյուգոն սկսել է հեռանալ միապետական գաղափարներից և համակվել առաջադիմական գաղափարների:

Հասարակ ժողովրդի բախտը ավելի ու ավելի էր հուզում նրան: Ֆրանսիայում տեղի ունեցող ամեն մի հեղափոխության հետ նա անում էր որպես դեմոկրատ: Այսպես, հուլիսյան հեղափոխության նախօրյակին (1830) Հյուգոն ասում էր, թե՝ «գրականության ազատությունը քաղաքական ազատության դուստրն է», և ավելացնում էր, թե ինքը ձգտում է երկու նպատակի՝ «ազատության՝ արվեստի մեջ և ազատության՝ հասարակության մեջ»: Այդ ժամանակ Հյուգոն արդեն գրական նոր ուղղության՝ ռոմանտիզմի ճանաչված առաջնորդն էր, ըստ որում ոչ թե հետադիմական ռոմանտիզմի, որը քարոզում էր վերադարձ դեպի միջնադարը, այլ՝ առաջադիմական ռոմանտիզմի, մի ռոմանտիզմ, որն ավելի տոգորված էր ժամանակի առաջադիմական գաղափարներով:

Փետրվարյան հեղափոխությունից (1848) հետո Հյուգոն վերջնականապես դառնում է հանրապետական: Երբ Նապոլեոն առաջինի ազգականը Ֆրանսիայում խեղդեց, այսպես կոչված, Երկրորդ հանրապետությունը (1851 թ. դեկտեմբերի 2-ին), բանաստեղծը վճռական պայքար սկսեց ֆրանսիական այդ նորաբուն կայսեր՝ Նապոլեոն III-ի դեմ և ստիպված եղավ հայրենիքի սահմաններից դուրս փախչել:

1870 թվականին, Նապոլեոն III-ի անկումից հետո Հյուգոն վերադառնում է Ֆրանսիա, Փարիզ, որտեղ ժողովուրդը խանդավառությամբ է դիմավորում նրան: Նա ապրում է այն բոլոր դժվարությունները, որ կրում էր Փարիզը պրուսական զորքերով պաշարվելու հետևանքով, թողնելով է տապալում Փարիզը պաշտպանելու մասին և կոչերով դիմում է գերմանական զինվորներին, ապարդյուն փորձ անելով քացատել նրանց, որ հանցագործություն է հեղափոխական Ֆրանսիայի դեմ պատերազմելը:

1871 թվականի մարտի 18-ին հռչակվեց Փարիզի կոմունան, որի ժամանակ քաղաքական իշխանությունն առաջին անգամ երկու ամիս շարունակ գտնվում էր պրոլետարիատի ձեռքում:

Վիկտոր Հյուգոն Փարիզի կոմունայի իսկական իմաստը չէր հասկանում, բայց նրա ջախջախումից անմիջապես հետո գրողը դեմ դուրս եկավ բուրժուական դահիճներին, որոնք հարձակվում էին պարտված կոմունարների վրա: Բուրժուազիան Հյուգոյին պատասխանեց նրանով, որ, այսպես կոչված, Երրորդ հանրապետության պառլամենտի ընտրություններում երկու անգամ տապալվեց նրա թեկնածությունը:

Հյուգոն վախճանվեց 1885 թվականին:

Միլիոնավոր բազմություն էր մասնակցում Ֆրանսիայի ազգային մեծ բանաստեղծ Հյուգոյի թաղմանը: Փարիզի կոմունայի վետերաններն էլ մասնակցեցին հուղարկավորությանը:

Հյուգոն բուրժուական դեմոկրատիայի լավագույն, առաջադիմական ժամանակաշրջանի ամենացայտուն արտահայտիչն էր, վիթխարի եռանդի տեր քաղաքական մարտիկ ու մեծ մարդասեր, աշխատավորների բարեկամը, ժողովրդի բարեկամը:

«Ինստիտուտները» վեպի ձեռագրի վրա կա Հյուգոյի նշումը. «Այս գիրքը ես սկսեցի գրել այսօր, 1872 թվականի դեկտեմբերի 18-ին»:

Իր վեպը նա ավարտել է 1873 թվականի հունիսի 9-ին:

Աշխատավորների պետությունը ստեղծելու ուղղությամբ Փարիզի կոմունայի կատարած անհաջող փորձը բանաստեղծին որդեղ է իր նոր վեպում անդրադառնալ Ֆրանսիայում առաջին բուրժուական հեղափոխության ժամանակներին: 2է՞ որ այն ժամանակ Փարիզի կոմունան՝ հեղափոխության գործը պաշտպանում էր բազմաթիվ արտաքին թշնամիներից և ներքին թշնամուց, որն ամուր հաստատվել էր Բրետանում ու Վանդեայում և փորձում էր պետությանն ստիպել վերադառնալ «սրի ու փարաջանի անամոթ պրիմիտիվ տիրապետությանը»<sup>2</sup>, այսինքն՝ ազնվականությանն ու հոգևորականությանն տիրապետությանը:

Հյուգոյի այս պատմավեպում պատկերված իրադարձությունները հասկանալու համար հարկավոր է ընթերցողին հիշեցնել որոշ պատմական փաստեր և պատմել այն վայրի մասին, որտեղ տեղի է ունենում վեպի գործողությունը, այսինքն՝ Վանդեայի մասին:

Վանդեան Ֆրանսիայի հյուսիսարևմտյան մասն է: Բայց երբ խոսում են Վանդեայի ապստամբության մասին, ապա նկատի են ունենում շատ ավելի մի մեծ տարածություն, քան Վանդեան է: Որովհետև այդ ապստամբությունը տարածվել էր հարևան գավառների մի զգալի մասում, այդ թվում նաև Բրետան թերակղզում:

Այդ երկու մարզերն էլ՝ թե՛ Բրետանը, թե՛ Վանդեան երկրի տրամախտությանն ու մշակույթի ընդհանուր մակարդակից շատ հետ էին մնում: Այստեղ արդյունաբերությունն ու առևտուրը զարգացած չէին: Ժատ հետամնաց էր նաև գյուղատնտեսությունը, այն էլ ոչ միայն գյուղացիական, այլև կալվածատիրական գյուղատնտեսությունը: Տնտեսական հետամնացությունն այդ երկու մարզերը կտրել էր Ֆրանսիայից: Այդ կտրվածությունն ուժեղանում էր նաև նրանով, որ հիմնական բնակչությունն այստեղ խոսում էր ոչ թե ֆրանսերեն, այլ բրետոնական լեզվով, որ խիստ տարբերվում է ամբողջ երկրի լեզվից:

Բրետանի ու Վանդեայի դարավոր հետամնացությունը լայնորեն օգտագործում էր տեղի ազդեցիկ հոգևորականությունը: Բրետոնական

<sup>1</sup> Կոմունա — այսպես էին անվանում իրենց քաղաքային համայնքը Խալիայի և Ֆրանսիայի քաղաքացիները, ինքնավարության առաջին իրավունքներն իրենց ֆեոդալական տերերից ետ գնելուց կամ ետ խլելուց հետո: (1890 թ. գերմաներեն հրատարակության էնգելսի ծանոթագրությունը): Տե՛ս, Կ. Մարքս, Ֆ. Էնգելս — «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», էջ 69, «Հայաստան» հրատ., 1968 թ.:

<sup>2</sup> Կ. Մարքս, Ֆ. Էնգելս — «Լուի Բոնապարտի բրյուների տասնությունը»: Հնար երկեր, հատ. 1, էջ 545, «Հայաստան» հրատ., 1972 թ.:

Ռոգևորականությանն ու ազնվականների Ռակաճեղափոխական ազիտացիային միանում էին մասնազմաթիվ քահանաներ, որոնք, չքանկանալով սահմանադրությամբ Ռավատարիմ լինելու երդում տալ, այստեղ էին փախել երկրի բոլոր ծայրերից:

Մույթ ու տգետ, եկեղեցու սարսափի տակ գտնվող և իրենց ֆեոդալ տերերին ճկիրված բրետոնական գյուղացիության մեջ խիզախությանը, ձեռներեցությանը, հաճախ մասնազգալի ունեցվածքով աչքի էին ընկնում քավական մեծ թիվ կազմող տեղական մաքսանենգները: Նրանք առանց մաքս վճարելու անց էին կացնում գլխավորապես աղ, որի առևտուրը Ռին ռեծիմի ժամանակ պետական գանձարանի մենաշնորհն էր: Հեղափոխությունը վերջ տվեց ժողովրդի համար անասելի ծանր աչդ մենաշնորհին, որը, սակայն, այնքան էլ ծանր չէր բրետոնացիների համար, որոնք առանց մաքս վճարելու բերված աղ էին օգտագործում: Բայց, ահա, աչդ մենաշնորհի վերացումը ծանր հարված եղավ մաքսանենգներին, և նրանցից շատերը Ռեղափոխության թշնամիներ դարձան: Ծատ լավ իմանալով իրենց անտառները, գաղտնի շավիղներն ու անվտանգ շուրջանցի ճանապարհները, բոլոր խով ու գաղտնի տեղերը և Ռիանալի տիրապետելով զենքին՝ անբավական մաքսանենգները, քնակամարաբ, կանգնում էին Ռակաճեղափոխական գյուղացիական Ռրոսակախմբերի առաջնորդ ազնվականների կողքին: Մաքսանենգ Ժան Կոտրո-Շուանի, այսինքն՝ «բուի» մականունով (նրան այդպես էին կոչում իր արձակած բուի ճիշի պատճառով, որը նրա համար ազդանշան էր ծառայում) ամբողջ ապստամբությունը կոչվեց շուանական:

Հեղափոխությունն ամբողջ երկրում ֆեոդալական պարտավորությունները վերացրեց: Բայց այս բարի գործն էլ այնքան շոշափելի չէր, որովհետև այստեղ տարածված էր մանր Ռողակտորների վարձակալությունը: Ֆրանսիական առաջին բուրժուական հանրապետությունը բղձնագորավեց եկեղեցիների և արտասահման փախած արիստոկրատների կավածքները և սկսեց վաճառել խոշոր Ռողակտորներով: Սրանով մանպաստում էր գյուղական բուրժուազիայի ազդեցիկ խավի առաջացմանը, որը թշնամի էր նախկին ֆեոդալական սեփականատերերին և պաշտպանում էր հանրապետությունը: Բայց Բրետանի, Վանդեայի և հարևան գավառների Ռողի մանր վարձակալները, որոնք իրենք էին մշակում Ռողը և սպասում էին, թե այն իրենց կմնա, Ռուսախաբ էին եղել: Եվ ազնվականությունն ու Ռոգևորականությունը Բրետանի ու Վանդեայի հետամնաց գյուղացիության մեջ Ռակաճեղափոխական ազիտացիա մղելիս հենց այդ էլ օգտագործում էին:

Խմորումն սկսվել էր դեռ 1790 թվականին: Եվ որքան զարգանում էին իրադարձությունները երկրի ներսում և վատանում էր նրա արտաքին քաղաքական դրությունը, այնքան ուժեղանում էր աչդ խմորումը: Հիշենք մի քանի պատմական փաստ:

1791 թ. օգոստոսի վերջերին տեղի ունեցավ պրոսական թագավոր Ֆրիդրիխ-Վիլհելմ II-ի, կայսր Լեոպոլդ II-ի և ֆրանսիական վտարանդիների ներկայացուցիչ կոմս դ'Արտուայի համաձայնությունը՝ միասնա-

կան գործողություններ սկսել ֆրանսիական հեղափոխությունը խեղդելու համար: Հետևյալ տարվա ապրիլին սկսվեց Ֆրանսիայի պատերազմը Ավստրիայի հետ: 1792 թ. հուլիսի 5-ին ֆրանսիական կառավարությունը լոգունգ արձակեց՝ «Հայրենիքը վտանգի մեջ է»:

Ավստրիացիների, պրուսացիների, ռուսենցիների և վտարանդիների միացյալ ուժերը՝ դուքս Կալոս Բրաունշվեյգոսի հրամանատարությամբ ներխուժեցին Ֆրանսիա: Լյուդովիկոս XVI-ը, որ այն ժամանակ դեռ Ֆրանսիայի սահմանադրական թագավորն էր, դավալից էր վտարանդիներին ու օտարերկրյա կառավարություններին՝ ընդդեմ իր երկրի և իր ժողովրդի: Սակայն 1792 թ. օգոստոսի 10-ին տեղի ունեցած հեղաշրջման հետևանքով նա բոլորովին հեռացվեց Ֆրանսիայի կառավարումից, իսկ օգոստոսի 13-ին իր ընտանիքի հետ բանտարկվեց: Սեպտեմբերի 21-ին ներկայացուցչական Ազգային ժողովն իրեն ցրված հայտարարեց, և նրա փոխարեն սկսեց գործել Ազգային կոնվենտը, որը սեպտեմբերի 25-ին արդեն Ֆրանսիան հռչակեց հանրապետություն:

Հեղափոխական բանակները թշնամիներին պարտության մատնեցին սեպտեմբերի 20-ին՝ Վալմի մոտ, իսկ նոյեմբերի 6-ին՝ Ժեմապ գյուղի մոտ:

1793 թ. հունվարին Լյուդովիկոս XVI-ը գլխատվեց:

Ֆրանսիայի դեմ ստեղծվեց, այսպես կոչված, առաջին կոալիցիան, որին մասնակցում էին Անգլիան, Հոլանդիան, Սարդինիան, Իսպանիան, Ավստրիան և Պրուսիան: Հանրապետական բանակի զենքերով Դյունուրյեի դավաճանությունը, որը մարտ ամսին պարտություն էր կրել Կոբուրգի իշխանից և փախել ավստրիացիների մոտ, մի նոր սպառնալիք էր ստեղծել Ֆրանսիայի համար, որտեղ հակահեղափոխական ազդեցիկ ուժեր օրեցօր ուժեղանում էին: Հարկ եղավ հարկերն ավելացնել և հայտարարել մեծ զորածողով, միջոցառումներ, որոնք հրետանուն և վանդեալուն ապստամբության առիթ ծառայեցին: Վանդեալուն և Բրետանուն գործող անգլիական դիվերսանտները, լրտեսներն ու պրովոկատորները ամեն կերպ աշխատում էին ուժեղացնել քրետոնական գյուղացիության ունկնդր խավերի դժգոհությունը հանրապետական իշխանությունների այնպիսի միջոցառումներից, ինչպիսիք էին պետական փոխառությունները, անասունների և հացի ավելցուկների բռնագրավումը, գյուղատնտեսական մթերքների առավելագույն գների օրենքը և այլն: Անգլիայի գործակալները ամեն կերպ ձգտում էին նաև ծախողել զորածողովը հեղափոխական բանակի համար, մի բանակ, որը պիտի պաշարեր Անգլիայի գլխավորած երկրների կոալիցիայի դեմ: Առանց անգլիական աջակցության ապստամբությունն այնպիսի թափ չէր ստանա և այնքան երկարատև չէր լինի:

Ապստամբներն սկզբնական շրջանում գործում էին մանր ջոկատներով: Այդ ջոկատներն իրենց ուժերը միավորում էին քաղաքների և հանրապետական խոշոր գործարարների վրա հարձակվելու ժամանակ:

Մայիսի վերջերին և հունիսի սկզբին վանդեացիները խոշոր հաղթանակ տարան հանրապետական ուժերի դեմ, բայց Նանտ քաղաքի



Վրա հարձակվելիս (1793 թ. հունիսի 24-ին) նրանք ջախջախվեցին:

Վանդեալների կորուստներն արագորեն լրացվեցին, և հանրապետությունն ստիպված եղավ խոովարարների դեմ ուղարկել երկու բանակ, որոնք և ծանր պարտության մատնեցին նրանց ղեկավարների 12-ին և 5-րդ մոտ, իսկ ղեկավարների 23-ին՝ Սավենի մոտ:

Վանդեալների գլխավոր ուժերի ջախջախումից հետո դեռ մնացել էին մանր ջոկատներ, որոնք շարունակում էին զգալի հարվածներ հասցնել հանրապետականներին:

1794 թվականի վերջերին Վանդեային զսպելու համար ուղարկվեց գեներալ Գոշլը: 1795 թ. հուլիսի 16-ին նա ծովը նետեց Կիբերոն թերակղզում ակի իջած անգլիացիների ու ֆրանսիական վտարանդիների դեսանտը, որին ծովափին միացել էին հինգ հազար շուաններ, իսկ մի տարի անց արդեն խոտվությունը ճնշվեց:

Բայց դրանից հետո էլ զսպված գավառներում դեռ երկար ժամանակ մոլեգնում էին անջատ-անջատ հակահեղափոխական հրոսակախմբերը:

Իր վեպում Հյուգոն պատկերել է այն իրադարձությունները, որ տեղի են ունեցել Վանդեայում և Բրետանում՝ 1793 թվականին:

«... Որքան էլ քիչ հերոսական է բուրժուական հասարակությունը, նրա լույս աշխարհ գալու համար պահանջվեցին հերոսություն, անձնագոհություն, տեղոր, քաղաքացիական պատերազմ և ժողովուրդների ճակատամարտեր»<sup>1</sup>: Ֆեոդալիզմը ջախջախած և բուրժուազիայի տիրապետություն հաստատած հեղափոխության մասին Կարլ Մարքսի այս խոսքերում գծված է հենց այն, ինչ աշխատել է ցույց տալ Վիկտոր Հյուգոն իր վեպում:

Այս վեպը գրել է մեծ բանաստեղծը, և հենց «Իմնասուներեքի» ոճը շատ կողմերով համապատասխանում է պատկերված այն իրադարձությունների բնույթին, որոնց մասին Կ. Մարքսն ասել է. «Բուրժուական հեղափոխությունները, ինչպես, օրինակ, 18-րդ դարի հեղափոխությունները սրընթաց գնում են հաջողությունից հաջողություն, նրանց մեջ դրամատիկական էֆեկտները մեկը մյուսից շլացուցիչ են, մարդիկ ու իրերը կարծես թե քենզալական կրակով են լուսավորված, յուրաքանչյուր օրը շնչում է էքստազով»<sup>2</sup>:

### III

Այս ստեղծագործության մեջ առաջին պլանում ժողովուրդն է: Փարիզի կոմունան 1793 թ. մայիսի սկզբին Վանդեա ուղարկեց

<sup>1</sup> Կ. Մարքս, Ֆ. Էնգելս — «Լուի Բոնապարտի բրյուսների տասնութը»: Ընտիր երկեր, հատ. 1, էջ 543, «Հայաստան» հրատ., 1972 թ.:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 545:

տասներկու հազար կամավոր։ Բայց մայիսի վերջերին վանդեացիները  
ճրանցից արդեն սպանել էին ութ հազար մարդ։

Անանցանելի խիտ անտառները խոռվարարների դաշնակիցներն էին։  
Ահա Սողոմեի անտառով, որտեղ արդեն այնքան արշունալի չարա-  
գործություններ են կատարվել, զգուշությամբ առաջ է շարժվում հան-  
րապետականների մի ջոկատ։ «Սվիմների սուր ծայրերից բարձր ճովո-  
ղում էին թռչունները», — գրում է Հյուգոն, օգտվելով հակադրության  
իր սիրած եղանակից, անտիթեզից, որ այնքան բնորոշ է նրա «Իննսուն-  
երեքը» ամբողջ գրքի համար։ Մերթ ընդ մերթ հանդիպում էին  
ոչ վաղուցվա իշխանների հետքեր։ Զինվորները դարանի էին սպա-  
սում... Եվ իրոք, թփերի մեջ ինչ-որ բան է շարժվում... Մի րոպե չան-  
ցած՝ կասկածելի վայրն արդեն շրջապատված էր։ Մի քանի տասնյակ  
հրացանների փողերն ուղղված են թավուտի մթին կենտրոնին։ Բայց  
հենց այն րոպեին, երբ սերժանտը պատրաստ էր «կրակ» հրամանը  
տալու, ջոկատի մարկիտանտուհին առաջ անտվելով գոչում է՝ «Սպա-  
սեցե՛ք»։ Նա թփերի մեջ տեսել է մի կին՝ երեք փոքրիկ երեխաներով։

Սկսվում է կնոջ հարցաքննությունը։ Զե՛ որ մա կարող է շուռանների  
ուղարկած լրտեսը լինել։ Բայց ո՛չ, դա միանձնուհիների դաստիարակած  
խավարամիտ գեղջուհի է, որի վանդեացի ամուսինը երեք օր դրանից  
առաջ սպանվել է հանրապետականների հետ տեղի ունեցած ընդհար-  
ման ժամանակ, կոպելով թագավորի համար, իր տեր կալվածատիրոջ  
և կյուրեի (քահանայի) համար։ Նա կոպել է նրանց համար, թեև թա-  
գավորը կախել է նրա հորը։ Նա կրակել է հանրապետականների վրա,  
թեև կալվածատերը ծեծով հաշմանդամ է դարձրել իր աներոջը։ Նա  
պալքարել է նրանց համար, թեև գյուղական քահանան իր կնոջ պապին  
մեղադրանք առաջադրելով, նրան տաժանակրության է ուղարկել սովել։  
Հանրապետական զինվորներից մեկը մինչև հոգու խորքը վրդովվում է,  
որ, այնուամենայնիվ, թագավորին, ազնվականներին ու եկեղեցուն հա-  
ջողվել է ոտքի հասել այդ խավարամիտ վանդեացի գեղջուկներին,  
հրացան տալ Միշել Ֆլեշարի ամուսնու ձեռքը և ստիպել նրան, որ  
կրակի իր ազատարարների վրա, ձեռք բարձրացնի իր հայրենիքի,  
Ֆրանսիայի, հանրապետության վրա, իր թշնամիները համարելով նրանց։

Հետագա հարցաքննությունները համոզում են, որ այդ գյուղացի-  
ների գիտակցությունը դեռ այնքան չի հասունացել, որ հասկանան  
հայրենիքի գաղափարը, որ ծննդավայրը, մի ինչ-որ Սիսկուանյար ագա-  
թակ, կամ, լավագույն դեպքում, իրենց գավառը՝ Բրետանը, վանդեան  
նրանց գիտակցությունից դուրս են վանել հայրենիք հասկացողությունը։  
Իսկ Ֆրանսիան ի՞նչ հայրենիք է, որ։ Նա այնքա՛ն հեռու է, մա մի  
ուրիշ երկիր է՝ անհասկանալի լեզվով... Եվ միայն թագավորի սըր-  
բազան անձը և միասնական կաթոլիկական եկեղեցին են, որ նրանց  
ըմբռնողության մեջ միավորում են այդ երկու երկրները։ Այսպես է  
Հյուգոն ցույց տալիս գյուղացիների անջատվածությունը, վանդեայի  
գյուղացիության խավարամտությունը։

Այդ մույն առաջին գրքում Հյուգոն մի քանի շեշտված գծերով տա-

էն է երկու ժողովրդական բնավորություն, որանք են ջոկատի մարկիտանտութիւն, «մի բարի կիւն ու քաջ զինվոր», ինչպէս այդ կիւն ինքն է իրեն կոչում, և սերժանտ Ռադուրը:

Սրանք երկուսն էլ համոզված հանրապետականներ են, մասնակցում են քաղաքացիական պատերազմին և անողոք ևն, երբ պահանջում են հանգամանքները: Որքա՞ն հանգիստ է պատմում մարկիտանտութիւն թագավորի զխատման մասին, որքա՞ն հաստատական է սերժանտ Ռադուրը իր զինվորական պարտքը կատարելիս: Բայց ըստ էության մարկիտանտութիւն էլ, սերժանտն էլ ժողովրդի մարդասեր զավակներն են: Նրանց համար ծանր է եղբայրասպան պատերազմը, նգովում են այն, թեպէտն գիտակցում են նրա ճակատագրական անհրաժեշտությունը: Մարկիտանտութիւն երբեք չի կարող մի գազաթ օդին մերժել մեռնող թշնամուն, և ահա այժմ էլ նա իր կոշիկները տալիս է այրիացած վանդեացի կնոջը, իսկ ոտաբորիկ սերժանտը հացի կտորներ է տալիս Ֆլեշարի երեխաներին և չի կարողանում իր արցունքները զսպել, երբ նրա երեսին ժպտում է կապուտաշյա պստիկ ժորժետան: Ռադուրի առաջարկությամբ Կարմիր գոակ հանրապետական գումարտակը (Կարմիր գոակն ազատության սիմվոլ էր) որդեգրում է սպանված վանդեացի թշնամու երեք երեխաներին:

Այս գրքի ամբողջ բովանդակությամբ Հյուգոն ասում է, որ ժողովուրդը բարի է, բարի է մոլեհիսկ այն ժամանակ, երբ պայքարելով հեղափոխության համար, պայքարելով երկրի ապագայի համար, անցյալի հետ ընդհարվելիս ստիպված է անողոք լինել:

Հյուգոն բուրժուազիային ճիշեցնում է, որ նա տիրապետության է հասել միայն ֆեոդալական հասարակության դեմ ժողովրդի մղած անձնուրաց պայքարի շնորհիվ: Նա բուրժուազիային ներշնչում է այն միտքը, թե նա ինչ պատմական պարտք ունի երկրի հասարակ մարդկանց, և աշափսով թթասրտություն է քարոզում ժողովրդի նկատմամբ ու բորբոքում բուրժուազիայի այն գազանային տեռորիզմի դեմ, որ գործադրեց նա XIX դարի յոթանասունական թվականներին: Այսպէս, իր «Իմնումներեքը» վեպում Հյուգոն գեղարվեստական միջոցներով աշխատում է հասնել այն նպատակներին, որոնցով այն տարիներին ռզեշնչված էր նրա գործունեությունը որպէս քաղաքական մարտիկ, հոետոր ու հրապարակախոս:

#### IV

Եվ այսպէս, առաջին գրքում ժողովուրդն է: Միայն ժողովրդի շնորհիվ հաղթանակեց այն հեղափոխությունը, որի համարյա բոլոր պտուղները բաժին ընկան բուրժուազիային և ոչ թե ժողովրդին, որն այնպէս արիաբար կրեց այն տարիների զարհուրելի գրկանքները և իր հարյուր հազարավոր կյանքերով վճարեց 1789—1814 թվականների բոլոր նվաճումների համար:

Երկրորդ գրքում պատկերված են ժողովրդի թշնամիները՝ ֆրանսիա-

կան վտարանդի ազնվականները, որոնք ապրուստի միջոցներ էին ստանում օտարերկրյա տերութիւնից:

Անգլիան այդ թափափուկներին ոսկի է մատակարարում և հեղափոխության դրամական տնտեսութիւնը վիժեցնելու համար կեղծ թղթադրամների կապոցներ է տալիս նրանց:

Անգլիան իր ռազմաճակատներն է տրամադրում նրանց և ծովային դեսանտներ է պատրաստում Ֆրանսիայում ափ հանելու համար:

Անգլիան ամենաժամանակակից և ամենամահաբեր զենք է մատակարարում նրանց, պահանջելով, որ նրանք անգթորեն թափեն իրենց ժողովրդի արյունը և որքան կարելի է ավելի խոր վերքեր հասցնեն իրենց հայրենիքին:

Անգլիայի գործակալները, լրտեսներն ու դիվերսանտները ցրված են հեղափոխությանը բռնված ամբողջ երկրում, և Անգլիան պնդելով անդադրում բորբոքում է քաղաքացիական պատերազմի բոցը:

Ժողովուրդը մարդասեր է, ազնվականները՝ սարսափելի դաժան:

Կոմս Բուաքերուլոն հիացած է նրանով, որ վանդեական պարագլուխներից մեկը «...կապույտներից հեշտ ու համբիստ երեք հարյուր մարդ զնդակահարեց, նախապես ստիպելով նրանց, որ իրենց գերեզմանները փորեն»:

Իսկ շնայե լա Վյովիլը նրան պատասխանում է. «Այդ ամենը շատ լավ, բայց ես միևնույն բանը նրանից վատ չէի անի»:

Չկա ավելի կատաղի գազան, քան անցյալը, որ պայքարում է ապագայի դեմ, ներշնչում է Հյուգոն իր ընթերցողին և՛ այս գրքի, և՛ ամբողջ վեպի բովանդակությամբ: Մեր ժամանակներում այս նույնը հաստատեց Ֆաշիզմը և հաստատում են նրա հետ մրցող նրա հոգեկան ժառանգորդները, համաշխարհային տիրապետության նոր հավակնորդները՝ ամերիկյան քաղաքագետները, գեներալներն ու մոնոպոլիստները:

Որպիսի՜ հեզմանքով են հնչում նույն լա Վյովիլի խոսքերը, երբ նա իր ասածին ավելացնում է. «Ռազմական մեծ սխրագործությունները բնատուր ազնվությունն են պահանջում այդ կատարողներից: Պատերազմը ասպետների գործ է...» Բան չունենք ասելու, լավն են այդ ասպետները, լավն է այդ «բնածին ազնվությունը». վաճառվել օտարերկրյա պետությանը, ծովային հետևակի դեսանտ վերցրած նավարկել նրա ռազմաճակով, բերելով կեղծ թղթադրամների կապոցներ և «գթաարտություն չճանաչող անողորմ զորապետ», մի գեներալ, որը պիտի գլխավորի վայրենի, անողորմ խռովությունը հարազատ երկրի դեմ: Նավարկել և երազել հանրապետականների մասսայական զնդակահարությունների տեսարաններ, միաժամանակ նաև Փարիզի թատրոնների մասին, որոնց մասին, ինչպես պարզվում է, երազում է նաև Ֆրանսիայի մի ուրիշ թշնամին՝ պրուսական թագավորը, որը նախապես արդեն իր համար օթյակ է պատվիրել:

«Վելմոր»-ի անձնակազմը ոչնչացվում է շնորհիվ հանրապետության հեղափոխության, որն իր տեղեկատուների մեջ է ներգրավել այն իշխանների վստահելի մարդուն, որոնք անգլիական շտաբում նստած՝

Ռակահեղատիտական աշխատանքն էին ղեկավարում: Բայց մարկիզ դը Լանտենակին, որը պետք է ի մի գումարելով մի անհաղթահարելի Ռոդեն դարձներ վանդեական ապստամբության անջատ-անջատ օջախները, հաջողվում է միայն մեկ մավաստու հետ փրկվել մի փոքրիկ մակույկով:

Եվ Հյուգոն ֆրանսիական անձնակազմ ունեցող անգլիական ռազմամասի մասին այս պատմությունը վերջացնում է այսպես.

«... Հետո ծովի վրա ամեն ինչ լռեց: «Վելյմոր» ռազմամասը կործանվեց, բայց փառքի չարժանացավ. հայրենիքի դեմ կռվելով հերոս դառնալ չի կարելի»:

## V

Հերոս լինելու համար չէ մասն դը Լանտենակը, որ անողորմ հետադիմական է, ունի իր կատաղի բոլոր մախապաշարումները, խորապես արհամարհում է ժողովրդին:

Ինչի՞ համար է պայքարում Լանտենակը:

Անուսմանափակ, բացարձակ միապետության համար մի երկրում, որտեղ արդեն տեղի է ունեցել պատմության մեջ խոշորագույն սոցիալական հեղաշրջում, որտեղ բուրժուազիան իշխանության գլուխ անցնելով փոխարինել է ազնվականությանը, որտեղ շարժման մեջ են մտել ժողովրդական ամենալայն մասսաները: Հենց որ մա ուրք է դնում բրետոնական Ռոդի վրա, նրա հրամանով բոցավառվում են գյուղերը, սկսվում են մասսայական զնդակահարություններ: Նա չի խնայում նույնիսկ կանանց ու ծերունիներին, պատանդ է վերցնում երեխաներին: Նա հավատարիմ սերունդն է Ռիմ ֆեոդալների, որոնք «կարողանում էին դատ ու դատաստան տեսնել», օրինակ, մարդկանց մահապատժի էին ենթարկում՝ տարբեր կողմեր շարժվող հատուկ անիվներով նրանց երկու կտոր անելով: «Ահա այս նույն սեզյակում... պատի վրա,— ասում է նա,— նույնիսկ մնացել են անիվների հետքերը: Մենք կատակ անել չենք սիրում»:

«Նրա օգնականը,— ասում է Հյուգոն,— իսկապես գազանամամ մի արարած էր, որն ուներ երկու մականուն, առաջինը՝ «Կապույտների սարսափ», որովհետև հանրապետականների հետ շատ դաժան դատաստան էր տեսել և երկրորդը՝ «Իմանուս», որ նշանակում է անասնի ալլանդակ արարած, որովհետև այդ մարդու արտաքինում կար սարսափ ազդող մի ինչ-որ գարշելի, անմարդկային բան»: «Վանդեայում,— շարունակում է Հյուգոն,— բոլոր խոռվարարները վայրենի էին, բայց... (նա) բարբարոս էր: Նրա դեմքին արտացոլվում էր իր նողկալի Ռոգին... մարտի մեջ նա դևի պես անվեհեր էր, իսկ մարտից հետո՝ վայրագ: Նա ընդունակ էր անձնուրաց նվիրվածության և ամենակատաղի դաժանության... Նրանցից կարելի էր սպասել ամենազարհուրելի արարքներ... Մարկիզ դը Լանտենակը Ռույս էր դնում նրա դաժանության վրա...»



Այի դուրս գալուց հետո Լանտենակին փրկում է իր իսկ կազվածքում ապրող մի մուրացկան, փրկում է՝ ամենին էլ չհրապուրվելով այն հույսով, թե Լանտենակի գլխի համար մի ամբողջ կարողություն կըստանա: Տեղմարշի այս մեծահոգության արդյունքը երևան է գալիս հենց հետևյալ օրը. սպիտակները ջախջախում են մոտերքում գտնվող հանրապետականների ջոկատը, նրանք կրակի են մատնում այն ազարակը, որը դիմադրություն չի ցույց տվել հանրապետականների ջոկատին, գնդակահարում են բոլոր գերիներին (որոնք մոտ ութսուն հոգի էին), այդ թվում մարկիտանուտում ու Կարմիր գդակ գումարտակի որդեգրած երեք մանուկների մորը և, վերջապես, այդ մանուկներին որպես պատանդ տանում են իրենց հետ: Եվ այս ամենը՝ Լանտենակի հրամանով:

Այսպես Հյուզոն, հաճախ տառապելով վերացական մարդասիրությանը, հաշվի չառնելով հանգամանքները և այնպիսի «աբսուրդակտ հումանիզմի» հնարավոր հետևանքները, այստեղ մերկացնում է իր երբեմնի վերացական հումանիզմը, Տեղմարշին հետո ստիպելով ասել. «Թե որ ես իմանայի...»

Տեղմարշը ծերունի է, կյանքից կտրված մի երագող: Բայց չէ՞ որ Գովենը, այդ երիտասարդ, հեղափոխությանը նվիրված քաջ ու տաղանդավոր զորապետը նույնպես երագող է: Նրան հուզում է գազան Լանտենակի վարմունքը, որը փրկում է Միշել Ֆլեշարի երեխաներին, փրկում է, չնայած հրով կամ գիլիոտինով կործանվելու անխուսափելի սպառնալիքին: Դեռ ավելին. երեք մանուկների՝ Ռենե-Ժանի, Գրո-Ալենի և Ժորժետայի պատճառով Լանտենակը զոհաբերում է միապետության, ազնվականության ու եկեղեցու գործը, որոնց պաշտպանությանն էր նվիրաբերել նա ինքն իրեն դեռ երիտասարդ հասակից: Գովենը չի կարող հանդուրժել, որ հանրապետականն իր մեծահոգությանը գիջի ոռյալիստին, և նա ազատում է Լանտենակին, զոհաբերելով ինքն իրեն, գիլիոտինի դանակի տակ դնելով իր գլուխը:

Եվ մի՞թե աբսուրդակտ հումանիզմի մերկացում չէ Գովենի ազնիվ ու քաջարի հայտարարությունը դատարանին.

«Տարված լինելով հարցի մի կողմով, ես աչքաթող եմ արել մյուս կողմը: Մեծահոգի վարմունքը, որին ես ականատես եղա, իմ աչքում ջնջեց անթիվ ոճիրները: Ծերունին... նրա փրկած մանուկները... այս ամենը կանգնեցին իմ և իմ պարտականության միջև: Ես մոռացա միացող գլուղերը, ամայացած դաշտերը, բնաջնջված գերիներին, սպանված վիրավորներին, գնդակահարված կանանց: Ես մոռացա, որ Ֆրանսիան վաճառել են անգլիացիներին և ազատեցի հայրենասպանին: Ես մեղավոր եմ: Գուցե կռվա, թե այս ասելով ես իմ դեմ եմ խոսում: Այդ ճիշտ չէ, ես խոսում եմ իմ օգտին: Երբ մեղավորը խոստովանում է իր մեղքը, նա փրկում է միակ բանը, որ արժե փրկել՝ իր պատիվը... Դատապարտեցեք ինձ մահվան... (Դա) ոչ միայն արդար կլինի, այլև անհրաժեշտ»:

Եվ Սիմուրդենը, ֆրանսիական հանրապետության կոմիսարը, Գո-

վեճի դաստիարակը, որը նրան սիրում էր ձոր ւշեւ, անձնուրաց ու անընկճելի Սիմուրդենը, որն ամբողջովին կամք էր, բոլորանվեր ծառան հայրենիքի, որն այդ տարիներին առաջավոր մարդկության փարոսն էր, այն Սիմուրդենը, որ երկու անգամ փրկել էր Գովենի կյանքը, նրան մահվան է դատապարտում, որովհետեւ ինքն էլ գտնում է, որ դա արդար է և անհրաժեշտ:

## VI

Գովենի մահապատժի ճախօրյակին Սիմուրդենը գալիս է նրա մոտ, բանտ: Գովենը պարզ ու արիաքար է զրուցում իր ուսուցչի, ավելին՝ իր թեո: Նա պատրաստ է մեռնելու, գտնում է, որ արժանի է մահվան, և եթե նրան առաջարկեին փախչել, նա կհրաժարվեր:

Իսկ ինչի՞ մասին են զրուցում այդ մարդիկ:

Հայրենիքի ապագայի մասին, մարդկության ապագայի մասին: Նրանք երկուսն էլ միաբերան դրական ու բարձր գնահատական եզրույթներ ֆրանսիական հեղափոխությանը, որը Հյուգոյն Վոլտերի մասին արտասանած իր ճառում (1878) անվանել է «Օրհնյալ ու վեհապանծ աղետ, որով ավարտվել է անցյալը և սկսվել ապագան»: Սակայն միջնդեռ Սիմուրդենը հետո չի գտնում ուշիմ բուրժուազիականացման, որը հեղափոխություն է կատարում և չի տեսնում իր հասարակական իդեալների պատմական ու դասակարգային սահմանափակությունը, Գովենը հետախույզ հայացքով ապագային նայելով, երազում է այնպիսի հասարակարգ, երբ աղքատներ չեն լինի, պատերազմներ չեն լինի, մի հասարակարգ, որը կազատագրի երկրի արտադրողական ուժերը և հարյուրապատիկ կբարձրացնի ժողովրդի ընդհանուր բարեկեցությունը:

Գովենը պահանջում է կնոջ ու տղամարդու հավասարություն: Նա չի թաքցնում իր անբավականությունը բուրժուական այն հարաբերություններից, որոնք իդեալ են Սիմուրդենի համար: Նա ավելին է ուզում: Եվ նա Սիմուրդենի հետ խոսում է այդ ապագա կարգերի որոշ գծերի մասին, որոնք ծագում են նրա մտքում (ասենք «Կոմունիստական մանիֆեստ»-ի խոսքերով) «Պոռթկումի առաջին կատարված ճախագացումներից դեպի հասարակության ընդհանուր վերափոխում»: Նա արդեն քննադատաբար է վերաբերվում այն ֆրագմենտին և իլյուզիաներին, որոնք բխում են այն տարիներին ստեղծված հեղափոխական տրադիցիայից: Նա ջերմորեն հավանություն է տալիս նրան, որ բուրժուական հեղափոխությունը «անողորմաբար պատառոտել է... ֆեոդալական խայտաբղետ կապանքները, որոնք մարդուն կապում էին իր «բնական տիրակալների հետ» (թագավորի, սենյորի, եկեղեցու — Ն. Ս.), բայց նրա խոսքերի մեջ վախ է զգացվում, թե չէի՞ն՝ հաղթանակած բուրժուազիան «մարդկանց միջև շփոթման որևէ ուրիշ կապ, բացի առկա շահից, անսիրտ, «կանխիկ դրամից»»:

«Կոմունիստական մանիֆեստ»-ից այստեղ բերված չորս բառվածքը (Գովենն այն չէր կարող իմանալ 1793 թվականին և ուրիշում տարի

ւանց այն մկատի չի ունեցել Հյուզոն) Ռիանալիորեն բնորոշում են Դո-վեմի ու Սիմորդենի Ռիմնական տարածայնությունների էությունը:

Գովեմի տարակուսանքները մասամբ եղել են Հյուզոնի տարակուսանքները:

Բանաստեղծը գովաբանում էր ֆրանսիական առաջին բուրժուական ճեղափոխությունը: Բայց 1878 թվականին Հյուզոն չէր կարող չտեսնել, որ արդեն պատմության ասպարեզ է մտել մի նոր դասակարգ՝ պրոլետարիատը: Հյուզոն տեսնում էր «1848 թվականին Փարիզի Ռունիսյան ապստամբության պարտությունը՝ պրոլետարիատի և բուրժուազիայի միջև տեղի ունեցած այդ առաջին խոշոր ճակատամարտի պարտությունը»: Նա տեսավ պարտությունը «Փարիզի կոմունայի, երբ առաջին անգամ քաղաքական իշխանությունը երկու ամիս շարունակ գտնվում էր պրոլետարիատի ձեռքում»: Այս ամենը իր ազդեցությունն է ունեցել նրա վրա «Իննսուններեքը» վեպը գրելիս: Դեմոկրատ Հյուզոն սկսում է հասկանալ, որ բուրժուազիան իսկական դեմոկրատիայի թըշնամին է դառնում: Իր մահից քիչ առաջ, 1878 թվականին Հյուզոն ասել է. «Իմ վերջին խոսքում դուք կլսեք առաջադիմության համոզիստ, բայց անասան հաստատումը»: Մեր ժամանակներում ամբողջ առաջադեմ մարդկությունը տեսնում ու հասկանում է, որ կապիտալիզմը թշնամի է պրոգրեսիվ, ինչպես թշնամի է նաև ժողովուրդների խաղաղությանը:

Լիոնի բանվորների վերաբերյալ Փարիզի քաղաքացիներին ուղղված դիմումի մեջ Հյուզոն ասել է. «Խաղաղությունը ապագայի խոսքն է, 20-րդ դարի անունն է: Դե, ուրեմն, անդադրում խաղաղությունն ազդարարենք ամբողջ աշխարհին, բայց անենք այն ամենը, ինչ պարունակում է այդ վեճ խոսքը... Ջորաժողովի ենթարկվող բանակների ամեղ ուրվականի մեջ, այդ ամբողջ մուսլ ուղղական վակիսանալիայի մեջ զգացվում է անհաղթահարելի ձգտումը խաղաղության: Ես կրկնում եմ, ես պնդում եմ. ո՞վ է պատերազմ ցանկանում: Թագավորը... ո՞վ է խաղաղություն ցանկանում: Ժողովուրդները: Ինձ թվում է, որ ներկայումս ընդհարում է նախապատրաստվում պատերազմի (որին ձեռք տրվում է անցյալը) և խաղաղության միջև, որին ծարավի է ներկան»:

Բայց ինչպե՞ս սանձել պատերազմի հրձիգներին, ի՞նչ հակադրել նրանց ուժին: Սրան Հյուզոն պատասխանել է. «Հզոր հակահարված: Ժողովուրդները համաձայնության, դաշինքի մեջ են մտնում, օգնության ձեռք են մեկնում իրար... Քաղաքացիներ, խաղաղությունը կհաղթի»:

Հյուզոնի բազում ասույթների հրատապ լինելը մշել է «Պրավդա» թերթը՝ 1950 թվականի նոր տարվա համարում:

«Այսօր որքա՞ն հրատապ են հնչում այն ցատունալից խոսքերը, որ հումանիստ գրող Վիկտոր Հյուզոն մտնել է ֆրանսիայի, և ոչ միայն ֆրանսիայի ռեակցիոներների երեսին. «Կրճատեցեք ընտրողների ցուցակը որքան կամենաք, ջնջեցեք մեր քաղաքացիների միլիոնավոր անուններ, զրկեցեք ֆրանսիացիներին քաղաքական հավասարություն»:

մից, այդ ամենը ձեր ձեռքին է, բայց դուք երբեք չեք կարող արմատախիլ անել այն հակակրանքը, որ ներշնչում էք դուք մեր ամբողջ ժողովրդին, երբեք չեք կարող մարդկանց հիշողությունից ջնջել այն ճակատագրական սխալները, որոնցով այնքան հարուստ է ձեր կառավարումը: Դուք չեք կարող կանգնեցնել պատմության ընթացքը, դուք չեք կարող դիմադրել դեմոկրատական գաղափարների աճմանը: Անդունող դեմոկրատիայի ու ձեր միջև շարունակ խորանում է ու խորանում, և դուք շարունակ հեռանում եք քաղաքակրթության ու պրոգրեսի դարից, շուտով մենք ընդմիշտ հրաժեշտ կտանք ձեզ:

Հայրենիքի ու մարդկության լավագույն ապագայի համար, դեմոկրատիայի, առաջադիմության, խաղաղության ու ժողովուրդների ազատության համար մղած իր պայքարում Հյուզոն շատ բան էր կապում երիտասարդ սերնդի հետ: Ցատուհմայի խոսքերով էր նա ճշակվում այն դահիճներին, որոնք Կոմունայի հարյուրավոր պատանիների ու երիտասարդների էին գնդակահարում, այն դատավորներին, որոնք անչափահասներին տաժանակրության էին դատապարտում սպանիչ կլիմա ունեցող Նոր Կալիֆոռնիայում, այնպիսի տաժանակրության, որը դիպուկ կերպով անվանվել էր «չոր գիլիոտին»: Իսկ «Ինձսուններքը» վեպում, բոցավառ պրոգայով գրված այդ հայրենասիրական գրքում, որպիսի սիրով են շնչում նրա խոսքերը, երբ նա խոսում է երեխաների մասին, մարդկության այդ «անընդարկելի ապագայի» մասին:

Հյուզոնի գիրքը դեռ պատանի հասակում կարդացողի հիշողության մեջ է մնում ամբողջ կյանքում: «Մի ժամանակ,— ասում է գրող Ալեքսեյ Տոլստոյը իր հոդվածներից մեկում,— մենք բոլորս լալիս էինք Հյուզոնի էջերի վրա: Զեռքերը դեպի արդարություն թեքող այդ աշխարհը... մեր պատանի սրտերին լավ էր սովորեցնում մեծ զգացմունքներ»: Իսկ հատկապես Հյուզոնի մասին գրած մի ուրիշ հոդվածում («Մեծ ողմանտիկը»)՝ Ալեքսեյ Տոլստոյը, հիշելով իր մանկության տարիները, անցյալ դարի վերջին ռեակցիայի սանձարձակության տարիները, գրել է.

«Մի ժամանակ իմ կյանքը ներխուժեց մի փոքրիկ մարդ՝ խոիվ մագերով և այնպիսի ձայնով, որը թնդում էր տիեզերքում, սկսեց պատմել «Ծովի աշխատավորների» մասին, «Փարիզի Աստվածամոր տաճարի» մասին, «Մարդու մասին, որը ծիծաղում է...» Նա վանեց քաղքենիական առօրյան և ինձ տարավ Մեծ մարդու կրքերի անծանոթ աշխարհը:

Նա իմ տղայական սիրտը լցրեց բոցավառ ու մշուշապատ հումանիզմով: Ասեմ մի զանգակատնից ինձ էր նայում Քվնզիմոդոնի դեմքը, ամեն մի թափառաշրջիկ մուրացիկ ինձ թվում էր Ժամ Վալժան:

1 Ա. Տոլստոյ — Երկերի ժող., հատ. XIII, ռուս. հրատ., 1949 թ., էջ 93:

2 Նույն տեղը, էջ 374—378:

Արդարությունը, գթասրտությունը, բարիք, սերը քրեստոմատիական հասկացողությունից հաճկարձ դարձան իրական կերպարներ... Մանկական սրտին նրանք հսկաներ էին թվում, և սիրտը սովորեց լալ, զայրանալ և ուրախանալ մեծ զգացմունքների չափով:

Հյուզոն որպես երկնքից կայծակ հափշտակող հսկա ներխուժեց... իմ առօրյա կյանքի տաղուկալի թոթովանքի մեջ: Եվ դա լավ էր ու հոյակապ...

Նա իմն պատմում էր մարդկության կյանքի մասին, նա ջանում էր գծագրել այն պատմականորեն, փիլիսոփայորեն, գիտականորեն: Նրա վեպերի հզոր բնահողերը, որտեղ երևակայությունն ստիպում էր մոլեգնորեն թերթել էջերը, ոռոգվում էին քնարերգության բարեբեր հոսանքներով: Նրա հումանիստական ոռոմանտիզմը անարյուն հաղթանակներ էր տանում ողորմելի իրականության նկատմամբ... Նա ահագանգ էր խփում. «Արթնացե՛ք, մարդը թշվառության մեջ է, անարդարությունը ճնշում է ժողովրդին»:

Լավ ու հոյակապ էր դա՝ մարդկությանն արթնացնելը...

Ետ նայելով իմ պատանեկության ուրվականին, որ ժամանակի փոշիով է ծածկված, ես ջերմ շնորհակալության ժպիտով եմ հիշում իմ երբեմնի ցնծությունը: Հյուզոն իմ սրտին սովորեցրեց զարկել, և դա օգուտ տվեց: Ես նորից մեծ աշխարհում եմ, մեծ մարդկանց մեջ:

Եվ Ալեքսեյ Տոլստոյն իր խոսքն ավարտում է ասելով, որ սովետական մեծ մարդկանց այդ մեծ աշխարհում «ոռմանտիզմն ու ռեալիզմը շփվում են իրար հետ: Բայց մեր այդ նոր ոռմանտիզմը,— գրում է Տոլստոյը,— այլ բնույթ ունի, քան Հյուզոնի իդեալիստական ոռմանտիզմը...

Վիկտոր Հյուզոն միշտ մեզ հետ է, թեև մենք ո՛չ միշտ և ո՛չ ամեն բանում ենք Վիկտոր Հյուզոնի հետ»:

Այսպես, սկսելով մանկության հուշերից, թե առաջին անգամ ինչպես ծանոթացավ մեծ ոռմանտիկին, սովետական գրողն ավարտում է իր պայծառ, հուզիչ հոդվածը նրա մասին: Նրա հոդվածի կերքը պակաս հետաքրքիր չէ, քան սկիզբը, որտեղ նա խոսում է այն մասին, թե Հյուզոն պառաճի սրտերիմ որքան լավ էր մեծ զգացմունքներ սովորեցնում:

Վերը արդեն ասվեց, թե Հյուզոն որքան մեծ հույսեր էր դնում երիտասարդության վրա:

Դիմելով պատանի սերնդին՝ Հյուզոն հաստատում հավատ էր արտահայտում մարդու նկատմամբ, թունկում հույսեր՝ իր երկրի և ամբողջ աշխարհի լավագույն ապագայի նկատմամբ, բոցավառ փրո խոսքեր՝ ժողովրդի նկատմամբ.

Փա՛ռք քեզ, գալիք սքանչելի:  
Տեսե՛ք, փոքրիկ բարեկամներ,  
Նոր դարը՝ գեղեցիկ ու չքմաղ,  
Ծագում է անզուսպ ու տիրաբար:



**Հիշեցե՛ք, կյանքի տիրակալներ.  
Հիմքից մինչև իր գագաթը  
Տարեցտարի ավելի վեր  
Ջարկում է հզոր հորձանքը,  
Եվ ահա, տե՛ս, քո առջևն է  
Ազատությունն անխորտակ:**

Այս խոսքերի մեջ արտահայտված է մեծ գրողի ստեղծագործության ամենաբնորոշ կողմերից մեկը: Քննադատելով ներկան, մերկացնելով բուրժուական հասարակության արատները, նրա ոճիկները աշխատավոր զանգվածների նկատմամբ, կառավարող դասակարգերի կեղծավորությունն ու դաժանությունը, Հյուգոն երազում էր Ռեռավոր ապագայի մասին: «Հույսս դու ես, մշուշի միջով եկող Գալիք», — գրել է ձա 1871 թվականին: Նա պնդում էր, որ ապագան պատկանում է դեմոկրատիային՝ միասնական ու խաղաղ, պատկանում է լուսավորիչ փիլիսոփա Վոլտերին և ոչ թե թնդանոթի արքա Կրուպին, պատկանում է գրքին և ոչ թե սրին, կյանքին և ոչ թե մահին:

Առաջավոր մարդկությունը մեծ բանաստեղծ Հյուգոյին համարում է աշխատավորության բարեկամ, ազատության, առաջադիմության ու դեմոկրատիայի համար մարտնչող, դաժան ու անողորմ ճշմարտության ասպետ:

**Ն. ՍԼԱՎՅԱՆՍԻՆՍԿԻ**

ԾՈՎՈՒՄ

Առաջին գիրք

ՍՈՒՐԵՒ ԱՆՏԱՌՁ

1793 թվականի մայիս ամսի վերջին Փարիզի կամավորների մի գումարտակ Բրետանում հետախուզում էր Սողրեի ահավոր անտառը: Գումարտակում երեք հարյուրից ավելի մարդ չկար. կատաղի պատերազմի ընթացքում նրա շարքերը խիստ նոսրացել էին:

Սողրեի անտառը մտած գումարտակն իրեն շատ զգույշ էր պահում: Քայլում էին առանց շտապելու: Նայում էին դեպի աջ ու ձախ, դեպի ետ ու առաջ: Իզուր չէ ասված՝ «Զինվորը ծոծրակին էլ աչքեր պիտի ունենա»: Արդեն շատ երկար ժամանակ էր, ինչ քայլում էին: Ո՞ր ժամը կլիներ: Օրվա ո՞ր ժամանակն էր: Դժվար էր ասել. այդպիսի վայրի անտառների թափուտում միշտ իրիկնային աղջամուղջ է տիրում, և Սողրեի անտառում երբեք լույս չէր լինում:

Սողրեի անտառը ողբերգական անցյալ ուներ: Այստեղ, այս թափուտներում էր, որ 1792 թվականի նոյեմբերին սկսվեց քաղաքացիական պատերազմը: Մարդու մազերը քիզ-քիզ են լինում, երբ մտածում է, թե որքա՞ն սպանություններ են կատարվել այստեղ: Աշխարհիս երեսին սրանից ավելի զարհուրելի տեղ չկա...

Զինվորները զգուշությամբ առաջ էին շարժվում: Իսկ շուրջն ամեն ինչ ծաղկում էր: Տերևներն արքեցուցիչ բուրմունք էին արձակում: Երբեմն միայն արևի ճառագայթը թափանցում էր կանաչ աղջամուղջի մեջ:

Զինվորներն առաջ էին շարժվում քայլ առ քայլ, բոլորովին լուռ, զգուշությամբ ետ տալով թիկերի ճյուղերը:

Ավիհների սուր ծայրերից բարձր ճովողում էին թռչունները:

Մի ժամանակ, երբ դեռ պատերազմ չկար, Սողոմեի ամատառում թռչունների գիշերային որսեր էին կազմակերպվում: Այժմ այնտեղ մարդ էին որսում:

Անտառը բաղկացած էր ծփիներից, կեչիներից և կաղնիներից: Այն աճել էր մի հարթ, տափարակ տեղ: Մամուռն ու խիտ խոտը խլացնում էին մարդկային քայլերը: Ոչ ճապարհ կար, ոչ կաճան, իսկ եթե պատահում էլ էր որևէ շավիղ, այն իսկույն նորից կորչում էր թափուտի մեջ: Սրատերև թիկերը, վայրի մամուխը, բարձր ձարխոտն ու մացառները տասը քայլի վրա էլ թաքցնում էին մարդուն: Երբեմն թիկերի ետևից երևում էր մի ձկնկուլ կամ ջրահալ, որ ցույց էր տալիս, թե մոտերքում ճահիճ կա:

Զինվորները շարունակում էին առաջ գնալ: Քայլում էին ենթադրաբար, անհանգիստ, վախենալով, թե կգտնեն այն, ինչ որոնում էին:

Մերթ ընդ մերթ համդիպում էին ոչ վաղուցվա իջևանների հետքեր՝ տրորված կամ այրված խոտով տափարակներ, կտրտված, արյունոտված ճյուղերի կույտեր: Մի տեղ կերակուր էի՞ն եփել, մի ուրիշ տեղ վիրավորների վերքերն էին փաթաթել: Բայց նրանք, որոնք եղել են այստեղ, այժմ անհետացել են: Որտե՞ղ են հիմա նրանք: Գուցե հենու եմ, բայց գուցեև այստեղ, բոլորովին մոտիկ դարան եմ մտել՝ հրացանները ձեռքներիմ: Անտառն ամայի էր թվում, և գոմարտակը կրկնապատկեց իր զգուշությունը. չի կարելի վստահել ամայությանը: Եթե ոչ ոք չի երևում, ուրեմն ավելի մեծ հիմք կա որևէ մեկից երկյուղ կրելու: ԶԷ՞ որ այդ անտառը վատ համբավ ուներ:

Հավանական էր, որ թշնամին դարան է մտել:

Երեսուն հետախույզ գրենադեներ՝ մի սերժանտի հրամանատարությամբ բավական առաջ էին անցել գլխավոր

ջոկատից: Նրանց հետ էր և գումարտակի մարկիտանտու-  
հիւն<sup>1</sup>:

Մարկիտանտուհիները սիրով միանում են առաջավոր  
գործմասերին. այնտեղ վտանգը մեծ է, բայց ավելի հե-  
տաքրքիր է:

Հանկարծ փոքրաթիվ ավանգարդի զինվորները ականջ-  
ները սրեցին այնպիսի մի զգացումով, որ լավ ծանոթ է  
գազանի որջին դեմ արած որսորդին: Նրանց թվաց, թե  
խիտ թփուտի միջից խշխշոց լսվեց: Զինվորներն իրար նա-  
յեցին:

Հետախուզական ծառայության մեջ, որտեղ ամեն ոք  
շարունակ պետք է պատրաստ լինի, կարիք չկա, որ սպա-  
ները հրամաններ տան. այն, ինչ պետք է արվի, արվում  
է ինքնաբերաբար:

Մի րոպե չանցած՝ 'կասկածելի վայրն արդեն շրջա-  
պատված էր: Թավուտի մթին կենտրոնի վրա նշան էին  
բռնել բոլոր կողմերից: Մատները ձգաններին դրած և աչք-  
ները թավուտին հառած՝ զինվորները միայն սերժանտի  
հրամանին էին սպասում, որպեսզի կրակ բացեն:

Մինչ այդ մարկիտանտուհին սիրտ արեց խորհրդավոր  
թավուտի ներսը նայել, և հենց այն րոպեին, երբ սերժանտը  
բերանը բացեց, որ հրաման տա՝ «Կրա՛կ», մարկիտանտու-  
հին գոչեց՝ «Սպասեցե՛ք»:

— Ընկերնե՛ր, մի՛ կրակեցեք,— ավելացրեց նա դառ-  
նալով զինվորներին և ինքը նետվեց թփուտի մեջ:

Զինվորները՝ նրա ետևից:

Այնտեղ, իրոք, ինչ-որ մարդ կար:

Թփերի թավուտի մեջ, մի փոքրիկ փոսի եզրին, որի  
մեջ սովորաբար ածուխ են վառում ծառերի արմատներից,  
ցած կախված ճյուղերի մթին կամարի տակ, որ ասես տե-  
րևներից շինված սենյակ լիներ, մի կին նստած՝ կուրծք էր  
տալիս երեխային: Էլի ուրիշ երկու երեխա գետնին պսակած  
քնել էին՝ խաբությա՜յ գլուխները կնոջ ծնկներին դրած:

Ահա հենց այս էր «դստանը»:

<sup>1</sup> Մարկիտանտուհի — նպարեղեն և գինի վաճառող կին, որը միշտ  
առաջ է շարժվում գործի հետ և պետք եղած ժամանակ էլ օգնության  
է հասնում վիրավոր մարտիկներին: Մանր. թարգմանչի:

— Ի՞նչ եք անում այստեղ,— գոռաց մարկիտանտուհին:

Կինը գլուխը բարձրացրեց:

— Գծվե՛լ եք, ի՞նչ է: Ի՞նչ եք նստել այստեղ,— բարկացած շարունակեց մարկիտանտուհին:— Մի րոպե ուշանայի, ձեզ գնդախորով կանեին:

Ապա դառնալով զինվորներին՝ ասաց.

— Տղե՛րք, սա կին է:

— Մենք ինքներս էլ տեսնում եք, որ կին է,— խոսեց զրեմադերներից մեկը:

Մարկիտանտուհին հանգստանալ չէր կարողանում:

— Քարշ ես գալիս անտառներում, չհասկանալով, որ ամեն րոպե կարող ես գնդակի բաժին դառնալ: Եվ ինչպե՞ս է գլուխդ մտել այդ հիմար միտքը:

Ծշմած ու սարսափած կինը շուրջն էր նայում և քնից նոր արթնացածի պես չէր հասկանում, թե ինչի համար են այդ հրացանները, թերե՞ն ու սվինները, այդ ահասարսուռ դեմքերը:

Մեծ երեխաներն արթնացան և սկսեցին թնգթնգալ.

— Սովա՛ծ եմ,— ասաց մեկը:

— Վախենո՛ւմ եմ,— գոռաց մյուսը:

Փոքրիկը շարունակում էր հանգիստ ծծել:

Մարկիտանտուհին սիրալիր դարձավ նրան.

— Դու բոլորից խելոքն ես, պստիկ. դու քո գործը լավ գիտես:

Մայրը վախից քար էր կտրել:

Սերժանտը գոչեց.

— Մի՛ վախեցեք: Մենք Կարմիր գդակ<sup>1</sup> գումարտակից ենք:

Կինն ամբողջ մարմնով ցնցվեց: Նա նայեց սերժանտին, նրա մազակալած դաժան դեմքին, որի վրա երևում էին միայն հոնքերը, բեղերը և կրակի պես շողշողացող աչքերը:

— Սա Կարմիր խաչի նախկին գումարտակն է,— բացատրեց մարկիտանտուհին:

---

<sup>1</sup> Կարմիր գդակը, Ռեդաիփուսական ազգայնականների գլխարկն էր: Մ. թ.:

Իսկ սերժանտը հարցրեց.

— Ո՞վ ես դու:

Կինը սոսկումով էր նայում նրան: Նա ինքը դեռատի էր, գունատ, միհար ու ցնցոտիապատ: Գլխին ուներ մի կնգուղ՝ քրետոնական գեղջկուհիների կոշտ գլխաշոր, իսկ թիկնոցի փոխարեն վրան գցած ուներ մի բրդյա վերմակ, որի եզրերը թելով կապված էին պարանոցին: Նա ոչ կոշիկ ուներ հագին, ոչ գուլպաներ, և ոտքերն արյունոտված էին:

— Մորացկան կին է,— ասաց սերժանտը:

Իսկ մարկիտանտուհին զինվորական կոպիտ ձայնով, որի մեջ, սակայն, բարություն էր զգացվում, հարցրեց.

— Անունդ ի՞նչ է:

Կինը կմկմոցով հազիվ լսելի շշնջաց.

— Միշել Ֆլեշար:

Իսկ մարկիտանտուհին արդեն իր կոշտ ձեռքով քնքշորեն շոյում էր ծծկեր երեխայի գլուխը:

— Ինչքա՞ն է այս փոքրիկը,— հարցրեց նա:

Մայրը հարցը չհասկացավ:

Մարկիտանտուհին կրկնեց.

— Ես ձեզ հարցնում եմ՝ քանի՞ տարեկան է այս պըստիկը:

— Մեկ ու կես տարեկան,— պատասխանեց մայրը:

— Դե ուրեմն արդեն մեծ է,— ասաց մարկիտանտուհին:— Կարիք չկա, որ կուրծք ուտի, հարկավոր է ծծից կտրել: Մենք սրան արգանակ կտանք:

Մայրն սկսել էր հանգստանալ: Երկու ավագ երեխաներն այժմ արդեն լրիվ արթնացել և նայում էին ավելի շուտ հետաքրքրությամբ, քան վախով: Երկուսն էլ հիացած ունեցով էին դիտում գրեմադերների փետրափնջերը:

— Քաղցած են երեխաներս,— ասաց մայրը:

— Նրանց կկերակրենք, քեզ էլ կկերակրենք,— գոչեց սերժանտը:— Բայց քանն այդ չէ: Ինձ ասա տեսնեմ, ի՞նչ քաղաքական համոզմունքներ ունես դու:

Կինը նայեց նրան ու ոչինչ չպատասխանեց:

— Լսո՞ւմ ես, ինչ եմ հարցնում քեզ:

Կինը թոթովեց.

— Ես դեռ բոլորովին փոքրիկ աղջիկ էի, երբ ինձ վանք

տլին: Բայց Տետո ամուսնացա: Ես վանական չեմ: Վանական քույրերն ինձ ֆրանսերեն խոսել սովորեցրին: Մեր գյուղը վառեցին: Մենք հագիվ փրկվեցինք: Ես այնպես էի շտապում, որ նույնիսկ կոշիկներս հագնել չհասցրի:

— Ես քեզ հարց եմ տալիս. ի՞նչ քաղաքական համոզմունքներ ունես դու:

— Չգիտեմ:

Սերժանտը շարունակեց.

— Ախր ձեր մեջ լրտեսներ են լինում: Իսկ լրտեսներին գնդակահարում են: Դե, ասա՛: Դու գնչուհի չե՞ս: Ո՞րն է քո հայրենիքը:

Կինը շարունակում էր նայել նրան, չհասկանալով, թե ինչ են հարցնում իրեն: Սերժանտը կրկնեց.

— Ո՞րն է քո հայրենիքը:

— Չգիտեմ,— պատասխանեց կինը:

— Ինչպե՞ս: Դու չգիտես որտե՞ղ ես ծնվել:

— Իմ ծնված տե՞ղն եք հարցնում: Գիտեմ:

— Դե, ասա՛, որտե՞ղ:

Կինը պատասխանեց.

— Ազե համայնքի Սիսկուանյար ագարակում:

Սերժանտն էլ իր հերթին զարմացավ.

— Բայց դա հայրենիք չէ:

— Ես այնտեղ եմ ծնվել:

Եվ մի րոպե խորհելուց Տետո կինն ավելացրեց.

— Հիմա ես ձեզ հասկացա, պարոն. դուք ծնվել եք Ֆրանսիայում, իսկ ես՝ Բրետանում:

— Հետո ի՞նչ:

— Դրանք տարբեր տեղեր են:

— Բայց չէ՞ որ մեր հայրենիքը միևնույնն է,— գոչեց սերժանտը:

Սրան կինը նույն պատասխանը տվեց.

— Ես Սիսկուանյար ագարակից եմ:

— Դե լավ, թող Սիսկուանյար լինի,— համաձայնեց սերժանտը:— Այնտեղ դու հարազատներ ունե՞ս:

— Այո:

— Ինչո՞վ են զբաղվում նրանք:

— Նրանք բոլորը մեռել են: Ոչ մեկը չի մնացել:

Սերժանտը, որ խոսելու սեր ուներ, շարունակեց հարցնելով։

— Գրո՞ղը տանի։ Հարազատներ ամեն մեկն էլ ունի, իսկ եթե չունի, ապա՝ ունեցել է... Դու ինքդ ո՞վ ես։ Ասա տեսնեմ։

Մարկիտանտուհին զգաց, որ ժամանակն է օգնության հասնելու կնոջը։ Նա նորից սկսեց շոյել ծիծ ուտող երեխայի գլուխը և թիթիացրեց մյուս երկուսի աչտերին։

— Ի՞նչ է այս պատիկի անունը, — հարցրեց նա։ — Երևում է՝ աղջի՞կ է։

— Ժորժետա, — պատասխանեց մայրը։

— Իսկ մեծի՞նը։ Տեսնում եմ, որ այս ավագակն արդեն տղա է։

— Ռեմե-Ժան։

— Իսկ փոքրի՞նը։ Զե՞ որ սա էլ է տղա և այն էլ ի՞նչ թմբիկ թշկներով։

— Գրո-Ալեն, — պատասխանեց մայրը։

— Հիանալի երեխաներ են, — ասաց մարկիտանտուհին։ — Բոլորովին նման են իսկական հայրենասերների՝

Բայց սերժանտը համատորեմ շարունակեց իր հարցուփորձը.

— Դե՛, ի՞նչ կասես, տիկին... Խոսի՛ր։ Տուն ունե՞ս դու

— Ունեի։

— Որտե՞ղ։

— Ագեում։

— Հապա ինչո՞ւ քո տանը չես ապրում։

— Նրա համար, որ իմ տունը վառեցին։

— Բայց ո՞վ վառեց։

— Զգիտեմ։ Կոիվ էր։

— Որտեղի՞ց ես գալիս։

— Այնտեղից։

— Ո՞ր ես գնում։

— Զգիտեմ։

— Վերադառնանք մեր հարցին։ Ո՞վ ես դու։

---

<sup>1</sup> Հայրենասեր — Ֆրանսիայում այսպես էին կոչում համրապետությանը նվիրված մարդկանց։



— Զգիտեմ:

— Զգիտես, թե ով ես դո՞ւ:

— Մենք փախստական ենք:

— Ո՞ր կուսակցությանն ես պատկանում:

— Զգիտեմ:

— Դու կապույտների՞ հետ ես, թե՞ սպիտակների<sup>1</sup>:  
Ո՞ւմ հետ ես դու:

— Ես իմ երեխաների հետ եմ:

Լոռություն տիրեց:

— Իսկ ես, ա՛յ, երեխաներ չեմ ունեցել,— խոսեց մար-  
կիտանտուհին:— Ո՞վ ժամանակ ուներ նրանց հետ գլուխ  
դնելու:

Սերժանտը նորից սկսեց հարցեր տալ.

— Բայց ովքե՞ր եմ քո ծնողները: Բարի եղիր, բացատ-  
րիր մեզ. ովքե՞ր եմ քո ծնողները: Այ, օրինակ՝ ես: Իմ  
անունը Ռադուբ է: Ես սերժանտ եմ, Ծերշ-Միդի փողոցից:  
Հայրս էլ, մայրս էլ այնտեղ եմ ապրել: Ես գիտեմ, թե ով-  
քեր եմ եղել իմ ծնողները: Հիմա դու պատմիր քո ծնողների  
մասին: Ասա՛, ովքե՞ր եմ եղել նրանք:

— Նրանց կոչում էին Ֆլեշար: Ահա բոլորը:

— Բայց ամեն մարդ իր զբաղմունքն ունի: Ինչո՞ւ էին  
զբաղվում քո այդ ծերուկները: Ի՞նչ էին անում քո Ֆլեշար-  
ները:

— Վար էին անում: Իմ հայրը հաշմանդամ էր: Երբ  
սենյորը<sup>2</sup>, մեր սենյորը հրամայեց մահակածե՞ծ անել նրան,  
դրանից հետո էլ աշխատել չէր կարողանում: Եվ դա մե՞ծ  
ողորմածություն էր մեր սենյորի կողմից, որովհետև հայրս  
մի ճագար էր գողացել, իսկ դրա համար օրենքով մահա-

---

<sup>1</sup> Կապույտ — կոչում էին հանրապետության զինվորներին (այս  
անունը գալիս էր նրանց կապույտ բանկոմներից, որոնք կարմիր եզրա-  
քողեր ունեին): Սպիտակները — թագավորին նվիրվածներն էին, ոռ-  
լախտները (այս անունը գալիս էր նրանց սպիտակ դրոշից, որի վրա  
ոսկեգույն շուշան էր նկարված):

<sup>2</sup> Սենյոր — ֆեոդալական հասարակության մեջ խոշոր կալ-  
վածատեր, որն իր տիրապետության սահմաններում թագավորի իշ-  
խանություն էր ունենում:

պատիժ էր հասնում: Բայց սենյորը խղճացել էր հորս: Նա  
ասել էր. «Դրան միայն մահակի հարյուր հարված տվեք»:  
Այ, դրանից հետո էլ հայրս հաշմանդամ մնաց:

— Հետո՞:

— Պապս հուգենոտ<sup>1</sup> է եղել: Պարոն Կյուրեի<sup>2</sup> պահանջով  
նրան ուղարկել են թիապարտության<sup>3</sup>: Այն ժամանակ ես  
շատ փոքր եմ եղել:

— Հետո՞:

— Իմ ամուսնու հայրը աղի մաքսանենգությամբ էր  
գրադվում: Թագավորը հրամայեց նրան կախաղան հանել:

— Իսկ ի՞նչ էր անում քո ամուսինը:

— Դեռ մի քանի օր սրանից առաջ կոպում էր:

— Ո՞ւմ համար:

— Թագավորի:

— Էլի՞ ում համար:

— Դե, հասկանալի է, իր տիրոջ համար:

— Էլի՞:

— Էլի՝ իր կյուրեի:

— Գրողը տանի այդ անասուններին, — հանկարծ գո-  
ռաց զինվորներից մեկը:

Կինը վախեցած վեր թռավ:

— Գիտե՞ք ինչ, տիկին, մենք փարիզեցիներ ենք, —  
քաղցրությամբ ասաց մարկիտանտուհին:

— Տե՛ր Հիսուս-Քրիստոս, — հառաչեց կինը՝ ձեռքերն  
իրար կցելով, ինչպես անում են աղոթելիս:

— Սնապաշտություն պետք չէ, — ընդհատեց նրան սեր-  
ժանոր:

Մարկիտանտուհին նստեց կնոջ կողքին և մեծ տղային  
քաշեց իր կողմը: Երեխան չհակառակվեց: Երեխաները վա-  
խենում, ինչպես և հանգստանում են առանց որևէ նկատե-

<sup>1</sup> Հուգենոտներ — ֆրանսիական բողոքականներ, որոնք անջատվել  
էին կաթոլիկական եկեղեցուց:

<sup>2</sup> Կյուրե — ֆրանսիայում կաթոլիկ ծխական քահանա:

<sup>3</sup> Թիապարտություն — տաժամակիր աշխատանք (նման ոճրագործ-  
ների՝ որպես պատիժ ուղարկում էին պետական առագատաճափերի  
վրա թիավարելու):

լի պատճառի. նրանք մարդկանց ճանաչում են ինչ-որ ներքին հոտառությամբ:

— Խեղճ կին,— ասաց մարկիտանուհին,— ես շատ եմ խղճում ձեզ, թեև դուք օտար եք ինձ համար: Իսկ ձեր այս ճատիկները շատ լավիկն են, ինչ որ ճիշտն է, ճիշտ է: Դժվար չէ գլխի ընկնել, թե որը բանի տարեկան է: Մեծը չորս տարեկան կլինի, իսկ եղբայրը՝ երեք: Դե, իսկ այս թմբիկը սոսկալի շատակերն է երևում. ծծում է ու ծծում: Ախ դո՛ւ, չարագո՛րծ, տես, որ մորդ էլ չուես: Դե, ուրեմն, տիկին, դուք ոչ մի բանից մի՛ վախեցեք: Եվ, գիտե՞ք ինչ կասեմ ձեզ. մտեք մեր գումարտակը: Կաշխատեք ինձ նման: Ինձ կոչում են Հուսարուհի: Այդպես է իմ անունը: Այստեղ ես պանդոկապանուհու պես մի բան եմ, մեկն այն կանանցից, որոնք, ինչպես գիտեք, ծառայում են գործի մեջ և կովի ժամանակ ջուր ու գինի են հասցնում զինվորներին: Իմ ու ձեր ոտքերը համարյա նույն չափսի են: Ես ձեզ կընծայեմ իմ կոշիկները... Օգոստոսի տասին՝ ես Փարիզում էի: Ի՞նչ շոգ օր էր: Ես տեսա, թե ինչպես մահապատիժ տվին Լյուդովիկոս XVI-ին: Մեռնել չէր ուզում: Եվ իսկապես, ինքներդ մտածեցեք. դեռ հունվարի տասներեքին նա բոլորովին հանգիստ նստած շագանակ էր բովում, խոսում ու ծիծաղում էր իր ընտանիքի շրջապատում... Դե, ուրեմն, գալի՞ս եք մեզ հետ: Մեր զինվորները լավ տղաներ են: Դուք կլինեք երկրորդ մարկիտանուհին: Ես ձեզ ցույց կտամ, թե ինչ և ինչպես պիտի անել: Դա շատ հասարակ բան է: Գինով լի մի մեծ ջրաման վիզդ ես գցում, վերցնում ես մի զանգակ և գնում կովի ամենաթունդ տեղը: Քայլում ես գնդակների ու ռումբերի տակ, որպես թե ոչինչ էլ չկա, զանգակը զնգզնգացնում ես ու ձեն տալիս. «Ո՞վ է խմել ուզում, տղե՛րք»: Սա շատ հեշտ բան է: Ես, ազնիվ խոսք, ով էլ ուզի, բոլորին գինի եմ տալիս: Ե՛վ կապույտներին, և՛ սպիտակներին, թեև ինքս կապույտ եմ: Եվ այն էլ ինչ-

<sup>1</sup> 1792 թ. օգոստոսի 10-ին ապստամբած ժողովուրդը գրավեց Թյուիլրի արքայական պալատը, իսկ օգոստոսի 13-ին Լյուդովիկոս XVI թագավորն ու փոքրահասակ թագաժառանգը բանտարկվեցին Փարիզի Տամպլ աշտարակում: 1793 թ. հունվարի 21-ին Լյուդովիկոս XVI-ը գլխատվեց:

պիսի՝ կապույտ: Բայց խմիչք ես ոչ ռքի չեմ մերժում: Վի-  
րավորը միշտ տանջվում է ծարավից: Իսկ երբ մարդը մեռ-  
նում է, էլ համոզմունքները ջոկջկելու տեղը չէ... Դե, ի՞նչ  
կասեք, կգա՞ք մեզ հետ: Եթե ինձ սպանեն, դուք իմ տեղը  
կրոնեք: Մի՛ նայեք, որ այսպես կոպիտ տեսք ունեմ: Ես  
բարի կիմ եմ և քաջ զինվոր: Ոչ մի բանից մի՛ վախեցեք:

Այդ նույն ժամանակ սերժանտ Ռադուրը հանդիմանում  
էր զինվորին.

— Իսկ դու լռի՛ր: Դու վախեցրիր նրան: Կանանց ներ-  
կայությամբ հայհոյել չի՛ կարելի:

— Ախր ում ասես, որ համբերությունից չի հանի այդ-  
պիսի տխմարությունը,— արդարանում էր գրեմադերը:—  
Ազնիվ մարդը կարո՞ղ է հանգիստ նայել այս վայրենի  
մարդկանց: Դե ինքների մտածեցեք. սենյորը կեսրարին  
հաշմանդամ է դարձրել, տերտերը պապին թիապարտու-  
թյան է քշել, թագավորը հորը կախաղամ է հանել, իսկ  
նրանք, գրողը տանի, ոտքի են ելել կոլվելու, գնդակների  
տակ են գնում սենյորի համար, տերտերի համար, թագա-  
վորի համար...

Սերժանտը նրա վրա գոռաց.

— Լռե՛լ: Դատողություններ չանե՛լ: Մենք քաղաքական  
ակումբում չենք:— Ապա դարձավ կնոջը:— Լավ, իսկ քո  
ամուսի՞նը: Ի՞նչ է անում նա: Ի՞նչ մարդ է:

— Հիմա ոչինչ չի անում. նրան սպանել են:

— Որտե՞ղ:

— Կովում:

— Իսկ ե՞րբ:

— Երեք օր առաջ:

— Ո՞վ է սպանել:

— Զգիտեմ:

— Դու չգիտես ով է սպանել քո ամուսնո՞ւն:

— Զգիտեմ:

— Կապույտնե՞րը, թե՞ սպիտակները:

— Հրացանով են սպանել:

— Ընդամենը երեք օր առա՞ջ:

— Այո:

— Որտե՞ղ է եղել այդ:

— Էոնի մոտ: Կրակում էին... Ու ամուսինս ընկաւ: Ահա բոլորը:

— Իսկ դու ի՞նչ ես անում նրա մեռնելուց հետո:

— Գնում եմ երեխաներիս հետ:

— Ո՞ր:

— Ուր աչքս կտրի:

— Որտե՞ղ ես գիշերում:

— Գետնի վրա:

— Ինչ ես ուտում:

— Ոչինչ:

Սերժանտը նորից հարցրեց:

— Ոչի՞նչ:

— Պտուղներ եմք ուտում. անցյալ ամառվանից մնացած մամուխ, մոշ, հալված գին, ձարխտոյի բոլբոջներ:

— Հա, դա միևնույն է, թե ոչինչ չեք ուտում:

Մեծ տղան, ըստ երևույթի, հասկացաւ.

— Ես ուտել եմ ուզո՞ւմ,— ասաց նա:

Սերժանտը գրպանից հանեց զինվորական հացի մի կտոր ու մեկնեց մորը: Կինը հացը երկու մաս արեց և տվեց երկու երեխաներին: Երկուսն էլ ազահորեն վրա պրծան հացին:

— Բայց քեզ բաժին չթողեցիր,— մոթմոթաց սերժանտը:

— Երևի քաղցած չի,— մկատեց զինվորներից մեկը:

— Քաղցած է թե ոչ՝ բայց ամենից առաջ նա մայր է,— ասաց սերժանտը:

Երեխաները կերան ու թնկթնկացին.

— Ծարավ ե՛մ... Զո՛ւր...

— Մի առու էլ չես գտնի. այս ճգովյալ անտառում,— մոթմոթաց սերժանտը:

Մարկիտանտուհին տոպրակից մի պղնձե թաս հանեց, ուսից կախված ջրամանի ծորակը բացեց, թասի մեջ մի քիչ լցրեց և մեկնեց երեխաներին:

Ավագը մի կում արեց, դեմքը ծոմոնեց, իսկ կրտսերը համը տեսավ ու թքեց:

— Ի՞նչ է, չհավանեցի՞ք,— ասաց մարկիտանտուհին:

— Այդ ի՞նչ է, օղի՞ էր,— հարցրեց սերժանտը:

— Հա, ամենաբարձր օդի: Բայց սրանք ինչ են հասկանում: Դե, ռամիկներ են:— Եվ թասը սրբեց:

Սերժանտը շարունակեց իր հարցումները.

— Նշանակում է, տիկին, դու փախուստո՞ւմ ես ազատվում:

— Ի՞նչ արած: Վազում եմ, քանի ոտքերումս ուժ կա, հետո էլ քարշ եմ գալիս դանդաղ քայլերով: Իսկ հետո՝ վայր եմ ընկնում:

— Խեղճ կին,— հառաչեց մարկիտանտուհին:

— Չորս կողմը կոխվ է,— շարունակեց կինը:— Որ կողմը նայես՝ հրացան է ու թնդանոթ: Ի՞նչ են ուզում՝ չեմ հասկանում: Ամուսնուս սպանեցին: Ես միայն այդ հասկացա:

Սերժանտը հրացանի կոթը խփեց գետնին.

— Նզովա՛լ պատերազմ: Գրողի ծո՛ցը:

Կինը շարունակեց.

— Անցյալ գիշեր մենք մի փչակում քնեցինք:

— Չորսդ միասի՞ն:

— Չորսս էլ:

— Եվ քնեցի՞ք:

— Քնեցինք:

— Նշանակում է՝ կանգնած եք քնել,— ասաց սերժանտը: Նա դարձավ զինվորներիս. — Ընկերներ, լսո՞ւմ եք: Ամբողջ գիշեր նստել մի չորացած ծառի փչակում և շարժվելու հնարավորություն էլ չունենալ, ինչպես տուփի մեջ խցկված: Ասենք՝ ի՞նչ պահանջես սրանցից, վայրենիներ են: Հո չի կարելի պահանջել, որ փարիզեցիներ լինեն:

— Գիշերը քնել փչակի մե՛ջ, երեք երեխաներով,— արձագանքեց մարկիտանտուհին:

— Երևակայում եմ,— ավելացրեց սերժանտը,— ինչպես պիտի զարմանալիս գիշերն այդ ծառի մոտով անցնողները: Դրսից ոչինչ չի երևում, և՛ հանկարծ ծառը մանկական ձայնով կանչում է՝ «Մայրի՛կ, հայրի՛կ»:

— Մեր բախտից հիմա ամառ է,— հառաչեց կինը:

Իր ճակատագրին հլու հնազանդ՝ նա աչքերը հատել էր գետնին, և նրա մեջ տարակուսանք էր քարացել իրեն ճշմարտորդ դժբախտության համար:

— Զինվորները խիտ կիսաշրջան կազմած լուռ ու մունջ  
նայում էին թշվառ մորը:

Այրիացած կին՝ երեք որբուկների հետ... Մեմ-մեմակ,  
բոլորից լքված... Փախել են պատերազմի սարսափից, որ  
ծածկել է ամբողջ երկինքը մինչև հեռու հորիզոն: Սույ, ծա-  
րավ... Ուտելիքի տեղ՝ խոտ, օթևանի տեղ՝ բաց եր-  
կինք...

Սերժանտը մոտեցավ կնոջը ու կոացավ կուրծք ուտող  
երեխայի վրա: Հանկարծ պատիկը կուրծքը բաց թողեց,  
գլուխը կամացուկ շուռ տվեց, կապտավուն չքնաղ աչքերով  
նայեց իր վրա կոացած մազակալած սոսկալի դեմքին և  
ժպտաց:

Սերժանտն ուղղվեց, և նրա այտի վրայով գլորվող ար-  
ցունքի կաթիլը մարգարիտի նման կախ ընկավ ահարկու  
բեղի ծայրից:

Եվ նա խոսեց բարձր ձայնով.

— Ընկերներ, այս բոլորից երևում է, որ մեր գումար-  
տակը պետք է հայր դառնա: Որդեգրենք այս երեք մա-  
նուկներին: Համաձայն եք:

— Կեցցե՛ հանրապետությունը, — գոչեցին զինվոր-  
ները:

— Որոշված է, — ասաց սերժանտը:

Եվ ձեռքերը տարածելով մոր ու մանուկների գլխավերևը՝  
ավելացրեց.

— Ահա Կարմիր գդակ գումարտակի երեխաները:

Մարկիտանտուհին ուրախությունից վեր-վեր թռավ.

— Մի գլխարկի տակ երեք գլուխ:

Նա արտասվեց և վրա թռավ, գրկեց խեղճ կնոջը:

— Կեցցե՛ հանրապետությունը, — նորից գոչեցին զին-  
վորները:

Իսկ սերժանտը դարձավ կնոջը.

— Գնա՛նք մեզ հետ, քաղաքացուհի:

# Ե ր կ ր ո ր դ , գ ի ր ք

## «Կ Լ Ե Յ Մ Ո Ր» Ռ Ա Զ Մ Ա Ն Ա Վ Ը

### I. ԲԱՐԵԿԱՄՆԵՐ ԵՎ ԹՇՆԱՄԻՆԵՐ

1793 թվականի գարնանը, երբ Ֆրանսիան բոլոր կողմերից պաշարված էր թշնամիներով, ահա թե ինչ էր կատարվում Լա Մանշի գեղուցում:

Ջերսեյ կղզու մի փոքրիկ, ամայի ծովախորշում հունիսի 1-ին, մայրամուտից մոտավորապես մեկ ժամ առաջ, մանախապատ եղանակին, որ վտանգավոր է նավարկության, ուստի և հարմար է փախուստի համար, ծով դուրս գալու էր պատրաստվում մի ինչ-որ եռակայմ ռազմանավ: Անձնակազմը ֆրանսիացիներ էին, բայց նավը մտնում էր անգլիական այն նավատորմի կազմի մեջ, որի հրամանատարն էր Բուլոնյան դքսերից սերված իշխան դը լա Տուր դ'Օվերնը: Ռազմանավը նրա կարգադրությամբ ուղարկվել էր մի խիստ կարևոր, անհետաձգելի խնդիր կատարելու:

Այդ ռազմանավը, որ ցուցակագրված էր «Կլեյմոր» անունով, կառուցված էր խաղաղ առևտրական ծանր նավերի տիպով: Սակայն նրա արտաքին տեսքը խաբուսիկ էր: Այդ նավը կառուցելիս հետապնդել էին երկու նպատակ՝ մարտունակություն և խաբուսիկություն: Եթե կարելի է՝ խաբել, եթե անհրաժեշտ է՝ կռվել: Այդ գիշեր ռազմանավի կատարելիք կարևոր գործն իրականացնելու համար նրա միջին տախտակամածում բեռան փոխարեն դրված էին մեծ տրամաչափի երեսուն թնդանոթ: Չգիտես՝ սպասվող փոթորկի՞ պատճառով, թե՞ պարզապես նավին խաղաղ տեսք տալու համար այդ բոլոր երեսուն թնդանոթներն էլ իրենց տեղերում ամրացված էին երեքտակ շղթաներով այնպես, որ բոլորի փոխարեքաններն էլ դեմ էին առել նավակողի ամուր փակված անցքերին: Դրսից ոչ մի բան չէր երևում: Ռազմանավն



ասես դիմակավորված լիներ: Թնդանոթները հին ձևի էին, հրետասայլերի անիվները ոչ թե տափակաձև, այլ՝ ճաղավոր: Սովորաբար ռազմանավերում թնդանոթները լինում են վերին տախտակամածում: Բայց «Կլեյմոր»-ը, որ նախատեսված էր հանկարծակի հարձակման ու դարանակավման համար, սպառազինված տախտակամած չուներ և կառուցված էր այն հաշվով, որ վերին տախտակամածի տակ թաքնված մարտկոց տեղավորի: «Կլեյմոր»-ը բավական մեծ, բայց տեսքով անճոռնի նավ էր: Ասեմք դա չէր խանգարում, որ նա լավ ընթացք ունենա: Ամբողջ անգլիական նավատորմում «Կլեյմոր»-ի պես ամուր իրան ունեցող նավ չկար, իսկ մարտի մեջ նա համարյա չէր գիշում եռակայմ ֆրեգատին:

Անձնակազմը բաղկացած էր բացառապես ֆրանսիացիներից, որոնք վտարանդի սպաներ էին և դասալիք նավաստիներ: Դա մի ջոկովի բազմություն էր, բոլորը, մինչև վերջին մարդը հմուտ ծովայիններ, քաջ զինվորներ և հավատարիմ ռոյալիստներ<sup>1</sup>: Բոլորը անվերապահորեն նվիրված էին ռազմանավին, թրին ու թագավորին:

Նավի անձնակազմին միացված էր նաև կես գումարտակ ծովային հետևազոր, որպեսզի հարկ եղած դեպքում ափ իջեցվի:

Նավապետն էր սուրբ Լյուդովիկոսի շքանշանակիր կոմս դյու Բուաբերտլոն, նախկին արքայական նավատորմի լավագույն սպաներից մեկը, նրա օգնականը՝ շեալե<sup>2</sup> դը լա Վյովիլը: Լոցմանն<sup>3</sup> էր Ֆիլիպ Գակուալը, որ Ջերսեյ կղզու ամենահմուտ շկիպերն<sup>4</sup> էր:

Դժվար չէր հասկանալ, որ այս նավի վրա արտաքու կարգի մի խնդիր էր դրված: Մեկնելու թույնին նավն իր վրա ընդունեց մի մարդ, որի հենց միայն արտաքին տեսքից կարելի էր հասկանալ, որ նա մի վտանգավոր գործ է ձեռնարկում: Դա մի բարձրահասակ ծերունի էր, ձիգ ու ամրակազմ, խոժոռ դեմքով: Դժվար էր ճիշտ որոշել նրա

<sup>1</sup> Ռոյալիստները թագավորի կողմնակիցներն էին:

<sup>2</sup> Շեալե — ազնվական տիտղոս՝ ֆեոդալական Ֆրանսիացում:

<sup>3</sup> Լոցման — տվյալ վայրի ծովային ռդիները լավ իմացող մարդ, որը վարում է նավի ընթացքը:

<sup>4</sup> Շկիպեր — ռազմանավի վրա նավի գույքը վարող անձը:

տարիքը. միաժամանակ և՛ ծեր էր երևում, և՛ երիտասարդ: Նա մեկն էր այն մարդկանցից, որոնց ուժը տարիների ծանրությունից չի նվազում, իսկ ճերմակ խոպուպների տակ աչքերը շողշողում են երիտասարդական ավյունով. նայելով իր առույգությանն ու եռանդին՝ նա քառասուն տարեկան տղամարդ էր, իսկ ըստ ընդհանուրի կողմից վայելած հեղինակության՝ ութսունամյա ծերունի:

Այն րոպեին, երբ այս մարդը ուղևորվում էր բարձրագույն, քամին ետ գցեց նրա ծովային թիկնոցի փեշը, և նրա տմկից երևացին լայն անդրապարտիքը, երկարաճիտ կոշիկները, այծի մորթուց կարված բաճկոնը, որ հագել էր մազերը դեպի ներս, իսկ դրսից զարդարված էր մետաքսով. մի խոսքով՝ բրետոնացի գեղջուկի լրիվ հագուստ: Ասես այս նմանությունն ավելի ուժեղացնելու համար այդ խորհրդավոր ծերունու հագուստի ծնկներն ու արմունկները մաշված էին, իսկ կոշտ կտորից կարված ծովային թիկնոցը ոչնչով չէր տարբերվում ամեն տեսակ նեղություն քաշած ձկնորսական մաշված թիկնոցից: Նա գլխին ուներ կլոր, լայնեզր մի գլխարկ, բարձր գագաթով, որպիսին կրում էին այն ժամանակները: Երբ եզրերը ցած էին գցված, այն թվում էր գեղջկական գլխարկ, բայց և հեշտությամբ կարող էր փոխվել գինվորական գլխարկի. դրա համար հարկավոր էր միայն մի եզրը վեր ծալել և կոճկառով ու կոկարդով՝ ամրացնել գագաթին: Ծերունին իր գլխարկը ծածկել էր գեղջկական ձևով, առանց կոճկառի ու կոկարդի՝

Կղզու նահանգապետ լորդ Բալկառասը և իշխան դը Լա Տուր դ'Օվերնը անձամբ նրան ուղեկցեցին մինչև նավ: Վտարանդի իշխանների գաղտնի գործակալ Ժելամբրն էր հսկում նրա նավախցի կարգավորմանը և այնքան հարշալից ու հոգատար էր, որ, չնայած իր ազնվականական ծագումին, ծերունու ետևից ինքն իր ձեռքով էր տանում նրա ճամպուկը: Ափ դուրս գալուց առաջ հրաժեշտ տալիս Ժելամբրը խոր գլուխ տվեց այդ բրետոնացի գեղջուկին: Լորդ Բալկառասը նրան ասաց. «Հաջողություն եմ ցանկանում ձեզ, գեներալ»,

<sup>1</sup> Կոկարդ — այստեղ նշանակում է հանգուցված ժապավեն: Հանրապետականները եռագույն կոկարդ էին կրում:

իսկ իշխան դը լա Տուր դ'Օվերնը մրմնջաց. «Ցտեսություն, եղբայր իմ»:

«Գեղջուկ» — անմիջապես այս անունով մկրտեցին «Կլեյմոր»-ի նախաստիները իրենց ուղևորին: Բայց, բացարձակապես ոչինչ չիմանալով նրա մասին, նրանք հիանալի հասկանում էին, որ անծանոթն այնքան է գեղջուկ, որքան իրենց ռազմանալն է բեռնատար նալ:

Մեղմ քամի էր փչում: «Կլեյմոր»-ը դուրս եկավ ծովախորշից և ծովափի երկարությամբ գնալով միաժամանակ տեսանելի էր մնում, ապա սկսեց փոքրանալ վերահաս գիշերվա աղջամուղջի մեջ և վերջապես չքացավ աչքից:

Մի ժամ անց Ժելամբրը իր տուն վերադառնալով՝ արագընթաց փոստատար նալով կոմս դ'Արտուային՝ ուղարկեց հետևյալ երկտողը.

«Զերդ պայծառափայլություն, մեկնումը տեղի ունեցավ: Հաջողությունն ապահովված է: Մի շաբաթ հետո ամբողջ ծովափին, սկսած Գրանվիլից մինչև Սեն-Մալո, հրդեհը բռնկած կլինի»:

Իսկ դրանից չորս օր առաջ Մարնի պատգամավոր պրիորը<sup>2</sup>, որ կարևոր լիազորություններով ուղարկված էր Շերբուրգի ծովափին կանգնած զորանքանակը և այդ ժամանակ գտնվում էր Գրանվիլում, գաղտնի մի նամակ էր ստացել, որը գրված էր նույն ձեռքով, ինչ որ վերոհիշյալ երկտողը: Ահա թե ինչ էր ասված այդ նամակում.

«Բաղաքացի պատգամավոր, հունիսի 1-ին, մակընթացության ժամանակ ծով է դուրս գալու «Կլեյմոր» ռազմանալը՝ քողարկված մարտկոցով: Նա Ֆրանսիայի ափին ցամաք է իջեցնելու մի մարդ՝ հետևյալ նշաններով. ծերունի, բարձրահասակ, ներմակ մազեր, անհատկատեսակ անոթեր, գեղջկական զգեստ: Հետագա մանրամասնությունները ձեզ կուղարկեմ վաղը: Նա ափ է իջնելու երկուսի առավոտյան: Նախազգուշացրեք մեր նավատորմին, բռնեցեք ռազմանալը: Հրամայեցեք գլխատել այդ մարդուն»:

<sup>1</sup> Կոմս դ'Արտուա — հեղափոխության կողմնակից տապալված Բուրբոնների դինաստիայի ներկայացուցիչը: Հակահեղափոխության կազմակերպիչներից մեկն էր:

<sup>2</sup> Պրիոր — կաթոլիկ վանական առաջնորդ:

## II. ՆԱՎԸ ԵՎ ՈՒՂԵՎՈՐԸ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԽԱՎԱՐՈՒՄ

Դեպի հարավ ուղղվելու փոխարեն՝ ռազմաճակը նախ շուտ եկավ դեպի հյուսիս, հետո՝ դեպի արևմուտք և ուղիղ մտավ այն նեղուցը, որ հայտնի է Խորտակումների անցք անունով: Այդ անցքի ո՛չ մեկ, ո՛չ մյուս ափին փարոս չկար:

Արևն արդեն մայր էր մտել: Գիշերը սովորական ամառային գիշերներից ավելի մութ էր: Լուսինը պետք է դուրս գար, բայց ամբողջ երկինքը ծածկված էր վիթխարի ամպերով, և ամեն ինչից երևում էր, որ լուսինը կերևա միայն իր մայրամուտի պահին: Ամպերի մի մասն այնքան էր ցած կախվել, որ ծովը ծածկել էր մատախլանման քողով:

Խավարը բարենպաստ էր ռազմաճակի նպատակների համար:

Լոցման Գակուսալը հույս ուներ, որ եթե որևէ անակընկալ բան չպատահի, եթե քամին համընթաց լինի և կարելի լինի բոլոր առագաստները բացել, ռազմաճակը լուսաբացին կհասնի ֆրանսիական ափը:

Ամեն ինչ լավ էր ընթանում: Բայց ժամը իննին մոտ քամին սկսեց ուժեղանալ և ալիք բարձրացավ: Թեև քամին համընթաց էր և ալեկոծությունը փոթորկի չէր փոխվում, բայց ամեն անգամ, երբ ուժեղ ալիք էր խփում, ռազմաճակի քիթը խրվում էր ջրի մեջ:

«Գեղշուկը», որին լորդ Բակաուսը գեներալ կոչեց և որին իշխան դը լա-Տուր դ'Օվերենն ասաց. «Ցտեսություն, եղբայր իմ», հանդիսավոր անդորրությամբ քայլում էր տախտակամածում ծովաշինի հաստատուն քայվածքով, ասես չնկատելով նավի օրորումները: Մերթ ընդ մերթ նա բաճկոնի գրպանից հանում էր մի շերտ շոկոլադ, մի կտոր կրտրում, բերանը դնում ու ծամում: Թեև մազերը բոլորովին ներմակած էին, բայց բոլոր առամները տեղն էին:

Նա ոչ ոքի հետ գրույցի չէր բռնվում, եթե չհաշվենք այն կցկտուր նախադասությունները, որ երբեմն նետում էր նավապետին: Վերջինս հարգալից լսում էր նրա ամեն մի խոսքը և թվում էր, թե ավելի շուտ այդ ուղևորին էր համարում նավի հրամանատար, քան իրեն:

Լոցմանի հմուտ ղեկավարությամբ «Կելյմորը» մատա-  
խուղի ետևը ծածկված շրջանցեց Ջերսեյ կղզու հյուսիսային  
երկար վերջավորությունը, միշտ մնալով ափին մոտիկ, որ-  
պեսզի վտանգավոր խութերին չզարկվի: Գակուսալը ղեկի  
մոտ կանգնած՝ ստորջրյա ժայռերի արանքով մալին ուղ-  
ղություն էր տալիս, այսպես ասած՝ ենթադրաբար, բայց  
վստահորեն, ինչպես օվկիանոսին լավ ծանոթ մարդ: Ռազ-  
մանավը մավաքթի լույսերը չէր վառել, վախենալով, թե իր  
ներկայությունը կմատնի այդ խստորեն հսկողության տակ  
առնված ջրերում: Նավի վրա բոլորն ուրախ էին, որ մա-  
տախտը է կանգնած:

Առաջվա պես ուղեւորների վրա ամեն ինչ լավ էր ըն-  
թանում:

Ժամը տասնմեկին մոտ մավապետ կոմս դյու Բուաբերտ-  
լոն և նրա օգնական շևալյե դը լա Վյովիլը գեղջկական հա-  
գուստով մարդուն առաջնորդեցին նրան հատկացված մա-  
վախուցը, այսինքն՝ հենց մավապետի խուցը: Երբ տեղ հա-  
սան, ծերունին շուտ եկավ և ձայնը ցածրացնելով ասաց.

— Ձեզ հո հայտնի է, պարոններ, որ անհրաժեշտ է  
խստորեն պահպանել գաղտնիքը: Ոչ ոքի՝ ոչ մի խոսք  
մինչև պայթեցման րոպեն: Նավի վրա միայն դուք երկուսդ  
գիտեք իմ անունը:

— Մենք գաղտնիքը մեզ հետ գերեզման կտանենք,—  
պատասխանեց Բուաբերտլոն:

— Իսկ ես,— ասաց ծերունին,— այն չեմ ասի մուշկետ  
մահվան սպառնալիքով:

Եվ նա մտավ մավախուց:

### III. ԱԶՆՎԱԿԱՆՆ ՌԻ ՇԻՆԱԿԱՆԸ

Նավապետն ու իր օգնականը նորից վերև բարձրացան և  
սկսեցին քայլել տախտակամածում, փոխանակելով իրենց  
տպավորությունները: Նրանք խոսում էին իրենց ուղևորի  
մասին:

Բուաբերտլոն Վյովիլի ականջին ասաց.

— Ծուտով կտեսնենք, թե ինչպիսի առաջնորդ է սա:

Իսկ Վլովիլը պատասխանեց.

— Ինչ էլ որ լինի, համեմայն դեպս իշխան է:

— Այո, համարյա:

— Ֆրանսիայում ազնվական է, իսկ Բրետանում՝ իշխան:

— Բանի որ ֆրանսիական իշխան չունենք, ստիպված ենք գոհանալ բրետոնականով,— ասաց Բուաբերտլոն:

— Փոխանակ երգեցիկ կեռնեխի... ոչ, ո՛չ կեռնեխի, փոխանակ արծվի՝ ազոավ են վերցնում:

— Ես կգերադասեի ցինը,— ասաց Բուաբերտլոն:

— Իհարկե, գոնե ճիրաններ ու կտուց ունի,— համաձայնեց Վլովիլը:

— Դե, կտեսնենք, թե ինչ կլինի:

— Այո,— փոքր-ինչ լռելուց հետո նորից սկսեց լա Վլովիլը,— ժամանակն է առաջնորդի մասին մտածելու: Ես կողմնակից եմ «Վառոդ ու առաջնորդ» լոզունգին: Ես, ա՛յ, ինչ կասեմ ձեզ, մաշապետ: Ես ճանաչում եմ համարյա բոլոր ենթադրյալ առաջնորդներին: Ծանաչում եմ և՛ երեկվաններին, և՛ այսօրվաններին, և՛ նրանց, ովքեր երևան կգան վաղը: Բայց նրանցից ոչ մեկին ես չեմ համարում այն խելացի գլուխը, որ այժմ անհրաժեշտ է մեզ: Այս նզովյալ Վանդեայի համար անհրաժեշտ է բոլորովին ուրիշ տեսակ գեներալ: Այստեղ հարկավոր է հանգիստ չտալ թըռնամուն, նրանից խել յուրաքանչյուր ջրաղացը, յուրաքանչյուր թուփը, ամեն մի ջրանցքը, ամեն մի քարը: Հարկավոր է տրորել նրան ամեն մի քայլափոխում, կարողանալ օգտվել նրա յուրաքանչյուր սխալից, ոչ մի բան աչքաթող չանել, խփել աջ ու ձախ, սարսափեցնել համարձակ հարձակումներով, գթություն չճանաչել, ոչ քուն ունենալ, ոչ դադար: Այժմ այդ գեղջկական բանակում հերոսներ կան, բայց առաջնորդներ՝ չկան: Եվ իրոք, գրողը տանի, ինչի՞ համար ենք մենք հարձակվում հեղափոխության վրա, և ի՞նչ տարբերություն կա հանրապետականների ու մեր միջև, քանի որ մենք ինքներս էլ վարսավիրներին ազնվականների պես ենք նշանակում:

— Ի՛նչ արած, այդ անիծյալ հեղափոխությունը մեր մեջ էլ է թափանցում:

— Դա մի խոց է Ֆրանսիայի մարմնի վրա:

— Երրորդ դասի խոց,— նրա խոսքն ավարտեց Բուսթերտլոն:— Միմիայն Անգլիան կարող է մեզ բուժել:

— Եվ կբուժի: Հավատացե՛ք սրան, նախապե՛տ:

— Իսկ առայժմ գարշելի է ու նողկալի:

— Պարզ է. ամենուրեք՝ ուսմիկներ: Ի՛նչ զարմանալի հակառակորդներ ենք տեսնում մենք այս վանդեական պատերազմում: Կապույտների կողմում՝ գարեջուր շինող Սանտերը, իսկ սպիտակների մոտ՝ վարսավիր Գաստոնը:

— Օ՛, ոչ, սիրելի լա Վյովիլ, ես մի քիչ աչք կերպ եմ նայում այդ Գաստոնին: Նա ամենևին էլ վատ չէր պահում իրեն, երբ Գեմենեի գորքերի հրամանատար էր: Հիշեցե՛ք, թե ինչպես նա հեշտ ու հանգիստ երեք հարյուր մարդ գնդակահարեց կապույտներից, նախապես ստիպելով նրանց, որ իրենց գերեզմանները փորեն:

— Այդ ամենը շատ լավ, բայց ես միևնույն բանը նրանից վատ չէի անի:

— Իհարկե: Ես նույնպես:

— Ռազմական մեծ սխրագործությունները բնատուր ազնվություն են պահանջում այդ կատարողներից,— ասաց լա Վյովիլը:— Պատերազմը ասպետների գործ է և ոչ թե սափրիչների:

— Ասե՛նք՝ այդ երրորդ դասի մեջ պատահում են և արժանավոր մարդիկ,— առարկեց Բուսթերտլոն:— Վերցնենք, օրինակ, թեկուզ ժամագործ Ժոլիին: Ֆլանդրիական գնդի այդ նախկին սերժանտը վանդեացիների առաջնորդներից մեկն է դառնում: Նա առափնյա բանակի մի ջոկատի հրամանատարն է: Նա մի որդի ուներ: Նրա այդ որդին հանրապետական էր: Եվ ահա, հայրը մարտնչում է սպիտակների կողմում, որդին՝ կապույտների: Կույի մեջ նրանք հանդիպում են դեմ առ դեմ: Հայրը որդուն գերի է բռնում և տեղն ու տեղը սպանում:

— Ինչ որ լավ է, լավ է,— ասաց լա Վյովիլը:

Նրանք մի քանի քայլ առաջ անցան՝ յուրաքանչյուրն իր մտքերով տարված: Հետո գրույցը վերսկսվեց.

— Նավապետ, ձեր նավախցում կարծես «Մոնիտոր»<sup>1</sup> կա:

— Կա:

— Չգիտե՞ք արդյոք, թե վերջերս ինչ են խաղում Փարիզում:

— «Ադելն ու Պոլենան» և «Անձալը»:

— Կուզենայի տեսնել:

— Կտեսնենք:— Նավապետը մի րոպե մտածեց և ավելացրեց. — մի ամիս հետո մենք Փարիզում կլինենք:

— Ուրեմն, նավապետ, մեր գործերն այնքան էլ վատ չեն՞:

— Մեր գործերը բոլորովին լավ կլինեին, եթե հաջողվեր իսկական ղեկավարներ գտնել Բրետանի պատերազմի համար:

Լա Վյովիլը գլուխն օրորեց, ապա հարցրեց.

— Նավապետ, մենք ծովային հետևակ ա՞նի ենք հանելու:

— Այո՛, եթե ծովափը մեր կողմը լինի: Ոչ՛, եթե ծովափը մեզ թշնամի լինի: Պատերազմում պատահում է՝ մարդ ստիպված է լինում դռները կոտրտել, բայց լինում է և այնպես, որ ավելի ձեռնառու է գաղտագողի ներս թափանցել: Քաղաքացիական պատերազմը պետք է միշտ իր գրպանում հարմարեցված բանալի ունենա: Մենք կանենք այն, ինչ հնարավոր կլինի: Գլխավորն է՝ առաջնորդ գտնել:

Լա Վյովիլը մի պահ մտածեց և ասաց.

— Իշխան է հարկավոր, ֆրանսիական իշխան, իսկական ազնվարյուն իշխան...

— Ինչո՞ւ: «Իշխան» ասել...

— ... Միևնույն է, թե «վախկոտ» ասել: Ես այդ գիտեմ, նավապետ: Բայց նա հարկավոր է այս գյուղական անասունների վրա ազդելու համար:

— Իմ սիրելի շեալյե, իշխանները կովել չեն սիրում:

— Այդ դեպքում մենք առանց նրանց էլ յուր կզնանք:

Բուսերտյուն ինքնաբերաբար ձեռքը սեղմեց ճակատին:

<sup>1</sup> «Մոնիտոր» — ֆրանսիական լրագիր (1789—1901), որ երկար ժամանակ լույս էր տեսնում որպես պաշտոնաթերթ:



տին, կարծես այնտեղից ինչ-որ միտք էր քամում, և վերջապես ասաց.

— Դե, ի՞նչ կա որ, առայժմ այս գեներալին կփորձենք:

— Նա մեծանուն ծագում ունի:

— Դուք կարծում եք նա կարդարացնի՞ մեր հույսերը:

— Այո, եթե լավը դուրս գա,— ասաց լա Վյովիլը:

— Այսինքն՝ անողոք,— ուղղեց Բուաբերտլոն:

Կոմսը և շևալյեն իրար նայեցին:

— Կոմս դյու Բուաբերտլո, դուք գտաք իսկական խոսքը: Անողո՞ք: Այո՛, հենց այդ է մեզ հարկավոր: Այս պատերազմը գթնարտություն չպետք է ճանաչի: Հասել է արյունարբությունների ժամը: Արքայասպանները կտրեցին Լյուդովիկոս Տասնվեցերորդի գլուխը, մենք կտոր-կտոր ենք անում արքայասպաններին: Այո, մեզ հարկավոր է անողոք զորապետ, որը գուր չունի: Անժուում և Վերին Պուատուում զորապետները մեծահոգություն են խաղում, ներում են ու ողորմում, և ամեն ինչ տակնուվրա է լինում: Մատենում ու Ռետցում զորապետները դաժանություն են անում, և գործերը լավ են ընթանում:

Բուաբերտլոն չհասցրեց պատասխանել: Լա Վյովիլի վերջին խոսքերը հանկարծ ընդհատեց մի սուր ճիչ, և միաժամանակ լավեց մի տարօրինակ, ոչ մի բանի չնմանվող աղմուկ: Ե՛վ ճիչը, և՛ աղմուկը գալիս էին տախտակամածի տակից:

Նավապետն ու իր օգնականը նետվեցին դեպի միջին տախտակամածը տանող անցքը, բայց ցած իջնել չկարողացան. հրետանու ամբողջ անձնակազմը սարսափահար վերև էր փախչում շտապելով ու իրար հրմշտելով:

Ինչ-որ զարհուրելի բան էր պատահել:

#### IV. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԱՐՍԱՓՆԵՐԸ

Մարտկոցի թնդանոթներից մեկը, քամչորս ֆունտանոց ումբե նետող մի հրանոթ շղթայագերծ էր եղել:

Ծովում տեղի ունեցող բոլոր աղետներից սա, թերևս, ամենատուկալին էր: Սրանից ալելի վատ բան չէր կարող

պատահել բաց ծովում լրիվ ընթացքով առաջ շարժվող ռազմանավում:

Իր կապանքները կտրած թնդանոթն իսկույն դառնում է մի հրեշ: Ծանրածանր այդ վիթխարին վազվզում է իր անիվների վրա, բիլիարդի գնդակի պես նետվում է դեպի աջ, նետվում է դեպի ձախ, երբ նավը թեքվում է կողքի վրա, թնդանոթը թեքվում է այդ կողմը, և նավի հետ միասին ջուրն է սուզվում, երբ այն քթի վրա է թեքվում: Մերթ առաջ է սլանում, մերթ ետ է դառնում, ապա կանգ է առնում մի պահ, ասես խորհելով, թե էլի ինչ անի, հետո նորից սկըսում է վազվզել, նետի պես սլանալ նավի մի ծայրից մյուսը, վեր-վեր է թռչում տեղում, ծառս է լինում, ետ է դառնում ու նորից սլանում, պտույտներ գործում, շուրջն ամեն ինչ փշրելով, ջարդելով, սպանելով ու ոչնչացնելով:

Երևակայեցեք ձեզ մի բաբան<sup>1</sup>, որը հարվածում է պարսպին իր ուզածի պես: Եվ դրան ավելացրեք, որ բաբանը երկաթից է, իսկ պարիսպը՝ փայտյա:

Այդ կատաղած հսկան ծանր է փղի նման, բայց ցատկում է հովազի պես և խլրտում է ինչպես մուկ: Նա համառ է ինչպես մի կետի հարվածող կացին, հարափոփոխ է վրա տվող ալիքի պես, մահացու՝ կայծակի հարվածի նման և լուռ՝ ինչպես գերեզման:

Այն տառը հազար ֆունտ է կշռում, բայց ուստոստում է ինչպես մանկական գնդակ: Մերթ հանկարծ պտույտներ է գործում տեղում, մերթ շուտ է գալիս ուղիղ անկյունով. ի՞նչ կարող ես անել: Ինչպե՞ս կանգնեցնել նրա այդ կատաղի պարը:

Փոթորիկը վերջ ի վերջո կդադարի, քառին կհանդարտի, կտրված կայմը կարելի է փոխել, նավի ճեղքվածքը փակել կլինի, հրդեհը՝ մարել: Բայց ինչպե՞ս զսպես այդ վիթխարի բրոնզե գազանին: Ինչպե՞ս մոտենաս նրան: Կատաղած շանը կարելի է զսպել, ցուլին՝ շշմեցնել, վիշապին կարելի է հաչացքով դյուրել, վագրին ու առյուծին վախեցնել: Բայց այս հրեշի դեմ, շղթայազերծ եղած թնդանոթի դեմ պաշտպանության ոչ մի միջոց չկա: Նրան սպանել չես

<sup>1</sup> Բաբան — հին դարերում փլեցնող գործիք, որն օգտագործվում էր ամրոցների պաշարման ժամանակ:

կարող. Ըստ առանց այդ էլ անշունչ է: Եվ դրա հետ միասին  
նա ապրում է: Ապրում է մի չարադետ կյանքով: Հատակը  
նոճվում է նրա տակ, և նա ինքն էլ նոճվում է հատակի  
հետ: Նավը շարժվում է և հրում նրան, ինչպես ալիքն է  
հրում նավին և ինչպես քամին է քշում ալիքին: Այս կոր-  
ծանիչն ինքը խաղալիք է տարերքի ձեռքին: Նավը, ալիքը,  
քամու պոռթկումը նրան իրենց իշխանության տակ են պա-  
հում, նրանցից է կախված նրա զարհուրելի կյանքը: Ինչ-  
պե՞ս զսպես այդ հրեշավոր գործիքը, որը խորտակում է  
սպառնում: Ինչպե՞ս գուշակես նրա վագրի ուղղությունը,  
նրա այդ բոլոր տատանումները, շրջադարձերը, կանգառում-  
ներն ու հարվածները:

Նավի կողին տրված այդպիսի ամեն մի հարված կա-  
րող է ծովի հատակն իջեցնել այն: Ինչպե՞ս կանխես աղետը:

Մի ակնթարթում ուսգմանավի ամբողջ անձնակազմը  
ոտքի վրա էր:

Իեպքի մեղավորը մի թնդանոթաձիգ էր, որը լավ չէր  
ամրացրել շղթայի պտուտակամերը և թնդանոթի անիվների  
տակ արգելակ չէր դրել:

Այն պահին, երբ շղթան կտրվեց, բոլոր թնդանոթաձիգ-  
ները մարտկոցի մոտ էին: Ոմանք նստած էին խումբ-խումբ,  
ոմանք մենակ, և բոլորն զբաղված էին նախապատրաստու-  
թյուններով, որ մարտը սկսվելու դեպքում ամեն ինչ իր տեղում  
լինի: Ծղթաչազերծ թնդանոթը նավի ճոճումի հետ տախ-  
տակամածի երկարությամբ առաջ նետվելով խրվեց մարդ-  
կանց մի խմբի մեջ և իսկույն տրորեց չորսին, ապա կոտ-  
րուկ շուռ եկավ մի կողմի վրա, երկու կտոր արեց հինգե-  
րորդ զոհին և զարնվելով ձախ կողին՝ հրետասայլից պո-  
կեց մի ուրիշ թնդանոթ: Ահա հենց այդ ժամանակ էր, որ  
հնչեց սարսափի ճիչը, որը լավեց վերևում: Միջին տախ-  
տակամածում եղած բոլոր մարդիկ նետվեցին դեպի սան-  
դուղքը: Մի ակնթարթում մարտկոցի շենքը դատարկվեց:

Վիթխարի թնդանոթը մնաց մենակ, իր կամքին թողնը-  
ված: Այժմ նա կարող էր ինքագլուխ տեղ ու տիրական լի-  
նել նավի վրա: Նա կարող էր անել՝ ինչ կամենար: Մար-  
տերում կոխված այդ բոլոր մարդիկ, որոնք կովի մեջ ան-  
գամ ծիծաղում էին, այժմ դողում էին ամբողջ մարմնով:

Աճհնարին է նկարագրել այն սարսափը, որ համակել էր բոլորին:

Նավապետ Բուաբերտլոն և նրա օգնական լա Վյովիլը, երկուսն էլ քաջակորով մարդիկ, անցքի վերևը կանգնած՝ ցած էին նայում լուռ ու գունատ, չիմանալով, թե ինչ անեն: Ինչ-որ մեկը նրանց մի կողմ հրեց և ցած իջավ:

Այդ նրանց ուղևորն էր, բրետոնացի գեղջուկը, այն մարդը, որի մասին նրանք խոսում էին մի լուպե առաջ:

Սանդուղքով ցած իջնելով՝ նա կանգ առավ և սկսեց նայել:

## V. ՈՒԹ ԵՎ ԱՐԻՈՒԹՅՈՒՆ

Թնդանոթը դեռ տարութերվում էր միջին տախտակամածում: Մարտկոցի գլխին օրորվող ծովային լապտերը լույսի ու խավարի գլխապտույտ փոփոխություններով ավելի էր սաստկացնում զարհուրելի տեսարանը: Թնդանոթի վազքի արագությունից նրա գծագրությունները բոլորովին չքացել էին. նա մերթ լույսի շերտի մեջ էր նետվում ամբողջովին սև տեսքով, մերթ պայծառ շողերից լուսավորվելով, վազում էր խավարի մեջ:

Թնդանոթը շարունակում էր իր ավերիչ վազքը: Նա արդեն ջարդել էր չորս հրանոթ և նավակողին երկու մեղք էր քացել: Լսվում էր, թե ինչպես է նավը ճրթճրթում նրա հարվածներից: Թվում է, թե շշի մեջ լցրած կոտորակն էլ, ինչպես էլ այն թափահարեին, չէր կարող այդպիսի խելագար պտույտներ գործել: Ծանր հրետասայլի չորս անիվները ամեն րոպե գլորվում էին սպանված մարդկանց մարմինների վրայով, տրորում էին նրանց, ճխլում ու պատառոտում, և շուտով հինգ դիակները դարձան մի քսան անձն մսի կտորներ, որոնք այս ու այն կողմ էին գլորվում տախտակամածում: Մեռյալ գլուխներն ասես գոռոռում էին: Արյունն այս ու այն կողմ էր հոսում նավի տատանումներից: Նավի ներքին երեսապատվածքը շատ տեղ ծակծկելով սկսել էր պոկոտվել: Ամբողջ նավը լցվել էր մի զարհուրելի աղմուկով:

Նապաստելու րոպեական շփոթմունքից հետո արագորեն ուշքի եկավ: Նրա հրամանով քառակուսի անցքի միջով սկսեցին միջին տախտակամածը նետել ամեն բան, ինչ կարող էր կանգնեցնել կամ գոնե դանդաղեցնել հրանոթի կատաղի վազքը: Նետում էին ներքնակներ, մահճակալներ, պահեստի առագաստներ, ճոպանի կծիկներ, նապաստական սպիտակեղենով լի պարկեր, նույնիսկ կեղծ թղթադրամների կապոցներ, որոնցից նավի վրա շատ կար: Անգլիացիների այդ ստոր մտահղացումն այն ժամանակներում դիտվում էր որպես միանգամայն թույլատրելի ուզմական խորամանկություն:

Բայց ի՞նչ կարող էր անել այդ փալաս-փուլուսը, եթե ոչ ոք սիրտ չէր անում իջնել, որպեսզի դասավորի պրանք ինչպես պետքն է: Մի քանի րոպեում այդ ամենը ճզմվում, փշուր-փշուր էր լինում:

Ծովի ալեկոծումն էլ սաստկացնում էր աղետը: Իսկական փոթորիկ լինե՞ր՝ գուցե և շուտ կտար թնդանոթը: Եթե այն կողքի վրա ընկներ կամ անիվները դեպի վեր, նրան զսպել կարելի կլինե՞ր:

Բայց ավերմունքը շարունակվում էր: Արդեն ճաքճքվել կամ նույնիսկ կոտրուվել էին կայմերի ներքին ծայրերը, որոնք նավի բոլոր հարկերի միջով իջնելով գալիս ամրանում էին նավի ողնուղին: Թնդանոթի ահեղ հարվածներից առաջակայմը ճեղքվել էր: Երեսուն թնդանոթներից տասն արդեն մարտի համար պիտանի չէին: Նապակողերի ճեղքվածքների թիվն ավելանում էր, և ջուրն արդեն սկսում էր ներս հոսել:

Ծերունի ուղևորը միջին տախտակամած իջնելով՝ կանգնել էր սանդուղքի մոտ քարե արձանի պես: Դաժան հայացքով նա նայում էր ավերմունքի այդ պատկերին, բայց չէր շարժվում: Թվում էր, թե անհնարին է թեկուզ մի քայլ անել դեպի մարտկոցի շենքը:

Շղթայագերժ հրանոթի ամեն մի նոր շարժումը մոտեցնում էր ուզմանավի խորտակումը: Էլի մի քանի րոպե՝ և խորտակումն անխուսափելի կդառնար:

Մնում էր կամ կործանվե՞, կամ կանխել աղետը: Հարկավոր էր որևէ քայլ անել:

Բայց ի՞նչ:

Հրանդը զարհուրելի հակառակորդ էր: Անհրաժեշտ էր գապել մոլագար կատաղածին, կանգնեցնել կայծակը:

Իսկ դրսից ալիքները զարմկում էին ուռածանալի կողերին, պատասխանելով ներքին հարվածներին: Թվում էր, թե երկու մուրճ հերթով խփում են նավակողերին:

Հանկարծ այդ անմատչելի հրապարակում, որտեղ ազատ վազվզում էր շղթայագերձ գազանը, երևաց մի մարդ՝ երկաթե ձողը ձեռքին: Դա հենց ինքը՝ այդ աղետի հանցավորն էր, շղթայագերձ հրանդի հրետաձիգը, հենց նա, որի մեղքով սկսվել էր աղետը: Գիտակցելով, որ դժբախտության պատճառն ինքն է, նա ցանկացել էր ուղղել այն: Մի ձեռքին երկաթե ձողը, մյուսում օղակ արած պարանը՝ նա նետվեց միջին տախտակամածը:

Եվ սկսվեց կատաղի պայքարը. հրանդի մարտը հրետաձիգի հետ, առարկայի և մարդու մենամարտը:

Մարդը կանգնել էր մի անկյունում, ձեռքին բռնած ձողը և օղակավոր պարանը: Մեջքը թափքին հենելով և չոելով ոտքերը, որոնք ասես պողպատից էին ձուլված, նա կարծես գամված լիներ հատակին և մահվան գունատությամբ սպասում էր հանգիստ ու վճռական:

Նա սպասում էր այն րոպեին, երբ թնդանոթը կսլանա իր մոտով:

Հրետաձիգը ճանաչում էր իր հրանդը, և նրան թվում էր, թե հրանդն էլ իրեն է ճանաչում, նրանք վաղուց էին միասին ապրում: Քանի՜-քանի անգամ հրետաձիգը իր ձեռքը խրել էր նրա երակը: Դա նրա ընտելացրած վայրի գազանն էր: Եվ մարդը թնդանոթի հետ խոսում էր ինչպես շուն հետ կխոսեն:

— Այս կողմը, այս կողմը, — կանչում էր նա:

Գուցե նա սիրում էր հրանդին: Թվում էր, նա ցանկանում է, որ հրանդն իր կողմը վազի:

Բայց մարդու կողմը սլանալ՝ նշանակում էր նրա վրա ընկնել: Եվ եթե այդ տեղի ունենար, մարդը կորած էր: Ինչպե՞ս խույս տալ դրանից: Ինչպե՞ս անել, որ հրանդը չճգմի մարդուն: Բոլորը նրանց էին նայում շունչներն իրենց պահած: Միայն ծերունի ուղևորն էր, որ հանգիստ էր երե-

վում. բացի ընդհարման երկու մասնակիցներից միայն մա էր, որ գտնվում էր տախտակամածի վրա, որպես մենամարտի մոռացված վկա:

Նա ինքն էլ ճգնվելու վտանգի մեջ էր, բայց տեղից չէր շարժվում:

Իսկ նրա տակ ջրային կույր տարերքը ղեկավարում էր պայքարը:

Այն պահին, երբ հրետաձիգը այդ զարհուրելի մենամարտի մեջ մտնելով ձայն տվեց թնդանոթին, ծովի քմահաճույքով մալի տատանումները մի ակնթաթթ պատահաբար դադարեցին, և հրանոթը, ասես մտքի մեջ ընկած, քարացավ տեղում:

— Դե մո՛տ եկ, մո՛տ եկ,— կրկնում էր մարդը:

Թվում էր, թե հրանոթը լսում է նրան:

Եվ հանկարծ նետվեց նրա կողմը: Մարդը խույս տվեց հարվածից:

Եվ սկսվեց պայքարը, չտեսնված մի պայքար: Փխրուն էակը պայքարում էր անխոցելի թնդանոթի դեմ: Միս ու արյունից կազմված հնազանդեցնողը կովի էր բռնվել բրոնզե գազանի հետ:

Եվ այս ամենը տեղի էր ունենում կիսախավարի մեջ:

Ատելույթյամբ ու կատաղությամբ լեցուն հսկան, թվում էր, թե գուրկ չէ խելքից. մա ևս հարմար պահ էր ընտրում: Դա ասես մի ինչ-որ վիթխարի երկաթե միջատ էր, որն ասես դիվային կամքի տեր լիներ: Այդ հսկա մորեխը մերթ զարկում էր մարտկոցի ցածրիկ առաստաղին, մերթ մորից ընկնում էր իր չորս անիվների վրա, ինչպես վագրը չորս թաթերի վրա, և մորից սկսում էր մարդու ետևից ընկնել: Իսկ մարդը ժիր ու ճարպիկ՝ մողեսի պես պտույտներ գործելով, խույս էր տալիս այդ կատաղի հարձակումներից: Եվ նրան հաջողվում էր խույս տալ ճակատ առ ճակատ հանդիպումներից, բայց հարվածները տեղում էին ուղղված մալի կողերին և շարունակում ավերմունքը:

Հրանոթն իր ետևից քարշ էր տալիս շղթայի մի կտոր: Այդ շղթան ավելի ևս վտանգավոր էր դարձնում հրանոթի վազվզոցը, այն ասես երկաթե մտրակ լիներ պղնձյա ձեռքի մեջ և կատաղի թափով պտույտներ էր գործում թըն-

դանոթի շուրջը: Ծղթալի այդ կտորը ավելի էր քարդացնում պայքարը:

Բայց մարդը պայքարում էր: Նույնիսկ լինում էին բուպեներ, երբ նա ինքն էր հարձակման անցնում:

Երկաթե ձողն ու պարանը ձեռքին՝ նա շարժվում էր նավակողի երկարությամբ, հարմար բուպե ընտրելով: Եվ հրանոթը, ասես որոգայթն զգալով՝ խույս էր տալիս նրանից: Բայց անկտարում մարդը շարունակում էր հետապնդումը:

Այդպիսի պայքարը երկար տևել չէր կարող: Հանկարծ թնդանոթը կարծես ինքն իրեն ասաց. «Բավական է: Պետք է վերջ տալ», — և կանգ առավ: Զգացվում էր, որ վախճանը մոտենում է: Թնդանոթը դեռ տատանվում էր, բայց թվում էր, արդեն պատրաստ էր կամ իրոք պատրաստ էր (շրջապատի համար նա կենդանի արարած էր) ինչ-որ անողոք որոշում ընդունելու: Հանկարծ նա հարձակվեց հրետաձիգի վրա: Սա ետ ցատկեց, հրանոթին բաց թողեց իր մոտով և ծիծաղելով ետևից գոռաց.

— Չեղա՛վ: Մի անգամ էլ փորձիր:

Թնդանոթն, ասես զայրանալով, զարկվեց նավի ձախ կողին, ապա, ասես անտեսանելի պարսատիկից պոկվելով նետվեց դեպի աջ նավակողը, ուղիղ մարդու վրա, որը նորից ետ ցատկեց նրանից: Գազան կորած հսկայի հարվածներից երեք հրանոթ արդեն պոկվել էին: Ինքն էլ չիմանալով, թե ինչ է անում, կույրի նման նա հանկարծ ետևը դարձրեց մարդու կողմը, առաջ գլորվեց, պոկեց ֆորշտենը<sup>1</sup> և քիչ մնաց պիտի անցք բանար նավակողին: Մարդը ետ ցատկեց դեպի սանդուղքը և երկաթե ձողը պատրաստ բռնած՝ կանգնեց ծերունի ուղևորից մի բանի քայլ հեռու: Հրանոթը ասես նկատեց այդ. նույնիսկ շուռ գալու նեղություն չքաշելով՝ նա հարվածող կացնի արագությամբ ետև շարժվելով սլացավ դեպի մարդը: Նավակողի ու սանդուղքի միջև սեղմված մարդը անխուսափելիորեն կորած էր թվում:

Սուկումի մի ճիշ դուրս թռավ բոլորի շուրթերից:

<sup>1</sup> Ֆորշտեն — նավի ետևի մասը, որ ողնուցի շարունակությունն է հանդիսանում և կազմում է նավաթի վերջավորությունը:



Բայց հենց այդ րոպեին ծերունի ուղևորը, որ մինչ այդ կանգնած էր անշարժ, իր տարիքի համար զարմանալի ճարպկությամբ նետվեց դեպի թնդանոթը: Վաշկենապես վերցնելով թղթադրամի մի մեծ հակ և ճզմվելու վտանգին ենթարկվելով՝ նա այդ հակը նետեց ուղիղ հրետասայլի անիվների տակ: Այդ համարձակ ու վտանգավոր գործողությունը կատարվեց այնպիսի ճարպկությամբ, այնպիսի ճշտությամբ ու հմտությամբ, որին կարող էր նախանձել նույնիսկ ծովային հրանոթների հետ վարվելու ձևերն իմացող մարդը:

Թղթադրամների հակը ուղեփակի դեր խաղաց: Պատահում է, որ մի փոքրիկ քարի կտոր կանգնեցնում է ժայռի անկումը կամ փայտի մի ճյուղ փոխում է սահող սառցադաշտի ուղղությունը: Հրանոթն ասես սայթաքեց: Այդ ժամանակ հրետաձիգը, բարենպաստ րոպեից օգտվելով, արագորեն երկաթե ձողը խրեց հրետասայլի ետևի անիվի ճակերի մեջ: Թնդանոթը կանգ առավ:

Այն շրջվեց մի կողմի վրա: Մարդը ձեռքի երկաթե ձողով շուռ տվեց նրան: Զանգակատնից պոկված զանգակի դղրդոցով ծանր զանգվածը տապալվեց հատակին: Քրտնամխած մարդը նետվեց նրա վրա և պարանի օղակը գցեց պարտված բրոնզե հրեշի վիզը:

Ամեն ինչ վերջացած էր: Մարդը հաղթեց: Մրջյունը հաղթահարեց վիթխարի մաստադրոնոսին<sup>1</sup>: Թզուկը կաշկանդեց կաշծակին:

Զինվորներն ու նավաստիները ծափահարեցին:

Ամբողջ անձնակազմը ճոպաններ ու շղթաներ վերցրած ցած նետվեց, և մի րոպե անց՝ թնդանոթն արդեն կաշկանդված էր:

Հրետաձիգը խոր գլուխ տվեց ուղևորին.

— Պարոն, դուք փրկեցիք իմ կյանքը:

Ծերունին, որ դարձյալ բռնել էր իր նախկին անշարժ դիրքը, ոչ մի պատասխան չտվեց:

---

<sup>1</sup> Մաստադրոնոս — փղանման վիթխարի բրածո կաթնասուն կենդանի:

Մարդը հաղթանակեց, բայց, կարելի է ասել, թնդանալովն էլ հաղթել էր: Անհապաղ խորտակումը կանխված էր, բայց չէր կարելի ասել, թե՛ ուղղամասովը փրկված է: Նրա ստացած վնասվածքներն անուղղելի էին թվում: Նավակողերին հինգ ճեղքվածք գտան: Դրանցից մեկը՝ քթամասում շատ մեծ էր: Երեսուն հրանոթից քսանն անպետքացել էին: Ծարքից դուրս էր եկել և այն հրանոթը, որն այդքան աղետներ պատճառեց և այժմ բռնվել էր ու նորից շրթաչակապ արվել: Մարտկոցի պիտանի հրանոթների թիվն իջել, հասել էր իննի: Զուրն սկսել էր նավամբար հոսել: Անհրաժեշտ էր իսկույն գործի դնել պոմպերը և կարգի բերել վնասվածքները:

Միջին տախտակամածը, — այժմ այն կարելի էր հանգամանորեն դիտել, — մի զարհուրելի տեսարան էր ներկայացնում: Ավելի մեծ ավերածություն դժվար է պատկերացնել նույնիսկ կատաղած փղի վանդակում:

Որքան էլ ուղղամասովի համար կարևոր էր աննկատ մնալ, տվյալ պահին շատ ավելի կարևոր էր կանխել նրա խորտակումը: Հարկ եղավ նավակողերին այստեղ-այնտեղ լապտերներ կախելով լուսավորել տախտակամածը:

Մինչ տեղի էր ունենում ողբերգական պայքարը հրանոթի հետ և անձնակազմը, որի համար դա կյանքի ու մահու հարց էր, ամբողջովին կանգնած էր ուղղամասովի վրա տեղի ունեցող աղետով, ոչ ոք չգիտեր, թե ինչ է կատարվում ծովում: Այնինչ այդ ժամանակ մատախուղը թանձրացել էր, եղանակը՝ փոխվել: Նավը լող էր տալիս քամու կամքով և իր ուղղությունից շեղվելով շատ ավելի դեպի հարավ էր գնացել, քան անհրաժեշտ էր: Այժմ նրան այլևս չէին պաշտպանում Զերսեյի ու Գերնսեյի ափերը, նա անպաշտպան ընկել էր ալեկոծ ծովի մեջ: Վիթխարի ալիքները լիզում էին նրա բաց վերքերը: Դա մի վտանգավոր փաղաքշանք էր: Ալեկոծությունն ավելի ու ավելի սպառնալից էր դառնում: Առափնյա թեթև հողմը գնալով սաստկանում էր:

Մոտենում էր մրրիկը, գուցե փոթորիկը: Տասնհինգ քայլի վրա ոչինչ չէր երևում:

Մինչ անձնակազմը մի կերպ հապճեպորեն կարգի էր բերում միջին տախտակամածի վնասվածքները, փակում էր ճեղքերը և մարտական կարգով դասավորում ողջ մնացած թնդանոթները, ծերունի ուղևորը վերև բարձրացավ:

Նա կանգնել էր այնտեղ, մեջքը հենած մեծ կայմին:

Տարված լինելով իր մտքերով՝ նա չնկատեց, որ ռազմա-նավի վրա ինչ-որ արտասովոր շարժում է սկսվել: Շեւայե դը լա Վյովիլը ծովային հետևակի զինվորներին հրաման տվեց շարք կազմել մեծ կայմի երկու կողմերում, իսկ այդ եռուգետին մասնակցող նավաստիները բոցմանի սուլոցով տեղավորվեցին կայմերի հորիզոնադիր ձողափայտերին:

Կոմս դյու Բուաբերտլոն մոտեցավ ուղևորին:

Նրա ետևից քայլում էր պատառոտված հագուստով, բզկտված, թափառուն հայացքով, քայց և այնպես գոհ դեմքով մի մարդ:

Դա այն նավաստին էր, որ հենց նոր այնքան հմտորեն գսպեց հրեշին, այն հրետամիզը, որ հաղթեց թնդանոթին:

Կոմսը զինվորական կարգով պատվի բռնեց գեղջկա-կան հագուստով ծերունուն և ասաց.

— Գեներալ, ահա այն մարդը:

Հրետանավորը կանգնել էր ձգված և համեստորեն հա-յացքը ցած գցած:

Կոմս դյու Բուաբերտլոն շարունակեց.

— Գեներալ, չե՞ք գտնում արդյոք, որ հրամանատա-րությունը պետք է որևէ կերպ նշի այս մարդու արարքը:

— Այո, գտնում եմ, — պատասխանեց ծերունին:

— Այդ դեպքում բարեհաճեցեք հրաման տալ, — ասաց Բուաբերտլոն:

— Այդ իրավունքը ձեզ է պատկանում. նավապետը դուք եք:

— Բայց դուք գեներալ եք, — առարկեց Բուաբերտլոն:

Ծերունին նայեց հրետանավորին:

— Մո՛տ արի, — հրամայեց նա:

Հրետանավորը մի քայլ առաջ արեց:

Ծերունին դարձավ դեպի կոմսը, նրա կրծքից վերցրեց սուրբ Լյուդովիկոսի շքանշանը և ամրացրեց հրետանավո-րի բաճկոնին:

— Ուռա՛,— գոչեցին նապաստիները:

Ծովային հետևակի զինվորները պատվի բռնեցին:

Այն ժամանակ ուղևոր ծերունին, մատը մեկնելով դեպի հուզված հրետանավորը, ասաց.

— Իսկ այժմ՝ գնդակահարե՛լ սրան:

Ցնծության աղաղակները քար կտրեցին օդում: Բոլորը սառեցին:

Գերեզմանային լուռության մեջ հնչեց ծերունու բարձր ձայնը.

— Այս մարդու անփութությունը քիչ մնաց պիտի խորտակեր նավը: Գուցեն այն այլևս փրկել էլ չի կարելի: Լինել ծովում՝ նշանակում է պայքարել թշնամու դեմ: Ծովային ուղևորություն կատարող նավը նույնն է, ինչ որ բանակը՝ մարտի մեջ: Փոթորիկը երբեմն թաքնվում է, բայց միշտ էլ հետապնդում է նավին: Ծովն ամբողջովին մի դառն է: Թշնամու դեմ դիմաց կատարած ամեն մի վրիպում մահով է պատժվում: Կատարված սխալն ուղղել չի լինի: Քաջությունը պետք է պարզևատրվի, իսկ անփութությունը՝ պատժվի:

Այս բառերը տեղում էին մեկը մյուսի ետևից դանդաղորեն, հանդիսավորությամբ, մի ինչ-որ անողորք չափավորությամբ, ինչպես կացնի հարվածները՝ կաղնի ծառին:

Ապա նայելով զինվորներին, ծերունին ավելացրեց.

— Կատարե՛լ դատավճիռը:

Մարդը, որի բանկոնին ամրացված էր սուրբ Լյուդովիկոսի խաչը, գլուխը կախեց:

Կոմս դյու Բուաբերտոյի նշանով երկու նապաստի ցած իջան և շուտով վերադարձան, բերելով մի սավան: Նրանց ետևից գալիս էր նավի քահանան, որը ծով դուրս գալու պահից սկսած աղոթքի էր չոքել սպառնական նապախցում: Սերժանտը մեծ կաշմի մոտ կանգնած հրացանավոր զինվորներից անջատեց տասներկու հոգի և կանգնեցրեց նրանց երկու շարքով, յուրաքանչյուրում՝ վեց մարդ: Դատապարտյալը առանց մի խոսք ասելու կանգնեց նրանց միջև: Քահանան խաչը ձեռքին առաջ եկավ և մոտեցավ նրան:

— Մա՛րշ,— հրաման տվեց սերժանտը:

Դասակը դանդաղորեն շարժվեց դեպի նավի քիթը: Սա-

վանը բերող նախաստիները քայլում էին նրանց ետևից:

Ռազմանալում քար լուրջուն էր տիրում: Հեռվում մրրիկն էր մոնչում:

Մի քանի րոպե անց խավարի մեջ մի լույս շողաց և որոտաց հրացանային համազարկը, ապա ամեն ինչ լոեց, և շուտով լսվեց ջուրն ընկնող մարմնի ճողփյունը:

Ծերունի ուղևորը նույն դիրքով կայմին հենված և ձեռքերը կրծքին խաչած՝ տարված էր իր մտքերով:

Բուաբերտլոն մատնացույց անելով նրան՝ լա Վյովիի ականջին շշնջաց.

— Վերջապես Վանդեան իր գլուխն ունի:

## VII. ՈՎ ԱՌԱԳԱՍՏ Է ԲԱՐՁՐԱՅՐԵԼ,

### ԽԱՂ Է ՍԿՍԵԼ ԲԱԽՏԻ ՀԵՏ

Բայց ի՞նչ էր սպասում ռազմանալին:

Ամպերը, որ գիշերվա ընթացքում համարյա ձուլվում էին ալիքների հետ, այժմ այնքան էին ցած իջել, որ թուրովին ծածկել էին հորիզոնը: Ամբողջ ծովը ասես մոգ ծածկոցի տակ լիներ: Ծորջը թանձր մառախուղ էր կանգնած: Այդպիսի վիճակը նույնիսկ անվնաս նալին կործանում կսպառնար:

Մառախուղին ավելացավ և ավելոծությունը:

Անձնակազմը սարսալ ժամանակ չկորցրեց: Ռազմանալը թեթևացվեց. ծովը նետեցին այն ամենը, ինչ կարելի էր նետել թնդանոթի գործած ավերածությունից հետո՝ ջարդված հրանոթները, կոտրված հրետառագները, փայտի ու երկաթի կտորտանքը: Հետո սպանվածների դիակները բեզեկոնների մեջ փաթաթելով տախտակների վրա դրին ու ծովն իջեցրին:

Ծովի դեմ պաշարելը գնալով դժվարանում էր: Փոթորիկն այնքան էլ ուժեղ չէր, ընդհանրապես, հորիզոնի այն կողմում մոլեգնող մրրիկն սկսել էր մեղմանալ ու հեռանալ դեպի հյուսիս: Բայց ծովի ալիքները չէին փոքրանում:

Վնասված նալը չէր կարող երկար դիմանալ ուժեղ հար-

վածներին, և ամեն մի խոշոր ալիք կարող էր ճակատագրական լինել նրա համար:

Գալուալը, մտքի մեջ ընկած, կանգնել էր դեկի առաջ: Վտանգն անհոգ դեմքով դիմավորելը նավերի հրամանատարների սովորությունն է:

Լա Վյովիլն այն մարդկանցից էր, որոնք նույնիսկ փորձանքի մեջ ուրախ տրամադրությունը պահպանում են: Նա մոտեցավ Գալուալին:

— Դե՛, ի՞նչ կասես, լոցման, կարծես փոթորիկն անցա՞վ,— ասաց նա:— Ծառ էր ուզում փոշտալ, բայց չկարողացավ: Ամեն ինչ լավ կանցնի: Քամի կլինի միայն, ուրիշ ոչինչ:

Գալուալը լրջորեն պատասխանեց.

— Քամին ալիք է բարձրացնում:

Ծովայինները ոչ ծիծաղել են սիրում, ոչ տխրել: Բայց լոցմանի պատասխանի մեջ տագնապ էր զգացվում: Ծեղքվածք ունեցող նավը ուժեղ ալեկոծության ժամանակ հեշտությամբ կարող է ջրով լցվել: Իսկ Գալուալն իր գուշակությունն ընդգծեց նաև հոգեբանի մի մուսլ շարժումով: Ծովը լի է գաղտնիքներով. երբեք չի կարելի կանխատեսել նրա մտադրությունը: Ծովում միշտ պետք է զգույշ լինել:

Լա Վյովիլն զգաց, որ հարկավոր է լրջանալ:

— Լոցման, որտե՞ղ ենք մենք,— հարցրեց նա:

Հարցը նա տվեց լոցմանին, բայց պատասխանն ստացավ հորիզոնից:

Ջրի վրա իջած մառախուղի քողը պատռվեց, և աչքի առաջ բացվեց դեպի հեռուն փոված ծովի անհանգիստ մակերեսը:

Երկինքը՝ ասես ամպերից կազմված մի համատարած առաստաղ լինեք: Բայց ամպերը մինչև հորիզոն չէին հասնում. արևելքում սևին տվող ծովի և ամպերով ծածկված երկնքի միջև երևում էր սպիտակին տվող մի շերտ՝ բացվող օրվա կարապետը: Արևմուտքում երևում էր դեռ նոր մայր մտած լուսնի դժգույն լույսը:

Այդ երկու լուսավոր շերտերի ֆոնի վրա երևում էին ինչ-որ ուղղաձիգ ու անշարժ սիլուետներ:

Երկնքի արևմտյան կողմում, որ լուսավորված էր լուսնի

յնչսով, երևում էին երեք ժայռերի գծագրությունը:

Արևելքում, հենց ուղիղ հորիզոնի մոտ, լուսաբացի աղոտ լույսի մեջ ծովի վրա բարձրացել էին ութ նավերի առագաստները, որոնք ահագոյն շարվել էին մի գծի վրա, իրարից հավասար հեռավորությամբ:

Երեք ժայռերը ստորջրյա խութեր էին, ութ նավերը՝ ֆրանսիական էսկադրան:

Ռազմանավի ետևը Լե-Մենկյե վատահամբավ ժայռերն էին, առջևում՝ թշնամու նավատորմը: Արևմուտքում ծովի հորձանուտն էր, արևելքում՝ մահացու մարտը: Անհավասար մարտ կամ՝ խորտակում. ուրիշ ընտրություն չկար:

Ժայռերի դեմ պայքարելու համար ռազմանավը սոսկ վնասված իրան ուներ, անպետքացած նավասարքեր և հիմքերը խախտված կայմեր: Թշնամու դեմ պայքարելու համար ուներ մի մարտկոց, որի երեսուն հրանոթներից մնացել էին ինը, և բոլոր լավագույն հրետաձիգներն սպանված էին:

Ծեղը դեռ նոր էր սկսել բացվել, և մինչև լուսաբաց բավական ժամանակ կար: Գիշերը կարող էր սովորականից էլ երկար տևել, որովհետև խափարը կախված էր գլխավորապես սև ու թափն ամպերից, որոնք կամարի պես կախված էին ծովի վրա:

Ցածրի ամպերը քշող քամին ռազմանավին էլ քշում էր դեպի Լե-Մենկյե:

Վնասված և ուժասպառ նավը համարյա չէր ենթարկվում դեկին և այլևս ինքը չէր ընտրում իր ճանապարհը, այլ շարժվում էր քամու և ալիքների քմահաճույքով:

Լե-Մենկյե ահավոր խութը այն ժամանակներում շատ ավելի վտանգավոր էր, քան այժմ: Ծովն իր անվերջ ալեբախությամբ արդեն փլել է այդ բնական ծովալին ամրոցի աշտարակներից շատերը: Ժայռերի գծագրությունը շարունակ փոփոխվում է:

Ծովը մի անդադրում սղոց է, և ամեն ալեբախության ժամանակ իր ալիքների առամներով նորանոր կտրվածքներ է անում ժայռերի վրա:

Այն ժամանակներում Լե-Մենկյեին մոտենալը կործանում էր նշանակում:

Իսկ արևելքում երևացող ութ նավերը հենց այն էսկադ-

րան էր, որը հետագայում հռչակվեց նավապետ Դյուշենի  
հրամանատարությամբ:

Ռազմանավի դրությունը շատ ծանր էր: Շղթայագերծ  
հրանոթի առաջացրած իրարանցման ժամանակ այն ակա-  
մայից շեղվել էր իր սկզբնական ուղղությունից: Եթե նույ-  
նիսկ կարողանար մանևրել ու գործի դնել բոլոր առագաստ-  
ները, միևնույն է, չէր կարող վերադառնալ Ջերսեյ, որով-  
հետև Լե-Մենկյեն փակում էր նրա ճանապարհը: Իսկ  
ֆրանսիական ափին մոտենալ խանգարում էր էսկադրան:

Այնուամենայնիվ, փոթորիկ չկար. կար միայն «ալիք»,  
ինչպես բոցմանն էր ասում: Ծովը, որին քշում էր սաստ-  
կացող քամին և իր ճանապարհին հանդիպում էր ստորջրյա  
խութերի արգելքին, լքշորեն անհանգստացած էր:

Ամբողջ գիշերը «Կլեյմոր» ռազմանավը պաշարում էր  
մառախուղի դեմ և պատրաստվում էր փոթորկի դիմավորե-  
լու: Բայց ծովը հուսախաբ արեց նրան ամենամեծագույն  
ձևով. նա նավին փոթորիկ էր սպառնում, բայց տանում  
էր դեպի խութերը: Առջևում էի խորտակում էր, միայն թե  
բոլորովին ուրիշ ձևով:

Ալիքների մեջ կործանվելու երկյուղին ավելանում էր  
անհավասար մարտում կործանվելու երկյուղը: Մի թըշ-  
նամին օգնում էր մյուսին:

— Այստեղ նավի խորտակում, այնտեղ՝ ճակատա-  
մարտ, — խիզախ ծիծաղով գոչեց լա Վյովիլը: — Երկու կող-  
մից էլ՝ շախ և մատ:

## VIII. 9=380

Ուժասպառ եղած ռազմանավն անօգնական էր ինչպես  
մի բեկոր:

Բացվող օրվա դժգույն լույսի ու ամպերի սևության մեջ,  
հորիզոնի միաձուլվող աղոտ գծագրությունների ու ալիք-  
ների խորհրդավոր դղիրդի մեջ ինչ-որ ահասարսուռ հան-  
դիսավորություն կար: Ծուրջն ամեն ինչ լուռ էր, և միայն  
քամին էր չարախիճո ոռնում: Անդունդից բարձրացող աղե-  
տը մոտենում էր հանդիսավոր հանդարտությամբ: Ոչ մի



շարժում ժայռերի մեջ, ոչ մի շարժում նավերի վրա: Մի ինչ-որ համապարփակ լուրջուն էր տիրում: Մարդ չէր հավատում, թե ուղղանավին իրական վտանգ է սպառնում: Թվում էր, թե մի տեսիլք է անցնում ծովի վրայով: Առասպելների մեջ է խոսվում այսպիսի տեսիլքների մասին, և ինչպես առասպելում, այժմ ուղղանավը գտնվում էր դեհ մանավոր խութերի և ուրվականի մմանվոր թշմամական նավատորմի միջև:

Կոմս դյու Բուաբերտլոն շշուկով ինչ-որ հրաման տվեց լա վյովիլին, որն իսկույն իջավ մարտկոցի շենքը: Հետո նա վերցրեց դիտափողը և կանգնեց նավախելում, լոցմանի կողքին:

Գակուալը բոլոր ուժերը լարել էր, որպեսզի կարողանա ուղղանավն անվնաս պահել ալիքների դեմ, որովհետև եթե քամին ու ալիքները զարկվեին նավի կողին, նա իսկույն շուռ կգար:

— Լոցման, որտե՞ղ ենք գտնվում մենք,— հարցրեց նավապետը:

— Լե-Մենկյեի մոտ:

— Ո՞ր կողմում:

— Ամենավտանգավոր:

— Ինչպիսի՞ն է այստեղ ծովի հատակը:

— Ժայռոտ:

— Կարելի՞ է խարխիս գցել:

— Մեռնել միշտ էլ կարելի է,— պատասխանեց լոցմանը:

Նավապետը դիտափողն ուղղեց դեպի արևմուտք և նայեց խութերին, ապա դարձավ դեպի արևելք և սկսեց հաշվել հեռվում երևացող առագաստները:

Լոցմանն ասես ինքն իրեն շարունակեց.

— Այո, Լե-Մենկյեն... Այստեղ որորներն են հանգստանում Հոլանդիայից չվելիս և մեկ էլ ծովային սև արծիվները:

Մինչ այդ նավապետն առագաստները հաշվեց:

Իրոք առջևում ութ նավ էին՝ մարտական կարգով շարված: Նրանց գծագրությունները պարզ երևում էին ջրի երե-

սին: Մեջտեղը կարելի էր նշմարել երեք տախտակամածով մի խոշոր նավի ուրվագիծը:

Նավապետը դարձավ լոցմանին.

— Դուք գիտե՞ք, թե ինչ նավեր են սրանք:

— Իհարկե գիտեմ,— պատասխանեց Գալուսյալը:— Դա էսկադրա է:

— Ֆրանսիական:

— Սատանայական:

Լոռթյուն տիրեց: Հետո նավապետը հարցրեց.

— Բոլո՞ր հաճանավերն են այստեղ:

— Ոչ, ո՛չ բոլորը:

— Այո, ճիշտ որ,— հիշեց նավապետը,— էսկադրայի կազմի մեջ տասնվեց նավ են մտնում, այնինչ այստեղ միայն ութն են:

— Մյուսները շրջում են ահա այնտեղ, ամբողջ ափի երկարությամբ, և լրտեսում են,— ասաց Գալուսյալը:

Նավապետը ստանց դիտափողից կտրվելու մրմնջաց.

— Երեք տախտակամածով մի նավ, երկու առաջին կարգի և հինգ երկրորդ կարգի նավեր:

— Ես էլ էի նրանց նայում,— մոթմոթաց Գալուսյալը:

— Լավ նավեր են,— նկատեց նավապետը:— Ես ինքս էլ այդպիսի նավերի հրամանատար եմ եղել:

— Իսկ ես մոտիկից տեսել եմ դրանք,— ասաց Գալուսյալը:— Եվ չեմ սխալվի, մեկը մյուսի տեղ չեմ դնի: Նրանց բոլոր նշանները իմ մտքումն են:

Նավապետը դիտափողը տվեց նրան.

— Նաչիր, նկատո՞ւմ ես դու մեջտեղի բարձր նավը:

— Այո, հրամանատար: Դա «Ռսկե ափն» է:

— Դե նրանք այդ նավի անունը փոխել են,— ասաց նավապետը:— Սուաջ դա կոչվում էր «Բուրգունդյան նահանգներ»: Նոր նավ է: Հարյուր քսանութ հրանոթ ունի:

Նա գրպանից հանեց ծոցատետրը և մատիտով նրա մեջ գրեց «128» թիվը: Ասլա հարցրեց.

— Իսկ ինչպե՞ս է կոչվում ձախ կողմի առաջին նավը:

— «Փորձված»:

— Առաջին կարգի ուսզմանավ է: Հիսուներկու թնդանոթ ունի: Երկու ամիս առաջ նա զինվել է Բրեստում:

Եվ նապաստեմուն իր ծոցատետրում գշեց՝ «52»:

— Իսկ «Փորձվածի» կողքի՞նն ինչ նալ է:

-- «Դրիսադան» է:

— Նույնպես առաջնակարգ ուղմանալ է: Քառասուն հատ տասնութ դյույմանոց հրանոթ ունի: Այդ ուղմանալը Հնդկաստանում էլ է եղել: Որպես ուղմանալ՝ նա կարող է պարծենալ իր փառավոր անցյալով:

«52» թվի տակ նա գրեց «40»: Ապա գլուխը բարձրացրեց և նորից դիմեց լոցմանին.

— Հիմա ասա. ի՞նչ նալեր են աչ կողմում:

— Աջ կողմում, հրամանատար, բոլորը երկրորդ կարգի ուղմանալեր են: Դրանք ընդամենը հինգն են:

— Ինչպե՞ս է կոչվում մեծ նալի աջակողմյան առաջին նալը:

— «Վնուական»:

— Երեսուներկու հատ տասնյոթ դյույմանոց հրանոթ: Իսկ երկրորդը:

— «Ռիշմոն»:

— Սպառազինությունը նույնն է: Իսկ մյո՞ւսը:

— «Աթեիստ»:

— Այդպիսի անունով ծիծաղելի է ծով դուրս գալ: Հետո՞:

— Մյուսը՝ «Կալիպսո»:

— Իսկ վերջի՞նը:

— «Որսկան»:

— Ընդամենը հինգ ուղմանալ, յուրաքանչյուրը երեսուներկու հրանոթով:

Եվ նապաստեմուն նախորդ թվի տակ գրեց «160»:

— Բայց դու լա՞վ ես ճանաչում նրանց, լոցման,— ասաց նա:

— Ես ճանաչում եմ, իսկ դուք, հրամանատար, գիտե՞ք նրանց,— պատասխանեց Գակուալը:— Ծանաչել կարողանալը լավ բան է, բայց գիտենալը ավելի լավ է:

Նապաստեմուն ակնդետ նայում էր իր ծոցատետրին և ինքն իրեն հաշվում:

— Հարյուր քսան ութ... հիսուներկու... քառասուն... հարյուր վաթսուն...

Այդ րոպեին տախտակամած բարձրացավ լա Վյովիլը:  
— Շնալլե,— ձայն տվեց նրան նավապետը:— Մեր դեմ  
երեք հարյուր ութսուն հրանոթ է կանգնած:

— Ի՛նչ կա որ, կկոպենք,— ասաց լա Վյովիլը:

— Դուք հենց նոր զննել եք մեր մարտկոցը. վերջ ի վերջո  
մենք քանի՞ մարտունակ հրանոթ ունենք:

— Ինը:

— Դե ի՛նչ կա որ, կկոպենք,— իր հերթին ասաց դյու  
բուաբերտլոն:

Նա լոցմանից վերցրեց դիտափողը և սկսեց դիտել հո-  
րիզոնի արևելյան մասը:

Ութ նավերի անձայն սև սիլուետները անշարժ էին թվում,  
բայց րոպե առ րոպե մեծանում էին:

Նրանք աստիճանաբար մոտենում էին ուղմանավին:

— Հրամանատա՛ր,— ասաց լա Վյովիլը պա՛նովի առ-  
նելով նավապետի առաջ,— խնդրում եմ ընդունել իմ զե-  
կույցը: Ես հենց սկզբից չէի վստահում այս «Կլեյմորին»:  
Միշտ էլ անհաճո բան է լինում, երբ մարդու անսպասելիո-  
րեն նստեցնում են՝ մի նավի վրա, որը քեզ չի ճանաչում և  
չի սիրում: Անգլիական դավաճան նավը թշնամի է ֆրան-  
սիացիներին: Նզովյալ հրանոթն այս բանն ապացուցեց:  
Ես զննեցի ամբողջ նավը: Խարիսխները հուսալի են: Եր-  
կաթը լավ որակի է, առանց խոռոչների: Խարիսխների  
օղերը պինդ են: Շուպանները հիանալի են, հեշտ են իջնում  
և սահմանված երկարությունից՝ հարյուր քսան սաժենից  
կարճ չեն: Հրետաձիգներից վեցն սպանվել են: Արկեր շատ  
ունենք: Յուրաքանչյուր թնդանոթին՝ հարյուր յոթանասուն  
կրակոց:

— Այդ, որովհետև դրանք միայն ի՛նը հատ են,— մրոթ-  
մրոթաց նավապետը:

Նա նորից դիտափողն ուղղեց հորիզոնին: Էսկադրան  
շարունակում էր դանդաղորեն մոտենալ:

Հրանոթների համեմատությամբ այն առավելությունն  
ունեին, որ նրանցից կրակելու համար բավական է երեք  
մարդ, բայց դրա փոխարեն թնդանոթներին զիջում է կրա-  
կոցի դիպուկությամբ ու հեռավորությամբ: Հարկավոր էր

Էսկադրային թողնել, որ մոտենա հրանոթի կրակոցի հեռավորությամբ:

Նավապետը ցածր ձայնով հրամաններ էր տալիս: Ռազմանավի վրա լուրջունն էր իշխում: Տագնապի ազդանշան չէին տալիս, բայց կատարում էին ամեն բան, ինչ պետք էր այդպիսի դեպքերում: Ռազմանավը մարտի համար պիտանի չէր. նա կովել չէր կարող ո՛չ մարդկանց դեմ, ո՛չ ալիքների: Այնուամենայնիվ, անձնակազմը ռազմանավի այդ մնացորդներից քաղում էր ամեն հնարավոր բան: Կարգի բերին վիրակապարանը: Ծովաշինների այն ժամանակվա սովորության համաձայն նավակողերին առագաստներու ճոպանի կծիկներ ամրացրին, որը կարող էր պաշտպանել գնդակներից, բայց ո՛չ արկերից: Գնդակի չափիչներ բերեցին, թեև այժմ արդեն ուշ էր ստուգումով զբաղվել: Բայց չէ՞ որ ոչ ոք այդպիսի բարդություններ չէր կանխատեսել: Յուրաքանչյուր նավաստի ստացավ մի փամփշտակալ, երկու ատրճանակ և մի դաշույն: Մահճակալները ծավել էին, հրանոթներն ու հրացանները լցվել, կացիներն իրենց տեղերն էին դրվել, վառողի ու արկերի պահեստները՝ բացվել: Յուրաքանչյուրը գրավել էր իր տեղը: Եվ այս ամենն արվել էր լուռ ու մունչ, ինչպես մահացողի սենյակում: Աշխատում էին արագ, մոայլ վճռականությամբ:

Ռազմանավը խարխիս էր գցել: Նա վեց խարխիս ուներ, վեցն էլ իջեցրել էին:

Անվնաս մնացած ինը հրանոթն էլ շարել էին մի գծի վրա, բոլորն էլ ուղղված դեպի թշնամու Էսկադրան:

Էսկադրայի նավերն էլ իրենց հերթին բոլոր անհրաժեշտ պատրաստությունները տեսել էին նույնպիսի խոր լուրջամբ: Այժմ նրանք կիսաշրջան էին կազմել ուղիղ Լե-Մենկյեի դիմաց՝ Սեփական խարխիսներով կաշկանդված «Կլեյմորը» համարյա սեղմվել էր ժայռախութին, այսինքն դատապարտված էր ստույգ կործանման:

Ութ նավերը հիշեցնում էին վայրի վարազին շրջապատած շների ոհմակ: Վարազը ծպտուն չէր հանում, միայն ժանիքներն էր ցցում:

ԹՎում էր, թե երկու կողմերն էլ ինչ-որ բան էին ապա-  
սում:

«Կլեյմորի» հրետաձիգները կանգնած էին իրենց հրա-  
նոթների մոտ:

## IX. ՄԵԿԸ ՓՐԿՎՈՒՄ Է

Ծերունի ուղևորը տախտակամածից չէր հեռանում: Նա  
անխոռվ դիտում էր այն ամենը, ինչ տեղի էր ունենում մա-  
վի վրա:

Բուաբերտլոն մոտեցավ նրան.

— Գեներալ,— ասաց նա,— պատրաստություններն  
ավարտված են: Մենք սեղմված ենք մեր գերեզմանին,  
բայց չենք նահանջի: Մենք ծուղակի մեջ ենք ընկել էս-  
կադրայի ու խուրթերի միջև: Կամ պետք է անձնատուր լի-  
նենք թշնամուն, կամ ջախջախվենք ալիքների մեջ. ուրիշ  
ընտրություն չկա: Բայց մենք մի ելք էլ ունենք՝ մեռնել:  
Ավելի լավ է մարտում զոհվել, քան ալիքների մեջ: Ես,  
մենայն դեպս, գերադասում եմ ընկնել թշնամու գնդակից,  
քան խեղդվել ալիքների մեջ: Եթե պիտի մեռնել, ավելի  
լավ է հրով մեռնել, քան՝ ջրով: Բայց մեռնելը մե՛ր պար-  
տականությունն է և ո՛չ թե ձեր: Դուք ազնվարյուն իշխան-  
ների ընտրյալն եք, ձեզ վրա մեծ խնդիր է դրված՝ ղեկավա-  
րել Վանդեայի ապստամբությունը: Չլինեք դուք՝ միապե-  
տությունը կարող է կործանվել: Դուք պետք է ապրեք: Մեր  
պարտքն է ռազմանավի վրա մնալ, ձերը՝ հեռանալ այս-  
տեղից... Այսպես, ուրեմն, գեներալ, հեռացեք մալից: Ես  
ձեզ մի մակույկ կտամ իր թիավարով: Գաղտնի ուղիներով  
ափ հասնելն այնքան էլ անհնարին չէ, ինչպես կթվա  
սկզբում: Դեռ լույսը չի բացվել: Ալիքները բարձր են, ծովի  
վրա խավար է տիրում, և դուք կանցնեք անակատ: Լինում  
են դեպքեր, երբ փախչելը հաղթել է նշանակում:

Ծերունին խստադեմ վեհությամբ գլխով համաձայնու-  
թյան նշան արեց: Եվ դյու Բուաբերտլոն ճայն տվեց.

— Զինվորներ, մարտատիներ:

Աշխատանքները դադարեցին, մարտատիները ռազմա-  
նավի բոլոր ծայրերում երեսները դարձրին դեպի մարտ-  
պետը: Բուաբերտլոն շարունակեց.

— Այս մարդը, որին մենք տանում ենք, թագավորի՛  
ներկայացուցիչն է։ Նա հանձնված է մեր պաշտպանությա-  
նը, և մենք պետք է պահենք նրան։ Նա անհրաժեշտ մարդ  
է ֆրանսիական գահի համար։ Մենք հուսով ենք, որ նա  
Վանդեայի զորքերի առաջնորդն է լինելու։ Նա հայտնի  
մարտական գեներալ է։ Մեզ հետ միասին նա պետք է  
ափ իջներ Ֆրանսիայում։ Ի՛նչ արած. այժմ ափ կիջնի  
առանց մեզ։ Գլուխը փրկել՝ նշանակում է ամեն ինչ փրկել։

— Ծի՛շտ է, ճի՛շտ է,— միաբերան գոչեց ամբողջ անձ-  
նակազմը։

Նավապետը շարունակեց.

— Նա ևս լուրջ վտանգների պիտի ենթարկվի։ Ափ հաս-  
նել այնքան էլ դյուրին չէ։ Ալիքների դեմ հաջողությամբ  
պայքարելու համար խոշոր նավակ է հարկավոր։ Բայց  
հաճանավերի մոտով աննկատելիորեն անցնել կարող է  
միայն փոքրիկ մակույկը։ Ափ իջնելու համար էլ պետք է  
այնպիսի վայր ընտրել, որտեղ թշնամուն հանդիպելու  
վտանգ չսպառնա։ Հարկավոր է մի հմուտ նավաստի, որը  
լավ թիավար լինի, լավ լողվոր և այն էլ այնպիսի մարդ,  
որ ծանոթ լինի այս ափերին և իմանա նրա բոլոր ծովա-  
խորշերը։ Առայժմ դեռ բավական մութ է, և մակույկը կա-  
րող է աննկատ հեռանալ ուղմանավից։ Իսկ հետո արդեն  
բոլորովին կթաքնվի վառոդի ծխի տակ։ Փոքրիկ մակույկը  
ծանձաղ ջրերով հեշտությամբ կանցնի։ Մեզ համար ելք չկա,  
բայց մակույկի համար՝ կա։ Նա թիավարելով հեռու կգնա,  
թշնամու նավերը նրան չեն նկատի։ Իսկ մենք այդ նույն  
ժամանակ կաշխատենք թշնամու ուշադրությունը մեզ վրա  
գրավել։ Ծիշտ չե՞մ ասում։

— Ծի՛շտ է, ճի՛շտ է,— նորից արձագանքեց ամբողջ  
անձնակազմը։

— Ոչ մի բույե կորցնել չի կարելի,— ավելացրեց նա-  
վապետը։— Ո՞վ հանձն կառնի ափ տանել մեր ուղևորին։

Մթին շարքերից առաջ եկավ մի մարդ և ասաց.

— Ե՛ս։

Մի քանի յոպէ անց ռազմանաւից հեռացաւ մի փոքրիկ մակույկ, այսպէս կոչված՝ գիշկա, որպիսին սովորաբար օգտագործում են նաւերի հրամանատարները տեղից տեղ փոխադրվելու համար: Նրա մէջ երկու մարդ կար. ղեկի մոտ նստել էր ծերունի ուղևորը, թիակների մոտ՝ մի նաւաստի: Դեռ բոլորովին մութ էր:

Կատարելով նաւապետի ցուցումը՝ նաւաստին ուժեղ թափով թիավարեց դեպի Լե-Մենկէ: Ուրիշ ուղղությամբ գնալն անհնարին էր:

Մակույկի մէջ որոշ պաշար էին դրել. մի պարկ պաքսիմատ, մի կտոր ապխտած միս և մի տակառ ջուր:

Այն պահին, երբ մակույկը հեռանում էր նաւից, լաՎլովիլը, որ պատրաստ էր նույնիսկ մահվան առաջ կատակներ անելու, նաւակողի վրայով ցած կոացաւ և մեկնողներին որպէս հրաժեշտ ասաց.

— Այդ տաշտակով հեշտ է ծկել, բայց խեղդվելն ավելի հեշտ է:

— Պարոն,— ասաց լոցմանը,— հարկավոր չէ ծիծաղել:

Ռազմանաւի և մակույկի միջև տարածությունն արագորեն մեծանում էր: Քամին ու ալիքների ուղղությունն օգնում էին թիավարին, և փոքրիկ մակույկն առաջ էր սլանում մերթ երեւոյվ այգաբացի մշուշի մէջ, մերթ անհետանալով ալիքների ետևը:

Ծովի վրա սրտակեղեք սպասում էր կախվել:

Հանկարծ օվկիանոսի համապարփակ լոռոյան մէջ հնչեց մարդկային մի ձայն: Զայնափողի միջոցով ուժեղացված լինելով՝ այդ ձայնը ինչ-որ գերբնականի տպավորություն թողեց:

Խոսում էր նաւապետ դյու Բուաբերտլոն.

— Ծովայիններ՝ նորին մեծություն թագավորի, մեծ կայմի վրա սպիտակ դրոշակ բարձրացրեք. մենք մեր վերջին լուսաբացն ենք դիմաւորում:

Ռազմանաւից թնդանոթի կրակոց որոտաց:



— Կեցցե՛ր թագավորը, — գոչեց անձնակազմը:

Այն ժամանակ մշուշապատ հեռվից հնչեց մի ուրիշ բազմաձայն աղաղակ, որը միաձուլվում էր ալիքների աղմուկի հետ, բայց և այնպես պարզ լսվեց.

— Կեցցե՛ր հանրապետությունը:

Եվ երեք հարյուր հրանոթների համազարկի որոտը ցնցեց ծովային խորությունը:

Ծակատամարտն սկսվեց: Ամբողջ ծովը ծածկվել էր ծխով, որի մեջ փալատակում էին կրակոցների շանթերը: Ծովն ընկնող արկերից ամենուրեք փրփուրի ցալտեր էին բարձրանում:

«Կլեյմորը» խիզախորեն կրակում էր ութ նավերի վրա: Նրա շուրջը կիսալուսնաձև խմբված էսկադրան իր հերթին կրակ էր բացում իր բոլոր հրանոթներից: Երկինքը լուսավորվել էր հրդեհի պես. թվում էր, թե ծովի խորքից հրաշունչ հրաբուխ է բարձրացել: Քամին խաղում էր ծիրանագույն ծխի վիթխարի քուլաների հետ, որոնց մեջ նավերը ուրվականի պես մերթ անհետանում էին, մերթ նորից երևւում: Առջևում, մարտի պայծառ ցուլքերի մեջ երևում էր բազմանավի սև գծագրությունը: Նրա մեծ կայմի գագաթին կարելի էր տեսնել շուշանակիր սպիտակ դրոշակը:

Մակույկում նստած երկու մարդը լուռ էին:

Նավաստին, որը ցանկություն էր հայտնել տանել ուղեւորին, մակույկը հաեցրեց Լե-Մենկյե ժայտերի ետևը, որտեղ կարելի էր չվախենալ էսկադրայի կրակոցներից: Նա ճարպկորեն առաջ էր գնում ժայտերի նեղլիկ արանքներով, հետորեն խույս տալով ստորջրյա քարերից, որոնք մակույկին սպառնում էին մերթ աջից, մերթ ձախից: Այժմ ժայռերը նրան բոլորովին ծածկել էին էսկադրայից: Հորիզոնում հրաշողն սկսեց դժգունել, համազարկերի կատաղի որոտը հեռավորության ավելանալու շնորհիվ սկսեց թուլանալ: Բայց թնդանոթային համազարկերը չէին դադարում, որից կարելի էր եզրակացնել, որ ռազմանավը դեռ դիմանում է և որ նա որոշել է մինչև իր վերջին արկը կրակել:

Շուտով մակույկը դուրս եկավ բաց ծով: Այժմ նրան

վտանգ չէր սպառնում. հեռու էր խութերից և մարտի կրակոցներից:

Ծովը քիչ-քիչ սկսեց լուսավորվել: Երկնքում հորիզոնի ու ամպերի միջև ձգված լուսավոր շերտերը լայնացան, ալիքների կատարները ճերմակեցին և շողշողացին նրանց փրփուրի թափանցիկ ցայտերը: Օրը բացվում էր:

Մակույկը թշնամու նավերից խույս էր տվել, բայց ամենադժվարինը դեռ առջևում էր: Կարտեչն այլևս նրան չէր սպառնում, բայց խորտակման վտանգը դեռ կար: Փոքրիկ մակույկը առանց տախտակամածի, առանց կայմի, առանց առագաստի ու կողմնացույցի, հույսը միայն թիակների վրա դրած՝ պետք է պալքարեր տարերքի դեմ:

Եվ հանկարծ այդ անձայրածիր ամայության մեջ մակույկի առջևի մասում նստած մարդը բարձրացրեց ալգաբացի լույսերից մեռելային գույն առած իր դեմքը, ակնդետ նայեց նավախելում նստած մարդու աչքերին և ասաց.

— Ես այն հրետանավորի եղբայրն եմ, որին գնդակահարեցին ձեր հրամանով:

## Երրորդ գիրք

### ՀԱԼՄԱԼՈ

#### I. ԽՈՍՔԸ ՈՒԺ Է

Ծերունին դանդաղորեն գլուխը բարձրացրեց:

Այս խոսքերն ասող մարդը կիներ մոտ երեսուն տարեկան: Նրա դեմքը ծովի հողմահարությունից թխացել էր: Աչքերը մի տեսակ տարօրինակ էին. նավաստու խորաթափանց հայացքի մեջ երևում էր պարզամիտ գեղջուկի միամտություն: Նա իր զորեղ ձեռքերում ամուր բռնել էր թիակը: Գոտին խրած ուներ երկու ատրճանակ, մի դաշույն ու մի համրիչ: Բայց տեսքը բարեհոգի էր:

— Ո՞վ եք դուք,— հարցրեց ծերունին:

— Ես հենց նոր ասացի ձեզ:

— Դե, ի՞նչ եք ուզում ինձանից:

Նավաստին թիակները բաց թողեց, ձեռքերը կրծքին խաչեց ու պատասխանեց.

— Ուզում եմ ձեզ սպանել:

— Ինչպես կամենում եք,— ասաց ծերունին:

Նավաստին ձայնը բարձրացրեց.

— Պատրաստվեցե՛ք:

— Ինչի՞:

— Մեռնելու:

— Ինչի՞ համար,— հարցրեց ծերունին:

Լուռությոն տիրեց: Թվում էր, որ նավաստին այս հարցից շփոթվեց: Բայց նա նորից խոսեց.

— Չէ՞ որ ես ասացի, որ ուզում եմ ձեզ սպանել:

— Իսկ ես ձեզ հարց եմ տալիս. ինչի՞ համար:

Նավաստու աչքերը փայլատակեցին.

— Ինչի՞ համար դուք սպանեցիք իմ եղբորը:

Ծերունին հանգիստ առարկեց.

— Ես սկսեցի նրանից, որ փրկեցի նրա կյանքը:

— Այո, այդ ճշմարիտ է: Նախ դուք նրան փրկեցիք, իսկ հետո սպանեցիք:

— Ես չեմ սպանել նրան:

— Հապա ո՞վ:

— Իր սեփական մեղքը:

Նավաստին ծերունուն նայում էր շփոթված հայացքով: Հետո նա նորից զայրույթով հոնքերը կիտեց:

— Ի՞նչ է ձեր անունը,— հարցրեց ծերունին:

— Իմ անունն է Հալմալո, բայց ի՞նչ պետք է, որ դուք իմանաք իմ անունը. ես կարող եմ ձեզ սպանել նաև առանց անունս ասելու:

Այդ ժամանակ արեգակը ծագեց: Պաշտոն ճառագայթներնկավ նավաստու վրա և լուսավորեց նրա վայրագ դեմքը: Ծերունին ուշադիր դիտում էր նրան:

Թնդանոթաձգությունը դեռ շարունակվում էր, բայց ընդհատումներով, ասես վերջին ուժերը լարելով: Ծխի թանձր

քուլաները ծածկում էին հորիզոնը: Մակույկը, որ այլևս թիավարող չկար, քամին էր քշում:

Նավաստին աջ ձեռքով գոտկից ատրճաճակը հանեց, իսկ ձախով՝ համրիչը:

Ծերունին նավախելում ոտքի ելավ ամբողջ հասակով:

— Դու հավատո՞ւմ ես աստծուն, — հարցրեց նա:

— Հավատում եմ: «Հայր մեր, որ հերկինս ես», — պատասխանեց նավաստին և երեսը խաչակնքեց:

— Մայր ունե՞ս:

— Ունեմ: — Նավաստին նորից խաչակնքեց և ավելացրեց. — Ուրիշ ինչ: Զեզ մի րոպե ժամանակ եմ տալիս մահվան պատրաստվելու համար, մոճսեցնոր<sup>1</sup>: — Եվ նա մատը դրեց ատրճաճակի շնիկին:

— Ինչո՞ւ դու ինձ մոճսեցնոր ես կոչում:

— Որովհետև դուք սեցնոր<sup>2</sup> եք. այդ երևում է:

— Դու սեցնոր ունե՞ս:

— Այո: Եվ այն էլ մեծանուն սեցնոր: Մի՞թե կարելի է առանց սեցնորի ապրել:

— Որտե՞ղ է նա:

— Զգիտեմ: Նա փախել է մեր կողմերից: Նրան կոչում են մարկիզ դը Լանտենակ, վիկոնտ դը Ֆոնտենե: Բրետանում նա իշխան է: Նրան է պատկանում Յոթ անտառ կալվածքը: Ես երբեք նրան չեմ տեսել, բայց դա չի խանգարում, որ նա իմ տերը լինի:

— Իսկ եթե տեսնեիր, կհնազանդվեի՞ր նրան:

— Հարկա՞վ: Ես կոռապաշտի մեկը կլինեի, եթե չհնազանդվեի իմ տիրոջը: Մենք պարտավոր ենք հնազանդվել աստծուն և թագավորին. չէ՞ որ թագավորը երկրի վրա նույնն է, ինչ աստված՝ երկնքում: Նրանցից բացի պիտի հնազանդվենք սեցնորին, որը մեզ համար նույնն է, ինչ թագավորը: Բայց մեր խոսքը դրան չի վերաբերում: Դուք ապանեցիք իմ եղբորը, և ես պետք է սպանեմ ձեզ:

---

<sup>1</sup> Մոճսեցնոր — ֆեոդալական Ֆրանսիայում այդպես էին կոչում ազնվական ծագում ունեցող մարդկանց և կաթոլիկական բարձրաստիճան հոգևորականներին:

<sup>2</sup> Սեցնոր — տեր:

— Ես իրավացի եմ եղել, որ սպանել եմ քո եղբորը,—  
ասաց ծերունին:

Նավաստին բռնի մեջ ատրճաճակը սեղմեց:

— Այնուամենայնիվ, ես ձեզ պիտի սպանեմ:

— Թող այդպես լինի,— պատասխանեց ծերունին և  
հանգիստ հարցրեց.— իսկ ո՞ր է քահանան:

Նավաստին տարակուսանքով նայեց նրան.

— Քահանա՞:

— Այո, քահանա: Չէ՞ որ ես քո եղբորը հոգևորական  
տվի: Ինձ էլ հոգևորական է հարկավոր:

— Ես որտեղի՞ց քահանա գտնեմ այս քաց ծովում:

Հեռվից ավելի ու ավելի խուլ էին լսվում հրանոթների  
ջղաձիգ համազարկերը:

— Նրանք, որ մեռնում են այնտեղ, իրենց քահանան  
ունեն:

— Այո, ճիշտ է,— մրմնջաց նավաստին,— այնտեղ է  
նավի քահանան:

— Դու կկորցնես իմ հոգին, իսկ դա ծանր մեղք է,—  
ասաց ծերունին:

Նավաստին գլուխը կախեց. նա մտածում էր:

— Իմ հոգին կորցնելով՝ դու քո հոգին էլ կկորցնես,—  
շարունակեց ծերունին:— Լսիր, ես խղճում եմ քեզ: Արա  
ինչպես ուզում ես: Երբ ես քո եղբորը փրկեցի և հետո երբ  
նրան սպանեցի, ես միայն իմ պարտքն էի կատարում: Հի-  
մա էլ ես իմ պարտքն եմ կատարում՝ աշխատելով փրկել  
քո հոգին: Մտածի՛ր: Սա միայն քեզ է վերաբերում: Դու  
լսո՞ւմ ես համազարկերը: Այնտեղ զոհվում են մարդիկ,  
մեռնում են դառն տանջանքներով: Իսկ ո՞ւմ մեղքով: Քո  
եղբոր մեղքով: Ի՞նչ էինք ցանկանում մենք բոլորս, որ  
գտնվում էինք այժմ խորտակվող նավի վրա: Դու գիտե՞ս  
այս: Մենք ցանկանում էինք օգնել աստծո գործին: Եթե  
քո եղբայրը աստծո գործի իսկական ծառան լիներ, եթե  
նա ազնվորեն և գիտակցաբար կատարած լիներ իր պարտ-  
քը, հրանոթի այն աղետը տեղի չէր ունենա, ուսումնալը  
չէր վնասվի, ճանապարհից չէր շեղվի, այն նզովյալ նավա-  
տորմին չէր հանդիպի, և այս բոլորիս մենք ափ իջած կլի-  
նեինք Ֆրանսիայում առանց մի մարդ զոհ տալու: Մենք

սուրը ձեռքներին, սպիտակ դրոշակը պարզած կկարողա-  
նայինք խիզախորեն օգնել Վանդեաշի գյուղացիներին՝  
փրկելու Ֆրանսիան, փրկելու թագավորին և ծառայելու ար-  
դար գործին: Ահա թե ինչի ինք գնում մենք: Ահա թե ինչ  
կանեինք մենք: Եվ ահա թե հիմա ինչու եմ գնում ես, որ  
ողջ մնացած միակ մարդն եմ: Իսկ դու փակում ես իմ ճա-  
նապարհը: Քո եղբայրը սատանայի առաջին աջակիցն էր,  
դու ցանկանում ես դառնալ երկրորդը: Նա սկսեց, դու  
ավարտում ես: Դու արքայասպանների հետ ես, գահին դեմ,  
դու անաստվածների հետ ես, եկեղեցուն դեմ: Դու աստ-  
ծուց խլում ես հաղթանակի վերջին հնարավորությունը:  
Դե՛, ի՛նչ ասեմ, արա ինչ ուզում ես: Ես քեզ վրա հույս էի  
դրել և սխալվել եմ... Հա՛, ճիշտ որ, ես սպանել եմ քո եղ-  
բորը: Քո եղբայրը քաջարի մարդ էր: Դրա համար ես նրան  
պարգևատրեցի: Բայց նա մեղավոր էր իր հանցավոր ան-  
փութությամբ: Դրա համար ես նրան պատժեցի: Նա դա-  
վաճանել էր իր պարտականությանը, ես իմ պարտքը կա-  
տարեցի: Ես դարձյալ նույնը կանեի, եթե այդպիսի մի  
դեպք կրկնվեր: Երդվում եմ երկնքով. քո եղբոր տեղը իմ  
հարազատ որդին լիներ՝ ես կհրամայեի գնդակահարել իմ  
որդուն: Հիմա դու ես դրության տերը: Այնուամենայնիվ, ես  
խղճում եմ քեզ: Դու խաբել ես քո հրամանատարին: Թեև  
քրիստոնյա ես, բայց հավատ չունես: Թեև քրեառնացի ես,  
բայց պատվի զգացում չունես: Ինձ ափ իջեցնելը քեզ  
եմ հանձնարարել՝ հույս դնելով քո հավատարմության վրա,  
իսկ դու սկսում ես դավաճանությունից: Ինձ սպանելով՝ դու  
դավաճանում ես նրանց, ում խոստացել ես պահպանել իմ  
կյանքը: Դե, կատարիր քո հանցավոր գործը: Մի՛ հապաղիր,  
օգնի՛ր սատանային... Արա ինչ մտածել ես: Ես ծեր եմ,  
դու՝ երիտասարդ: Ես անգեմ եմ, դու զինված: Սպանիր ինձ:

Ծերունին խոսում էր ամբողջ հասակով ձգված, և նրա  
ձայնը խլացնում էր ծովի աղմուկը: Մակույկը ուստոստում  
էր ալիքների վրա, և ծերունու դեմքը մերթ ծածկվում էր  
ստվերի մեջ, մերթ լուսավորվում: Նավաստին գունատ էր  
մեռելի պես: Նրա ճակատով քրտինքի խոշոր կաթիլներ  
էին գլորվում: Նա դողում էր տերևի պես և ստեպ-ստեպ

շուրթերին էր հպում համրիչը: Երբ ծերունին լռեց, նա հեռու նետեց ասորճանակը և ծունկ չոքեց:

— Ներեցեք ինձ, մոռանկյոր,— գոչեց նա:— Ձեր շուրթերով ինքը՝ աստվածն է խոսում: Ես մեղավոր եմ: Իմ եղբայրն էլ մեղավոր էր: Ես ամեն ինչ կանեմ, որպեսզի քավեմ նրա մեղքը: Հրամայեցեք ինձ: Ես կկատարեմ ձեր ամեն մի հրամանը:

— Ես ներում եմ քեզ,— ասաց ծերունին:

## II. ԳԵՂՋՈՒԿԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԶՈՐԱՊԵՏԻ

### ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԺԵ

Մակույկում եղած ուտեստը պետք եկավ: Երկու փախըստականներին, որոնք ստիպված էին զարտուղի ճանապարհներով անցնել, ափ հասնելու համար հարկավոր եղավ երեսունվեց ժամ: Ամբողջ գիշերը նրանք անցկացրին բաց ծովում: Գիշերը ջերմ էր ու հանդարտ: Միայն լուսինը խիստ պայծառ էր թվում թաքնվելու հարկադրված մարդկանց:

Նրանք լսեցին ուղմանավի վերջին համազարկերը, որոնք հնչեցին որսորդներից հավածված առյուծի մոնչոցի պես: Հետո ծովի վրա ամեն ինչ լռեց:

«Կլեյմոր» ուղմանավը զոհվեց, բայց փառքի չարժանացավ. Հայրենիքի դեմ կռվելով հերոս դառնալ չի՝ կարելի:

Պարզվեց, որ Հալմալուն հմուտ ծովային է: Ալիքների վրայով, խութերի արանքներով և թշնամու աչալուրջ աչքի առաջ թիավարելը արվեստի մի իսկական հրաշք է: Այժմ քամին մեղմացել էր, իսկ ալիքները՝ իջել, և ծովն ալևս ոչ մի վտանգ չէր սպառնում:

Երկրորդ օրվա իրիկնապահին, մաշրամուտից մոտ մեկ ժամ առաջ մակույկը իր ետևը թողեց Սեմ-Միշել լեռը և կանգ առավ մի ավազոտ ափի մոտ, այնպիսի մի վայրում, որտեղ ոչ նավ է լինում, ոչ մարդ, որովհետև այստեղ ափ իջնելն անվտանգ չէր. կարելի էր խրվել ավազի մեջ:

Բարեբախտաբար այդ մակընթացության ժամանակ էր:

Հալմալոն, որքան հնարավոր էր, մակույկը մոտեցրեց ափին, ոտքով ավազը շոշափեց, գտավ, որ բավական ափնդ է և աշտեղ կանգ առնելով՝ ցատկեց ցամաքի վրա:

Ծերունին էլ նրա ետևից ափ իջավ և դիտեց հորիզոնը:

Հետո նա կոացավ մակույկի վրա, պարկից մի կտոր պաքսիմատ վերցրեց, գրպանը դրեց և Հալմալոյին ասաց.

— Մնացածը վերցրու քեզ:

Հալմալոն մսի մնացորդը դրեց պաքսիմատի պարկի մեջ, ուսը գցեց ու հարցրեց.

— Ինչպե՞ս կհրամայեք, մոնսեկյոր. ե՞ս ձեզ ցույց տամ ճանապարհը, թե՞ հետևեմ ձեզ:

— Ոչ մեկը, ոչ մյուսը,— պատասխանեց ծերունին:

Հալմալոն ապշած նայեց նրան: Ծերունին շարունակեց.

— Մենք գնալու ենք տարբեր կողմեր: Միևնույն է, դու ինձ պաշտպանել չես կարող: Ուրիշ բան է, եթե մենք հագարներ լինեինք: Իսկ այսպես՝ ավելի լավ է առանձին-առանձին լինենք:

Նա լռեց, գրպանից հանեց կանաչ մետաքսե մի ժապավեն, որի մեջտեղը շուշան էր ասեղնագործված և շատ նման էր կոկարդի, ու հարցրեց.

— Դու կարդալ գիտե՞ս:

— Ոչ:

— Այդ լավ է. գրագետ մարդը հաճախ հարմար չի լինում: Իսկ հիշողությունդ լա՞վ է:

— Այո:

— Հիանալի... Դե լսիր ինձ, Հալմալո: Դու կգնաս դեպի աջ, ես՝ դեպի ձախ: Դու շուտ կգաս Ֆուժերի կողմը, ես՝ Բագուժուի: Պարկը չգցես. դա քեզ գյուղացու նմանություն է տալիս: Զենքը թաքցրու: Որևէ ցանկապատից քեզ համար մի ձեռնափայտ դուրս քաշիր: Որտեղ հնարավոր է, սողես սող անցիր. հիմա վարսակի արտը բարձր է: Ծանապարհներից ու կամորջներից կխուսափես: Աշխատիր ցանկապատերին մոտ լինել, անցորդներից՝ հեռու: Կանցնես ցանկապատերի վրայով, կգնաս դաշտերի միջով, կարճ ճանապարհներով:

— Իսկ դուք, մոնսեկյոր, ինչպե՞ս կանեք: Ծուտով գիշեր է լինելու. որտե՞ղ կգիշերեք դուք:





այս կոկարդն էլ բավական է: Սրա շուշանն ասեղնագործել է նորին բարձրությունն արքայադուստրը՝ Տամալի բանտում:

Հալմալոն մի ծունկը ծալեց: Նա սրտի թրթռոով ծերունու ձեռքից վերցրեց սրբազան կոկարդը և մոտեցրեց շրթունքներին, բայց հանկարծ ասես իր համարձակությունից վախեցած՝ գլուխը բարձրացրեց և երկշուտ հարցրեց.

— Ես կարո՞ղ եմ համբուրել:

— Այո: Չէ՞ որ դու խաչն ես համբուրում:

Հալմալոն շուրթերը հույեց ոսկեկար շուշանին:

— Վեր կաց,— ասաց ծերունին:

Հալմալոն վեր կացավ և կոկարդը դրեց իր ծոցը:

Ծերունին շարունակեց.

— Լավ, լսիր ինձ: Ահա մեր պարոլը. «Ի գեմ: Ոչ ոքի չխնայել»: Ուրեմն, Սեմո-Օբեմի անտառի ձորի պոնկին դու ազդանշան կտաս: Երեք անգամ: Երրորդ ազդանշանի վրա գետնի տակից լույս կընկնի մի մարդ:

— Ծառի արմատների մոտի ստորերկրյա անցքի՞ց: Գիտեմ:

— Այդ մարդը կլինի Պլանշեմոն, կամ, ինչպես կոչում են նրան, Թագավորի սիրտը: Դու կոկարդը ցույց կտաս նրան: Նա կհասկանա: Հետո որ ճանապարհով կուգես, կգնաս Աստիլյե անտառը: Այնտեղ դու կտեսնես ծուռ ոտքերով մի մարդ, որի անունն է Մուսկետոն: Դա անողորմ մարդ է: Կասես նրան, որ ես իր բարեկամն եմ, և որ նա գեների կոչի իր բոլոր գյուղերը: Դրանից հետո կգնաս Կուեսթոն անտառը: Այնտեղ դու նորից քո ազդանշանը կտաս, և նորից ստորերկրյա անցքից քո առաջ դուրս կգա մի մարդ: Դա կլինի Տյուոն: Կասես նրան, որ ամրացնի Կուեսթոն ամրոցը, որ այժմ պատկանում է Ֆրանսիայից տարագիր մարկիզ դը Գերին: Դա շատ հարմար վայր է՝ ձորեր, անտառներ, անհարթ հողեր: Տյուոն ազնիվ ու խելացի մարդ է: Կուեսթոնից հետո կգնաս Սեմո-Ուան-Լե-Տուա և այնտեղ կբանակցես Ժան Ծուանի հետ: Նրան ես համարում եմ իսկական առաջնորդ: Լավ հիշիր ա՛յս ամենը: Ես չեմ գրում, որովհետև դա վտանգավոր կլինի... Հետո էլ կգնաս Ռուժֆյո անտառը, որտեղ գտնվում է Միելետին, որը երկար ձողերի վրա հենվելով ճարպկորեն ցատկում է

ձորերի վրայով... Իսկ դու աղպես ցատկոտել կարո՞ղ ես:

— Ինչպե՞ս չեմ կարող: Հենց դրա համար էլ ես քրե-տոնացի գեղջուկ եմ: Այդ ձողերը մեր բարեկամներն են. նրանք ամրացնում են մեր ձեռքերը և երկարացնում են մեր ոտքերը: Մի անգամ աղպիսի մի ձողով ետ եմ քշել երեք պրիստով: Այնինչ նրանք թերե ունեին:

— Այդ ե՞րբ է եղել:

— Մի տասը տարի սրանից առաջ:

— Դեռ թագավորի՞ օրոք:

— Դե, իհարկե:

— Նշանակում է դու թագավորի օրոք կովե՞լ ես:

— Էն էլ ո՞նց:

— Ո՞ւմ հետ:

— Ես ինքս էլ չգիտեմ: Ես գաղտնի աղ էի փոխադրում:

— Ա՛յ թե ինչ:

— Մեզ մոտ դա կոչվում էր՝ պայքար աղի տուրքերի դեմ: Բայց չե՞ որ այլ բան է տուրքը, այլ՝ թագավորը:

— Դա քո խելքի բանը չէ:

— Ներողություն եմ խնդրում, մոռանցյոր, որ հարց տալով անհանգստացրի ձեզ:

— Գործի անցնենք: Դու գիտե՞ս Լա-Տուրգ ամրոցը:

— Լա-Տուրգ ամրո՞ցը: Դա հո իմ տեղերի տոհմական ամրոցն է: Նոր ամրոցը հնից բաժանում է մի երկաթե դուռ: Դա այնքան հաստ է, որ թնդանոթով էլ չես ծակի: Իսկ նոր ամրոցում պահվում է սուրբ Բարդուղիմեոսի մասին գրված հռչակավոր գիրքը: Ծառերն են հատկապես գալիս, որ այդ գիրքը տեսնեն: Այնտեղ խոտերի մեջ ինչքա՞ն գորտեր կան: Հիշում եմ, երեխա ժամանակս շարունակ այդ գորտերի հետ էի խաղում: Այնտեղ մի ստորերկրյա անցք էլ կա: Ես գիտեմ նրա տեղը: Ասենք՝ աշխարհիս երեսին հենց միայն ես գիտեմ նրա տեղը:

— Ի՞նչ ստորերկրյա անցք: Ի՞նչ ես ասում, չեմ հասկանում:

— Դա մնացել է հին ժամանակներից, երբ հաճախ Լա-Տուրգը պաշարում էին: Եվ պաշարվածները միշտ էլ կա-

որոշ Լիմ այդ անցքով հեռանալ, որովհետև անցքը դուրս է գալիս անտառի մեջ:

— Այդպիսի ստորգետնյա անցքեր իրոք՝ որ կան որոշ ամրոցներում, բայց Լա-Տուրգում այդպիսի բան չկա:

— Չէ՛, կա՛, մոնսեկյո: Բայց այդ անցքի տեղը բացի ինձանից ուրիշ ոչ ոք չգիտե: Մեզ արգելված էր նրա մասին խոսել: Հայրս նրա տեղը գիտեր և ինձ ցույց է տվել: Ես գիտեմ, թե ինչպես կարելի է նրա մեջ մտնել և դուրս գալ: Ես կարող եմ անտառից ամրոցի աշտարակը գնալ ու աշտարակից անտառ վերադառնալ ալնպես, որ ոչ մի շունչ-կենդանի ինձ չտեսնի: Թշնամին կարող է ամրոց խուժել և այնտեղ ոչ մի մարդ չգտնել: Այ թե ինչ է Լա-Տուրգը: Ես լավ գիտեմ այդ ամրոցը:

Ծերունին մի պահ լուռ մնաց:

— Երևում է՝ դու սխալվում ես: Եթե այնտեղ այդպիսի անցք լիներ, ես կիմանայի:

— Մոնսեկյո՛ր, անցքը կա՛, ես հաստատ գիտեմ: Հարկավոր է մի քար շրջել պատի կողմը...

— Բա՛ն սասցիր: Դուք, գեղջուկների ամեն ինչի հավատում եք: Ձեզ որ լսենք, քարերը և՛ շուտ են գալիս, և՛ երգում, և նույնիսկ գիշերները գնում են հարևան առվից ջուր խմելու: Դրանք բոլորը հեքիաթներ են:

— Ախր ես ինքս եմ այդ քարը շուտ տվել:

— Իսկ ուրիշներն իրենք են լսել, թե ինչպես են քարերը երգում: Չէ՛, քարեկամս, Լա-Տուրգը լավ ու հուսալի ամրոց է, նրա մեջ հեշտ է պաշտպանվել, բայց հիմար կլինի նա, ով վերջին րոպեին փախչելու համար հույս կդնի քո այդ ստորերկրյա անցքի վրա:

— Բայց, մոնսեկյո...

Ծերունին ուտերը թոթվեց.

— Ժամանակ չկորցնենք: Ամենից առաջ՝ գործ:

Այս վճռական տոնը Հալմալոյին ստիպեց լռել:

Ծերունին շարունակեց.

— Լսի՛ր, թե էլի ինչ եմ ասելու: Ռուժֆյոյից դու կգնաս Մոնշերիե անտառը: Այնտեղ տեր ու տիրականն է Բենեդիսիտեն, Տասներկուսի խմբի պետը: Նա ևս քաջարի ուղղմիկ է: Նրա հրամանով մարդկանց գնդակահարում են, իսկ

ինքն այդ ժամանակ աղոթքներ է ասում: Պատերազմը զգացմունքների տեղ չէ: Մոնշերիեից ուղիղ կգնաս...— Նա խոսքը կիսատ թողեց:— Ա՛խ, փողը մոռացել եմ:— Նա գրպանից հանեց մի դրամապանակ ու մի քսակ և երկուսն էլ տվեց Հալմալոյին:— Ահա, վերցրու: Դրամապանակի մեջ երեսուն հազար ֆրանկ թղթադրամ կա, այսինքն՝ մոտ երեք լիվր<sup>1</sup> և տասը սու<sup>2</sup>: Ծիշտ է, դրանք կեղծ են, բայց իսկականներն էլ դրանցից մի քիչ ավելի արժեն: Իսկ քսակի մեջ,— այս լավ հիշիր,— հարյուր լուիդոր<sup>3</sup> կա: Ես իմ բոլոր փողերը քեզ եմ տալիս: Այստեղ ինձ ոչինչ հարկավոր չէ: Եվ, բացի դրանից, ավելի լավ է, որ ինձ մոտ փող չգտնեն: Հիմա շարունակում եմ: Ծանոթ-Գուտիեում կխոսես իշխան Տալմոնի հետ:

— Մի՞թե իշխանը կուզենա ինձ հետ խոսել:

— Հասկա ես չե՞մ խոսում քեզ հետ:

Հալմալոն գլխարկը վերցրեց:

— Նորին բարձրության ասեղնագործած շուշանը ամենուրեք քեզ համար լավ ընդունելություն կապահովի: Մի՛ մոռանա, որ դու ստիպված ես լինելու գնալ այնպիսի տեղերով, որտեղ միայն գեղջուկներ ու լեռնականներ են ապրում: Անհրաժեշտ է, որ դու շորերդ փոխես: Դա հեշտ է անել: Հանրապետականներն այնքան հիմար են, որ կապույտ բանկոնով և եռագույն կոկարդով ամեն տեղ կարելի է գնալ: Հիմա հո ոչ գնդեր կան, ոչ զինվորական համազգեստ: Առանձին զորամասեր նույնիսկ իրենց համարը չունեն, և յուրաքանչյուրը հագնվում է ինչպես կամենա... Կանցնես Պերնեի ճամբարը: Այնտեղ կտեսնես սև դեմքով մարդիկ: Նրանք դիտմամբ մոտ են քսում երեսների, իսկ հրացանը լցնում են կրկնակի չափի վառոդով և դեռ խոշոր ավազ էլ են ավելացնում, որ ավելի ուժեղ որոտա: Դա լավ բան է, այդպես էլ հարկավոր է: Բայց գլխավորը՝ հաղորդիր նրանց իմ պատվիրանը. կոտորե՛լ, կոտորե՛լ և կոտորե՛լ: Դու կգնաս նաև Սև կովի ճամբարը, որ գտնվում է

<sup>1</sup> Լիվր — ֆրանսիական ճնադարյան արծաթե դրամ, որ ֆրանկից մի քիչ պակաս արժեն:

<sup>2</sup> Սու — մանր դրամ, ֆրանկի մեկ քսաներորդ մասը:

<sup>3</sup> Լուիդոր — 20 ֆրանկանոց ոսկե դրամ:

Ծարճի անտառում մի բլրի վրա, հետո՝ Վարսակի ճամբարը, ապա՝ Կանաչ և Մրջյունների ճամբարները: Լինելով այդ բոլոր վայրերում և բոլորին հաղորդելով իմ պարուն՝ «Ի գե՛ն: Ոչ ոքի չգթալ», դու կմիանաս գլխավոր բանակին՝ կաթոլիկական արքայական բանակին, այնտեղ, որտեղ նա կլինի այդ ժամանակ: Դու կտեսնես բոլոր զորապետներին, որոնք դեռ ողջ կլինեն: Տույց կտաս նրանց իմ կոկարդը. նրանք գիտեն, թե դա ինչ է նշանակում: Իմ անունից նրանց ասա հետևյալը. հասել է ժամանակը՝ միանգամից վարելու երկու պատերազմ՝ մեծը և փոքրը: Մեծը մեծ աղմուկ է հանում, փոքրը թշնամուն ավելի շատ գլխացավանք է պատճառում: Վանդեայի պատերազմը դաժան պատերազմ է, բայց Շուանինը ավելի վատն է: Պատերազմի օգուտը գնահատվում է նրա քերած չարիքի բանակով:

Նա մի պահ լռեց, ապա ավելացրեց.

— Հալմալո՛ւ, այս ամենը ես քեզ ասում եմ, որովհետև վստահում եմ քեզ: Դու բառերը չես հասկանում, բայց էությունը հասկանում ես: Ես տեսա, թե դու ինչպես ես վարում մակույկը և հավատացի քեզ: Տեսնելով, թե ինչպես ես դու խույս տալիս ծովի սարքած որոգայթներից, ես համոզվեցի, որ գլուխ կբերես նաև իմ հանձնարարությունները: Եվ այսպես, ինչպես կարող ես, առաջնորդներին ասա հետևյալը: Ես գերադասում եմ պատերազմը անտառում, քան բաց դաշտում: Ես ամենևին մտադիր չեմ հարյուր հազար գյուղացիներին կապույտների գնդակների ու թնդանոթների առաջ դուրս բերել: Ինձ անհրաժեշտ է այս ամսի վերջերին ունենալ անտառներում թաքնված հիսուն հազար կործանիչներ: Հանրապետական բանակն իմ որսն է: Մենք պատերազմելու ենք որսագողերի ձևով: Ես անտառի թափուտների ստրատեգի<sup>1</sup> եմ: Ստրատեգ... Այս բառը դու չես հասկանում, բայց միևնույն է. դու հասկանում ես, թե ինչ է նշանակում «ոչ ոքի չգթալ» և «ամենուրեք դարաններ»: Գլխավորը փոքր պատերազմն է, մեծը երկրորդ պլանում է: Նաև ասա նրանց, որ անգլիացիները մեր կողմն են: Հանրապետությունը կընկնի երկու կրակի միջև: Եվրոպան մեզ կօգնի: Հարկավոր է հեղափոխությանը վերջ տալ: Թող.

<sup>1</sup> Ստրատեգ — պատերազմ վարելու արվեստն իմացող զորապետ:

միապետները մեր դեմ պետությունների պատերազմ վարեն,  
մենք ծխերի պատերազմ կվարենք: Այս ամենը կասես  
նրանց: Դու հասկացա՞ր:

— Հասկացա: Պետք է ամեն ինչ սրի ու հրի մատներ:

— Իսկ և իսկ:

— Չխնայել...

— Ոչ ոքի:

— Ես կգնամ այդ բոլոր տեղերը:

— Բայց զգույշ եղիր. այս երկրում երբեք չի կարելի  
իմանալ, թե մահը որտեղ է դարանակալել քեզ:

— Իսկ եթե ինձ հարցնեն մոնսեյնյորի անո՞ւնը:

— Անունն առաջժմ անհայտ պիտի մնա: Դու կասես,  
որ անունը չգիտես, և այդ ճշմարիտ կլինի:

— Իսկ ես որտե՞ղ կտեսնեմ ձեզ, մոնսեյնյոր:

— Այնտեղ, որտեղ ես կլինեմ:

— Ես ինչպե՞ս իմանամ, թե որտեղ եք դուք:

— Այդ կիմանամ բոլորը: Մի շաբաթ էլ չանցած՝ իմ  
մասին կխոսեն: Ես ինձ ցույց կտամ... Ես վրեժ կլուծեմ թա-  
գավորի ու հավատի համար, և դու հեշտությամբ կհասկա-  
նաս, որ իմ մասին են խոսում:

— Հասկանում եմ:

— Դե տես, ոչ մի բան չմոռանաս:

— Հանգիստ եղեք:

— Հիմա գնա: Աստված քեզ պահապան:

— Ես կկատարեմ ձեր բոլոր հրամանները: Գնում եմ:  
Ես խոսելու եմ: Ես լսելու եմ: Ես հրամայելու եմ:

— Լավ:

— Եվ եթե ինձ հաջողվի բոլորը կատարել...

— Ես քեզ կպարգևատրեմ սուրբ Լյուդովիկոսի շքանը-  
շանով:

— Ինչպես իմ եղբո՞րը: Իսկ եթե անհաջողություն ունե-  
ցամ, դուք կհրամայեք գնդակահարել ինձ...

— Ինչպես քո եղբորը:

— Լսում եմ, մոնսեյնյոր:

Ծերունին գլուխը կախեց՝ և թվում էր, թե խորասուզվել  
է ծանր մտքերի մեջ: Երբ հայացքը բարձրացրեց, արդեն

մենակ էր: Հալմալոն հեռվում երևում էր որպես մի սև կետ,  
որն արագորեն հեռանում էր հորիզոնում:

Արևը հենց մոր էր ծագել: Ուրուրները և ձկնկուլները  
վերադառնում էին տուն՝ դեպի ափ:

Բնության մեջ զգացվում էր այն խառնակ տագնապը,  
որը միշտ նախորդում է գիշերվան: Գորտերը կոկոռում էին,  
ագռավներն ու ուրուրները քնելու գնալուց առաջ իրար էին  
անցել, առափնյա թռչունները ձայն էին տալիս իրար: Բայց  
ոչ մի ձայն չէր մատնում մարդու ներկայությունը: Ծուրջը  
ոչ մի շունչ-կենդանի չկար: Ծովախորշում ոչ մի առագաստ  
չկար, դաշտերում՝ ոչ մի վարվոր: Ծուրջը փոված էր մի  
ամայի տարածություն: Տատասկափշի խոշոր թփերը դող-  
դողում էին քամուց: Դեռևս չմթնած երկինքը ծովի ափին  
ներմակավում մեղյալ մի լույս էր փռել: Մթին հարթության  
մեջ փոված լճակները հեռվից թվում էին գետնին ցրված  
անագե տերևներ: Քամին փչում էր ծովից:

## Չ ո Ր Ր Ո Ր Պ գ ի Ր Ք

### Տ Ե Լ Մ Ա Ր Ը

#### Ի. ԱՎԱԶԱԹՄԲԻ ԳԱԳԱԹԸ

Ծերունին սպասեց, մինչև Հալմալոն աչքից անհետա-  
ցավ, ապա փաթաթվեց իր թիկնոցի մեջ և առաջ շարժվեց:  
Նա քայլում էր դանդաղ ու մտախոհ:

Ետևում վիթխարի սև եռանկյունու պես քարձրանում էր  
Սեն-Միշել լեռը, որ ասես զրահապատված ամրոց լիներ  
գազաթի սուր գմբեթով ու երկու հսկայական աշտարակնե-  
րով, որոնցից մեկը կլոր էր, մյուսը՝ քառակուսի և կարծես  
նրան օգնում էին կրելու կրկնակի ծանրությունը՝ եկեղեցին  
ու գյուղը:

Սեն-Միշել ծովախորշի սորում ավազը աննկատելիորեն



տեղափոխվում է՝ շարունակ փոփոխելով ավագաթների գծագրությունը:

Այն ժամանակներում այստեղ կար մի շատ բարձր ավագաթումբ, որն այժմ հավասարվել է ափին: Այն հռչակված էր իր գոյացման հնությանը: Նրա գագաթից հեռու, շատ հեռու երևում էր ամբողջ շրջապատը:

Ծերունին ուղղվեց դեպի այդ ավագաթումբը և սկսեց բարձրանալ վեր: Բլրի գագաթը հասնելով՝ նա նստեց մղոնացույց սյան չորս անկյունաքարերից մեկի վրա և, մեջքը սյունին հենելով, սկսեց դիտել իր առջև փոված կենդանի աշխարհագրական քարտեզը: Նա կարծես ճանապարհ էր որոնում իրեն լավ ծանոթ այդ վայրում: Արդեն այնքան մոտ էր, որ այդ ամբողջ խոշոր պատկերի վրա միակ որոշակի գիծը հորիզոնի գիծն էր, որ սևին էր տալիս երկնքի դժգույն ֆոնի վրա:

Կարելի էր նշմարել տասնմեկ ավանների ու գյուղերի տանիքները: Երկու կողմերում մի քանի լյե հեռավորության վրա երևում էին ծովափին գտնվող եկեղեցիների զանգակատները: Այդ վայրերում եկեղեցիները դիտմամբ շատ բարձր են շինում, որպեսզի կարողանան որպես նշանակետ ծառայել ծովում գտնվող նավերի համար:

Մի քանի րոպեից հետո ծերունին ըստ երևույթին կիսախավարի մեջ գտավ այն, ինչ որոնում էր: Նրա հայացքը կանգ առավ ցանկապատով շրջապատված տնակների ու ծառերի մի խմբի վրա, որը աղոտ կերպով երևում էր հեռվում, անտառների միջև և նման էր գյուղակի կամ ագարակի: Հանկարծ նա նկատեց, որ ագարակի գլխավոր շենքի կտորին ինչ-որ տարօրինակ առարկա է ճոճվում: Մթության մեջ դժվար էր նշմարել նրա գույնը կամ ձևը: Ծերունին երկար ժամանակ դիտեց այդ առարկան, ասես ինքն իրեն հարց տալով. ի՞նչ կարող է լինել դա: Դա հողմացույց չէ. հողմացույցը պտտվում է, իսկ սա ճոճվում է: Բայց դրոշակ էլ չի կարող լինել այստեղ:

Նա հոգնած էր և այժմ գոհունակությամբ էր նստել քարին և անձնատուր եղել քաղցր մոռացության, որ համակում է հոգնած մարդուն հանգստի առաջին իսկ րոպեին:

Օրվա ընթացքում կա մի ժամ, որն աչքի է ընկնում ձայ-

Անրի լիակատար քաջակայությամբ՝ իրիկնային լոին ժամն է դա: Այժմ հենց իսկը այդ ժամն էր: Ծերունին հրճվում էր, նայում ու ակննջ էր դնում: Ինչի՞ն: Լոությանը: Նույնիսկ դաժան մարդիկ թախիծի րուպեներ են ունենում: Եվ հանկարծ այդ լոությունը ոչ թե խախտեցին, այլ կարծես ավելի ընդգծեցին մոտիկից անցնող ինչ-որ մարդկանց ձայները: Դրանք կանացի ու մանկական ձայներ էին: Պատահում է, որ գիշերային խավարի մեջ էլ անսպասելիորեն ուրախ ձայներ են լսվում: Թփերի ետևը չէին երևում այն անցորդները, որոնց պատկանում էին այդ ձայները, բայց լսելի էր, որ նրանք անցնում են ցածով, ավազաթմբի երկայնքով, մտախոհ ծերունու կողքով դեպի հարթավայրն ու անտառները: Այս թարմ ու զրնգուն ձայները հնչում էին այնքան մոտիկ, որ ամեն մի քառ պարզ հասնում էր ծերունուն: Կանացի ձայնն ասաց.

— Արագ քայլենք, մորաքույր Ֆլեշար: Ո՞ր կողմը պիտի շուռ գանք: Ա՛յս:

— Չէ՛, ա՛յ, այն կողմը, — պատասխանեց մյուս ձայնը:

Եվ երկու կանացի ձայները՝ մեկը բարձր ու վստահ, մյուսը՝ երկչոտ, շարունակում էին խոսակցությունը.

— Դուք ինչպե՞ս եք կոչում այն ազարակը, որը հիմա գրավել ենք մենք:

— Էրբ-ան-Պալլ:

— Դեռ հեռո՞ւ է:

— Քառորդ ժամվա ճանապարհ է, գուցեև ավելի:

— Արագ գնանք: Ընթրիքի ժամանակն է:

— Այո, մենք առանց այն էլ ուշացել ենք:

— Կարելի էր և վազել, բայց քո երեխաներն են հոգանել: Երկու կնոջ համար դժվար է այսպիսի երեք գոճիներ տանել: Առանց այն էլ դու մեկին շալակել ես, իսկ դա փթից պակաս չի լինի: Ախր ինչո՞ւ ես շալակել դրան: Մեծ աղջիկ է, շուտով երկու տարին կլրանա: Ծծից կտրել եք, էլ ինչո՞ւ երես տալ: Թող ինքը վազի... Օ՛հ, կպաղի մեր ճաշը:

— Բայց ինչ հիանալի կոշիկներ նվիրեցիք դուք ինձ: Հենց իսկը ժամանակին, կարծես իմ ոտքով կարած լինի:

- Պարզ է. ավելի լավ է, քան բոքիկ վազելը:
- Ետ մի՛ մնա, Ռեմե-Ժան: Ծուտ արի:
- Ջայները հեռացան: Ամեն ինչ լռեց:

## II. ԱԿԱՆՋ ՌԻՆԻ, ԲԱՅՅ ԶԻ ԼՍՈՒՄ

Ծերունին չէր շարժվում: Նա ոչ մի բանի մասին չէր մտածում ու չէր երազում: Ծուրջը պարզ ու անխոռվ անդորրություն էր տիրում: Ամեն ինչ հանդարտվել էր դյուրահավատ նիրհով: Ավագաթմբի վրա դեռ լույս էր, բայց հարթավայրում արդեն մութն էր իջնում, իսկ անտառում իսկական գիշերն էր թագավորում: Այրելքում ծագում էր լուսինը: Կապտավուն երկնքում նոսր աստղեր էին առկալածում: Հոգսերից ճնշված այս մարդը զգում էր, որ իր հոգու մեջ հույսի մի թույլ արշալույս է բացվում, եթե միայն կարելի է «հույս» անվանել քաղաքացիական պատերազմին սպասելը: Նրան թվում էր, թե այժմ, երբ ինքն ազատվել է ծովից, որն այնքան անողորմ գտնվեց, և ոտք է դրել պինդ գետնի վրա, ամեն մի վտանգ իր համար անցած բան է: Ոչ ոք նրա անունը չգիտեր: Նա անհետ թաքնվել էր թըշնամուց. ծովի մակերեսը հետքեր չի պահում: Նա մեն-մենակ էր, ոչ ոք նրան չէր ճանաչում ու չէր կասկածի: Եվ նա անասելի անդորր էր ապրում: Էլի մի քանի րոպե անցնե՛ր՝ նա արդեն քնած կլիներ:

Իրիկնային այդ հանդարտ ժամին երկինքն ու երկիրը պարուրող խոր լուռությունը չէր կարող կախարդական գեղեցկություն չլինել մի մարդու համար, որն այնքա՛ն արտաքին ու ներքին փոթորիկներ էր ապրել:

Ոչ մի ձայն չէր լսվում, բացի ծովից փչող քամուց: Բայց քամու աղմուկն անընդհատ ձայն է և համարյա դադարում է աղմուկ թվալ, որովհետև վարժվում ես նրան:

Հանկարծ ծերունին ոտքի կանգնեց և սկսեց հեռուն դիտել:

Բայց ի՞նչն էր նրա հայացքին այդպիսի անհանգիստ լարվածություն տալիս:

Հարթավայրի հեռավոր եզրին երևացող Կորմերեի զանգակատանը ինչ-որ տարօրինակ բան էր կատարվում:

Առջևում, երկնքի դժգույն ֆոնի վրա պարզ երևում էր նրա մթին սիլուետը: Երևում էր ամբողջ աշտարակը իր բրգաձև տանիքով, իսկ տանիքի ու աշտարակի միջև՝ զանգերի քառակուսի վանդակը, որ բաց էր բոլոր չորս կողմերից, ինչպես ընդունված է Բրետանում:

Այդ վանդակը մեկի քացվում էր, մերթ փակվում. նրա բարձր լուսամուտը հավասար ընդմիջումներով մերթ սպիտակին էր տալիս, մերթ՝ մթնում, մեկի նրա միջով երևում էր երկինքը, մերթ ինչ-որ ստվեր էր իջնում նրա վրա: Այդ ստվերն ու այդ լուսաշողը բույե առ բույե հաջորդում էին իրար գնդանին խիող մուրճի հարվածների ճշտությամբ:

Ծերունին նայեց դեպի աջ, Բագեր-Պիկանի զանգակատանը, որը նույնպես պարզ երևում էր հորիզոնում: Այնտեղ էլ փեղկերը մերթ լուսավորվում, մերթ մթնում էին, ինչպես Կորմերեում:

Նա նայեց դեպի ձախ, Տանիսի զանգակատանը: Այնտեղ էլ տեղի էր ունենում նույնը:

Ծերունին սկսեց դիտել շրջակայքի բոլոր եկեղեցիների զանգակատները:

Ամենուրեք զանգակատների քացվածքները մերթ լուսավորվում էին, մերթ մթնում:

Ի՞նչ էր նշանակում այդ:

Այդ նշանակում էր, որ ամենուրեք զանգերը խփում էին: Եվ խփում էին չխնայելով իրենց ձեռքերը, այլ կերպ լույսն ու ստվերը չէին կարող այդպիսի արագությամբ հաջորդել իրար:

Բայց ի՞նչ զանգահարում էր դա:

Ըստ երևույթին ահագանգ էին խփում: Խփում էին մոլեգնաբար, բոլոր եկեղեցիների զանգակատներում, բոլոր ծխերում ու գլուղերում:

Բայց զանգերի ձայնը չէր լսվում: Դա քացատրվում էր նրանց հեռավորությամբ և նրանով, որ քամին ծովից էր փչում և բոլոր ձայները տանում էր հսկառակ կողմը:

Զանգերը միաժամանակ ամեն կողմից ինչ-որ մոլեգնությամբ արթնացնում էին իրիկնային լուրջունը: Դժվար է պատկերացնել ավելի չարագույժ որևէ բան:

Ծերունին նայում էր ու ականջ դնում: Նա ահագանգը չէր լսում, բայց տեսնում էր այն:

Ահագանգը տեսնելը զարհուրելի զգացողություն է:

Այդ ո՞ւմ վրա էին զայրացել զանգերը:

Ո՞ւմ դեմ էր կոչ անում ահագանգը:

### III. ԽՈՇՈՐ ՏԱՌԵՐԻ ԹԳՈՒՏԸ

Անտարակույս ինչ-որ մեկի շուրջկալ էր պատրաստվում... Բայց ո՞ւմ:

Այդ երկաթե մարդը ցնցվեց:

Ո՛չ, չի՛ կարող պատահել, որ իրեն որոնելիս լինեն: Ինչպե՞ս կարող էին գլխի ընկնել, որ ինքն այստեղ է: Չէ՞ որ ինքը հենց նոր է ափ իջել: Խորտակված ուղեգնացիներն ոչ մի մարդ փրկված չի լինի: Եվ, բացի այդ, ուղեգնացիներն ոչ ոք չգիտեր իր անունը, բացի Բուսթերտլոյից և լա Վյովիլից:

Իսկ զանգերը շարունակում էին իրենց կատաղի պարը: Նա նայում էր ու մեքենայաբար հաշվում փայլատակումները, և նրա միտքը, որ վախեցել էր կատարյալ անվտանգությունից, հանկարծ սոսկալի անհայտության անցնելուց, մի ենթադրությունից մյուսին էր թռչում: Բայց, իսկապես, ինչի՞ց պիտի վախենար ինքը: Քի՞չ պատճառներով կարող էին ահագանգ խփել: Եվ նա սկսեց հանգստանալ՝ ինքն իրեն ասելով. «Դատարկ բան է: Ոչ ոք չգիտե, որ ես այստեղ եմ: Նույնիսկ չգիտեն, թե ով եմ ես»:

Արդեն մի քանի րոպե էր, որ նա ինչ-որ խշխշոց էր լսում իր գլխավերևը: Այդպես տերևներն են խշխշում ուժեղ քամուց: Սկզբում ծերունին դրա վրա ուշադրություն չէր դարձնում, բայց խշխշոցը չէր դադարում, համառորեն շարունակվում էր: Վերջապես ծերունին շուտ եկավ: Դա, իրոք, մի թուղթ էր, մի թերթ թուղթ. քամին ֆոֆոացնում էր նրա գլխավերևում մղոնացույց սյունին փակցրած հայտարարությունը: Երևում է այն նոր էին փակցրել, որովհետև դեռ թաց էր, և երևի լավ չէին փակցրել, թե չէ՝ քամին չէր կարող պոկել սյունից:

Ծերունին ավագաթմբի վրա էր բարձրացել հակառակ կողմից, ուստի և առաջ այդ հայտարարությունը չէր տեսել։ Նա բարձրացավ իր նստած քարի վրա և ձեռքը դրեց հայտարարության այն անկյունի վրա, որ պոկել էր քամին։ Երկինքը պարզ էր. հունիս ամսին աղջամուղջը երկար է տևում։ Ցածում, ավագաթմբի տակ արդեն մթնել էր, բայց գագաթը դեռ լուսավոր էր։ Հայտարարությունը տպված էր խոշոր տառերով, և այնքան լույս էր, որ կարելի էր կարդալ։ Ահա թե ինչ կարդաց ծերունին.

«ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՄԻԱՍՆԱԿԱՆ ԵՎ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ:

ՄԵՆՔ, ՄԱՐՆԻ ՊՐԻՈՐՍ, ՈՐՊԵՍ ԿՈՄԻՍԱՐ ԺՈՂՈՎԸՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՍ ԾԵՐԲՈՒՐԳԻ ԱՌԱՓՆՅԱ ԲԱՆԱԿՈՒՄ, ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ.

ՆԱԽԿԻՆ ՄԱՐԿԻՋ ԴԸ ԼԱՆՏԵՆԱԿԸ, ՖՈՆՏԵՆԵԻ ՎԻԿՈՆՏԸ, ՈՐՆ ԻՐԵՆ ԲՐԵՏԱՆԻ ԻՇԽԱՆ Է ԿՈՉՈՒՄ ԵՎ ԳՐԱՆՎԻԼԻ ՄՈՏ ԳԱՂՏԵԱԲԱՐ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱՓ Է ԴՈՒՐՍ ԵԿԵԼ, ՀԱՅՏԱՐԱՐՎՈՒՄ Է ՕՐԵՆՔԻՑ ԴՈՒՐՍ: ՆՐԱ ԳԼՈՒԽԸ ԳՆԱՀԱՏՎԱԾ Է: ՎԱԹՍՈՒՆ ՀԱՋԱՐ ԼԻՎՐ ԿՎԺԱՐՎԻ ՆՐԱՆ, ՈՎ ԿԵՆԴԱՆԻ ԿԱՄ ՄԵՌԱԾ ԼԱՆՏԵՆԱԿԻՆ ԿՀԱՆՁՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՋԵՌՔԸ: ԱՅՍ ԳՈՒՄԱՐԸ ԿՎԺԱՐՎԻ ՈՉ ԹԵ ԹՂԹԱԴՐԱՄՈՎ, ԱՅԼ ՈՍԿՈՎ: ԾԵՐԲՈՒՐԳՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՄԻ ԳՈՒՄԱՐՏԱԿ ԱՆՀԱՊԱՂ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ՎԵՐՈՀԻՇՅԱԼ ՆԱԽԿԻՆ ՄԱՐԿԻՋ ԴԸ ԼԱՆՏԵՆԱԿԻՆ ՈՐՈՆԵԼՈՒ: ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ՀՐԱՎԻՐՎՈՒՄ ԵՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ԶՈՐՔԻՆ: ՏՐՎԱԾ Է ԳՐԱՆՎԻԼՈՒՄ, 1793 Թ. ՀՈՒՆԻՍԻ 2-ԻՆ:

ՍՏՈՐԱԳՐՎԱԾ Է՝ ՄԱՐՆԻ ՊՐԻՈՐ»:

Այս ստորագրության տակ կար մի ուրիշն էլ, որ գրված էր այնքան մանր տառերով, որ թանձրացող աղջամուղջի թույլ լույսով կարդալ հնարավոր չէր:

Ծերունին աչքերին քաշեց գլխարկը, ուղիղ կզակի տակ կոճկեց իր ծովային թիկնոցի կնգուղը և արագ քալերով

իջալ ավագաթմբից: Ըստ երևոյթին նրա համար վտանգավոր էր մնալ այդ լուսավոր քարձունքում:

Գուցէ թէ առանց այդ էլ նա արդէն երկար էր մնացել այդտեղ: Ավագաթմբի գագաթը միակ կետն էր, որ դեռ կարելի էր տեսնել:

Իջնելով մթության մեջ՝ ծերունին քայլերը դանդաղեցրեց: Նա անցավ ցանկապատերի միջով, նախապէս նշված ճանապարհով և ուղղվեց դեպի ագարակ: Երևի նա հիմք ուներ հուսալու, որ այնտեղ իրեն վտանգ չի սպառնա: Շուրջը բոլորովին ամայի էր: Սովորաբար այդքան ուշ ժամին գլուղերում համարյա անցորդներ չեն լինում:

Թփերի մեջ մտնելով՝ ծերունին կանգ առավ, թիկնոցն ու բաճկոնը հանեց, հետո բաճկոնը հագավ՝ մորթին դեպի դուրս արած, իր պատառոտված թիկնոցը թելով կապեց վզի տակ և ճամփան շարունակեց:

Լուսինը լույս էր փռել: —

Ծերունին մոտեցավ երկու ճանապարհների խաչմերուկին: Այդ խաչմերուկում կանգնած էր մի հին քարե խաչ: Այդ խաչի ցածի մասում սպիտակին էր տալիս քառանկյունի մի թերթ թուղթ, որ երևի նույնպիսի հայտարարություն էր, որպիսին նա հենց նոր կարդաց: Նա ավելի ևս մոտեցավ:

— Այդ ո՞ր էք գնում դուք, — ձայն տվեց մի ինչ-որ մարդ:

Ծերունին ետ նայեց: Ցանկապատի ետևը կանգնած էր մի մարդ, նույնքան քարձրահասակ, ինչպէս ինքը, նույնքան ծեր ու ճերմակած մազերով, համարյա իր երկվորյակը, բայց ավելի աղքատիկ հագուստով:

Մարդը կանգնել էր երկար ձեռնափայտին հենված: Նա կրկնեց իր հարցը.

— Ես ձեզ հարց եմ տալիս. ո՞ր էք գնում դուք:

— Ավելի լավ է ինձ ասացեք, թե որտեղ եմ ես, — հանգիստ և համարյա գոռոզաբար խոսեց ծերունին:

Մարդը պատասխանեց.

— Դուք Տանիս կալվածքում եք: Ես այստեղի մուրացկանն եմ, դուք՝ այստեղի սենյորը:

— Ե՛ս:

— Այո, դուք, պարոն մարկիզ դը Լանտենակ:

Մարկիզ դը Լանտենակը (այժմ մենք էլ նրան այսպես կոչենք) հանգիստ պատասխանեց.

— Դե, լավ. մատնեցեք ինձ:

Մուրացկանը շարունակեց.

— Մենք երկուսս էլ այստեղ գտնվում ենք մեր տանը. դուք՝ դղակում, ես՝ անտառում:

— Բավական է շատախոսել: Մատնեցեք ինձ,— ասաց մարկիզը:

Մուրացկանը հարցրեց.

— Դուք Էրբ-ան-Պալլ ագարակին էիք գնում:

— Այո:

— Մի՞ գնացեք այնտեղ:

— Ինչո՞ւ:

— Որովհետև այնտեղ կապույտներն են:

— Վաղո՞ւց:

— Արդեն երեք օր է:

— Ագարակի բնակիչները, իհարկե, դիմադրեցի՞ն:

— Ոչ: Նրանք դարբասը լայն բաց արին:

— Մի՞թե:

Մուրացկանը մատը մեկնեց դեպի ագարակի տան տանիքը, որ երևում էր ծառերի ետևը.

— Տեսնո՞ւմ եք այն տանիքը, պարոն մարկիզ:

— Տեսնում եմ:

— Իսկ տեսնո՞ւմ եք նրա վրայի...

— Դրոշակը:

— Եռագույն դրոշակը,— ասաց մուրացկանը:

Դա այն առարկան էր, որ գրավել էր մարկիզի ուշադրությունը, երբ նա գտնվում էր ավազաթմբի գլխին:

— Կարծես ահագա՞նգ են խփում,— հարցրեց նա:—

Ինձ թվաց թե...

— Այո, ահագանգ են խփում:

— Որևէ մեկին բռնե՞լ են ուզում:

— Կարծում եմ, որ ձեզ:

— Բայց զանգահարությունը չի լսվում:



— Քամին է խանգարում,— ասաց մուրացկանը, ապա հարցրեց.— Տեսե՞լ եք հայտարարությունը:

— Տեսել եմ:

— Ձեզ եմ որոնում...— Ապա նայելով ագարակի կողմը՝ ավելացրեց.— Այնտեղ մի ամբողջ գումարտակ կա:

— Հանրապետականների՞:

— Փարիզեցիների:

— Դե, ինչ կա որ,— ասաց մարկիզը,— հարկավոր է այնտեղ գնալ:— Եվ նա մի քաջ արեց դեպի ագարակ:

Մուրացկանը նրա ձեռքը բռնեց.

— Մի՛ գնացեք այնտեղ:

— Հապա ո՞ր գնամ:

— Գնանք ինձ մոտ:

Մարկիզը նայեց նրան տարակուսանքով:

— Պարոն մարկիզ,— շարունակեց մուրացկանը,— իմ տունը հարմարություններ չունի, բայց այնտեղ ձեզ չեն գտնի: Ես ապրում եմ մի գեղնավոր խրճիթում: Հատակին մամուռ է փռված, առաստաղը՝ ճյուղերից է հյուսված: Գնանք: Ագարակում ձեզ կգնդակահարեն, իսկ ինձ մոտ ապահով կքնեք ու կհանգստանաք: Երևի հոգնած կլինեք: Իսկ վաղն առավոտյան կապույտները կհեռանան, և դուք կգնաք ուր կուզեք:

Մարկիզ դը Լանտենակը ուշիուշով դիտում էր այդ մարդուն:

— Ո՞վ եք դուք,— հարցրեց նա,— հանրապետական՞ եք, թե՛ ողյալիստ:

— Ես մի աղքատ մարդ եմ:

— Ոչ հանրապետական եք, ոչ ողյալի՞ստ:

— Կարծեմ՝ ոչ:

— Դուք թագավորի կո՞ղմն եք, թե՛ դեմ:

— Ես դրա մասին մտածելու ժամանակ չունեմ:

— Իսկ մտածո՞ւմ եք այն ամենի մասին, ինչ տեղի է ունենում այժմ:

— Ես ապրուստի միջոց չունեմ:

— Բայց ուզում եք ինձ օգնություն ցույց տալ:

— Ես իմացա, որ դուք օրենքից դուրս եք հայտարարված: Ի՞նչ բան է այդ օրենքը՝ չեմ հասկանում: Նշանակում

է նրանից դուրս է՛լ կարելի է լինել: Վերցնենք հենց ինձ.  
գուցե ե՛ս էլ օրենքից դուրս եմ: Սովից մեռնելը մի՞թե օրեն-  
քից դուրս լինել չի նշանակում:

— Վաղո՞ւց է, որ դուք սովի եք մատնված:

— Իմ ամբողջ կյանքում:

— Եվ ուզում եք ինձ փրկե՞լ:

— Այո:

— Բայց ինչո՞ւ:

— Նայելով ձեզ՝ ես մտածեցի. «Ահա այս մարդը ին-  
ձանից ավելի աղքատ է: Ես շնչելու իրավունք ունեմ, իսկ  
սա այդ իրավունքից էլ զուրկ է»:

— Այդ ճիշտ է: Ուրեմն դուք ուզում եք ինձ փրկե՞լ:

— Իհարկե: Հիմա մենք եղբայրներ ենք, մոռանալու: Ինձ-  
նից հացն եմ խլում, ձեր կյանքն եմ ուզում խլել: Մենք եր-  
կուսս էլ մուրացկան ենք:

— Ձեզ հայտնի՞ է, որ իմ գլուխը գնահատված է:

— Այո:

— Ինչպե՞ս եք իմացել այդ:

— Հայտարարությունն էմ կարդացել:

— Դուք կարդալ գիտե՞ք:

— Կարդալ ու գրել գիտեմ: Ինչո՞ւ պիտի չիմանամ:

— Եթե կարդալ գիտեք և հայտարարությունը կարդացել  
եք, պետք է ձեզ հայտնի լինի, որ ով ինձ մատնի, վաթսուն  
հազար լիվր կստանա:

— Ես այդ գիտեմ:

— Ոչ թե թղթադրամով, այլ՝ ոսկով:

— Գիտեմ:

— Բայց չէ՞ որ վաթսուն հազար լիվրը մի ամբողջ հա-  
րըստություն է:

— Պարզ է:

— Նշանակում է՝ ով ինձ մատնի, հարուստ մարդ  
կդառնա:

— Ես հենց այդ էլ մտածում էի: Երբ ձեզ տեսա, ինքս  
ինձ ասացի. «Ով այս մարդուն մատնի, մի ամբողջ կարո-  
ղություն կստանա՝ վաթսուն հազար լիվր: Հարկավոր է  
շուտ թաքցնել սրան»:

Մարկիզը գնաց մուրացկանի ետևից:

Նրանք մտան թափուտը: Այնտեղ էր գտնվում մուրաց-  
կանի խրճիթը: Մի հաստաթուն պատավ կաղնի ապաստան  
էր տվել մարդուն. խրճիթը փորված էր կաղնու արմատների  
տակ, իսկ ճյուղերը ծածկում էին նրան: Ներսը մույթ էր ու  
ցածրիկ. ոչ ոք այն ճկատել չէր կարող: Այնտեղ երկու մարդ  
կարող էին տեղավորվել:

— Ես մտածել եմ, թե կարող է պատահել՝ հյուր ունե-  
նամ,— ասաց մուրացկանը:

Այդպիսի ստորերկրյա բնակարանները, գաղտնարաննե-  
րը, ինչպես դրանց կոչում են տեղական գյուղացիները,  
Բրետանում այնքան էլ հազվագյուտ բան չեն, ինչպես կար-  
ծում են:

Սովորաբար այդպիսի բնակարանների կահավորությունը  
լինում է ծղոտից կամ լվացված ու չորացրած ջրիմուռից  
պատրաստված ներքնակ, կոշտ կտորից կարված վերմակ,  
մի քանի ճարպե մոմ և մի կայծքար ու հրաձագ:

Մարկիզը և իր ուղեկիցը կուացան, մի քիչ առաջ գնա-  
ցին և մտան գետնափոր խրճիթը, որը ծառի արմատները  
բաժանել էին մի քանի անկանոն մասերի: Նրանք նստեցին  
որպես անկողին ծառայող ջրիմուռի կույտի վրա: Երկու  
արմատների միջև ընկած տարածությունը, որը դռան տեղ  
էր ծառայում, մի քիչ լույս էր ներս թողնում: Դուրսն ար-  
դեն մույթ էր, բայց աչքը հարմարվում է խավարին և կա-  
րողանում է նույնիսկ թույլ լույսը ճկատել: Բացի դրանից  
գետնափորի մուտքը լուսինն էլ էր լուսավորում: Մի անկյու-  
նում դրված էր ջրով լի մի սափոր, նրա կողքին՝ կորեկի  
բլիթ և մի բուռ շագանակ:

— Եկեք ընթրենք,— ասաց մուրացկանը:

Նրանք շագանակը բաժանեցին, մարկիզը հանեց իր  
պաքսիմատը, և երկուսն էլ սկսեցին ուտել, կտրելով միև-  
նույն սև բլիթից և հերթով խմելով միևնույն սափորից:

Ջրույց սկսվեց: Մարկիզը հարցեր էր տալիս մուրաց-  
կանին:

— Ուրեմն՝ ինչ լինի-չլինի, ձեզ համար միևնույն է:

— Համարյա թե այդպես: Տերերը դուք եք, գրքերն էլ՝  
ձեր ձեռքին: Մենք տերերի գործերին չենք խառնվում:

— Բայց այն, ինչ տեղի է ունենում...

— Տեղի է ունենում այնտեղ, բարձրում,— ասաց մուրացկանը և ավելացրեց.— Բայց կան երևույթներ, որոնք տեղի են ունենում ավելի բարձրում. արեգակը ծագում է, լուսինը մեծանում է ու փոքրանում... Այ, սա ինձ հետաքրքրում է:— Նա մի կում արեց սափորից:— Հիանալի ջուր է, թարմ:— Ապա հարցրեց.— Ձեզ դո՞ւր է գալիս այս ջուրը, մոռեսե՞նք:

— Ի՞նչ է ձեր անունը,— հարցրեց մարկիզը առանց նրան պատասխանելու:

— Իմ անունը Տելմարշ է, բայց ինձ կոչում են Թափառաշրջիկ: Մի ուրիշ անուն էլ ունեմ ես՝ Ծերուկ:— Եվ ավելացրեց.— Ահա արդեն քառասուն տարի է, ինձ Ծերուկ են կոչում:

— Քառասուն տարի՞: Բայց այն ժամանակ դուք դեռ երիտասարդ եք եղել:

— Ես երբեք երիտասարդ չեմ եղել: Բայց դուք, պարոն մարկիզ, միշտ երիտասարդ եք: Քայլում եք քսան տարեկանի պես, թմբերի վրա եք բարձրանում: Իսկ ես մի քառորդ լյե գնում եմ թե չէ՝ հոգնում եմ: Ես և դուք հասակակից ենք: Բայց հարուստներն այն առավելությունն ունեն, որ ամեն օր ուտում են: Կուշտ ուտելը մարդուն պահում է:

Նա մի պահ լռեց, ապա ավելացրեց.

— Հարստություն և աղքատություն՝ ի՞նչ սարսափելի բան է դա: Ես կարծում եմ բոլոր դժբախտությունները հենց դրանից են գալիս: Աղքատները ցանկանում են հարուստ լինել, իսկ հարուստները չեն ուզում աղքատանալ: Կարծում եմ հենց սա է բուն էությունը: Միայն թե սա իմ բանը չէ: Միևնույն է, հո մի բան փոխել չես կարող: Դեպքերը իրենց ճամփով կգնան: Ես ոչ պարտքատերերի կողմն եմ, ոչ պարտապանների: Ես գիտեմ, որ լինում են պարտքեր, և որ պարտքերը պետք է վճարել, ուրիշ ոչինչ: Ինձ թվում է, որ լավ կլիներ, եթե թագավորին չնպանեին, իսկ թե ինչու՝ դժվարանում եմ ասել: Կարող եմ ինձ առարկել. «Ծա՞տ ժամանակ է անցել, որ մարդկանց ծառերից էին կախում առանց մի պատճառի»: Դե ի՞նչ ասեմ. ես ինքս տեսել եմ, թե ինչպես կախաղան հանեցին մի մարդու, որը մի չար ռուպեի կրակել էր թագավորական այծյամի վրա: Այնինչ նա

կին ունէր ու յոթ երեխա... Ծառ բան կարելի է ասել և՛ մեկ, և՛ մյուս կողմի մասին:

Նա նորից մի պահ լռեց, ապա ավելացրեց.

— Դուք, իհարկէ, տեսնում եք, որ ես ինքս էլ չեմ հասկանում, թե ինչ է կատարվում: Ինչ-որ վատ բան է կատարվում շուրջը, բոլորն իրարանցման մեջ են... Իսկ ես ապրում եմ ինձ համար իմ գետնափորում, աստղերի տակ և ուրիշ ոչինչ:

Նա կրկին մտքի մեջ ընկավ, բայց շուտով էլի սկսեց.

— Ես մի քիչ էլ հեքիմ եմ, կարողանում եմ բժշկել: Բոլոր խոտերը ճանաչում եմ: Պատահում է՝ զննում ես մի ինչ-որ խոտ, իսկ մարդիկ տեսնում են ու ասում՝ կախարդ է: Երբ մարդ մտքի մեջ է ընկնում, ուրիշները կարծում են, թե նա գիտե այնպիսի բան, որ ոչ ոքի հայտնի չէ:

— Դուք այստեղացի՞ եք,— հարցրեց մարկիզը:

— Ծնվել, մեծացել ու ծերացել եմ այստեղ:

— Դուք ինձ ճանաչո՞ւմ եք:

— Իհարկէ: Վերջին անգամ ես ձեզ տեսել եմ երկու տարի առաջ, երբ դուք այստեղ էիք եկել: Հետո գնացիք Անգլիա: Եվ ահա, հիմա էլ տեսնում եմ՝ մի մարդ է կանգնած ավազաթմբի վրա: Բարձրահասակ մարդ: Բարձրահասակ մարդ շատ չի պատահում. Բրետանում մարդիկ մանրը են: Նայում եմ (հայտարարությունը ես առաջ կարդացել էի) ու ինքս ինձ ասում. «Է՛հե: Զիմի՞ թե նա է»: Այդ ժամանակ լուսինը ծագեց: Դուք ցած իջաք, մոտեցաք ինձ, և ես ձեզ ճանաչեցի:

— Իսկ ես ձեզ չեմ ճանաչում,— ասաց մարկիզը:

— Դուք ինձ շատ անգամ եք տեսել, բայց միևնույն է, թե չեք տեսել: Իսկ ես ձեզ շատ լավ եմ հիշում: Անցորդները մի՞թե նայում են մուրացկանին: Իսկ մուրացկանը միշտ չորս կողմն է նայում:

— Մի՞թե ես առաջ հանդիպել եմ ձեզ:

— Ծառ հաճախ: Ես միշտ ձեր դղյակի ճանապարհին եմ թափառում: Երբեմն դուք ինձ ողորմություն էլ եք տվել, բայց ողորմություն տվողը չի նայում, թե ում է տալիս, իսկ ստացողը ամեն ինչ տեսնում է և ոչինչ բաց չի թողնում աչքից: Մուրացկանների մասին ասում են, թե նրանք լըր-

տեսներ են: Բայց ես լրտես չեմ, համեմայն դեպս աշխատում եմ լրտես չլինել, թեպետև լավ օրի չեմ: Ես ձեռքս մեկնում էի ողորմություն ստանալու: Դուք՝ տեսնում էիք միայն ձեռքս և մեջը փող էիք գցում, որն ինձ շատ էր հարկավոր լինում առավոտյան, որպեսզի երեկոյան սովից չմեռնեմ: Մեզպեսները, պատահում է, օրերով սոված են մնում: Պատահում է, որ մարդու կյանքը կախված է լինում մի սուրբից: Դուք շատ անգամ եք փրկել իմ կյանքը, և ես հիմա իմ պարտքն եմ տալիս:

— Այո, դուք փրկում եք ինձ:

— Փրկում եմ, մոռենայր, միայն թե... — այստեղ Տելմարշի ձայնը հնչեց լուրջ և հանդիսավոր, — մի պայմանով:

— Ի՞նչ պայման:

— Ասացեք, որ դուք չար գործ անելու մտքով չեք եկել:

— Ես եկել եմ բարի գործի համար, — պատասխանեց մարկիզը:

— Դե, ուրեմն, լավ: Հիմա քնենք:

Նրանք իրար սեղմված պառկեցին ջրիմուռի կույտի վրա: Տելմարշն իսկույն քուն մտավ: Մարկիզը, չնայած հոգնածությանը, միանգամից չքնեց: Նա մի պահ մտածում էր, հետո խավարի մեջ նայեց իր հարևանին և պառկեց: Այդ անկողնին պառկել՝ նշանակում էր գետնին պառկել, և մարկիզը դրանից օգտվելով՝ ականջը գետնին կպցրեց և սկսեց ականջ դնել: Ինչպես հայտնի է, ձայնը հողի միջով լավ է հաղորդվում: Նա մի խուլ դժժոց լսեց. այդ զանգերն էին հնչում: Ահագնազը շարունակվում էր: Մարկիզը քուն մտավ:

## V. ՄՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ «ԳՈՎԵՆ»

Երբ մարկիզն արթնացավ, արդեն ցերեկ էր:

Մուրացկանը կանգնած էր իր մահակին հենված, բայց ո՛չ գետնափորում. այնտեղ ամբողջ հասակով կանգնել չէր լինի, այլ՝ մուտքի մոտ: Արևը շողում էր նրա դեմքին:

— Մոռենայր, հենց նոր Տանիսի զանգակատունը ժամը չորսը խփեց, — ասաց նա մարկիզին: — Ես չորս զարկ լսեցի, նշանակում է քամին փոխվել է և հիմա փչում է ասիից:

Իսկ ուրիշ ձայներ չեն լսվում, նշանակում է այլևս ահագանգ չեն խփում: Հիմա ագարակում ամեն ինչ խաղաղվել է. կապույտները կամ գնացել են, կամ քնած են: Գլխավոր վտանգն անցել է և ավելի լավ է, որ ես և դուք բաժանվե՞նք: Իմ գնալու ժամանակն է: Ես կգնամ այս կողմը, իսկ դուք գնացե՛ք այն կողմը:

Հեռանալիս նա հանդիսավոր ձևով հրաժեշտ տվեց հյուրին և մատնացույց անելով ընթրիքի մնացորդները՝ ասաց.

— Ծագանակը վերցրե՛ք ձեզ հետ, կարող է պետք գալ:

Մի րոպե անց՝ նա անհետացավ ծառերի ետևը:

Մարկիզը վեր կացավ և գնաց այն ուղղությամբ, որ ցույց էր տվել Տելմարը: Նա գնում էր այն նույն շափողով, որով նախորդ օրը եկել էին Տելմարի հետ: Թափուտից դուրս գալով՝ նա հասավ այն խաչուղին, որտեղ քարե խաչն էր կանգնած: Հայտարարությունը դեռ այնտեղ էր և ուրախ շողշողում էր ծագող արևի ճառագայթների տակ: Մարկիզը հիշեց, որ հայտարարության տակ մանր տառերով ինչ-որ բան էր գրված, որն ինքը մթության մեջ կարդալ չկարողացավ: Մոտեցավ խաչին: Իրոք Մարնի պրիորի ստորագրության տակ էլի երկու տող կար: Եվ նա կարդաց.

«Հենց որ մարկիզ դը Լանտենակի անձնավորությունը ճշտվի, նա կգնդակահարվի»: Եվ ստորագրված էր. «Գումարտակի հրամանատար, Էքսպեդիցիոն ջոկատի պետ՝ Գովեն»:

— Գովեն, — մրմնջաց մարկիզը:

Մտքի մեջ խորասուզված՝ նա կանգնել ու նայում էր հայտարարությանը:

— Գովեն, — կրկնեց նա:

Հետո մի քիչ հեռացավ, նորից նայեց խաչին, ապա վերադարձավ ու հայտարարությունը նորից կարդաց: Հետո շուտ գալով դանդաղ գնաց իր ճանապարհով: Եթե մոտերքում որևէ մարդ լիներ, կլսեր, թե ինչպես մարկիզը մի քանի անգամ կիսաձայն կրկնեց. «Գովեն»:

Չորակի խորքից, որով նա գնում էր, չէին երևում ձախ կողմում մնացած ագարակի տանիքները: Այժմ նա անցնում էր մի բլրի բարձր, զառիթափ լանջով, որ ծածկված էր վայրի մամուխի ծաղկած թփուտով: Բլուրը վերջանում

Էր մի սուր գագաթով, որին տեղացիները Վարազի գլուխ<sup>1</sup> անունն էին տվել: Նրա ստորոտում մարդու հայացքը կորչում էր թփերի ու ծառերի թափուտի մեջ: Նրանց տերևներն ասես ամբողջովին տոգորված էին լույսով: Բնությունը վաղորդյան խոր ուրախություն էր շնչում:

Հանկարծ ամեն ինչ փոխվեց: Արևաշող դաշտերի ու անտառների վրայով հրացանաձգության ու վայրի աղաղակների մի մրրիկ անցավ, իսկ այն կողմում, որտեղ ագարակն էր, վեր խոյացավ ծխի մի վիթխարի սյուն, որի մեջ հրե լուսավոր լեզուներ էին երևում, ասես ափանց ու ագարակը բոցավառվել էին խոտի խոշոր դեզի պես: Էրբ-ան-Պալ ագարակում ճակատամարտ էր տեղի ունենում: Մարկիզը կանգ առավ:

Այսպիսի դեպքերում հետաքրքրասիրությունը միշտ հաղթում է վտանգի գիտակցությանը: Չկա մի մարդ, որն իր վրա զգացած չլինի այս: Նախ մի իմանալ, թե ինչ է պատահել, իսկ հետո արդեն ինչ ուզում է լինի: Եվ մարկիզը բարձրացավ բլրի գլուխը: Այդտեղ նրան կարող էին տեսնել, բայց չէ՞ որ ինքն էլ կարող էր տեսնել ամբողջ շրջակայքը: Մի քանի րոպեում նա հասավ ամենավերին գագաթը:

Այո, տարակույս չկա. այրվող ագարակի մոտ հրացանաձգություն էր տեղի ունենում: Լսվում էին աղաղակներ, առանձին բացականչություններ, երևում էր կրակը: Ի՞նչ էր պատահել այնտեղ: Արդյոք դա հարձակո՞ւմ էր ագարակի վրա: Ո՞վ էր հարձակվել: Ծակատամա՞րտ էր արդյոք դա... Ո՛չ, դա ընդհարում չէր թշնամու հետ, այլ, ավելի շուտ, հաշվեհարդար: Արդյոք այդ հրդեհը պատիժ չէ՞ր հրամանը չկատարելու համար:

Բլրի գագաթը, որտեղից մարկիզը իր դիտումներն էր անում, բոլոր կողմերից շրջապատված էր խիտ թփերով: Տեղ-տեղ նույնիսկ դժվար էր նրանց միջով անցնել: Այդ թփերը շատ մեծ տարածություն էին բռնում: Նրանք ձգվում էին հենց ուղիղ մինչև ագարակ և իրենց անանցանելի թափուտի մեջ, ինչպես Բրետանի բոլոր անտառներն ու անտառակները, թաքցնում էին ձորերի, շափիղների ու ձորակների մի ամբողջ ցանց, մի խոսքով այնպիսի մի լաբիրին-



թոս, որի մեջ տեղանքին անձանոթ հանրապետական ջոկատները միշտ էլ կարող էին մոլորվել:

Մինչ մարկիզը ենթադրությունների մեջ խճճված տատանվում էր՝ մնա՞լ բլրի գագաթին, թե՞ իջնել թավուտը, մինչև նա նայում ու ականջ էր դնում, ջարդի դղիրդը դադարեց, կամ ավելի ճիշտ՝ ցրիվ եկավ: Մարկիզը տեսավ, թե ինչպես թփերի մեջ ցրվեց բարձրագույն մարդկանց ուրախ աղմկալից խումբը: Ծառերի տակ ու թփերի մեջ մարդիկ էին վխտում ինչպես մրջնակոցում. բոլորը ագարակից փախչում էին անտառ: Թմբուկները տազնապի զարկեր էին տալիս: Հրացանաձգությունը դադարել էր: Թվում էր, թե շուրջ-կալ է սկսվել. ինչ-որ մեկի ետևից էին ընկել, փնտրում էին ինչ-որ մեկին: Ամբողջ անտառը ձայների մի անընդհատ ու խուլ դժժոցով էր լցված: Լսվում էին նաև ցատումի ու հաղթանակի առանձին բացականչություններ, բայց ընդհանուր դժժոցի մեջ բառերը ջոկել չէր լինի: Հանկարծ այդ քառսի մեջ ամպերը ճեղքող կայծակի պես լսվեցին վանկ առ վանկ ասված բառեր: Հազարավոր բերաններ կրկնում էին միևնույն անունը, և այդ անունը պարզ ու որոշ հասավ մարկիզին.

— Լանտենա՛կ, Լանտենա՛կ: Մարկիզ դը Լանտենա՛կ:  
Նրան էին որոնում:

## VI. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐԸ

Եվ հանկարծ նրա շուրջը ամբողջ թավուտում շողշողացին սվիններ, հրացանի փողեր ու թրեր: Տերևների կանաչ կիսախավարի մեջ եռագույն դրոշ բարձրացավ:

— Լանտենա՛կ,— հնչեց նրա ականջին, և ցածում, նրա ոտքերի տակ, մամխենու թփերի մեջ երևացին կատաղի դեմքեր:

Նա մենակ էր: Կանգնած էր բարձրության վրա և երեվում էր անտառի բոլոր ծայրերից: Նա ինքը չէր կարող լավ տեսնել իր անունը գոչող մարդկանց, բայց իրեն տեսնում էին բոլորը: Անտառում եղած հրացանները երևի հազարից պակաս չէին, և նա հիանալի նշան էր բոլորի հա-

մար: Թփերի թափուտում նա ոչինչ չէր տեսնում, բացի իր վրա հառած բորբոքուն աչքերից:

Նա գլխից վերցրեց գլխարկը, նրա եզրը բարձրացրեց, թփից մի երկար չոր փուշ պոկեց, գրպանից հանեց մի սպիտակ կոկարդ և փշով ամրացրեց գլխարկի վեր բարձրացրած եզրին, ապա գլխարկը գլխին դրեց և դառնալով անտառին՝ բարձր ձայնով ասաց.

— Ես նա՛ եմ, որին դուք որոնում եք: Ես մարկիզ դը Լանտենակն եմ, դը Ֆոնտենի վիկոնտը, բրետոնյան իշխան, արքայական բանակի գեներալ-լեյտենանտը: Բավական է: Նշան բռնեցեք: Կրա՛կ:— Եվ երկու ձեռքով կաշվե բաճկոնը ետ քաշելով բացեց իր կուրծքը:

Նա հայացքը ցած գցեց, մտածելով, թե կտեսնի իր վրա ուղղված հրացանի փողեր, բայց տեսավ, որ ինքը շրջապատված է ծնկաչոք մարդկանցով: Ամբողջ անտառում տարածվեց հազարաձայն մի աղաղակ.

— Կեցցե՛ Լանտենակը: Կեցցե՛ մեր տերը: Կեցցե՛ գեներալը:

Գլխարկներն օդը թռան: Հարյուրավոր ձեռքեր ուրախ թափահարում էին թրերը, և ամբողջ թափուտում վեր բարձրացան երկար ձողեր, որոնց ծայրերին դարչնագույն բլրոյա գլխարկներ էին ճոճվում:

Լանտենակը Վանդեայի բանդայի մեջ էր: Եվ այդ բոլոր մարդիկ նրան տեսնելուն պես ծունկ չոքեցին:

Ամբողջ ամբոխը զինված էր հրացաններով, թրերով, գերանդիներով, քլունգներով, մահակներով: Բոլորի գլխին լայնեզր թաղիքե գդակներ էին կամ սպիտակ կոկարդով գլխարկներ, բոլորի վրա՝ բազմաթիվ թալիսմաններ, մինչև ծնկները հասնող լայն շավարներ, մորթե բաճկոններ և կաշվե կոշիկներ: Բոլորի ծնկները մերկ էին, մագերը՝ երկար: Ոմանք դաժան դեմք ունեին, բայց բոլորը՝ միամիտ հայացք: Այդ ծնկաչոք ամբոխի մեջ աչքի էր ընկնում մի գեղեցկադեմ երիտասարդ: Նա արագ քայլերով բարձրացավ բլուրը, մարկիզի մոտ: Նա մյուսների պես հագած ուներ հասարակ մորթե բաճկոն, գլխին թաղիքե գեղջկական գդակ, վեր բարձրացրած եզրին՝ սպիտակ կոկարդ, բայց նրա ձեռքերը ճերմակ էին, վերնաշապիկը նուրբ կտորից

էր և բանկոնի վրայից ուսին գցած ունէր մի սպիտակ մետաքսե լանջագոտի, որից կախված էր ոսկեկոթ թուրը:

Բլրի գլուխը բարձրանալով՝ նա գետնին շարտեց իր գլխարկը, մի ծունկը ծալեց, լանջագոտին թրի հետ ուսից արձակեց և մեկնելով մարկիզին՝ ասաց.

— Մենք ձեզ էինք որոնում: Այժմ գտել ենք: Ահա վերցրեք գլխավոր հրամանատարի թուրը: Այս մարդիկ ձեզ են պատկանում: Ես սրանց հրամանատարն եմ եղել, իսկ հիմա ձեր զինվորն եմ. ես աստիճան եմ ստացել: Ընդունեցեք մեր ընդհանուր ողջույնը, տե՛ր իմ: Հրամայեցեք, գեներալ:

Երիտասարդը ձեռքով նշան արեց, և թիւերի միջից դուրս եկան մի քանի մարդ, ձեռքներին՝ եռագույն դրոշ: Նրանք մոտեցան մարկիզին և դրոշը դրին նրա ոտքերի տակ: Դա հենց այն դրոշակն էր, որ քիչ առաջ մարկիզը տեսել էր ծառերի թափուտում:

— Գեներալ,— նորից խոսեց թուրը և լանջագոտին նրան հանձնող երիտասարդը,— այս դրոշը մենք խլել ենք կապույտներից, որոնք գրավել էին ագարակը: Իմ անունն է Գավար:

— Լավ,— ասաց մարկիզը:

Հանգիստ ու հանդիսավորապէս նա լանջագոտին ու թուրը գցեց իր ուրը: Ապա՝ թուրը պատշանից դուրս քաշելով և իր գլխավերևում թափահարելով, գոչեց:

— Ոտքի՛: Կեցցե՛ թագավորը:

Բոլորը ոտքի ելան, և անտառի թափուտը արձագանքեց ցնծագին.

— Կեցցե՛ թագավորը: Կեցցե՛ մեր մարկիզը: Կեցցե՛ Լատենակը:

Մարկիզը դարձավ Գավարին.

— Քանի՞ հոգի եք բոլորդ:

— Յոթ հազար:

Եվ բլուրից ցած իջնելով մարկիզի հետ միասին, որի առաջ գեղջուկները շտապ-շտապ ետ էին տալիս թիւերը, Գավարն սկսեց բացատրել.

— Ամեն ինչ շատ հեշտ եղավ, մոնսեմյոր: Ես ձեզ մի երկու խոսքով կբացատրեմ: Հենց միայն կայծի էինք սպասում: Հանրապետականների հայտարարությունը, որից մենք

տեղեկացանք ձեր ժամանման մասին, ամբողջ շրջանը ոտքի հանեց: Բոլորը թագավորին պաշտպան կանգնեցին: Ի դեպ, ձեր մասին մեզ գաղտնաբար տեղեկացրել էր նաև Գրանվիլի քաղաքագլուխը: Նա էլ մեզանից է: Իսկ այս գիշեր ահագանգ էին խփում:

— Ինչի՞ համար:

— Ձեզ համար:

— Ա՛յ թե ինչ,— ասաց մարկիզը:

— Եվ ահա մենք այստեղ ենք:

— Եվ յոթ հազա՞ր եք:

— Այո, առայժմ: Վաղը կլինենք տասնհինգ: Սա միայն մեկ շրջանից... Մենք այդպես էլ մտածում էինք, որ դուք թաքնված կլինեք այս անտառում, և որոնում էինք ձեզ:

— Այդ դո՞ւք էիք, որ քիչ առաջ հարձակվել էիք ագարակի վրա:

— Այո՛: Կապույտներն ահագանգը չէին լսել. քամին հակառակ կողմն էր փչում: Նրանք ոչինչ չէին կասկածում և տեղավորվել էին հանգստանալու: Ագարակի ու ավանի այդ ապուշները նրանց լավ էին ընդունել: Այս առավոտ մենք հարձակվեցինք ագարակի վրա: Կապույտները դեռ քնած էին, և մենք վերջ տվինք մի հարվածով: Ինձ մոտ մի ձի կա, գեներալ՝, բարեհաճեցեք ընդունել այն:

— Լավ:

Գեղջուկներից մեկը մոտ բերեց մի թամբած սպիտակ ձի: Օգնելու համար իրեն պարզած ձեռքը ետ հրելով՝ մարկիզը հեշտությամբ նետվեց թամբին:

— Ուռա՛,— գոչեց ամբոխը:

— Որտե՞ղ է լինելու ձեր գլխավոր կայանը, գեներալ,— մարկիզին պատվի բռնելով, հարցրեց Գավարը:

— Սկզբնական շրջանում Ֆուժերի անտառում:

— Դա ձեր սեփական յոթ անտառներից մեկն է, մոնսեյնյոր:

— Մեզ քահանա է հարկավոր:

— Քահանա ունենք:

— Ո՞վ է:

— Էրբերեի մատուռի փոխերեցը:

— Ես նրան ճանաչում եմ: Նա մեկ-մեկ գալիս էր Ջերսեյ:

Քահանան դուրս եկավ գյուղացիների ամբոխի միջից և ասաց.

— Երեք անգամ եկել եմ, մոմսեմյոր:

Մարկիզը ետ նայեց:

— Բարև ձեզ, երեց: Դուք գործ կունենաք:

— Ավելի լավ, տե՛ր մարկիզ:

— Դուք ստիպված կլինեք շատ մարդկանց խոստովանեցնել, իհարկե նրանց, ովքեր կցանկանան մահից առաջ խոստովանել:

Գավարը, որ գնացել էր ինչ-որ կարգադրություններ անելու, վերադարձավ:

— Գեներալ, մենք հրամանների ենք սպասում,— ասաց նա:

— Նախ՝ հավաքավայրը Ֆուժերի անտառն է: Թող բոլորը մեկիկ-մեկիկ այնտեղ գնան:

— Ես արդեն այդ կարգադրությունն արել եմ, գեներալ:

— Կարծեմ դուք ասացիք, որ ագարակի և ավանի բնակիչները լավ էին ընդունել կապույտներին:

— Ճիշտ այդպես, գեներալ:

— Դուք հրկիզե՞լ եք ագարակը:

— Այո:

— Իսկ ավանը:

— Ոչ:

— Հրկիզեցե՛ք:

— Կապույտները փորձեցին պաշտպանվել, բայց նրանք ընդամենը հարյուր հիսուն հոգի էին, իսկ մենք՝ յոթ հազար:

— Այդ ի՞նչ կապույտներ են: Ո՞ր ջոկատից:

— Գեներալ, նրանց դրոշի վրա գրված է. «Կարմիր գդակի գումարտակ»:

— Գիտեմ. վայրի գազաններ են:

— Ինչպե՞ս կհրամայեք վարվել վիրավորների հետ:

— Վերջ տալ:

— Իսկ գերիների՞ն:

— Գնդակահարե՛լ:

— Մոտ ութսուն մարդ են:

- Բոլորին գնդակահարել:
- Նրանց մեջ երկու կին կա:
- Կանանց մոյմպես:
- Եվ երեք երեխա:
- Երեխաներին վերցրեք ձեզ հետ: Հետո կտեսնենք, թե որտեղ թողնենք նրանց:— Եվ մարկիզը ձին շարժեց:

## VII. ՈՉ ՄԻ ԳԹՈՒԹՅՈՒՆ

Այն ժամանակ, երբ տեղի էր ունենում այս ամենը, մուրացկանը ձորակների միջով, խուլ արահետներով խորանում էր թափուտի մեջ: Նա քայլում էր մերթ ոչինչ չնկատելով, մերթ հետաքրքրվելով այս կամ այն չնչին բանով, ավելի շուտ երազելով, քան մտածելով: Նա հաճախ թեքվում էր ճանապարհից, նստում հանգստանալու, կուսնում էր, վայրի թրթնջուկներ քաղում ու սկսում ծամել, ականջ դնելով հեռվից եկող աղմուկին, ապա նորից մտքի մեջ էր ընկնում՝ ենթարկվելով վայրի բնության հմայքին, իր ցնցոտիները դեմ անելով արևի ճառագայթներին: Գուցե նրա ականջին էին հասնում նաև մարդկային ձայներ, բայց նա լսում էր միայն թռչունների երգը:

Արդեն ծեր էր նա և ծանր էր քայլում. դժվար էր նրա համար երկար ճանապարհ գնալ: Արդեն երեկո էր, երբ տուն էր վերադառնում:

Նրա ուշադրությունը գրավեց գետնից բարձրացող ծխի մի սյուն:

Բոլորովին սև էր այդ ծուխը, բայց մերթ ընդ մերթ լուսավորվում էր կարմիր բոցերով: Պարզ էր, որ հրդեհն արդեն մարում էր: Ծուխը բարձրանում էր Էրբ-ան-Պալլ ագարակի վրայից:

Տեղմարշը քայլերն արագացրեց և գնաց ուղիղ դեպի ծուխը: Նա շատ հոգնած էր, բայց ուզում էր իմանալ, թե ինչ ծուխ է դա:

Նա հասավ այն բլրի գագաթը, որի լանջին փոված էին ավանն ու ագարակը:

Ոչ ագարակը, ոչ ավանը այլևս գոյություն չունեին:

Մարմնում էր ավերակների մի կույտ, և դա հենց էդքան-Պալ ագարակն էր:

Սարսափելի է նայել, երբ պալատ է այրվում, բայց երբ խրճիթ է այրվում, մարդու սիրտը ավելի շատ ցավով է սեղմվում: Չքափոր մարդու խրճիթ՝ հրի բերանն ընկած. ի՞նչը կարող է ավելի սոսկալի լինել:

Տեղմարշը քար կտրեց իր առաջ բացված տեսարանից: Ավերումը տեղի էր ունեցել լուռ ու մունջ: Չէր լսվում մարդկային ոչ մի ճիչ: Ոչ մի հառաչանք չէր գալիս այնտեղից, որտեղ ծխի սյունն էր կանգնած: Բոցը լափում էր ավանի վերջին մնացորդները: Ոչ մի ձայն չէր լսվում. բացի փլվող գերանների դղրդումից և այրվող ծղոտե տանիքների ճարճաւոյունից: Լինում էին բոպեններ, երբ ծուլը ճեղքվում էր, և փլված տանիքների միջով երևում էր խրճիթի ներսը. բոցերից ծիրանագույն փալ ստացած լաթեր էին դրանք և աղքատիկ կահկարասի՝ բոցավառ խցիկներում:

Բոցն անցել էր ագարակի մոտի շագանակենու անտառին, և մերձակա ծառերն արդեն այրվում էին:

Տեղմարշն ականջ էր դնում, ջանալով լսել մարդկային մի ձայն, որևէ ճիչ կամ օգնության կոչ: Բայց ոչինչ չէր լսվում բացի կրակի ճրթնրթոցից: Ամեն ինչ լուռ էր:

Մի՞թե բոլորը փախել են:

Ո՞ր էին կոբել այն մարդիկ, որոնք միշտ զբաղված էին որևէ գործով և աշխուժացնում էին այս անկյունը: Ի՞նչ է պատահել նրանց:

Տեղմարշը ցած իջավ: Նա կանգնած էր մի չարագուշակ հանգուլի առաջ: Ուրվականի մման անձայն քայլերով, աչքը չհեռացնելով իր տեսածից, նա մոտենում էր ագարակի ավերակներին: Նա իրեն զգում էր ինչպես մի դիակ այդ գերեզմանի մեջ:

Մոտեցավ այն տեղին, որտեղ ագարակի դարպասն էր եղել և նայեց բակի ներսը: Մինչև այժմ իր տեսածը չնչին բան էր այն ամենի համեմատությամբ, որ բացվեց նրա առաջ. բակի կենտրոնում երևում էր մի սև կույտ: Մի կողմից այդ կույտը հրդեհն էր լուսավորում, մյուս կողմից՝ նրա վրա էին ընկնում լուսնի շողերը: Դա մարդկային մարմինների մի կույտ էր, և այդ մարդիկ մեռած էին:

Նրանց շուրջը փոված էր մի ահագին լիճ, որից գոլորշի էր բարձրանում: Լճի մեջ արտացոլում էին հրդեհի բոցերը, բայց այն առանց կրակի էլ կարմիր էր. դա արյան լիճ էր:

Տեղմարշն ավելի մոտեցավ: Նա սկսեց մեկը մյուսի ետևից դիտել այդ մարմինները. դրանք դիակներ էին: Լուսինն ու հրդեհը առատ լույս էին թափում նրանց վրա:

Բոլոր դիակները զինվորական բանկոններով էին, բայց՝ ոտաբոբիկ: Երևում էր՝ նրանց կոշիկները հասել էին և գեւքերը վերցրել: Բոլորի բանկոնները կապույտ էին: Մեռյալ ձեռքերի, ոտքերի ու գլուխների այդ կույտի մեջ տեղ-տեղ երևում էին գնդակներից ծակծկված եռանկյունի գլխարկներ, վրաները եռագույն կոկարդներ: Սպանվածները համարապետականներ էին, փարիզյան գումարտակի հենց այն զինվորները, որոնք դեռ երեկ ուրախ ու զվարթ տեղավորվել էին Էրբ-ան-Պալլում որպես կայազոր:

Մարմինների սիմետրիկ տեղադրումը պարզ ցույց էր տալիս, որ այդ մարդիկ գնդակահարված են, նրանց կոտորել էին մի համազարկով, կոտորել էին հանգիստ, անվրդով: Բոլորը մեռած էին. դիակների կույտից ոչ տնքոց էր լքվում, որ խոխոց:

Տեղմարշը բոլորին զննեց շատ խնամքով, բաց չթողնելով ոչ մի դիակ. գնդակները ծակծկել էին այդ բոլորի մարմինները:

Այս անգույթ դատաստան տեսնողները երևի շտապելիս են եղել, որովհետև չէին հասցրել դիակները թաղել:

Տեղմարշն արդեն ուզում էր հեռանալ, երբ նրա հայացքը պատահաբար ընկավ հրդեհից սպրդած մի ցածրիկ պատի վրա, և նա նկատեց, որ այդ պատի ետևից ցցված չորս ոտք, որոնք կոշիկներով էին և ավելի մանր, քան մյուսներինը: Նա մոտեցավ այդ պատին. դրանք կանացի ոտքեր էին:

Պատի ետևը կողք-կողքի փոված էին երկու կին, որոնք նույնպես գնդակահարված էին: Տեղմարշը կռացավ նրանց վրա: Մեկի հագին զինվորական բանկոնի նման մի բան կար: Նրա կողքին ընկած էր մի կոտրված դատարկ ջրաման: Այդ կինը մարկիտանտուհի էր: Նրա գլուխը ջախջախված էր չորս գնդակով: Նա մեռած...



Տելմարշն սկսեց զննել մյուս դիակը: Դա գեղջկուհի էր: Նրա դեմքը գունատ էր, քերանը կիսաբաց, աչքերը՝ փակ: Նրա գլխի վրա վերք չկար: Հագուստը ցնցոտի էր դարձել երևի երկար ճանապարհ կտրելուց: Ընկնելու պահին նրա շորը սլատովել էր, և կուրծքը բաց էր եղել: Նրա ուսին Տելմարշը մի կլոր վերք տեսավ, որ գնդակն էր բացել: Նրա անբախտի ոսկորը կտրված էր:

— Ծծկեր մայր է...— մրմնջաց նա կնոջ կրծքին նայելով:

Ծերունին ձեռքը դիպցրեց կնոջ մարմնին. այն դեռ պաղած չէր: Բացի կտրված անբախտից և ուսի վերքից ուրիշ ոչ մի վերք չկար նրա վրա: Տելմարշը ձեռքը դրեց սպանվածի կրծքին և զգաց սրտի թույլ զարկը: Կինը դեռ կենդանի էր:

Այն ժամանակ Տելմարշը բարձրացավ ու գոռաց.

— Է՛յ, ո՞վ կա այստեղ:

— Այդ դո՞ւ ես, Ծերուկ,— լսվեց ինչ-որ մի ձայն, բայց այնքան ցածր, որ հազիվ հասավ ծերունուն:

Ավերակների մի ինչ-որ փոսից դուրս ցցվեց մի գլուխ: Ապա մի ուրիշ փոսից էլ երևաց երկրորդ գլուխը: Դրանք երկու գեղջուկներ էին, որոնք կարողացել էին թաքնվել և հիմա ագարակում կենդանի մնացած միակ արարածներն էին: Լսելով մուրացկանի ծանոթ ձայնը՝ նրանք սիրտ էին արել դուրս սողալ իրենց փոսերից, որտեղ թաքնվել էին վախից:

Նրանք մոտեցան Տելմարշին դեռ դողալով սարսափից:

Տելմարշը կարողացել էր գոռալ, բայց խոսել չկարողացավ. խոր ցնցումն այդպես է ազդում մարդու վրա: Նա մատը մեկնեց իր առջև փոխած կնոջ վրա:

— Մի՞թե դեռ կենդանի է,— հարցրեց գեղջուկներից մեկը:

Տելմարշը գլխով դրական նշան արեց:

— Մյուսն է՞լ կենդանի է,— հարցրեց երկրորդ գյուղացին:

Տելմարշը գլուխը բացասաբար շարժեց:

Ծերունու կանչին առաջինն արձագանքող գյուղացին դողդոջուն ձայնով խոսեց.

— Մյուս բոլորը երեւի սպանված են: Ես ամեն ինչ տեսա: Ես նստած էի նկուղում: Այդ թուպեին ինչպիսի՜ գոհունակություն էի հայտնում աստծուն, որ՝ ընտանիք չունեմ: Իմ տունը վառեցին... Տե՛ր Հիսուս-Քրիստոս: Բոլորին կոտորեցին: Այդ կինը երեխաներ ուներ, երեք երեխա: Մեկը մյուսից փոքր: Երեխաները գոռում էին՝ «Մայրի՛կ, մայրի՛կ»: Մայրը գոռում էր՝ «Քալիկեն՛րս...» Մորն սպանեցին, երեխաներին տարան: Ես ինքս տեսա: Վաստի՛վ իմ, աստվա՛ծ իմ... Բոլորին կոտորեցին և ուրախ ու գոհ հեռացան. իրենց գործն արել էին. մորն սպանեցին, երեխաներին տարան... Բայց հո նա կենդանի է: Կենդանի է, հա՛: Ասա, Ծերունի, ի՞նչ ես կարծում, կարելի՞ է դրան փրկել: Կուգե՞ս մենք օգնենք, դրա մարմինը տանենք քո խրճիթը:

Տեղմարշը գլխով արավ:

Անտառը հասնում էր հենց ագարակին: Նրանք հաստ գյուղերից ու ձարխտներից շտապ մի պատգարակ շինեցին, նրա վրա դրին կնոջ մարմինը, որ դեռ կյանքի նշաններ էր տալիս, և տարան:

Երկու գյուղացիները պատգարակն էին կրում, մեկը ոտքերի կողմից, մյուսը՝ գլխի, իսկ Տեղմարշը քայլում էր կողքով, կնոջ դաստակը իր ձեռքում և շոշափում էր նրա զարկերակը: Լուսինը լուսավորում էր կնոջ դժգույն դեմքը:

Ծանապարհով քայլելիս գյուղացիները շփոթված գոչում էին.

— Բոլորի՛ն կոտորեցին:

— Ամե՛ն ինչ վառեցին:

— Ա՛խ, տե՛ր իմ աստված, հիմա ի՞նչ է լինելու:

— Այս ամենն այն բարձրահասակ ծերունու հրամանով եղավ:

— Հա, նա էր հրամաններ տալիս:

— Երբ գնդակահարում էին, ես նրան չտեսա: Մի՞թե նա ներկա էր:

— Չէ, նա շուտ էր գնացել: Բայց միևնույն է, նրանք ամեն ինչ այդ ծերունու հրամանով արին:

— Նշանակում է ամբողջ մեղքը նրա վրա է ընկնում:

— Հա, նա ասաց՝ «Կոտորեցե՛ք: Վառեցե՛ք: Ոչ մեկին  
մի՛ խնայեցեք»:

— Ասում են դա ինչ-որ մարկիզ է:

— Դե իհարկե, հենց մեր մարկիզն է:

— Իսկ ի՞նչ է նրա անունը:

— Պարոն դը Լանտենակ:

Տելմարշը հայացքը երկնքին գցեց և մրմնջաց.

— Թե որ իմանայի՛...

Փ Ա Ր Ի Զ Ո Ւ Մ

Ա ռ ա ջ ի ն գ ի Ր ք

Ս Ի Մ Ո Ւ Ր Դ Ե Ն

I. ՓԱՐԻԶԻ ՓՈՂՈՅՆԵՐՈՒՄ<sup>1</sup>

Փարիզը փողոցներում էր ապրում: Սեղանները դնում էին տների դռների առջև և ուտում ու խմում էին հենց փողոցում: Կանայք եկեղեցիների գավիթներում նստած վիրակապեր էին պատրաստում և «Մարսելյոզ»<sup>1</sup> երգում: Զբոսադահլներում գորախաղեր էին տեղի ունենում: Բոլոր փողոցների անկյուններում լրիվ թափով աշխատում էին զինագործական արհեստանոցները: Հրացանները շինվում էին ծափահարող ամբոխի աչքի առաջ: Բոլորի շուրթերին հետևյալ խոսքերն էին. «Պետք է համբերել. մենք հեղափոխություն ենք անում»: Մարդիկ հերոսաբար ժպտում էին:

Գերմանացիները կանգնած էին Փարիզի դարպասների առաջ: Լուր էր տարածվել, թե պրուսական թագավորը հրամայել է օպերային թատրոնում իր համար մի քանի օթյակ պահել:

Չէր կարելի տեսնել մի գլխարկ, որ կոկարդ չունենար: Կանայք ասում էին. «Կարմիր գդակները մեզ սազում են»:

Հնաժամանակների խանութները լիքն էին թագերով, խուրերով, ոսկեզարդ փայտե գայիսոններով ու զինանշան ներկայացնող շուշաններով, արքունական պալատներից բերված ամեն տեսակի հնոտիով: Այս ամենի մեջ մարմնացել

<sup>1</sup> «Մարսելյոզ» — ֆրանսիական հեղափոխական երգ, որ գրել է Ռուժե դը Լիլը 1792 թ.: Երգն այդ անունն է ստացել նրանից, որ առաջին անգամ այն երգել են Մարսել քաղաքի կամավորները: Հետագայում այն դարձել է ֆրանսիական հանրապետության հիմնը:

Էր միապետության խորտակումը: Հնավաճառներից խլիլելով գնում էին ժամաշապիկներ ու փարաջաներ: Մարդիկ պանդոկներին էին մոտենում ժամաշապիկներով, շորջաններով ծածկված ավանակներին հեծած և պանդոկապաններին հրամայում էին իրենց գինի տալ եկեղեցիներից բերված սկիհներով:

Սեն-Ժակ փողոցում ոտաբորիկ սալագործները կանգնեցնում էին կոշկավաճառների սալակները, իրենց մեջ փող հավաքելով տասնհինգ զույգ կոշիկ էին գնում և ուղարկում Կոնվենտ՝ «մեր զինվորների» համար:

Խոշոր խանութներից միայն մի քանիսն էին բաց, բայց կանաչ փողոցներում ձեռնասալակներ էին պտտեցնում՝ վաճառելով խաղալիքներ և մանր ապրանքներ: Երեկոները սալակները լուսավորում էին ճարպե մոմերով, և մոմը հալվելով կաթում էր ապրանքի վրա: Բացօթյա դրված արկղերում առևտուր էին անում շիկահեր կեղծամավոր ճախկին վաճառական կույսերը: Գուլպաներ կարկատող կինը բանից դուրս է գալիս, որ կոմսուհի է: Մեկ էլ տեսար՝ կար անող կինը մարկիզուհի է: Տիկին դը Բուֆլեն նայրում էր մի ձեղճահարկում, որտեղից երևում էր դեռ վերջերս իրեն պատկանող պալատը:

Փողոցներում լրագրավաճառներ էին վազվզում՝ առաջարկելով «Վերջին լուրեր»:

Ամեն քաղափոխի թափառաշրջիկ երգիչներ էին պատահում: Ամբոխը սուլում էր ոռյալիստ երգիչ Պիտտորին, որի մասին, սակայն, չէր կարելի ասել, թե քաղաքացիական արիություն չունի. նա քսաներկու անգամ բանտ էր նստել, իսկ մի անգամ նույնիսկ հեղափոխական տրիբունալի առաջ պիտի կանգներ այն մեղադրանքով, որ շրիկացրել էր իր փափուկ տեղին, ասելով՝ «քաղաքացիական արիություն»: Հասկանալով, որ դրա համար կարող է գլխից զրկվել, նա գոչել էր. «Ախ իմ գլուխը չի մեղավոր, այլ մարմնիս մի ուրիշ մասը»: Այս խոսքերը ծիծաղեցրել էին դատավորներին և փրկել նրա կյանքը:

Փողոցներում մեծ եռանդով «Կարմանոլա»<sup>1</sup> էին պարում, որի ժամանակ իրար կոչում էին ոչ թե «կավալեր» ու «դամա», այլ՝ «քաղաքացի» և «քաղաքացուհի»։ Պարում էին ավերված վանքերում, զոհասեղաններից կախված կանթեղների լույսի տակ։

Տարածված մոդա էին կապույտ, այսպես կոչված՝ «սիրանական» կամզոկները<sup>2</sup>։ Տղամարդիկ իրենց վերնաշապիկները կոճկում էին Ազատության քորոցներով, որոնք զարդարված էին ճերմակ, կապույտ ու կարմիր քարերով։

Ռիշելյույի փողոցը կոչվում էր Օրենքի փողոց, Սենտ-Անտուան արվարձանը՝ Փառքի արվարձան։ Բաստիլի հրապարակում կանգնած էր Բնության արձանը։

Ամբոխը բերանը բաց նայում էր զինվորական դպրոցի սաներին, որոնք քայլում էին փողոցներում։

Պճնասերները ծաղրում էին քաղաքացիական ամուսնությունները։ Նրանք խմբվում էին քաղաքապետարանի դռան առաջ և այնտեղից դուրս եկող զույգերին ծաղրում էին ետևներից գոռալով։

— Մոնիցիպալ նորապսակներ։

Հասարակական այգիներում վար էին անում։ Թյուիլրիում գութան էր աշխատում։ Ամենուրեք լրագրեր էին։ Վարսավիրների աշակերտները հենց հասարակության աչքի առաջ կանացի կեղծամեր էին հյուսում, մինչդեռ վարպետը նրանց համար քարձրաձայն «Մոնիտյոր» էր կարդում։ Ուրիշները խումբ-խումբ հավաքված կատաղի շարժումներ անելով թերթերի հոդվածներն էին քննարկում։ Գինեվաճառները հենց փողոցներում «Էմիգրանտական գինիներ» էին վաճառում։

Հացը պակաս էր, ածուխը պակաս էր, օճառը պակաս էր։ Փողոցներով գավառներից բերված կթի կովերի նախիրներ էին քշում։ Տավարի միս ամեն մի մարդուն տասն օրվա համար տալիս էին մեկ ֆունտ։ Խանութների առաջ մեծ հերթեր էին կանգնած։ Հերթ բռնելն այլ կերպ կոչվում էր

<sup>1</sup> «Կարմանոլա» — ֆրանսիական ժողովրդական հեղափոխության երգ ու պար, որ ստեղծվել էր 1792 թ. Թյուիլրիի պալատի գրավման և Թագավորի իշխանության անկման կապակցությամբ։

<sup>2</sup> Կամզոլ — կարճիկ շոր։

«պարան բոնել», որովհետև բոլոր հերթ կանգնողները պետք է իրար ետևից շարվեին և մի երկար պարանից բռնեին: Այդ դժվարին ժամանակներում կանայք համբերատար էին և ամբողջ գիշերն արիաբար կանգնում էին հացի խանութների առաջ, սպասելով իրենց հերթին:

Ծայրահեղ միջոցները հաջողվում էին հեղափոխությանը. զարհուրելի աղետի՝ աղքատության դեմ նա պայքարում էր երկու վտանգավոր միջոցներով՝ թղթադրամներ բաց թողնելով և ապրանքների սակագներ սահմանելով: Դա փրկեց Ֆրանսիան: Բորսային՝ գործարաններ կային Վիլլեն փողոցից՝ ցեխոտ կոշիկներով, կեղտոտ մագերով, աղվեսապոչ մորթե փափախներով, կային դրամափոխներ Վալուա փողոցից՝ հագներին լաքած կոշիկներ, պլյուշե գլխարկներ, ատամաքերիչները բերաններից: Ժողովուրդը հալածում էր նրանց՝ գողերի պես: Ռոյալիստները նրանց կոչում էին «ակտիվ քաղաքացիներ»: Ի դեպ, գողության դեպքեր քիչ էին լինում: Սոված մարդիկ ակնավաճառի խանութի առջևով անցնում էին հայացքները գետնին գցած: Մի անգամ խուզարկության ժամանակ մի կին քաղաքային այգում մի ծաղիկ պոկեց, ամբոխը դրա համար ծեծեց նրան:

Փայտի խորանանդ սաժենը<sup>2</sup> չորս հարյուր արծաթ ֆրանկ արժեք: Փողոցներում կարելի էր տեսնել, թե ինչպես մարդիկ սղոցում են իրենց փայտե մահճակալները՝ վառելու համար:

Ձմեռը աղբյուրները սառչում էին, և բոլորը ջրկիր էին դառնում:

Ժողովրդի մեջ վհատության հետք անգամ չկար. զգացվում էր միայն մոռալ ուրախություն, որ գահին վերջ է տրված: Կամավորները խումբ-խումբ էին գալիս և իրենց կյանքըն էին առաջարկում հայրենիքին:

Ամեն մի փողոց մի գումարդակ էր տալիս: Ամենուրեք շրջանների դրոշներ էին երևում, որոնցից յուրաքանչյուրն

---

<sup>1</sup> Բորսա — առևտրական և ֆինանսական գործարքներ կատարելու հիմնարկ՝ կապիտալիստական երկրներում:

<sup>2</sup> Սաժեն — երկարության չափ, որ հավասար էր երեք արշինի, իսկ արշինը հավասար էր 0,711 մետրի:

իր Աշահաբանն էր ունենում: Դրոշներից մեկի վրա գրված էր. «Ոչ ոք չի հաղթի մեզ», մի ուրիշի վրա՝ «Ազնիվ սիրտ, ուրիշ բան մեզ պետք չէ»:

Պատերից ամենուրեք ափիշներ էին փակցված: Լինում էին խոշոր ու մանր, սպիտակ, դեղին, կանաչ ու կարմիր ափիշներ, տպագիր ու ձեռագիր, և բոլորը միաբերան գոչում էին. «Կեցցե՛ հանրապետությունը»:

Փոքրիկ երեխաները «Կարմանուլա» երգի կրկներգն էին թոթովում:

Այդ երեխաները մարմնացնում էին անընդգրկելի ապագան:

Ինճառներեք թվականին, որին վերաբերում է մեր այս պատմությունը, Փարիզի փողոցները դեռ կրում էին հեղափոխության վեհ ու խիստ բնույթը: Նրանք ունեին իրենց հոետորները, իրենց հերոսները, իրենց սիրելիները: Այդ Աշահավոր մարդկանցից ոմանք չարիք էին ցանում, ուրիշները՝ առողջ սերմեր: Նրանց մեջ աչքի էր ընկնում մի ազնիվ ու անասան մարդ, որի անունն էր Սիմորդեն:

## II. ՍԻՄՈՐԴԵՆ

Սիմորդենն ազնիվ բնավորության տեր, բայց մոռյլ մարդ էր: Նրա մեջ ինչ-որ անասան բան կար: Առաջներում նա քահանա էր եղել, իսկ դա իր կնիքն է դնում մարդու վրա:

Սիմորդենի կյանքի պատմությունը շատ հասարակ է: Նա եղել է գյուղական քահանա և միաժամանակ՝ ուսուցիչ մի արիստոկրատական ընտանիքում: Հետո նա մի փոքրիկ ժառանգություն էր ստացել և հրաժարվել իր ծխերից:

Ամենից առաջ նա համառ մարդ էր: Գլխում ծագած ամեն մի մտքից կաոչում էր ինչպես աքցանով բռնես: Նա իրեն իրավունք չէր վերապահում հրաժարվել մի մտքից, քանի դեռ մինչև վերջ չի խորհել դրա մասին: Նա մտածում էր մոլեգնորեն: Գիտեր եվրոպական բոլոր լեզուները և էլի մի քանի ուրիշ լեզու: Նա սովորում էր միշտ ու անդադրում:

Քահանա եղած ժամանակ նա պահպանում էր իր ուխտը: Բայց հավատը պահել չկարողացավ. գիտությունն սպանեց



այն: Այն ժամանակ ինքնաքննությամբ նա զգացել էր, որ բարոյապես խեղանդամ է դարձել և, ուժ չունենալով դեմ գցել այն, ինչ իր մեջ մնացել էր քահանայությունից, սկսել էր մարդը մշակել իր մեջ, բայց իր սեփական անողոր ձևով: Նրան զրկել էին ընտանիքից, և հայրենիքը դարձել էր նրա ընտանիքը:

Սիմուրդենի ծնողները, որոնք հասարակ գյուղացիներ էին եղել, նրան քահանա էին դարձրել, որպեսզի դուրս գա հասարակ ժողովրդի շարքերից, բայց նա նորից մտել էր ժողովրդի մեջ, մտել էր իր բնավորության ամբողջ կրթով:

Ամեն մի տառապանք նրա մեջ արթնացնում էր այրող կարեկցանք: Քահանան դարձել էր փիլիսոփա, փիլիսոփան՝ մարտիկ: Դեռ Լյուդովիկոս XV-ի կենդանության ժամանակ Սիմուրդենը, ինքն էլ իրեն հաշիվ չտալով, դարձել էր հանրապետական: Բայց ինչպիսի՞ հանրապետություն էր երազում նա:

Նրան արգելել էին սիրել, նա սկսեց ատել: Նա ատում էր սուտը, միապետությունը, տերտերների իշխանությունը, իր սեփական փարաջան: Նա ատում էր ներկան և հոգու ամբողջ ուժով կոչ էր անում ապագային: Նա մեծ հեղափոխական տարիներ էր ապրել, արձագանքելով նրանց բոլոր ցնցումներին. 89 թվականին՝ Բաստիլի անկումը, ժողովրդի տառապանքների վերջը, 90 թվականին՝ ֆեոդալական կարգերի անկումը, 91 թվականին՝ միապետական իշխանության անկումը, 92 թվականին՝ հանրապետության հիմնումը: Նա տեսել էր, թե ինչպես էր բարձրանում հեղափոխությունը: Ամբողջ շրջապատի արագ անը աշխուժացրել էր նրան: Չնայած այդ ժամանակ արդեն հիսունմեկ տարեկան էր, նա ևս սկսել էր անել: Տարի առ տարի, նայելով աճող իրադարձություններին՝ ինքն էլ անում էր նրանց հետ միասին: Սկզբում նա վախ էր զգում հեղափոխության բախտի համար: Ուշիուշով դիտելով այն՝ համոզվեց, որ բանականությունն ու իրավունքը նրա կողմն են և ջերմորեն նրա հաջողությունն էր ցանկանում: Եվ որքան որ այդ հեղափոխությունը սարսափ էր ազդում, նա զգում էր, որ ինքը հանգստանում է:

Այսպես ապրեց Սիմուրդենը մինչև 93 թվականը:

93 թվականը Եվրոպայի պատերազմն էր Ֆրանսիայի հետ և Ֆրանսիայի պատերազմը՝ Փարիզի հետ: Իսկ ի՞նչ քան է հեղափոխությունը: Դա Ֆրանսիայի հաղթանակն է Եվրոպայի նկատմամբ և Փարիզի հաղթանակը՝ Ֆրանսիայի նկատմամբ: Այստեղից էլ հետևում է անընդգրկելի ճշանակությունն այդ զարհուրելի տարվա, որն ավելի շատ քան տվեց, քան 18-րդ դարի մյուս բոլոր տարիները:

Ավելի ողբերգական ոչ մի քան չի կարելի պատկերացնել, քան այն, որ Եվրոպան հարձակվում է Ֆրանսիայի վրա և Ֆրանսիան՝ Փարիզի վրա:

93 թվականը ուժերի մեծագույն լարումի տարի էր: 93 թվականին փոթորիկը ցույց տվեց իր ցատումի ամբողջ զորությունը, իր ամբողջ վեհությունը: Սիմուրդենն իրեն զգում էր իր տարերքի մեջ: Այդ եռուն միջավայրը համապատասխանում էր նրա թափի լայնությանը: Ծովային արծվի նման նա իր մեջ ներքին խոր հանդարտությունը միացնում էր արտաքին վտանգների նկատմամբ ունեցած սիրուն: Կան մարդիկ, որոնց հոգու մեջ մրրիկներ են ապրում:

Նա խղճահարություն էր զգում միայն թշվառների նկատմամբ: Նույնիսկ սարսափ ազդող տառապանքները չէին վանում նրան: Այս էր նրա բարության առանձնահատկությունը: Մի անգամ հիվանդանոցում մի մարդ մեռնում էր կոկորդի չարորակ թարախապալարից, որը խեղդում էր հիվանդին: Թարախապալարը զգվելի էր, գարշահոտ, գուցեն վարակիչ: Մեռնողին փրկելու համար հարկավոր էր անհապաղ բաց թողնել թարախը: Սիմուրդենը պատահաբար հիվանդի մոտ էր գտնվում: Նա շրթունքները դրեց պալարին, սկսեց թարախը ծծել և ամեն անգամ բերանը լցվելիս թքում էր և այդպիսով մարդուն մահից փրկեց: Որովհետև այդ ժամանակ նա դեռ փարաջա էր հագնում, ներկաներից մեկը՝ նրան ասաց.

— Եթե դուք այդ բանը թագավորի համար անելիք, հենց վաղը եպիսկոպոս կլինեիք:

— Թագավորի համար ես այս բանը չէի անի,— պատասխանեց Սիմուրդենը:

Այս արարքը և այս պատասխանը նրա համար հռչակ ստեղծեցին Փարիզի չքավոր թաղերում:

Նրա հոչակն այնքան մեծ էր, որ բոլոր տառապյալները, բոլոր բախտագուրկներն ու հալածվածներն ասես փափուկ մոմ լինեին նրա ձեռքում: Սպեկուլյանտների դեմ ժողովրդական ցատումի բռնկման ժամանակ, մի ցատում, որ այնքան հաճախ ցավալի սխալների էր հանցնում, Սիմուրդենը իր մի խոսքով սուրբ Նիկողայոսի նավահանգստում դադարեցրեց օճառ բարձած առագաստանավի կողոպուտը, մի ուրիշ անգամ համոզելով ցրեց գազազած ամբոխին, որը սայլերն էր կանգնեցրել Սեն-Լազարյան ուղեկալի մոտ:

Եվ նույն այդ Սիմուրդենը օգոստոսի 10-ի օրվանից տառն օր հետո իր ետևից տանում էր ամբոխին՝ թագավորների արձանները փշրելու: Պատվանդանների վրայից ընկնելիս այդ արձանները մարդիկ էին սպանում: Վանդոսի հրապարակում մի կին ճգմվեց Լյուդովիկոս XIV-ի արձանի տակ. որի վզից պարան գցելով նա ցած էր քաշել պատվանդանի վրայից: Այդ արձանը կանգնած էր եղել ուղիղ հարյուր տարի. կանգնեցվել էր 1692 թվականի օգոստոսի 12-ին և ցած էր գցվել 1792 թ. օգոստոսի 12-ին:

Համաձայնության հրապարակում Գեմգերլո աճուճով մեկը արձանները տապալողներին «սրիկաներ» էր կոչել, և ամբոխը տեղնուտեղը, հենց Լյուդովիկոս XV-ի արձանի մոտ բզկտեց նրան: Արձանը ջարդուփշուր արին: Հետագայում նրանից պղնձե դրամ կտրեցին: Չգիտես ինչպես արձանի մի ձեռքը ողջ էր մնացել. դա աջ ձեռքն էր, որ Լյուդովիկոս XV-ը առաջ էր մեկնել հոռմեական կայսեր պես: Սիմուրդենի խնդրանքով ժողովուրդը նրան հանձնեց այդ ձեռքը, և մի հանդիսավոր պատվիրակություն այն տարավ Լատյուդին, որը Բաստիլում նստել էր երեսուցյոթ տարի: Երբ Լատյուդը երկաթե վզնոցը վզին, պատին շղթայված՝ ողջ-ողջ նեխում էր այդ բանտի զնդանում այն թագավորի հրամանով, որի արձանը հպարտորեն բարձրացել էր Փարիզի վրա, կարո՞ղ էր արդյոք հավատալ, իր այդ բանտի պատերը կփլվեն, որ թագավորի արձանը ցած կգլորվի, որ ինքը՝ Լատյուդը դուրս կգա իր գերեզմանից, իսկ միապետությունը կկործանվի, որ ինքը, թշվառ կալանավորը տերը կդառնա այն ձեռքի, որ ստորագրել էր իր դատավճիռը, որ անառակ բռնավորից ոչինչ չի մնա, բացի՝ այդ բրոնզե ձեռքից:

Սիմուրդենն այն մարդկանցից էր, որոնք ականջ են դնում իրենց խղճի ձայնին: Այդպիսի մարդիկ արտաքուստ մտացրիվ են թվում, բայց ո՛չ, նրանք շատ ուշադիր են:

Սիմուրդենի մասին կարելի էր ասել, որ նա ամեն ինչ գիտե և ոչինչ չգիտե: Նա գիտեր այն ամենը, ինչ ուսուցանում է գիտությունը, և կատարյալ տգետ էր կենսական հարցերում: Դրանով էլ բացատրվում է նրա ուղղամտությունը: Սիմուրդենն ուղիղ առաջ էր ընթանում վճռականորեն և անակուն:

Նա հաստատ համոզված էր, որ սոցիալական հեղաշրջումներում միայն ծայրահեղություններն են ապագայի ամուր հիմքը: Սիմուրդենը Կոնվենտից էլ հեռուն էր գնում և Կոմունայից էլ հեռուն: Նա Եպիսկոպոսատի անդամ էր:

Այն հեղափոխական ընկերությունը, որ հայտնի էր Եպիսկոպոսատ անունով, որովհետև նիստեր էր գումարում նախկին եպիսկոպոսական պալատի դահլիճներից մեկում, ավելի շուտ մարդկանց մի խաչաքղետ հավաքույթ էր, քան քաղաքական կուսակցություն: Այնտեղ, ինչպես և Կոմունայում, նիստերին ներկա էին լինում լուսկյաց, բայց ազդեցիկ հանդիսատեսներ, որոնք ունենում էին «այնքան ատորճանակ, որքան գրպան»: Եպիսկոպոսատը հագուստների ու դեմքերի մի տարօրինակ խառնուրդ էր, փարիզյան և միաժամանակ միջազգային խառնուրդ: Մեկը մյուսին չի բացատում, որովհետև Փարիզը մի քաղաք է, որտեղ բարախում է բոլոր ժողովուրդների սիրտը: Եպիսկոպոսատում պլեբեյական զգացումները շիկանում էին ծայրահեղորեն:

Եպիսկոպոսատի համեմատությամբ Կոնվենտը պաղ էր, իսկ Կոմունան՝ գոլ: Եպիսկոպոսատը այն հեղափոխական կազմակերպություններից էր, որոնք հրաբուխ են հիշեցնում: Նրա մեջ ամեն ինչից քիչ-քիչ կար. և՛ հիմարություն, և՛ տգիտություն, և՛ ազնվություն, և՛ հերոսություն, և՛ ազնիվ ցասում, և՛ նույնիսկ լրտեսություն: Բայց մեծամասնությունը ազնիվ խելացնորներ էին: Ծատ փարիզեցիներ անհրաժեշտություն էին զգում համախմբվելու Փարիզի շուրջը: Սիմուրդենը հարել էր այդ մարդկանց խմբին:

Այդ խումբը ակտիվորեն պայքարում էր հետադիմականների դեմ: Եպիսկոպոսատին ծնունդ էր տվել բռնության հա-

սարակական պահանջը, որ բոլոր հեղափոխությունների հատկությունն է: Այդ ուժով հզորացած՝ նա իսկույն պատվավոր տեղ գրավեց: Այն ժամանակվա Փարիզի բոլոր հուզմունքների պահին Կոմունան թնդանոթներից էր կրակ տեղում, իսկ Եպիսկոպոսատը ահազանգ էր տալիս:

Սիմուրդենը հավատում էր, թե ճշմարտության ծառայելը արդարացնում է ամեն ինչ: Դա նրան դարձրել էր ծայրահեղ կուսակցությունների անփոխարինելի առաջնորդ:

Եպիսկոպոսատի անդամների մեծ մասը, որոնք գլխավորապես չքավորներ էին, ծայրահեղ հայացքների տեր և ազնիվ մարդիկ, հավատում էին Սիմուրդենին և սիրով հետևում էին նրան:

Կոմունան հսկում էր Կոնվենտին, Եպիսկոպոսատը հրկում էր Կոմունային: Սիմուրդենը, որ ուղղամիտ մարդ էր և ատում էր բանասարկությունները, շատ անգամ էր գաղտնի թելեր կտրել: Նա Եպիսկոպոսատի ղեկավարների բարձրության վրա էր կանգնած: Նրա հետ խորհրդակցում էին: Նա բազմապիսի տարրերին միացնող օղակն էր: Եվ դա նրա համար ստեղծել էր ոչ այնքան բարձր, բայց հաստատուն դիրք:

Այդ ժամանակներում Սիմուրդենն անասան իշխանություն ուներ: Դա արդարամիտ մարդ էր և իրեն համարում էր անսխալական: Ոչ ոք նրան չէր տեսել լալիս: Դա առաքինի մարդ էր՝ անհասանելի և պաղ: Նա սոսկալի էր իր արդարամտությամբ:

Հեղափոխությանը հարած քահանայի համար միջին վիճակ չկա: Քահանան այդ վիթխարի և փոթորկալից իրադարձություններին ակտիվ մասնակցություն կարող է ունենալ միայն ամենաստոր կամ ամենավեհ մղումներով: Դրա համար հարկավոր է լինել սրիկա կամ վսեմ հոգու տեր մարդ: Սիմուրդենը վսեմ հոգի ուներ, բայց այդ հոգին ամփոփված էր իր մեջ, ինչպես մի մենավոր ժայռի վրա, այն ճախրում էր անցունդի վրա՝ վախեցնելով անհասանելիությամբ: Վախ ներշնչող այդպիսի մաքրությամբ աչքի եմ ընկնում բարձր սարերը:

Սիմուրդենը սովորական մարդու արտաքին ուներ. հագնվում էր անպաճույճ, տեսքը՝ չքավորի: Երիտասարդ ժա-

մանակ գլուխը սափրում էր: Երբ հասակն առավ, ճաղատացավ, և գլխին մնացած սակավ մազերը ճերմակեցին: Ծակատը լայն էր, և ուշադիր դիտողը այդ ճակատին մեծ խելքի կնիքը կտեսներ: Նա խոսում էր հանդիսավոր, կրքոտ ու կտրուկ, տիրական տոնով: Նրա բերանի արտահայտության մեջ ինչ-որ տխրություն կար և միշտ դառն ծալքեր էին երևում: Հայացքը վճիտ էր ու խոր, և ամբողջ դեմքը մի գուսպ ցասում էր շնչում:

Այսպիսին էր Սիմուրդենը:

Մեր ժամանակներում նրա անունը մոռացվել է: Պատմության մեջ քիչ չեն այսպիսի անհայտները, որոնք իր ժամանակին փոթորիկ են եղել:

### III. ԴԱՍՏԻԱՐԱԿԸ

Կարո՞ղ է մարդ կոչվել այսպիսի մարդը: Ծառայելով մարդկությանը՝ կարո՞ղ էր նա ունենալ իր անձնական մտերմությունը: Արդյոք կարո՞ղ էր սիրել Սիմուրդենը:

Ուղղակի պատասխանենք. այո՛:

Երբ դեռ երիտասարդ հասակում նա դաստիարակ և ուսուցիչ էր մի արիստոկրատական ընտանիքում, ուներ մի սան՝ այդ ընտանիքի որդին ու ժառանգը, և նրան սիրում էր: Որքա՞ն հեշտ է սիրել մի երեխայի: Ինչ ասես, որ չես ների երեխային: Նրան ներում են տեր լինելը, իշխան լինելը, թագավոր լինելը: Մանկան հասակի անմեղությունն ստիպում է մոռանալ նրա տոհմի գործած չարիքները: Փոքրիկ էակի թուլությունը մոռացնել է տալիս նրա ծագումը: Նա այնքան փոքրիկ է, որ նրան ներվում է իր բարձր ծագումը: Ստրուկը քեն չի ունենում երեխայի դեմ այն բանի համար, որ նա իր տերն է: Նեգր ծերունին աստվածացնում է իր սպիտակամորթ սանիկին: Սիմուրդենն էլ ամբողջ հոգով կապվել էր իր աշակերտի հետ: Մանկության անբացատրելի հմայքը հենց այն է, որ երեխայի վրա կարելի է գեղել սիրո ամբողջ պաշարը: Քնքշանքի ամբողջ ուժը, որ կար Սիմուրդենի մեջ, եթե կարելի է այսպես արտահայտվել, թափվել էր երեխայի վրա: Միայնության դատապարտված նրա

սրտի համար այդ անուշիկ, անմեղ էակը դարձել էր մի տեսակ որս: Սիմուրդենը նրան սիրում էր սիրո բոլոր տեսակներով՝ որպես հայր, որպես եղբայր, որպես բարեկամ: Նա այդ երեխայի հայրը չէր, բայց նրա ուսուցիչն էր, վարպետը, արվեստագետը, և երեխան նրա լավագույն ստեղծագործությունն էր: Այդ փոքրիկ ազնվականին նա մարդ էր դարձնում և, ինչ իմանաս, գուցե մեծ մարդ: Համեմայն դեպս դրան էր ձգտում նա: Առանց ընտանիքի գիտության (և մի՞թե միտքը, կամքը և ազնիվ բնավորությունը զարգացնելու համար թույլտվություն էր պետք) նա դեռատի վիկոնտին, իր սանին հաղորդել էր այն ամենը, ինչ ապրում ու աճում էր իր մեջ: Նա երեխային էր ներարկել իր համոզմունքները, իր խիղճը, իր գաղափարը: Ազնվականի ուղեղի մեջ նա ժողովրդի հոգին էր պատվաստել:

Երբեմն դաստիարակը ավելի շատ իրավունք ունի հայր կոչվելու, քան հայրը, ինչպես երբեմն ծծմայրը ավելի շատ իրավունք ունի մայր կոչվելու, քան երեխայի մայրը:

Հենց այսպիսի խոր հոգեկան հայրությունն էր Սիմուրդենին կապում իր սանի հետ: Այդ մանկան հենց միայն տեսքը գործվանքով էր լցնում նրա սիրտը:

Պետք է ասել, որ տվյալ դեպքում դժվար չէր հորը փոխարինել: Երեխան որք էր, նրա հայրն ու մայրը վախճանվել էին, և նա մնացել էր իր տատի խնամքին, որը մի կույր պառավ էր, և մեկ էլ պապի եղբոր, որը միշտ բացակա էր լինում: Ծուտով տատն էլ մեռավ: Պապի եղբայրը, որ ընտանիքի մեծն էր, զինվորական արիստոկրատ և արքունիքում խոշոր դեր էր կատարում, հազվադեպ էր այցելում իր հին հայրենի դղյակը, ապրում էր մերթ Վերսալում, մերթ բանակի մեջ, որբուկին մենակ թողնելով այդ մենավոր դղյակում: Այսպիսով դաստիարակը դարձել էր երեխայի տիրակալը՝ բառիս լիակատար իմաստով:

Երեխան դեռ փոքր հասակում ծանր հիվանդություն էր կրել: Մի օր նա մահվան շեմին էր կանգնած, և Սիմուրդենը նրանից չէր հեռանում ո՛չ ցերեկը, ո՛չ գիշերը: Բժիշկը բուժում էր, հիվանդապահը՝ խնամում, և Սիմուրդենը փրկեց երեխային: Նրա սանը նրան էր պարտական ոչ միայն իր դաստիարակությունը, կրթությունն ու գիտելիքները, այլև իր

ապաքինումը ծանր հիվանդությունից, իր առողջությունը: Նա իր դաստիարակին պարտական էր ոչ միայն նրա համար, որ իրեն սովորեցրել էր մտածել, այլև նրա համար, որ փրկել էր իր կյանքը:

Ինչպես սովորաբար լինում է, կյանքը բաժանեց նրանց: Դաստիարակությունը վերջացավ, երեխան դարձավ պատանի, և Սիմուրդենն ստիպված եղավ անջատվել նրանից: Ուրախի՜ անգիտակից, պաղ դաժանությամբ են տեղի ունենում այսպիսի անջատումները: Ծնողներն ինչպիսի՜ վրդովեցուցիչ հանգստությամբ են արձակում դաստիարակին, որն իր միտքն էր դրել երեխայի մեջ, և ստնտուին, որը նրան էր տվել իր էության բոլոր հյութերը: Սիմուրդենին վճարեցին և ճանապարհ դրին: Նա հեռացավ հասարակության վերնախավից, որպեսզի նորից ցածունքը իջնի: Նրա ետևից փակվեց այն ծանր դուռը, որ այս աշխարհի մեծերին բաժանում է փոքրերից: Երիտասարդ ազնվականը, որ ծնված օրից բանակում գրանցված էր որպես սպա, միանգամից կապիտանի աստիճան ստացավ և մեկնեց իր կայագորը, իսկ համեստ քահանա-դասատուն, որը վաղուց արդեն հոգու խորքում հարել էր ըմբոստների շարքերին, շտապեց վերադառնալ եկեղեցու այն մութ ներքնահարկերը, որ կոչվում են ստորին հոգևորականություն, և տեսադաշտից կորցրեց իր սանին:

Վրա հասավ հեղափոխությունը: Սիմուրդենի մեջ դեռ ապրում էր հիշողությունն այն էակի մասին, որին ինքը մարդ էր դարձրել: Այդ հուշը միշտ առկայծում էր նրա հոգու մեջ, և որքան էլ մեծ էին հասարակական իրադարձությունները, չկարողացան մարել այն:

Սքանչելի արձան քանդակելը և նրան կյանք ներշնչելը լավ բան է, բայց մատաղ միտքը զարգացնելը, պատանու հոգին իր ուզած ձևով կերտելը և նրան ճշմարտության զգացմունք ներշնչելն ավելի լավ է:

Միտքը կարող է ունենալ իր հոգեզավակը:

Այդ որբ երեխան, նրա աշակերտը, աշխարհի երեսին միակ արարածն էր, որին սիրում էր Սիմուրդենը:



Բայց այսպիսի մի մարդ, նույնիսկ այսպիսի գորովանք  
զգալով, կարո՞ղ էր խոցելի լինել:

Այդ մենք կտեսնենք:

## Ե Ր Կ Ր Ո Ր Դ Գ Ի Ր Ք

### Ս Ի Ր Ա Մ Ա Ր Գ Ի Փ Ո Ղ Ո Ց Ի

### Պ Ա Ն Դ Ո Կ Ը

#### I. ԵՐԵՔԸ

Սիրամարգի փողոցում կար մի պանդոկ, կամ, ինչպես  
նրան կոչում էին՝ սրճարան: Այդ սրճարանն ուներ մի ետ-  
նասենյակ, որը հիմա պատմական է դարձել: Այնտեղ եր-  
բեմն ըստ հնարավորին գաղտնի հավաքվում էին մարդիկ,  
որոնք ունեին այնպիսի հզոր իշխանություն և միաժամանակ  
այնպիսի զգոն հսկողության տակ էին, որ սիրտ չէին անում  
հրապարակորեն զրուցել իրար հետ:

1793 թվականի հունիսի 28-ին այդ սենյակում սեղանի  
շուրջը նստած էին երեք մարդ: Նրանցից յուրաքանչյուրն  
զբաղեցրել էր սեղանի մեկ կողմը, չորրորդ կողմն ազատ  
էր մնացել:

Երեկոյան ժամը ութին մոտ էր: Դուրսը դեռ լույս էր,  
բայց սրճարանի ետնասենյակում արդեն մութ էր, և սեղանը  
լուսավորում էր առաստաղից կախված լամպը:

Երեք զրուցակիցներից մեկը մի երիտասարդ էր՝ գունատ,  
լուրջ դեմքով, նուրբ շրթունքներով և պաղ հայացքով: Նրա  
մի այտը ջղաձգորեն ցնցվում էր, որը, հավանորեն, նրան  
խանգարում էր ժպտալ: Նրա գլխին ճերմակացրած կեղծամ  
կար, ձեռքերին՝ ձեռնոցներ:

Մյուս երկուսից մեկը համարյա հսկա էր, երրորդը՝ հա-  
մարյա թզուկ: Հսկայի դեմքը ծաղկատար էր: Նրա շրթունք-  
ները հաստ էին, ատամները՝ խոշոր, սևագործ բանվորի  
բռունցքներ ուներ, շողշողուն աչքեր: Նրա հոնքերի արան-  
քում ցատումի մի կնճիռ կար, բայց բերանը բարություն էր

արտահայտում: Երրորդը փոքրամարմին, դեղնադեմ մարդ էր: Նստած ժամանակ սապատավոր էր թվում, բերանը լայն էր ու դաժան:

Նրանցից առաջինի անունն էր Ռոբեսպիեր, երկրորդինը՝ Դանտոն, երրորդինը՝ Մարատ<sup>1</sup>:

Սենյակում նրանք մեկնակ էին: Դանտոնի առաջ դրված էին մի բաժակ և գինով լի մի փոշեծածկ շիշ, Մարատի առաջ՝ մի գավաթ սուրճ, Ռոբեսպիերի առաջ թղթեր էին փռված:

Թղթերի կողքին կար մի թանաքաման, մեկը այն կապարե ծանր, կյոթ թանաքամաններից, որպիսիք դեռ դարի սկզբում գործածում էին դպրոցներում: Այդտեղ գցած էր և մի գրիչ: Թղթերի վրա դրված էր մի խոշոր պղնձյա կնիք: Սեղանի կենտրոնում փռված էր Ֆրանսիայի քարտեզը:

Խորհրդակցության նյութն էին սեղանին փռված թղթերը, Ռոբեսպիերն արդեն կարդացել էր բարձրաձայն: Ջրույցը փոխվում էր վեճի: Չայներն ափելի ու ափելի էին բարձրանում, և նրանց մեջ սկսում էին հնչել ցատումի նոտաներ:

## II. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՎՏԱՆԳԻ ՄԵՋ Է

Դանտոնը վեր կացավ և կտրուկ շարժումով ետ հրեց իր աթոռը:

— Լսո՞ւմ եք դուք, — գոչեց նա: — Մեր առաջ մեկ խընդիր կա դրված՝ փրկել հանրապետությունը: Հանրապետությունը վտանգի մեջ է: Ինձ համար հիմա ամեն բանից ավելի կարևորն է՝ Ֆրանսիան ազատել թշնամուց: Դրա համար բոլոր միջոցները լավ են: Բոլո՛րը, բոլո՛րը: Երբ բոլոր կողմերից ինձ կործանում է սպառնում, ես դիմում եմ ամեն մի միջոցի: Երբ ես վախենում եմ ամեն բանից, հարձակվում եմ ամեն ինչի վրա: Հեղափոխության մեջ կիսամիջոց լինել չի կարող: Վախ ներշնչենք, և մենք օգտակար կլինենք:

---

<sup>1</sup> Ռոբեսպիեր Մաքսիմիլիան (1758—1794), Դանտոն Ժորժ (1759—1794), Մարատ Ժան-Պոլ (1743—1793) — ֆրանսիական առաջին բուրժուական հեղափոխության խոշորագույն գործիչներ:

Մի՞թե փիղը մտածում է, թե որտեղ կդնի իր ոտքը: Ծըզմե՛նք թշնամուն:

Ռոբեսպիերը մեղմորեն պատասխանեց.

— Ես ինքս էլ ուզում եմ այդ:— Եվ ավելացրեց.— Հարցը միայն այն է, թե որտեղ է թշնամին:

— Նա Ֆրանսիայի սահմաններից դուրս է, և ես եմ վռնդել նրան,— գոչեց Դանտոնը:

— Նա մեր սահմաններում է, և ես հսկում եմ նրան,— ասաց Ռոբեսպիերը:

— Ես նորից դուրս կքշեմ նրան,— ասաց Դանտոնը:

— Ներքին թշնամուն դուրս քշել չես կարող:

— Որեմն ինչպե՞ս վարվել նրա հետ:

— Բնաջնջե՛լ:

— Ես համաձայն եմ,— ասաց Դանտոնն իր հերթին, ապա ավելացրեց.— Կրկնում եմ, Ռոբեսպիե՛ր, թշնամին մեր երկրի սահմանների այն կողմն է:

— Կրկնում եմ, Դանտո՛ն, նա երկրի ներսում է:

— Թշնամին, Ռոբեսպիե՛ր, սահմանագլխին է:

— Դանտո՛ն, նա Վանդեայում է:

— Հանդարտվեցե՛ք,— հնչեց երրորդ ձայնը,— թշնամին ամենուրեք է, և դուք կորած եք:

Այդ Մարատն էր խոսում: Ռոբեսպիերը նայեց նրան և հանգիստ առարկեց.

— Բավական եմ ընդհանուր խոսքերը: Ես ձեզ փաստեր բերեցի:— Ռոբեսպիերը ձեռքը դրեց իր առջև ընկած թղթերին և շարունակեց.— Ես հենց նոր ձեզ համար կարդացի պրիորի հեռագրերը: Ես ձեզ հայտնեցի Ժելամբրի տված տեղեկությունները: Ասում եմ ձեզ, Դանտոն, կոիվը արտաքին թշնամու դեմ՝ դատարկ բան է: Դժվարը քաղաքացիական պատերազմն է: Արտաքին պատերազմը մի աննշան թիծ է դատակի վրա, քաղաքացիական պատերազմը չարորակ խոց է, որ լյարդն է կրծում: Այն ամենից, ինչ ես հիմա կարդացի, պարզ է մի բան. Վանդեան, որի ուժերը մինչև այժմ ցաքուցրիվ էին, որտեղ առանձին-առանձին առաջնորդներ էին գործում, այժմ պատրաստ է համախրմբվելու: Այսուհետև նա ունենալու է իր գլխավոր հրամանատարը:

— Ավագակապէ՛տը,— մոթմոթաց Դանտոնը:

— Նա մեր ափն է դուրս եկել հունիսի երկուսին,— շարունակեց Ռոբեսպիերը:— Դուք գիտեք, թե ինչ մարդ է դա: Պատերազմը թփերի ետևից կազմակերպվում է լայն ծավալով: Միաժամանակ անգլիական դեսանտ է պատրաստվում: Վանդեաացիներն ու անգլիացիները Բրետանն են ու Բրիտանիան: Ես ձեզ ցույց տվի մեր ձեռքն ընկած նամակը, որտեղ ասված է. «Բավական է, որ քսան հազար կարմիր բանկոններ<sup>1</sup> երևան ապստամբների մեջ, և ոտքի կկանգնի հարյուր հազար մարդ»: Երբ գյուղացիական խռովությունը կբորբոքվի, անգլիական դեսանտն ափ կիջնի: Ահա այս է նրանց ծրագիրը: Նայեցեք քարտեզին:— Եվ նա շարունակեց՝ մատը սահեցնելով քարտեզի վրայով:— Անգլիացիներն ընտրություն անելու լայն հնարավորություններ ունեն. այս ափին նրանք կարող են ցամաք դուրս գալ որտեղ ուզենան: Երկու շաբաթում երեք հարյուր հազարանոց բանակ կհավաքվի, և ամբողջ Բրետանը ֆրանսիական թագավորի ձեռքում կլինի:

— Այսինքն՝ անգլիական,— ուղղեց Դանտոնը:

— Ո՛չ, ֆրանսիական:— Եվ Ռոբեսպիերը շարունակեց.— ֆրանսիական թագավորն ավելի վատ է. օտարերկրյա թշնամուն երկու շաբաթում կարելի է վոնդել, բայց միապետությունից ազատվելու համար մեզ պետք եղավ տասնույթ դար:

Դանտոնը նստեց և մտախոհ գլուխն իջեցրեց ձեռքերի վրա:

— Հիմա դուք տեսնում եք, թե որն է վտանգը,— ասաց Ռոբեսպիերը:— Բրետանը անգլիացիների համար ճանապարհ է բացում դեպի Փարիզ:

Դանտոնը գլուխը բարձրացրեց և իր ջղաձգորեն սեղմված ահագին բռունցքները զարկեց քարտեզին, ինչպես մուրճը սալին.

— Ռոբեսպիեր, մի՞թե Վերդենը պրուսացիների համար ճանապարհ չէր բացում դեպի Փարիզ:

— Հետո ի՞նչ:

<sup>1</sup> Կարմիր բանկոններ — այստեղ նկատի ունի անգլիական գինվորներին:

— Այն, որ մենք անգլիացիներին էլ կվոնդենք, ինչպես պրուսացիներին վոնդեցինք:

Եվ Դանտոնը նորից վեր թռավ տեղից:

Ռոբեսպիերը իր պաղ ձեռքը դրեց նրա տաք բռունցքի վրա.

— Նստեցեք, Դանտոն, և ավելի լավ մայեցեք քարտեզին, փոխանակ բռունցքով հարվածելու նրան:

Բայց Դանտոնին հակառակը համոզելն այնքան էլ հեշտ բան չէր:

— Ո՛չ, այդ չափից դուրս է,— գռչեց նա:— Կործանում սպասել արևելքից, երբ այն գալիս է արևմուտքից... Այո, Ռոբեսպիեր, Անգլիան մեզ սպառնում է օվկիանոսի կողմից, համաձայն եմ: Բայց չէ՞ որ Իսպանիան մեր դեմ է ելնում Պիրենեայում, Իտալիան՝ Ալպերում, Գերմանիան՝ Հռենոսի ափին: Իսկ հեռվում դեռ ռուսական արջն էլ է ոտքի կանգնում... Ռոբեսպիե՛ր, վտանգն ամեն կողմից է, այն մեզ նեղ օղակի մեջ է առել: Բանակը խիստ նոսրացել է: Չկա մի գումարտակ, որ չորս հարյուրից ավելի զինվոր ունենա: Դը Պոնտի քաջարի գնդում ընդամենը հինգ հարյուր մարդ է մնացել: Պամարի ճամբարը հանձնված է: Ժիվեում ալյուրի ամբողջ պաշարից հինգ հարյուր պարկից ավելի չի մնացել: Մենք նահանջում ենք, Բրաունշվեյգը<sup>1</sup> ուժեղանում ու հարձակվում է, գերմանական դրոշը տնկելով իր գրաված բոլոր ֆրանսիական քաղաքների վրա: Պրուսական թագավորը Եվրոպայի բախտը որոշողն է դառնում: Նա գրավում է մեր գավառները, նա իր թաթը կոնի նաև Բելգիայի վրա, կտեսնեք: Իրոք, կարելի է մտածել, թե մենք ջանք ենք թափում Բեռլինի համար: Եթե այսպես շարունակվի, եթե մենք խելքի չգանք, ապա դուրս կգա, որ ֆրանսիական հեղափոխությունը Պոտտոլամի օգտին է եղել, որ նրա միակ արդյունքը եղել է Ֆրիդրիխ Երկրորդի մանրիկ տիրապետությունների ընդարձակման համար և որ մենք Ֆրանսիայի թագավորին սպանել ենք Պրուսիայի թագավո-

---

<sup>1</sup> Բրաունշվեյգ — (Բրաունշվեյգի հերցոգ Կառլ) գլխավոր հրամանատար պրուսական — ավստրիական — հեսեյան զորքերի (որոնց միացել էին տասնչորս հազար վտարանդիներ), որ 1792 թվականին ներխուժեց Ֆրանսիա, նպատակ ունենալով միապետությունը վերականգնել:

րին օգուտ տալու համար:— Եվ Դանտոնը բռնվեց մի քրքր-  
քիջով:

Նրա այդ ծիծաղը լսելով՝ Մարատը ժպտաց:

— Զեզանից յուրաքանչյուրն իր էշն է քշում,— ասաց  
նա:— Դուք, Դանտոն, շարունակ Պրուսիայի մասին եք խո-  
սում, դուք, Ռոբեսպիեր, Վանդեայի: Իսկ հիմա ես էլ կա-  
սեմ իմ խոսքը: Դուք երկուսդ էլ իսկական վտանգը չեք  
տեսնում: Երկուսդ էլ սխալվում եք: Վտանգը Լոնդոնում չէ,  
ինչպես կարծում է Ռոբեսպիերը, և ոչ էլ Բեռլինում, ինչպես  
կարծում է Դանտոնը: Վտանգը Փարիզում է: Վտանգը  
միասնության բացակայությունն է, այն, որ, սկսած հենց  
ձեր երկուսիցդ, ամեն ոք իրավունք է համարում իր կողմը  
քաշելու: Վտանգը գաղափարական խառնաշփոթն է, կամ-  
քի անիշխանությունը...

— Եվ դուք դեռ անիշխանության մասի՜ն եք խոսում,—  
ընդհատեց Դանտոնը:— Էլ ո՞վ է ստեղծում այդ, եթե ոչ  
դուք:

Բայց Մարատն առանց կանգ առնելու շարունակեց.

— Ռոբեսպիեր, Դանտոն, վտանգն անթիվ, անհամար  
պանդոկներն են, խաղատները, ակումբները... Վտանգը քա-  
ղաքում է: Վտանգը թղթադրամներն են, որոնց արժեքն  
ընկնում է օրեցօր: Սպեկուլյանտներն ու վալյուտավաճառ-  
ները՝ ահա թե ովքեր են վտանգը: Իսկ դուք Փարիզի վրա  
ուշադրություն չեք դարձնում: Դուք վտանգը հեռվում եք  
փնտրում, երբ այն մոտիկ է: Դե ուրեմն իմացած եղեք.  
վտանգը ձեր գլխավերևում է, վտանգը ձեր ոտքերի տակ է:  
Ամեն տեղ դավադրություններ են ու դավադրություններ:  
Փողոցներում անցորդներն իրար համար թերթեր են կար-  
դում և խորհրդավոր ձևով գլխով անում: Բարեհուսության  
վկայական չունեցող վեց հազար հոգի վերադարձած վտա-  
րանդիներ, աշխարհիկ պճնամուլներ ու լրտեսներ թաքնված  
են նկուղներում ու տանիքներում և Պալե Ռոյալի փայտա-  
շեն միջանցքներում: Հացավաճառ խանութների առաջ պո-  
չեր են ստեղծվել: Աղքատ կանայք տների շենքերին կանգ-  
նած աղերսանքով հարցնում են. «Վերջապես ե՞րբ խաղա-  
ղություն կլինի»: Այո, վտանգն ամենուրեք է և առանձնապես  
կենտրոնում, Փարիզում: Նախկին ազնվականները դավա-

դրություններ են պատրաստում, հայրենասերները ոտաբոբիկ են շրջում: Մարտի իննին ձերբակալված արիստոկրատներն արդեն ազատ են արձակված: Հազարավոր ձիեր, որոնք պետք է սահմանագլխին թնդանոթ քաշեին, փողոցներում ցեխոտում են մեզ: Չորս ֆունտանոց հացն արժե երեք ֆրանկ տասներկու սու: Թատրոններում անվայել պիեսներ են բեմադրում, և շուտով Ռոբեսպիերը Դանտոնին գիլիոտին<sup>1</sup> կուղարկի:

— Ինչպե՞ս չէ,— մոթմոթաց Դանտոնը:

Ռոբեսպիերը ուշի-ուշով քարտեզն էր դիտում:

— Ահա ինչ եմ առաջարկում ես,— շարունակեց Մարատը:— Վերջին ջանքը գործի դնենք: Աշխատենք համաձայնության գալ: Այնպիսի դրություն է, որ արժե փորձել: Ձեր երկուսի ասածների մեջ ճշմարտության բաժին կա: Բայց ամբողջ ճշմարտությունը, իսկական ճշմարտությունն այն է, որ ես եմ ասում: Ի՞նչ է պակասում մեզ: Միասնություն: Դա է մեր փրկությունը: Բայց պետք է շտապել: Փարիզը պետք է իր. ձեռքը վերցնի հեղափոխությունը: Եթե մենք թեկուզ մեկ ժամ կորցնենք, ապա վաղը վանդեացիները կարող են Օռլեանում լինել, իսկ պրուսացիները՝ Փարիզում: Դուք տեսնում եք, Դանտոն և Ռոբեսպիեր, ես այս զիջումն անում եմ ձեզ: Այս ամենից ի՞նչ հետևություն: Հետևությունը մեկն է. դիկտատուրա: Ուրեմն սահմանենք դիկտատուրա: Մենք երեքս մարմնացնում ենք հեղափոխությունը: Մենք երեքս նրա գլուխներն ենք: Այդ երեք գլուխներից մեկը խոսում է, այդ դուք եք, Ռոբեսպիեր, մյուսը մոռնում է, այդ դուք եք, Դանտոն...

— ... Իսկ երրորդը կծում է, այդ դուք եք, Մարատ,— վրա բերեց Դանտոնը:

— Երեքն էլ կծում են,— ուղղեց Ռոբեսպիերը:

Լուրջությամբ տիրեց: Ապա զրույցը վերսկսվեց: Մարատը ցատումնալից ճառ սկսեց.

— Ռոբեսպիե՛ր, Դանտո՛ն, նշանակում է դուք ինձ լսել չե՞ք ուզում: Բայց ես նորից կասեմ. դուք կորած եք: Ձեր

<sup>1</sup> Գիլիոտին — գլխատման մեքենա: Գործածության մեջ է դրվել ֆրանսիական առաջին բուրժուական հեղափոխության ժամանակ՝ որկտոր Գիլիոտինի առաջարկությամբ:

քաղաքականությունը ձեզ փակուղու մեջ է գցել: Էլ առաջ գնալու տեղ չունեք: Դուք ելք չունեք: Այն, ինչ դուք անում եք, ձեր առաջ կփակի բոլոր դռները, քացի գերեզմանի դռներից:

Դանտոնն ուները թոթվեց:

— Հենց այդ է մեր վեհությունը,— ասաց նա:

— Դուք երկուսդ էլ դեռ երիտասարդ եք,— շարունակեց Մարատը:— Քանի՞ տարեկան ես դու, Դանտոն: Երեսունչո՞րս: Իսկ դո՞ւ, Ռոբեսպիեր: Երեսուններե՞ք... Դե, իսկ ես ապրում եմ աշխարհի սկզբից. ես մարդկության հավիտենական տառապանքն եմ, ես վեց հազար տարեկան եմ: Այսպես էին գրուցում այս երեք մեծ մարդիկ:

### III. ԾԱՇՈՒԿ ԶԳԱՅՄՈՒՆՔՆԵՐԻ ԹՐԹԻՈՎ

Զրույցն ընդհատվեց: Երեքն էլ սուզվեցին իրենց մտքերի մեջ: Ռոբեսպիերը նկատելիորեն գունատվել էր, Դանտոնը՝ կարմրատակել: Երկուսն էլ սկսել էին դողալ: Մարատի աչքերի չարագույժ կայծը մարել էր: Հանդարտությունը, տիրական հանդարտությունը՝ նորից տարածվել էր նրա դեմքին: Այդ ժամանակ սենյակի խորքից մի ձայն լսվեց.

— Մարատ, դու իրավացի չես:

Բոլորը ետ նայեցին: Վեճի ժամանակ նրանք չէին նկատել, թե ինչպես մեկը ներս էր մտել ետևի դռնից:

— Ա՛խ, այդ դո՞ւ ես, քաղաքացի Սիմուրդեն, — ասաց Մարատը:— Ողջույն:

Դա իսկապես Սիմուրդենն էր:

— Ես ասում եմ, որ դու իրավացի չես, Մարատ, — կրկնեց նա:

Մարատը կանաչ գույն ստացավ. այդպես էր լինում նա գունատվելիս: Սիմուրդենը շարունակեց.

— Դու օգտակար ես, իսկ Ռոբեսպիերը և Դանտոնն անհրաժեշտ են: Ի՞նչ կարիք կա սպառնալ նրանց: Միաբանություն՞, միաբանություն՞, քաղաքացիներ: Ժողովուրդը միաբանություն է պահանջում:



Սիմուրդենի միջամտությունը, կողմնակի անձի անսպասելի՝ ներկայությունն՝ ընտանեկան վեճին՝ մի դույլ պաղ ջրի ներգործություն՝ ունեցավ. այն հանդարտեցրեց փոթորիկը եթե ո՛չ խորքում, համեմայն դեպս մակերեսին: Սիմուրդենը մոտեցավ սեղանին: Դանտոնը և Ռոբեսպիերը նրան ճանաչում էին: Կոնվենտի հասարակությանը հատկացված տրիբունալներում նրանք շատ անգամ էին նկատել այդ հզոր մարդուն, որի առաջ ժողովուրդը գլխարկ էր վերցնում: Բայց և այնպես ձևապաշտ Ռոբեսպիերը հարցրեց նրան.

— Դուք ինչպե՞ս եք այստեղ ընկել, քաղաքացի:

— Նա Եպիսկոպոսատից է,— պատասխանեց Մարատը:

— Օ՛հ, քաղաքացի Սիմուրդենն այստեղ ավելորդ մարդ է,— ասաց Դանտոնը և ձեռքը մեկնեց Սիմուրդենին: Ապա ավելացրեց. — հարկավոր է քաղաքացի Սիմուրդենին բացատրել գործերի վիճակը: Նա իսկը ժամանակին է եկել: Ես այստեղ Լեոան ներկայացուցիչն եմ, Ռոբեսպիերը՝ Հասարակական փրկության կոմիտեի, Մարատը Կոմունայի ներկայացուցիչն է, Սիմուրդենը՝ Եպիսկոպոսատի: Նա մեզ կհաշտեցնի:

— Համաձայն եմ,— ասաց Սիմուրդենը լուրջ ու հասարակ:— Ի՞նչ է եղել:

— Մենք խոսում էինք Վանդեայի մասին,— ասաց Ռոբեսպիերը:

— Վանդեայի՞,— կրկնեց Սիմուրդենը և՛ ավելացրեց. — այո, դա մեծ սպառնալիք է: Եթե հեղափոխությունը կործանվի, դա Վանդեայի պատճառով կլինի: Վանդեան ավելի զարհուրելի է, քան տալը Գերմանիա: Հարկավոր է սպանել Վանդեային, որպեսզի Ֆրանսիան կարողանա ապրել:

Այս մի քանի խոսքը կաշառեց Ռոբեսպիերին: Այնուամենայնիվ, նա հարցրեց.

— Դուք, կարծեմ, նախկին քահանա՞ եք:

Սիմուրդենը պատասխանեց.

— Այո, քաղաքացի:

— Դե ի՞նչ կա որ,— վրա բերեց Դանտոնը:— Քանի որ քահանան մեր կողմն է, աշխարհականից ավելի արժեքավոր է: Հեղափոխության օրերին քահանաները վերածովե-

լով աշխարհական են դառնում, ինչպես եկեղեցիների զանգերը դառնում են դրամ և թնդանոթներ:

— Վերադառնանք Վանդեային,— ասաց Ռոբեսպիերը:

— Դե ասացեք, ի՞նչ է եղել,— հարցրեց Սիմուրդենը:—

Ի՞նչ է կատարվում այնտեղ, այդ Վանդեայում:

Ռոբեսպիերը պատասխանեց.

— Վանդեան գտել է իր առաջնորդը: Նա սոսկալի է դառնում:

— Իսկ ո՞վ է այդ առաջնորդը, քաղաքացի Ռոբեսպիեր:

— Մի ոմն Լանտենակ, մախկին մարկիզ, որն իրեն հորջորջում է բրետոնյան իշխան:

Սիմուրդենն աշխուժացավ:

— Ես նրան ճանաչում եմ,— ասաց նա:— Ես քահանա եմ եղել նրա ավանում:— Ապա մի պահ մտածելուց հետո մտախոհ ասաց.— Այո, նա պետք է որ սոսկալի լինի:

— Նա իրոք զարհուրելի է,— ասաց Ռոբեսպիերը:— Նա հրկիզում է գյուղերը, կոտորում է վիրավորներին ու գեղիների, գնդակահարում է կանանց:

— Կանա՞նց:

— Այո: Նրա հրամանով ուրիշների հետ միասին գրգռակահարվել է մի կին, որ երեք երեխայի մայր է եղել: Թե ինչ են եղել երեխաները, հայտնի չէ: Բացի այդ, նա իսկական գորապետ է, լավ գիտե ուղղակի գործը:

— Այդ ճիշտ է,— ասաց Սիմուրդենը:— Դեռ Համնովերյան պատերազմի ժամանակ զինվորները նրա մասին ասում էին. «Վերկում Ռիշելյոն է, ներքևում՝ Լանտենակը»: Իսկական գլխավոր հրամանատար էր Լանտենակը:

Ռոբեսպիերը շարունակեց.

— Դե ահա, քաղաքացի Սիմուրդեն, այդ մարդը Վանդեայում է:

— Վաղո՞ւց է:

— Երեք շաբաթ:

— Հարկավոր է նրան օրենքից դուրս հայտարարել:

— Արված է:

— Հարկավոր է գնահատել նրա գլուխը:

— Արված է:

— Դրամական պարզև խոստանալ նրան, ով կբռնի  
Լանտենակին:

— Արված է:

— Ոչ թե թղթադրամով, այլ՝ ոսկով:

— Արված է:

— Հարկավոր է նրան կառափնարան ուղարկել:

— Կարվի:

— Իսկ ո՞վ կանի այդ:

— Դուք:

— Ե՛ս:

— Այո: Հասարակական փրկության կոմիտեն ձեզ պատ-  
վիրակ կուղարկի Վանդեա՝ ամենալայն լիազորություններով:

— Ես համաձայն եմ,— ասաց Սիմուրդենը:

Ռոբեսպիերը շուտ էր կարողանում մարդիկ ընտրել. դա  
պետական մարդու առանձնահատկությունն է: Նա իր առջև  
ընկած թղթերի կույտից հանեց մի թերթ, որի վերևը տպա-  
գիր տառերով գրված էր. «Ֆրանսիական հանրապետու-  
թյուն, միասնական և անբաժանելի: Հասարակական փրկու-  
թյան կոմիտե»:

Սիմուրդենը շարունակեց.

— Այո, ես ընդունում եմ այդ նշանակումը: Փոթորիկը  
փոթորկի դեմ: Լանտենակը դաժան է, ես էլ եմ դաժան:  
Ես այդ մարդուն մահու և կենաց պատերազմ եմ հայտա-  
րարում: Ես հանրապետությունը կազատեմ նրանից... Ես  
ո՞ւմ մոտ եմ պատվիրակ լինելու:

Ռոբեսպիերը պատասխանեց.

— Լանտենակի դեմ ուղղված էքսպեդիցիոն ջոկատի  
հրամանատարի մոտ: Միայն պետք է ձեզ նախազգուշացնեմ,  
որ նա արիստոկրատ է:

Դանտոնը վրա բերեց.

— Դե ի՞նչ կա որ: Նորից պայմանական բան: Իրոք որ  
ծիծաղելի է: Արիստոկրատ: Ի՞նչ վատ բան կա: Արիստո-  
կրատների մասին էլ կարելի է մույնն ասել, ինչ քահանա-  
ների մասին. քանի որ նա մեր կողմն է, ուրեմն լավ է: Ազ-  
նըվականությունը նախապաշարմունք է, և չպետք է չա-  
փազանցել նրա նշանակությունը ոչ մեկ, ոչ մյուս կողմը:

— Քաղաքացի Դանտոն, քաղաքացի Ռոբեսպիեր,—

Քննեց Սիմուրդենի լուրջ ձայնը, — դուք գուցեև իրավացի եք, որ վստահում եք արիստոկրատներից, բայց ժողովուրդը նրանց չի հավատում, և նա ևս իրավացի է: Երբ քահանային հանձնարարում են հսկել ազնվականին, նրա վրա կրկնակի պատասխանատվություն է ընկնում, և այդպիսի դեպքերում քահանան պետք է անհողդողդ լինի:

— Անտարակույս, — ասաց Ռոբեսպիերը:

— Եվ անողոք, — ավելացրեց Սիմուրդենը:

Ռոբեսպիերն ասաց.

— Միանգամայն ճիշտ է, քաղաքացի Սիմուրդեն: Դուք գործ եք ունենալու մի երիտասարդի հետ, և որովհետև դուք կրկնակի չափով ավելի տարիքավոր եք նրանից, հեշտությամբ կարող եք նրան ենթարկել ձեր ազդեցությանը: Հարկավոր է ուղղություն տալ նրան, միաժամանակ հաշվի առնելով նրան: Երևում է՝ նա շնորհալի սպա է. այս եմ վկայում բոլոր տեղեկությունները: Նրա ջոկատը այն գործամասի կազմի մեջ է մտնում, որը Հոննոսյան բանակից արշավի է ուղարկվել Վանդեա: Նա վերջերս է ժամանել սահմանագլխից և արդեն կարողացել է աչքի ընկնել իր խելքի ու քաջության շնորհիվ: Նա իր գործամասի հիանալի հրամանատարն է: Ահա արդեն երկու շաբաթ է, ինչ նա շունչ քաշելու ժամանակ չի տալիս ծերունի Լանտենակին, ճնշում ու քշում է իր առաջը գցած: Վերջ ի վերջո, նա նրան ասիին կսեղմի և ծովը կնետի: Լանտենակը հմուտ ռազմիկի անվիճելի փորձն ու խորամանկությունն ունի, իսկ նա՝ երիտասարդ հրամանատարի խիզախությունը:

— Երևում է՝ այդ երիտասարդն, իրոք, մեծ արժանիքներ ունի, — նկատեց Սիմուրդենը:

— Այո, բայց նա մի թերություն էլ ունի:

Այս դիտողությունը Մարատն արեց:

— Ի՞նչ թերություն, — հարցրեց Սիմուրդենը:

— Բարի սիրտ, — պատասխանեց Մարատը և շարունակեց. — Նա կարծր է մարտի ժամանակ և փափկասիրտ է մարտից հետո: Նա շատ զիջողամիտ է: Հակված է ներելու և խնայելու: Նա հովանավորում է կուսակրոն կանանց, փրկում է արիստոկրատների կանանց ու աղջիկներին, ազատ է արձակում գերիներին ու տերտերներին:

— Դա մեծ սխալ է,— շնչաց Սիմուրդենը:  
— Հանցագործությո՛ւն,— ուղղեց Մարատը:  
— Երբեմն,— նկատեց Դանտոնը:  
— Հաճախ,— ասաց Ռոբեսպիերը:  
— Համարյա միշտ,— նորից վրա բերեց Մարատը:  
— Երբ գործ ունես հայրենիքի թշնամիների հետ՝  
միշտ,— ասաց Սիմուրդենը:

Մարատը դարձավ նրան.

— Ինչպե՞ս կվարվեիր դու, քաղաքացի Սիմուրդեն, հան-  
րապետական առաջնորդի հետ, որն ազատ կարձակեր ոռ-  
յալխտների առաջնորդին:

— Ես կհրամայեի գնդակահարել նրան:

— Կամ ուղարկել կառափնարան,— ավելացրեց Մա-  
րատը:

— Մեկը կամ մյուսը, որը կուզի,— ասաց Սիմուրդենը:  
Դանտոնը ծիծաղեց.

— Իմ կարծիքով մեկն էլ, մյուսն էլ միանման լավ են:

— Հանգիստ եղիր,— մոնչաց Մարատը,— դու այն էլ  
կատանաս, մյուսն էլ:— Եվ նրա հայացքը Դանտոնից պոկ-  
վելով դարձավ Սիմուրդենին.— Ուրեմն, քաղաքացի Սի-  
մուրդեն, եթե հանրապետական առաջնորդը վատ քայլ  
աներ, դու կհրամայեիր գլխատե՞լ նրան:

— Քսանչորս ժամում:

— Այդ դեպքում միանում եմ Ռոբեսպիերի կարծիքին,—  
ասաց Մարատը:— Հասարակական փրկության կոմիտեն  
պետք է քաղաքացի Սիմուրդենին ուղարկի որպես արտա-  
կարգ լիազորություններով օժտված կոմիսար՝ առափնյա  
ափի էքսպեդիցիոն ջոկատի հրամանատարին հսկելու հա-  
մար: Ի դեպ, ինչպե՞ս են կոչում այդ հրամանատարին:

— Նա նախկին ազնվական է և արիստոկրատ,— պա-  
պատասխանեց Ռոբեսպիերը:

— Թող քահանա՞ն հսկի ազնվականին,— ասաց Դան-  
տոնը:— Ես զատ-զատ չէի վստահի ոչ ազնվականին, ոչ  
տերտերին, քայց երբ նրանք միասին են, ես նրանցից չեմ  
վախենում. նրանք իրար կլրտեսեն, և ամեն ինչ հարթ  
կգնա:

Ցասումի կնճիռն ամենևին չէր ջնջվում Սիմուրդենի ճա-

կատից, այլ ավելի էր խորանում, քայց, երևի գտնելով, որ այդ դիտողությունն ըստ էության իրավացի է, նույնիսկ չնայեց Դանտոնին:

— Առաջին իսկ ծուռ քայլի համար, որ կանի իմ հրապարակումը հանձնված հանրապետական հրամանատարը, մահապատիժ կլինի,— հնչեց նրա դաժան ձայնը:

Ռոբեսպիերն աչքը չկտրելով թղթերից՝ ասաց.

— Ահա ես գտա նրա անունը... Քաղաքացի Սիմուրդեն, երիտասարդ հրամանատարը, որի բախտը ձեզ է հանձնվում, նախկին վիկոնտ է: Նրա ազգանունն է Գոլեն:

Սիմուրդենը սփրթնեց:

— Գոլեն՝, — դուրս թռավ նրա սրտից:

Մարատի աչքից չվրիպեց Սիմուրդենի հանկարծակի գունատվելը:

— Վիկոնտ Գոլեն՝, — շփոթված կրկնեց Սիմուրդենը:

— Այո, — ասաց Ռոբեսպիերը:

— Դե, ի՞նչ կասեք, — խոսեց Մարատը՝ առանց աչքը կտրելու նրանից:

Լուրջում տիրեց: Ապա Մարատը շարունակեց.

— Քաղաքացի Սիմուրդեն, համաձայն եք արդյոք մեր նշած պայմաններով կոմիսար նշանակվել հրամանատար Գոլենի մոտ: Վճռվա՞ծ բան է:

— Վճռված է, — պատասխանեց Սիմուրդենը ավելի ու ավելի գունատվելով:

Ռոբեսպիերը վերցրեց իր առջև ընկած գրիչը, իր գեղեցիկ ձեռագրով չորս տող գրեց «Հասարակական փրկության կոմիտե» վերնագիրը կրող թղթի վրա, ինքն ստորագրեց և թուղթն ու գրիչը հանձնեց Դանտոնին: Նա ևս թուղթն ստորագրեց, իսկ նրանից հետո ստորագրեց Մարատը, որ հապաքը չէր հեռացնում մահու չափ սփրթնած Սիմուրդենից:

Ռոբեսպիերը ետ վերցրեց թուղթը, ամսաթիվը դրեց և այն հանձնեց Սիմուրդենին: Սիմուրդենը կարդաց.

## Հանրապետության II տարի

Սույնով հաստատվում է, որ Հասարակական փրկության կոմիտեն քաղաքացի Սիմուրդենին կոմիսար է նշանակում

առափնյա բանակի էքսպեդիցիոն ջոկատի պետ քաղաքացի  
Գովենի մոտ՝ անսահմանափակ լիազորություններով:

ՌՈՏԵՍՊԵՐ, ԴԱՆՏՈՆ, ՄԱՐՍԵ:

28 Ռունիսի 1793 թ.

Մինչ Սիմուրդենը կարդում էր, Մարատը հայացքը չէր  
հեռացնում նրանից, ապա, ասես ինքն իր հետ խոսելով,  
կիսաձայն մրմնջաց.

— Ամեն ինչ հարկ կլինի հաստատել Կոնվենտի դեկրե-  
տով կամ Հասարակական փրկության կոմիտեի հատուկ  
որոշումով:

Ռոբեսպիերը Սիմուրդենին հարցրեց.

— Որտե՞ղ եք ապրում դուք, քաղաքացի Սիմուրդեն:

— Սոկտրական պալատի տանը:

— Մի՞թե: Ես էլ այնտեղ եմ ապրում,— ասաց Դան-  
տոնը:— Նշանակում է հարևաններ ենք:

Ռոբեսպիերը շարունակեց.

— Ոչ մի բույս կորցնել չի կարելի: Վաղը դուք պաշ-  
տոնական թուղթ կստանաք Հասարակական փրկության  
կոմիտեի բոլոր անդամների ստորագրությամբ: Իսկ այս  
թուղթը ձեր նշանակման հաստատումը կլինի բանակին կից  
եղած դեպուտատների համար: Ձեր անձնավորությունը մեզ  
հայտնի է: Մենք ձեզ անսահմանափակ լիազորություններ  
ենք տալիս: Դուք կարող եք Գովենին գեներալության հասց-  
նել կամ ուղարկել կառավարան: Ձեր նշանակման հրա-  
մանը դուք կստանաք վաղը ժամը երեքին: Ե՞րբ կմեկնեք:

— Վաղը ժամը չորսին,— պատասխանեց Սիմուրդենը:

Սրանով էլ նրանք բաժանվեցին:

Իսկ երկու օր անց Հասարակական փրկության կոմիտեն  
բոլոր ուղղություններով կարգադրություն ուղարկեց՝ Վան-  
դեայի բոլոր քաղաքներում ու գյուղերում հրապարակել և  
խստորեն կիրառել այն դեկրետը, ըստ որի մահապատիժ  
կստանա ամեն ոք, ով կնպաստի գերի ավազակների ու  
խոռվարարների փախուստին:

Այդ դեկրետը միայն առաջին քայլն էր: Կոնվենտն ավե-  
լի առաջ գնաց: Մի քանի ամիս անց, երբ Լավալ քաղաքը  
իր դռները բաց արեց Վանդեայի փախստականների առաջ,

դեկրետ հրապարակվեց, որն ազդարարում էր, թե խոռվարարներից ասպաստան տվող ամեն մի քաղաք կավերվի:

Մյուս կողմից, դրանից էլ առաջ Բրաունշվեյգի դուքսը, որին ներշնչել էին վտարանդիները, Եվրոպայի բոլոր միապետների անունից ազդարարել էր, թե ամեն մի ֆրանսիացի, որ կրոնվի զենքը ձեռքին, կգնդակահարվի և որ եթե ֆրանսիական թագավորի գլխից գեթ մի մազ պակսի, Փարիզը կջնջվի երկրի երեսից:



Վ Ա Ն Դ Ե Ա Յ Ո Ւ Մ

Առաջին գիրք

Վ Ա Ն Դ Ե Ա

I. ԱՆՏԱՌՆԵՐԸ

Այն ժամանակներում Բրետանում յոթ ահալոր անտառ կար: Վանդեան տերտերների խոովությունն էր: Այդ ապստամբության աջակիցներն անտառներն էին: Խավարն օգնում էր խավարին:

Բրետանի. արիստոկրատներից մեկը կոչվում էր «յոթ անտառների տեր»: Դա հենց ինքը վիկոնտ դը Ֆոնտենեն էր, Բրետանի իշխանը: Բրետանի անտառների պատմությունը, սկսած 1792-ից մինչև 1800 թվականը, կարող էր մի առանձին գիրք կազմել: Դա որպես լեգենդ միահյուսվում է պատմության հետ, Վանդեայի ծավալումն ավանդությանի հետ:

Պատմությունն իր ճշմարտությունն ունի, լեգենդը՝ իր:

Վանդեայի ապստամբությունը լրիվ բացատրություն կարող է ստանալ միայն այն դեպքում, երբ պատմությունը կլրացվի լեգենդով: Պատմությունը հարկավոր է ամբողջի համար, լեգենդը՝ մանրամասնությունների:

Եվ, պարզ ասենք. Վանդեան արժանի է այդպիսի աշխատանքի:

Վանդեայի ապստամբությունը հասկանալու համար հարկավոր է պարզ պատկերացնել այդ անհաշտ հակասությունը. մի կողմից ֆրանսիական հեղափոխությունը, մյուս կողմից՝ բրետոնյան գեղջուկը: Քաղաքակրթության ահեղ արշավի կողքին, որին բոլոր կողմերից շրջապատում են թըշնամիները, սպառնալով ոչնչացնել նրա բոլոր բարիքները,

առաջադիմության այդ սրընթաց, կատաղի ճնշման կողքին, որն իր հետ անսահման բարեկամություններ էր բերում, իրենց հավասարը չունեցող այդ վեհ իրադարձությունների կողքին գտնվում էր յուրահատուկ հանդիսավոր լրջությամբ վայրենին, երկարամազ, պարզահայաց մարդը, որը սնվում էր կաթով ու շագանակով, գամված էր իր հողին, իր տանը, իր ծղոտե տանիքին, շրջակայքի բոլոր գյուղերը տարբերում էր ըստ զանգերի հնչյունների, ջուրն օգտագործում էր միայն խմելու համար։ Մետաքսաթելով ասեղնագործված կաշվե բաճկոնը հագին այդ մարդը իր շորը դաջում է ինչպես իր նախահայրեր կելտերն էին դաջում իրենց երեսը, և մեծարում է իր դահիճ-տիրոջը։ Նա կարողանում է միայն իր եզները քշել, գերանդին սրել, մի կերպ հող մշակել, կարմրահատի բլիթներ թխել։ Նա ամենից առաջ հարգում է իր արորը, ապա՝ իր տատին, նա հավատում է և՛ տիրամորը, և՛ քարի ու չար կախարդներին։ Նա ծուկն է չոքում և՛ եկեղեցու սեղանի, և՛ ավագների մեջ ցցված խորհրդավոր քարձրո քարի առաջ։ Նա հողագործ է, ձկնորս, մաքսանենգ, որ սիրում է իր թագավորին, իր տերերին, իր քահանաներին, իր ոջիւները, ընդունակ է ժամերով մտասույզ կանգնելու ամառի ավագոտ ափին և ակամջ դնելու ծովի աղմուկին։ Կողք կողքի դրեք այդ մարդուն և ֆրանսիական հեղափոխությունը և ձեզ հարց տվեք. կարո՞ղ է արդյոք այս կույրը հասկանալ հեղափոխության փայլը։

## II. ՄԱՐԴԻԿ

Գյուղացին երկու հենակետ ունի՝ դաշտը, որ սնուցանում է նրան և անտառը, որ թաքցնում է նրան։

Դյուրին չէ պատկերացնել, թե ինչ էին բրետոնական անտառները. դրանք բնակեցված քաղաքներ էին։ Որս, ամաչություն, գերեզմանային լուծություն՝ այսպիսին էին թվում անտառների ու փշաթփերի անանջանելի թավուտները։ Բայց եթե անակնկալ, կայծակի արագությամբ հեռացվեին ծառերը, այդ կիսախավարի մեջ անսպասելիորեն կերևաին վխտացող մարդիկ, ինչպես մրջյունները մրջնանոցում։

Բրետոնացիների ապաստարանները դրսից քարե սալերով ու ջախով ծածկված նեղլիկ, կտր հորեր էին, որոնք գետնի տակ ձագարածն լայնանալով սկզբում իջնում էին ուղղահայաց, ապա հորիզոնական անցքերով այս ու այն կողմ թեքվելով դեմ էին անում մթին անձալների:

Միդոնյան անտառի ամենախուլ բացատներից մեկը, որ ամբողջովին փորփրված էր ստորերկրյա անցքերով, որոնցով ելումուտ էին անում խորհրդավոր մարդկային էակներ, կոչվում էր «Մեծ քաղաք»: Մի ուրիշ բացատ, որ արտաքուստ մույնքան անմարդաբնակ էր և գետնի տակ մույնքան խիտ բնակչություն ուներ, «Արքայական հրապարակ» անունն էր կրում:

Այդ ստորերկրյա կյանքը Բրետանում սկսվել էր անհիշելի ժամանակներից ի վեր: Այստեղ մարդը միշտ ստիպված է եղել փախչել իր նմաններից: Դրա համար է, որ այստեղի անտառներում հանդիպում են այնքան շատ մարդկային որջեր, որոնք փորված են ծառերի բների տակ:

XV դարում սենյորների սարքած կոտորածները, XVI և XVII դարերում կրոնական պատերազմները, XVIII դարում՝ երեսուն հազար շները, որոնց վարժեցրել էին մարդ որսալու համար՝ ահա այն պատճառները, որոնք ժողովրդին ստիպել էին թաքնվել աչքից: Նախնադարյան մարդիկ փախչելով կելտերից, կելտերը փախչելով հռոմեացիներից, բրետոնացիները փախչելով մորմաններից, հուգենոտները փախչելով կաթոլիկներից, մաքսանենգները փախչելով աղի պրիստավներից՝ բոլորը հերթով թաքնվում էին սկզբում անտառներում, ապա՝ գետնի տակ: Այսպես են վարվում գազանները: Ահա թե բռնապետությունը որտեղ է հասցնում ժողովուրդներին: Երկու հազար տարվա ընթացքում բռնակալության բոլոր տեսակները՝ նվաճումները, ֆեոդալիզմը, ֆանատիկոսությունը, պետական գանձարանը հալածել են թշվառ, սարսափահար Բրետանին, ինչպես որսորդը գազանին, և այդ անողորմ հալածանքի մի ձևը դադարեցրել են լոկ նրա համար, որ սկսեն մյուս ձևը: Եվ մարդիկ թաքնվում էին երկրի ընդերքում:

Այդ մարդկանց հոգում միշտ էլ թաքնված է եղել սարսափը, որը հասել է ցասումի, և անտառներում արդեն որ-

ջեր Լին պատրաստված նրանց համար, երբ հռչակվեց ֆրանսիական հանրապետությունը: Բրետանը ոտքի կանգնեց բռնի ազատագրության դեմ, ինչպես իրենց լծի դեմ: Ստրուկներին յուրահատուկ սխալ:

### III. ՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՄԵՂՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Բրետոնական եղերական անտառները նորից սկսեցին խաղալ խոտվության կամակատարների և օժանդակիչների իրենց հին դերը. նրանք օգնության հասան Վանդեայի ապստամբությանը, ինչպես եղել էր և հնում:

Այդ անտառների տակի հողը հիշեցնում էր աստղաձև կորալիոն, այնքան էր նա փորփրված բոլոր ուղղություններով՝ ստորերկրյա անցքերով որջերի՝ ու միջանցքների անվերջանալի, անտեսանելի ցանցով: Յուրաքանչյուր այդպիսի որջում հինգ-վեց մարդ էր ապրում: Այդ ստորերկրյա բնակարանների գլխավոր անհարմարությունն այն էր, որ նրանց մեջ դժվար էր շնչել:

Ծառ մեծ ու գորեղ էր այդ գյուղացիական խոտվության կազմակերպությունը: Պերտրյան անտառում մարդկային ձայն չէր լսվում, մարդու ոչ մի հետք չէր երևում, այնինչ այնտեղ թաքնված էր վեցհազարանոց մի ջոկատ: Մելակյան անտառում, որտեղ թվում էր, թե ոչ մի շունչ-կենդանի չկա, ութ հազար զինված մարդ էր հաշվվում: Մինչդեռ այդ երկու անտառներն էլ բրետոնական խոշոր անտառների թվին են պատկանում:

Թշնամու համար սոսկալի էր ոտք դնել այդ անտառների խորքերը: Նեղգավոր թավուտները, որոնց ստորերկրյա լաբիրինթոսները լիքն էին այնտեղ թաքնված մարտիկներով, նմանվում էին վիթխարի անտեսանելի սպունգի, որից հեղափոխության վիթխարի՝ ոտքի ճնշման տակ շատրվանի նման քաղաքացիական պատերազմն էր ժայթքում:

Անտեսանելի գումարտակները դարանակալում էին թըշնամուն: Հանրապետական բանակների ոտքերի տակ անակրճկալ գետնից բուսնելով՝ լույս էին ընկնում ինչ-որ բանակներ, որոնք դուրս էին թռչում ամբողջ հրուսկալամբերով և

մի ակնթարթում էլ անհետանում: Դա մի հեղեղ էր, որ հանկարծակի փոշի էր դառնում. հսկաներ էին, որոնք փոքրահալու ընդունակություն ունեին, հսկաներ էին կովի մեջ և թզուկներ, երբ հարկ էր լինում թաքնվել, հովազներ էին, որոնք յուրացրել էին խլուրդի սովորություններ:

Բացի խոշոր անտառներից կաշին և մանր անտառներ ու թփուտներ: Ինչպես քաղաքների շուրջը գյուղեր են գոյանում, այնպես էլ խոշոր անտառների շուրջը աճում են մանր թփուտներ: Անտառներն իրար էին միանում մանր անտառի ամենուրեք ցրված լաբիրինթոսներով: Հնամենի դռնակները, որոնք միաժամանակ ամրոցներ էին, ամրացված ճամբարներ դարձած ավանները, ցանկապատած բակերով ագարակները, որոնք որոգայթի դեր էին խաղում, խանդակներով շրջապատված դաստակերտները՝ սրանք բոլորն օղակներն էին այն ցանցի, որի մեջ խճճվում էին հանրապետական գործերը:

Բոլորը միասին, այս բոլոր մանր անտառները թփուտներով ու ավաններով կրում էր «Պուրակ» ընդհանուր անունը: Դրա կազմի մեջ էր մտնում նաև Սողրեի անտառը, որին մենք ծանոթացանք սույն գրքի առաջին գլխում, հենց այն պահին, երբ նրան խուզարկում էր փարիզյան գումարտակը:

Այս անտառներից ու անտառակներից մի քանիսում կաշին ոչ միայն առաջնորդի որջի շուրջը խմբված ստորերկրյա որոգայթներ, այլև ծառերի տակ ծվարած ցածրիկ խրճիթների իսկական ավաններ: Երբեմն դրանք այնքան շատ էին լինում, որ լցնում էին ամբողջ անտառը: Հաճախ նրանց տեղը մատնում էր ծխնելույզներից դուրս եկող ծուխը:

Կանաչ ապրում էին խրճիթներում, իսկ տղամարդիկ՝ գետնահարկերում: Պատերազմի ժամանակ նրանք օգտվում էին թե՛ բնական անձավներից և թե՛ կելտերի հնադարյան ստորերկրյա անցքերից: Կանաչ ուտելիք էին տանում գետնի տակ թաքնված տղամարդկանց: Պատահում էր, որ գետնի տակ մոռացված մարդիկ սովամահ էին լինում: Դրանք այն մարդիկ էին, ովքեր չէին կարողանում բաց անել իրենց հոր-բնակարանի կափարիչը: Սովորաբար ջախտվ ու մամուռով քողարկված այդ կափարիչները շինված էին լի-

նում այնքան հմտորեն, որ դրսից խոտերի տակ աննկատելի էին լինում, բայց ներսից շատ հեշտությամբ էին բացվում ու փակվում: Հողային աշխատանքները կատարվում էին մեծ զգուշությամբ. փորված հողը լցնում էին մերձակա լճակներից որևէ մեկը: Ներսում պատերին ու հատակին ձարխոտ ու մամուռ էին փռում: Այդպիսի ստորերկրյա ապաստանները կոչվում էին «օթյակներ»: Այնտեղ կարելի էր լավ տեղավորվել, բայց, իհարկե, մարդ ստիպված էր ապրել առանց լույսի, առանց կրակի, առանց օդի, հաճախ և՛ առանց սնունդի:

Առանց հատուկ զգուշության գետնի տակից դուրս գալը վտանգավոր էր. կարելի էր ընկնել առաջ գնացող հանրապետականների ջոկատի ոտքերի տակ: Զարհուրելի էին այդ անտառները, դրանք կրկնակի որոգայթներ էին: Կապույտները վախենում էին նրանց մեջ քայլել, սպիտակները չէին համարձակվում քիթները դուրս հանել նրանցից:

#### IV. ԿՅՍՆՔԸ ԳԵՏՆԻ ՏԱԿ

Գազանների այդ որջերում մտած մարդիկ ձանձրանում էին: Երբեմն, չնայած վտանգին, նրանք գիշերով դուրս էին սողում և գնում մոտակա բացատը՝ պարելու: Կամ թե աղոթում էին, որպեսզի ժամանակն աննկատելի անցնի: Ժամ Շուանը ամբողջ օրերով իր զորքերին ստիպում էր տերողորմյա քաշել:

Գարնանը, երբ հնձի տոնը մոտենում էր, համարյա անհնարին էր լինում գյուղացիներին գետնի տակ պահել: Ոմանք իրենց առանձնահատուկ ճաշակն ունեին: Մի վանդեացու մասին ասում էին, թե նա կնոջ շոր էր հագնում և այդպես գնում թատրոն, ապա վերադառնում էր իր որջը:

Պատահում էր, որ մարդիկ այդպիսի կյանքին չդիմանալով ուղղակի մեռնելու էին գնում՝ գերեզմանը գերադասելով բանտից:

Երբեմն գետնահարկերի տանիքները բարձրանում էին. այնտեղ մտածներն ականջ էին դնում, թե որևէ տեղ չէ՞ն կրակում, և կրակոցների ձայներով հետևում էին կովի ըն-

թացքին: Նրանք գիտեին, որ հանրապետականները կրակում են համազարկերով, իսկ ոռյալիստները՝ հատ-հատ: Երբ համազարկերը հանկարծ դադարում էին, այդ նշանակում էր, որ ոռյալիստներին ջախջախել են: Երբ հատ-հատ կրակոցները հեռանալով շարունակվում էին, դա նշանակում էր, որ ոռյալիստները հաղթում են: Սպիտակները միշտ հետապնդում էին ջախջախված հակառակորդին, կապույտները՝ երբեք, որովհետև երկիրը նրանց դեմ էր:

Այդ ստորերկրյա ռազմիկները զարմանալիորեն լավատեղյակ էին ամեն ինչին: Դժվար է հավատալ, թե ինչպիսի արագությամբ էին նրանք կապվում իրար հետ և որքան գաղտնի էին պահում իրենց հարաբերությունները: Նրանք ավերել էին բոլոր կամուրջները, քանդել էին բոլոր սալակները, բայց և այնպես միջոց էին գտնում ամեն ինչի մասին իրար տեղեկություններ տալու և զգուշացնելու: Ամբողջ երկրում, անտառից անտառ, գյուղից գյուղ, ագարակից ագարակ, խրճիթից խրճիթ, թփից թուփ իրար փոխարինող հետախույզներ էին նշանակված:

Բուր, անտարբեր դեմքով մի գյուղացի, որը ոչ մի երկյուղ չէր ներշնչում, շտապ գրություններ էր փոխադրում իր ձեռնափայտի մեջ:

Սահմանադիր ժողովի նախկին անդամ Բոլետիդուն այդպիսի պատվիրակներին նոր ձևի հանրապետական անձնագրեր էր մատակարարում, որոնց մեջ մնում էր միայն անունը գրել: Այդ դավաճանն ամբողջ կապոցներով այդպիսի անձնագրեր ուներ, որոնցով մարդիկ ազատ շրջում էին ամբողջ Բրետանում: Նրանց հետապնդելն անհնարին էր: Գաղտնիքները, որ հայտնի էին չորս հազարից ավելի մարդու, պահպանվում էին սրբությամբ:

Թվում էր, թե ապստամբած երկրամասը մեկ ընդհանուր նյարդային համակարգություն ունի, այնպես որ Բրետանի որևէ կետում տեղի ունեցած գետնի ցնցումը հաղորդվում էր նրա ամբողջ տարածության վրա: Տեղեկությունները մի ակնթարթում թոչում էին երկրամասի մի ծայրից մյուսը: Կարելի էր կարծել, թե դա արվում է թոչունների օգնությամբ: Հանրապետական գեներալներից մեկը գրել է. «Կարծես թե նրանք հեռագիր ունեն»:

Ամեն մի համայնք իր առաջնորդն ունէր: Իմ հայրը մասնակցել է այդ պատերազմին: Նրա մասին ես կարող եմ խոսել ըստ ականատեսի պատմածների:

## V. ՆՐԱՆՑ ԿՅԱՆՔԸ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Շատերը զինված էին միայն միզակներով: Ասենք՝ շատ կային նաև որսորդական լավ կարաքիններ: Չկային ավելի հմուտ հրաձիգներ, քան բրետոնացի որսագողերն ու մաքսանեցուցիչները: Դրանք իսկական ռազմիկներ էին՝ վայրագ ու աներկյուղ: Երեք հարյուր հազար աշխարհագորային զորահավաքի ենթարկվելու դեկրետը ահազանգ առաջացրեց վեց հարյուր գյուղերում: Հրդեհը բռնկեց միանգամից բոլոր կողմերում: Որոտի առաջին դղրոյունները հնչեցին դեռ 1792 թ. հուլիսի 8-ին, Կերբադերի ամալուտում: Մահապատժի սպառնալիքով ռոյալիստներն ստիպում էին ռոտքի ելնել բոլորին, ով ընդունակ էր գեներ կրելու:

Հրոսակախմբեր ռոտքի հանելու համար մեծ ջանք չէր պահանջվում: Հանրապետությանը երդում տված որևէ քահանայի հաղորդատուի մեջ սև կատու էին դնում, որը պատարագի ժամանակ դուրս էր ցատկում հանկարծ: «Սատանան, սատանան»,— գոռում էին գյուղացիները, և ամբողջ շրջաններ ռոտքի էին կանգնում մի մարդու նման: Խոստովանարանները հրդեհի օջախներ էին դառնում:

Յուրաքանչյուր խոռվարար ձեռքին ունենում էր մոտ տասնհինգ ռոնաչափ երկարությամբ մի ձող, որ նա օգտագործում էր ու՛ կռվում, կապույտների վրա հարձակվելու համար, և՛ փախուստի ժամանակ՝ փոսերի վրայով ցատկելու համար: Եթե կռվի դաշտում, թեկուզ մարտի ամենաթեժ պահին կամ գրոհի ժամանակ գյուղացիներին որևէ խաչ կամ մատուռ էր հանդիպում, բոլորը ծունկ էին չոքում և գնդակների տարափի տակ աղոթում, և միայն աղոթքն ավարտելուց հետո ողջ մնացածները ռոտքի էին կանգնում ու հարձակվում թշնամու վրա: Նրանք իրենց հրացանները լցնում էին հենց վազելու ժամանակ՝ այդ գործում ցուցաբերելով մեծ հմտություն:



Նրանց կարելի էր հավատացնել՝ ամեն բանի: Որևէ մի քահանա նրանց ցույց էր տալիս մի ուրիշ քահանայի, որի պարանոցին կարմիր շրջագիծ էր լինում (դրա համար նա նախապես իր վզին թել կապած էր լինում) և ասում էր. «Ահա, տեսեք, կառափնարանում մահապատիժ ստացած մարդը հարություն է առել»: Եվ նրանք հավատում էին: Հըսկաներ էին, բայց, ավա՜ղ, որպիսի՜ խավար:

Երբեմն էլ նրանք ասպետություն էին անում: Այսպես, պատիվներով հողին հանձնեցին հանրապետական դրոշակակիր Ֆեսկին, որն ընկավ թերի հարվածներով, ձեռքից բաց չթողնելով իր դրոշը: Սկզբում նրանք թնդանոթներից վախենում էին, բայց հետո մահակներով քաջաբար հարձակվում էին նրանց վրա և պատահում էր, որ խլում էլ էին: Նրանց առաջին ավարը մի գեղեցիկ բրոնզե թնդանոթ էր, որին նրանք «Քարոզիչ» անունը տվին: Հետո գրավեցին երկրորդ թնդանոթը, որ մնացել էր դեռ կրոնական պատերազմների ժամանակներից և վրան փորագրված էր սուրբ կույսի նկարը: Այս թնդանոթը նրանք կոչեցին «Մարի-Աննա»: Երբ Ֆոնտենեից նրանց դուրս քշեցին, «Մարի-Աննա» էլ խլեցին նրանցից, բայց նրա շուրջը աներեր կանգնած գյուղացիներից վեց հարյուր հոգի ընկավ: Հետո նրանք նորից Ֆոնտենեն գրավեցին, նորից «Մարի-Աննան» խլեցին և իրենց ճամբարը տարան շուշանակի դրոշի ներքո, ամբողջովին զարդարված ծաղիկներով, ճանապարհին հանդիպած բոլոր կանանց ստիպելով համբուրել նրան: Բայց երկու, իսկ հետո և չորս թնդանոթը քիչ էր: Վանդեայի երկու առաջնորդ գերաններից թնդանոթներ չիմեցին, հրետանավորների փոխարեն զինվորների խրտվիլակներ շարեցին նրանց կողքին և այդ «հրետանու» օգնությամբ, որի վրա իրենք էլ սրտանց ծիծաղում էին, կապույտներին ստիպեցին նահանջել: Այդ նրանց լավագույն ժամանակն էր, հաջողությունների ժամանակը: Հետագայում նրանք փախուստի ժամանակ մարտի դաշտում թողին անգլիական դրոշմով երեսուներկու հրանոթ: Այդ ժամանակ Անգլիան փող, զենք էր տալիս ֆրանսիական իշխաններին: «Կեցցե՛ն անգլիացիները» — այս էր խոովարարների կոչը:

Թշնամու քաղաքները գրավելիս գործն առանց կողո-

պուտի չէր վերջանում: Աստվածապաշտ գյուղացիները գողեր էին դարձել: Վանդեացիները կողոպտեցին Շուեն, ավերեցին Ծալանը: Գրանվիլում անհաջողություն կրելով՝ նրանք կործանեցին Վիլ-Դյուն: Կապույտներին հարած գյուղացիներին անվանում էին «յակոբինյանների սպասավորներ» և բնաջնջում էին նրանց մի առանձին դաժանությամբ: Կոիվը սիրում էին որպես զինվորներ և կոտորածը՝ որպես ավազակներ: Նրանց բավականություն էր պատճառում «հաստափորներին», այսինքն՝ քաղաքների բուրժուաներին գնդակահարելը: Ֆոնտենեում նրանց քահանան թրի մի հարվածով գլորեց մի ծերունու: Սեն-Ժերմեն-սյուր-Իլում նրանց պարագլուխներից մեկը, ինքն ազնվական, հրացանով գնդակահարեց գյուղական համայնքի դատախազին և նրա ժամացույցն իրեն վերցրեց: Մաշկուլում հանրապետականների բնաջնջում էին սիստեմատիկաբար, օրական երեսուն մարդ: Այսպես շարունակվեց ամբողջ հինգ շաբաթ: Երեսուն մարդուց բաղկացած ամեն մի աշդախի շղթա կոչվում էր «Համրիչ»: Նրանց կանգնեցնում էին մեքենաները դարձրած դեպի նախօրոք փորված երկար փոսը և գրնդակահարում էին: Գնդակահարվածները փոսն էին ընկնում երբեմն դեռ ողջ-ողջ, բայց նրանց էլ էին թաղում: Մի հանրապետականի, որը շրջանի նախագահ էր, երկու ձեռքի թաթերն էլ սղոցելով կտրեցին: Գերի հանրապետականների ձեռքերին հագցնում էին շղթաներ, որոնք սուր եզրեր էին ունենում: Նրանց տասնյակներով սպանում էին քաղաքային հրապարակներում, որսորդական եղջրափողերի հնչյունների տակ: Վանդեայի առաջնորդ Ծարետը՝ հրկիզեց Պորնիկ քաղաքն իր բնակիչներով: Ծիշտ է, որ հանրապետական Կառլեն նույնպես այդ ժամանակ անողորք էր: Սպիտակ տեղորին կապույտները պատասխանում էին տեղորով:

Վանդեայի բանակը հաշվվում էր հարյուր հիսուն չորս դիվիզիա: Այդ զորքերը կանոնավոր պաշարում էին հա-

1 Ծարետ դը լա Կոնտրի-Ֆրանսուա — քրեառնյան մեծատոհմիկ ազնվական: 1793 թվականից Ստորին Վանդեայում հակահեղափոխության գլուխ էր կանգնած: Որպես դավաճան մահապատժի ենթարկվեց 1796 թ. մարտի 29-ին:

կառակորդին: Մեկ օրում նրանք կարողացան հանրապետականների տասնչորս ճամբար ավերել:

Հրացանի փամփուշտը այդ մարդկանց համար ոսկուց էլ թանկ էր: Բայց երբ իրենց գյուղի զանգակատունը չէր երեւում, այդ մարդիկ լաց էին լինում երեխայի պես: Նրանք կովի դաշտից փախչում էին առանց ամաչելու: Այդպիսի դեպքերում նրանց առաջնորդները գոռում էին՝ «Կոշիկներից նետեցեք, բայց հրացանների լավ պահեցեք»: Երբ իրենց արկերը պակասում էին, նրանք աղոթք էին անում և գնում հանրապետականների հրետանու արկերի արկղերը կողոպտելու: Հետագայում վանդեացիները վառող ստանալու համար դիմում էին անգլիացիներին: Նրանք իրենց վիրավորներին թաքցնում էին բարձր արտերի կամ ձարխտերի մեջ, իսկ երբ կոփվր դադարում էր, գալիս էին նրանց տանելու: Ոչ մի զինվորական տարագ չունեին: Ծառերը ցնցոտիների մեջ էին: Բոլորը, և՛ գյուղացիները, և՛ ազնվականները, հագնում էին ինչ պատահեր: Բոլորը սպիտակ գոտի ունեին և ժապավենով զարդարված սպիտակ շարֆ:

Զորապետները հաճախ նույնքան անկիրթ էին, որքան զինվորները: Առաջնորդներն իրար ատում էին: Դաշտավայրի առաջնորդները գոչում էին. «Կորչե՛ն լեռնականների առաջնորդները»: Հեծելազոր քիչ ունեին, և դժվար էր կազմակերպել: Մարդն ամենայն հոժարությամբ տալիս էր իր որդիներին, բայց եթե ձին էին խնդրում, անմատչելի էր դառնում: Զողեր, եղաններ, գերանդիներ, հին ու նոր հրացաններ, որսորդական դանակներ, շամփուրներ, երկաթե ծայրոցով կամ գլխին մեխեր խփած մահակներ՝ ահա՛ նրանք էին նրանց զենքերը: Ոմանք իրենց վզին մարդու ոսկորներից շինված խաչ էին կրում: Նրանք հարձակվում էին բարձրագույն աղաղակներով, անակնկալ դուրս թոչելով ամեն տեղից՝ անտառից, բլուրների ետևից, խանդակներից, շրջապատում էին հակառակորդին, կրակոլմ, կոտորում և միանգամից փախչում զանազան կողմեր:

Հանրապետականների քաղաքներով անցնելիս նրանք առաջին հերթին արմատախիլ էին անում Ազատության ծա-

որ<sup>1</sup>, այրում էին այն և ձեռք ձեռքի տված պարում խարույկի շուրջը: Գիշերային գիշատչի վարվեցողությունն ունեին նրանք: Վանդեացիների սովորությունն էր միշտ գործել անակնկալ: Նրանք կարող էին տասնհինգ լյե անցնել բիլորովին լուռ ու մունջ, անաղմուկ, չդիպչելով ոչ մի ճյուղի, չտրորելով խոտը: Երբ իջնում էր երեկոն, առաջնորդները ժողովվում էին ռազմական խորհրդի, որպեսզի պայմանավորվեն, թե վաղը որտեղ պիտի հարձակվեն հանրապետականների պահակետների վրա, և երբ ամեն ինչի մասին պայմանավորվում էին, ամբողջ ջոկատը հրացանները լցնում էր, աղոթքներ մրմնջում, ապա կոշիկները հանում էին և բոքիկ ոտքերով մամուռի ու խոտերի վրայով քայլելով՝ իծաշար կազմած անցնում էին անտառներով, չարտասանելով ոչ մի բառ, շունչներն իրենց պահած, անշշուկ, ինչպես կատուն է խափարի մեջ հետապնդում իր որսին:

Ապստամբ Վանդեան առնվազն հինգ հարյուր հազար շունչ ուներ՝ հաշված նաև կանանց ու երեխաներին:

Նրանց օգնում էին ֆեդերալիստները: Ժիրոնդան Վանդեայի գործակիցն էր և բորբոքում էր խոռվության բոցը:

Գոյություն ունեին երկու Վանդեա՝ մեծը, որ կռվում էր անտառներում, և փոքրը, որ կռվում էր թփուտներում, նրբերանգ, որի շնորհիվ կարելի էր Ծարետին տարբերել Ժան Շուանից: Ավազակ Ծարետը պարզևատրվեց մարկիզի տիտղոսով, արքայական զորքերի գեներալ-լեյտենանտի աստիճանով և սուրբ Լյուդովիկոսի շքանշանով: Ժան Շուանը Ժան Շուան էլ մնաց:

Իսկական Վանդեան Վանդեան էր՝ իր տանը. այնտեղ նա անճանաչելի էր, անորսալի: Վանդեացին իր տանը և՛ հողագործ էր, և՛ մարքսանենգ, և՛ նախրապան, և՛ զինվոր, և՛ որսագող, և՛ ազատ հրաձիգ, և՛ խոզարած, և՛ ժամհար, և՛ խաղաղ գեղջուկ, և՛ լրտես, և՛ մարդասպան, և՛ տիրացու, և՛ անտառային գազան: Բայց Վանդեայի սահմաններից դուրս գալու փորձը անխուսափելիորեն պիտի հասցներ պարտության:

Վանդեայի ապստամբությունն անհաջողություն կրեց:

<sup>1</sup> Ազատության ծառ — այն ծառը, որ տնկում էին ի պատիվ ազատության:

Հայրենի գյուղ և հայրենիք՝ այս երկու բառերն են բնորոշում ամբողջ Վանդեայի պատերազմի էությունը: Երկու գաղափարների՝ տեղականի և ընդհանուրի թշնամանք: Գեղջուկները՝ հայրենասերների դեմ: Կաթոլիկական խուլ համայնքների զավակները՝ հայրենիքի զավակների դեմ:

## VI. ՎԱՆԴԵԱՆ ՎԵՐՋ ՏՎԵՑ ԲՐԵՏԱՆԻՆ

Բրետանը հին խոռվարար է: Հեղափոխության դեմ պայքարեր նա, թե միապետության, հանրապետության լիազոր պատգամավորների դեմ, թե դուքսերի ու պերերի, թագավորական կառավարիչների դեմ պայքարեր, թե թղթադրամների ու աղի հարկի, ոտքի էլներ նա թագավորի դեմ, թե թագավորի համար, միևնույն է, դա նույն Բրետանի պատերազմն էր՝ տեղական ոգու պատերազմը կենտրոնականի դեմ:

Համաձայն բրետոնյան զավատները կարելի է համեմատել անարտահոս լճակի հետ. այդ կանգնած ջուրը վնասահասակ հրաժարվում էր հոսել: Նրա վրայով անցնող քամին չէր թարմացնում նրան, այլ միայն պղտորում էր: Ամեն անգամ, երբ կենտրոնը՝ Փարիզը խթանում էր, լիներ դա թագավորական, թե հանրապետական իշխանությունից, ազատության համար լիներ դա, թե բռնապետության, Բրետանը դրա մեջ նորմոնդության հոտ էր առնում և ըմբոստանում: Հանգիստ թողեք մեզ: Ի՞նչ էք ուզում մեզանից: Եվ հարթության բնակիչը եղանկ էր ձեռքն առնում, անտառի բնակիչը՝ հրացանը:

Ջարհուրելի՜ խավար:

Չարագո՜ւյժ թյուրիմացություն:

Վանդեան ինքնասպանություն էր գործում բացականների համար, իրեն գոհում էր եսասիրության, իր անձնուրաց արիությունը ի սպաս էր դնում վախկոտների՝ առանց հաշվի, առանց ստրատեգիայի, առանց տակտիկայի, առանց ծրագրի, առանց պատասխանատվության, առանց գլխի: Նա ճգնում էր խավարի խուլ պատ քաշել, որպեսզի իրեն պաշտպանի լուսից: Տգիտությունը համառ, հիմար ու հիանալի դիմադրություն էր ցույց տալիս ճշմարտությանը, խելամոռու-

թյանը, իրավունքին, արդարությանը, ազատությանը: Վանդեան Ֆրանսիայի ութամյա սպառնալիքն էր: Տասնչորս ամերված դեպարտամենտներ, ամայացած դաշտեր, ոչընչացված արտեր, վառվող գյուղեր, քանդված քաղաքներ, կողոպտված բնակարաններ, սպանված կանայք ու երեխաներ, բոցավառ ջահեր ծղոտե տանիքներում, սուր՝ մարդկանց սրտում, քաղաքակրթության խրտվիլակ, անգլիացիների փրկարար փարոս՝ ահա թե ինչ էր այդ պատերազմը, հայրասպանության այդ անգիտակից փորձը:

Բայց ընդհանուր առմամբ ապացուցելով, որ անհրաժեշտ է բոլոր ուղղություններով ցրել այդ հնամենի խավարը, որ պարուրել էր Բրետանը, և բրետոնյան այդ անանցանելի թավոտի մեջ բաց թողնել լույսի բոլոր սլաքները, Վանդեան ծառայեց առաջադիմության գործին: Աղետները երբեմն հատկություն ունեն ամեն ինչ սոսկալի միջոցներով դեպի լավը շուտ տալու:

## Ե Ր Կ Ր Ո Ր Դ Գ Ի Ր Ք

### Ե Ր Ե Ք Ե Ր Ե Խ Ա

#### Ի. ԶԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

1793 թվականի ամառը, հուլիսյան մի պայծառ օր մայրամուտից հետո Բրետանի մի փոքրիկ հյուրանոցի առաջ կանգ առավ մի ձիավոր: Այդ հյուրանոցը գտնվում էր Պոնտորսոնի մուտքի մոտ, և դեռ մի քանի տարի առաջ նրա ցուցանակի վրա կարելի էր կարդալ. «Լավ օշարակ շշով՝ հենց տակառից»:

Ամբողջ ցերեկը շոգ էր եղել, բայց իրիկնադեմին քամի էր բարձրացել:

Շանապարհորդը վրան գցած ուներ մի լայն թիկնոց, որ ծածկում էր նաև նրա ձիու գավակը, գլխին լայնեզր գլխարկ էր՝ եռագույն կոկարդով: Դա մեծ համարձակություն էր

դարանների ու թփերի ետևից եկող կրակոցների այս երկրի համար, որտեղ եռագույն կոկարդները թիրախի տեղ էին ծառայում: Պարանոցին կոճկած թիկնոցի փեշերը ետ էին քաշվել և բաց արել ձեռքերը, այնպես որ կարելի էր տեսնել եռագույն գոտին և նրա մեջ խրած երկու ատրճաճակների կոթերը: Ցածուժ թիկնոցի տակից դուրս էր եկել թրի ծայրը:

Կանգ առնող ձիու փնչոցի վրա հյուրանոցի դուռը բացվեց, և շեմքում երևաց տերը՝ լապտերը ձեռքին: Օրվա այն ժամն էր, երբ դուրսը դեռ լույս է լինում, իսկ սենյակներում՝ մութ:

Հյուրանոցի տերը կոկարդին նայեց ու հարցրեց.

— Քաղաքացի, դուք իջևանելո՞ւ եք այստեղ:

— Ոչ:

— Հապա ո՞ր եք գնում:

— Դու:

— Ավելի լավ է ետ դարձեք, կամ մնացեք այստեղ:

— Ինչո՞ւ:

— Որովհետև Դուլում կոիվ է գնում:

— Մի՞թե, — հանգիստ խոսեց ճանապարհորդը և ավելացրեց. — Գարի տվեք իմ ձիուն:

Հյուրանոցի տերը մի տաշտ քերեց, մեջը մի պարկ գարի լցրեց և ձիու սանձը արձակեց:

Ձին փնչոցով սկսեց ուտել:

Խոսակցությունը վերսկսվեց.

— Իսկ որտեղի՞ց եք գալիս դուք:

— Փարիզից:

— Ողիղ ճանապարհո՞ւվ եք եկել:

— Ոչ:

— Պարզ է: Բոլոր ճանապարհները փակ են: Բայց փոստը դեռ գնում գալիս է:

— Այո, մինչև Ալանսոն: Ալանսոնից ստիպված եղա ձիով գալ:

— Ձեզ հարկավոր է հանգստանալ, քաղաքացի: Լսեցեք իմ բարի խորհուրդը: Դուք երևի հոգնած եք: Նայեցեք ձիուն. շատ է հոգնել:

— Ձին հոգնելու իրավունք ունի, իսկ մարդը՝ ոչ:

Հյուրանոցի տերը մի ուշադիր հայացք գցեց անձանոթի

երեսին: Դա հանգիստ, դաժան դեմք էր՝ շրջանակված մերմակ մազերով: Հետո նա նայեց ամայի ճանապարհին և ասաց.

— Եվ դուք սիրտ եք անում մենակ ճանապարհի գնալ:

— Ես ինձ պաշտպանողներ ունեմ:

— Որո՞նք են:

— Թուրս և ատրճանակներս:

Պանդոկապետը մի դուլ ջուր բերեց, դրեց ձիու առաջ և, մինչ ձին խմում էր, դիտեց անծանոթին՝ ինքն իրեն մտածելով. «Թուրը՝ թուր, բայց և այնպես՝ սա քահանայի է նման»:

Ծանապարհորդը նորից խոսեց.

— Դուք, կարծեմ, ասացիք, որ Դոլում կոիվ է գնում:

— Այո: Հիմա պետք է որ արդեն սկսված լինի:

— Իսկ ո՞վ ո՞ւմ հետ է կոլում:

— Նախկինը՝ նախկինի:

— Ինչպես ասացի՞ք:

— Նախկիններից մեկը կոլում է հանրապետության համար, մյուսը՝ թագավորի:

— Բայց չէ՞ որ թագավոր արդեն չկա:

— Կա, բայց նա դեռ մանուկ է... Եվ հետաքրքրական է, որ այդ երկու նախկինները ազգական են իրար:

Անծանոթն ուշադրությամբ ականջ էր դնում: Պանդոկապետը շարունակեց.

— Մեկը երիտասարդ է, մյուսը՝ ծերունի: Եղբոր թոռը կոլում է մեծ հորեղբոր դեմ: Հորեղբայրը ոռոյալիստ է, թոռը՝ հայրենասեր: Հորեղբայրն սպիտակների հրամանատարն է, թոռը՝ կապույտների: Օ՛, այդ երկուսը չեն գիշի իրար: Դա ոչ թե կենաց, այլ մահու պայքար է:

— Մահու պայքար:

— Այո, քաղաքացի: Ահա տեսեք, թե ինչպես սիրալիր են նրանք հյուրասիրում իրար: Տեսնո՞ւմ եք այս հայտարարությունը: Այսպիսի հայտարարություններ ծերունի մարկիզը, չգիտեմ ինչպես, կարողանում է փակցնել ամեն տեղ՝ թողոր տների պատերին, ծառերի վրա և նույնիսկ իմ դռանը:

Պանդոկապետը լապտերը մոտեցրեց մի թերթ թղթի, որ փակցված էր դռան փեղկերից մեկին, և քանի որ հայտա-



րարությունը տպված էր շատ խոշոր տատերով, որն առանց ձիուց իջնելու կարդաց.

«Մարկիզ դը Լանտենակը պատիվ ունի նախագուշացնելու իր ազգական վիկոնտ Գովենին, որ եթե ինքը՝ մարկիզը բախտ ունենա բռնելու վիկոնտին, անհապաղ կհրամայի գնդակահարել նրան»:

— Ահա և պատասխանը,— ավելացրեց պանդոկապետը: Նա շուտ եկավ և լապտերով լուսավորեց մի ուրիշ հայտարարություն, որ փակցված էր դռան մյուս փեղկին: Ձիավորը կարդաց.

«Գովենը նախագուշացնում է Լանտենակին, որ եթե նա, Լանտենակը բռնվի, ապա կգնդակահարվի»:

Պանդոկապետը շարունակեց.

— Երեկ այս դռանը փակցրին առաջին թուղթը, իսկ այս առավոտ՝ երկրորդը: Ինչպես տեսնում եք, պատասխանը շատ չի ուշացել:

Ածանոթը կիսաձայն, ասես ինքն իր հետ խոսելով, մի քանի բառ արտասանեց, որոնք հյուրանոցի տերը չհասկացավ, թեպետև լսել էր այդ բառերը:

— Այո, սա ավելին է, քան քաղաքացիական պատերազմը: Սա ընտանեկան պատերազմ է: Թող այդպես լինի, դա լավ է: Ժողովուրդների մեծ վերանորոմը էժան գնով չի ձեռք բերվում:— Եվ աչքը չհեռացնելով երկրորդ հայտարարությունից՝ անծանոթը ձեռքը գլխին տարավ ու պատվի առավ նրա առաջ:

Պանդոկապետը շարունակեց.

— Ամբողջ խնդիրը, քաղաքացի, ահա թե որն է: Մենք, քաղաքաբնակներս և խոշոր գյուղերի բնակիչները հեղափոխության կողմն ենք, իսկ գյուղացիները կովում են մեր դեմ: Կամ, ավելի լավ է ասել՝ մենք, քաղաքաբնակներս ֆրանսիացիներ ենք, իսկ նրանք՝ բրետոնացի: Սա ուսմիկների պատերազմն է քաղաքաբնակների դեմ: Նրանք մեզ կոչում են «հաստափորներ», իսկ մենք նրանց՝ «ուսմիկներ»: Ազնվականներն ու քահանաները նրանց կողմն են...

— Ո՛չ բոլորը,— ընդհատեց անծանոթը:

— Իհարկե՝ ոչ բոլորը, քաղաքացի, քանի որ վիկոնտը մարկիզի դեմ է դուրս գալիս:— Ապա ինքն իրեն ավելաց-

րեց. «Ինչպես տեսնում եմ, ես քահանայի հետ եմ խոսում»:  
Անժամորը հարցրեց.

— Իսկ նրանցից ո՞րն է հաղթում:

— Առաջժմ վիկոնտը: Բայց դա էժան չի նստում նրա վրա: Ծերունին իսկական կայծքար է: Նրանք երկուսն էլ Գովենների տոհմից են, այստեղի ազնվականներ: Նրանց տոհմը բաժանվել է երկու ճյուղի: Ավագ ճյուղի գլուխն է համարվում մարկիզ դը Լանտենակը, կրտսեր ճյուղի գլուխը՝ վիկոնտ Գովենը: Եվ ահա այժմ այդ երկու ճյուղերը կոչվում են իրար դեմ: Ծառերի ճյուղերն այդպիսի բան չեն անում, բայց մարդկանց մեջ՝ պատահում է: Մարկիզ դը Լանտենակը մեծ ուժ է Բրետանում. գյուղացիների աչքում նա հզոր իշխան է: Հենց որ ափ իջավ, ութ հազար մարդ խմբվեց նրա շուրջը: Մի շաքաթ անց ոտքի կանգնեց երեք հարյուր համայնք: Եթե նա կարողանար ծովափից թեկուզ մի կտոր գրավել, անգլիացիներն արդեն այստեղ կլինեին: Բարեբախտաբար վրա հասավ Գովենը՝ նրա ազգականը: Տարօրինակ դեպք է, չէ՞: Նա հանրապետական զորամասի հրամանատար է, նրան հաջողվեց կանգնեցնել իր մեծ հորեղբորը: Եվ բացի այդ, էլի մեր բախտից է, այդ Լանտենակը մեծ թվով գերիներ կոտորեց, որոնց մեջ հրամայեց գնդակահարել նաև երկու կնոջ: Այդ կանանցից մեկը, մի որբկայրի, երեք երեխա ուներ, որոնց դրանից առաջ որդեգրել էր փարիզյան մի գումարտակ: Հիմա այդ գումարտակը սարսափ է տարածել սպիտակների վրա. նա ոչ ոքի չի խնայում: Դա Կարմիր գդակ գումարտակն է: Հիմա նա մեծաթիվ չէ, բայց չէ՞ որ փարիզեցիները կատաղի մարդիկ են: Նրանք մտել են այն զորամասի մեջ, որի հրամանատարը Գովենն է: Ոչ ոք չի կարող դիմանալ նրանց: Նրանք որոշել են կանանց վրեժը լուծել և ազատել երեխաներին: Թե Լանտենակն ինչ է արել երեխաներին, ոչ ոք չգիտե: Եվ հենց այս է կատաղեցնում փարիզեցի գրեմադերներին: Եթե այս գործում երեխաները խառը չլինեին, գուցեև պատերազմը բոլորովին ուրիշ բնույթ ստանար: Վիկոնտը խիզախ և հիանալի երիտասարդ է, ծերունին սոսկալի է... Չէի՞ք կամենա մի բան ուտել, քաղաքացի:

— Ծնորհակալ եմ: Ես հաց էլ ունեմ, մի աման գինի էլ:

Ավելի լավ է պատմեցեք ինձ, թե ինչ է կատարվում Դոլում:

— Ահա թե ինչ: Գովենն առափնյա բանակի մի զորամասի հրամանատարն է: Լանտենակն ուզում էր ոտքի հանել ստորին Բրետանը և ստորին Նորմանդիան, դուռ բացել անգլիացիների համար և երկու հարյուր հազար գլուղացիներից բաղկացած վանդեական մեծ բանակին օգնության բերել քսան հազար զինվորից բաղկացած անգլիական օժանդակ կորպուսը: Գովենը խառնեց նրա հաշիվները: Նա գիտե ծովափի ամբողջ տարածությունը և Լանտենակին քշում է դեպի երկրի խորքը, իսկ անգլիացիներին՝ դեպի ծով: Վերջերս Լանտենակն այստեղ էր, բայց Գովենը նրան ստիպեց նահանջել: Հիմա նրա նպատակն է սպիտակներից քշել ֆուժերյան անտառը և այնտեղ շրջապատել: Մինչև այժմ ամեն ինչ լավ էր ընթանում: Երեկ Գովենն իր ջոկատով այստեղ էր, և հանկարծ տագնապալից լուր եկավ. ծերունին, նա հմուտ ռազմիկ է, անսպասելի թևանց է կատարել և շարժվում է դեպի Դոլ: Եթե նա Դոլը գրավի և Մոն-Դոլ լեռան վրա տեղավորի իր մարտկոցը, իսկ թընդանոթներ նա ունի, ապա ծովափի մի մասը նրա ձեռքը կընկնի, և անգլիացիների համար հեշտ կլինի ափ դուրս գալ: Այն ժամանակ ամեն ինչ կորած կլինի: Բայց Գովենը գլխով մարդ է: Բանի որ ոչ մի բույս կորցնել չէր կարելի, նա առանց որևէ մեկի հետ խորհրդակցելու և որևէ ցուցումի չսպասելով, տագնապ բարձրացրեց, ժողովեց իր ջոկատը, հրամայեց ձիերը թամբել ու հրանոթները լծել, նետովեց իր ձիու վրա և սլացավ Լանտենակին ընդառաջ: Բրետոնյան այդ երկու գլուխներն իրար կգարկվեն Դոլում: Ընդհարումը լուրջ կլինի: Հիմա արդեն երկուսն էլ այնտեղ են:

— Իսկ որքա՞ն ժամանակում կարելի է Դոլ հասնել:

— Ջոկատն իր գումակով կգնա առնվազն երեք ժամում: Այո, մերոնք արդեն հասած կլինեն:

Անժանոթը լուռ ականջ էր դնում ինչ-որ բանի, հետո ասաց.

— Իսկապես, ես կարծես թնդանոթաձգության ձայն եմ լսում:

Պանդոկապետը նույնպես ականջ դրեց.

— Այո, քաղաքացի, այդ թնդանոթներից ու հրացաններից են կրակում: Լսո՞ւմ եք որտղ: Իսկապես, մնացե՞ք այստեղ գիշերելու: Այնտեղ ձեզ ոչ մի լավ բան չի սպասում:

— Ես ուշանալ չեմ կարող: Պետք է գնամ:

— Իզուր: Ձեր գործերը ես չգիտեմ, բայց այն կողմը գնալը շատ վտանգավոր է, և եթե խնդիրը չի վերաբերում ձեզ համար շատ թանկ մի բանի...

— Խնդիրը հենց դրան է վերաբերում,— ընդհատեց նրան ձիավորը:

— Եթե դա վերաբերում է, օրինակ, ձեր զավակին...

— Համարյա թե այդպես,— ասաց անծանոթը:

Պանդոկապետը նայեց նրան և մրմնջաց.

— Զարմանալի է, ինձ թվում է, որ այս քաղաքացին քահանա է:— Ապա մի պահ մտածելով ավելացրեց.— Ասե՛նք, չէ՞ որ քահանաներն էլ որդի են ունենում:

— Սանձը ձիուս գլուխը քաշե՞ք,— ասաց նրան անծանոթը:— Որքա՞ն եմ վճարելու գարու համար:— Եվ նա տալիքը վճարեց:

Պանդոկապետը տաշտն ու դուլը վերցրեց և նորից մոտեցավ նրան.

— Քանի որ դուք որոշել եք անպայման գնալ, լսեցե՛ք իմ խորհուրդը: Դուք երևի գնում եք Սեն-Մալո: Դե ուրեմն Դոլի կողմը մի՛ գնացե՛ք: Սեն-Մալո տանող երկու ճանապարհ կա, մեկը Դոլի միջով, մյուսը՝ ծովի ափով: Երկրորդը ամենևին էլ երկար չէ: Երբ դուք կհասնեք այս ճանապարհի ծայրին, կտեսնեք մի խաչմերուկ, այնտեղ ճանապարհը երկուսի է բաժանվում: Եթե ձախ գնաք, դեպի Դոլ, հենց ուղիղ՝ կովի մեջ կընկնեք: Ուրեմն չշփոթեք, գնացե՛ք դեպի աջ և ոչ թե ձախ:

— Ենթահակալ եմ,— ասաց անծանոթը և ձիուն խթանեց:

Արդեն մութն ընկել էր: Պանդոկապետը տեսողությունից կորցրեց նրան, նա անհետացավ խավարի մեջ:

Երբ անծանոթը հասավ այնտեղ, որտեղ ճանապարհը նյուդավորվում էր, հեռվից լսեց պանդոկապետի ձայնը.

— Թեքվեցե՛ք դեպի ա՛ջ:

Նա թեքվեց դեպի ձախ:

## II. ԴՈՒՐ

Դուք այն ժամանակներում ոչ թե քաղաք էր, այլ մի փողոց, երկար, հնամենի փողոց: Բոլոր տներն այնտեղ սյունազարդ էին և մի գծի վրա չէին կառուցված, այլ՝ անկանոն. կաշին տներ, որ առաջ եկած էին, ուրիշները՝ ետ, և ամբողջ փողոցի երկարությամբ գոյացել էին ելուստներ ու անկյուններ: Լինելով միանգամայն բաց, չունենալով պարիսպ ու դարպասներ, այդ քաղաքը պաշարման դիմանալ չէր կարող: Սակայն նրան կարող էր պաշտպանել գլխավոր փողոցը: Առաջ եկած շենքերի ճակատները, որպիսիք կարելի էր տեսնել դեռ հիսուն տարի առաջ, և երկու շարք սյուները, որոնք ձգվում էին փողոցի ամբողջ երկարությամբ, պաշտպանության լավ տեղ էին դարձնում նրան: Ամեն մի տունը մի ամրոց էր, ամեն մի տունը միայն կովով կարելի էր գրավել: Մոտավորապես փողոցի մեջտեղը գտնվում էր հնամենի շուկան:

Հյուրանոցի տերը միշտ էր ասել. այն պահին, երբ մախոսում էր անծանոթի հետ, Դուք կատաղի կոիվ էր տեղի ունենում: Առավոտվանից քաղաքը գրաված սպիտակների և գիշերը հարձակված կապույտների միջև հանկարծակի բորբոքվել էր մի կատաղի մենամարտ: Ուժերն անհավասար էին. սպիտակները վեց հազար էին, կապույտները՝ ընդամենը մեկ ու կես հազար: Սակայն կատաղության մեջ նրանցից ոչ մեկը չէր զիջում մյուսին: Եվ զարմանալի է, որ հարձակվողը փոքրամասնությունն էր:

Մի կողմում կովում էր խառնիխառն մի ամբոխ, մյուս կողմում՝ կանոնավոր զորասյուն: Մի կողմում վեց հազար գյուղացիներ՝ կաշվե բաճկոնների վրա կարված Հիսուսի սիրտը, կլորած գլխարկներին սպիտակ ժապավեններ, թևնոցներին՝ քրիստոնեական ասույթներ, գոտիները խրած տերողորմիներ, զինված մեծ մասամբ միայն եղաններով ու առանց սվինի կարաթիններով, որոնք իրենց ետևից քարշ էին տալիս պարաններով կապկպված թնդանոթներ, վատ հագնված, անկարգապահ, բայց՝ կատաղի, պատրաստ ամեն ինչի: Մյուս կողմում մեկ ու կես հազար զինվոր՝ եռագույն կոկարդավոր զինվորական եռանկյունի գլխարկներ

րով, երկարաիեշ կամգոլներով, խաչաձև գգված կապիշ-ներով, պղնձադաստակ սուսերներով և երկար սվինավոր հրացաններով, բոլորը խստավարժ, կարգապահ, հնազանդ և մարտի մեջ անընկճելի, որոնք կարողանում էին ենթարկվել որպես գիտակից մարտիկ, որոնք կարիքի դեպքում կարող էին և հրամանատար լինել, նույնպես կամավորներ, բայց հայրենիքի կամավորներ, թեկուզև պատառոտուն ու բորիկ: Միապետության կողմը գեղջուկներն էին, հեղափոխության կողմը՝ ոտաբոքիկ հերոսները:

Այդ երկու փոքրիկ բանակներից յուրաքանչյուրի հոգին իր առաջնորդն էր, ողջալիստներինը՝ մի ծերունի, հանրապետականներինը՝ մի երիտասարդ: Մի կողմում Լանտե-նակն էր, մյուսում՝ Գովենը:

Գովենը երեսուն տարեկան էր: Մարմնի հզոր կազմվածք, մարգարեի լուրջ հայացք և մանկական ծիծաղ՝ ահա նրա բնորոշ գծերը: Նա չէր խմում, չէր ծխում, չէր հայհոյում և չէր երդվում: Արշավների ժամանակ էլ նա հոգ էր տանում իր եղունգների, ատամների, հիանալի թավ ու թուխ մազերի մասին: Դադարների ժամանակ նա ինքն իր ձեռքով էր թափ տալիս փոշուց սպիտակած ու գնդակներից ծակծկված քաճկոնը: Միշտ առաջինը նետվելով ետուն մարտի մեջ՝ նա ոչ մի անգամ չէր վիրավորվել: Նրա մեղմ ձայնը հարկավոր դեպքերում բարձր ու տիրաբար էր գոչում հրամանի բառերը: Օրինակ հանդիսանալով իր զինվորներին՝ նա քնում էր գետնին պառկած, անձրևի ու քամու տակ, ձյունի մեջ, իր թիկնոցի մեջ փաթաթված և գեղեցիկ գլուխը քարին դրած: Դա մի հերոսական ու անարատ հոգի էր: Գրոհի գնալիս նա կերպարանափոխվում էր. ինչ-որ կանացի քրնք-շություն կար նրա մեջ, բայց մարտի ժամանակ ահավոր էր դառնում:

Այս ամենի հետ Գովենը մտածող էր ու փիլիսոփա, երիտասարդ իմաստուն:

Ֆրանսիական հեղափոխության հենց սկզբին այս երիտասարդը միանգամից բարձրացավ առաջին շարքերը:

Իր իսկ ջանքերով կազմված զորամասը մի փոքրիկ բանակ էր ներկայացնում: Այն բաղկացած էր հետևակից ու հեծելազորից: Նա ուներ նաև և՛ հետախույզներ, և՛ սակ-

քաղորներ, և՛ հրետանավորներ՝ երեք թնդանոթով: Երեք ձիաքարշ հրանոթները ուժեղացնում էին այդ զորամասը, միաժամանակ չդժվարացնելով նրա տեղաշարժումները:

Լանտենակը նույնպես լավ զորապետ էր: Գուցեն գերազանցում էր իր երիտասարդ ազգականին: Նա միաժամանակ և՛ ավելի զգույշ էր նրանից, և՛ ավելի համարձակ: Հասակավոր ուղղվածներն ավելի պաշարյուն են լինում, քան երիտասարդները, որովհետև նրանք հեռու են կյանքի արշալույսից, և ավելի համարձակ են լինում, որովհետև ավելի մոտիկ են գերեզմանին: Ի՞նչ ունեն նրանք կորցնելու: Համարյա ոչինչ: Սրանով էլ բացատրվում է Լանտենակի հանդըգնության հասնող համարձակ և միաժամանակ կշռադատված տակտիկան: Բայց ընդհանուր առմամբ ծերունու և երիտասարդի այդ համառ կոպում Գովենը համարյա միշտ հաղթող էր դուրս գալիս, որ հավանորեն, պարզապես պետք է վերագրել հաջողության: Ամեն մի հաջողություն, նույնիսկ ուղղակիանը, երիտասարդության բաժինն է:

2Է՞ որ հնդթանակն էլ մի քնքուշ կին է:

Լանտենակն ասում էր Գովենին. նախ այն պատճառով, որ նա կոիվներում հաղթում էր իրեն և երկրորդ, նրա համար, որ նա իր ազգականն էր: Ինչի՞ համար այդ կաթնակերի խելքին փչել է յակոբինյան դառնալ: Յակոբինյան՝ այդ լակոտը, իր ազգականը, համարյա թողը, իր ժառանգը, որովհետև մարկիզը երեխաներ չունեիր... «Թե որ ձեռքս ընկնի, ես շան նման կսպանեմ նրան»,— ասում էր այդ հորեղբայրը, ավելի ճիշտ՝ պապը:

Հանրապետությունը իզուր չէր անհանգստանում Լանտենակի լույս ընկնելու առթիվ: Հազիվ էր նա ոտք դրել ֆրանսիական ափին, և արդեն ամեն ինչ դողում էր նրա առաջ: Նրա անունը վառողի պայթյունի պես թնդաց ապրտամբ Վանդեայում, և նա իսկույն կենտրոն դարձավ: Այդ կարգի ապստամբության մեջ, որտեղ բոլորը մրցում են իրար հետ, որտեղ ամեն մեկը նստած է իր թփի ետևը, իր ձորակում, երբ երևան է գալիս մի մարդ, որը բոլորի կողմից ընդունվում է որպես գլուխ, գատ-գատ ղեկավարները համախմբվում են ընդհանուր գործի համար: Անտառներում նստած բոլոր գյուղացիական ջոկատների ղեկավարները

միացան Լանտենակին և բոլորը՝ մերձավոր թե հեռավոր, ենթարկվեցին նրան:

Լանտենակը ցանկանում էր կանոնավոր պատերազմը զուգակցել պարտիզանականին: Նա չէր ընդունում ոչ «բազմերանգ մասսայի» միահամուռ հարձակումը, որպիսին էր կաթոլիկական արքայական մեծ բանակը, որ նախապես ոչնչացման էր դատապարտված, ոչ էլ ուսումնական ուժերի ցրումը թավուտներում ու թփուտներում, որ կարող էր միայն անհանգիստ անել թշնամուն, սակայն չէր կարող ջախջախել նրան: Պարտիզանական հարձակումները չէին վնասում պատերազմի ելքը, այլ հասցնում էին վատ վախճանի: Նրանք սկսվում էին հանրապետության վրա հարձակումներով, բայց վերջանում էին հանրակառքերի կողոպուտով: Լանտենակը ցանկանում էր իսկական պատերազմ, նա ուզում էր օգտորվել գյուղացիներից, բայց հենվել զինվորների վրա: Դառանակալումները և անակնկալ հարձակումները, նրա կարծիքով, գրոհի հիանալի միջոց էին, և գեղջուկներից կազմված ջոկատները, որոնք կարող էին վայրկենապես հավաքվել և նույնպես վայրկենապես ցրվել, ամենից ավելի էին համապատասխանում այդ նպատակին: Բայց նա այդ ջոկատները համարում էր շատ անկայուն. նրանց ջրի նման հնարավոր չէր զսպել: Նա ցանկանում էր այդ անկանոն, տարտամ պատերազմի համար ստեղծել ամուր կորիզ, ցանկանում էր անտառի վայրենիների բանակն ամրապնդել կանոնավոր զորքերով, որոնք իր հարձակումների առանցքը լինեին: Խոր ու զարհուրելի միտք: Եթե հաջողվեր իրականացնել այն, Վանդեան անհաղթահարելի կլիներ:

Բայց որտեղի՞ց գտնել կանոնավոր զորքեր: Ինչպե՞ս գնդեր հավաքել: Որտեղի՞ց զինվորներ գտնել: Որտե՞ղ գտնել պատրաստի բանակ: Անգլիայում: Եվ ահա Լանտենակի գլխում մեխվել էր մի միտք՝ անգլիացիներին ափ հանել: Նա ամբողջովին տարված էր մի մտքով՝ գրավել ծովափի մի մասը և այն դնել անգլիացիների տրամադրության տակ: Ահա թե ինչու, իմանալով, որ Դոլը պաշտպանված չէ, նա նետվեց այդ քաղաքի վրա, հուսալով, թե այն գրավելով կգրավի նաև հարևան Մոն-Դոլ քարձուռքը, իսկ Մոն-Դոլի գրավումով կգրավի նաև մերձակա ծովափը:



Տեղը լավ էր ընտրված: Մոն-Դոլի գլխին տեղավորված հրետանին կջնջեր մերձակա գյուղերը և ասիլը կմաքեր անգլիացիների ասի դուրս գալու համար:

Այս վճռական ծրագիրն իրականացնելու համար Լանտենակն իր հետ վերցրեց ավելի քան վեց հազար մարդ, որ լավագույնն էր իր ունեցած բոլոր գյուղացիական ջուկատներում, և իր ամբողջ հրետանին՝ տասը թնդանոթ և երկու հրանոթ: Նա որոշել էր որքան կարելի է ավելի շատ հրանոթներ դնել Մոն-Դոլի վրա, հիմնվելով նրա վրա, որ տասը հրանոթի հազար կրակոց՝ ավելի ներգործում է, քան հինգ հրանոթի մեկ ու կես հազար կրակոցը:

Հաջողությունը տարակույսից դուրս էր թվում: Նրանք վեց հազար հոգի էին: Ավրանշի կողմից կարելի էր երկյուղ ունենալ միայն Գովենից, որ մեկ ու կես հազար զինվոր ուներ և Դինանի կողմից՝ Լեդելից: Ծիշտ է, Լեդելը քսանհինգ հազար զինվոր ուներ, բայց նա քսան լյե հեռու էր գտնվում:

Լանտենակը հավատացած էր իր հաջողությանը: Նա Դոլը գրավեց առանց կռվի: Նա խիստ և գթություն չճանաչող մարդու համբավ ուներ: Քաղաքը նույնիսկ փորձ չարեց դիմադրել: Սարսափահար բնակիչները թաքնվել էին տներում: Վեց հազար վանդեացիներ քաղաքում տեղավորվեցին գյուղական անպահանջկոտությամբ, ինչպես տոնավաճառում, հարմարվելով առանց խարապանների և առանց օթեանների, կերակուր եփում էին բաց երկնքի տակ, նստում ու պառկում էին որտեղ պատահեր, հրացանը համրիչով փոխարինելով՝ գնում էին եկեղեցիները:

Լանտենակը հրետանային մի քանի սպաների ուղեկցությամբ իսկույն գնաց Մոն-Դոլը դիտելու, հրամանատարությունը հանձնելով իր մերձավոր օգնական Գուծ լը Բրյուանին:

Այս Գուծ լը Բրյուանը որոշ հետք է թողել պատմության մեջ: Նա երկու մականուն ուներ. առաջինը՝ Կապույտների սարսափ, որովհետև շատ հայրենասերներ էր կոտորել և երկրորդը՝ Իմանուս, որ նշանակում է անասելի աշխատակարարած: Վանդեայում բոլոր խոովարարները վայրենի էին, բայց Գուծ լը Բրյուանը քարքարոս էր: Նրա դեմքն ար-

տացում էր իր հողկալի հոգին, որ մահն չէր որևէ մարդկային հոգու։ Մարտի մեջ մա դևի պես անվեհեր էր, իսկ մարտից հետո՝ վայրագ։ Նա ընդունակ էր անձնուրաց միլիվածության և ամենակատաղի դաժանության։ Նրա գործած ոճիրները հաճախ շնեցնում էին իրենց հրեշավորությամբ։ Նրանից կարելի էր սպասել ամենագարհուրելի արարքներ։

Այստեղից էլ՝ նրա գարշելի մականունը՝ Իմանուս։

Մարկիզ դը Լանտենակը հույս էր դնում նրա դաժանության վրա։ Եվ իրոք, Իմանուսը չտեսնված դաժան էր։ Բայց ուղղամական արվեստի մեջ մա ուժեղ չէր։ Գուցեև մարկիզը սխալ էր արել, որ նրան մշանակել էր իր տեղակալը։ Այսպես թե այնպես, Լանտենակը մեկնելիս նրան թողեց հրամանատարությունը և հանձնարարեց հսկել ամեն ինչին։

Ուշ երեկոյան, երբ Լանտենակը հրետանու դասավորման տեղը դիտելուց հետո վերադառնում էր Դոլ, հանկարծ թնդանոթի կրակոց լսեց։ Նա շուրջը նայեց։ Քաղաքի գլխավոր փողոցի վրա բոտրագույն ծովա՝ էր բարձրացել։ Պարզ էր. նրանց անակնկալի էին բերել։ Հակառակորդը ներխուժել էր քաղաք, և այժմ փողոցում մարտ էր տեղի ունենում։

Մարկիզին զարմացնելը հեշտ բան չէր, բայց այս անգամ մա ապուշ կտրեց, այսպիսի բան մա չէր սպասում։ Ո՞վ կարող էր լինել դա։ Միայն թե ո՛չ Գովենը. մա չէր կարող հարձակվել չորս անգամ գերազանցող հակառակորդի վրա։ Գուցե Լեշե՛լն է։ Եթե այդպես է, ապա մա պետք է քսան լլեմ անցներ արագ ընթացքով... Ո՛չ, ո՛չ։ Լեշելի գալն անհավանական էր, Գովենինը՝ անհնարին։

Լանտենակը խթանեց իր ձին։ Ծանապարհին շուտ-շուտ նրան հանդիպում էին փախչող բնակիչներ։ Մարկիզը փորձեց հարցուփորձ անել նրանց, բայց փախչողները գլուխները կորցրած և՛ «Կապույտները, կապույտները» գոռալով շարունակում էին՝ փախչել։ Երբ, վերջապես, մա քաղաք հասավ, վանդեազիների դրությունը հուսահատական էր։

Ահա թե ինչ էր տեղի ունեցել։

### III. ՓՈՔՐԻԿ ԲԱՆԱԿՆԵՐ ԵՎ ՄԵՇ ԿՈՒՎՆԵՐ

Վանդեական զորքը, ինչպես ասացինք, Դոլ մտնելով ցրիվ էր եկել քաղաքում, ով որտեղ պատահել էր: Իրենց թնդանոթներն ու՝ արկերի՝ արկղերը հնամենի շուկայի կամարների տակ քաշելով՝ հոգնած գեղջուկները սկսեցին ուտել ու խմել և իրենց համրիչները քաշել: Ապա, փոխանակ պահակություն անելու, պատկեցին հենց ուղղակի փողոցում, նրա ամբողջ լայնությամբ, ծածկելով այն իրենց մարմիններով: Քանի որ ուշ գիշեր էր, շատերը իրենց մախաղը գլխի տակ դնելով քուն մտան, ոմանք նույնիսկ իրենց կանանց հետ. Վանդեացի գեղջկուհիները հաճախ արշավների ժամանակ ուղեկցում էին իրենց ամուսիններին:

Հուլիսյան ջերմ ու պարզ գիշեր էր: Երկնքի խորունկ կապույտում փայլում էին աստղերը: Եվ այդ ամբողջ ճամբարը, որ ավելի շուտ քարավանի իջևան էր հիշեցնում, քան ռազմական ճամբար, հանգիստ քուն էր մտել: Հանկարծ նրանք, ովքեր դեռ չէին քնել, աստղերի աղոտ լույսով տեսան, որ փողոցի մի ծայրից ուղիղ իրենց են նայում երեք թնդանոթների երախներ:

Այս Գովենն էր: Անշուշտ մոտենալով քաղաքին՝ նա վերացրել էր ժամապահներին և իր ջոկատով գրավել գլխավոր փողոցի մի ծայրը:

Ինչ-որ մի գյուղացի տեղից՝ վեր թռչելով գոչեց. «Ո՛վ է եկողը» և հրացանը կրակեց: Նրան պատասխանեց թնդանոթի կրակոցը: Ապա հրացանային կատաղի համազարկ սկսվեց: Արդեն քուն մտնող ամբողջ ռմակը վեր թռավ խայթվածի պես: Հանելի բան չէր քուն մտնել աստղերի տակ և արթնանալ գնդակների տարափի տակ:

Առաջին ռոպեները զարհուրելի էին: Չկա ավելի ողբալի տեսարան, քան ասրափահար ամբոխի փախուստը: Բոլորը վրա թռան հրացաններին, որը գոռում էր, որը փախչում, շատերը փոփում էին գետնին: Անակնկալի բերված գյուղացիները, իրենք էլ չիմանալով, թե ինչ են անում, կրակում էին յուրայինների վրա: Համազարկերից շշմած մարդիկ դուրս էին վազում տներից, ապա ետ էին վազում, նորից դուրս գետնում և իրենց կորցրած՝ ընկնում էին ընդհա-

Անոր շփոթի մեջ, ավելի ևս ռասսոկացնելով իրարանցումը: Ամուսինները կանչում էին իրենց կորցրած կանանց ու երեխաներին, երեխաները ողբագին լացով իրենց ծնողներից էին որոնում: Գիշերային այդ չարագույժ կովում ամեն ինչ իրար էր խառնվել: Գնդակները սուղոցով ճեղքում էին գիշերային խավարը: Բոլոր մութ անկյուններից կրակոցներ էին որոտում: Ծխի ու ընդհանուր աղմուկի մեջ ոչինչ չէր կարելի հասկանալ: Ամբողջ փողոցում անկանոն ցրված կառքերն ու ֆուրգոններն ավելի էին ուժեղացնում իրարանցումը: Սարսափահար ձիերը վրճում էին, ծառա էին լինում, աքացի տալիս: Թե՛ մարդիկ, թե՛ ձիերը կոխկրտում էին վիրավորներին, գետնից ողբ ու տնքոցներ էին լսվում: Ոմանք սարսափահար էին եղել, ուրիշները՝ շփոթվել: Զինվորներն ու սպաները իրար էին որոնում: Եվ այս դժոխքի մեջ պատահում էին ամեն ինչին բույս անտարբերությամբ վերաբերվելու օրինակներ: Մի ինչ-որ կին գետնին ճստած ծիծ էր տալիս իր մանկանը, իսկ կողքին մեջքը պատին հենած ճստած էր ոտքը կոտրված ճրա ամուսինը: Նրանից գետակի պես արյուն էր հոսում, իսկ նա հանգիստ լցնում էր իր կարաքինը և կրակում խավարի մեջ: Մի քանի մարդ կրակում էին սալերի տակ փոքի վրա պառկած: Մի բույս մարդկային աղաղակի ալիք էր բարձրանում, ապա ամեն ինչ խլանում էր թնդանոթի որոտով: Զարհուրելի տեսարան էր:

Կարծես անտառ էին կտրում. մարդիկ ծառերի պես իրար վրա էին թափվում:

Գովենի ջոկատը դիրք մտած՝ կրակում էր անվրեպ և ինքը համարյա կորուստ չունեցավ:

Սակայն գյուղացիների ամբոխը, որքան էլ անկարգապահ էր, ի վերջո ուշքի եկավ և պաշտպանություն կազմակերպեց: Նա քաշվեց դեպի շուկայի քարաշեն շենքը, որ բարձր սյուների մի ամբողջ անտառ էր ներկայացնում: Իրենց ծածկի տակ զգալով՝ մարդիկ սրտապնդվեցին. ամեն ինչ, որ անտառ էր հիշեցնում, նրանց վատահոսություն էր ներշնչում: Իմանալը, որքան կարող էր, աշխատում էր փոխարինել բացակա Լանտեմակին: Նրանք հրետանի ունեին, բայց գործի չէին դնում, և այդ խիստ զարմացնում

էր Գովենին: Իսկ դրա պատճառն այն էր, որ հրետանու բոլոր սպաները մարկիզի հետ գնացել էին Մոն-Դոլը դիտելու, իսկ գյուղացիները թնդանոթների հետ վարվել չգիտեին: Դրա փոխարենն նրանք գնդակների տարափ էին տեղում կապույտների վրա, որոնք թնդանոթներից էին կրակում: Հիմա գյուղացիները հուսալի թաքստոց ունեին: Հավաքելով բոլոր սայլերը, շուկայի շենքում եղած հակերը, արկղերն ու տակառները՝ նրանք բարձր բարիկադ սարքեցին, նրա մեջ նշան բռնելու անցքեր թողնելով, և այդ թաքստոցի ետևից դժոխային կրակ բաց արին: Այս ամենը կատարվեց շատ արագ: Քսոթորդ ժամ անց շուկան մի անանիկ ամրոց դարձավ:

Գործը Գովենի համար լուրջ բնույթ էր ստանում: Շուկայի շենքը այդպես հանկարծակի ամրոցի վերածելը նրա համար շատ անսպասելի բան էր: Վանդեացիներն այնտեղ նստել էին հաստատուն, խիտ զանգվածով: Գովենին հաջողվել էր անակնկալի բերել նրանց, բայց հաղթանակը դեռ հեռու էր: Ձիուց իջնելով, սուսերը ձեռքին բռնած՝ նա կանգ առավ վառվող ջահով լուսավորված իր հրետանու գլխին և, ձեռքերը կրծքին խաչած, ուշիուշով դիտում էր խավարը: Ջահի լույսի տակ նրա բարձր հասակը շատ պարզ նկատելի էր և նշանակետ էր հանդիսանում բարիկադի պաշտպանների համար: Բայց մտքի մեջ խորասուզված՝ նա չէր նկատում, որ իր շուրջը կարկուտի պես գնդակներ են տեղում:

Իր հաղթանակին նա ոչ մի բույե չէր կասկածում: Ծիշտ է, այնտեղ, բարիկադի ետևը շատ հրացանաձիգներ կային, բայց այդ բոլոր հրացանների դիմաց նա թնդանոթներ ուներ, իսկ գնդակը միշտ էլ վերջ ի վերջո տեղի է տալիս ումբին: Հաղթանակը միշտ նրանն է, ով հրետանի ունի: Գովենի հրետանին հմուտ ձեռքերի մեջ էր և ապահովում էր նրա հաղթանակը:

Հանկարծ ասես կայծակ փայլատակեց բարիկադի ետևից: Մի որոտ լսվեց, և թնդանոթի արկը հեռաց ուղիղ Գովենի գլխավերևը մի անցք բացեց տան պատին:

Բարիկադը թնդանոթային կրակով էր պատասխանում իր համազարկին...

Այդ ի՞նչ էր գշտնակում: Դրությունը փոխվեց: Այժմ հրեա-  
տանին միայն մեկ կողմում չէր:

Առաջին արկից հետո երկրորդն էլ խրվեց պատի մեջ,  
գրանից երկու քայլ հեռու: Երրորդ արկը մրա գլխարկը  
ցած գցեց:

Արկերը մեծ տրամաշափի էին. կրակում էին տասնվեց  
ֆունտանոց հրանոթից:

— Ձեզ եմ գշտն բռնում, հրամանատար,— գոչեցին  
հրետանավորները և ջահը մարեցին:

Գովեներ մտախոհ կուցավ և գլխարկը վերցրեց: Իրոք  
մրան էին գշտն բռնել, և գշտն էր բռնել Լանտենակը, որ  
հենց նոր էր բարիկադ հասել հակառակ կողմից:

Հենց որ մարկիզը եկավ, Իմանուսը մրա մոտ նետվեց.

— Մոնսեանյոր, մեզ վրա եմ հարձակվել...

— Ո՛վ:

— Չգիտեմ:

— Դիմանի ճանապարհը ազա՞տ է:

— Կարծեմ ազատ է:

— Հարկավոր է նահանջ սկսել:

— Նահանջն սկսված է: Ծառերն արդեն փախչում են:

— Փախչել պետք չէ, հարկավոր է նահանջել: Ինչո՞ւ  
դուք հրետանին գործի չէիք դրել:

— Բոլորը շփոթվել էին, և բացի դրանից, հրետանու  
սպաներ չկային:

— Հիմա ես ինքս եմ գնում մարտկոց:

— Մոնսեանյոր, ես դեպի Ֆուժեր եմ ուղարկել ամեն ինչ,  
որ կարելի էր ուղարկել գումակից: Կանամց նույնպես. մի  
խոսքով՝ ինչ ավելորդ է: Ի՞նչ կհրամայեք անել այն երեք  
երեխաներին, որոնց դուք գերի բռնեցիք:

— Այդ երեխաները մեր պատանդներն են: Ուղարկեցեք  
մրանց Տուրգ:

Այս կարգադրությունն անելով՝ մարկիզը գնաց դեպի  
բարիկադը: Հրամանատարի երևալուն պես ամեն ինչ փոխ-  
վեց: Բարիկադը հրետանուն հարմարեցված չէր. այնտեղ ըն-  
դամենը երկու թնդանոթի տեղ կար: Մարկիզը տեղավորեց  
տասնվեցանոց երկու թնդանոթ, որոնց համար շտապ կար-  
գով անցքեր պատրաստեցին: Կռանալով դեպի անցքերից

մեկը և թնդանոթի վրայով դիտելով հակառակորդի մարտկոցը՝ նա հանկարծ տեսավ Գովենին:

— Այդ նա՛ է,— գոչեց Լանտենակը:

Նա անձամբ մաքրիչը վերցրեց, թնդանոթը օրեց, նշան բռնեց ու կրակեց: Երեք անգամ նա նշան բռնեց Գովենի վրա և երեք անգամն էլ վրիպեց: Երրորդ կրակոցով նրան հաջողվեց միայն Գովենի գլխի գլխարկը գցել:

— Ափսո՛ւ,— մրմնջաց նա:— Մի քիչ ցած բռնեի, ես նրա գլուխը կթոցնեի:

Հանկարծ ջահը մարեց, և հակառակորդի մարտկոցը թաղվեց խավարի մեջ:

— Դե լավ,— ասաց Լանտենակը և դառնալով իր թընդանոթաձիգներին՝ հրաման տվեց.— Կարտե՛չ:

Գովենն էլ իր հերթին խիստ մտահոգված էր: Նրա ջուկատի դրությունը վատանում էր: Ծակատամարտը նոր փուլ էր թևակոխում: Բարիկադից սկսեցին թնդանոթներով կրակել: Կարելի՞ էր երաշխավորել, որ հակառակորդը պաշտպանությունից հարձակման չի անցնի:

Նրա դիմաց, չհաշված վիրավորները, սպանվածներն ու փախածները, առնվազն հինգ հազար մարտիկ կար, այնինչ իր մոտ մնացել էր հազար երկու հարյուրից ոչ ավելի: Ի՞նչ կլինի հանրապետականների վիճակը, եթե թշնամին նկատի իր ջուկատի սակավաթիվ լինելը: Այն ժամանակ հարկ կլինի դերերը փոխել: Հիմա իրենք հարձակվում են, իսկ այն ժամանակ պիտի պաշտպանվեն: Եթե խոռվաքարները գրոհ սկսեն, ամեն ինչ կորած է:

Ի՞նչ անել: Ծակատ առ ճակատ բարիկադի վրա գրոհելու մասին մտածել անգամ չէր կարելի: Հազար երկու հարյուր հոգին չեն կարող պաշտպանված տեղից դուրս քշել հինգ հազարին: Բայց ուշացնելն էլ կարող էր ճակատագրական լինել: Այսպես թե այնպես հարկավոր էր վերջ դնել: Բայց ինչպե՞ս...

Գովենն այդ վայրի ծնունդն էր: Նա ծանոթ էր քաղաքի դիրքին և գիտեր, որ ջուկան, որտեղ ամրացել են վանդեցիները, ետևի կողմից կից է նեղ ու ոլորապտույտ փողոցների մի լաբիրինթոսի: Նա դարձավ իր համհարզին՝ քաջ կապիտան Գեշանին:

— Գեշա՛ն,— ասաց նա,— հրաման եմ տալիս ձեզ շարունակեցեք ամենաուժեղ կրակ տեղալ: Աշխատեցեք ճեղքել նրանց բարիկադը: Գլխավորն այն է, որ թշնամու ուշադրությունը ձեզ վրա պահեք:

— Հասկանում եմ,— պատասխանեց Գեշանը:

— Ծարք կանգնեցրեք բոլոր զինվորներին: Թող բոլորը հրացանները լցնեն և պատրաստ լինեն գրոհի:

Հետո նա էլի մի քանի խոսք ասաց կապիտանի ականջին:

— Հասկանում եմ,— նորից կրկնեց Գեշանը:

— Մեր բոլո՞ր թմբկահարները ողջ են:

— Բոլորը,— պատասխանեց Գեշանը:

— Մենք ինը թմբկահար ունենք: Երկուսը թողեք ձեզ մոտ, իսկ յոթը տվեք ինձ:

Յոթ թմբկահարներ լուռ առաջ եկան և շարվեցին հրամանատարի դիմաց: Այն ժամանակ նա գոչեց.

— Կարմիր գդակ գումարտակ, ինձ մո՛տ:

Ծարքերից առաջ եկան տասներկու մարդ, հաշված նաև սերժանտին:

— Ես պահանջեցի ամբողջ գումարտակը:

— Ամբողջն այս է,— պատասխանեց սերժանտը:

— Ինչպե՛ս: Ընդամենը տասներկու հոգի՞ եք:

— Այո, մնացել է միայն տասներկուսը:

— Դե լավ,— ասաց Գոլվենը:

Սերժանտը այն նույն կոպտավուն ու բացսիրտ Ռադուքն էր, որն իր գումարտակի անունով որդեգրեց Սողոմեի անտառում գտած երեք որբ երեխաներին:

Այդ գումարտակի կեսը, եթե բնութագրողը հիշում է, ոչընչացվել էր Էրբ-ան-Պալլ ագարակում, բայց Ռադուքը մի երջանիկ պատահականությամբ ողջ էր մնացել:

— Մարտկոցի կողքին կանգնած էր ձիերի կեր բերած մի ֆուրգոն: Գոլվենն այն մատնացույց անելով Ռադուքին՝ ասաց.

— Սերժա՛նտ, թող ձեր մարդիկ իրենց հրացաններին ծղոտ փաթաթեն, որպեսզի քայլելիս չզրնգան:

Անցավ մի քանի րոպե: Հրամանը կատարված էր խավարի մեջ լուռ ու մունջ:



— Պատրաստ է,— գեկուցեց սերժանտը:

— Զինվորներ, հանեցե՛ք ձեր կոշիկները,— հրամայեց Գովենը:

— Մենք կոշիկ չունենք,— պատասխանեց սերժանտը:

Յոթ թմբկահարներին էլ հաշված՝ կազմվեց տասնինը հոգուց բաղկացած մի ջոկատ: Գովենը քսաներորդն էր:

Նա հրաման տվեց.

— Մեկ շարք կազմել: Իմ ետևի՛ց: Թմբկահարներն առաջ, գումարտակի զինվորները նրանց ետևից: Սերժանտ, ձեզ եմ հանձնում գումարտակի հրամանատարությունը:

Նա զորասլան գլուխն անցավ, և երկու կողմից շարունակվող թնդանոթաձգության որոտի տակ այդ քսան մարդը ստվերի պես սողալով խորացան ամայացած փողոցների լաբիրինթոսի մեջ:

Այսպես նրանք գնացին բավական երկար, անցնելով տների մոտով: Ամբողջ քաղաքն ասես մեռած լիներ, բնակիչները թաքնվել էին նկուղներում:

Բոլոր խլափեղիկերը ծածկված էին, բոլոր դռները՝ փակված սողնակով: Ոչ մի տեղ լույսի նշույլ չէր երևում:

Ամայի փողոցների լռության մեջ գլխավոր փողոցից եկող որոտը ավելի ուժեղ էր թվում: Հրետանային մարտը շարունակվում էր: Հանրապետական մարտկոցը և ռոյալիստական բարիկադը կատաղորեն կարտեչ էին տեղում իրար վրա:

Քսան թույե այսպես քայլելուց հետո Գովենը, որ վրստահորեն առաջ էր գնում գալարուն փողոցներով, իր ջոկատը հասցրեց այն նրբափողոցի ծայրը, որ շուկայի ետեվի կողմում դուրս էր գալիս գլխավոր փողոց:

Կովողների դրությունը փոխվեց: Այս կողմից բարիկադը պաշտպանված չէր, մի բան, որ բոլոր բարիկադ կառուցողների մշտական սխալն է, և Գովենի ջոկատի համար ամենեփն դժվար չէր մտնել շուկայի պլանաշարի տակ, որտեղ մի քանի սալ արդեն լծված՝ պատրաստ էին ճանապարհ ընկնելու: Գովենի և նրա տասնինը զինվորների առաջ էլի վանդեացիների նույն հինգ հազարանոց բանակն էր, բայց հիմա իրենք անցել էին նրա թիկունքը:

Գովենն ինչ-որ բան շնչաց սերժանտի ականջին: Հրացաններին փաթաթած ծղոտը պոկեցին: Տասներկու գրեմա-

դերները շարք կազմեցին նրբափողոցի անկյունում: Բոլոր յոթ թմբկահարները փայտիկները բարձրացրած սպասում էին հրամանի:

Թնդանոթային համազարկերը կարճ դադարներով հաջորդում էին իրար: Եվ ահա այդպիսի մի դադարի պահին Գովենը թափահարեց իր սուները և մի վայրկյան տիրած լուրջյան մեջ փողի նման հնչող իր բարձր ձայնով գոչեց.

— Երկու հարյուր մարդ դեպի ա՛ջ, երկու հարյուրը՝ դեպի ձա՛խ, մյուսները ուղիղ առա՛ջ:

Որոտաց տասներկու հրացանների կրակոցը, յոթ թըմբուկները «գրոհ» թմբկահարեցին: Եվ Գովենը հրաման տվեց.

— Սվինամա՛րտ, տղե՛րք, զարկե՛ք:

Սա հանրապետականների զարհուրելի կանչն էր, որ սարսափ էր գցում սպիտակների վրա:

Բազմահազար գյուղացիական հորդան իր թիկունքում զգալով թշնամուն՝ երևակայեց, թե իր վրա նոր բանաժ է հարձակվում: Միևնույն ժամանակ հանրապետականների այն զորամասը, որ Գաշենի հրամանատարությամբ մնացել էր գլխավոր փողոցի ծայրում, թմբկահարության ձայնը լսելով նույնպես գրոհի թմբուկ զարկեց և արագ քայլով շարժվեց դեպի բարիկադ: Վանդեացիներն ընկան երկու կրակի մեջ: Խուճապ սկսվեց, իսկ խուճապը մի կոշմար է, որի ժամանակ ամեն ինչ մարդու աչքին ավելի մեծ է պատկերացում. ամեն մի խոսք վախեցնում է ուրվականի պես, ատըրճանակի կրակոցը թնդանոթների համազարկ է թվում, շան հաչոցը՝ առյուծի մոնչոց:

Մի քանի րոպեում շուկան դատարկվեց: Սարսափահար գյուղացիները ցրիվ եկան ով ուր կարող էր: Սպաները ոչինչ անել չկարողացան: Իմանույլը փախչողներից երկու-երեքին սպանեց, բայց դա էլ չօգնեց: Ամեն կողմից լսվում էր՝ «նվ կարող է՝ գլուխը փրկի՛»: Եվ այդ ամբողջ բանակը մաղվող աղյուրի պես քաղաքի փողոցներով բաց դաշտը թափվեց հողմահաված ամպերի արագությամբ:

Մարկիզ դը Լանտենակն այդ խուճապի վկան եղավ: Նա իր ձեռքով փչացրեց թնդանոթները և հանգիստ ու համաշափ քայլերով վերջինը հեռացավ՝ ասելով.

— Այո, գյուղացիներով ոչինչ չի կարելի անել: Մեզ անգլիացիներն են հարկավոր:

#### IV. ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ

Հաղթանակը կատարյալ էր:

Գովենը դարձավ Կարմիր գդակ գումարտակի զինվորներից և ասաց.

— Դուք տասներկու հոգի եք, բայց հազարներ արժեք:

Հրամանատարի գովասանքն այն ժամանակներում հավասար էր շքանշան ստանալուն:

Գեշանի ջոկատը, որին Գովենն ուղարկել էր փախչողներից հետապնդելու, շատ գերիներ բերեց:

Չահեր վառեցին և սկսեցին քաղաքը խուզարկել:

Բոլորը, ովքեր փախել չէին հասցրել, անձնատուր եղան: Գլխավոր փողոցը լուսավորեցին լապտերներով. այնտեղ ամենուրեք փոված էին սպանվածների դիակներ ու վիրավորներ: Յուրաքանչյուր մարտ սովորաբար վերջանում էր մանր ընդհարումներով. խիզախների մի քանի խմբեր դեռ ջարուհակում էին դիմադրել: Նրանց շրջապատեցին, և նրանք էլ զենքերը ցած դրին:

Փախուստի խելացնոր իրարանցման մեջ Գովենը նկատել էր մի անվեհեր մարդ. ժիր ու համարձակ այդ մարդը կոպում էր ջանալով կանգնեցնել ընկերների փախուստը, իսկ ինքը փախուստի մասին չէր էլ մտածում: Նա հիանալի էր գործում իր՝ կարաբիճով. մերթ կրակում էր, մերթ հարվածում կոթով, այնպես որ վերջում կարաբիճը փշուր-փշուր եղավ: Այժմ նա մի ձեռքով ատրճանակն էր բռնել, մյուսով՝ թուրը: Նրան մոտենալ վախենում էին: Հանկարծ Գովենը տեսավ, որ նա երեքաց և հենվեց սյունին: Ըստ երևույթին վիրավորված էր: Բայց այդ վիճակում էլ նա թուրն ու ատրճանակը ձեռքից բաց չթողեց: Գովենն իր թուրը թևի տակ դրեց և մոտեցավ նրան:

— Անձնատուր եղիր, — ասաց նա:

Վիրավորն ակնապիշ նայեց նրան: Նրա բաճկոնի

տակից արյուն էր հոսում, և ոտքերի տակ արդեն արշամ լնակ էր գոյացել:

— Դու իմ գերին ես,— շարունակեց Գովենը:

Վիրավորը լուռ էր:

— Ի՞նչ է քո անունը:

Նա պատասխանեց.

— Մահվան պար— ահա իմ անունը:

— Կեցցե՛ս դու,— ասաց Գովենը և ձեռքը մեկնեց նրան: Վանդեազին պատասխանի փոխարեն գոչեց.

— Կեցցե՛ թագավորը:

Վերջին ուժերը հավաքելով նա երկու ձեռքն էլ բարձրացրեց և մի ձեռքով ատրճաճակը կրակեց Գովենի վրա, մյուսով թուրը ճոճեց նրա գլխին:

Այս ամենը նա կատարեց վագրի ճարակությամբ: Բայց մեկը նրանից ավելի ճարակիկ դուրս եկավ: Դա մի ձիավոր էր, որ դրանից մի քանի թույլ ատաջ եկել էր և լուռ դիտում էր այդ տեսարանը: Տեսնելով, որ վանդեազին ատրճաճակը բարձրացրեց և թուրը վրա բերեց, նա նետովեց վիրավորի և Գովենի միջև: Չիներ նա՝ Գովենն սպանված կլիներ: Գնդակը դիպավ ձիուն, թրի հարվածը բաժին ընկավ մարդուն, և երկուսն էլ՝ ձին ու ձիավորը ցած ընկան: Այս ամենը տեղի ունեցավ մի ակնթարթում:

Վանդեազին վերքից թուլանալով՝ ուժասպառ ընկավ սալահատակին:

Թուրը կտրել էր անձանոթի դեմքը: Նա ընկած էր անզգա: Ձին սպանված էր:

Գովենը կոացավ նրանց վրա:

— Ո՞վ է այս մարդը,— հարցրեց նա անձանոթին նայելով:

Բայց վերքից ցայտող արյունը ծածկել էր նրա դեմքը կարմիր դիմակի պես, որի տակ ոչինչ չոկել չէր կարելի: Երևում էին միայն ճերմակ մազերը:

— Այս մարդը փրկեց իմ կյանքը,— ասաց Գովենը:— Ոչ ոք չգիտե՞, թե ով է սա:

— Հրամանատար,— խոսեց զինվորներից մեկը,— նա հենց նոր է եկել քաղաք: Ես տեսա, թե ինչպես էր գալիս Պոնտորսոնի կողմից:

Մոտեցավ գորաստան ավագ բժիշկը: Վիրավորը դեռ ուշ-  
քի չէր եկել: Բժիշկը զննեց նրան և ասաց.

— Դատարկ բան է. կտրվածքը խոր է, բայց վտանգա-  
վոր չէ: Մենք վերքը կկարենք, և մի շաբաթ անց սա ոտքի  
վրա կլինի: Բայց հարվածը քաջի հարված է եղել:

Անձանոթը եռագույն նշանով թիկնոց ունեւր վրան: Նա  
ունեւր նաև ատրճանակներ և թուր: Նրա շորերը հանեցին  
և իրեն պատգարակի վրա դրին: Մի դույլ սառը ջուր բերին,  
բժիշկը նրա վերքը լվաց: Այժմ կարելի էր երեսը տես-  
նել: Գոլենը նայեց նրան լարված ուշադրությամբ:

— Մոտը թղթեր կա՞ն,— հարցրեց նա:

Բժիշկը տնտղեց վիրավորի կողքի գրպանը, այնտեղից  
մի թղթապանակ հանեց և մեկնեց Գոլենին: Մինչ այդ  
վիրավորը սառը ջրից սկսել էր ուշքի գալ, նրա թարթիչ-  
ները թույլ շարժվեցին:

Գոլենը պրպտեց թղթապանակի ներսը և գտավ չորս-  
տակ ծալած մի թերթ թուղթ: Նա թուղթը բացեց ու կարդաց.

«Հասարակական փրկության կոմիտե: Քաղաքացի Սի-  
մոնդենը...»

— Սիմոնդեն՝ն,— դուրս թռավ նրա կրծքից:

Վիրավորը լսեց այդ բացականչությունը և աչքերը բաց  
արավ: Գոլենն ուրախությունից ուշքի գալ չէր կարողանում:

— Սիմոնդեն: Այս դո՞ւք եք... Երկրորդ անգամ եք  
դուք իմ կյանքը փրկում...

Սիմոնդենը նայեց նրան: Անասելի ուրախությամբ շո-  
ղաց նրա արնաշաղախ դեմքը:

Գոլենը նրա առաջ ծունկ չոքեց:

— Իմ ուսուցի՛չ,— գոչեց նա:

— Քո հայրը,— խոսեց Սիմոնդենը:

## V. ՄԻ ԿԱԹԻԼ ՍԱՌԸ ԶՈՒՐ

Արդեն շատ տարիներ նրանք իրար չէին տեսել, բայց  
սրտով միշտ անբաժան էին եղել: Հիմա նրանց թվում էր,  
թե հենց երեկ են իրարից բաժանվել:

Քաղաքապետարանի շենքում շտապ կարգով երթալիմ

հիվանդանոց էին սարքել: Սիմուրդենին տեղավորեցին մի առանձին փոքրիկ սենյակում, որը կից էր վիրավորներից հատկացված ընդհանուր խոշոր դահլիճին: Նրա վերքը կարող վիրաբույժը վերջ դրեց երկու բարեկամների փոխադարձ զեղումներին, հայտարարելով, թե վիրակապությունից հետո հիվանդին անհրաժեշտ է քնել: Ասենք Գովենին էլ անհետաձգելի գործեր էին սպասում, որոնք միշտ հաղթանակից հետո թափվում են հրամանատարի գլխին: Սիմուրդենը մենակ մնաց, բայց չքնեց. երկու տեսակի տենդ նրան չէին թողնում քնել՝ ուրախության տենդը և վերքի տենդը:

Նա քնած չէր, բայց և այնպես իրեն թվում էր, թե երազ է տեսնում: Հնարավոր՝ բան է արդյոք: Նրա կյանքի երազն իրականացել էր: Սիմուրդենը չէր հավատում, թե ինքը երջանիկ աստղ ունի, և հանկարծ բախտը նրան ժպտաց. նա գտավ Գովենին: Երեխա էր թողել նրան, այնինչ հանդիպել էր, երբ արդեն նա տղամարդ էր՝ քաջ, ուժեղ ու անվեհեր:

Նա տեսավ հաղթանակի րոպեն՝ ժողովրդական գործի համար մղվող պայքարում: Վանդեայում Գովենը հեղափոխության պլաներից մեկն էր. և այդ նա՝ Սիմուրդենն էր ստեղծել հեղափոխության այդ հենարանը: Այս հաղթանակողն իր սանն է: Այդ երիտասարդական դեմքին շողացող միտքն ու ճշմարտությունը նրա՝ Սիմուրդենի միտքն էր ու ճշմարտությունը: Նրա աշակերտը, նրա հոգեզավակն արդեն հերոս է դարձել, իսկ մոտիկ ապագայում գուցե ևս ամբողջ հայրենիքի պարծանքը կդառնա:

Խորհելով հենց նոր ստացած իր տպավորության՝ մասին՝ Սիմուրդենը պառկել էր արթուն, և նրա հոգին թրթռում էր մի տեսակ խորհրդավոր զմայլանքով:

Ֆրանսիայի հորիզոնում ծագում էր մի նոր, շողշողուն լուսատու, մի երիտասարդ կյանք, որը փարթամ ծաղկում է խոստանում և, որ խորապես ուրախացնում էր նրան, այդ կյանքի ապագա բախտը իր՝ Սիմուրդենի ձեռքում էր: Էլի մի այդպիսի հաղթանակ, որին նա ակամատես եղավ, նրա առաջին իսկ խոսքով հանրապետությունը Գովենին բանակի գլուխ կկանգնեցնի:

Ոչ մի բան այնպես չի կուրացնում մարդուն, որքան անսպասելի հաջողությունը: Դա մի ժամանակ էր, երբ բոլո-

որ ռազմական փառք էին երազում. ամեն մեկն ուզում էր ստեղծել իր զորապետը: Սիմուրդենն ուզում էր Գովենհին տեսնել մեծ զորավար դարձած: Նա արդեն նրան տեսնում էր (երազանքը թռչում է թռչունի պես) օվկիանոսի վրա՝ փնխշող անգլիացիներին հետապնդելիս, Հոենոսի վրա՝ թագավորների կռաւիցիային պատժելիս, Պիրենյան լեռնաշղթայի վրա՝ իսպանացիներին քշելիս, Ալպերում՝ Հռոմին ապստամբությանն նշան տալիս: Սիմուրդենի մեջ ապրում էին երկու մարդ, մեկը՝ քնքուշ սրտով, մյուսը՝ դաժան, որի համար անդորդելի շիտակությունը իդեալ էր, և երկուսն էլ գոհ էին, որովհետև Գովենհի մեջ նա տեսնում էր ոչ միայն քաջարի առաջնորդ, այլև ահեղ վրիժառու: Սիմուրդենը համոզված էր, որ նախքան կառուցելը հարկավոր է ավերել: «Հիմա քնքշություն անելու ժամանակը չէ», — ասում էր նա: Եվ հավատացած էր, որ Գովենը դրության բարձրության վրա կլինի, ինչպես արտահայտվում էին այն ժամանակներում: Նա Գովենին պատկերացնում էր փառքով պսակված:

Նրա երազանքը համարյա զմայլանքի հասավ, երբ հանկարծ իր սենյակի կիսաբաց դռնից լսեց Գովենի ձայնը: Նա սկսեց ականջ դնել: Քայլերի աղմուկ լսվեց: Զինվորներից մեկն առաջ.

— Հրամանատար՝, ահա այն մարդը, որ ձեր վրա կրակեց: Նա սողեսող հեռացել էր և արդեն թաքնվում էր նկուղում, բայց մենք նրան գտանք: Ահա նա:

Հետո Սիմուրդենը լսեց Գովենի ու գերոս այսպիսի խոսակցությունը.

— Դու վիրավորված ես:

— Ես ինձ այնքան լավ եմ զգում, որ կարող եմ գրնդակահարվել:

— Անկողին դրեք այս մարդուն: Փաթաթեցեք նրա վերքը և բուժեցեք նրան:

— Ես ուզում եմ մեռնել:

— Դու չես մեռնի: Դու ուզում էիր ինձ սպանել հանուն թագավորի, ես քեզ եմ նվիրում քո կյանքը հանուն հանրապետության:

Մի մութ ամպ անցավ Սիմուրդենի դեմքով: Ասես մի կոպիտ ձեռքի հրմշտոցից նա սթափվեց իր երազանքից և

չարագույժ զգացումներից տանջվելով՝ ցածր ձայնով մըր-  
մընջաց.

— Այո, իրոք որ նա փափկասիրտ է:

## VI. ՎԵՐՔԸ ԼԱՎԱՅԱՎ, ԲԱՅՅ ՍՐՏԻՅ ԱՐՅՈՒՆ ԷՐ ԾՈՐՈՒՄ

Սիմուրդենի վերքը շուտով ապաքինվեց: Բայց կար մի  
էակ, որն ավելի ծանր վերքեր ուներ: Դա այն գնդակոծված  
վանդեացի կինն էր, որին թափառաշրջիկ Տելմարշը վերց-  
րեց Էրբ-ան-Պալլ ագարակում, արյան լճակի մեջ:

Միշել Ֆլեշարի դրությունն ավելի վտանգավոր էր, քան  
կարծում էր Տելմարշը: Նա երեք վերք էր ստացել. մի գրն-  
դակ դիպել էր կրծքի խոռոչի վերին մասին և դուրս եկել  
մեջքից, կոտրելով թիակը, մի ուրիշ գնդակ կոտրել էր ան-  
րակը, երրորդը՝ ուսուկրը: Բայց թոքերը չէին վնասվել, նա  
կարող էր ապաքինվել:

Վերջապես եկավ օրը, երբ կինը կարող էր Տելմարշի  
ձեռքին հենված դուրս գալ բաց օդ: Տելմարշը նրան նստեց-  
րեց արևի տակ: Նա համարյա ոչինչ չգիտեր այդ կնոջ մա-  
սին: Կրծքի վերքը լիակատար հանգիստ էր պահանջում, և  
Տելմարշը նրան չէր թողնում խոսել: Կինը լուռ էր, բայց  
Տելմարշը աչքերի արտահայտությունից հասկանում էր,  
որ մի ինչ-որ բան տանջում է նրան, որ մի ինչ-որ համառ  
միտք հետապնդում է նրան: Այս առավոտ նա ավելի կայ-  
տառ էր և կարող էր քայլել համարյա առանց օգնության:  
Բարի ծերունին նրան նայում էր երջանիկ աչքերով, հա-  
մարյա հայրական քնքշությամբ: Նա ժպտաց հիվանդին և  
ասաց.

— Դե, ահա և մենք ուռքի վրա ենք: Մեր բոլոր վերքերն  
ապաքինվել են:

— Միայն սիրտս է ցավում,— ասաց կինը և ավելաց-  
րեց.— Դուք ուրեմն չգիտե՞ք... բոլորովին չգիտե՞ք, թե որ-  
տեղ են նրանք:

— Ովքե՞ր,— հարցրեց Տելմարշը:

— Իմ երեխաները:

Տենդի ու ինքնամոռացության մեջ նա շատ անգամ էր



կանչել իր երեխաներին ու տեսել, որովհետև զատանցելիս էլ մարդ շատ բան է տեսնում, որ ծերունին չի ուզում իրեն պատասխանել:

Բայց Տելմարշը իրոք որ չգիտեր ինչ ասել նրան: Հեշտ բան չէ մոր հետ խոսել նրա կորած զավակների մասին: Եվ, ասենք, ի՞նչ գիտեր նա: Ոչինչ: Նա գիտեր միայն, որ գնդակահարել էին մի ինչ-որ մոր, որ ինքն այդ մորը գտել է արյան լճակի մեջ, որ այդ կնոջը վերցնելիս նա համարյա դիակ էր, որ այդ դիակն ունեցել է երեք երեխա և որ Լանտենակը մորը գնդակահարելուց հետո երեխաներին տարել է իր հետ: Այսքանով էլ վերջանում էին նրա բոլոր տեղեկությունները: Ի՞նչ էր եղել երեխաներին: Արդյոք դեռ կենդանի՞ էին նրանք... Նրան ասել էին, որ դրանք երկու տղա էին և մի աղջիկ, որը հենց նոր էր ծծից կտրվել: Ահա ամբողջը: Նրան էլ էր տանջում այդ դժբախտ երեխաների վիճակի հարցը, բայց ինքն էլ պատասխան չէր գտնում: Նա փորձեց հարցուփորձ անել շրջակայքի գյուղացիներին, բայց նրանք միայն գլուխներն էին օրորում ու լռում: Լանտենակն այնպիսի մարդ էր, որի մասին խոսել չէր կարելի:

Գյուղացիները խուսափում էին Լանտենակի մասին խոսելուց և դժկամությամբ էին խոսքի բռնվում Տելմարշի հետ: Ընդհանրապես գյուղացիները թերահավատ մարդիկ են: Տելմարշին նրանք չէին սիրում: Թափառաշրջիկ Տելմարշը անհամազուտ մարդ էր: Ինչո՞ւ է նա շարունակ դեպի երկինք նայում: Ի՞նչ է անում նա, ինչի՞ մասին է մտածում, երբ ժամերով արձանի պես կանգնում է մի տեղ: Անտառակույս նա տարօրինակ մարդ է: Պատերազմի բոցերով բռնված երկրում, մի երկրում, որտեղ բոլորն ապրում են ասես հրաբուխի վրա, որտեղ մարդիկ միայն մեկ հետաքրքրություն ունեն՝ ավերում, մեկ գործ ունեն՝ կոտորած, որտեղ ամեն ոք մտածում է միայն, թե ինչպես վառի թշնամու տունը, ջնջի նրա ընտանիքը, կոտորի հակառակորդի պահակներին, ավերի գյուղը, դարան սարքի և թշնամուն որոգայթի մեջ գցի, մի երկրում, որտեղ բոլորը ոչնչացնում են իրար, այդ ճղգնավորը, որ տարված է բնությունը դիտելով, ականջ է դնում անծայրածիր աշխարհի հանդիսավոր լուռությանը, խոսեր է հավաքում և հետաքրքրվում միայն ծաղիկներով,

թռչուններով ու աստղերով, ակնհայտորեն վտանգավոր մարդ է: Պարզ բան է. նրա գլուխը կարգին չէ: Նա թփերի ետևը չի թաքնվում, ոչ ոքի վրա չի կրակում: Հասկանալի է, որ շուրջը բոլորը վախենում էին նրանից:

— Նա ցնորված է,— ասում էին ժողովրդի մեջ:

Եվ Տելմարը դարձել էր միայնակ մարդ. նա դարձել էր մի մարդ, որից խուսափում էին:

Նրան հարցերով չէին դիմում և նրա հարցերին չէին պատասխանում: Դրա համար, որքան էլ ցանկանար, նա Միշել Ֆլեշարի երեխաների մասին ոչինչ չէր կարող իմանալ:

Թշվառ մորից լսելով «իմ երեխաները» բառերը, Տելմարը դադարեց ժպտալ, իսկ մայրը նորից սուզվեց իր մտքերի մեջ: Ի՞նչ էր կատարվում նրա խեղճ հոգու մեջ: Նա ասես ընկել էր անհատակ մութ փոսի մեջ... Բայց հանկարծ նա նայեց Տելմարին և համարյա զայրույթով գոռաց.

— Իմ երեխաները:

Տելմարը մեղավորի պես գլուխը կախ գցեց:

Նա մտածում էր մարկիզի մասին, որը, իհարկե, Տելմարին մասին չէր էլ մտածում և, հավանորեն, նույնիսկ մոռացել էր նրա գոյությունը: Տելմարը շատ լավ էր հասկանում այս: Նա ինքն իրեն ասում էր. «Երբ մեծանում աղան փորձանքի մեջ է, դու նրան պետք ես, և նա քո բարեկամն է, իսկ երբ փորձանքն անցել է, նա քեզ ճանաչել անգամ չի ուզում»: Եվ նա ինքն իրեն հարց տվեց. «Ախր ի՞նչո՞ւ դու փրկեցիր այն աղային»: Եվ իսկույն էլ պատասխանեց. «Որովհետև նա մարդ է»: Նա մի քանի րոպե մտածեց, ապա ինքն իրեն առարկեց. «Դե լավ, մի՞թե նա մարդ է»: Եվ նորից նրա կրծքից դուրս թռավ մի դառն բացականչություն.

— Եթե ես իմանայի՜...

Նա գլուխ էր կոտրում, ջանալով որոշել, թե ճի՞շտ է վարվել ինքը: Տանջալից էր դրա մասին մտածելը: Նշանակում է լավ արարքը կարող է վատ դուրս գալ: Ով փրկում է գայլին, կործանում է ոչխարին: Ով բուժում է ուրուրի կոտրված թևը, պատասխանատու է նրա ճիրանների համար: Նա անկեղծորեն իրեն մեղավոր էր զգում: Թշվառ մայրն իրավացի էր զայրացել:

Այո, ինքը մեղավոր է. ինքը փրկել է մարկիզին: Բայց չէ՞ որ ինքը փրկեց նաև այս կնոջը: Եվ այս միտքը որոշ չափով մխիթարեց նրան:

Բայց երեխաները: Ի՞նչ եղան երեխաները: Որտե՞ղ են նրանք...

Այս էր մտածում նաև կինը: Այս երկու մարդկանց մըտքերը գնում էին միևնույն ուղղությամբ, և թեև նրանք ոչ մի խոսք չէին փոխանակում, նրանց մտքերը միաձուլվում էին աղոտ երազանքների մեջ:

Բայց անհա կնոջ վշտահար հայացքը նորից կանգ առավ Տեղմարշի վրա:

— Այսպես շարունակվել չի կարող,— խոսեց կինը:

— Ս-ս-ս՝,— շնչաց Տեղմարշը՝ մատն իր շուրթերին դնելով:

Կինը նրան չլսելով շարունակեց.

— Ինչո՞ւ դուք ինձ փրկեցիք: Ես աչդ չեմ ների ձեզ: Ավելի լավ կլիներ, եթե մեռնեի. ես այնտեղից նրանց կտեսնեի: Ես կիմանայի, թե որտեղ են նրանք: Նրանք ինձ չէին տեսնի, բայց ես նրանց մոտ կլինեի... Մեռյալն էլ կարող է պաշտպանել իր զավակներին:

Տեղմարշը բռնեց կնոջ ձեռքը և զարկերակը շոշափեց.

— Հանգստացեք: Ձեր տենդը նորից է սկսվում:

Կինը համարյա կոպտաբար հարցրեց նրան:

— Ես ե՞րբ կարող եմ գնալ:

— Գնա՛լ:

— Այո: Գնալ նրանց որոնելու:

— Երբե՛ք, եթե դուք շարունակեք հուզվել: Իսկ եթե ձեզ լավ պահեք, գուցե վաղը կարողանաք գնալ:

— Ձեր կարծիքով ի՞նչ է նշանակում՝ ձեզ լավ պահել:

— Հույսը դնել աստծու վրա:

— Աստծո՞ւ: Իսկ ի՞նչ է արել նա իմ երեխաների համար:

Կինը զառանցանքի մեջ էր: Բայց անհա նրա ձայնը նորից մեղմացավ:

— Հասկացեք,— ասաց նա,— ես այսպես մնալ չեմ կարող: Դուք երեխաներ չեք ունեցել, իսկ ես ունեցել եմ. սա է տարբերությունը: Չի կարելի հասկանալ մարդու զգաց-

մոնքները, առանց նույնպիսի զգացմունքներ ապրելու: Դուք հո երբեք երեխաներ չեք ունեցել: Չէ՞:

— Չեմ ունեցել,— պատասխանեց Տելմարշը:

— Իսկ ես միայն երեխաներ եմ ունեցել: Ի՞նչ պիտի անեմ առանց նրանց: Գոնե ինձ բացատրեին... Ես ոչ մի կերպ չեմ հասկանում, թե ինչո՞ւ երեխաներիս խլեցին ինձնից: Ես տեսնում... զգում եմ, որ ինչ-որ տարօրինակ բան է կատարվում, բայց հասկանալ չեմ կարողանում: Ամուսնուս սպանեցին, ինձ զնդակոծեցին: Ինչի՞ համար... Ոչինչ չեմ հասկանում:

— Ա՛յ, ա՛յ, նորից սկսվում է ձեր ջերմությունը,— ասաց Տելմարշը.— այդքան շատ մի՛ խոսեք:

Կինը նայեց նրան ու լռեց: Այդ օրվանից նա բոլորովին դադարեց խոսել:

Տելմարշն այդպիսի հնազանդություն չէր սպասում: Դա նույնիսկ անհաճո էր նրան: Ամբողջ ժամերով կուչ եկած նստում էր նա պառավ կաղնու տակ, ասես քար կտրած լիներ:

Մտածում էր նա ու լուռ: Լռությունն ապաստանն է պարզ հոգու, որն ապրել է մարդկային վշտի ամբողջ խորությունը: Թվում էր, թե նա հաշտվել է այն մտքի հետ, որ հասկանալն անհնարին է: Հուսահատության սահմաններին հասած մարդը անտարբեր է դառնում:

Տելմարշը նայում էր նրան ու քիչ էր մնում լաց լինի խղճահարությունից: Տեսնելով այդ կնոջ տառապանքը՝ բարեսիրտ ծերունին ինքն էլ սկսում էր կանացիորեն զգալ ու մտածել: «Այո,— ասում էր նա ինքն իրեն,— նա լուռ է, բայց նրա աչքերը խոսում են: Ես տեսնում եմ, որ նրան հալածում է միևնույն անբաժան միտքը: Մայր լինել, ստնտու, և դադարել այդպիսին լինել: Նա սրա հետ հաշտվել չի կարող: Ես գիտեմ, նա մտածում է ամենից փոքրիկի մասին, որին դեռ վերջերս կրծքով է կերակրել: Նա շարունակ մտածում է նրա մասին, մտածում է ու մտածում»:

Եվ Տելմարշն ինքն էլ լռեց, հասկանալով, որ այդպիսի վշտի առաջ խոսքերն անգոր են:

Եվ ի՞նչ խոսքերով կարող եք մի մոր համոզել, որ դեռ նեոխ իրեն հետապնդող անբաժան միտքը:

Երեխաները փոքրիկ, անօգնական արարածներ են, որոնք հոգատարության ու զգվանքի կարիք ունեն։ Դրա համար էլ ամեն մի մայր այնպիսի մի բան ունի, որը բանականությունից և՛ ցածր է, և՛ բարձր. մայրը նրբազգացություն ունի։

Հիմա Տելմարշն ուզում էր այդ թշվառին ստիպել, որ խոսի, բայց այդ նրան չէր հաջողվում։ Մի անգամ ծերունին ասաց.

— Դժբախտաբար ես ծեր եմ և երկար քայլել չեմ կարող։ Ոչ մի տեղ ես չեմ հասնի. ուժերս չեն բավականացնի։ Քառորդ ժամ քայլելուց հետո ոտքերս հրածարվում են ինձ ծառայել, և ես ստիպված եմ լինում հանգստանալ, թե չէ ես էլ ձեզ հետ կգնայի... Ասենք, գուցե լավ է, որ ես քայլել չեմ կարողանում։ Թերևս ես ձեզ համար վտանգավոր ուղեկից կլինեի։ Այստեղ ինձ միայն հանդուրժում են, բայց չեն սիրում։ Կապույտներին ես կասկածելի եմ թվում, որովհետև գյուղացի եմ, իսկ գյուղացիներն ինձ կախարդ են համարում։

Նա պատասխանի էր սպասում։ Բայց կինը նույնիսկ գլուխը չբարձրացրեց նրան նայելու։

Անբաժան միտքը կամ ցնորամտության է հասցնում, կամ՝ հերոսության։ Բայց ի՞նչ հերոսության է ընդունակ խեղճ գեղջկուհին։ Նա միայն կարող է մայր լինել, ուրիշ ոչինչ։ Օրեցօր նա ավելի ու ավելի էր սուզվում իր մտքերի մեջ։ Տելմարշը լուռ դիտում էր նրան։

Նա աշխատում էր որևէ բանով զբաղեցնել այդ կնոջը. նրա համար թել, ասեղ ու մատնոց բերեց, և խեղճ թափառաշրջիկը շատ գոհ եղավ, որ կինն սկսեց կար անել։ Նա աշխատում էր՝ շարունակելով մտածել իր վշտի մասին։ Դա նրա առողջության առաջին նշանն էր։ Նրա ուժերն աստիճանաբար վերադառնում էին։ Նա նորոգեց իր սպիտակեղենը, իր հագուստը։ Կոշիկները։ Սակայն նրա աչքերն էլի անտարբեր էին նայում։ Աշխատելիս նա կիսաձայն ինչ-որ տխուր երգ էր երգում։ Երբեմն հանկարծ լուռ էր և ականջ դնում թռչունների ծվլոցին, ասես սպասում էր, թե նրանցից մի լուր կստանա իր երեխաների մասին։ Կամ թե սկսում էր ինչ-որ բան մրմնջալ քթի տակ։ Գուցե երեխաների

անուններն էր տալիս, բայց այնքան ցածր էր խոսում, որ Տելմարը ոչինչ չէր կարող հասկանալ: Երբեմն նայում էր երկնքին, կամ շուրջն էր դիտում: Նրա շրթունքները շարժվում էին անձայն: Նա մի տոպրակ կարեց և բերնեբերան լցրեց շագանակով: Մի առավոտ Տելմարը տեսավ, որ նա-  
նապարհ է ընկնում. նա իր անշարժ հայացքը հատել էր անտառի թավուտին:

— Այդ ո՞ր եք գնում, — հարցրեց ծերունին:

Կինը պատասխանեց.

— Գնում եմ նրանց որոնելու:

Տելմարը չփորձեց ետ պահել նրան:

## VII. ԾՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ԲԵՎԵՌ

Անցավ մի քանի շաբաթ՝ լեցուն քաղաքացիական կովի դեպքերով: Ֆուժերի շրջակայքում խոսում էին հենց միայն երկու մարդու մասին, որոնք այնքան նման չէին իրար, բայց աշխատում էին միևնույն գործի համար, հեղափոխության համար մղվող մեծ նակատամարտում կռվում էին կողք կողքի:

Վանդեայի դաժան մենամարտը շարունակվում էր, բայց Վանդեան արդեն կորցնում էր ոտքերի տակի հողը: Նրա գործերն առանձնապես վատ էին Իլյա-Վիլենում: Ծնորհիվ երիտասարդ հրամանատարի եռանդի, որը Դոլում այնպիսի հնարամտությամբ վեց հազար ոռյալիստների հանդուգն հարձակմանը հակադրեց մեկ ու կես հազար հայրենասերների խիզախությունը, ապստամբությունն այդ շրջանում եթե չճնշվեց էլ, ապա, համենայն դեպս, նկատելիորեն թուլացավ և սահմանափակվեց: Այդ հարվածին հետևեցին մի քանի ուրիշ ո՛չ պակաս հաջողակ հարվածներ, և այդ բոլոր հաջողությունները հասցրին իրերի նոր դրության: Հանգամանքները փոխվեցին, բայց այդ ժամանակ երևան եկավ մի անսպասելի բարդություն:

Վանդեայի այդ ամբողջ մասում հանրապետությունը հաղթող մնաց. սա ամեն կասկածից դուրս էր: Բայց ինչպիսի՞ հանրապետություն: Հեղափոխության վերջնական հաղթա-

նակի պահին նշվում էին հանրապետության երկու տեսակ՝ տեղորի հանրապետություն և գթասրտության հանրապետություն: Մեկը մտածում էր հաղթանակի հասնել դաժանությամբ, մյուսը՝ հեզաբարո միջոցներով: Բայց երկուսից ո՞րը կհաղթեր: Այդ երկու ձևերն էլ՝ հաշտվողականն ու անդրդվելին, ներկայացված էին հավասարապես ազդեցիկ ու հեղինակավոր երկու մարդկանցով: Դրանցից մեկը զորապետ էր, մյուսը՝ քաղաքացիական պատվիրակ: Դրանցից ո՞րը կհաղթեր: Քաղաքացիական պատվիրակի կողմը կար մեծ առավելություն՝ հանրապետական իշխանությունների պաշտպանությունը: Նա եկել էր Փարիզի կոմունայի ահեղ հրամանով՝ «Ոչ մի գթություն: Ոչ մի զիջում»: Նա բերեց Կոմպենտի դեկրետը, որի մեջ ասված էր. «Ամեն ոք, ով ազատ կարձակի խոտվարարների գերի առաջնորդին, մահապատիժ կստանա»: Նա անսահմանափակ լիազորություններ ուներ հասարակական փրկության կոմիտեից և հրաման՝ լիովին հնազանդվել նրան, որ ստորագրել էին Ռոբեսպիերը, Դանտոնն ու Մարատը: Մյուսը՝ զինվորականը, ուներ միայն մի ուժ՝ կարեկցություն:

Նրա օգտին էին խոսում միայն նրա քաջակորով ձեռքը, որը հարվածներ էր հասցնում թշնամուն, և սիրտը, որ խնայում էր պարտվածներին: Նա հաղթող էր և իր իրավունքն էր համարում խնայել:

Հետևանքը՝ ծածուկ, բայց խոր տարածայնությունն էր այդ երկու մարդկանց միջև: Նրանք տարբեր խառնվածքի մարդիկ էին: Երկուսն էլ պայքարում էին ապստամբության դեմ, և յուրաքանչյուրն ուներ իր միջոցը, մեկինը՝ հաղթանակը, մյուսինը՝ տեղորը:

Ամբողջ անտառային Բրետանը խոսում էր նրանց մասին, բոլորի հայացքը նրանց էր ուղղված: Նրանց նկատմամբ ընդհանուր հետաքրքրությունն ուժեղանում էր շնորհիվ այն բանի, որ, չնայած հայացքների կատարյալ հակադրության, նրանց միջև հոգեկան ամուր կապ կար: Այդ երկու հակառակորդները բարեկամներ էին: Դեռ երբեք չի եղել, որ համակրանքի ավելի վեճ ու ավելի խոր զգացմունք միացնի երկու սրտերը: Անողորք փրկեց գթասրտի կյանքը, և այդ հերոսությունը նրա դեմքին հետք թողեց մի խոր սպի՝

թի հարվածից: Այդ երկու մարդկանցից մեկը մահվան մարմնացումն էր, մյուսը կյանքի: Մեկը մարմնացնում էր ահաբեկման սկզբունքը, մյուսը՝ հաշտվելու սկզբունքը: Չնայած այս ամենին, նրանք սիրում էին իրար: Զարմանալի հանելուկներ են լինում:

Սրան ավելացնենք, որ երկուսից նա, որը «դաժանի» համբավ ուներ, միաժամանակ ամենաբարի մարդն էր: Նա անձամբ իր ձեռքով էր վերքերը փաթաթում, խնամում էր հիվանդներին, օր ու գիշեր լինում էր հիվանդանոցներում ու վիրակապարաններում, պատրաստ էր լալու ոտաբոբիկ ու քաղցած երեխաների համար, ինքը ոչինչ չուներ, որովհետև ամեն ինչ բաժանում էր աղքատներին: Նա մասնակցում էր բոլոր մարտերին, առաջ էր գնում գրոհողների առաջն ընկած, նետվում էր ամենաթեժ քախումների մեջ, զինված էր, որովհետև նրա գոտին ատրճանակներ էին խրված և նա թուր ուներ, և անգն էր, որովհետև ոչ ոք երբեք չէր տեսել, որ նա սուրը մերկացնի կամ ատրճանակներին դիպչի: Նա ընդառաջ էր գնում հարվածներին, բայց ինքը հարված չէր տալիս: Ժողովրդի մեջ խոսում էին, թե նա առաջ քահանա է եղել:

Այդ երկու մարդկանցից մեկը Գովենն էր, մյուսը՝ Սիմուրդենը:

Այս երկու մարդկանց միջև բարեկամություն կար, երկու սկզբունքների միջև՝ թշնամություն: Դրա հետևանքը խոր տարաձայնությունն էր: Այդ խուլ պայքարը չէր կարող բացահայտ չարտահայտվել: Եվ մի անգամ այն բորբոքվեց:

Սիմուրդենը Գովենին հարցրեց.

— Է, ի՞նչ կասես, ինչպե՞ս են մեր գործերը:

Գովենը պատասխանեց.

— Դուք այդ ինձանից լավ գիտեք: Լանտենակի հրոսակախմբերը ցաք ու ցրիվ են արվել: Նրան մի քանի տասնյակից ավելի մարդ չի մնացել: Նա սեղմվել է Ֆուժերի անտառին և մի շաբաթ չանցած՝ շրջապատված կլինի:

— Իսկ երկու շաբաթ հետո՞:

— Կբռնվի:

— Իսկ հետո՞:

— Դուք կարդացե՛լ եք իմ հայտարարությունը:



— Կարդացել եմ: Հետո ի՞նչ:

— Նա կզնդականհարվի:

— Դարձյալ զիջողություն: Նա պետք է մեռնի կառաւի-  
նարանի վրա:

— Ես զինվորական պատժի կողմնակից եմ,— ասաց  
Գովենը:

— Իսկ ես հեղափոխական պատժի կողմնակից եմ,—  
առարկեց Սիմուրդենը: Եվ Գովենի աչքերի մեջ նայելով  
հարցրեց.

— Դու ինչո՞ւ ես ազատ արձակել սուրբ Մարկոսի վան-  
քի վանուհիներին:

— Ես կանանց դեմ չեմ կռվում,— պատասխանեց Գո-  
վենը:

— Այդ կանայք ատում են ժողովրդին: Իսկ ատելության  
մեջ մի կինը տասը տղամարդ արժե: Ինչո՞ւ դու հեղափո-  
խական տրիբունալ չուղարկեցիր մոլեռանդ տերտերների  
այն ոհմակը, որոնց մենք գերի էինք բռնել Լուվինեում:

— Ես ծերունիների դեմ չեմ կռվում:

— Ծեր քահանան երիտասարդից վատ է: Ծերմակամազ  
ծերերի բարձրացրած խոտվությունը ամենավտանգավորն է:  
Կնճիռները հավատ եմ ներշնչում: Կեղծ գթասրտություն  
պետք չէ՝ Գովեն: Արքայապանները ժողովրդի ազատա-  
րարներն են: Ուշադիր հսկիր Տամպլի աշտարակին:

— Տամպլի աշտարակ: Եթե ինձնից կախված լիներ, ես  
այնտեղից բաց կթողնեի դոֆինին: Ես երեխաների դեմ չեմ  
կռվում:

Սիմուրդենի հայացքը խոժոռվեց.

— Դե ուրեմն իմացիր, Գովեն, որ պետք է անողորմ  
կռիվ մղել կնոջ դեմ, եթե նրա անունն է Մարիա Անտուա-  
նետա<sup>1</sup>, ծերունու դեմ, եթե նրա անունն է Պիոս Վեցերորդ  
պապ<sup>2</sup>, և երեխայի դեմ, եթե նրան կոչում են Լյուդովիկոս  
Կապետ<sup>3</sup>:

— Իմ թանկագին ուսուցիչ,— ասաց Գովենը,— դուք մո-  
ռանում եք, որ ես քաղաքական գործիչ չեմ:

<sup>1</sup> Մարիա Անտուանետա — Ֆրանսիայի թագուհի, Լյուդովիկոս XVI-ի  
կինը, մահապատժի է ենթարկվել 1793 թ. հոկտեմբերի 16-ին:

<sup>2</sup> Պիոս VI — Հռոմի պապ (1775-ից 1798 թթ.), հանրապետության  
կատաղի հակառակորդ:

<sup>3</sup> Լյուդովիկոս Կապետ — Լյուդովիկոս XVI-ի և Մարիա Անտուա-  
նետայի որդին, ֆրանսիական գաղափարագիր: Կալանավորված էր  
Փարիզի Տամպլ աշտարակում:

— Աշխատիր վտանգավոր մարդ չլինել... Ինչո՞ւ Կոստեի գրոհի ժամանակ, երբ մեր զորքերով շրջապատված և մահվան դատապարտված խոռվարար Ժան Տրետոնը մեն-մենակ, սուրը ձեռքին հարձակվեց մեր զորասլան վրա, դու զինվորներին ձայն տվիր. «Ե՛տ քաշվեցեք: Թողեք նրան առաջ գա»:

— Որովհետև հազարավոր զինվորների համար ամոքքան է հարձակվել մեկ մարդու վրա:

— Ինչո՞ւ Կալլետրի դ'Աստիլյեի մոտ, երբ տեսար, որ մեր զինվորները կանգ առան, որպեսզի սպանեն վիրավորված, գետնին սողացող Ժոզեֆ Բեզլեին, դու գոռացիր. «Հառա՛ջ: Ես ինքս հաշիվ կմաքրեմ»,— և կրակեցիր օդում:

— Որովհետև ընկածին չեն խփում:

— Եվ դու ճիշտ չես արել: Այդ երկու մարդն էլ խոռվարների խմբերի պարագլուխներ են դարձել: Ժոզեֆ Բեզլեն Ուսի նշանավոր առաջնորդն է, իսկ Ժան Տրետոնը՝ Ժամբ դ'Արժանն է: Այդ երկու մարդկանց փրկելով՝ դու հանրապետությանը երկու թշնամի ես տվել:

— Դուք լսվ գիտեք, որ ես հանրապետության համար ավելի շատ բարեկամներ կուզեի, և ոչ թշնամիներ:

— Իսկ ինչո՞ւ Լանդեանի մոտ տարած հաղթանակից հետո դու չհրամայեցիր գնդակահարել այդ երեք հարյուր գյուղացիներին, որոնց մենք գերի էինք վերցրել:

— Որովհետև դրանից առաջ Բոնշանը խնայել էր գերի հանրապետականներին, և ես ուզում էի բոլորն իմանալ, որ հանրապետականներն էլ խնայել են գերի ոռյալիստներին:

— Նշանակում է, եթե դու Լանտենակին բռնես, կխնայե՞ս նրան:

— Ո՛չ:

— Ինչո՞ւ: Չէ՞ որ խնայեցիր այն գյուղացիներին:

— Գյուղացիները խավար մարդիկ են, իսկ Լանտենակը գիտե, թե ինչ է անում:

— Բայց Լանտենակը քո ազգականն է:

— Իսկ Ֆրանսիան իմ մայրն է:

— Լանտենակը ծերունի է:

— Լանտենակը հասակ չունի: Լանտենակը մեզ համար օտար է: Նա ֆրանսիացի չէ. նա մեզ անգլիացիների ձեռքն

է մատնում: Լանտենակը ծտարերկրացիների ներխուժում է պատրաստում: Նա հայրենիքի թշնամիմ է: Մեր մեծամարտը կարող է վերջանալ միայն նրա կամ իմ մահով:

— Գովեն, հիշիր, թե հիմա ինչ ասացիր դու:

— Կհիշեմ:

Լոռւթյուն տիրեց: Նրանք իրար էին նայում: Գովենը շարունակեց.

— Պատմության մեջ արյունոտ տարերթիվ է լինելու այս իննսուներեք թվականը:

— Զգուշացի՛ր,— գոչեց Սիմուրդենը:— Լինում են զարհուրելի պարտականություններ: Մի՛ մեղադիր նրան, ով մեղք ունենալ չի կարող: Այդ ո՞ր ժամանակից է, որ հիվանդությունների գոյության համար մեղավոր են բժիշկները: Այո, այս մեծ տարին նշանավոր է անողորթությամբ: Իսկ ինչո՞ւ: Որովհետև սա հեղափոխության տարի է: Հեղափոխությունը թշնամի ունի, դա մեռնող աշխարհն է, և հեղափոխությունն անողորբ է նրա նկատմամբ, ինչպես վիրաբույժըն է անողորբ իր թշնամու՝ փտախտի նկատմամբ: Հեղափոխությունը բնաջնջում է թագավորական իշխանությունը ի դեմս թագավորի, արիստոկրատիային՝ ի դեմս ազնվականի, բռնակալությունը՝ ի դեմս զինվորական իշխանությունների, սնահավատությունը՝ ի դեմս քահանայի, բարբարոսությունը՝ ի դեմս դատավորների: Մի խոսքով բնաջնջում է այն ամենը, ինչ կոչվում է բռնակալություն, ի դեմս նրանց, ովքեր բռնակալ են: Տանջալից գործողություն է սա, բայց հեղափոխությունը կատարում է վստահորեն: Եվ դու կարողանում ես նրանից պահանջել, որ գթա ամբողջ հասարակական օրգանիզմը թունավորող թարախակալած խոցը... Ո՛չ, նա քեզ չի՛ լսի: Նա իր ուժեղ ձեռքերի մեջ ամուր է բռնել մեր նողկալի անցյալը և վերջ կտա նրան: Քաղաքակրթության մարմնի վրա նա մի խոր կտրվածք կանի, որը կառողջացնի մարդկությանը... Ցավո՛ւմ է, ասում եք դուք: Այո, ցավում է, առանց դրան չի լինի: Իսկ էլի շա՞տ է ցավելու: Մինչև որ գործողությունը վերջանա: Դրա փոխարեն դուք կապրեք: Հեղափոխությունը կտրում է հին աշխարհը, իսկ այդ ժամանակ արնահոսությունն անխուսափելի է: Մեր իննսուներեք թվականը արնահոսության տարի է:

— Այո, բայց վիրաբույժը համոզիստ է, իսկ ինձ շրջապատող մարդիկ՝ դաժան, — առարկեց Գոյենը:

— Հաղթելու համար հեղափոխությունը ուժեղ մարդկանց կարիք ունի, — ասաց Սիմուրդենը: — Նա վանում է ամեն մի դողացող ձեռք: Նա հույսը դնում է միայն անդրդվելիների վրա: Դանտոնը զարհուրելի է, Ռոբեսպիերը՝ անընկճելի, Մարատը՝ անհաշտ... Նկատիր, Գոյեն. այս անունները մեզ անհրաժեշտ են: Նրանք ամբողջ բանակներ արժեն, նրանք սարսափեցնում են Եվրոպային:

— Եվ գուցե կսարսափեցնեն նաև գալիք դարերը, — վրա բերեց Գոյենը: Նա մի պահ լռեց, ապա շարունակեց. — Ասենք, ուսուցիչս, դուք սխալվում եք. ես ոչ ոքի չեմ մեղադրում: Իմ կարծիքով հեղափոխությանը պետք է նայել այսպես. ոչ ոք մեղավոր չէ և բոլորը մեղավոր են:

Սիմուրդենը գլուխը բարձրացրեց և ասաց.

— Կգա օրը, երբ հեղափոխության պտուղները արդարացում կլինեն տեղորի համար:

— Ես վախենում եմ, որ տեղորը կխաչատռակի հեղափոխությանը: — Գոյենը շարունակեց. — Ազատություն, հավասարություն և եղբայրություն՝ սա խաղաղություն է, ընդհանուր ներդաշնակություն: Ուրեմն ինչո՞ւ զարհուրելի կերպարանք տալ նրանց: Հեղափոխությունը պետք է հաշտություն լինի և ոչ թե սոսկում: Ներումը մարդկային լեզվով արտասանված բառերից ամենաաքանչելի բառն է: Ուրիշի արյունը թափել ես կարող եմ միայն վտանգի ենթարկելով իմ արյունը... Ասենք ես ինքս միայն պաշքարել եմ կարողանում. չէ՞ որ ես միայն զինվոր եմ: Բայց ես գիտեմ մի բան. եթե ներել չի կարելի, ապա և չարժե հաղթել: Կովի մեջ քո թշնամիների թշնամին եղիր, իսկ երբ հաղթեցիր, եղիր նրանց եղբայրը...

— Զգուշացի՛ր, Գոյեն՛ն, — երրորդ անգամ ասաց Սիմուրդենը: — Դու ինձ համար որդուց էլ ավելի ես: Զգուշացի՛ր: — Եվ նա մտախոհ ավելացրեց. — Այնպիսի մի ժամանակ, ինչպիսին մերն է, գթասրտությունը կարող է դավաճանություն դառնալ:

Այս երկու մարդկանց խոսակցությունը նման էր սրի ու կացնի մենամարտի:

Այս ժամանակ մայրը փնտրում էր իր երեխաներին:

Նա գնում էր ուր աչքը կտրեր: Ինչպե՞ս էր ապրում, ինչո՞վ էր սնվում՝ ինքն էլ չգիտեր: Քայլում էր օր ու գիշեր, ողորմություն էր խնդրում, կանաչ էր ուտում, քնում էր քաց երկնքի տակ՝ գետնին, աստղերի տակ, թփերի մեջ, երբեմն անձրևի ու քամու տակ:

Նա գյուղից գյուղ էր անցնում, ագարակից ագարակ, կանգ էր առնում տների առաջ ու հարցնում: Նրա հագուստը ցնցոտի էր դարձել: Երբեմն նրան ներս էին թողնում, երբեմն վռնդում էին: Եթե ներս չէին թողնում, նա գնում էր անտառ:

Այդ տեղերը նա չէր ճանաչում: Ոչ մի տեղ չէր եղել և գիտեր միայն իրենց Սիսկուանյար ագարակը և մեկ էլ Ագե գյուղը: Հաճախ էր պատահում, որ պտույտ էր գալիս միևնույն տեղում, գնում էր մի ճանապարհով, որով արդեն անցել էր և իզուր ուժեր էր վատնում: Նա անցնում էր մերթ սալահատակված ճանապարհով, մերթ սալերի անիվների թողած հետքերով, մերթ մի շալիղով խորանում էր անտառի թավուտի մեջ: Զարմանալի չէ, որ այսպիսի թափառումների ժամանակ նրա աղքատիկ հագուստը բոլորովին մաշվել էր: Սկզբում նա կոշիկներով էր քայլում, հետո՝ ոտաբոքիկ և վերջում՝ արյունոտված ոտքերով:

Նա քայլում էր ճակատամարտերի դաշտերով, հրացանների կրակոցների տակ: Ոչինչ չէր լսում, ոչինչ չէր տեսնում, ոչ մի բանից խույս չէր տալիս. նա որոնում էր իր երեխաներին: Ամբողջ երկիրը բռնված էր խռովությամբ. ոչ մի տեղ ոչ ժանդարմ կար, ոչ քաղաքապետ, ոչ գյուղական իշխանություն: Նա գործ էր ունենում միայն անցորդների հետ: Խոսքի էր բռնվում ամեն մեկի հետ, հարցուփորձ էր անում ամեն մեկին:

— Արդյոք պատահաբար որևէ տեղ երեք փոքրիկ երեխա չե՞ք տեսել:

Անցորդները զարմացած գլուխները բարձրացնում էին:

— Երկու տղա և մի աղջիկ, — բացատրում էր նա և ավելացնում. — Ռենե-Ժանին, Գրո-Ալենին և Ժորժետային:

Չե՞ք տեսել: Մեծը հինգ տարեկան է, իսկ փոքրիկը՝ մեկ տարի ութ ամսական: Չգիտե՞ք որտեղ են նրանք: Նրանց խլեցին ինձանից:

Անցորդը լուռ նայում էր նրան: Տեսնելով, որ իրեն չեն հասկանում, կինը նորից էր պարզաբանում.

— Դրանք, գիտե՞ք, իմ երեխաներն են, դրա համար էլ հարցնում եմ:

Անցորդը գլուխն օրորում էր և իր ճանապարհով գնում: Այն ժամանակ կինը սառած կանգնած էր մնում լուռ հուսահատությամբ:

Վերջապես մի անգամ ուշադիր վերաբերվեցին նրան: Գյուղացին, որին նա դիմեց իր հարցով, լսեց նրան և սկսեց ինչ-որ բան մտաբերել:

— Սպասեցեք,— ասաց նա:— Երեք երեխա՞, ասում եք:

— Այո:

— Երկու տղա...

— Եվ մի աղջիկ:

— Եվ դուք նրա՞նց եք որոնում:

— Այո:

— Ես լսել եմ, որ այստեղացի մի ազնվական կովի մեջ երեք երեխա է բռնել և իր հետ տարել:

— Որտե՞ղ է այդ մարդը,— գոչեց կինը:— Որտե՞ղ են իմ երեխաները:

Գյուղացին պատասխանեց.

— Գնացեք Տուրգ:

— Եվ այնտեղ ես կգտնե՞մ նրանց, ասում եք:

— Գուցեև գտնեք:

— Դուք ինչ անուն ասացի՞ք:

— Տուրգ:

— Իսկ ի՞նչ բան է Տուրգ:

— Դա մի տեղ է:

— Գյո՞ղ է, ամրո՞ց, թե՞ ագարակ:

— Չեմ իմանում: Ես երբեք այնտեղ չեմ եղել:

— Իսկ դա հեռո՞ւ է այստեղից:

— Հա, մոտիկ չէ:

— Այդ ո՞ր կողմը կլինի:

— Ֆուժերի կողմը:

— Իսկ ինչպե՞ս գնամ այնտեղ:

— Գնացեք ուղիղ դեպի Վանտորգ: Հետո Լորշանի միջով կգնաք դեպի Լերու:— Նա ձեռքը մեկնեց դեպի հարավ:— Ծարունակ կգնաք ուղիղ դեպի այն կողմը, որտեղ արևն է մայր մտնում:

Եվ գյուղացին դեռ ձեռքը ցած չէր գցել, կիճն արդեն գնում էր: Գյուղացին նրա ետևից ձայն տվեց.

— Միայն թե զգույշ եղեք. այնտեղ հիմա կոիվ է:

Կինը ոչինչ չպատասխանեց: Նույնիսկ ետ չնայեց. նա շարունակեց առաջ գնալ:

## IX. ԳԱՎԱՌԱԿԱՆ ԲԱՍՏԻԼԸ

Քառասուն տարի սրանից առաջ եթե մի որևէ ճանապարհորդ Լենյեյեի կողմից Ֆուժերի անտառը մտներ և այնտեղից դուրս գար Պարանյեի կողմից, ապա հենց որ այդ անանցանելի թավուտի եզրին հասներ, նրան կզարմացներ մի չարագուշակ հանդիպում. անսպասելիորեն նրա առաջ կցցվեր Տուրգը:

Ոչ թե կենդանի, այլ մեռած Տուրգը՝ կիսավեր, մերկացած, ամբողջապես խարխլված ու ճաքճքված: Դժվար է պատկերացնել շենքի մի ավելի մոռյալ ուրվական, քան Տուրգն էր: Ապշահար ճանապարհորդը ուղիղ իր առաջ տեսնում էր մի բարձր, կլոր աշտարակ: Անտառի եզրին կանգնած՝ նա կարծես դարանամուտ էր եղել իր որսին: Երբ ճանապարհորդը մոտենում էր և դարիվերով քարձրանում, պատի մեջ ճեղքվածք է նկատում:

Այդ ճեղքվածքն առաջացել էր ականի պայթյունից, որի մեջ երևի ոչ պակաս քան երկու ցեճտներ վառող էր եղել: Պայթյունից մի մեծ կտոր էր պոկվել պատից, և պաշարողները հավանորեն այդ ճեղքով էին ներս մտել:

Երևում էր, որ աշտարակը զանազան ժամանակներում մի քանի պաշարումի է դիմացել. նրա պատերին տեսակ-տեսակ արկերից գոյացած սպիներ էին մնացել, սկսած XIV դարի քարե արկերից և վերջացրած XVIII դարի չուգունե արկերով:

Ուղիղ ճեղքվածքի դիմաց, հակառակ կողմի պատիմ կար մի դռնակ, որ բացվում էր դեպի Ակուղ:

Այդ Ակուղը ծառայում էր մասամբ որպես զնդան, մասամբ որպես բանտ, որտեղ կալանավորվածն այլևս երբեք դուրս չէր գալիս այնտեղից: Այն ժամանակներում ամեն մի աշտարակ, ամեն մի դղյակ իր քարաշեն բանտն ուներ: Տուրգի զնդանը, ինչպես և այն ժամանակվա զնդանների մեծ մասը, երկհարկանի էր: Վերին հարկը կամարակապ առաստաղով մի բավական մեծ սենյակ էր: Ֆեոդալական դարաշրջանում այդ սենյակում քառատում էր կատարվում, բայց ավելի պարզեցրած եղանակով և ո՛չ այնպիսի աղմկալից ձևերով, ինչպիսին էր ձիերով քառատելը: Իր ժամանակին այստեղ դրված են եղել երկու այնպիսի խոշոր անիվներ, որոնք հասել են մինչև պատերն ու առաստաղը: Դատապարտյալի ձեռքն ու ոտքը կապում էին այդ անիվներին և ապա պտտում իրար հակառակ ուղղությամբ, և մարդը կտորկտոր էր լինում:

Որպես բանտ ծառայող այդ սենյակի տակ կար մի ուրիշը՝ բառիս բուն իմաստով քարաշեն մի զնդան: Նրա մեջ էին մտնում ոչ թե դռնով, այլ առաստաղում բացված անցքով: Դատապարտյալին զնդանի վերին մասից մերկ ու տկլոր ցած էին իջեցնում թևատակերով գցված պարանով:

Մեր նախնիներն այդպիսի զնդանները կոչել են քարե պարկեր: Մեզ համար այդ անունը դատարկ հնչյուն է, որովհետև այն, ինչ նշանակել է այդ բառը, այժմ կորել է անհետ: Հեղափոխության շնորհիվ մենք կարող ենք այդպիսի բառերն անտարբեր լսել ու արտասանել:

Աշտարակի դրսի կողմում, այն անցքից վերև, որը քառասուն տարի սրանից առաջ ծառայում էր որպես միակ մուտքը, կար մի հրակնատ, որը բավական լայն էր մյուս հրակնատներից, և նրա տակ կախված էր պատից պոկված ու ծոմոված մի երկաթե վանդակ:

Անցքի դիմացի կողմում աշտարակին էր միանում մի եռակամար քարաշեն կամուրջ:

Միջին դարերում ամբողջ ամբողջ բաղկացած է եղել միայն մեկ աշտարակից և համարյա անառիկ է եղել: Կամուրջը թուլացրել է ամբողջ: Միջնադարյան գովեններն այն



կառուցած են եղել առանց կամրջի: Այն ժամանակներում ամբողջ մտնելու համար հարկավոր է եղել անցնել երեքունկ կամուրջներով, որոնք կարելի էր քանդել կացնի միակ հարվածով:

XVII դարում աշտարակը հարևան սարահարթին միացնող կամրջի հենակների վրա կառուցվել է մի դղյակ: Դա նախատեսված է եղել բնակության համար, որպես ավելի հարմար շենք, քան հին աշտարակն էր:

Այս երկու շենքերը, որոնցից մեկն ահարկու էր, մյուսը գեղեցիկ, այնքան չէին լրացնում իրար, որքան աչք էին ծակում իրենց ոճերի հակադրությամբ: Օտարոտի բան էր նախնադարյան անտառներին սազական այդ մուսլ աշտարակը տեսնել Վերսալին վայել այդ դղյակի կողքին:

Ռազմական տեսակետից կամուրջը գլխովին թշնամու ձեռքն էր մատնում աշտարակը: Այն զարդարում էր աշտարակը, բայց և՛ զինաթափ էր անում. գեղեցկությամբ շահում էր, բայց ուժը կորցնում էր: Այսպիսով, աշտարակն անտառի կողմից անմատչելի էր մնացել, բայց հարթավայրի կողմից դարձել էր խոցելի:

Աշտարակին կից կամուրջ կառուցելը, կրկնում ենք, ռազմագիտական տեսակետից սխալ էր եղել: Ի դեպ, կամուրջ կառուցողները որոշ նախազգուշական միջոցներ էին ձեռք առել: Նախ՝ նրանք նախատեսել էին հրդեհի հնարավորությունը. դղյակի՝ դեպի խանդակը նայող լուսամուտների տակ երկաթե կեռերով կախված էր մի փրկարար ելաբան: Երկրորդ՝ նախատեսել էին գրոհի հնարավորությունը. կամուրջն աշտարակից անջատված էր մի ցածրիկ երկաթե ամրակուռ դնելով: Այդ դուռն այնքան հաստ ու ամուր էր, որ կոխմանար ոչ միայն խոյահարման, այլ, թերևս, նաև թնդանոթի ուժակոծության:

Այդ դուռնը հասնելու համար հարկավոր էր կամուրջն անցնել, իսկ աշտարակ մտնելու համար հարկավոր էր այդ դուռը բացել: Ուրիշ մուտք չկար:

Այսպիսով, լայն ու բարձր, վեցհարկանի աշտարակ՝ տարբեր բարձրությունների վրա բացված հրակնատներով և միակ մուտքով՝ դեպի կամուրջը բացվող երկաթե դռնով, որը կից էր շարժական կամրջին: Աշտարակի ետևը՝ ան-

տառ, առջևը՝ հավամբգի թփերով ծածկված մի սարահարթ, որ կամրջից բարձր էր, աշտարակից՝ ցածր: Կամրջի տակ, աշտարակի ու սարահարթի միջև թփուտներով ծածկված մի խոր, նեղ խանդակ, որի միջով ձմեռը վարար գետ էր հոսում, գարնանը՝ առվակ, իսկ ամառն այն դառնում էր քարքարոտ ձորակ: Ահա թե ինչ էր ներկայացնում իրենից Գովենների դղյակը, Տուր-Գովենը, որ սովորական անունով կոչվում էր Տուրգ:

## X. ՊԱՏԱՆԳՆԵՐԸ

Հուլիսն անցավ, սկսվեց օգոստոսը: Ֆրանսիային համակել էր հերոսության և անողոր դաժանության ոգին: Նրա հորիզոնում հենց նոր երևացել էին երկու ուրվական՝ Մարատը՝ դանակը կողը խրած, և գլխատված Ծաղլոտա Կորդեն<sup>1</sup>: Իրադարձություններն ահավոր բնույթ էին ստանում: Ռազմավարական մեծ պատերազմում ջախջախված Վանդեան հարել էր պարտիզանական փոքր պատերազմի, որն ալելի ևս սուկալի էր: Այժմ այդ պատերազմը դարձել էր առանձին ջոկատների անընդհատ ընդհարումներ՝ անտառներում ու թփուտներում: Այսպես կոչված՝ կաթոլիկական ու արքայական մեծ բանակն սկսել էր պարտություններ կրել: Այնուամենայնիվ, վանդեացիները շարունակում էին սպառնալ Լա-Ռոշել ամրոցին, իսկ ծովում անգլիական նավատորմը պատրաստ էր ֆրանսիական ափ հանելու անգլիական մի քանի գնդեր և նրանց միացած ֆրանսիական նավատորմի սպաներին և միայն մարկիզ դը Լանտենակի ազդանշանին էր սպասում: Այս ուժերի ափ հանումը կարող էր հաղթանակը վերադարձնել ապստամբ ոռյալիստներին:

---

<sup>1</sup> Ծաղլոտա Կորդեն (1768—1793) — աղքատացած անրմանդացի ազնվականի դուստր: Նրա երկու եղբայրները 1792 թ. փախել էին և իշխան Կոնդեի բանակում կոչվում էին Ֆրանսիայի դեմ: Փարիզից փախած ժիրոնդիստ պատգամավորների ազիտացիայի ազդեցությամբ Ծաղլոտա Կորդեն գնացել էր հեղափոխական մայրաքաղաքը, հաջողացրել էր տեսակցություն ունենալ Մարատի հետ և սպանել էր նրան: Չորս օր անց նա գլխատվել էր:

Պիտը՝ պետական հանցագործ էր: Դավաճանությունը քաղաքականության նույնպիսի անբաժան մասն է, ինչպես դաշույնը՝ սպառազինության: Պիտը դաշունահար էր անում մեր երկիրը և դավաճանում էր իր երկրին, իր հայրենիքը խայտառակել՝ նշանակում է դավաճանել նրան: Պիտի օրոք և նրա շնորհիվ էր Անգլիան մողկալի պատերազմ մղում. նա լրտեսում էր, խարդախում, ստում: Նա չէր խորշում կեղծիքներից, գործարքի մեջ էր մտնում մաքսանենգների և կեղծ թղթադրամ կտրողների հետ: Իր ատելությունը մեր նկատմամբ Անգլիան արտահայտում էր ամենագծո՞ւմ ձեւերով: Լիլ քաղաքում մի անգլիացու ձեռքին բռնել էին Վանդեայում Պիտի գործակալի նամակը, որի մեջ, ի միջի այլոց, ասված էր. «Խնդրում եմ փող չխնայեք: Մենք հուսով ենք, որ սպանությունները կկատարվեն հարկ եղած զգուշությամբ: Այդ նպատակի համար ամենից ավելի հարմար են հագուստները փոխած քահանաները և կանայք: Վաթսուն հազար ֆունտ<sup>2</sup> ուղարկեցեք Ռուան և հիսուն հազար՝ Կանն»: Օգոստոսի 1-ին այս նամակը կարդացվեց Կոնվենտում: Երկու կողմից էլ դրությունը ճգնաժամային էր: Մի տեղ պատերազմը դադարում էր, բայց և իսկույն բռնկում էր մի ուրիշ տեղ: «Ոչ ոքի չխնայել: Գերիներ չվերցնել» — այս էր կոփող երկու կողմերի լոզունգը: Պատմության այդ էջը մահվան սև ստվերն էր ծածկել:

Օգոստոս ամսին Տուրգ ամրոցը պաշարված էր: Մի երեկո, երբ երկնքում արդեն վառվում էին աստղերը, վերահաս ամառային գիշերվա լուսավոր աղջամուղջի մեջ, երբ բնության քար լույծությունը չէին խախտում ոչ տերևների խշշոցն անտառում և ոչ խոտի շրշումը տափաստանում, հանկարծ հնչեց փողի ձայնը վերևից, աշտարակի կտուրից: Ցածում փողին պատասխանեց եղջրափողը:

Աշտարակի կտուրին կանգնած էր մի սպառազինված

<sup>1</sup> Պիտ Կրոսեր Վիլյամ (1759—1806) — Անգլիայի վարչապետ՝ 1783 թվականից: Ոգեշնչողն ու կազմակերպիչը հեղափոխական Ֆրանսիայի դեմ, ապա և Նապոլեոն I-ի դեմ մղած պատերազմների:

<sup>2</sup> Ֆունտ — անգլիական դրամի միավոր, ֆունտ ստեռլինգ, որ ոսկե դրամ է:

մարդ, ցածում, մթության մեջ փոված էր մի ամբողջ ճամբար:

Ամրոցի շուրջը կարելի էր գլատել մթության մեջ վիտացող մարդկանց ֆիգուրներ: Մարդկային այդ միջնանոցը ուղղակիան ճամբար էր: Այստեղ-այնտեղ, անտառի ծառերի տակ և հավամրգի թփերի մեջ արդեն կրակներ էին վառվում, և խավարն աստիճանաբար լցվում էր լուսավոր կետերով, ասես գետինն էլ երկնքին նմանվելով ուզում էր զարդարվել աստղերով: Բայց դրանք չարագույժ աստղեր էին, պատերազմի աստղեր: Սարահարթի կողմում ճամբարը ձգվում էր մինչև հարթավայրի սկիզբը, իսկ դիմացի կողմում խորանում էր անտառի թավուտի մեջ:

Տուրգ ամրոցը պաշարված էր բոլոր կողմերից:

Այն տարածությունը, որ զբաղեցնում էր պաշարողների ճամբարը, ցույց էր տալիս զորքի մեծաթիվ լինելը:

Փողը փչեց երկրորդ անգամ, և եղջրափողը նորից արձագանքեց: Փողը հարց էր տալիս, իսկ եղջրափողը պատասխանում էր: Աշտարակը հարցնում էր թշնամու ճամբարին. «Կարելի՞ է ձեզ հետ խոսել», և թշնամու ճամբարը պատասխանեց. «Այո»:

Վանդեայի խոովարարները որպես պատերազմող կողմ չէին ճանաչվում, և Կոնվենտի դեկրետով արգելվում էր «սավազակների» հետ հարաբերության մեջ մտնել բանագնացների միջոցով: Ուստի և հակառակորդի հետ բանակցություններ վարելու համար, որ միջազգային իրավունքով թույլատրելի էր սովորական պատերազմներում և անթույլատրելի էր քաղաքացիական պատերազմում, հարկ էր լինում զարտուղի միջոցներ որոնել, ինչպիսին էր հենց նոր մեր գլխարագրած խոսակցությունը գեղջկական փողի և ուղմական եղջրափողի միջև: Առաջին ազդանշանը միայն նախաբանն էր, որ նպատակ ուներ գրավել հակառակորդի ուշադրությունը, երկրորդը հարց էր տալիս. «Ուզո՞ւմ եք մեզ լսել»: Եթե փողի երկրորդ կանչին եղջրափողը չպատասխաներ, դա մերժում կնշանակեր: Բայց եղջրափողն արձագանքեց. դա համաձայնությունն էր կամ, որ միևնույն է, զինադադար մի քանի րոպեով:

Երբ եղջրափողը երկրորդ անգամ հնչեց, աշտարակի

գլխին կանգնած մարդը խոսեց: Ահա թե ինչ լսեցին ցածում եղածները.

— Է՛յ, դո՛ւք, որ ցածում եք: Լսեցեք, թե ինչ եմ ասում: Ես Գուծ լե Բրյուանն եմ: Ձեզանից շատ շատերին եմ ես ոչնչացրել, դրա համար էլ Կապույտների սարսափ անունն եմ ստացել: Բացի դրանից, ինձ կոչում են Իմանուս, որովհետև ես սրանից հետո էլ պիտի ոչնչացնեմ ձեզ անգթորեն: Գրան-վիլի մոտ գրոհի ժամանակ դուք թրով կտրեցիք իմ մատը այն թուպին, երբ ես հրացանով նշան էի բռնել: Լավիլում դուք գլխատեցիք իմ հորը, իմ մորը և իմ քույր Ժակլինին, որը դեռ հազիվ տասնութ տարեկան էր... Հիմա դուք գիտեք, թե ով եմ ես:

Ես ձեզ եմ դիմում մոնսեյյոր և իմ տեր մարկիզ դը Լանտենակի, վիկոնտ դը Ֆոնտենի, բրետոնական իշխանի, յոթ անտառների տիրակալի անունից:

Ամենից առաջ իմացեք, որ նախքան այս աշտարակում փակվելը, որը դուք պաշարել եք, մոնսեյյորը ուղղակի գործողությունների ղեկավարությունը բաժանել է իր վեց ազարակների միջև: Այս ամբողջ գրավելով պատերազմը չի վերջանա ձեզ համար և նույնիսկ եթե մոնսեյյորը կովի մեջ սպանվի, նրա մահով տեր աստծո և թագավորի Վանդեան չի մեռնի:

Այս ամենը ես ասում եմ ձեզ նախագգուշացնելու համար: Մոնսեյյոր մարկիզն այստեղ է, իմ կողքին. ես հաղորդում եմ նրա խոսքը... Իսկ հիմա, պաշարողնե՛ր, լուեցեք և լսեցեք շարունակությունը:

Իմացած եղեք, որ դուք մեր դեմ անարդար պատերազմ եք մղում: Մենք խաղաղ ժողովուրդ ենք: Մենք ապրում էինք մեր հողում և ոչ ոքի ձեռք չէինք տալիս: Հիմա մենք ազնվորեն պայքարում ենք մեր իրավունքի համար: Մենք հասարակ մարդիկ ենք, մեր հույսը դրել ենք աստծո վրա. առանց աստծո նույնն է, թե կանաչ խոտը առանց ցողի: Հանրապետությունն առաջինն է հարձակվել մեզ վրա: Նա եկել է մեզ մոտ, ներխուժել մեր գյուղերը, վատել մեր տները, մեր արտերը, ավերել է մեր ազարակները, և մեր կանայք ու երեխաներն ստիպված են եղել ոտաբորիկ թափա-

նել անտառներում, երբ դեռ գարնանային թռչունները չէին սկսել երգել:

Դուք բոլորդ, որ կանգնած եք այստեղ, բոլորդ, որ լսում եք ինձ, հալածել եք մեզ անտառում ինչպես վայրի գազանների, իսկ հետո քշել եք մեզ այս աշտարակը: Դուք կոտորեցիք ու ցրիվ տվիք բոլոր մեզ միացողներին: Դուք թընդանոթներ ունեք: Հիմա դուք չորս հազար հինգ հարյուր մարդ եք, և դուք եք գրոհում մեզ վրա: Իսկ մենք ընդամենը տասնինը հոգի ենք և մենք որոշել ենք պաշտպանվել: Ուտելիք մենք ունենք, վառող ու փամփուշտ էլ ունենք:

Ձեզ հաջողվել է ական դնել և պայթեցնել մեր աշտարակի պատի մի մասը: Դուք կարող եք ներխուժել բացված անցքի միջով. թեև այն մեծ չէ և առաջվա պես նրա վերևը կանգնած է մեր ամրակուռ աշտարակը:

Դուք հիմա գրոհի եք պատրաստվում: Իսկ մենք ձեզ հայտարարում ենք հետևյալը...

Է՛յ, դո՛ւք, որ կանգնած եք ցածում, աշտարակի տակ, լավ լսեցեք ինձ:

Մենք մեր ձեռքին ունենք երեք գերի՝ երեք երեխա: Այդ երեխաներին որդեգրել էր ձեր գումարտակներից մեկը. սրանք ձեր երեխաներն են: Մենք առաջարկում ենք երեք երեխան էլ ձեզ տալ, բայց մի պայմանով, որ մեզ թողնեք դուրս գալ աշտարակից:

Լսեցեք շարունակությունը: Եթե դուք մեր առաջարկությունը մերժեք, մեզ վրա գրոհել կարող եք միայն երկու կողմից. կամ անտառի կողմում բացված անցքի միջով կամ սարահարթի կողմի կամրջով: Կամրջի վրայի դղյակը երեք հարկ ունի: Յաճի հարկում իմ հրամանով դրված է վեց տակառ ձյութ և դարսված է հարյուր խորձ չոր մացառ: Սա այնպես ճշմարիտ է, ինչպես այն, որ ես Իմամուսն եմ և այս բոլորին խոսում եմ ձեզ հետ: Վերին հարկը լցված է ծղոտով: Միջին հարկում, որտեղ գրադարանն է, պահվում են գրքեր ու փաստաթղթեր: Աշտարակը կամուրջին միացնող երկաթյա դուռը փակված է, և բանալին գտնվում է մոնսեյնյորի մոտ: Այդ դռան տակ դարձյալ իմ հրամանով մի ծակ է բացված, որի միջով անց է կացված ծծումբով հագեցած մի պատրույգ: Այդ պատրույգի մի ծայրը ձյութով լի տակառի մեջ է, մյուսը՝

այստեղ, աշտարակում: Այդ ծայրն իմ ձեռքին է լինելու, և ես ուզած բոլորին կարող եմ վառել այն: Եթե դուք հրաժարվեք մեզ բաց թողնել, մենք երեխաներին կտեղափոխենք դղյակի երկրորդ հարկում, ձյութով լի տակառների և վերնահարկի միջև, որտեղ ծղոտն է, ապա երկաթյա դուռը կփակենք նրանց վրա: Եթե դուք գրոհեք կամրջի վրայով, ինքներդ կհրկիզեք դղյակը, եթե գրոհեք անցքի միջով, մենք կհրկիզենք, իսկ եթե փորձեք գրոհել միաժամանակ երկու կողմից, մենք կհրկիզենք այն միացյալ ուժերով: Բայց այս բոլոր դեպքերում էլ երեխաները կոչնչանան:

Հիմա վճռեցեք. ընդունո՞ւմ եք մեր առաջարկությունը, թե՛ ոչ: Եթե ընդունում եք, մենք դուրս ենք գալիս: Եթե մերժում եք, երեխաները կմեռնեն... Ես վերջացրի:

Աշտարակի տանիքից խոսող մարդը լռեց: Ներքևից նրան պատասխանեց մի բարձր ձայն.

— Մենք մերժում ենք:

Այս ձայնը սուր էր ու ահեղ: Մի ուրիշ ձայն, ո՛չ այնքան ահեղ, բայց նույնքան հաստատուն՝ ավելացրեց.

— Մենք ձեզ քանչորս ժամ ժամանակ ենք տալիս մտածելու համար, որպեսզի անձնատուր լինեք առանց որևէ պայմանի:

Մի քանի վայրկյան լռություն տիրեց, ապա նույն ձայնն ասաց.

— Վաղը այս նույն ժամին եթե դուք անձնատուր չլինեք, մենք գրոհը կսկսենք:

— Եվ այն ժամանակ արդեն գթություն չսպասեք,— վերջացրեց առաջին ձայնը:

Այս ահեղ ու տիրական ձայնին որպես պատասխան աշտարակի գլխից հնչեց մի ուրիշ ձայն: Աշտարակի ատամների արանքում երևաց մի բարձրահասակ մարդու կերպարանք, որին աստղերի լույսով կարելի էր ճանաչել. դա մարկիզ դը Լանտենակն էր: Նա առաջ կոացավ և, ասես խավարի մեջ ինչ-որ բան դիտելով, գոռաց.

— Այդ դո՞ւ ես, քահանա:

— Այո՛, դավաճա՛ն, ես եմ,— պատասխանեց ահեղ ձայնը ներքևից:

Մարկիզ դը Լանտենակը չէր սխալվել, որ առաջին խոսողին աբբա Սիմուրդենի տեղն էր դրել: Ահեղ, տիրական ձայնը իսկապես նրանն էր: Իսկ մյուս ձայնը, որ ավելի մեղմ էր ու երիտասարդական, Գովենինն էր:

Մի քանի շաբաթ էլ չանցած՝ Սիմուրդենի անունը թընդում էր ամբողջ արևաշաղախ երկրում: Նույնիսկ այն ժամանակներում այդպիսի չարագույժ անունները շատ չէին: Նրա մասին ասում էին. «Ինչ որ Մարատն է Փարիզում, նույնը Սիմուրդենն է Վանդեայում»:

Սիմուրդենը սարսափ էր ազդում: Դաժան մարդիկ դժբախտ մարդիկ են. նրանց դատում են ըստ իրենց արարքների և դատապարտում են, բայց եթե նայեք նրանց հոգու մեջ, գուցե քոլորն արդարացվեն:

Մարկիզ դը Լանտենակը և աբբա Սիմուրդենը միանման ատելություն էին հարուցում. ողյալիստների նզովքը թափվում էր Սիմուրդենի գլխին, հանրապետականների նզովքը՝ Լանտենակի գլխին: Նրանցից ամեն մեկը հակառակորդ կողմի համար դժոխքի ծնունդ էր: Կապույտները Լանտենակի գլուխն էին գնահատում, իսկ սպիտակները պարզև էին նշանակում Սիմուրդենի գլխի համար:

Այսպես, ուրեմն, պաշարված Տուրգ ամբողջ ժամանակ ստացավ: Ինչպես տեսանք, Գովենի միջամտության շնորհիվ քսանչորս ժամով զինադադարի նման մի բան սահմանվեց:

Իմանուր լավատեղյակ էր, որ Սիմուրդենի կողմից հանրապետական իշխանություններին ուղղված բազմաթիվ պահանջների հետևանքով Գովենն այժմ իր տրամադրության տակ ունի չորս հազար հինգ հարյուր մարդ, մի մասն ազգային գվարդիայի զինվորներ, մյուս մասը՝ գծային: Այս ուժերով էլ նա պաշարել էր Տուրգ ամբողջ: Ամբողջ դեմ նա կարող էր հանել տասներկու հրանոթ: Վեցը նա կանգնեցրել էր անտառի եզրին՝ աշտարակի դեմ, վեցը՝ սարահարթում՝ կամրջի դեմ: Բացի դրանից, նա հնարավորություն ուներ ական դնելու աշտարակի տակ և պայթեցնելով անցք բացելու նրա պատի մեջ:



Սարահարթում և անտառում՝ չորս հազար հինգ հարյուր մարդ պաշարողներ: Աշտարակում՝ տասնինը պաշարվածներ:

Սիմուրդենն ուզում էր, որ Գովենը, որպես չորս հազարանոց ջոկատի հրամանատար, գեներալի աստիճան ստանա, բայց Գովենը մերժեց այդ պատիվը՝ ասելով. «Երբ Լանտենակին կբռնենք, այն ժամանակ կտեսնենք: Առայժմ ես դեռ ոչ մի բանով չեմ արժանացել դրան»:

Այն ժամանակներում հաճախ խոշոր ուժերի հրամանատարությունը հանձնարարվում էր համեստ աստիճան ունեցող սպաների. դա հանրապետության սովորությունն էր: Այսպես, մի քիչ ավելի ուշ հրետանային հասարակ կապիտան Բոնապարտը իտալական բանակի հրամանատարն էր:

Տարօրինակ բախտ էր վիճակվել Գովենների ամրոցին. մի Գովենը պաշարել էր այն, մյուսը՝ պաշտպանում էր: Եվ որ երկու Գովեն կոչվում էին այդ ամրոցի համար, դրանով էլ բացատրվում է հարձակման որոշ զսպվածությունը, բայց ո՛չ պաշտպանության, որովհետև Լանտենակն այն մարդկանցից էր, որոնք ոչ մի բան չեն խնայում, բացի այդ նա համարյա իր ամբողջ կյանքն ապրել էր Վերսալում, քիչ էր ճանաչում Տուրգ ամրոցը և ոչ մի մոլություն չունեցրա նկատմամբ: Այդ ամրոցում նա թաքնվել էր նրա համար, որ մոտերքում մի ուրիշ ապաստարան չէր գտել, ուրիշ ոչինչ: Նա կարող էր առանց ափսոսանքի ավերել այդ բերդը: Մինչդեռ Գովենը հնամենի ամրոցին հարգանքով էր վերաբերվում:

Ամրոցի թույլ տեղը կամուրջն էր: Բայց կամրջի գլխին տեղավորված գրադարանում ընտանեկան արխիվն էր պահվում: Եթե գրոհը կամրջի կողմից սկսվեր, հրդեհն անխուսափելի կլիներ, իսկ ընտանեկան արխիվը վատելը վիրավորանք կլիներ իր նախնիներին: Համենայն դեպս այսպես էր թվում Գովենին: Տուրգը նրա տոհմական ամրոցն էր: Այդտեղ էին ապրում Գովենների բոլոր ընտանեկան հիշողությունները: Գովենն ինքն էլ այստեղ էր ծնվել: Եվ ահա, ճակատագրական պատահականությունների բերումով նա արդեն մեծ մարդ դարձած՝ ստիպված էր հարձակվել այդ հարգարժան պարիսպների վրա, որոնց ներսում նա

երեխա ժամանակ ապաւտանու պաշտպանություն էր գտել: Մի՞թե իր սրբապղծությունը նա այնտեղ կհասցնի, որ մոխիր կդարձնի այդ ամբողջը: Չէ՞ որ կարող է պատահել, որ այդ տան մեջ, տանիքում մի որևէ տեղ է գտնվում այն օրորոցը, որի մեջ ինքը քնել է երեխա ժամանակ: Կան բաներ, որոնց մասին առանց հուզմունքի մտածել չի լինի: Հնամենի այդ տան տեսքը, իր պապերի տան տեսքը հուզում էր Գովենին: Ահա թե ինչու նա խնայեց կամուրջը և բավարարվեց՝ նրանով, որ կամուրջի դիմաց հրետանի կանգնեցնելով վերացրեց փախուստի և այդ կողմից դուրս գալու ամեն մի հնարավորություն: Գրոհի համար նա ընտրեց հակառակ կողմը և աշտարակի տակ ական դրեց:

Սիմուրդենը նրան գործողությունների ազատություն էր տվել: Նա ինքն իրեն կշտամբում էր դրա համար, որովհետև նրա դաժան հոգին ոչ մի արժեք չէր տալիս այդ ամբողջ հնոտիին, և նա շենքերի նկատմամբ նույնքան քիչ էր զիջողամիտ, որքան մարդկանց նկատմամբ:

Ամբողջ խնայելն արդեն իսկ գթասրտության սկիզբն էր: Իսկ այդ քաղաքականության հակում ունենալը Գովենի թույլ կողմն էր, և Սիմուրդենը, ինչպես գիտենք, ուշիուշով հետևում էր նրան, ջանալով հնարավորին չափ նրան ետ պահել այդ սայթաքում ճանապարհից, որ կործանարար էր նրա կարծիքով: Ի դեպ, նա ինքն էլ չէր կարողանում առանց սրտի թրթրո՞ւ նայել այդ հնամենի ամբողջին, և այդ բանը սրտնեղությամբ էր նկատում իր մեջ:

Նա զգացվում էր նայելով այն դասասենյակին, որտեղ պահվում էին այն առաջին գրքերը, որ ինքը տվել էր փոքրիկ Գովենին՝ կարդալու: Նա, Սիմուրդենը, հարևան Պարինյե ավանի համեստ քահանան, ինքն էլ շատ տարիներ էր ապրել այդ ամբողջի հարկի տակ: Այդ նույն գրադարանում էր, որ նա Գովենին կարդալ էր սովորեցնում՝ նրան իր ծընկների մեջ առած և ուտերը գրկած: Այդ հնամենի չորս պատերի մեջ էր, որ նա օր առ օր հետևում էր, թե ինչպես է աճում այդ թանկագին երեխան, իր հոգեզավակը, ինչպես է նա մեծ մարդ դառնում, ինչպես է զարգանում նրա միտքը: Եվ մի՞թե ինքը կարող է այրել, ավերել, ոչնչացնել այդ

պատերը: Եվ նա, ճիշտ է, ո՛չ առանց խղճի խայթի, պատ-  
րաստ էր խնայել այդ հնամենի տունը:

Նա չհակառակվեց Գովենին, երբ սա որոշեց գրոհն  
սկսել հակառակ կողմից: Տուրգ ամրոցը երկու կողմ ուներ.  
կուլտուրականը՝ գրադարանը և վայրին՝ աշտարակը:

Սիմուրդենը թողեց, որ Գովենը ջախջախի վայրի կողմը:

## XII. ՓՐԿՈՒԹՅՈՒՆ Է ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ

Ամբողջ գիշերն անցավ պատրաստություններով և՛ մեկ,  
և՛ մյուս կողմում:

Հենց որ բանակցությունները վերջացան, որոնք ոչ մի  
արդյունքի չէին հասել, Գովենը մարդ ուղարկեց իր համ-  
հարզ Գեշանին կանչելու:

Գեշանը բավական սովորական, ազնիվ ու քաջ մարդ  
էր, ո՛չ այնքան մեծ խելքի տեր, հիանալի զինվոր ու վատ  
զորապետ, հրամանները խստորեն կատարող էր և մեծա-  
վորներին ենթարկվելու մեջ այնտեղ էր հասնում, որ հարկ  
չէր համարում ստացած հրամանի իմաստն ըմբռնել, ան-  
մատչելի էր ինչպես կաշառվելու իմաստով, որը մարդու  
խիղճն է խաթարում, այնպես էլ կարեկցության զգացումի  
իմաստով, որը արդարությանն է վնասում: Նրա սրտի զգա-  
ցումները չափավորվում էին կարգապահության ամուր կա-  
պանքով: Աչքակալներով խրոնող ձիու նման նա ուղիղ  
առաջ էր գնում ոչինչ չտեսնելով երկու կողմերում, գնում  
էր հաստատ քայլով, բայց նեղ ճանապարհով:

Մի խոսքով նա հուսալի մարդ էր. խստապահանջ պետ  
և ճշտապահ ստորադրյալ:

Հենց որ նա եկավ, Գովենն ասաց.

— Գեշա՛ն, ելարան է հարկավոր:

— Մենք ելարան չունենք, հրամանատար:

— Պետք է ճարել:

— Գրոհի՞ համար:

— Ոչ, հրդեհի դեպքում մարդկանց փրկելու համար:

Գեշանը մի պահ մտածեց և ասաց.

— Հասկանում եմ: Նշանակում է ելարանը պետք է շատ բարձր լինի:

— Առնվազն սովորական երեք հարկի չափ:

— Այո, հրամանատար, ո՛չ պակաս դրանից:

— Գուցե և ավելի բարձր, որպեսզի լիովին վստահ լինենք, որ կհասնի... Ասացեք, Գեշան, այդ ինչպե՞ս է պատահել, որ մենք ելարան չունենք:

— Դա իմ մեղքը չէ, հրամանատար: Դուք անհարմար գտաք գրոհը սարահարթի կողմից սկսել, որոշեցիք այդ կողմից շրջափակել և գրոհել աշտարակի կողմից: Դրա համար էլ մենք զբաղվեցինք միմիայն ական փորելով և հրաժարվեցինք դղյակի վրա գրոհելու մտքից: Ահա թե ինչու մենք չենք հոգացել ելարանի մասին:

— Դե ուրեմն հենց հիմա հրամայեցեք ելարան պատրաստել:

— Երեք հարկի բարձրությամբ ելարանը մի օրում չի պատրաստվի:

— Վերցրեք մի քանի կարճ ելարան և միացրեք իրար:

— Այո, բայց դրա համար հարկավոր է կարճ ելարաններ ունենալ:

— Ծարեցեք:

— Դա այնքան էլ հեշտ բան չէ: Դուք ինքներդ գիտեք, թե բնակչությունը որքան թշնամաբար է վերաբերվում մեզ: Գյուղացիները կամորջները քանդում են, սայլերը փշրում, ելարանները կտրատում, ոչնչացնում են ամեն բան, ինչ կարելի է ոչնչացնել:

— Այո, նրանք մտածում են այդպիսի միջոցներով ուժապառ անել հանրապետությունը, այդ գիտեմ:

— Նրանք ուզում են խանգարել մեզ գումակ փոխադրել, գետն անցնել և գրոհով պարիսպը գրավել:

— Ինչ ուզում է լինի, ելարանն անհրաժեշտ է:

— Այ թե ինչ եկավ միտքս, հրամանատար: Ֆուժերի մոտ ժավենե գյուղում ատաղձագործական մի մեծ արհեստանոց կա: Կարելի է այնտեղ պատվիրել:

— Ոչ մի բոլե ժամանակ չպետք է կորցնել:

— Ե՛րբ է հարկավոր ելարանը:

— Վաղն այս նույն ժամին, ո՛չ ուշ սրանից:

— Ես ձիավոր կողարկեմ Ժավենե և կհրամայեմ մինչև վաղը ելարանը պատրաստել: Ի դեպ, Ժավենեում մի հեծյալ ջոկատ ունենք, նա պահակախմբով կբերի ելարանը: Վաղը մինչև մայրամուտ ելարանն այստեղ կլինի:

— Լավ, դա ուշ չի լինի,— ասաց Գովենը:— Միայն թե շտապեցեք: Գնացե՛ք:

Տասը րոպե անց Գեշանը վերադարձավ և զեկուցեց:

— Հրամանատար՝, սուրհանդակը պացավ Ժավենե:

Գովենը բարձրացավ սարահարթ և երկար ժամանակ նայում էր խանդակից վերև կանգնած դղյակին: Սարահարթից կամուրջի առաջին կամարին հասնելու համար հարկավոր էր խիստ զառիթափ լանջով իջնել ձորը: Թփերից կառչելով կարելի էր իջնել, բայց ձորն իջնելուց հետո պաշարողներն անպաշտպան կլինեին այն արկերից, որ կարող էին նետել դղյակի բոլոր հարկերից: Գովենը վերջնականապես համոզվեց, որ պաշարումի այսպիսի պայմաններում իսկական գրոհը պետք է կատարվի աշտարակի պատում բացված անցքի միջով:

Նա բոլոր միջոցները ձեռք առավ, որպեսզի կանխի պաշարվածների փախուստի ամեն մի հնարավորություն: Իր գումարտակների օղակն ավելի խտացրեց այնպես, որ ոչ մի մարդ չկարողանա անցնել նրանց միջով: Նա Սիմուրդենի հետ բաժանեց առաջիկա աշխատանքը: Գովենն անտառի կողմից գրոհելու ղեկավարությունն իրեն պահեց, իսկ Սիմուրդենն ընդունեց սարահարթում դասավորված զորքերի հրամանատարությունը: Պայմանավորվեցին, որ երբ Գովենն ու Գեշանը գրոհ սկսեն անցքի միջով, Սիմուրդենն իր մարտկոցի վեց հրանոթների կողքին կանգնած կհսկի կամուրջը և խանդակը:

### XIII. ԻՆՉ Է ԱՆՈՒՄ ՄԱՐԿԻԶԸ

Մինչ դուրսը գրոհի պատրաստություններ էին տեսնում, ներսում պատրաստվում էին պաշտպանության:

Երկու-երեք ցեղաներ վառողի պայթյունով Տուրգ աշտարակին հասցրած ուժեղ հարվածը ճեղք էր բացել նրա

հաստ պատի միջով: Ծեղքն սկսվել էր հիմքից, ճաքեցրել էր պատի ամբողջ հաստությունը և մի անձն անցքով վերջանում էր ցածի հարկում: Այդ անցքը գրոհի համար ավելի հարմար դարձնելու նպատակով պաշարողները թնդանութի արկերի հարվածներով ավելի էին լայնացրել այն:

Պայթյունից ճեղքված ստորին հարկը բաղկացած էր մի ընդարձակ կլոր դահլիճից, որի կենտրոնի հաստ սյունը կամարն էր պահում: Այս դահլիճը, որ ամենամեծն էր ամբողջ աշտարակում, բոլորովին դատարկ էր: Այն ոչ լուսամուտներ ուներ, ոչ հրակնատներ, ոչ էլ օդանցքներ, իսկ օդ ու լույս այնտեղ այնքան կար, որքան գերեզմանում: Այս դահլիճն ուներ երկու դուռ. մեկը, որ երկաթակուռ էր, տանում էր դեպի ստորգետնյա բանտը, մյուսը բացվում էր դեպի վերև տանող սանդուղքը: Բոլոր սանդուղքները հատված էին պատի հաստության մեջ:

Պաշարողները հույս ունեին, որ հենց այս ցածրակամար դահլիճը կխուժեն բացված անցքով: Բաց ստորին հարկը գրավելով գրոհն ամենևին էլ չէր վերջանալու. պետք էր գրավել նաև վերին հինգ հարկերը: Իսկ պաշարված տանինը հոգու առաջ հարց էր կանգնած՝ ինչպե՞ս պաշտպանվել: Պատի ճեղքվածքը փակելը դժվար չէր, բայց անօգուտ կլիներ. միևնույն է, արկերը նորից կճեղքեին: Ավելի լավ էր բարիկադի մասն մի բան շինել, որով կարելի էր հրացանային կրակ ուղղել պաշարողների վրա: Դրսի կողմից ճեղքը բաց թողնելով՝ բարիկադը այն կփակեր ներսից: Պաշարվածները բավականաչափ նյութեղեն ունեին և ամուր բարիկադ սարքեցին՝ անցքեր թողնելով հրացանների փողերի համար: Բացի դրանից, հարմար տեղերում ֆուգասներ դրին:

Մարկիզն անձամբ էր ղեկավարում նախապատրաստական բոլոր աշխատանքները: Նա հրամաններ ու կարգադրություններ էր անում, քաջալերում, ոգևորում ու սիրտ էր տալիս, բոլոր աշխատանքների ոգին էր, տիրական ու ահեղ ոգին:

Բարիկադով փակեցին ցածի երկու հարկերը, պատուհաններն ամուր ծածկեցին, դռների ետևը հաստ գերաններ ամրացրին՝ ծայրերը խրելով հատակի մեջ: Ազատ թողին

միայն պտուտակաձև սանդուղքի անցքը, որը բոլոր հարկերը միացնում էր իրար, որովհետև այդ անցքը պաշարողների առաջ փակելը կնշանակեր փակել նաև պաշարվածների համար: Ամրությունների պաշտպանությունը միշտ էլ թույլ տեղեր է ունենում:

Պատանու պես ժիր և ուժեղ մարկիզը աշխատում էր բոլորին հավասար, գերաններ էր բարձրացնում, քարեր էր փոխադրում, որով բոլորին անխոնջ եռանդի օրինակ էր տալիս: Ինչպես հավասարը՝ հավասարի հետ նա կատակներ էր անում դաժան վայրենիների այդ խմբի հետ, միաժամանակ մնալով նրանց հպարտ ու հասարակ, բարեկիրթ ու ահավոր տերը: Նրան չլսելու մասին մտածել անգամ չէր կարելի: Նա հենց սկզբից հայտարարել էր. «Եթե ձեր կեսը հրաժարվի ենթարկվել ինձ, ես մյուս կեսին կհրամայեմ գնդակահարել անհնազանդներին և ամբողջ կպաշտպանեմ մնացած մարդկանցով»: Այսպիսի հայտարարությունը ստիպում է պաշտել առաջնորդին:

#### XIV. ԻՆՉ Է ԱՆՈՒՄ ԻՄԱՆՈՒՍԸ

Մինչ մարկիզն զբաղվում էր պատի մեջ բացված անցքի ու աշտարակի ամրացումով, այդ նույն ժամանակ Իմանուսն զբաղված էր կամքով: Պաշարման հենց սկզբից երկրորդ հարկի լուսամուտների տակ կախված փրկարար ելարանը մարկիզի հրամանով հանել և փոխադրել էին գրադարան: Գովեներ հենց այդպիսի ելարան էր ուզում ձեռք բերել:

Ցածի հարկի լուսամուտները պաշտպանված էին երեք շարք երկաթե ձողերով, որոնք խրված էին քարե պատի մեջ, այնպես որ այդ լուսամուտներով ոչ ներս մտնելու, ոչ դուրս գալու ոչ մի հնարավորություն չկար: Գրադարանի լուսամուտները վանդակներ չունեին, բայց գետնից շատ բարձր էին:

Իմանուսն իրեն օգնական էր վերցրել իր նման երեք մարդ, որոնք ամեն ինչի ընդունակ էին ու պատրաստ: Դրանք էին՝ Գուանարը, որի մականունն էր Ոսկե Ճյուղ, և Պիկ ան Բուա ազգանունով երկու եղբայր: Գուանարի

եղբորը հանրապետականներն սպանել էին, ուստի նա իր դաժանությամբ Իմանուսին չէր գիշում:

Իմանուսը մի գաղտնի լապտեր վերցնելով բաց արեց երկաթե դուռը և ուշիուշով զննեց դռնակի բոլոր երեք հարկերն էլ: Հավաստիանալով, որ վերին հարկը բավականաչափ լցված է ծղոտով ու խոտով, իջավ ցածի հարկը: Նա պատվիրեց մի քանի աման ածուխ բերել, դրանք շարեց ձյութի տակառի կողքին, ամբողջ հատակին չոր ցախերի խորձեր փռեց, զննեց ծծումբով հագեցված պատրույգը, որի մի ծայրը երկաթյա դուռն տակով տարված էր աշտարակ, և համոզվելով, որ պատրույգը կանոնավոր վիճակում է, մյուս ծայրը դրեց ձյութի լճակի մեջ, որ դիտմամբ թափել էր տակառի ու ցախի խորձերի տակ: Հետո նա հրամայեց զգուշությամբ գրադարան փոխադրել այն մահճակալները, որոնց մեջ քնած էին երեք երեխաները: Բոլոր երեքն էլ՝ Ռենե-Ժանը, Գրո-Ալենը և Ժորժետան քնած էին խոր քնով և ոչ մեկը չարթնացավ:

Նրանց մահճակալները հասարակ գյուղական օրորոցներ էին, այսինքն՝ գործված զամբյուղներ՝ շատ ցածր կողերով: Այդպիսի մահճակալներն ուղղակի հատակին են դրվում, որպեսզի երեխաները կարողանան առանց ուրիշի օգնության դուրս գալ նրանց միջից: Ամեն մի մահճակալի մոտ մի մեծ աման արգանակ դրին և մի-մի փայտյա գդալ: Կեռերից հանված փրկարար ելարանը դրված էր պատի տակ, իսկ երեք մահճակալները տեղավորեցին ելարանի դիմացի պատի տակ: Հետո Իմանուսը, մտածելով, որ միջաձիգ քամին կօգնի հրդեհի տարածմանը, իր ձեռքով բաց արեց գրադարանի բոլոր վեց լուսամուտները, իսկ Պիկ ան Բուս երկու եղբայրներին ուղարկեց ցածի ու վերին հարկերի լուսամուտները բացելու: Ամառային պարզ ու ջերմ գիշեր էր:

Կամրջի ամբողջ արևելյան կողմը և դռնակի ամբողջ արևելյան ճակատը վերից վար ծածկված էին չորացած, գորշագույն բաղեղով, որը շրջանակել էր բոլոր երեք հարկերի լուսամուտները: Իմանուսն ուշադրություն դարձրեց այդ բաղեղի վրա և մտածեց. «Սա ևս պետք կգա», ապա



նորից մի ուշադիր հայացք գցեց դղյակի և կամրջի վրա, կանչեց իր օգնականներին, և բոլոր չորսն էլ անցան աշտարակ: Իմանուել բանալու կրկնակի դարձով նորից փակեց ծանր, հաստ դուռը, մի անգամ էլ զննեց ծանր կողպեքը և գոհունակությամբ նայեց իր գյուտին՝ ծծումբով հագեցված պատրույգին, որ անց էր կացված երկաթե դռան տակով և այդ րոպեից աշտարակն ու կամուրջը իրար միացնող միակ օղակն էր: Պատրույգն աշտարակի երրորդ հարկի կլոր դահլիճից անցնում էր դղյակի երկրորդ հարկը, ապա օձանման գալարումներով պտուտակաձև սանդուղքով իջնում էր ցածի հարկը, ձգվում էր ամբողջ հատակի վրայով և վերջանում մացառի խրճերի տակ գոյացած ձյութի լճակի մեջ: Իմանուել հաշվել էր, որ աշտարակում պատրույգը վառելու րոպեից քառորդ ժամ հետո գրադարանի տակ կվառվի ձյութը: Բոլոր նախապատրաստություններն ավարտելուց և զննելուց հետո նա բանալին տարավ տվեց մարկիզին, և նա բանալին դրեց իր գրպանը:

Անհրաժեշտ էր հետևել պաշարողների բոլոր շարժումներին:

Իմանուել իր հովվական եղջրիկը գոտուն խրած քարձրացավ աշտարակի դիտարանը և սկսեց հսկել, դիտելով մերթ աջ՝ անտառի կողմը, մերթ ձախ՝ սարահարթի կողմը: Նրա կողքին դիտարանի պատուհանի հրակնատում ընկած էին վառողամանը, գնդակով լի մի տոպրակ և հին լրագրեր. ժամանակ չկորցնելու համար նա սկսեց փամփուշտներ շինել:

Առավոտյան ծագող արեգակը լուսավորեց անտառի եզրին ոտից-գլուխ զինված ու մարտի պատրաստ զինվորների վեց գումարտակը, սարահարթում՝ վեց հրանոթից բաղկացած մարտկոցը՝ արկերով լի արկղերով, աշտարակում՝ ինը մարդ, որոնք հրացաններն ու ատրճանակներն էին լցնում և գրադարանում՝ երեք օրորոց, որոնց մեջ քնած էին երեխաները:

## ՓՈՔՐԻԿՆԵՐԸ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

## I

Երեխաներն արթնացան: Ամենից առաջ արթնացավ աղ-  
ջիկը:

Արթնացող երեխան նման է բացվող ծաղկի, թվում է,  
թե մանկական անաղարտ հոգին նույնքան անուշաբույր է,  
որքան ծաղիկը:

Ժորժետան, որ երեքի մեջ ամենափոքրն էր (նա մի  
տարի ութ ամսական էր), գլուխը բարձրացրեց բարձից, ան-  
կողնում նստեց, նայեց իր տոտիկներին և սկսեց թոթովել:  
Արևի շողը խաղում էր նրա օրորոցում, և դժվար էր ասել,  
որն է ավելի վարդագույն՝ ծագող արևի շողը, թե՛ Ժորժե-  
տայի տոտիկները:

Մյուս երկուսը դեռ քնած էին. տղամարդիկ սիրում են  
շատ քնել: Իսկ Ժորժետան ուրախ ու հանգիստ նստած  
թոթովում էր:

Ռենե-Ժանի մազերը մուգ էին, Գրո-Ալենինը՝ շագանա-  
կագույն, Ժորժետայինը՝ խարտաշ: Հաճախ երեխաների  
մազերը տարեցտարի մգանում են: Ռենե-Ժանը քնած էր  
երեսնիվայր, երեսը թաթիկներին սեղմած: Գրո-Ալենի ոտ-  
քերը կախվել էին զամբյուղի եզրից:

Երեքն էլ ցնցոտիների մեջ էին: Կարմիր գդակ գունար-  
տակից նվեր ստացած շորերը վաղուց մաշվել էին: Այն  
հնոտին, որ նրանք հագած ունեին, նույնիսկ չէր կարելի  
շապիկ անվանել: Երկու տղաներն էլ համարյա մերկ էին,  
իսկ Ժորժետայի վրա կար մի լաթ, որը մի ժամանակ շր-  
ջագեատ էր եղել: Եվ ո՞վ պիտի հոգար երեխաների մա-  
սին: Նրանք մայր չունեին: Վայրագ գեղջուկները անտա-  
ռից անտառ, դաշտից դաշտ քարշ տալով երեխաներին՝  
բաժին էին հանում նրանց իրենց ուտելիքից, ահա ամբողջ  
հոգատարությունը, որ ստանում էին այդ երեխաները: Ամեն  
ոք կարող էր տնօրինել նրանց կյանքը, բայց ոչ մեկը հայր  
չէր նրանց համար: Ցնցոտիների մեջ էին նրանք, բայց երե-

խան ցնցոտու մեջ էլ հրապուրիչ է: Հիանալի՝ երեխաներ էին դրանք:

Ժորժետայի թոթովանքի մեջ, ըստ երևույթին, ոչ մի տխուր բան չկար, որովհետև նրա ամբողջ դեմքը փայլում էր ժպիտից: Ժպտում էին նրա շրթունքները, ժպտում էին աչիկները, ժպտում էին այտերի փոսիկները:

Բացվում էր ամառային սքանչելի օրը. երկինքը կապուտակ էր, օդը՝ ջերմ:

Ժորժետայից հետո արթնացավ ավագը՝ Ռենե-Ժանը, չորսամյա այդ «մեծ մարդը»: Նա ոտքի թռավ, քաջաբար ցած քայլեց զամբյուղի եզրից, տեսավ արգանակով լի ամանը, հասկացավ, թե ինչի համար է դա, նստեց հատակին և սկսեց ուտել:

Ժորժետայի թոթովանքը Գրո-Ալեմին չէր արթնացրել, բայց հենց որ Ռենե-Ժանի փայտե գդալը ամանին դիպչելով չիկաց, նա ևս աշխուժորեն կողքի շուռ եկավ և աչքերը քացեց: Գրո-Ալեմը երեք տարեկան էր: Արգանակը տեսնելով՝ նա առանց զամբյուղից դուրս գալու ձեռքը մեկնեց, ամանը վերցրեց, դրեց իր գոգին և գդալը բոունքքի մեջ սեղմելով նույնպես սկսեց ուտել:

Ժորժետան ոչինչ չէր լսում:

Ռենե-Ժանը արգանակն ուտելուց հետո գդալով քերեց ամանի տակը, խոր շունչ առավ և հպարտ-հպարտ ասաց.

— Ամբողջ արգանակը կերա:

Այս խոսքերը Ժորժետային ուշքի քերին:

— Ալգանակ,— կրկնեց նա և տեսնելով, որ Ռենե-Ժանն արդեն կերել է, իսկ Գրո-Ալեմն ուտում է, ինքն էլ վերցրեց իր կողքին դրած արգանակի ամանը և սկսեց ուտել, ավելի հաճախ գդալն ականջին տանելով, քան թե բերանին:

Մեկ-մեկ էլ նա ձեռքով էր ուտում:

Գրո-Ալեմն ավագ եղբոր օրինակով ամանը գդալով քերեց, որից հետո երկուսն էլ սկսեցին սենյակում վազվզել:

## II

Հանկարծ դրսից, անտառի կողմից եղջրիկի ձայն լսվեց՝ խիստ ու տիրական: Որպես պատասխան վերևից, աշ-

տարակի վրայից արձագանքեց փողը: Այս անգամ եղջերիկը հարցնում էր, իսկ փողը՝ պատասխանում:

Եղջերիկը երկրորդ անգամ հնչեց, և փողը երկրորդ անգամ արձագանքեց:

Ապա ցածից, անտառի եզրից լսվեց մի հեռավոր, բայց պարզ լսելի ձայն.

— Ավագակներ, անձնատուր եղեք: Եթե մինչև մայրամուտ առանց որևէ պայմանի անձնատուր չլինեք, մենք գրոհ կսկսենք:

Մի ուրիշ ձայն, որ ավելի շատ վայրի գազանի մոնչոցի էր նման, քան մարդկային ձայնի, աշտարակի դիտարանից պատասխանեց.

— Գրոհեցե՛ք:

Սրան որպես պատասխան առաջին ձայնը ցածից գոռաց.

— Գրոհն սկսելուց կես ժամ առաջ մենք կկրակենք մի հրանոթից. դա մեր վերջին նախազգուշացումը կլինի:

Եվ վերևից պատասխանեցին.

— Գրոհեցե՛ք:

Մարդկային ձայները երեխաներին չէին հասնում, բայց եղջերիկի ու փողի հնչյուններն ավելի բարձր էին, տարածվում էին հեռուներում, և եղջերիկի առաջին իսկ ազդանշանի վրա Ժորժետան դադարեց ուտել և վիզը երկարացրեց:

Երբ փողը հնչեց, Ժորժետան գդալը ցած դրեց: Եղջերիկի երկրորդ ազդանշանի վրա վեր բարձրացրեց իր աջ ձեռքի ցուցամատը և սկսեց համաչափ թափահարել այն, շեշտելով տակտերը, իսկ երբ եղջերիկն ու փողը լռեցին, նա մատը վեր տնկած մտքի մեջ ընկալ և կիսաձայն մրմնջաց.

— Նլա-գո՛ւմ ա:

Երևի ուզում էր ասել՝ Ավագո՛ւմ է:

Երկու եղբայրները փողի ու եղջերիկի ձայնին ուշադրություն չէին դարձնում. նրանք զբաղված էին ուրիշ բանով, դիտում էին մի նամանահու, որ սողում էր Ռատակի վրա: Գրո-Ալեհն առաջինը տեսավ այն և գոռաց:

— Բզե՛գ:

Ռենե-Ժանը վազեց նրա մոտ: Գրո-Ալեհը հարցրեց.

— Կկծի՞:

— Չսպանես,— ասաց Ռենե-Ժանը:

Եվ երկուսն էլ սկսեցին դիտել այդ պատահական հյուրին:

Մինչ այդ Ժորժետտան արգանակը կերավ վերջացրեց և եղբայրներին որոնելով շուրջը նայեց: Տղամերը լուսամուտի խողովում կուշ էին եկել իրար դիմաց, ճակատները համարյա միմյանց կպցրած և լուրջ դեմքով նամաճիճվին էին նայում: Նրանք աշխատում էին չշնչել, որպեսզի չվախեցնեն «բզեզին», որը դադարել էր սողալ և անշարժացել էր տեղում, գոհ չլինելով, որ այդքան շատ ուշադրության է արժանացել:

Ժորժետտան տեսնելով, որ իր եղբայրները ինչ-որ բան են դիտում, ուզեց իմանալ, թե ինչ է այն: Նրա համար հեշտ բան չէր եղբայրներին հասնել, այնուամենայնիվ, սիրտ արավ սկսել այդ ճամփորդությունը: Դա մեծ դժվարությունների հետ էր կապված: Հատակին շատ իրեր էին թափված: Մի տեղ շուտ եկած աթոռակ, մի ուրիշ տեղ թղթի կապոցներ, քիչ ավելի հեռու՝ բացված դատարկ արկղեր, ինչ-որ հակեր, ալկալ ստարկաների կույտեր, որոնց կողքով պետք էր անցնել ինչպես արշիպելագի ստորջրյա խութերի մոտով են անցնում:

Ժորժետտան քաջաբար ճանապարհ ընկավ: Ամենից առաջ հարկավոր էր մահճակալից դուրս գալ, որ կատակ բան չէր: Հետո նա լողաց խութերի միջով, դժվարությամբ անցնելով նեղիկ նեղուցներով, ճանապարհին ետ հրեց աթոռակը, չորեքթաթ անցավ երկու սնդուկների արանքով, հստակ թղթի մի մեծ կապոցի, մի կողմից վեր մագլցելով իջավ մյուս կողմում, որի ժամանակ բացվել էր նրա փոքրիկ վարդագույն մարմնի ցածի մասը, ապա, վերջապես, դուրս եկավ քաց ծով, աչսինքն՝ սենյակի մյուս մասը, որտեղ հատակին այնքան էլ շատ բաներ չկային թափված և նրան ոչ մի վտանգ չէր սպառնում: Այստեղ նա համարձակորեն առաջ գնաց, կառվի ձագի համարձակությամբ չորեքթաթ վազելով հատակի ազատ տարածությունը, և բարեհաջող հասավ լուսամուտին: Բայց այստեղ նրան սպասում էր մի լուրջ խոչընդոտ, պնտի երկարությամբ ձգված էր մի երկար տանդուղք: Ժորժետտան կանգ առավ և մի պահ մտածելուց հետո որոշում ընդունեց. իր մարտիկներով ամուր կառչելով

սանդուղքի մատներից մեկին (սանդուղքը կողքի վրա էր դրված, այնպես որ մատները ուղղահայաց դիրք ունեին), նա փորձեց ոտքի կանգնել, բայց ընկավ: Երկրորդ անգամ փորձեց և նորից ընկավ: Երրորդ անգամ նրան հաջողվեց կանգնել: Այն ժամանակ ուղղվելով ու ոտքի կանգնելով նա սկսեց քայլել սանդուղքի երկարությամբ, երկու ձեռքով բռնելով մատները մեկը մյուսի ետևից: Հասնելով սանդուղքի վերջին՝ նա հեռակետը կորցրեց և երերաց, բայց երկու ձեռքով վերջին մատը բռնելով նորից ուղղվեց, սանդուղքն անցավ և Ռենե-Ժանին ու Գրո-Ալեքին նայելով ծիծաղեց:

### III

Ռենե-Ժանը լսելով, որ Ժորժետան ծիծաղում է, ինքն էլ ծիծաղեց, իսկ նրանից հետո ծիծաղեց նաև Գրո-Ալեքը:

Ժորժետայի ճանապարհորդությունը վերջացած էր: Նա նստեց եղբայրների կողքին, լրացնելով գիտնական բնաւերների շրջանակը: Բայց նամանիճում անհետացել էր: Նա օգտվել էր Ժորժետայի ծիծաղից և խցկվել հատակի տախտակների արանքը:

Բայց այդ ժամանակ տեղի ունեցան ուրիշ հետաքրքրական իրադարձություններ: Նախ՝ ծիծեռնակներ երևացին: Երևի նրանց բույնը տանիքի տակ էր գտնվում: Երեք երեխաների մոտիկությունից անհանգստանալով՝ նրանք բարձր ճալողւմով թռչում էին հենց ուղիղ լուսամուտի մոտ, լայն շրջաններ գործելով օդում: Նրանց անհանգիստ աղմուկը լսելով՝ երեք երեխաներն էլ գլուխները բարձրացրին: Նամանիճումն մոռացվեց: Ժորժետան մատը մեկնեց դեպի ծիծեռնակները և կանչեց.

— Ծուծու՜նք:

Ռենե-Ժանը խստությամբ ուղղեց նրան.

— Ախ դո՛ւ, հիմար աղջիկ: Ծուծու չէ, այլ՝ ծիտիկ, ա՛յ թե ինչպես կասեն:

— Ծիտի՛կ,— կրկնեց Ժորժետան:

Երեքն էլ սկսեցին նայել ծիծեռնակներին:

Մի րոպե անց լուսամուտից ներս ընկավ մի մեղու: Նա

Անրա թուով աղմուկով, այնպիսի ուժեղ բզզոցով, որ կարծես ասում էր. «Թոշում եմ, թոշում: Եղել եմ վարդերի մոտ, հիմա եկել եմ մանկիկներին տեսնելու: Է, ի՞նչ եք ամուսնացնում, փոքրիկներ»:

Մեղուն լավ տնտեսուհի է. աշխատելիս նա երգում է, բայց մեկ-մեկ էլ փնչում է: Երեք երեխաներն էլ հետևում էին մեղվին՝ առանց հայացքը կտրելու նրանից: Մեղուն դես ու դեն թուով գրադարանում, նայեց թուր անկյունները: Կարծես նա իրեն զգում էր ինչպես իր տանը, իր սեփական փերականում: Թները թափահարելով և միալար բզզալով նա թոշում էր պահարանից պահարան, ապակիների միջով նայում էր գրքերի վերնագրերին, ասես կարդալ էր իմանում: Իր պտույտը վերջացնելով՝ նա դուրս թուով:

— Տուն գնաց,— ասաց Ռեմե-ժանը:

— Սա էլ գազան էր,— ասաց Գրո-Ալենը:

— Չէ,— առարկեց Ռեմե-ժանը,— սա ճանճ էր:

— Ծա՛նճ,— կրկնեց Ժորժետան:

Գրո-Ալենը հատակին ընկած մի թել գտավ, որի ծայրին օղակ էր արված, վերցրեց երկու մատով և սկսեց իր շուրջը պտտեցնել, մեծ ուշադրությամբ հետևելով նրա գծած շրջաններին: Ժորժետան, որ նորից չորքոտանի էր դարձել, հատակի վրա ճամփորդելիս նույնպես մի գյուտ էր արել. նա գտել էր մի հիմ, մղմուղակներ բազկաթոռ, որի ծակերից դուրս էին թափվել ձիու մազերը: Այդ բազկաթոռի մոտ կանգնած՝ Ժորժետան մատով փորփրում էր նրա ծակերը և մազերը դուրս քաշում այնտեղից: Հանկարծ նա բարձրացրեց փոքրիկ ցուցամատը, որ նշանակում էր «Լսեցեք»:

Երկու տղան էլ ետ նայեցին:

Դիտում, ինչ-որ հեռու տեղից խուլ դղրդյուն էր լսվում: Երևի անտառի մոտ, պաշարողների ճամբարում ինչ-որ ուզամական տեղաշարժեր էին կատարվում: Լսվում էին ազդանշաններ, ձիերի խրխիռ, թմբուկների զարկեր, ումբերի արկղերի շխշխկոց, շղթաների զնգոց, ամեն տեսակ ուզամական աղմուկներ, որոնք միաձուլվելով մի ներդաշնակություն էին կազմում: Երեխաները լսում էին կախարդվածի պես:

Աղմուկը դադարեց, քայց Ռեմե-Ժանն անշարժ կանգնած ինչ-որ բան էր մտածում:

Եվ նա հագիվ լսելի շշմջաց.

— Մամա:

— Մամա,— կրկնեց Գրո-Ալենը:

— Մամա,— թոթովեց Ժորժետան:

Դրանից հետո Ռեմե-Ժանն սկսեց վազվզել սենյակում Գրո-Ալենը հետևեց նրա օրինակին:

Գրո-Ալենն ընդօրինակում էր Ռեմե-Ժանի ամեն մի շարժումը: Ժորժետան ավելի ինքնուրույն էր: Երեք տարեկանները միշտ ընդօրինակում են չորս տարեկաններին, քայց մեկ ու կես տարեկանում մարդիկ պաշտպանում են իրենց անկախությունը:

Ժորժետան շարունակում էր ճտած մնալ, երբեմն միայն մի-մի բառ արտասանելով: Նա նախադասություն կազմել չէր իմանում, և առած բառերն էլ միայն միվանկանի էին լինում:

Քայց օրինակը վարակիչ է: Տղաների ուրախ վազվզոցը հրապուրեց Ժորժետային: Եվ այդ վերջացավ նրանով, որ Ժորժետան էլ, որքան կարող էր, հետևեց եղբայրների օրինակին, և երեք զույգ փոքրիկ տոտիկներն սկսեցին դուրս գալ, կաղնե փոշոտ պարկետը:

Ժորժետան նոր էր սկսում քայլել, ուստի ավելի շատ ընկնում էր, քան վազում: Դրա համար էլ եղբայրների ետևից վազելիս նա գերադասում էր չորեքթաթ անել:

Հանկարծ Ռեմե-Ժանը, որ վազել էր լուսամտի մոտ, թաքնվեց որմնախորշի անկյան ետևը: Նա նկատել էր, որ դրսից ինչ-որ մեկը իրեն է նայում: Դա սարահարթում տեղավորված կապույտների ճամբարի զինվորներից մեկն էր: Օգտվելով զինադարարից և որոշ չափով էլ խախտելով այն, նա սիրտ էր արել գալ հասնել դեպի կիրճն իջնող զանգվառի եզրը, որտեղից երևում էր գրադարանի ներսը: Տեսնելով, որ Ռեմե-Ժանը ինչ-որ բանից վախեցավ ու թաքնվեց, Գրո-Ալենն իր պարտքը համարեց նույնպես թաքնվել և սեղմվեց եղբորը: Այն ժամանակ Ժորժետան ևս



թաքնվեց տղաներին կաշելով: Բոլոր երեքն էլ անշարժա-  
նալով լուեցին: Ժորժետանն անուշիկ մատը շուրթերին դրեց:  
Մի քանի րոպեից հետո Ռենե-Ժանը սիրտ արեց գլուխը  
դուրս հանել և նայել լուսամուտից: Զինվորը կանգնած էր  
անուշ տեղը: Ռենե-Ժանը շտապ ետ քաշեց գլուխը: Սարսա-  
փահար մանուկները անուշիկ շնչել չէին համարձակվում:  
Այսպես քավական երկար տևեց: Վերջապես վախը ձանձ-  
րացրեց Ժորժետային. նա սիրտ արեց դուրս նայել լուսամու-  
տից: Զինվորը գնացել էր: Այն ժամանակ երեխաները ան-  
րից սկսեցին վազվզել:

Չնայած Գրո-Ալենը միշտ հիանում էր Ռենե-Ժանով և  
ստրկաբար ընդօրինակում նրան, բայց նա էլ ուներ իր առան-  
ձին շնորհքը. միշտ մի քան գտնում էր: Նրա եղբայրն ու  
քույրիկը հանկարծ զարմանքով տեսան, որ Գրո-Ալենը գծի  
պես վազվզում է սենյակում, իր ետևից քարշ տալով մի  
քառանիվ տիկնիկային սալակ, որ չգիտես որտեղից էր  
գտել:

Բոլորից մոռացված այդ սալակը տարիներ շարունակ  
ընկած էր եղել փոշու մեջ, հանճարների ստեղծագործու-  
թյունների և գիտնականների կիսանդրիների հարևանու-  
թյամբ:

Գուցե թե Գովենն էլ մանուկ հասակում խաղացել էր այդ  
սալակով:

Գրո-Ալենն իր գտած թելը մտրակ էր դարձրել և շրջի-  
կացնում էր նրանով իր գերազանցությունը գիտակցելով:

Ռենե-Ժանն ասաց, որ ինքը կլծի սալակին, իսկ Ժոր-  
ժետան ցանկություն հայտնեց սալակում նստել: Նա ինքը  
բարձրացավ սալակի մեջ ու նստեց: Ռենե-Ժանը ձի դար-  
ձավ, իսկ Գրո-Ալենը՝ կառապան: Բայց պարզվեց, որ կա-  
ռապանը քշել չի իմանում, և ձին սկսեց սովորեցնել նրան:

— Գոռա՛ «նո՛», — ասաց Ռենե-Ժանը:

— Նո՛, — կրկնեց Գրո-Ալենը:

Սալակը շուտ եկավ: Ժորժետան վայր ընկավ, ցավ զգաց  
և ճվաց: Նա շատ էր ուզում լաց լինել, բայց Ռենե-Ժանն  
ասաց.

— Դե լա՛վ, լա՛վ, ախր դու մե՛ծ ես:

— Մե՛ծ եմ,— թոթովեց Ժորժետան և այդ գիտակցութեամբ հանգստացավ:

Գրադարանի լուսամուտների տակ դրսի կողմից շատ լայն քիվ կար: Քամին նրա վրա շատ փոշի էր կիտել: Անձրևներն այդ փոշին քավական հաստ հողաշերտ էին դարձրել, քամին էլ սերմեր էր բերել: Ծատ դիմացկուն մամխենու մի սերմ օգտվել էր այդ պատրաստի մարգից և ծլել: Մի տարի անց արդեն մի ամբողջ թուփ էր դարձել: Օգոստոս ամսին էր, և թուփը ծածկված էր պտուղներով: Ծյուղերից մեկը գրադարանի լուսամուտից ներս էր մտել և կախվել մինչև հատակը:

Գրո-Ալենը, որ գտել էր թելն ու սայլակը, առաջինը նկատեց նաև մամխենու այդ ճյուղը: Նա մի պտուղ պոկեց ու կերավ:

— Ես էլ եմ ուզում,— ասաց Ռենե-Ժանը:

Նրանց մոտ շտապեց նաև Ժորժետան, այս անգամ չորեքթաթ անելով, որովհետև այդպես ավելի արագ էր գնում: Երեքով միասին ճյուղը պոկեցին և բոլոր պտուղները կերան: Ծատ ուրախալի ու ծիծաղելի բան կար այստեղ: Երեքն էլ կեղտոտվել էին պտուղների կարմիր հյութով:

Մամխենու փուշը ծակում էր մերթ մեկի, մերթ մյուսի մատը. հեշտությամբ ոչինչ ձեռք չես բերի: Ժորժետան դեպի Ռենե-Ժանը մեկնեց իր մատը, որի վրա արյան մի փոքրիկ կաթիլ կար, և փուշը ցույց տալով թոթվեց.

— Կծո՛ւմ է:

Գրո-Ալենը, որի մատն էլ ծակել էր փուշը, նայեց փշին, շրթունքներն ունեցրեց ու ասաց.

— Կենդանի է, փի՛սը:

— Չէ՛, կենդանի չէ,— ասաց Ռենե-Ժանը,— դա փայտ է:

— Փի՛ս փայտ,— ասաց Գրո-Ալենը:

Ժորժետան այս անգամ էլ ուզում էր լաց լինել, բայց գերադասեց ծիծաղել:

## V

Մինչ այդ Ռենե-Ժանը, գուցեև նախանձելով կրտսեր եղբոր գյուտերին, մի մեծ ծրագիր էր մտածել: Դեռ այն ժամանակ, երբ մատները ծակծկելով պտուղներ էր քաղում

մամխենու ճշողից, հաճախ նրա հայացքն ընկնում էր գրա-  
դարանի կենտրոնում կանգնած գրակալին: Այդ գրակալի  
վրա դրված էր «Վարք սրբո Բարդուղիմէոսի» գիրքը:

Դա իսկապես մի չքնաղ, հազվագյուտ գիրք էր: Այն  
հրատարակվել էր 1682 թվականին, Քյոլնում: Տպագրվել  
էր ոչ թե հոլանդական, այլ արաբական հիանալի մետաքսյա  
թղթի վրա, որը երբեք չի կորցնում իր սպիտակ գույնը: Կազ-  
մը ոսկեզարդված սադափից էր, ամրիչները՝ արծաթից: Գրո-  
քի սկզբում և վերջում գետեղված մաքուր թերթերը ամենա-  
ընտիր մագաղաթից էին: Գրքում շատ փորագրանկարներ  
կային՝ կատարված փայտի ու պղնձի վրա, ինչպես նաև  
զանազան երկրների աշխարհագրական քարտեզներ:

Դա մի շատ գեղեցիկ գիրք էր, և դրա համար էլ Ռենե-  
ժանը շարունակ նրան էր նայում և գուցե և մեծ հետաքրքրու-  
թյամբ: Գիրքը գրակալի վրա բացված էր հենց այն էջում,  
որտեղ սուրբ Բարդուղիմէոսի փորագրած նկարն էր: Հա-  
տակից էլ այդ նկարը երևում էր, որովհետև գիրքը դրված  
էր թեք դիրքով: Երբ արդեն բոլոր պտուղները կերել էին,  
Ռենե-ժանը նայեց գրքին լարված հետաքրքրության հա-  
յացքով: Ժորժետան նույնպես նկարը նկատեց և ասաց.

— Նկալ:

Հենց այս խոսքն էլ, ըստ երևույթին, Ռենե-ժանին ստի-  
պեց սիրտ անել: Եվ այդ ժամանակ, ի մեծ զարմանս Գրո-  
Ալենի, Ռենե-ժանը կատարեց մի արտասովոր բան: Գրա-  
դարանի անկյունում կար մի մեծ, ծանր կաղնի աթոռ: Ռենե-  
ժանը հաստատուն քայլերով գնաց դեպի այդ աթոռը և  
բաշեց այն սենյակի մեջտեղը: Ապա մոտեցրեց գրակալին,  
բարձրացավ վրան և վճռական շարժումով երկու բռուցքը  
դրեց գրքի վրա:

Իր նպատակին հասնելով՝ նա բռնեց «նկարի» վերին  
անկյունից և սկսեց պոկել այն: Բայց, որքան էլ աշխատում  
էր կանոնավոր անել այդ, նկարը շեղակի պոկվեց. նրա ամ-  
բողջ ձախ կողմը մնաց գրքի մեջ, իսկ պոկված մասը նա  
տվեց Ժորժետային: Ժորժետան քարեհաճորեն վերցրեց  
սրբի նկարը և ասաց.

— Քեյի,— ուզելով ասել՝ քեռի:

— Ինձ է՛լ,— գոռաց Գրո-Ալենը:

Առաջին պոկված թերթը, ինչպես առաջին թափված արյունը, վճռում է գործը. դրանից հետո սկսվում է ջարդը: Ռենե-Ժանը գրքի թերթը շուռ տվեց:  
Հետևյալ «նկարը» նա բզկտելու տվեց Գրո-Ալենին:  
Մինչ այդ Ժորժետան իր ստացած նկարը երկու կտոր արեց, իսկ հետո էլ՝ չորս կտոր:

## VI

Նկարի քառասունը վերջացնելուց հետո Ժորժետան ձեռքը մեկնեց Ռենե-Ժանին ու ասաց.

— Էլի՛:

Սուրբ Բարդուղիմեոսին հետևեցին ուրիշ նկարներ:

Հետո մնացին աշխարհագրական քարտեզները: Ռենե-Ժանը դրանք էլ բաժանեց: Այս էլ վերջացնելով՝ նա գիրքը գցեց հատակին:

Դա մի սարսափելի պահ էր: Գրո-Ալենն ու Ժորժետան սոսկումով ու հիացմունքով տեսան, որ Ռենե-Ժանը հոնքերը կիտած ու ատամները սեղմած, բոլոր մկանները լարելով ջանում է գրակալից ցած գցել ծանր հատորը: Տեղահան արված հաստափոր գիրքը հասավ գրակալի եզրին, նրա մի ծայրը ցած կախվեց, անվճռականորեն ավելի ևս առաջ շարժվեց և ողբագին շրխկաց հատակին: Բարեբախտաբար երեխաների գլխին չընկավ:

Նշանավոր գրքի անկումը, ինչպես ամեն մի նշանավոր անձի անկում, մեծ աղմուկ բարձրացրեց և փոշու մի ամբողջ ամպ:

Հակառակորդին ոչնչացնելով՝ Ռենե-Ժանը աթոռից ցած իջավ: Գրո-Ալենը մի քանի րոպե մտախոհ կանգնելուց հետո վճռական քայլով մոտեցավ հատակին փոխած գրքին և ոտքով խփեց նրան:

Այս արարքը որպես ազդանշան ծառայեց: Ավերմունքի կիրքը նստած է մեզանից ամեն մեկիս մեջ: Ռենե-Ժանը մոտեցավ գրքին և նույնպես ոտքով խփեց նրան: Ժորժետան փորձեց նույնն անել, բայց թափ առնելով նստեց հատակին: Օգտվելով իր դիրքի հարմարությունից՝ նա իսկույն

հարձակվեց գրքի վրա: Ժորժետայից հետո խեղճ գրքի վրա հարձակվեց Ռեմե-Ժանը, ապա՝ Գրո-Ալենը: Եվ երեքը միասին, գործելով ձեռքերով ու ոտքերով, աստամներով ու եղունգներով, լարումից կարմրատակած, վայրի ցնծությամբ ու քրքիջով, անողոքաբար ու կատաղորեն սկսեցին պոկոտել մնացած վերջին նկարները, ճմրթել թերթերը, պատառոտել ներդիրները, պոկոտել կազմի ոսկեզարդած սաղափները, դուրս քաշել արծաթե անկյունակալների մեխերը, պատրոտել մագաղաթները:

Սա մի կատարյալ ոչնչացում էր:

Ծատ ժամանակ կորցրին նրանք այս աշխատանքի վրա, քայց և այնպես գործը վախճանին հասցրին. սուրբ Բարդուղիմեոսից ոչինչ չմնաց:

Երբ ամեն ինչ վերջացավ, երբ պոկված էր վերջին թերթը և վերջին նկարն ընկած էր հատակին, երբ գրքից միայն թղթի պատառներ մնացին կազմի մեջ, Ռեմե-Ժանը վեր կացավ, նայեց թղթի պատառներով ծածկված հատակին և ծափ զարկեց: Գրո-Ալենը, իհարկե, հետևեց նրա օրինակին: Ժորժետան հատակից մի թերթ վերցրեց, չորեքթաթ մոտեցավ լուսամուտին, ոտքի կանգնեց, թեքվեց դեպի լուսամուտի գոգը, որ հասնում էր նրա կզակին և սկսեց մանր պատառներ անել ձեռքի թերթը և ցած թափել լուսամուտից:

Տղաներին այդ դուր եկավ, և նրանք էլ սկսեցին նույնն անել: Նրանք վերցնում ու պատառոտում էին թերթերը, վերցնում ու պատառոտում էին, մինչև որ շուտով անողոք մանրիկ մատներով մինչև վերջին թերթը բզկտված հնամենի գիրքը քամուն տրվեց: Ժորժետան, որ մտախոհ նայում էր թղթի մանրիկ պատառների օգնում ճախրող պարսիկ, թոթովեց.

— Թիթելնե՛լ...

Ավերմունքը վերջացած էր:

Մինչ այդ օրը թեքվել էր դեպի երեկո: Ծոգն ավելի էր սաստկացել: Երեխաները հանգիստ էին ուզում: Ժորժետայի աչքերը կուլ էին գնում: Ռեմե-Ժանը մոտեցավ իր մահճակալին, դուրս քաշեց խոտով լցված ներքնակը, քարշ տվեց լուսամուտի մոտ, վրան պառկեց ու ասաց.

— ԲՆԵՆՔ:

Գրո-Ալեմն ու Ժորժետան նույնպես պառկեցին. Գրո-Ալեմը գլուխը դրեց Ռենե-Ժանի վրա, Ժորժետան՝ Գրո-Ալեմի վրա, և երեք փոքրիկ ոճրագործներն էլ քուն մտան:

Բաց լուսամուտից փչում էր ամառային երեկոյի ջերմ շունչը. բլուրներից ու հովիտներից փչող վայրի ծաղիկների բուրմունքը խառնվում ու միաձուլվում էր քամու շնչին: Ծուր-ջը անխռով անդորրությամբ էր տիրում: Ամեն ինչ շողում էր, հանդարտվում, ամեն ինչ լի էր սիրով: Մայրամուտին մոտեցող արեգակը երկրին ուղարկում էր իր գուրգուրանքը՝ լույսը: Տուրգ ամրոցի գլխին թռչուններն էին պտտվում, ծիծեռնակները ներս էին նայում լուսամուտներից, ասես ուզում էին իմանալ, թե լա՞վ են քնած երեխաները:

Ահա արեգակն արդեն համարյա դիպավ հորիզոնին:

Հանկարծ միրհող բնության խոր անդորրության մեջ մի հուր փալատակեց, ապա թնդաց մի խլացուցիչ որոտ: Դա թնդանոթի կրակոց էր: Որոտի արձագանքը տարածվեց ամբողջ շրջակայքում, բլուրից բլուր անցավ և դարձավ դղրոդոց: Հենց այդ դղրոդոցն էլ արթնացրեց Ժորժետային:

Նա գլուխը բարձրացրեց, պստիկ մատը մեկնեց և քնի մեջ մրմնջաց.

— Դո՛ւմ...

Դղիրդը դադարեց, և ամեն ինչ կրկին թաղվեց լռության մեջ: Ժորժետայի գլուխը իջավ Գրո-Ալեմի ուսին, և մանկիկը նորից քուն մտավ:

## Չ ո Ր Ր Ո Ր Դ Գ Ի Ր Ք

### Մ Ա Յ Ր Ը

#### Լ. ՄԱՀՆ Է ԳԱԼԻՍ

Այդ նույն օրվա երեկոյան խեղճ մայրը (ինչպես գիտենք՝ նա շրջում էր ենթադրաբար) քաքշ էր տալիս ուտքերը: Նա

ամբողջ օրը ոտքի վրա էր եղել և հոգնածությունից քիչ էր մնում վայր ընկնի: Ասեմք՝ այսպես էր լինում ամեն օր: Այժմ նրա կյանքն էր՝ առանց հանգիստ առնելու միշտ առաջ ու առաջ գնալ, որովհետև այն ժամերը, երբ նա ուժասպառ լինելով ընկնում էր, ու քնում, չէր կարելի հանգիստ անվանել, ինչպես և չէր կարելի սնունդ համարել այն փշրանքները, որ նա թռչունի պես ճարում էր ճանապարհներին: Նա քնում և ուտում էր միայն այնքան, որ չմեռնի:

Նախորդ գիշերը նա անց էր կացրել մի լքյալ մարագում: Քնելիս նա զգում էր, թե մկներն ինչպես են վխտում իր տակ, և տանիքի ճեղքերից տեսնում էր աստղերի առկայծումը: Մի քանի ժամ քնելուց հետո նա կեսգիշերին արթնացել էր և իսկույն ճանապարհ ընկել, որպեսզի մինչև կեսօրվա շոգն սկսվելը որքան կարելի է շատ ճանապարհ անցած լինի:

Նա աշխատում էր միշտ գնալ այն ուղղությամբ, որ ցույց էր տվել Վանտորգի գյուղացին. միշտ գնում էր դեպի արևմուտք, հնարավորին չափ չձեղվելով այդ ուղուց: Եթե որևէ մեկը նրա մոտ լիներ, կլսեր, թե ինչպես ամեն րոպե ինքն իրեն կրկնում է՝ «Տուրգ, Տուրգ»: Կարծես նա մոռացել էր բոլոր խոսքերը, բացի այդ մեկ խոսքից, մեկ էլ իր երեխաների անուններից:

Քայլելը նրան օգնում էր մտածելու: Նա մտածում էր, թե ինչ օր էր քաշել, ինչպիսի տառապանքներ է կրել: Բայց դա նրա համար միևնույն էր. նրան հարկավոր է միայն գտնել իր երեխաներին:

Այդ օրը նա ամենից առաջ ճանապարհին հանդիպեց մի գյուղի: Արշալույսը նոր էր քացվում, ամեն ինչ դեռ թաղված էր խավարի մեջ: Չնայած դրան, գյուղի գլխավոր փողոցում տների դռները բաց էին, և լուսամուտներից դուրս էին նայում հետաքրքրասերների գլուխները: Բնակիչները խոտմահույզ էին, ինչպես անհանգստացած փեթակի մեղուներ: Իսկ այդ անհանգստության պատճառն այն էր, որ լսել էին մոտեցող ծանր անիվների շխկոցներ և շղթաների զընգոցներ:

Եկեղեցու առջևի հրապարակում սարսափահար մի ամբոխ կար կանգնած: Բոլորը նայում էին դեպի վեր, բլրի

վրայից իջնող ճանապարհին: Այդ ճանապարհով ինչ-որ բան էր առաջ շարժվում: Դա մի վիթխարի քառանկյւ սալ էր, որ քաշում էին փոկերի փոխարեն շղթաներով լծված հինգ ձի: Սալի վրա գցված էին ինչ-որ երկար չորսուներ ու գերաններ, իսկ կենտրոնում քարձրանում էր ինչ-որ անձն բան, որը ծածկված էր մի մեծ բրեզենտով: Սալի առջևից ու ետևից տասական ձիավոր էին գալիս: Նրանց բոլորի գլխին եռանկյունի գլխարկներ կային, և ամեն մեկի ուսից վեր ցցված էր մի ինչ-որ սուր բան, ըստ երևույթին՝ մերկացրած սուր:

Սալը պահակախմբի ուղեկցությամբ մտավ գյուղ . և ուղղվեց դեպի հրապարակ: Երբ իջնում էր բլրից, սկսել էր լուսանալ, և այժմ արդեն կարելի էր լավ տեսնել այն:

Պարզվեց, որ ձիավորները ժանդարմներ էին և իրոք, գալիս էին մերկացրած սրերով: Սալը ծածկող բրեզենտը սև էր:

Հենց այդ ժամանակ էլ թշվառ մայրը գյուղ մտավ: Նա հավաքված գյուղացիներին մոտեցավ հենց այն րոպեին, երբ սալն ու ժանդարմները հրապարակ էին մտնում: Ժողովված մարդկանց մեջ շշուկ ընկավ: Լսվում էին հարցեր ու պատասխաններ:

— Այս ի՞նչ բան է:

— Գիլիոտին են տանում:

— Որտեղի՞ց:

— Ֆուժերից:

— Իսկ ո՞ր են տանում:

— Չգիտեմ: Ասում են Պարիզյեի կողմը մի ինչ-որ ամրոց:

— Թող գնա ուր ուզում է, միայն թե մեզանից հեռու լինի:

Այդ վիթխարի սալը՝ սև սավանով ծածկված իր բեռով, շղթաները զնգացնող այդ հինգ ձիերը, այդ անձայն ժանդարմները՝ բոլորը միասին դեռ չբացված օրվա աղջամուղջի մեջ սարսափ էին ազդում:

Սալը հրապարակը կտրեց անցավ և գյուղից դուրս գնաց: Ծանր անիվները խանդակների մեջ ընկնելով, դղրդում էին, լծասարքի շղթաները զնգզնգում, թրերը՝ շողշոջ



դում: Հորիզոնում բարձրանում էր արեգակը: Ծանապարհը թեքվեց մի կողմի վրա, և ամեն ինչ անհետացավ:

Այդ նույն րոպեին էր, որ Ժորժետան արթնացավ գրադարանում, որտեղ նրա եղբայրները դեռ քնած էին խաղաղ քնով, և ողջունեց իր վարդագույն տոտիկներին:

## II. ՄԱՀՆ Է ԽՈՍՈՒՄ

Միշել Ֆլեշարը տեսավ, թե ինչպես անցավ տարօրինակ բեռով սալը, բայց չհասկացավ, թե ինչ էր դա և չէր էլ ուզում հասկանալ. նրա աչքի առաջ ուրիշ պատկեր էր կանգնած՝ իր կորած երեխաները:

Նա գյուղից դուրս եկավ, բայց շուտով վախ զգաց. այդ սալից, չուգեց նրա ետևից գնալ, ճանապարհից թեքվեց դեպի ձախ, խորացավ անտառի թավուտի մեջ: Դա Ֆուժեթյան անտառն էր:

Մի քանի ժամ քայլելուց հետո Ֆլեշարը մի զանգակատուն տեսավ և անտառի եզրին ցրված տների տանիքներ: Նա քաղցած էր և զնաց ուղիղ դեպի այդ գյուղը: Հասավ հրապարակ, որտեղ գտնվում էր գյուղապետի շենքը: Այդ գյուղում էր գտնվում հանրապետական զինվորական պահակակետերից մեկը: Այստեղ ևս անհամապատասխան էր նկատվում: Հուզված ամբոխը հավաքվել էր գյուղապետի շենքը տանող սանդուղքի առաջ: Սանդուղքի գլխին կանգնած էր մի մարդ՝ զինվորներով շրջապատված և մի մեծ, բացված պլակատ ձեռքին: Նրա աջ կողմում թմբկահարն էր կանգնած, ձախում՝ մի բանվոր, որ ձեռքին բռնած ուներ մի աման սոսինձ ու մի վրձին: Սանդուղքի վերև, պատշգամբում կանգնած էր գյուղապետը, որն իր գեղջկական շորի վրայից կապած ուներ եռագույն մի լաթ:

Պլակատը ձեռքին մարդը ժողովրդական մունետիկ էր: Նա բարձր ձայնով սկսեց.

— «Ֆրանսիական հանրապետություն, միասնական և անբաժան...»

Հնչեց թմբուկի որոտը: Մունետիկն սկսեց կաթդալ.

— «Հառնաձայն Հասարակական փրկության կոմիտեի

կողմից մեզ տրված հրահանգների ու լիազորությունների...»

Թմբուկը երկրորդ անգամ որոտաց:

Մունետիկը շարունակեց կարդալ.

— «... Եվ ի կատարումն Ազգային Կոնվենտի դեկրետի, որն օրենքից դուրս է հայտարարում զենքը ձեռքին բռնված բոլոր խոովարարներին և քրեական պատժի բարձրագույն չափին է ենթարկում բոլոր նրանց, ովքեր խոովարարներին ապաստան կտան կամ կնպաստեն նրանց փախուստին...»

Մունետիկը թափահարեց իր պլակատը և շարունակեց կարդալ.

— «... Համաձայն ապրիլի 30-ի օրենքի 16-րդ հոդվածի, որը հանրապետության պատգամավորներին անսահմանափակ իշխանությամբ է օժտում ապստամբած գավառներում, օրենքից դուրս են հայտարարվում...»

Նա մի պահ կանգ առավ, ապա շարունակեց.

— «... Բոլոր այն անձինք, որոնք հայտնի են հետևյալ անուններով ու մականուններով...»

Ամբոխը լսողությունը լսեց:

— «... Հանտեմակ, ավազակ...»

Մունետիկի ձայնն այժմ հնչում էր փողի նման: Նա կրկնեց.

— «... Հանտեմակ, ավազակ, մախկին մարկիզ...»

— Դա մոնսեյնյորն է,— շնչաց մի ինչ-որ գյուղացի:  
Եվ ամբոխի մեջ շուկ ընկավ.

— Դա մոնսեյնյորն է, մոնսեյնյորը...

— «... Իմանուս, ավազակ...»

Երկու գյուղացի իրար նայեցին.

— Դա Գուծ լե Բյուսանն է:

— Այո, դրան կոչում են Կապույտների սարսափ:

Մունետիկը շարունակեց կարդալ, տալով տառնիքը մարդու անուն:

— «... Վերոհիշյալ բոլոր անձինք, որտեղ էլ բռնվեն, նրանց ինքնությունը հաստատվելուց հետո անհապաղ պիտի մահապատժի ենթարկվեն...»

Ամբոխը հուզվեց: Մունետիկը շարունակեց.

— «... Եվ ամեն ոք, ով օթևան կտա նրանց կամ կնըպաստի նրանց փախուստին, կհամձմվի ռազմադաշտային

դատարանին և մահապատիժ կկրի: Ստորագրել է...»

Մեռելային լուծություն տիրեց.

— «... Ստորագրել է Հասարակական փրկության կոմիտեի պատգամավոր Սիմուրդենը»:

— Քահանան է,— ասաց մի գյուղացի:

— Այո, Պարինյեի մախկին կյուրենն է,— արձագանքեց մի ուրիշը:

Պատշգամբում կանգնած գյուղապետը գլխարկը բարձրացրեց ու գոչեց.

— Կեցցե՛ հանրապետությունը:

Թմրկահարությունն ազդարարեց, որ մունետիկը դեռ չի վերջացրել: Եվ իրոք, մա ձեռքով նշան արեց և ասաց.

— Լսեցե՛ք շարունակությունը: Ահա կառավարական հայտարարության վերջին չորս տողը: Դրանք ստորագրել է հյուսիսային ծովափի էքսպեդիցիոն գորապյան հրամանատար Գովենը:

— Լսեցե՛ք, լսեցե՛ք,— հնչեցին ձայներ:

Մունետիկն սկսեց.

— «Մահապատժի սպառնալիքով...»

Բոլորը շունչներն իրենց քաշեցին:

— «... Կառավարության վերոգրյալ հրամանի համաձայն արգելվում է օժանդակել և նպաստել վերոհիշյալ տասնհինը խողարարների, որոնք ներկայումս պաշարված ու փակված են Տուրգ ամրոցում»:

— Ինչ ասա՞ց: Տո՞ւրգ,— լսվեց ինչ-որ մեկի ձայնը:

Դա կնոջ ձայն էր, մոր ձայն:

### III. ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԻ ԱՄԲՈՒԽԻ ՄԵՋ

Միշել Ֆլեշարը կանգնած էր մունետիկին շրջապատող ամբոխի մեջ: Նա չէր լսում, բայց պատահում է, որ առանց լսելու էլ լսում ես: Նա «Տուրգը» լսեց, և այդ բառը նրա գիտակցությանը հասավ: Նա գլուխը բարձրացրեց ու կրկնեց.

— Ինչ ասա՞ց: Տո՞ւրգ:

Նարբիկ մայեցին նրան: Ցնցոտիների մեջ թաղված, ան-

միտ ու պաղ հայացքով նա վայրենու կերպարանք ուներ։ Այս ու այն կողմից ձայներ լսվեցին.

— Որտեղի՞ց լույս ընկավ այս կինը։ Չլինի՞ բանտից է փախել։

Կորեկի բլիթներով լի զամբյուղը ձեռքին մի գեղջկուհի մոտեցավ նրան ու ականջին շնչաց.

— Լոիր։

Միշել Ֆլեշարը տարակուսանքով նայեց այդ կնոջը։ Նա նորից դադարեց բան հասկանալ։ «Տուրգ» բառը մի վայրկյան կայծակի պես շողացել էր նրա գիտակցության մեջ, բայց այժմ նորից ամեն ինչ թաղվեց խավարի մեջ։ Մի՞թե ինքն իրավունք չունի մի բան հարգելու, ինչպես ուրիշները։ Ինչո՞ւ են այդպես նայում իրեն։

Մինչ այդ թմբկահարը վերջին հարվածները տվեց թմբուկին, վրձինավոր մարդը հեշտարարությունը փակցրեց պատին, գլուղապետը պատշգամբից հեռացավ, մոմերիկը մեկնեց մի ուրիշ գլուղ, և ամբոխը ցրվեց։ Հայտարարության առաջ միայն մի քանի հոգի մնացին։ Միշել Ֆլեշարը մոտեցավ նրանց։

Խոսում էին օրենքից դուրս հայտարարված խոովարարների մասին։ Ամբոխի մեջ և՛ սպիտակներ կային, և՛ կապույտներ։ Մի ծերունի ասաց.

— Եթե Լանտենակին բռնեն, ամեն ինչ կորած է։

— Բայց հո դեռ չեն բռնել,— առարկեց երիտասարդներից մեկը։

Ծերունին պատասխանեց.

— Լանտենակին կորցնել՝ նույնն է թե գործի հոգին կորցնել։ Թե որ Լանտենակը մեռավ, Վանդեամ էլ կմեռնի։

— Հենց մի գլուխ լսում ենք՝ «Լանտենակ, Լանտենակ»։ Կուգեի իմանալ, թե ինչ է ներկայացնում նա իրենից,— ասաց մի ինչ-որ քաղաքաբնակ մարդ։

Մի ուրիշը սրան պատասխանեց.

— Դա նախկին մարկիզ է։

Իսկ երրորդն ավելացրեց.

— Մեկը նրանցից, ովքեր կանանց են գնդակահարում։ Միշել Ֆլեշարն այս լսեց և ասաց.

— Այդ ճշմարիտ է։

Բոլորը շուտ եկան, նրան նայեցին: Ֆելշարն ավելացրեց.

— Ինձ էլ գնդակահարեցին:

Զարմանալի բան էր այդպիսի խոսք լսելը. կենդանի կինն ասում էր, թե ինքը մեռած է:

Բոլորն էլ նայեցին նրան ոչ այնքան բարյացակամ:

Գյուղացիներից մեկը փնթփնթաց.

— Գուցե սա լրտեսուհի է:

— Լոկո և հեռացիր այստեղից, — կնոջ ականջին շշուկ-շաց դարձյալ նույն կինը, որ քիչ առաջ խոսել էր նրա հետ:

Նա Ֆելշարին մի կողմ տարավ և մի բլիթ տվեց նրան: Ֆելշարն սկսեց ազահորեն ուտել:

Բոլորն սկսեցին մեկը մյուսի ետևից ցրվել:

Երբ Միշել Ֆելշարը բլիթը կերավ, գեղջկուհուն ասաց.

— Ես պետք է Տուրգ գնամ: Խնդրում եմ ասացեք, ինչպե՞ս գնամ այնտեղ:

— Ոչ մի պայմանով չեմ ասի: Դու, ի՛նչ է, ուզում ես, որ քեզ սպանե՞ն: Գծվե՛լ ես, ի՛նչ է... Եվ, ճիշտ որ ասեմք, ես ինքս էլ չգիտեմ Տուրգի ճանապարհը... Լսիր, սիրելիս, տեսնում եմ, որ դու շատ հոգնած ես: Ավելի լավ է գնանք իմ տուն, հանգստացիր:

— Օ՛, աստված իմ: Ինձ հարկավոր է Տուրգ գնալ, — գոչեց խեղճ մայրը: — Տիկին, ի սեր մանուկ Հիսուսի և նրա մայր սուրբ կույս Մարիամի, խնդրում եմ ձեզ, աղաչում եմ ու պաղատում՝ ասացեք, ես ինչպե՞ս գնամ Տուրգ:

Գեղջկուհին բարկացավ.

— Ասում եմ ձեզ՝ չգիտեմ: Իսկ եթե իմանայի էլ, չէի ասի: Դա վատ տեղ է: Կարիք չկա այնտեղ գնալու:

— Միևնույն է, ես կգնամ, — ասաց Միշելը և ճանապարհ ընկավ:

Գեղջկուհին նայեց նրա ետևից և ինքն իրեն ասաց.

— Այսպես թե այնպես, նրան ուտելու բան է հարկավոր:

Նա վազեց Միշելի ետևից և էլի մի բլիթ խրեց նրա բութը:

— Այս էլ քեզ ընթրիքի համար, — ասաց նա:

Միշել Ֆելշարը բլիթը վերցրեց, ոչինչ չպատասխանեց, նույնիսկ ետ չնայեց և առաջ գնաց:

Նա դուրս եկավ գյուղից: Վերջին տների մոտ նրա դիմացը դուրս եկան ցնցոտիապատ ու ոտաբորիկ երեք երեխա: Միշելը կանգ առավ ու ասաց.

— Չէ, իմը չեն, սրանք երկու աղջիկ են ու մի տղա:

Եվ տեսնելով, որ երեխաներն իր բլիթին են նայում, տվեց նրանց: Երեխաները վախեցան այդ տարօրինակ կնոջից, բայց բլիթը վերցրին: Իսկ Միշել Ֆլեշարը գնաց ու անհետացավ անտառում:

#### IV. ՍԽԱԼԸ

Այդ նույն օրը լուսաբացից առաջ այն խիտ թիուռում, որի միջով անցնում է Ժավենեից Պարիսյե տանող ճանապարհը, դարան էին մտել մի խումբ մարդիկ: Դրանք գյուղացիներ էին: Բոլորը զինված էին, ոմանք հրացաններով, ուրիշները՝ կացիններով: Կացնավորները մեծ քանակությամբ չոր խոիվ ու ցախ էին կտրտել և խարույկ դարսել, որը միայն վառելն էր մնում: Հրացանավորները շարվել էին ճանապարհի երկու կողմում և ինչ-որ բանի էին սպասում: Բոլորի հրացանների փողերը թիերի արանքներից ուղղված էին դեպի ճանապարհը, իսկ մարդիկ մատները դրել էին ձգանների: Պարզ էր, որ նրանք դարանակալել են ինչ-որ մեկին:

Լույսը բացվում էր, արդեն կարելի էր նշմարել ճանապարհի ճերմակ ժապավենը: Կիսախավարի մեջ խոսակցություն լսվեց.

— Բայց դու հաստա՞տ գիտես:

— Այդպես եմ լսել:

— Որ այստեղո՞վ են տանելու:

— Այո: Ասում են արդեն հեռու չէ:

— Բաց թողնել չի կարելի:

— Պետք է վառել, և վերջ:

— Պարզ է, հապա էլ ինչո՞ւ ենք այստեղ հավաքվել ամբողջ երեք գյուղերի մարդիկս:

— Այո, իհարկե, այդպես է, բայց չէ՞ որ այն պահա- կախմբով են տանում:

— Պահակախմբին կոչնչացնենք:

- Բայց ճիշտ է, որ այս ճանապարհով են տանելու:
- Ասում են՝ այո:
- Նշանակում է, Վիտրեն՝ են տանում:
- Գուցեն Վիտրենից են բերում.
- Դե ինչ-պա որ:
- Իսկ առաջ ասում էին՝ Ֆուժերից:
- Որտեղից էլ լինի, սատանան ինքն է ուղարկել այն:
- Այդ ճշմարիտ է:
- Դե ուրեմն թող սատանայի գոգն էլ գնա:
- Իսկ ո՞ր են տանում: Երևի Պարիզն է:
- Կարծեմ այդպես:
- Չէ՛, չէ՛, այնտեղ չի հասնի:
- Կամա՛ց, լռեցե՛ք:

Եվ իրոք, ժամանակն էր լուելու, որովհետև անտառում արդեն լույսը բացվում էր:

Բայց ահա լսվեցին անիվների դղիրդ և ձիերի պալտերի չխկչխկոց:

Բոլորը շունչներն իրենց պահեցին և նայում էին թիերի ետևից:

Հեռվում, մեղիկ ճանապարհին երևացին ձիավորներ և ինչ-որ բեռով մի սալ:

Բոլորը շարժվում էին նրանց կողմը:

— Այն է,— ասաց դարանակալած մարդկանցից մեկը, որն, ըստ երևույթին, խմբի պետն էր:

— Այն է, այն: Ահա և պահակային զինվորները,— համտատեց մի ուրիշը:

— Իսկ պահակախմբում քանի՞ հոգի են:

— Տասներկու:

— Հապա ասում էին՝ քսան:

— Տասներկու լինեն, թե քսան, միևնույն է, բոլորին կկոտորենք:

— Սպասեցեք մինչև կմոտենան:

Սրանից հետո շատ չանցած՝ սալն ու ձիավորները, որոնք ծածկվել էին ճանապարհի ոլորանում, դուրս եկան բոլորովին մոտիկ:

— Կեցցե՛ք թագավորը,— գոչեց խմբի պետը:

Որոտաց հարյուրավոր հրացանների համազարկը: Երբ

ծուխը ցրվեց, պարզվեց, որ պահակախումբն անհետացել է։ Ձիավորներից յոթն ընկել էին ձիերից, իսկ մնացած հինգը փախել էին։ Գյուղացիները վազեցին սալի մոտ։

— Ա՛յ քեզ բան,— գոչեց խմբի պետը։— Սա գիլիոտին չէ, այլ ելարան է։

Իրոք, սալի վրա դրված էր մի ելարան, ուրիշ ոչ մի բեռ չկար։ Երկու ձիերն էլ վիրավոր ընկած էին գետնին, սալապանը սպանված էր պատահական գնդակով. ոչ ոք նրան նշան չէր բռնել։

— Դե միևնույն է,— ասաց խմբի պետը։— Ելարանը պահակախմբով էին տանում, դա կասկածելի բան է։ Եվ տանում էին Պարիսյե, իսկ այնտեղ Տուրգ ամրոցն է, նշանակում է այս ելարանը գրոհի համար է եղել նախատեսված։

— Վառե՛լ, վառե՛լ այդ,— միաբերան գոռացին բոլորը։ Եվ ելարանը վառեցին։

Իսկ չարագույժ բեռով այն սև սալը, որի համար դարան էին մտել, գնացել էր ուրիշ ճանապարհով և արդեն հասել էր այն գյուղը, որտեղ լուսաբացին նրան տեսել էր Միշել Ֆլեշարը։

## V. ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎԵՐՋԸ

Իր բլիթը փոքրիկ մուրացկաններից տալով՝ Միշել Ֆլեշարը անտառի միջով առաջ գնաց ենթադրական ուղղությամբ։

Նրան ճանապարհը ցույց տալ չէին ցանկացել, ուրեմն մնում էր, որ ինքը գտնի այն։ Հաճախ նա նստում էր հանգըստանալու, նորից վեր էր կենում ու գնում, ապա՝ կրկին նստում։ Նա այնքան էր հոգնել, որ ցավում էին ոչ միայն մկանները, այլև՝ ոսկորները։ Դա հալից ընկած ստրուկի հոգնածությունն էր։ Եվ նա իրոք ստրուկ էր, իր կորած երեխաների ստրուկը։ Նա պետք է գտներ երեխաներին։ Ամեն մի կորցրած բոպեն կարող էր կործանել նրանց։ Առավոտից քալում էր խեղճ մայրը, և այլևս չէր հանդիպել ոչ մի գյուղ, ոչ մի տուն։ Սկզբում նա ճիշտ ճանապարհով էր գնում, բայց հետո, ինքն էլ չիմանալով թե ինչպես, շեղվել էր այդ ճա-



նապարհից և մոլորվել անանցանելի թափուտում: Արդյոք մոտենո՞ւմ էր նա իր ցանկացած կետին, թե՞ հեռանում էր նրանից: Իսկ ի՞նչ կլինի, եթե հանկարծ ընկնի ու մեռնի: Երբեմն նրան թվում էր, թե այլևս մի քայլ անելու էլ ուժ չունի: Արեգակն իջնում էր դեպի հորիզոն, անտառը մթնոնում էր, խիտ խոտի մեջ շավիղը չէր էլ նկատվում: Խեղճ կինը բոլորովին շփոթվեց: Նա փորձեց գոռալ, օգնություն կանչել, բայց նրա կանչին ոչ ոք չարձագանքեց:

Նա կանգնեց, շուրջը նայեց և ճյուղերի միջով լույսի շող տեսավ: Ծուռ եկավ այդ կողմը և անսպասելիորեն դուրս եկավ անտառի եզրը:

Նրա առաջ ձգված էր մի մեղ ձորակ, որի միջով հոսում էր մի վճիտ առվակ: Ջուրը տեսնելով՝ նա հիշեց, որ վաղուց ծարավը տանջում է իրեն: Մոտեցավ ջրին, ծունկ չոքեց և սկսեց խմել:

Հետո վեր կացավ և շուրջը նայեց: Մի պահ մտածելուց հետո առվակն անցավ և սկսեց վեր բարձրանալ ձորակի մյուս լանջով:

Ձորակի այն կողմը, որքան աչքը կտրեր, փոված էր մանր թփերով ծածկված մի ընդարձակ սարահարթ: Թեք զառիթափով այն բարձրանում էր առվակի ափից և կորչում հեռու հորիզոնում: Անտառում էլ նա բոլորովին մեռակ էր, բայց այս սարահարթը իսկական անապատ էր թվում: Անտառում ամեն մի թփի տակ կարելի էր հանկարծ պատահել որևէ մեկին, բայց այս հարթության մեջ, որքան կարելի էր տեսնել հասարակ աչքով, ոչ մի շունչ կենդանի չկար: Միայն թփերի վրայով, ասես ինչ-որ վտանգից փախչելով թռչում էին ինչ-որ թռչուններ:

Այն ժամանակ հուսահատությամբ զգալով, որ ծնկները թուլանում են, գիտակցելով իր անօգնական վիճակն այդ ահալարստո, ամալի տարածության մեջ, թշվառ մայրը բոլորովին խելակորույս՝ օտարոտի մի ճիչ մետեց անապատին:

— Է՛յ, կա՞ որևէ մեկն այստեղ, ձայն տվե՛ք:

Ապա նա լռեց ու պատասխանի սպասեց:

Եվ նրան պատասխանեցին:

Նա լսեց խոլ ու խորունկ մի ձայն, որ կարծես աշխար-

Ռի ծայրից էր գալիս և արձագանքում ամբողջ սարահարթում: Այդ ձայնը նման էր շանթի հարվածի կամ թնդանոթի կրակոցի: Թվում էր, թե դա պատասխանն էր թշվառ մոր հարցի և այդ պատասխանն էր՝ «Հա»: Հետո նորից լուռությամբ տիրեց:

Միշեղ Ֆլեշարն ուղղվեց: Նա սրտապնդվեց. նշանակում է ինքը մեմակ չէ այս անապատում, նշանակում է այստեղ կա մեկը, որ կարող է իրեն օգնել: Կարծես ուժը վերադարձավ: Նա սկսեց սարահարթը բարձրանալ այն ուղղությամբ, որտեղից իրեն էր հասել հեռավոր գորեղ ձայնը:

Հանկարծ նա տեսավ, որ հորիզոնի այն կողմը երևում է մի բարձր աշտարակ՝ մայր մտնող արևի շողերից ամբողջովին շառագունած, մեկ-մեմակ կանգնած ամալի հարթության մեջ: Մինչև աշտարակ էլի մեկ մղոնից ավելի ճանապարհ էր մնում, իսկ աշտարակի այն կողմը իրիկնային մշուշի մեջ սևին էր տալիս խիտ անտառի մի շերտ: Այդ Ֆուժերյան անտառն էր:

Միշեղը բարձրացավ սարահարթի գլուխը. նրա առաջ փոված էր մի ողորկ հարթություն: Նա ուղղվեց դեպի աշտարակը:

## VI. ԳՈՐԾԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Ժամը հասավ. անողորմ անկոտրումի իշխանության տակ էր: Լանտենակը Սիմուրդենի ձեռքում էր:

Ծերունի ողջալիստ-խոռվարարը փակված էր իր որջում: Նա փախչել չէր կարող: Սիմուրդենն ուզում էր, որ այդ արիստոկրատը, նախկին մարկիզը մահապատիժ ստանա հենց այստեղ, իր տիրություն, այսպես ասած՝ հենց իր սեփական տանը: Նա ուզում էր, որ հնամենի ֆեոդալական այդ բույնը վկա լինի, թե ինչպես ընկավ ֆեոդալի գլուխը, և որ բոլորը երկար ժամանակ հիշեն այդ դասը:

Ահա թե ինչու նա մարդ էր ուղարկել Ֆուժեր՝ գիլիոտինը բերելու, այն նույն գիլիոտինը, որին հանդիպեց Միշեղ Ֆլեշարը:

Սպանել Լանտենակին՝ կնշանակեք սպանել Վանդեան, իսկ սպանել Վանդեան՝ կնշանակեք փրկել Ֆրանսիան: Սիմուրդենը չէր տատանվում, այդ մարդն իրեն զգում էր իր

տարերքի մեջ, երբ իր պարտքը կատարելու համար ստիպված էր լինում դաժան լինել:

Մարկիզը կործանված է. այդ կասկածից դուրս էր, և Սիմուրդենը հանգիստ էր այդ կողմից: Բայց նրան մտահոգում էր մի ուրիշ բան: Դաժան պայքար էր սպասվում: Գրոհը ղեկավարելու էր Գովենը և հավանորեն նա առջևի շարքերում կլիներ: Այդ երիտասարդ զորապետի մեջ զինվորի ոգի էր ապրում. նա ընդունակ էր գլխապատառ ձեռնամարտի մեծություն: Օ՛հ, միայն թե չսպանեն նրան: Գովենն իր երեխան էր, իր հոգեզավակը, իր միակ սիրելի էակն աշխարհի երեսին: Մինչև այժմ բախտը հովանավորել էր նրան, բայց բախտն էլ հաստատուն չէ: Սիմուրդենը դողում էր իր սանիկի համար: Բախտի տարօրինակ քմահաճույքներով նա ընկել էր երկու Գովենների միջև և մեկի մահն էր ցանկանում, մյուսի կյանքի համար դողում էր:

Թնդանոթի այն որոտը, որ Ժորժետային արթնացրեց իր օրորոցում և մորը իր երեխաներին օգնության տարավ այն ամառի հարթավայրի մենությունից, ունեցավ նաև ուրիշ հետևանքներ: Պատահաբար էր արդյոք, թե թնդանոթաձիգի ցանկությամբ, այն ումբը, որ պետք է միայն որպես նախազգուշացում ծառայեր, դիպավ աշխատարակի երկրորդ հարկի գլխավոր հրակնատը պաշտպանող երկաթե ձողերին և ծակելով այն՝ կիսով չափ դուրս գցեց պատից: Եվ դա այդպես էլ մնաց. պաշարվածներն այդպիսի վնասվածքները կարգի բերելու ժամանակ չունեին:

Պաշարվածները սուտ էին պարծեցել, հայտարարելով, թե շատ վառող ունեն, նրանք վառող քիչ ունեին: Ընդհանրապես նրանց դրությունը շատ ավելի ծանր էր, քան կարծում էին պաշարողները: Եթե վառող շատ ունենային, կթողնեին, որ պաշարողները աշտարակ մտնեն և կպայթեցնեն այն, նրանց հետ միասին, իհարկե, զոհաբերելով և իրենց: Նրանք հենց այդ էլ երագում էին, բայց նրանց վառողի պաշարը վերջանում էր. նրանցից յուրաքանչյուրը երեսուն կրակոցից ավելի չէր կարող անել: Հրացաններ ու ատրճանակներ շատ ունեին, բայց փամփուշտները քիչ էին: Նրանք լցրին իրենց ունեցած բոլոր հրազենները, որպեսզի կարողանան անընդհատ կրակել: Բայց որքա՞ն ժամանակ կարող

էին կրակել: Հարկավոր էր միաժամանակ և հրացանային կրակոցները շարունակել, և վառողը խնայել: Անլուծելի խնդիր էր դա: Նրանց ամբողջ հույսն այն էր, որ առավելապէս ձեռնամարտ է լինելու, որ երկու կողմերը պիտի գործեն սառը զենքով՝ թրերով ու դաշույններով, որ այնքան կրակելու չեն, որքան թրերով են կոտորելու իրար:

Աշտարակի ներքին մասը թվում էր անմատչելի: Ցածի դահլիճում, որտեղ ճեղքվածք կար, ամուր բարիկադ էին սարքել, որը փակում էր մուտքը: Բարիկադի ետևի դահլիճում դրել էին մի երկար սեղան, որի վրա շարել էին զենքը՝ լցրած հրացաններ, ատրճանակներ, թեր, դաշույններ ու կացիներ:

Ցածի դահլիճի վերևում էր գտնվում երկրորդ հարկի կլոր դահլիճը, որտեղ բարձրանալ կարելի էր միայն պտուտակաձև ճեղիկ աստիճաններով: Այդ սենյակը, որտեղ նույնպէս ցածի դահլիճի նման մի սեղան էր դրված և վրան շարված հրազեններ ու սառն զենքեր, լուսավորվում էր գլխավորապէս հենց այն հրակնատով, որի երկաթե վանդակը պոկվել էր ռումբի հարվածից: Այստեղից էլ պտուտակաձև սանդուղքով կարելի էր բարձրանալ երրորդ հարկի դահլիճը, որտեղ դեպի դշակը բացվող մի երկաթե դուռ կար:

Թնդանոթի որոտը բոլորին ոտքի հանեց: Գրոհն սկսելուն մնում էր ընդամենը կես ժամ:

Իմանուսն աշտարակի դիտարանից հետևում էր, թե պաշարողներն ինչպէս են մոտենում: Լանտեռնակն արգելեց կրակել, մինչև որ բոլորովին չմոտենան: Նա ասաց.

— Նրանք չորս ու կես հազար են: Միևնույն է, բոլորին կոտորել չենք կարող: Կրակելն անօգուտ կլինի, քանի դեռ ներս չեն մտել: Միայն այստեղ, աշտարակում ուժերի հավասարություն կստեղծվի:— Ապա ծիծաղելով ավելացրեց.— Հավասարություն և եղբայրություն:

Պաշմանավորվել էին, որ հենց թշնամին գրոհի անցնի, Իմանուսը եղջրափողը փչի, որպեսզի յուրայիններին մախազգուշացնի: Բոլորը գրավեցին իրենց տեղերը, որը՝ բարիկադի ետևը, որը՝ սանդուղքի աստիճանների վրա, և լուռ սպասում էին մի ձեռքին հրացան բռնած, մյուսում՝ սուր:

Կովող կողմերի դրությունն այսպէս էր. պաշարողները

պետք է պարսպի ճեղքով ներխուժեին, բարիկադը նվաճեին և կովով մեկը մյուսի ետևից գրավեին աշտարակի երեք հարկերն ու երկու ճեղիկ պտուտակաձև սանդուղքները, իսկ պաշարվածներին մնում էր մեկ բան՝ մեռնել:

## VII. ՄԱՐՏԻՑ ԱՌԱՋ

Գովենն էլ իր հերթին գրոհի էր պատրաստվում: Որոշված էր, որ և՛ ցածի մարտկոցը, որ անտառի մոտ էր կանգնած, և՛ վերինը, որ զետեղված էր սարահարթում, կրակ կբանան միայն այն դեպքում, եթե պաշարվողները արտելք կկատարեն կամ կփորձեն փախչել: Գրոհային զորապան հրամանատարությունը նա իր վրա վերցրեց: Եվ հենց այդ էլ մտահոգում էր Սիմուրդենին:

Արևը մոր էր մայր մտել: Աշտարակը հարթության մեջ մնալ էր բաց ծովում կանգնած նավի: Այդպիսի աշտարակի վրա գրոհել կարելի է միայն այն եղանակով, ինչպես գրոհում են նավի վրա, այսինքն՝ դա ավելի շուտ արորդած է, քան գրոհ: Այստեղ թնդանդներ պետք չեն: Ի՞նչ միտք ունի ոմբակոծել տասնհինգ ոտնաչափ հաստությամբ պատերը: Պատի մեջ ճեղքվածք, որով ուզում են ներխուժել, ուրիշները ջանում են փակել, կացիններ, դաշույններ, ատրոճանակներ, բռունցք և ատամներ. ահա այդպիսին է մարտերի պատկերը:

Գովենը հասկանում է, որ Տուրգ ամրոցը գրավելու ուրիշ միջոց չկա: Չկա ավելի արյունահեղ պահ, քան այն գրոհը, որի ժամանակ թշնամուն հանդիպում ես դեմ առ դեմ: Գովենը մանուկ հասակում ապրել էր այդ աշտարակում: Նա լավ գիտեր աշտարակի ներքին դասավորումը և գիտեր, թե որքան դժվար է գրավել այն:

Նա կանգնել էր խոր մտքի մեջ ընկած: Նրանից մի քանի քայլ հեռու կանգնել էր իր օգնական Գաշենը և դիտափողով նայում էր Պարինյե տանող ճանապարհին: Հանկարծ նա գոռաց.

— Ա-ա՛, վերջապես:

Այս բացականչությունը Գովենին կտրեց իր մտքերից:

— Ի՞նչ կա, Գաշեն, — հարցրեց նա:

— Ելարանն են բերում, հրամանատար:

— Ինչպե՞ս: Ուրեմն մինչև հիմա դեռ չե՞նք բերել:

— Ո՛չ, հրամանատար: Ես շատ էի անհանգստանում: Զե՞ որ Ժավենն գնացած ձիավորը վաղուց վերադարձել է:

— Գիտեմ:

— Նա զեկուցեց, թե Ժավենեում պետք եղած չափսի մի ելարան է գտել և բռնագրավել այն: Նա քսան հոգուց բաղկացած մի պահակախումբ է կազմել, սպասել է, մինչև ելարանը սալլին բարձեն, տեսել է, որ ելարան բարձած սալլը պահակախմբով Պարինչեի ճանապարհը բռնեց, և սիայն դրանից հետո արշավել է ետ:

— Այդ ամենը մա ինձ զեկուցել է: Բայց չե՞ որ մա ասում էր՝ սալլը դուրս է եկել ժամը երկուսին և պետք է այստեղ լինի մինչև մայրամուտ: Այդ ամենը ես արդեն լսել եմ: Հետո ի՞նչ:

— Զգիտեմ, հրամանատար: Արևն արդեն մայր է մտել, իսկ նրանք դեռ չկան:

— Ինչպե՞ս թե: Մենք պետք է գրոհ սկսենք: Սահմանված ժամանակն արդեն անցել է: Եթե դանդաղենք, թշնամին կկարծի, թե տատանվում ենք:

— Դե ինչ կա որ, հրամանատար, կարող ենք սկսել:

— Ինչպե՞ս սկսել առանց փրկարար ելարանի:

— Ելարանը կլինի: Արդեն բերում են: Ես հենց մոր դիտափողով մայրում էի ճանապարհին. սալլն ու ձիավորներն արդեն երևում են, նրանք իջնում են բլուրից: Կարող եք դուրս էլ մայել:

Գովենը վերցրեց դիտափողը, մայեց ճանապարհին և ասաց.

— Այո, ճիշտ է: Նրանք են: Ափսոս, որ արդեն մըթնում է, և լավ տեսնել չի լինի: Բայց սալլի հետ ձիավորներ կան. դա հավանորեն ելարանն է: Միայն թե պահակախումբը կարծես քսան հոգուց ավելի է:

— Այո, կարծես ավելի է: Ինձ էլ այդպես թվաց:

— Հիմա նրանք քառորդ մղոն են այստեղից հեռու:

— Քառորդ ժամից հետո ելարանն այստեղ կլինի, հրամանատար:

— Ուրեմն՝ կարելի է սկսել:

Ճանապարհով, իրոք մի սալ էր գալիս պահակախմբի ուղեկցությամբ, բայց դա այն սալը չէր, որին սպասում էին:

Գովենը շուտ եկավ և իր ետևը տեսավ սերժանտ Ռադուբին, որը կանգնել էր զինվորավարի ձգված, ձեռքը պատվի բռնած:

— Ի՞նչ կա, սերժանտ:

— Քաղաքացի հրամանատար, մենք, Կարմիր գդակ գումարտակի մարդիկս, մի բան ենք խնդրում ձեզ:

— Ի՞նչ:

— Մեզ առաջ ուղարկեցեք, գնդակների տակ:

— Ա՛, ա՛յ թե ինչ: Այդ ինչո՞ւ համար:

— Ինչպես թե, հրամանատար: Դուրս տեղի ունեցած գիշերային ընդհարումից հետո դուք մեզ խնայում եք, իսկ մենք դեռ քսան հոգի կանք:

— Հետո ի՞նչ:

— Վիրավորական է մեզ համար:

— Ես ձեզ պահում եմ որպես պահեստի ուժ:

— Մենք Լեդերադասենք ավանգարդում լինել:

— Բայց դուք ինձ պետք կգաք վերջին պահին վճռական հարվածի համար: Հենց այս նպատակով էլ ես ձեզ պահում եմ:

— Եիստ շատ եք խնայում մեզ, հրամանատար:

— Բա՞նն այդ չէ: Դե հո դուք գրոհային զորայունի մեջ եք լինելու:

— Այո, ետևից: Բայց փարիզեցիներն իրավունք ունեն առջևում լինելու:

— Լավ, սերժանտ, ես կմտածեմ:

— Մտածեցեք, հրամանատար: Այսօր այնպիսի լավ առիթ է: Թեժ կոիվ է լինելու: Տուրգ աշտարակը կվառի նրա մատները, ով նրան ձեռք տա: Մենք, որպես ողորմածություն, խնդրում ենք առջևի շարքերում ուղարկել մեզ:

Ռադուբը մի պահ լռեց, բեղը ոլորեց, ապա դողդոջում ձայնով շարունակեց.

— Բացի այդ, հրամանատար, այս աշտարակում են մեր գումարտակի երեխաները: Մեր երեք մանկիկները: Իսկ այն գարշալի՜ձ... ինչպես են ասում... շատ անուճներ ունի նա... այն Գուժ լե Բրյուանը, նույն ինքն Իմանուար, նույն ինքը

Կապույտների սարսափը... մարդկային կերպարանքով այն դեր սպառնում է կոտորել մեր երեխաներին: Մտածեցեք, հրամանատար. կոտորել երեխաներին: Բայց թեկուզ գետինն էլ պատույի ու մեզ կույ տա, մենք չե՛նք թողնի, որ նրանց մի վնաս հասնի: Մենք չե՛նք ուզում որ նրանց վնասեն: Լսո՛ւմ եք, հրամանատար: Չե՛նք ուզում... Ես հենց նոր նրանց երեքին էլ տեսա: Զինադադարի ժամանակ ես մի հարմար րոպե գտա, բարձրացա սարահարթը և լուսամուտից ներս նայեցի. նրանք այնտեղ են, ամրոցում: Սարահարթի եզերքից սենյակի ներսը լավ երևում է, և ես երեքին էլ տեսա: Եվ վախեցան էլ խեղճ երեխաները. հենց որ ինձ տեսան, թաքնվեցին... Եվ ես, այ ինչ կասեմ ձեզ, հրամանատար. եթե այդ երեխաներից մեկի գլխից թեկուզ մի մազ ընկնի, երդվում եմ աշխարհիս երեսի բոլոր սրբերով, ես, սերժանտ Ռադուբս, երկինքն ու երկիրն իրար կխառնեմ: Եվ այս մեր ամբողջ գումարտակն է ասում. «Մենք կփրկենք մեր երեխաներին կամ կմեռնենք». Եվ կմեռնենք, բոլորս մեր կյանքը կտանք նրանց համար: Սա մեր իրավունքն է, գրողը տանի... Ահա և ես վերջացրի: Պատիվ ունեմ գլուխ տալու ձեզ, հրամանատար:

Գովենը ձեռքը մեկնեց նրան և ասաց.

— Կեցցե՛ք դուք: Դուք գրոհող զորասյունում կլինեք: Ես ձեզ կրաժանեմ երկու մասի. վեցն առջևից կգնան և զորասյունը կտանեն իրենց ետևից, իսկ վեցը՝ ետևից, որպեսզի զորասյանը չթողնեն նահանջել:

— Իսկ ե՛ս: Էլի գումարտակի ավա՞գը կմնամ:

— Իհարկե:

— Շնորհակալ եմ, հրամանատար: Ուրեմն ես առջևից եմ գնում:

Ռադուբը նորից պատույի առավ և վերադարձավ իր տեղը:

Գովենը ժամացույցը հանեց, Գեշանի ականջին մի քանի խոսք ասաց, և գրոհային զորասյունն սկսեց շարժվել:

## VIII. ԾԱՌ ԵՎ ՄՌՆՉՈՑ

Այդ ժամանակ Սիմոնդենը, որը դեռ սարահարթում իր տեղը չէր գրավել և կանգնած էր Գովենից ոչ հեռու, մոտեցավ փողհարին և ասաց.



— Ազդանշան տուր:

Եվ նորից փողն ու եղջրիկն ազդանշաններ փոխանակեցին:

— Սա ի՞նչ է նշանակում,— հարցրեց Գովենը Գեշանին:— Ի՞նչ է ուզում անել Սիմուրդենը:

Մինչ այդ Սիմուրդենը մոտեցավ աշտարակին, թափահարեց սպիտակ թաշկինակը և բարձր ձայնով ասաց.

— Է՛յ, դո՛ւք, աշտարակում նստած մարդիկ, գիտե՞ք ով եմ ես:

Իմանուսի ձայնն արձագանքեց աշտարակից.

— Գիտենք:

— Ես հանրապետության լիազորն եմ:

— Դու Պարինյե գյուղի նախկին ծխատեր քահանան ես:

— Ես Հասարակական փրկության կոմիտեի պատգամավորն եմ:

— Դու քահանա ես:

— Ես օրենքի ներկայացուցիչն եմ:

— Դու դավաճան ես:

— Ես հեղափոխական կառավարության կոմիսար Սիմուրդենն եմ:

— Դու հավատարաց ես և դև:

— Թող այդպես լինի: Միևնույն է, դուք ինձ ճանաչում եք:

— Մենք ատում ենք քեզ:

— Նշանակում է դուք զո՞հ կլինեք, եթե ես ձեր ձեռքն ընկնեմ:

— Մենք այստեղ տասնութ հոգի ենք, և մեզանից յուրաքանչյուրը սիրով իր գլուխը կտար քո գլխի դիմաց:

— Դե ուրեմն իմացեք, ես ինքս հանձնվում եմ ձեր ձեռքը:

Վերևից վայրի քրքիջի պոռթկում լսվեց, և նույն ձայնը գոչեց.

— Արի՛:

Ցածում ամբողջ ճամբարը քարացավ խոր լռության մեջ: Բոլորն սպասում էին, թե ինչ է լինելու հետո: Սիմուրդենը շարունակեց.

- Ես հաճանում եմ ձեր ձեռքը, միայն մի պայմանով:
- Ի՞նչ պայման:
- Լսեցեք ուշադիր:
- Խոսիր:
- Դուք ասում եք ինձ, չէ՞:
- Ասում եմք:
- Իսկ ես ձեզ սիրում եմ. ես ձեր եղբայրն եմ:
- Դիտակետից նրան պատասխանեցին.
- Այո, Կայեն:

Միմուրդենը նորից սկսեց խոսել, և նրա ձայնը հնչեց ինչ-որ մի նոր ձևով. հպարտ և միաժամանակ ավելի մեղմ.

— Վիրավորեցեք, բայց լսեցեք ինձ: Ես ձեզ մոտ եմ գալիս որպես բանազնաց: Կրկնում եմ. դուք իմ եղբայրներն եք: Դուք թշվառ մոլորյալ մարդիկ եք: Ես ձեր բարեկամն եմ: Ես խավարի հետ խոսող լույս եմ, իսկ լույսը եղբայրությունն է: Եվ մի՞թե մենք միևնույն մայր հայրենիքի զավակները չենք... Եվ ահա ես եկել եմ ձեզ մոտ և ձեզ եմ առաջարկում իմ գլուխը, ես ավելին եմ անում. եղբայրական ձեռք եմ մեկնում ձեզ: Ես խնդրում եմ ձեզ, ինչպես ողորմություն խնդրող. սպանեցեք ինձ և այդպիսով փրկեցեք ձեզ: Ես օծոված եմ անսահմանափակ իրավունքով և կարող եմ կատարել ինչ խոստանում եմ: Այս րոպեին կվճռվի ձեր ճակատագիրը: Ես հաշտության վերջին փորձն եմ անում: Գիտեմ, հիմա դուք մտածում եք՝ «Հանրապետականի ասածին հավատալ չի կարելի»: Այո, ձեզ հետ խոսում է հանրապետական մարդ, քաղաքացի, բայց այդ քաղաքացու մեջ շատ բան է մնացել քահանայից: Լսեցեք, եղբայրներ: Ձեզանից շատերը կին ու երեխաներ ունեն: Ես իմ պաշտպանության տակ եմ առնում ձեր կանանց ու երեխաներին, ես նրանց պաշտպանում եմ ձեր դեմ: Օ՛, եղբայրներ իմ...

— Է՛, սկսեց իր տերտերական քարոզները,— քրքջաց Իմանուր:

Միմուրդենը շարունակեց, որպես թե նրան չի լսել.

— Եղբայրներ իմ: Կանգ առեք, քանի դեռ ուշ չէ: Կհրճվի սոսկալի ժամը: Էլի մի րոպե, և կոտորածը կսկսվի: Այստեղ ձեր առաջ կանգնածներից շատերը այլևս արևածագ չեն տեսնի: Այո, մեզանից շատերը կզոհվեն, իսկ դուք բո-

լորդ կմեռնէք: Խնայեցեք ձեզ: Ինչո՞ւ անօգուտ արյուն թափել: Ինչո՞ւ այդքան մարդ սպանել, երբ բավական է երկուսին սպանել:

— Երկուսի՞ն,— հարցրեց Իմանուր:

— Այո, երկուսին:

— Իսկ ո՞ւմ:

— Ինձ և Լանտենակին:

Սիմուրդենը ձայնը բարձրացրեց.

— Այստեղ երկու ավելորդ մարդ կա. մեզ համար՝ Լանտենակը, ձեզ համար՝ Սիմուրդենը: Դե ուրեմն, եթե դուք ուզում եք ձեր կյանքը փրկել, ես առաջարկում եմ ձեզ. մեր ձեռքը տվեք Լանտենակին և ստացեք ինձ: Լանտենակը կմեռնի գիլիոտինի վրա, իսկ ինձ հետ վարվեցեք ինչպես կամենաք:

— Միայն թե դու մեր ձեռքն ընկնես, տերտե՛ր, մենք քեզ մարմանդ կրակի վրա կխորովենք,— մոնչաց Իմանուր:

— Համաձայն եմ,— ասաց Սիմուրդենը և շարունակեց.— Դուք, այդ աշտարակում նստածների մահվան եք դատապարտված: Բայց ընդամենը մեկ ժամ հետո դուք կարող եք ողջ ու ազատ դուրս գալ այդտեղից: Դա կախված է ձեզանից: Ես ձեզ փրկություն եմ բերում: Ընդունո՞ւմ եք արդյոք:

Իմանուր կատաղորեն մոնչաց.

— Դու ոչ միայն չարագործ ես, այլև խելագար: Ինչո՞ւ ես մեզ մոտ խցկվում քո առաջարկություններով: Քեզ ո՞վ է խնդրել խոսել մեզ հետ: Մեր մոնսեկյորի՞ն տանք ձեր ձեռքը: Ի՞նչ ես ուզում մեզանից:

— Նրա գլուխը: Իսկ ձեզ առաջարկում եմ իմ...

— Քո կաշի՞ն: Որովհետև, իմացիր, Սիմուրդեն քահանա, մենք կքերթենք քեզ շան նման: Բայց ո՞չ, քո կաշին չարժե նրա գլուխը: Կորի՛ր:

— Վերջին անգամ եմ ասում, խորհեցեք իմ առաջարկության մասին:

Գիշերը վրա էր հասնում: Լանտենակը լուռ էր, ասես խոսքն իրեն չէր վերաբերում:

Խոսեց Իմանուր, և նրա ձայնը խլացրեց Սիմուրդենի ձայնը.

— Լսեցեք, դուք, հարձակվողներ: Մենք ձեզ ասել ենք մեր պայմանները: Դա մեր վերջին խոսքն է, որից ետ չենք կենա: Ասացեք ուրեմն, ընդունո՞ւմ եք մեր առաջարկությունը: Եթե ոչ՝ զգուշացեք: Համաձայն եք արդյոք: Մենք ձեզ կտանք ձեր երեխաներին, որոնք փակված են ամրոցում, իսկ դուք ազատություն կտաք մեզ բոլորիս:

— Բոլորիդ, բացի մեկից,— պատասխանեց Սիմոնդները:

— Բացի ումի՞ց:

— Բացի Լանտենակից:

— Մոնսեյնյորի՞ց: Ձեզ հանձնենք մոնսեյնյորի՞ն: Երբե՞ք:

— Մեզ Լանտենակն է հարկավոր: Մենք կարող ենք համաձայնության գալ միայն այդ պայմանով:

— Եթե այդպես է, սկսեցեք գրոհը:

Լոռություն տիրեց: Իմանումն ազդանշան փչելով ցած իջավ աշտարակի դիտարանից: Մարկիզը թուրը հանեց պատյանից: Բոլոր տասնինը պաշարվածները լուռ ժողովեցին ցածի դահլիճում, բարիկադի ետևը և ծունկ չոքեցին: Նրանք լսում էին, թե ինչպես գրոհող զորապետը համաչափ քայլերով մոտենում է աշտարակին: Նրանց ոտքերի ծանր դոփյունն ավելի ու ավելի էր մոտենում: Ապա այն լավեց հենց ողիղ ճեղքվածքի մոտ: Այն ժամանակ բոլորը ծունկ չոքած՝ հրացանները խրեցին բարիկադի անցքերը: Նրանցից մեկը, Տրյումոյի նախկին քահանա Գրան-Ֆրանկերը ոտքի կանգնեց և մերկացրած սուրը աջ ձեռքում, իսկ խաչը ձախում, հանդիսավոր ձայնով գոչեց.

— Հանում հոր և որդո և հոգույն սրբո:

Բոլոր հրացանները միանգամից կրակեցին, և մարտն սկսվեց:

## IX. ՀՍԿԱՆԵՐԸ ՀՍԿԱՆԵՐԻ ԴԵՄ

Տեսարանը, իսկապես, զարհուրելի էր:

Այդ ձեռնամարտն իր դաժանությամբ գերազանցում էր ամեն բան, որ կարելի էր պատկերացնել:

Պաշարողների առաջ բացվել էր անդունդի սև երախը, որի թե՛ վերից, թե՛ ցածից և թե՛ կողքերից ցցվել էին

պայթյունից քանդված պատի քարե ժանիքները: Այդքան շատ ժանիքներ նույնիսկ շնածուկը չի ունենում: Եվ նրանք պետք է ներս մտնեին այդ խավար անցքով:

Հենց որ պաշարողների առաջին ալիքը ներխուժեց անցքով, ամբողջ բարիկադը փայլատակեց շանթերից, թվում էր, թե գետնի տակ կայծակ է որոտում: Պաշարվածների որոտին արձագանքեց հարձակվողների որոտը: Կրակոցները պատասխանում էին կրակոցներին: Հնչեց Գովեհի հրամանը. «Հառա՛ջ, հառա՛ջ», ապա՝ Լանտենակի կոչը. «Պի՛նդ կացե՛ք, բարեկամնե՛ր», և վերջապես լսվեց Իմանուսի ճիչը. «Ինձ մո՛տ, հայրենակիցնե՛ր»: Լսվում էին խաչաձևվող թրերի զրնգոցը և հրացանային անընդհատ համազարկերը: Պատին ամրացված վառվող ջահը աղոտ լույս էր տարածում այդ զարհուրելի տեսարանի վրա: Կարմրավուն կիսախավարում ոչինչ չէր կարելի ջոկել: Մարդ այստեղ ընկնելով իսկույն կուրամում էր ծխից և խլացնում՝ համազարկերի որոտից: Թափթփված իրերի մեջ ընկած էին վիրավորները: Կովողները քայլում էին դիակների վրայով, տրորում էին թարմ վերքերը, կոխկրտում էին կոտրտված ոսկորները, վիրավորները տնքում էին ցավից, կծում էին իրենց վրայով քայլողների ոտքերը: Մերթ ընդ մերթ հանկարծ լուրջում էր տիրում, որ ավելի սարսափելի էր, քան աղմուկը: Մարդիկ իրար կոկորդ էին բռնում, լսվում էր մարտնչողների հևոցը, խոխոցը, աստամների կրճտոցն ու ճգովքը: Հետո նորից որոտում էր համազարկը: Աշտարակի ճեղքից ջերմ արյան շիթ էր դուրս հոսում, որը խտուղ թրջելով լճանում էր ու գոլորշի արձակում խավարի մեջ:

Կարելի էր կարծել, թե ինքը՝ այդ վիթխարի աշտարակն է վիրավորվել և արնաքամ է լինում:

Որքան էլ տարօրինակ է, դրսից համարյա ոչ մի աղմուկ չէր լսվում: Գիշերը մեղմ էր, շատ խավար, և պաշարված աշտարակի շուրջը՝ անտառում ու հարթավայրում քար լուրջում էր տիրում: Ներսում դժոխք էր, դրսում՝ գերեզման: Խավարի մեջ իրար ոչնչացնող մարդկանց վայրի պայքարը, կրակոցների ճարճատյունը, մոլեգին ճիչերը՝ այս ամբողջ աղմուկը կորչում էր հաստ պատերի մեջ, բարձր կամարների տակ: Զայները թուլանում էին օդի պակասություն-

ճից: Սպանդի սարսափը սաստկացնում էր և խեղդուկ օդը: Աշտարակից դուրս համարյա ոչինչ չէր լսվում:

Երեք երեխաները քնած էին խորը քնով:

Կատաղությունը սաստկանում էր երկու կողմերում և մարտը՝ բորբոքվում: Բարիկադը պինդ էր դիմանում: Գրոհող զորասյունը շատ մարդ կորցրեց: Աշտարակի տակ մի շարք կազմելով՝ այդ զորաշարանը մտնում էր ճեղքի խորքը՝ շարունակ կարճանալով իր տունը մտնող լորտուի մեջ:

Գովենը, որ անգգույշ էր, ինչպես բոլոր երիտասարդ զորապետները, կանգնած էր ցածի դահլիճում, հենց խառնակովի մեջ, գնդակների տարափի տակ: Նա վտանգի մասին չէր մտածում, մասամբ նրա համար, որ ոչ մի անգամ չէր վիրավորվել:

Ինչ-որ հրաման տալու համար շուտ գալով՝ հանկարծ նա հրացանի կրակոցի լույսով իր կողքին մի անծանոթ դեմք տեսավ:

— Սիմուրդե՛ն,— գոչեց նա:— Դուք ինչո՞ւ եք այստեղ: Դա իրոք Սիմուրդենն էր: Նա պատասխանեց.

— Ես եկել եմ, որպեսզի քո կողքին լինեմ:

— Այստեղ ձեզ կսպանեն:

— Ի՛նչ կա որ: Չէ՞ որ քեզ էլ կարող են սպանել:

— Ես այստեղ պետք եմ, դուք՝ ոչ:

— Քանի որ դու այստեղ ես, ես էլ այստեղ պիտի լինեմ:

— Ո՛չ, իմ ուսուցիչ:

— Այո՛, զավակս:

Եվ նա մնաց Գովենի մոտ:

Ցածի դահլիճի քարե հատակին դիակների կույտը շարունակ մեծանում էր: Բարիկադը դեռ գրավված չէր, սակայն պարզ էր, որ վերջ ի վերջո գերակշռությունը մեծամասնությամբ կլինի: Պաշարողներն աչքի առաջ էին, իսկ պաշարվածները՝ թաքնված, այնպես որ, եթե առաջինների շարքից տասը հոգի էր ընկնում, ապա երկրորդներից՝ միայն մեկը: Բայց գրոհողների հոսանքը շարունակ թարմանում էր նոր մարդկանցով, նրանց թիվն ավելանում էր, իսկ աշտարակի պաշտպանների թիվը նվազում:

Բոլոր տասնինը հոգին էլ հավաքվել էին բարիկադի ետևը, որի վրա ուղղված էր գրոհը: Նրանք արդեն սպան-

վածներ ու վիրավորներ ունեին: Կովում էին ոչ ավելի քան տասնհինգ մարդ: Նրանցից մեկը, բրետոնացի Շանտ-ամ-Իվերը, որ մի ցածրահասակ, ամրակազմ, արտասովոր ճկուն ու ճարպիկ մարդ էր և համարյա ամենաքաջը բոլորից, սարսափելի այլանդակվել էր. նրա ծնոտը ջարդվել էր և աչքը տեղից դուրս էր ընկել:

Բայց նա դեռ կարողանում էր շարժվել: Սողեսող մոտեցավ պտուտակաձև սանդուղքին և բարձրացավ երկրորդ հարկ, որպեսզի այնտեղ աղոթի ու մեռնի: Դժվարությամբ ոտքի կանգնելով՝ նա հենց հրակնատի մոտ հենվեց պատին, որպեսզի թարմ օդ շնչի:

Մինչդեռ ցածում, բարիկադի առաջ սպանողը թույն առ թույն ավելի զարհուրելի էր դառնում: Հրացանային երկու համազարկերի արանքում հանկարծ հնչեց Սիմուրդենի ձայնը.

— Պաշարվածներ, ի՞նչ կարիք կա շարունակելու այս արյունահեղությունը: Դուք պարտված եք: Անձնատո՛ւր եղեք: Մի մտածեցե՛ք. չէ՞ որ մենք չորս ու կես հազար ենք տասնհինգի դեմ, այսինքն՝ մեկի դեմ երկու հարյուրից ավելի: Անձնատո՛ւր եղեք:

— Ինչի՞ համար է այդ դատարկախոսությունը, — արե՞ծագանքեց Լանտենակը:

Եվ Սիմուրդենի կոշի պատասխանը եղան երկու տասնյակ գնդակներ:

Բարիկադը մինչև կամար չէր հասնում, և դա պաշարվածներին հնարավորություն էր տալիս կրակելու նրա վրայով, իսկ պաշարվողներին հարմարություն էր տալիս բարձրանալու նրա վրա:

— Հառա՛ջ, գրոհի՛, — գոչեց Գովենը: — Ո՞վ է ուզում գրավել բարիկադը:

— Ե՛ս, — ձայն տվեց սերժանտ Ռադուրը:

## X. ՌԱԴՈՒԲՈ

Բայց ահա պաշարողները բար կտրեցին զարմանքից: Երբ Ռադուրը իր զորապան գլուխ անցած ներս էր մտել պատի ճեղքով, նրա հետ փարիզյան գումարտակից հինգ

մարդ կար, և նրանցից չորսն արդեն ընկել էին: Իսկ երբ  
նա հրամանատարի կոչին պատասխանեց. «Ես», համկարծ  
բոլորը տեսան, որ առաջ նետվելու փոխարեն նա շուտ եկավ,  
կուսցավ և համարյա սողեսող հարձակվողների ոտքերի  
արանքով խցկվեց անցքի մեջ ու անհետացավ: Այս ի՞նչ  
քան էր: Մի՞թե փախուստ: Այդպիսի մարդը կփախչե՞ր...  
Ի՞նչ կարող է նշանակել դա...

Մինչդեռ, ճեղքից դուրս գալով, ծխից համարյա կուրա-  
ցած Ռադուրը տրորեց իր աչքերը, ասես ցանկանալով  
կտրվել իր առաջ բացված զարհուրելի պատկերից, և աստ-  
ղերի լույսով սկսեց գննել աշտարակի պատը: Դիտումն  
ավարտելուց հետո նա գոհունակությամբ գլուխը շարժեց,  
կարծես ասելով. «Այդպես էլ կա. ես չեմ սխալվել»:

Դեռ առաջ էլ նա նկատել էր, որ պայթյունից առաջացած  
խոր ճեղքվածքը հասնում էր մինչև երկրորդ հարկի հրակ-  
նատը, որի երկաթե ճաղերը ումբը ծոմոել էր և մի մասն էլ  
պոկել: Պոկված երկաթե ճաղերի ցանցը ցած էր կախվել,  
և առաջացած անցքով մարդ կարող էր ներս մտնել:

Հրակնատով ներս խցկվել հնարավոր էր, բայց կարելի՞  
էր բարձրանալ մինչև այնտեղ: Այո, այդ կարելի էր անել  
կառչելով ճեղքվածքի ցցվածքներից, բայց դրա համար հար-  
կավոր էր ունենալ կատվի ճարակություն: Ռադուրն ուներ  
այդպիսի ճարակություն: Կարելի է լինել հին գինվոր և դեռ  
չձերացած մարդ:

Ֆրանսիական գվարդիայի նախկին շարքային Ռադուրը  
քառասուն տարեկան էլ չկար: Նա մի Հերկուլես<sup>1</sup> էր, բայց  
ակրորատի պես ճարպիկ Հերկուլես:

Նա գետնին դրեց իր հրացանը, հանեց կամզոլն ու ժի-  
լետը, զենքերից վերցրեց միայն թուրն ու երկու ատրճա-  
նակ: Ատրճանակները նա գոտին խրեց, իսկ մերկացված  
թուրը ատամների մեջ առավ:

Այս ձևով ավելորդ քեռից ազատվելով՝ նա սկսեց վեր  
մագլցել ճեղքվածքի քարե ատամների վրայով, ինչպես ելա-  
րանի աստիճաններով, և հարձակվող զորասյան այն մասը,

<sup>1</sup> Հերկուլես — Հին Հունաստանի առասպելական հերոս, որ աչքի  
էր ընկնում քաջությամբ և արտակարգ ուժով:



որ դեռ չէր հասցրել ճեղքվածքով մերս մտնել, զարմացած նրան էր նայում: Լավ է, որ նա ոտաբորիկ էր. մարդու ոտքը շատ հարմար է մագլցելու համար: Ոտքի բութ մատնե-րով նա կառչում էր քարերի ելուստներին, ձեռքերով վեր էր ձգվում, իսկ ծնկներով հենվում էր ճեղքվածքի պատերին: Վերելքը դժվարին էր. դա նույնն էր, թե սղոցի ատամների վրայով բարձրանար:

«Լավ է, որ երկրորդ հարկում ոչ ոք չկա,— մտածում էր նա,— թե չէ՝ ինձ չէին թողնի վեր բարձրանալ»:

Այս ձևով նա պետք է վեր մագլցեր առնվազն քառասուն ոտնաչափ:

Վերևում ճեղքվածքը նեղանում էր, և բարձրանալն ավելի ու ավելի էր դժվարանում: Նրան քիչ չէին խանգարում նաև գոտին խրած ատրճաճակների կոթերը: Քանի մեծանում էր նրան գետնից բաժանող տարածությունը, այնքան ավելանում էր ցած ընկնելու վտանգը:

Սակայն, վերջապես, նա հասավ հրակնատի ցածի եզրին, մի կողմ հրեց ծոմոված վանդակի աճառորեն ճոճվող մասը և համոզվեց, որ ներս խցկվելու համար տեղ կա: Հետո նա մեծ ճիգով վեր բարձրացավ, ծունկը հենեց հրակնատի տակի քիվին, աջ ձեռքով կառչեց մի բեկորից, ձախով՝ մյուս և վեր ձգվելով այնքան բարձրացավ, որ մինչև գոտին արդեն հավասարվել էր հրակնատի եզրին: Թուրը բերանն առած՝ նա կախվել էր քառասուն ոտնաչափ բարձրության վրա:

Մնում էր, որ միայն մի քայլ անի հրակնատի միջով և արդեն կցատկեր սենյակի մեջ: Բայց հանկարծ հրակնատից նրան նայեց ինչ-որ մեկի դեմքը: Ռադուրն իր առջև, կիսախավարի մեջ տեսավ մի զարհուրելի բան՝ այլանդակված ծնոտով, մի աչքը դուրս արժած արնաշաղախ մի դիմակ: Եվ այդ դիմակն իր միակ աչքով նրան էր նայում:

Բայց պարզվեց, որ այդ դեմքը երկու ձեռք էլ ունի: Այդ երկու ձեռքերն անսպասելիորեն առաջ ցցվեցին խավարի մեջ ու մեկնվեցին դեպի Ռադուրը, և մեկն արագորեն դուրս քաշեց գոտին խրած ատրճաճակները, մյուսը խլեց ատամներով բռնած թուրը:

Ռադուրը զինաթափված էր: Նրա ծունկը սահեց քիվի

թերութեան վրա, և նա հազիվ կարողացավ կախված մնալ երկու ձեռքով վանդակի բեկորներից բռնած, իսկ նրա տակ քառասուն ոտնաչափ խորությամբ անդունդն էր:

Զարհուրելի դեմքը և Ռադուրին զինաթափ անող երկու ձեռքը պատկանում էին Ծանոտ-ան-Իվերին:

Ծանոտ-ան-Իվերը ցածից բարձրացող ծխից խեղդվելով մի կերպ բարձրացել էր մինչև հրակնատը: Թարմ օդը կենդանություն էր տվել նրան, գիշերային ցուրտը կանգնեցրել էր վերքերի արյունահոսությունը, և նրա ուժերն սկսել էին վերադառնալ: Հանկարծ հրակնատի անցքի առաջ դրսի կողմից երևացել էր մի մարդու կերպարանք: Նկատելով, որ այդ մարդու երկու ձեռքն էլ զբաղված են, որովհետև նա ստիպված է բռնած մնալ վանդակի երկաթներից, որպեսզի ցած չընկնի, և հասկանալով, որ այդ մարդը պաշտպանվել չի կարող, Ծանոտ-ան-Իվերը ստակալի սառնարյունությամբ նրա գոտուց դուրս քաշեց ատրճառակները և բերանից պոկեց ատամների մեջ սեղմած թուրը:

Մի չտեսնված մենամարտ սկսվեց անգեմ մարդու և մեռնողի միջև:

Կարծես թե մեռնողը պիտի հաղթեր: Բավական էր մի գնդակ, և Ռադուրը կընկներ իր տակ սևին տվող անդունդը: Բայց, սերժանտի բախտից, Ծանոտ-ան-Իվերը կրակել չկարողացավ, քանի որ երկու ատրճառակը բռնել էր մի ձեռքով, և ստիպված եղավ գործի դնել թուրը: Նա թրի մի հարված տվեց Ռադուրի ուսին: Վիրավորեց նրան և դրանով էր փրկեց:

Թեև զինաթափված, բայց իր ուժերը պահպանած լիճեղով՝ Ռադուրը նույնիսկ չզգաց իր վերքը (ի դեպ, թուրը նրա ոսկորին չէր դիպել): Նա առաջ նետվեց, ձեռքից բաց թողեց վանդակի ձողը և հրակնատով ներս ցատկեց: Այստեղ նա դեմ-դիմաց կանգնեց Ծանոտ-ան-Իվերի հետ, որը մինչև այդ ցած էր գցել թուրը և այժմ յուրաքանչյուր ձեռքում մի-մի ատրճառակ ուներ բռնած: Հենց չոքած տեղից նա համարյա դիմահար նշան էր բռնել Ռադուրին, բայց նրա թուլացած ձեռքը դողում էր, և չկարողացավ ձգանք քաշել:

Ռադուրը քրքջաց:

— Ախ դո՛ւ, մողկալի՛ մոռութեամբ,— գոչեց նա:— Կարծեմ դու երևակայում ես, թե ես կվախենամ՝ դեմքի փոխարեն քո այդ հում կոտլետը տեսնելով:

Իսկ Շանտ-ամ-Իվերը դեռ էլի նշան էր բռնել նրան:

— Եվ ի՞նչ լավ եմ մշակել քեզ մեր գնդակները, թշվառակա՛ն,— շարունակեց Ռադուրը:— Դե, կրակի՛ր, աղավաճակա, կրակի՛ր, որ սիրտդ հովանա:

Ատրճամակը պայթեց: Գնդակն անցավ հենց ուղիղ Ռադուրի գլխի մոտով և պոկեց նրա ականջի կեսը: Շանտ-ամ-Իվերը բարձրացրեց մյուս ատրճամակը, բայց Ռադուրը չթողեց, որ նա նշան բռնի:

— Բավական է քեզ,— գոռաց նա:— Ես չեմ ուզում, որ դու իմ մյուս ականջն էլ պոկես: Առանց այն էլ արդեն երկու վերք հասցրիր ինձ: Հիմա իմ հերթն է:

Ռադուրը նետվեց նրա վրա, արմունկին խփեց այնպես, որ ատրճամակը դեպի վեր կրակեց, և ապա ձեռքով բռնեց նրա փշրված ծնոտը:

Շանտ-ամ-Իվերը ցավից ոռնաց և ուշագնաց եղավ: Ռադուրն անցավ նրա վրայով:

— Իսկ հիմա,— ասաց նա,— լսիր իմ վերջին խոսքը. պատկիր այստեղ, հաշմանդամ, և տեղից չշարժվես: Կարող ես համգիստ լինել. ես քեզ չեմ սպանելու, այդպիսի բաների վրա ժամանակ կորցնել չեմ կարող: Սողա քեզ համար, քանի դեռ կենդանի ես, կամ մեռիր, եթե ուզում ես: Միևնույն է, վերջդ այդ է: Ծուտով կիմամաս, թե ինչ հիմարություններ է սովորեցրել քեզ քո կյուրեն: Գնա այն աշխարհը, ոամիկ:

Եվ ինքն առաջ նետվեց դեպի դահլիճ:

— Բայց այստեղ ոչինչ չի երևում,— մոթմոթաց նա:

Շանտ-ամ-Իվերը գալարվում էր հոգեվարքի մեջ ու տընքում: Ռադուրը մայեց նրան.

— Բարի եղիր, քաղաքացի, լոիր: Ես հո չեմ խառնվում քո գործերին: Դու էլ ինձ մի՛ խանգարիր:

Ծարումակելով մայել մեռնողին՝ նա ծոծրակը քորեց:

— Այս ամենը շատ լավ, բայց հիմա ի՞նչ անեմ,— մըրմընջում էր նա:— Այս ամասունի պատճառով ես հիմա անգեմ եմ: Նա գողացավ իմ երկու ատրճամակը: Իսկ այստեղ

Էլ եզովյալ ծովսն այնպէս է աչքերս այրում, որ քիչ է մնում գայլի պէս ոռնամ:

Հանկարծ նրա ձեռքը դիպավ իր արյունաշաղախ ականջին:

— Էհե՛հ,— ասաց նա և շարունակեց մոթմոթալ.— Բայց դու, անպէրն, լավ ես պոկել ականջս: Ասեմք՝ լավ է, որ ականջս ես պոկել և ոչ թե մի ուրիշ բան: Ականջները միայն զարդարանք են: Ա՛յ, ուսս էլ ես չանգոեղ, բայց սա էլ դատարկ բան է: Ես մերում եմ քեզ. մեռի՛ր քեզ համար, բոի ոամիկ:

Նա լոեց և ականջ դրեց: Ցածի դահլիճը դղրդում էր համազարկերի որոտից: Կոիվը դեռ բորբոքվում էր այնտեղ:

— Ա՛յ թե կովում եմ այնտե՛ղ,— մոթմոթաց Ռադուրը:— Տես ոնց եմ գոռում. «Կեցցե՛ թագավորը»: Եվ քաջաբար եմ մեռնում նրանք, պետք է ճիշտն ասել:

Հանկարծ ոտքը դիպավ իր թրին, որ ընկած էր հատակին: Նա վերցրեց այն, դարձավ դեպի Ծանոտ-ան-Իվերը, որն այլևս չէր շարժվում, գուցեև արդեն մեռած էր, և ասաց.

— Դե տես, թե ինչ արիւր դու, գրողի տարած: Ինչ որ ես մտածել եմ, նրա համար թուրն ինձ բոլորովին պետք չէ: Ես այն վերցնում եմ ըստ իմ սովորության: Ինձ ատրճանակներն էին հարկավոր: Իսկ հիմա ինչի՞ս եմ պետք առանց գնդակի: Եվ այս ամենը քո փշացրած գործն է, գրողը տանի քեզ: Հիմա ես ի՞նչ անեմ. առանց ատրճանակների՝ ոնց որ առանց ձեռքերի լինեմ:

Նա մի քայլ արեց սենյակում, խավարի մեջ ուշիուշով մայելով, որպեսզի կարողանա կողմնորոշվել: Հանկարծ նկատեց մի երկար սեղան, որ դրված էր պուների ետևը, սենյակի մեջտեղը, իսկ սեղանի վրա շարված էին ինչ-որ առարկաներ, որոնք թույլ պսպղում էին խավարի մեջ: Նա շոշափեց այդ առարկաները, և պարզվեց, որ դրանք ատրճանակներ են, հրացաններ, հրաձիգ գեների մի ամբողջ զինանոց, որ կողք կողքի շարված՝ հենց միայն իրենց վերցնող ձեռքերի էին սպասում: Դա այն գեներն էր, որ պաշարվածները շարել էին այդտեղ երկրորդ հարկի դահլիճը պաշտպանելու համար:

— Օհո՛ւ, սա մի ամբողջ պահեստ է,— գոչեց Ռադուրը և ազահորեն վրա ընկավ գեմքերին:

Նա միանգամից փոխվեց, դարձավ մի ահավոր գորական:

Վերին ու ներքին հարկերը տամոռ սամոռութի ելքը երևում էր, որովհետև դուռը բացված էր կրակի վրա: Դա հենց այն սեղանի մոտ էր, որի վրա շարված էին գեմքերը: Ռադուրը թուրը մետեց, ամեն մի ձեռքով մի երկփողանի ատրճառակ վերցրեց և, փողերը ցած ուղղելով դեպի պտուտակաձև սամոռութը, երկուսն էլ միանգամից կրակեց: Հետո վերցրեց մի կարաքին և այն էլ կրակեց: Ապա սկսեց կրակել խոշոր կոտորակ լցրած հրացանով: Հրացանի արձակած տասնհինգ մամրիկ գնդակները կարտեչի տպավորություն գործեցին: Դրանից հետո Ռադուրը որոտալից ձայնով գոչեց.

— Կեցցե՛ Փարիզը:

Ապա վերցնելով մի ուրիշ հրացան՝ նա փողն ուղղեց դեպի սամոռութը և սկսեց սպասել:

Ցածի դահլիճում մի աննկարագրելի իրարանցում սկսվեց: Այսպիսի անակնկալները միշտ էլ ամբողջովին կազմալուծում են պաշտպանությունը:

Ռադուրի երեք կրակոցից երկու գնդակն իզուր չէին կորել. մեկով սպանվել էր Պիկ-ան-Բուա եղբայրներից ավագը, մյուսով՝ դը Կելենը, որ հայտնի էր Հուսար մականունով:

— Նրանք վերևում են,— գոչեց մարկիզը:

Այս կանչը խնդիրը լուծեց: Բարիկադը միանգամից դատարկվեց. նրա պաշտպանները խրտնած թռչունների երամի պես մետվեցին դեպի սամոռութը: Մարկիզը փախչողներին սիրտ էր տալիս.

— Շո՛ւտ, շո՛ւտ արեք,— գոռում էր նա:— Այժմ քաջությունն այն է, որ նրանց ձեռքը չընկնենք: Վազեցեք երրորդ հարկ, այնտեղ էլ նրանց կդիմավորենք:

Նա վերջինը հեռացավ բարիկադից, և հենց այդ էլ փրկեց նրան:

Ռադուրը կանգնած էր երկրորդ հարկում, սամոռութի գլխին և լցրած հրացանի ձգանը քաշած սպասում էր

փախչողներին: Սանդուղքի ողորանում երևացած առաջին երկու-երեք մարդը մահացու հարված ստացան կրծքներից և ցած ընկան: Եթե մարկիզը նրանց մեջ լինեք, նա ևս սպանված կլինեք: Մինչև Ռադուբը նոր զենք կվերցնեք՝ մյուսներն անցան նրա մոտով: Մարկիզը՝ բոլորից հետո և բոլորից դանդաղ: Հաստատ հավատացած լինելով, որ երկրորդ հարկը թշնամին գրավել է, նրանք առանց կանգ առնելու վազեցին երրորդ հարկի հայելապատ սենյակը, այն նույն սենյակը, որտեղ երկաթե դուռն էր գտնվում, որտեղ ընկած էր վառվող պատրույգի ծայրը, և որտեղ նրանց մնում էր միայն անձնատուր լինել կամ մեռնել:

Գովենը պաշարվածներից պակաս չէր զարմացած սանդուղքի վրայից լսվող կրակոցներով, չիմանալով, թե ինչով բացատրել այդ անակնկալ օգնությունը, բայց շատ էլ չմտածելով դրա մասին՝ օգտվեց ստեղծված իրարանցումից: Նա ու իր մարդիկ ցատկեցին բարիկադի վրայով և համարյա թշնամուն կրնկակոխ խուժեցին երկրորդ հարկը: Այստեղ նրանք դեմ առան Ռադուբին:

Ռադուբը պատվի առավ հրամանատարին և ասաց.

— Թույլ տվեք զեկուցել, հրամանատար՝, որ այդ ես էի այստեղ կրակում: Ես հիշեցի, թե դուք ինչպես վարվեցիք Դոլում և արի այն, ինչ դուք արիք այնտեղ. անցա թշնամու թիկունքը:

— Լավ աշակերտ ես, — ժպտալով ասաց Գովենը:

Խավարում մարդու աչքը վարժվում է և սկսում է տեսնել գիշերային թռչունի աչքի պես: Գովենը նկատեց, որ Ռադուբն ամբողջովին արյունվա է:

— Բայց դու վիրավորված ես, ընկե՛ր, — գոչեց նա:

— Ուշադրություն մի՛ դարձրեք, հրամանատար: Մի ականջ ավելի լինի թե պակաս՝ ի՞նչ նշանակություն ունի: Ես թրով էլ եմ վիրավորված, բայց դա էլ հեշ: Ծառը որ կտրես՝ տաշեղը կթռչի: Բացի այդ, այս միայն իմ արյունը չի ինձ քսվել:

Երկրորդ հարկի դահլիճում, որ գրավել էր Ռադուբը, դադար առան: Մի լապտեր բերին, Սիմուրդենը եկավ, և խորհրդակցություն սկսվեց: Եվ մտածելու շատ բան կար: Պաշարողները չգիտեին պաշարվածների գաղտնիքը. նրանց

հայտնի չէր, որ պաշարվածների մոտ փամփուշտ ու վառող համարյա չի մնացել: Երրորդ հարկը նրանց վերջին պատվարն էր, և կարելի էր ենթադրել, որ սամոդուքի տակ ական է դրված:

Կասկածից դուրս էր մի բան. թշնամին փախչել չէր կարող: Կենդանի մնացածները, միևնույն է, թե փականքի տակ էին նստած: Լանտենակը թակարդն էր ընկել:

Այսպիսի վստահություն ունենալով՝ կարելի էր չշտապել, մի քիչ մտածել և ստեղծված դրությունից դուրս գալու ամենալավ միջոցը գտնել: Գրոհող զորասյունն առանց այն էլ շատ սպանվածներ էր ունեցել: Հարկավոր էր այնպես անել, որ վերջին պահին որքան կարելի է քիչ մարդկային կորուստներ լինեն: Վնասկան գրոհը մեծ վտանգի հետ էր կապված: Կարելի էր նախապես իմանալ, որ պաշարողներին կոխմավորեն հրացանային կատաղի կրակով:

Եվ այսպես, կոփվը դադարել էր: Աշտարակի առաջին ու երկրորդ հարկերին տիրելով՝ պաշարողները միայն հրամանի էին սպասում, որպեսզի գրոհը վերսկսեն: Գոյենը և Սիմուրդենը դեռ խորհրդակցում էին: Ռադուքը լուռ ներկա էր այդ խորհրդակցությանը:

Վերջապես ձեռքը հովարին դնելով՝ նա երկչոտ դիմեց Գոյենին.

— Հրամանատար...

— Ի՞նչ կա, Ռադուք:

— Ես արժանի եմ պարգևի:

— Իհարկե: Խնդիր, ինչ որ ուզում ես:

— Թույլ տվեք ինձ՝ առաջինը բարձրանալ վերև:

Նրան մերժել հնարավոր չէր: Ասեմք՝ նա առանց թույլտվության էլ կաներ այդ:

## XI. ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾՆԵՐԸ

Այն ժամանակ, երբ երկրորդ հարկում խորհրդակցում էին, երրորդում շտապով բարիկադ էին պատրաստում: Հաջողությունը մոլեգնության էր հասցնում, ամհաջողությունը՝ կատաղության: Աշտարակի երկու հարկերը վերջին կովի

էին բռնվելու: Վերևում հուսահատություն էր՝ հանդարտ, պաղ ու անլուսաշող հուսահատություն:

Հենց որ պաշարվածները հասան իրենց վերջին պատվարին, որից այն կողմը նրանց համար ամեն ինչ վերջանում էր, նրանց առաջին հոգսը եղավ մուտքը բարիկադով փակել: Դուռը փակել չարժեր. ավելի լավ էր սանդուղքը լցնել զանազան իրեր: Այդ ձևի ուղեփակը, որի միջով կարելի էր տեսնել ու կրակել, շատ ավելի հուսալի էր ամեն մի փականքից:

Սենյակը լուսավորվում էր մի ջահով, որ վառել էր Իմանուրը, և որի մոտ ընկած էր ծծումբով հագեցած պատրույգի ծայրը: Անկյունում դրված էր մի ահագին, ծանր կաղնե սնդուկ: Մինչև դարակներով շորի պահարան հնարելը հագուստը պահում էին այդպիսի սնդուկներում: Եվ հենց այդ սնդուկն էլ ցից դնելով՝ փակեցին սանդուղքի մուտքը: Լայնությամբ այդ սնդուկը հենց իսկը հավասար էր դռան շրջանակին և ամուր փակեց մուտքը: Կամարի տակ ազատ մնաց միայն մի փոքրիկ տարածություն, որով կարող էր ներս խցկվել միայն մեկ մարդ: Եվ դա շատ հարմար էր, որովհետև հնարավորություն էր տալիս հարձակվողներին սպանելու հատիկ-հատիկ: Կասկածելի էր, թե թշնամին այդպիսի վտանգի կենթարկի իրեն:

Այսպիսով մուտքը բարիկադով փակված էր: Դա դադարի հնարավորություն էր տվել, և պաշարվածներն սկսեցին հաշվել իրենց ուժերը:

Տասնինը մարդուց մնացել էր միայն յոթը, որոնց մեջ և Իմանուրը: Բացի նրանից ու մարկիզից մյուս բոլոր ողջ մնացածները վիրավորված էին: Մյուսներն սպանվել էին:

Նրանց ամբողջ վառողն սպառվել էր, փամփշտակալները դատարկ էին: Հաշվեցին եղած փամփուշտները, յոթ հոգուն ընդամենը չորս կրակոց էր ընկնում:

Մնում էր միայն մեռնել: Նրանք սեղմված էին զառիթափ ժայռին, որ կախված էր անդունդի վրա: Թվում էր, որ ցած չընկնելն անհնարին էր:

Եվ ահա գրոհը վերսկսվեց: Գրոհում էին զգուշորեն: Լսվում էր, թե ինչպես պաշարողները սանդուղքով բարձրա-



նալիս աստիճան առ աստիճան շոշափում էին հրացանի կոթով:

Փախչելու տեղ չկար: Գրադարանո՞ւ վախչեհին: Բայց բարձունքի վրա շարված էին վեց լցված թնդանոթ, որոնց փողերն ուղղված էին դղյակի վրա: Վերևի սեմյակներո՞ւ: Բայց ինչո՞ւ: Վերին հարկից կարելի էր միայն տանիքը բարձրանալ: Իսկ տանիքից միայն կարելի էր գլխիվայր ցած ընկնել:

Ամբողջ խմբից ողջ էր մնացել միայն յոթ մարդ: Նրանք հասկանում էին, որ փրկություն չկա, որ իրենք փակված են, և այն հաստ պատը, որ պաշտպանում էր իրենց, այժմ իրենց թշնամու ձեռքն է մատնում: Նրանք դեռ բռնված չէին, բայց արդեն իրենց զգում էին որպես գերի:

Մարկիզն ասաց.

— Բարեկամներս, ամեն ինչ վերջացած է:— Եվ մի պահ լռելուց հետո ավելացրեց.— Այս րուպեից Գրան-Ֆրանկերը նորից դառնում է Տյուրմոյի աբբա:

Բոլորը համբիշները ձեռքերին բռնած ծունկ չոքեցին: Հրացանների կոթերի թխկոցը՝ սանդուղքի աստիճաններին, մոտենում էր:

Գրան-Ֆրանկերը, որ ամբողջովին արնաթաթախ էր (գնդակը դիպել էր նրա գլխին և սրկել մաշկի մի մասը), խաչը բռնած բարձրացրեց աջ ձեռքը: Մարկիզը, որ հավատացյալ էլ չէր, չոքեց մի ծնկի վրա:

— Զեզանից յուրաքանչյուրը թող բարձրաձայն խոստովանի իր մեղքերը,— ասաց Գրան-Ֆրանկերը:— Խոսեցեք, մոռենցյոր:

Մարկիզը պատասխանեց.

— Ես մարդիկ եմ սպանել:

— Ես մարդիկ եմ սպանել,— նրանից հետո կրկնեցին մյուս բոլորը:

Գրան-Ֆրանկերը խաչը բռնեց նրանց գլխավերևը և ասաց.

— Հանուն ամենասուրբ երրորդության, թողություն եմ տալիս ձեր մեղքերին: Խաղաղությո՞ւն հոգույն ձերոց:

— Ամեն, — արձագանքեցին վեց ձայներ:

Մարկիզը վեր կացավ:

— Իսկ հիմա ժամանակն է մեռնելու,— ասաց նա:

— Եվ սպանելու,— ավելացրեց Իմանուել:

Մուտքը փակող սանդուղքը հրացանների կոթերի հարվածների տակ սկսեց ճոճոսալ:

— Ձեր միտքն ուղղեցեք աստծուն,— ասաց արքան:— Երկրայինն այլևս ձեզ համար գոյություն չունի:

— Այո, մենք գերեզմանի մեջ ենք,— ասաց մարկիզը:

Բոլորը գլուխները կախեցին և սկսեցին երեսները խաշակնքել: Միայն մարկիզն ու արքան շարունակում էին կանգնած մնալ: Բոլորի հայացքը ցած էր նայում: Քահանան աղոթում էր, գյուղացիներն աղոթում էին, մարկիզը մտածում էր:

Թիթեղապատ սնդուկը, որին ասես մուրճի հարվածներ էին տալիս, զնգում էր թաղման զանգի նման:

Հանկարծ աղոթողների թիկունքում հնչեց մի երիտասարդ, կայտառ ձայն.

— Ես հո ասում էի ձեզ, մոռանալո՛ր:

Բոլորը զարմացած ետ նայեցին:

Պատի մեջ մի գաղտնի դուռ բացվեց: Քարերից մեկը, որ կիպ կպած էր մյուսներին, բայց ցեմենտով ամրացված չէր և վերևն ու ներքևը երկաթե ամրիչներ ուներ, շուտ էր եկել իր առանցքի վրա և պատի մեջ աջ ու ձախ կողմերում բացել երկու անցք՝ այնքան լայն, որ կարող էր մարդ անցնել: Անսպասելիորեն բացված այդ անցքում երևում էին ստուտակաձև սանդուղքի վերին աստիճանները: Այնտեղ կանգնած էր մի մարդ:

Մարկիզը ճանաչեց Հալմալոյին:

## XII. ՓՐԿԻՉԸ

— Այդ դո՛ւ ես, Հալմալո:

— Ես եմ, մոռանալո՛ր: Հիմա տեսնո՞ւմ եք, որ պտտվող քարեր կան, և այս սենյակը գաղտնի դուռ ունի: Փառք աստծո, ես չեմ ուշացել, բայց շտապեցեք: Տասը րոպե հետո դուք կլինեք անտառում, անվտանգ...

— Փրկվեցե՛ք, մոռանալո՛ր,— գոռացին բոլորը միաբերան:

— Նախ՝ դուք,— պատասխանեց մարկիզը:

— Դուք պետք է առաջինը դուրս գնաք, մոնսեյնյոր,—  
ասաց Տյուրմույի արքան:

— Ես վերջինը դուրս կգնամ:— Եվ մարկիզը շարունա-  
կեց խիստ ձայնով.— Հարկավոր չէ մեծահոգություն անել:  
Մենք քնքշություններ անելու ժամանակ չունենք: Դուք վի-  
րավորված եք: Ես ձեզ հրամայում եմ՝ փախչել և ապրել:  
Ծո՛ւտ: Օգտվեցեք առիթից... Ծնորհակալ եմ, Հալմալո:

— Մոնսեյնյոր,— մարկիզին դարձավ արքան,— նշա-  
նակում է մենք բաժանվելո՞ւ ենք:

— Ցածո՞ւմ: Իհարկե, հասկանալի է: Փախչել կարելի  
է միայն առանձին-առանձին:

— Դուք հավաքի տեղ կնշանակե՞ք, մոնսեյնյոր:

— Այո, անտառի բացատում, Գովենների քարի մոտ:  
Դուք գիտե՞ք այդ տեղը:

— Գիտենք:

— Վաղը կեսօրին ես այնտեղ կլինեմ: Թող գա, ով կա-  
րող է քայլել:

— Կգանք:

— Եվ նորից կսկսենք կոնվը:

Մինչ այդ Հալմալոն հրեց պտտվող քարին, որպեսզի  
փորձի, թե որքան դյուրին կլինի նորից իր տեղը դնել այն,  
և տեսավ, որ քարն այլևս չի պտտվում:

— Մոնսեյնյոր, ջտապեցեք,— ասաց նա:— Քարը չի  
շարժվում. ես չեմ կարողանում իր տեղը գցել: Դուռը բա-  
ցել ինձ հաջողվել է, բայց փակել չպիտի կարողանամ:

Իրոք, շրջվող քարը երկար ժամանակ անգործածելի  
մնալով կարծես կպել էր ծխնիին, և շուտ տալու ոչ մի հնա-  
րավորություն չկար:

— Ես հույս ունեի, մոնսեյնյոր,— ասաց Հալմալոն,— որ  
ձեր գնալուց հետո դուռը կփակեմ: Այն ժամանակ կապույտ-  
ները ոչ ոքի չէին գտնի այստեղ և ոչինչ չէին հասկանա.  
դուք անհետացած կլինեիք ծխի պես: Բայց, ահա, այս  
նգովյալ քարը համառում է: Հիմա թշնամին բացված գաղտ-  
նի դուռը կտեսնի և կարող է հետապնդել ձեզ: Ոչ մի բույս  
կորցնել չի կարելի: Ծուտ գնացեք:

Իմանուլը ձեռքը դրեց Հալմալոյի ուսին.

— Բարեկամ, որքա՞ն ժամանակ է հարկավոր այս անցքով անտառ հասնելու համար:

— Ձեր մեջ ծանր վիրավորներ չկա՞ն,— հարցրեց Հալմալուն:

— Չկան,— պատասխանեցին նրան:

— Այդ դեպքում քառորդ ժամը բավական է:

— Նշանակում է,— ասաց Իմանուելը,— եթե քառորդ ժամից հետո թշնամին ներխուժի այստեղ...

— Նա կարող է համարձակորեն հետապնդում սկսել. մեր ետևից հասնել նա չի կարող:

— Բայց մենք քառորդ ժամ էլ ժամանակ չունենք,— ասաց մարկիզը:— Հինգ րոպե հետո նրանք այստեղ կլինեն: Այս հին սնդուկը երկար չի դիմանա. հրացանի կոթերի մի քանի հարվածից հետո փշուր-փշուր կլինի: Քառորդ ժամ: Բայց ո՞վ նրանց քառորդ ժամ ետ կպահի:

— Ես,— ասաց Իմանուելը:

— Դո՛ւ, Գուժ լե Բոյուման:

— Այո՛, ես, մոնսեյնյոր: Լսեցեք: Ձեր վեցից հինգդ վիրավորված եք: Իսկ ես ոչ մի քերծվածք էլ չունեմ:

— Ես մույնպես,— ասաց մարկիզը:

— Դուք, մոնսեյնյոր, հրամանատար եք, իսկ ես՝ հասարակ զինվոր: Դրանք տարբեր բաներ են:

— Այո, ճիշտ է. մեզանից յուրաքանչյուրն իր պարտքն ունի:

— Ոչ, մոնսեյնյոր. ես էլ, դուք էլ մեկ սրբազան պարտք ունենք՝ փրկել ձեզ:— Ապա Իմանուել դարձավ մյուսներից.— Ընկերներ, անհրաժեշտ է թշնամուն ետ պահել և որքան կարելի է հետաձգել հետապնդումը: Լսեցե՛ք, ես պահպանել եմ իմ բոլոր ուժերը, ես ոչ մի կաթիլ արյուն չեմ կորցրել: Ես վիրավորված չեմ, հետևապես կարող եմ բոլորից ավելի շատ դիմանալ: Բոլորդ գնացեք և ինձ թողեք ձեր զենքերը: Իմ ձեռքում այդ զենքը գործ կտեսնի: Ես խոստանում եմ առնվազն կես ժամ ետ պահել թշնամուն: Քանի՞ լիքը ատրճանակ ունեք:

— Չորս:

— Դրեք հատակին, ահա այստեղ:

Բոլորը հնազանդվեցին նրան:

— Լավ: Ես մնում եմ: Նրանք գործ կունենան ինձ հետ: Իսկ հիմա՝ շուտ գնացեք:

Գնացողները հագիվ հասցրին Խմանուսի ձեռքը սեղմել:

— Մինչև շուտափույթ տեսություն,— ասաց նրան մարկիզը:

— Ո՛չ, մոռանեցոր: Հուսով եմ՝ շուտով չենք տեսնվի. այստեղից ես ողջ չեմ դուրս գա:

Բոլորն սկսեցին իրար ետևից ցած իջնել նեղիկ սանդուղքով: Վիրավորներին առաջ էին թողել:

Մինչ առջևիները ցած կիջնեին, մարկիզը իր ծոցատետրից մի մատիտ հանեց և մի քանի տող գրեց շրջվող քարի վրա, որն այլևս շուտ չէր գալիս և գաղտնի էլքը բաց էր թողել:

— Դե եկեք, մոռանեցոր, արդեն բոլորը գնացին,— ասաց Հալմալոն՝ իր հերթին ցած իջնելով:

Մարկիզը հետևեց նրան:

Խմանուսը մեկակ մնաց:

### XIII. ԴԱՀԻՃԸ

Սենյակի քարե հատակին ընկած չորս հատ լցրած ատրճառակներից Խմանուսը վերցրեց երկուսը՝ յուրաքանչյուր ձեռքին մեկը, և կողքանց մոտեցավ սանդուղքի մուտքին, որը փակված էր սնդուկով:

Պաշարողներն, ըստ երևույթին, վախենում էին որևէ անակնկալի հանդիպել, ինչպես օրինակ՝ պայթյունի կամ ընդհանրապես նախօրոք պատրաստված այնպիսի մի աղետի, որի ժամանակ պարտվածների հետ միասին զոհվում են նաև հաղթողները: Որքան ուժգին էր առաջին գրոհը, նույնքան էլ զգուշորեն էր կատարվում երկրորդը:

Հարձակվողները չէին կարողանում կամ գուցե չէին ցանկանում միանգամից ոչնչացնել մուտքը փակող քարիկաղը: Նրանք հրացանների կոթերով փշրել էին սնդուկի հատակը, իսկ խուփը ծակծկել էին սվիններով և նախքան ներխուժելն աշխատում էին այդ ծակերի միջով տեսնել, թե ինչ է կատարվում սենյակի ներսում:

Հաստերների լույսը, որոնցով լուսավորում էին սան-  
դուղքը, թափանցում էր այդ ծակերի միջով, և Իմանուսը  
նրանցից մեկի առաջ նկատեց ինչ-որ մեկի գննող աչքը:  
Նա արագորեն ատրճանակի փողն ուղղեց այդ աչքի վրա և  
կրակեց: Լսվեց որոտը, և Իմանուսը ցնծությամբ լսեց մի  
գարհուրելի ճիչ: Գնդակը դիպել էր ներս նայող զինվորի  
աչքին ու գլուխը ծակել, և զինվորը երեսնիվայր ընկել էր  
սանդուղքի վրա:

Մինչ այդ պաշարողները սնդուկի խուփի մեջ երկու քա-  
վական մեծ անցք էին բացել, որոնց միջով շատ հարմար  
էր կրակել: Իմանուսն օգտվեց այդ համապատաստից հրակ-  
նատից. նա ձեռքը խրեց այդ անցքերից մեկի մեջ և երկ-  
րորդ ատրճանակով կրակեց սանդուղքի գլխին հավաքված  
զինվորների վրա: Երևի գնդակը ուսումնուներ էր կատարել,  
որովհետև լսվեց մի քանի ճիչ, կարծես միանգամից վիրա-  
վորվել էին մի քանի մարդ: Ապա սանդուղքի վրա անա-  
սելի իրարանցում ընկավ և լսվեցին փախչողների ոտնա-  
ձայներ:

Իմանուսը մի կողմ նետեց պարպված ատրճանակները,  
վերցրեց մյուս երկուսը և երկու ձեռքերում պատրաստ բռ-  
նած՝ դուրս նայեց անցքից:

Նա ուրախությամբ համոզվեց, որ իր կրակոցները ցան-  
կալի արդյունք են տվել. թշնամին հեռացել էր սանդուղքից:  
Վերևից երևում էին սանդուղքի առաջին երեք-չորս աստի-  
ճանները, մինչև ոլորանը, և այդ աստիճաններին ընկած  
էին միայն հոգեվարքի մեջ գալարվող վիրավորները: Իմա-  
նուսն սկսեց սպասել: «Այնուամենայնիվ, ժամանակ եմ շա-  
հում»,— մտածում էր նա: Հանկարծ նա նկատեց, որ աս-  
տիճաններով սողեսող վեր է բարձրանում մի մարդ, իսկ  
քիչ ավելի ցած, ոլորանի ետևից նայում է ինչ-որ մեկի  
գլուխը: Իմանուսը նշան բռնեց այդ գլխին և կրակեց: Մեկը  
ճիչ արձակեց և ցած գլորվեց: Իմանուսն իր վերջին լցրած  
ատրճանակը ձախ ձեռքից աջը փոխադրեց և պատրաստ-  
վում էր կրակել վեր սողացող մարդու վրա: Բայց հենց  
այդ վայրկյանին նա մի այրող ցավ զգաց՝ իր փորի մեջ և  
ինքն էլ մի վայրի ճիչ արձակեց: Նրա փորը պատռված էր.  
սանդուղքով վեր սլացող մարդը ձեռքը ներս էր մտցրել սնդու-

կի կափարիշի մյուս անցքով և իր թուրը խրել Իմանուսի փորը:

Վերքը զարհուրելի էր. աղիքները դուրս էին թափվել փորից:

Իմանուսը չընկալ: Նա միայն ատամները կրճտացրեց ու մրմնջաց. «Դե լավ»,— ապա երեքալով քարշ եկավ մինչև երկաթե դռան մոտ վառվող ջահը, ատրճանակը հատակին դրեց, ջահը պատից վերցրեց և ձախ ձեռքով իր դուրս թափված փորոտիքը բռնած՝ աջով ջահն իջեցրեց և դեմ արեց պատրույգին:

Պատրույգը վառվեց: Այն ժամանակ Իմանուսը ցած նետեց ջահը, որը շարունակեց վառվել հատակի վրա, և նորից ատրճանակը ձեռքն առավ: Բայց նա արդեն կանգնած մնալ չէր կարող, ընկավ հատակին և արմունկի վրա հենվելով, վերջին ուժերը լարելով սկսեց փչել վառվող պատրույգը:

Բոցը սահեց պատրույգի վրայով, անցավ երկաթե դռան տակով և հասավ կամրջի վրայի դղյակին: Այդ ժամանակ արդեն համոզված լինելով, որ հաջողվեց իր նողկալի միտքը, իր այդ ոճրագործությամբ հպարտանալով ավելի, քան այն մեծահոգությամբ, որ ցույց էր տվել քիչ առաջ, այդ մարդը, որ հենց նոր հերոս էր ձևացնում իրեն, իսկ այժմ դարձել էր մի հասարակ մարդասպան, այդ մեռնող ճիվաղը ծպտաց:

— Նրանք կհիշեն ինձ,— շնչաց նա:— Ես նրանց երեխաներին ոչնչացնելով վրեժ լուծեցի մեր եթեխայի, մեր թագավորի համար, որը հիմա տառապում է Տամպլեում:

#### XIV. ԻՄԱՆՈՒՍԸ ԷՆ Է ԳՆՈՒՄ

Այդ րոպեին լավեց մի զարհուրելի ճայթյուն. ուժեղ հրումից սնդուկը դուրս թռավ դռան շրջանակից, շուտ եկավ, և սենյակ ընկավ սուրը ձեռքին մի մարդ:

— Այս ե՛ս եմ, Ռադուրը: Ո՛վ կա իմ դեմ, թող առաջ գա: Ես ձանձրացել եմ սպասելուց: Երկու մահ չկա՛: Գա՛լիս եմ իմ ետևից ընկերներս թե չէ՝ մեկ է ինձ համար, ես

մենակ էլ չեմ վախենում ձեզանից: Ինչ-որ մեկի փորը արդեն ճղեցի, հիմա բոլորիդ եմ կովի կանչում: Քանի՞ հոգի կաք այստեղ:

Եվ իրոք, այդ Ռադուբն էր: Նա մենակ էր: Այն սպանդից հետո, որ Իմանուսը սարքել էր սանդուղքի գլխին, Գովենը վախենալով որևէ նոր դարանից՝ ետ էր կանչել իր մարդկանց և նորից խորհրդակցում էր Սիմուրդենի հետ:

Ռադուբը մերկ սուրը ձեռքին կանգնել էր շեմքում կիսախավարի մեջ, որովհետև մարդը ջահը համարյա այնև լույս չէր տալիս:

— Քանի՞ հոգի եք այստեղ, առաջ եկեք, — կրկնեց նա:

Բայց պատասխան չստանալով՝ նա մի քայլ արեց առաջ: Այդ վայրկյանին ջահը մարելուց առաջ մի վերջին անգամ պայծառ բռնեց ու լուսավորեց սենյակը: Ռադուբի աչքին ընկավ պատին կախված հայելիներից մեկը: Նա մոտեցավ այդ հայելուն, նայեց իր արնաշաղախ դեմքին ու կտրված ականջին և փնթփնթաց:

— Ա՛յ թե լավ են զարդարել նրանք ինձ:

Եվ միայն այդ ժամանակ նա շուրջը նայեց ու շատ զարմացավ, տեսնելով, որ սենյակը դատարկ է:

— Բայց այստեղ ոչ ոք էլ չկա, — գոչեց նա:

Հանկարծ նա նկատեց պատի մեջ բացված անցքը և գաղտնի սանդուղքը:

— Ա՛, հասկանում եմ: Գնացե՛լ են... Ընկերնե՛ր, այս կո՛ղմը: Եկեք բոլորդ: Այստեղ մարդ չկա: Նրանք փախել են, ծլկել են ճգովյալները: Այս անիծյալ աշտարակում պատերի մեջ անցքեր են շինված: Ես գտել եմ այն անցքը, որով ծլկել են նրանք... Ա՛յ թե ինչ օյիմներ են սարքել սրիկաները: Սատանան ինքն է օգնում նրանց: Բոլորը փախել են...

Հանկարծ ատրճառակի պայթյուն լսվեց, գնդակը դիպավ Ռադուբի արմունկին և զարկվեց պատին:

— Էհե՛, այստեղ ինչ-որ մարդ կա: Հետաքրքիր է իմանալ՝ ո՞վ տվեց ինձ այս պատիվը:

— Ես, — արձագանքեց մի ձայն:

Ռադուբը միզը երկարացրեց և խավարով, հատակի վրա նկատեց մի ինչ-որ բան, որ առաջ Իմանուս էր եղել:



— Ծա՛նկս ընկար,— գոռաց Ռադուրը:— Մյուսները փախել են, բայց քեզ այդ չի հաջողվի:

— Դու կարծո՞ւմ ես,— ասաց Իմանուսը:

Ռադուրը քայլեց նրա կողմը.

— Է՛յ, դո՛ւ, ո՞վ ես դու այդտեղ ընկած:

— Ես թեև ընկած եմ, բայց թքել եմ նրանց վրա, ովքեր կանգնած են:

— Այդ ի՞նչ է քո աջ ձեռքում:

— Ատրճանակ:

— Իսկ ձախո՞ւմ:

— Իմ աղիքները:

— Ես քեզ գերի եմ վերցնում:

— Փորձիր:

Եվ կռամալով այրվող պատրույգի վրա՝ Իմանուսը մի վերջին անգամ փչեց նրա վրա և անշնչացավ:

Մի քանի րոպե անց դահլիճ մտան Գովենը և մյուս բոլորը: Նրանք տեսան պատի մեջ բացված անցքը, վերից վար գննեցին գաղտնի սանդուղքը. այն տանում էր դեպի ձորը: Կասկած չկար. պաշարվածները փախել էին այդ անցքով: Ցնցեցին Իմանուսին. նա մեղած էր: Գովենը լապտերը ձեռքին մոտեցավ շրջվող քարին: Նա առաջ էլ պատմություններ էր լսել այդ քարի մասին, բայց բոլորի նման նա էլ դա համարել էր դատարկ հեքիաթ: Քարը դիտելիս նա նկատեց, որ վրան մատիտով ինչ-որ բան է գրված: Լապտերը մոտեցրեց ու կարդաց.

«Ցտեսություն, պարոն վիկոնտ:

Լանտենակ»:

Գեշանը մոտեցավ Գովենին: Հետապնդումն, ըստ երեվույթին, անօգուտ բան էր. փախուստից հետո շատ ժամանակ էր անցել, և փախստականներն արդեն հեռու էին: Նրանց ետևից հասնել հնարավոր չէր. նրանց կողմն էր ամբողջ երկիրը՝ թփերը, ձորերը, անտառի թավուտը, բնակիչները: Ֆուժերյան անտառն ամբողջությամբ մի համատարած որոգայթ էր... Ի՞նչ կարելի էր անել: Ստիպված էին ամեն ինչ նորից սկսել: Գովենն ու Գեշանն իրենց դառնությունն էին փոխանակում և հետագա անելիքների ծրագրեր.

կազմում: Սիմուրդենը լսում էր նրանց մուսլ, առանց մի խոսք ասելու:

— Ի դեպ, Գեշան, որտե՞ղ է փրկարար եղարանը,— հարցրեց Գովենը:

— Եղարանը չեմ բերել, հրամանատար:

— Ինչպե՞ս թե: Մենք տեսանք պահակախմբով բերվող սայլը:

— Այն եղարանը չէին բերում,— պատասխանեց Գեշանը:

— Հապա ի՞նչ:

— Գիլիոտինը,— ասաց Սիմուրդենը:

## **XV. ԲԱՆԱԼԻՆ ԺԱՄԱՅՈՒՅՑԻ ՀԵՏ ՄԻԵՎՆՈՒՅՆ ԳՐՊԱՆԸ ՉՊԵՏՔ Է ԴՆԵԼ**

Մարկիզ դը Լանտենակն այնքան հեռու չէր, որքան կարծում էին նրա թշնամիները: Բայց և այնպես միանգամայն ապահով տեղ էր, որովհետև նրան գտնել չէր կարելի:

Նա դուրս եկավ Հալմալոյի ետևից:

Այն գաղտնի սանդուղքը, որով նրանք ցած իջան մյուս փախստականների ետևից, վերջանում էր կամրջի կամարների տակ եղած խոռոչում մի մեղլիկ կամարակապ անցքով, որը տանում էր դեպի ստորերկրյա մի գալարուն բնական ծերպ, որի մի ծայրը վերջանում էր խոռոչում, իսկ մյուսը դեմ էր առնում անտառին: Այդ ծերպը ծածկված էր այնպիսի խիտ թփերով ու խոտով, որ բոլորովին անտեսանելի էր կողմնակի աչքի համար և այնտեղ թաքնված մարդուն գտնել անկարելի էր: Բավական էր, որ փախստականը մի քանի քայլ սողար դեպի անտառը և արդեն անհասանելի կդառնար:

Կամարակապ անցքի ելքը այնքան լավ էր ծածկված մացառներով, որ կառուցողները, ըստ երևույթին, ավելորդ էին համարել քողարկել այն որևէ այլ եղանակով:

Այժմ մարկիզին մնում էր միայն թաքնվել անտառում: Նա կարիք էլ չուներ հոգալու հագուստը փոխելու մասին: Բրետան հասնելուց հետո նա գեղջկական զգեստը չէր հանել, գտնելով, որ ամեն հագուստով էլ ինքը մնում է ազնվատոհմ իշխան: Նա բավականացավ միայն նրանով, որ թուրև

իր երախակալով արձակեց ու նետեց թփերի մեջ:

Երբ մարկիզն ու Հալմալոն դուրս եկան ծերպը, այնտեղ արդեն փախստականներից ոչ մեկը չկար:

— Մեր թոչնակները, ինչպես երևում է, շտապել են թռչել գնալ,— ասաց Հալմալոն:

— Խորհուրդ եմ տալիս, որ դու էլ նույնն անես,— պատասխանեց մարկիզը:

— Դուք ինձ հրամայում եք ձեզ մենա՞կ թողնել, մոնսեֆյոր:

— Հարկավ: Չէ՞ որ ես ասել եմ՝ փրկվել կարելի է առանձին-առանձին: Որտեղով մենակ կարելի է անցնել, երկուսով անցնել չի լինի: Երկուսով ուշադրություն կգրավենք մեզ վրա: Բո պատճառով կարող եմ ինձ էլ բռնել և իմ պատճառով՝ քեզ:

— Իսկ մոնսեֆյորին լա՞վ ծանոթ եմ այս վայրերը:

— Իհարկե:

— Իսկ հավաքվելու վա՞րը: Դուք չե՞ք փոխել ձեր որոշումը: Գովենների քարի մո՞տ:

— Այո, վաղը կեսօրին:

— Ես կգամ: Մենք բոլորս կգանք:— Հալմալոն մի պահ լռեց, ապա հանկարծ խոսեց արդեն այլ ձայնով.— Ախ, մոնսեֆյոր, հիշո՞ւմ եք, ինչպես մենք երկուսով բաց ծովում էինք, դուք ու ես, և ես ուզում էի ձեզ սպանել, չիմանալով, որ դուք իմ տերն եք, իսկ դուք կարող էիք այդ ասել ինձ ու չսպացիք... Ի՞նչ զարմանալի մարդ եք դուք...

— Այո, Անգլիան, միմիայն Անգլիան,— մրմնջում էր մարկիզը:— Ուրիշ ելք չկա: Երկու շաբաթ հետո անգլիացիները պետք է Ֆրանսիայում լինեն:

— Ես դեռ չեմ հասցրել հաշիվ տալ մոնսեֆյորին,— ասաց Հալմալոն:— Ես կատարել եմ ձեր բոլոր հանձնարարությունները:

— Դրա մասին մենք վաղը կխոսենք:

— Լսում եմ: Ցտեսություն մինչև վաղը, մոնսեֆյոր:

— Սպասիր: Դու գուցե քաղցած ես:

— Կարծես քաղցած եմ, մոնսեֆյոր: Ես այնպես էի վախճում ուշանալ, որ ինքս էլ չգիտեմ՝ այսօր բան կերել եմ:

Մարկիզը գրպանից մի սալիկ շոկոլատ հանեց, երկու հա-

վասար կտոր արեց, մեկը տվեց Հալմալոյին, իսկ մյուս կե-  
սը ինքն սկսեց ուտել:

— Դե՛հ, չմոռանաք, մոռանցիկը. դեպի աջ խանդակն է,  
դեպի ձախ՝ անտառը,— ասաց Հալմալոն:

— Լավ: Իսկ հիմա՝ գնա, ցտեսություն:

Հալմալոն հնազանդվեց: Մի րոպե անց նա անհետացավ  
խավարի մեջ: Լսվում էր ետ-ետ քաշվող ճյուղերի՝ խըշ-  
շոցը, հետո ամեն ինչ լռեց: Էլի մի քանի րոպե, և արդեն  
ոչ ոք նրա հետքերը չէր գտնի: Իզուր չէ, որ Բրետանի այդ  
մասը, որ անտառապատ է ու ամբողջովին ձորակներով  
կտրտված, այնքան նպաստավոր էր համարվում փախըս-  
տականների համար: Այդտեղ մարդ չէր թաքնվում, այլ  
վայրկենապես անհետանում էր: Արագորեն անհետանա-  
լու հենց այդ հնարավորությունն էր, որ մեր զորքերին վա-  
րանմունքի մեջ կանգնեցնում էր այդ անընդհատ ընկրկող  
Վանդեայի առաջ, այն հակառակորդի առաջ, որն այնքան  
սուկալի էր անհետանալու իր կարողությամբ:

Մարկիզը չէր շտապում հեռանալ: Նա ուրախության  
հուզմունք էր ապրում ազատ օդ շնչելով այն քանից հետո,  
երբ հենց նոր արյան հոտ էր շնչել, այն ամենից հետո, ինչ  
նա ապրել էր այդ վերջին երկու ժամվա ընթացքում:

Իրեն կործանված համարել և ապա փրկվել, լինել գե-  
րեզմանի եզրին և ապա լիովին ապահով զգալ իրեն, խույս  
տալ մահից և վերադառնալ կյանքին՝ սա ցնցող բան էր  
նույնիսկ այնպիսի մարդու համար, ինչպիսին Լանտենակն  
էր: Բայց Լանտենակն արագորեն ուշքի եկավ հուզումից:

Նա գրպանից ժամացույցը հանեց և զարկի գցեց: Նա  
շատ զարմացավ, որ ժամացույցը միայն տասն անգամ զար-  
կեց: Նշանակում է՝ այդ պաշարումը, որ սկսվել էր ժամը  
ութին, վերջացել էր տասին մոտ: Այդ բոլոր զարհուրելի  
դեպքերը տևել էին ընդամենը հարյուր քսան րոպե:

Միշտն ասած՝ ավելի շուտ պետք էր զարմանալ հակա-  
ռակ իմաստով, նրա համար, որ այդ մի բոլոր մարդիկ  
կարողացել էին այդքան երկար դիմադրել մի ամբողջ քա-  
նակի: Եթե այս տեսակետից մոտենանք, ապա՝ ոչ մի կերպ  
չէր կարելի ասել, թե տասնինը մարդու պայքարը չորս  
հազարի՝ դեմ կարճ է եղել:

Վերջապես մարկիզը հիշեց, որ իր գնալու ժամանակն է: Հալմալոն արդեն հեռու էր, և այլևս հապաղելու կարիք չկար: Նա ժամացույցը գրպանը գցեց, բայց ոչ այն գրպանը, որի մեջ էր առաջ, որովհետև նկատել էր, որ այդ գրպանում է երկաթե դռան բանալին, որ իրեն էր տվել Իմանուսը դրդյակը գննելուց հետո, իսկ բանալին կարող էր կոտրել ժամացույցը: Նա արդեն մի քանի քայլ առաջ էր գնացել և արդեն ուզում էր շուտ գալ դեպի ձախ, ամուսնի կողմը, բայց հանկարծ նկատեց, որ իրեն մինչև գլուխը ծածկող տերևների արանքով մի ինչ-որ տարօրինակ լույս է թափանցում: Նա ետ նայեց և թփերի խիտ տերևների արանքով, որոնք այժմ պարզ երևում էին երկնքի կարմիր ֆոնի վրա, տեսավ մի պայծառ շող: Հենց այն է, պիտի շուտ գար այդ կողմը, բայց մտածեց, որ այդպիսի պայծառ լույսով հեշտությամբ կարող են իրեն նկատել, չարժեք առանց անհրաժեշտության վտանգի ենթարկել իրեն: Եվ նա նորից գնաց Հալմալոյի ասած ուղղությամբ:

Թփերի միջով աննկատելի անցնելով՝ նա արդեն մոտեցել էր ամուսնին, երբ հանկարծ մի զարհուրելի ճիչ լսեց իր գլխավերևը, որ, ըստ երևույթին, գալիս էր դեպի ձորակն իջնող դարափույի եզրից:

Մարկիզը գլուխը բարձրացրեց ու կանգ առավ:

## Հ Ի Ն Չ Ե Ր Ո Ր Պ Պ Ի Ր Ք

### Մ Ա Ր Դ Ը Գ Ա Զ Ա Ն Ի Մ Ե Զ

#### Լ. ԳՏԱԾ, ԲԱՅՑ ԿՈՐՑՐԱԾ

Այն րոպեին, երբ Միշել Ֆլեշարը աշտարակը տեսավ մայր մտնող արևի շողերով ողողված, մոտ մեկ ու կես մղոն հեռու էր աշտարակից, բայց այդ տախածությունը չվհատեցրեց նրան: Կանաչ թույլ արարած են, բայց մայրերն ուժեղ են: Միշել Ֆլեշարը շարունակեց առաջ գնալ:

Արեգակը մայր մտավ: Աղջամուղջն իջավ, ապա բո-  
լորովին մթնեց: Ծարունակելով քայլել՝ Միշել Ֆլեշարը  
լսեց, թե ինչպես հեռու մի ինչ-որ տեղ զանգակատունը  
զարկեց ժամը ութը, հետո էլ՝ ինը: Երբեմն նա կանգ էր  
առնում և ականջ դնում աշտարակի կողմից եկող խուլ հար-  
վածների, որոնք միաձուլվում էին գիշերվա խառնակ ձայ-  
ների հետ:

Նա քայլում էր ուղիղ դեպի առաջ, ճիմերի ու մամխենու  
փշոտ թփերի վրայով, արյունվա ոտքերով: Գնում էր դեպի  
այն լույսը, որ առկաջում էր հեռավոր աշտարակի հրակ-  
նատներից:

Հայնարձակ սարահարթը, որով գնում էր Միշել Ֆլե-  
շարը, ամբողջովին ծածկված էր խոտով ու հավամրգի թփե-  
րով: Ծուրջը չէր երևում ոչ ծառ, ոչ տուն: Սարահարթն ան-  
նկատելիորեն վեր էր բարձրանում և հեռու առջևում մի եր-  
կար և ուղիղ գծով անջատվում էր աստղազարդ մթին երկ-  
նականարից: Միշելը հագիվ թե դիմամար այդ ճամփորդու-  
թյանը, եթե աչքի առաջ չլիներ աշտարակը, որն իր մոտ  
էր կանչում նրան: Եվ այդ աշտարակը գնալով մեծանում էր:

Աշտարակի լույսի աղոտ բոցկույտներին և խուլ հար-  
վածներին հաջորդում էին լիակատար խավարն ու լուրջու-  
նը, որը տանջալից տարակուսանքի մեջ էր գցում տա-  
ռապյալ մորը:

Հանկարծ ամեն ինչ դադարեց. լույսը մարեց, ձայները  
լռեցին: Տիրեց լիակատար լուրջուն, ամեն ինչ քարացավ  
գերեզմանային անդորրով:

Այդ պահին Միշել Ֆլեշարը մոտեցավ սարահարթի եզ-  
րին: Նրա ոտքերի տակ ահավոր կիրճն էր, որի հատակը  
կորչում էր գիշերային ճերմակավուն մշուշում: Քիչ հեռու և  
մի քիչ ավելի վեր նա տեսավ ինչ-որ երկար-երկար անվա-  
վոր առարկաների մի շարք (դրանք հանրապետական մարտ-  
կոցի թնդանոթներն էին), իսկ ուղիղ նրա առաջ, այդ մարտ-  
կոցի այրվող պատրույգներով թույլ լուսավորված բարձրա-  
նում էր մոռյլ ու սև վիթխարի դղյակը: Դղյակից ցած կա-  
մարակապ կամուրջն էր, իսկ կամրջի և սև դղյակի այն կող-  
մը նրանց կրած բարձրանում էր մի ինչ-որ ուրիշ շենք, այն

նույն աշտարակը, որի համար թշվառ մայրն այդքան ճանապարհ էր կտրել:

Աշտարակի լուսամուտներում երևում էին ինչ-որ ստվերներ և, ինչպես կարելի էր հասկանալ լսվող ձայների դժոցով, այնտեղ շատ մարդ կար:

Միշել Ֆլեշարը կանգնել էր հենց ուղիղ զառիթափի գլխին, կամրջին այնքան մոտիկ, որ թվում էր, թե ձեռքդ մեկնես՝ կհասնես նրան: Դղյակից ու կամրջից նրան բաժանում էր խոր կիրճը:

Նա ինքն էլ չգիտեր, թե որքան ժամանակ է կանգնել այստեղ: Նորից խոչընդոտ, կրկին մի արգելք... Ինչպե՞ս անցնել իր ոտքերի տակ սևին տվող այդ կիրճը: Եվ ի՞նչ դղյակ է այն, ինչո՞ւ այդքան մոայլ է նա: Ի՞նչ է կատարվում այնտեղ: Արդյոք Տուրգը չէ՞ սա... Նրա գլուխը պտույտ եկավ տազնապալից, հուզող սպասումից, որի մեջ կային և՛ ուրախություն, և՛ ինչ-որ զարհուրելի բանի նախազգացում:

Նա կանգնել, նայում էր ու լսում:

Հանկարծ կամուրջն ու դղյակը ծածկվեցին նրա աչքերից, նրանց միջև մի թանձր ամպ բարձրացավ, և նա աչքերը կկոցեց այրող ծխից: Եվ երբ նորից աչքերը բացեց, նրա շուրջն անդեն գիշեր չէր, այլ՝ պայծառ ցերեկ, բայց չարագույժ ու զարհուրելի ցերեկ, որ լուսավորում էր ոչ թե արևը, այլ՝ կրակը: Երկու քայլ նրանից հեռու հրդեհ էր սկսվել:

Կրակը մերթ կայծակի արագությամբ դուրս էր ժայթքում ծխի միջից, մերթ պտտվելով ու գալարվելով թաքնվում էր օձի արագությամբ:

Բոցը երկար, կարմիր լեզվի պես դուրս էր գալիս լուսամուտից, որն ասես հրավառ բաց երախ լիներ:

Միշել Ֆլեշարը նայում էր շշմած՝ չհասկանալով երա՞գ է դա, թե իրականություն: Ի՞նչ աներ ինքը. փախչե՞ր, թե՛ մնար:

Բամու հոսանքը մի վայրկյան ճեղքեց ծխի վարագույրը, և դրբերգական ամրոցը հանկարծ մերկանալով երևաց ամբողջությամբ, իր կամրջով, դղյակով ու աշտարակով՝ կուրացուցիչ ու սոսկալի՝ հրդեհի ոսկեվառ զարդերով: Այդ պալ-

ծառ լուսավորութեամբ Միշել Ֆլեշարը կարող էր տեսնել ամեն ինչ՝ բոլոր մանրամասնություններով:

Վառվում էր դղյակի ստորին հարկը, որ գտնվում էր կամրջի վրա: Նրա վրա ասես հրավառ զամբյուղի մեջ սևին էին տալիս վերին երկու հարկերը, որոնց դեռ կրակը չէր հասել: Կիրճի եզրից, որտեղ կանգնած էր Միշել Ֆլեշարը, կարելի է սենյակների ներսը տեսնել այն բոլորներին, երբ բոցը հաղթահարում էր ծխին: Բոլոր լուսամուտները բաց էին:

Երկրորդ հարկի շատ խոշոր լուսամուտներից երևում էին պատերի տակ շարված ապակեպատ պահարաններ, որոնք լիքն էին գրքերով, իսկ լուսամուտներից մեկի առաջ հատակին ընկած էր մի ինչ-որ կույտ, որ կնքծես խոշոր բույն լիներ մանրիկ գազանիկներով լեցուն: Միշելին նույնիսկ թվաց, թե այդ կիտուկը մերթ ընդ մերթ շարժվում է:

Նա սկսեց ուշիուշով դիտել: Ի՞նչ կարող էր լինել դա: «Իսկ եթե իսկապես դրանք կենդանի էակներ ե՞ն», — անցավ նրա մտքով: Նա դողում էր. ամբողջ օրը քայլել էր առանց հանգիստ առնելու և առավոտվանից ոչինչ չէր դրել բերանը: Նա ուժասպառ էր եղել, զգում էր, որ ինքն սկսում է զառանցել և շատ էլ չէր հավատում իր տպավորություններին: Բայց և այնպես նրա հայացքը չէր կտրվում անհայտ առարկաների այդ մթին կույտից, որ ընկած էր հենց ուղիղ շենքի այրվող մասի վերևը գտնվող սենյակի հատակին:

Համկարծ կրակը, ասես գիտակցական կամքով, վեր ձգեց իր բոցեղեն լեզուներից մեկը և լիզեց չորացած բաղեղի ճյուղը, որով ծածկված էր դղյակի հենց այն ճակատը, որին նայում էր Միշել Ֆլեշարը: Բոցը նոր սնունդ գտավ իր համար և հարձակվեց նրա վրա: Ազահորեն կլանելով բաղեղի առաջին ճյուղերը՝ զարհուրելի արագությամբ վեր սողաց: Մի ակնթարթում այն հասավ վերին հարկին և վերևից լուսավորեց երկրորդ հարկի ներսը: Պայծառ լույսն ընկավ հատակին պառկած սքանչելի խմբի՝ երեք քնած մանկիկների վրա: Մի տեղ կուտակված, ոտքերով ու ձեռքերով իրար հետ միահյուսված՝ նրանք երեքն էլ քնած էին անխոռով քնով: Երեք քնքուշ գլուխները աչքները փակած՝ ժպտում էին քնի մեջ:



Մայրը ճանաչեց իր մանուկներին: Նա աղեկտուր մի ճիչ արձակեց, անասելի տանջանքի մի ճիչ, որպիսին միայն մայրը կարող է արձակել:

Միշտ Ֆլեշարի այդ ճիչը մուլմիսկ ճիչ՝ չէր, այլ՝ ոռնոց: Ահա հենց այդ ճիչն էր, որ լսեց մարկիզ դը Լամտենակը: Եվ, ինչպես գիտենք, կանգ առավ:

Այդ վայրկյանին նա կիրճի և այն գաղտնի անցքի միջև էր, որով դուրս բերեց նրան Հալմալուն: Իր գլխավերևում իրար միահյուսված ճյուղերի արանքով նա տեսավ կամուրջը՝ ամբողջապես բոցերի մեջ և աշտարակը, որ շառագունել էր հրդեհի փայլից: Ավելի լավ տեսնելու համար նա ճյուղերը ետ քաշեց: Կիրճի այն կողմը, դարափուլի եզերքին, ուղիղ այրվող դղյակի դիմաց նա տեսավ դեպի վիհը կոացած կնոջ դեմքը՝ ամբողջովին աղճատված սոսկումից: Երևի հենց այդ կինն էր ճիչ արձակողը:

Նրա շրթունքները, որոնցից նզովք էր թափվում, նրա ամբողջ դեմքը վիշտ ու ցասում էր արտահայտում: Արցունքով ողողված նրա աչքերը շանթեր էին նետում, նրա հայացքը աղաչում էր, հրամայում, սպառնում էր հրդեհին:

Մարկիզը ականջ դրեց: Վերևից քարերի պես նրա վրա էին թափվում ճիչեր, աղաղակներ, հառաչանքներ: Նա լսեց ինչ-որ կցկտուր, բայց սրտակեղեք մի բան, որ ավելի շուտ հառաչանք էր, քան խոսքեր.

— Օ՛, տե՛ր աստված, իմ գավակները: Այդ նրանք են, իմ մանկիկները: Օգնեցե՛ք, օգնեցե՛ք, այրվո՛ւմ է: Չարագործներ եք դուք, ինչ է: Մի՞թե մարդ չկա այստեղ... Կայրվե՛ն իմ գավակները... Ա՛խ, այս ինչ բան է... Ժորժետա՛, բալիկներս: Գրո-Ալե՛ն, Ռենե-Ժա՛ն... Ա՛խ, աստվա՛ծ իմ, այս ի՞նչ է ճշանակում: Ո՞վ է այստեղ փակել իմ մանուկներին... Օ՛, նրանք քնած են, իմ բալիկները... Ա՛խ, ես խելագարվում եմ... Ոչ, նրանք չե՛ն այրվի, այդ անկարելի՛ է: Օգնեցե՛ք...

Այդ ժամանակ աշտարակում և սարահարթում անասելի իրարանցում էր ընկել: Հենց որ տեսան հրդեհն սկսվում է, ամբողջ ճամբարն այնտեղ հավաքվեց: Պաշարողները, որոնք հենց նոր գործ ունեին կարտեշի հետ, այժմ ստիպված էին լցաքարել կրակի դեմ: Գովենը, Սիմուրդենն ու Գեշանը

շտապ հրամաններ էին տալիս: Բայց ի՞նչ կարելի էր անել: Ինչպե՞ս օգնել: Կիրճի միջով հոսող բարակ առվակից մի քանի դուլ ջուր էլ չէր կարելի վերցնել: Ընդհանուր շփոթությունն ու սարսափը գնալով ուժեղանում էր: Դարափուլի ամբողջ եզրը լիքն էր սարսափահար մարդկանցով, որոնք սիրթնած ու անօգնական մայրում էին հրդեհին:

Տեսարանն, իրոք, զարհուրելի էր: Բոցը ցածում այրվող բաղեղների վրայով սահեց դեպի վերին հարկը: Այնտեղ, ծղոտով լի տանիքում առատ սնունդ գտավ ու հարձակվեց նրա վրա: Այժմ այրվում էր ամբողջ կտուրը: Կրակը պարում էր ու ցնծում: Բոցի ցնծությունը զարհուրելի բան է: Թվում էր, թե մի չար, ոճրագործ շունչ բորբոքում է այդ խարույկը: Թվում էր, թե ինքը՝ զարհուրելի Իմանուսն է պանում հրավառ կայծեր դառած և ապրում է կրակի մահաբեր կյանքով: Թվում էր, թե այդ մարդ-գազանի հրեշավոր հոգին մարմնից բաժանվելով ձուլվել է հրդեհի մեջ: Միջին հարկը, որտեղ գրադարանն էր, դեռ չէր բռնկել: Բարձր առաստաղն ու հաստ պատերը հեռացնում էին այն բոլակներ, երբ այդ հարկն էլ պիտի բոցավառվեր: Բայց այդ բոլակն մոտենում էր. հրեղեն լեզուներն արդեն լիզում էին նրան թե՛ վերևից, թե՛ ներքևից: Ցածում հալված լավայի կաթսան էր, վերելվում՝ բոցավառվող խարույկը: Բավական էր, որ առաստաղն այրվեր, և գրադարանը կլցվեր շեղջով, բավական էր, որ հատակը այրվեր, և ամեն ինչ կթափվեր եռացող կաթսայի մեջ:

Ռենե-Ժանը, Գրո-Ալենը և Ժորժետան դեռ չէին արթնացել: Նրանք քնած էին մանկական խոր, անխոռով քնով: Ծխի ու հրի ալիքի միջով, որ մերթ ծածկում էր գրադարանի լուսամուտները, մերթ քաջ թողնում, կարելի էր երեքին էլ տեսնել: Խաղաղ ու հանգիստ մեկնված հիանալի դիրքով՝ նրանք պառկած էին այդ հրավառ խորշում՝ ողողված հրդեհի պայծառ լույսով: Վագրը որ վագր է, երևի նա էլ լաց կլիներ, եթե տեսներ այդ վարդագույն մանկիկներին, որոնք նոր էին սկսել ապրել, բայց արդեն մահվան գրկում էին:

— Այրվո՛ւմ է, այրվո՛ւմ է, օգնեցե՛ք,— ձեռքերը կոտրատելով, աղերսում էր թշվառ մայրը:— Ոչ ոք չի գնում: Օ՛, աստվա՛ծ իմ: Խլացե՛լ եք բոլորդ, ինչ է: Լսո՛ւմ եք, ես գո-

ում եմ, իմ երեխաներն են այրվում: Դուք շատվոր եք այս-  
 տեղ. գեթ մեկդ գնացեք: Քանի՜ օր, քանի՜ շաբաթ ես որո-  
 նել եմ նրանց և ահա թե ինչպես եմ գտնում: Ինչի՞ համար:  
 Ինչի՞ համար: Չէ՞ որ դրանք անմեղ գաղութներ են: Ի՞նչ  
 են արել նրանք: Ո՞րն է նրանց մեղքը... Ինձ գնդակահար  
 արին, նրանց այրել են ուզում: Ո՞վ է անում այս... Օգնե-  
 ցե՛ք, փրկեցե՛ք երեխաներին: Մի՞թե չեք լսում ինձ: Ծուն  
 էլ լինեք նրանց տեղը, մարդ կխղճար... Իմ անուշիկներս...  
 Քնած են նրանք... Ժորժետա՛, աղջիկս: Քնած է բոլորովին  
 մերկ, ա՛յ, երևում է փորիկը: Ռենե-Ժա՛ն, Գրո-Ալե՛ն, իմ  
 մանչուկներս... Չէ՞ որ, ես նրանց մայրն եմ, ես գիտեմ նրանց  
 անունները: Հիմա տեսնո՞ւմ եք, որ նրանց մայրն եմ... Օ՛,  
 աստվա՛ծ իմ, այս ի՞նչ է կատարվում աշխարհիս երե-  
 սին... Իսկ ես որոնում էի նրանց, գիշեր-ցերեկ քայլում էի  
 ու քայլում: Հենց այս առավոտ ես մի կնոջ ասում էի, որ  
 իմ զավակներին եմ որոնում... Օգնեցե՛ք, օգնեցե՛ք: Հրեշ-  
 նե՛ր, ճիվաղնե՛ր: Այստեղ երեխաներ են այրվում: Մեծը  
 հազիվ հիմզ տարեկան է, իսկ փոքրը երկու էլ չկա: Գաղ-  
 անուկներս... Տեսեք, ինչպես են փովել քնի մեջ: Ես այս-  
 տեղից տեսնում եմ նրանց մերկ ոտքերը: Քնել են հանգիստ  
 և ոչինչ չգիտեն... Չէ՛, դուք չե՛ք այրվի, բալիկներս: Դրա  
 համա՛ր եմ պահել ձեզ, դրա համա՛ր եմ կերակրել իմ  
 կրծքով, այսքան երկար ճանապարհ անցել ձեզ հասնելու  
 համար... Իսկ ես, երբ ձեզ խլեցին ինձանից, մտածում էի.  
 ի՞նչ դժբախտն եմ ես: Մարդի՛կ, գթացեք ինձ: Տվե՛ք ինձ  
 իմ երեխաներին: Ես չեմ կարող ապրել առանց նրանց. Գու-  
 ցե սա զառանցա՞նք է... Բայց ոչ, նրանք այնտեղ են, կրա-  
 կի մեջ, ես տեսնում եմ նրանց... Օգնեցե՛ք, գթացե՛ք ինձ:  
 Տեսեք, արյունվա են իմ ոտքերը. սա նրանից է, որ ես  
 որոնում էի իմ բալիկներին: Եթե դուք մարդիկ եք և ո՛չ  
 գազաններ, չեք թողնի որ նրանք մեռնեն այդպիսի մահով:  
 Որտե՞ղ է տեսնված, որ երեխաներին ողջակեզ անեն: Ին-  
 չո՞ւ են նրանց փակել այդ սոսկալի տան մեջ: Ավազակնե՛ր,  
 երեխաներիս գողացաք, որպեսզի սպանե՛ք: Ողորմա՛ծ Հի-  
 սուս, տուր ինձ իմ մանուկներին: Ա՛խ, ի՞նչ անեմ... Ես չեմ  
 ուզում, որ նրանք մեռնեն: Եթե իմանայի, որ նրանք այս-

պիսի սոսկալի մահով եմ մեռնելու, ես իրեմ՝ աստծուն կըս-  
պանեի... Օգնեցե՛ք, օգնեցե՛ք...

Եվ երբ այսպես աղերսում ու հեծեծում էր մայրը, սա-  
րահարթից ու ձորից ձայներ էին լսվում.

— Ելարա՛նը:

— Ելարան չկա:

— Ջո՛ւր:

— Ջուր չկա:

— Այնտեղ, աշտարակի երրորդ հարկում դուռ կա:

— Երկաթե դուռ է:

— Կոտրե՛լ այդ դուռը:

— Անկարելի է:

Իսկ մայրը ողբում էր հուսակտուր...

— Հրդե՛հ: Օգնեցե՛ք, շո՛ւտ... Փրկեցե՛ք երեխաներին,  
կամ սպանեցե՛ք ինձ... Ջավակնե՛րս, զավակնե՛րս... Կրակն  
ավելի է բորբոքվում... Դուրս բերե՛ք նրանց հրդեհից կամ  
էլ ինձ նետեցե՛ք կրակի մեջ...

Այս աղաղակների ընթացքում լսվում էր հրդեհի հան-  
գիստ, համաշափ ճարճատյունը:

Մարկիզը ձեռքը տարավ գրպանը, շոշափեց այնտեղ  
երկաթե դուռն քանալիմ, ապա կռամալով նորից մտավ  
ստորերկրյա անցքի կամարի տակ, որտեղից ինքը դուրս  
էր եկել:

## II. ՔԱՐԵ ԴՌԵԻՅ ԵՐԿԱԹԵ ԴՈՒՌԸ

Որևէ ճար անելու անհնարինությունից շփոթված մի ամ-  
բողջ բանակ, երեք մանկանը փրկելու անգոր չորս հազար  
հոգի՝ այսպես էր դրությունը:

Ելարանը, իրոք, չկար. Ժավենեից ուղարկված ելարանը  
տեղ չէր հասել: Իսկ հրդեհը բորբոքվում ու տարածվում էր  
խառնարանից ժայթքող լավայի մման: Փորձել հանգցնել  
այն համարյա ցամաքած առվակից ջուր հանելով՝ դրա մա-  
սին մտածելն անգամ ծիծաղելի էր. դա նույնն էր, թե փոր-  
ձես հրաբուխը մարել մի բաժակ ջրով:

Միմուրդեանը, Գեշանն ու Ռադուքը իջան ձորը: Գուվեանը  
բարձրացավ աշտարակի երրորդ հարկի դահլիճը, որտեղ

շրջվող քարով գաղտնի ելքն էր և դեպի գրադարանը բացվող դուռը։ Այնտեղ էր մասն ծծումքով հագեցած պատրույգը, որ վառել էր Իմանուսը. այդտեղից էլ սկսվել էր հրդեհը։

Գովենն իր հետ վերցրեց քսան սակրավոր։ Մնում էր միայն մեկ միջոց՝ կոտրել երկաթե դուռը, որովհետև այն բաց անել հնարավոր չէր։

Փորձեցին կացիմներով կոտրել, կացիմները փշրվեցին։

— Ոչ մի պողպատ այս երկաթը չի կտրի, — ասաց սակրավորներից մեկը։

Եվ իրոք, դա անհնարտակելի դուռ էր. ամբողջապես կոփված էր երկաթից և դեռ ամրացված էլ էր կրկնակի հեղույրներով՝ յուրաքանչյուրը երեք մատնաչափ հաստությամբ։

Երկաթե միջուկ գործի դրին, սակայն, դրանք էլ փշուր-փշուր եղան։ Գովենը մոայլ մտքի մեջ ընկած մրմնջաց.

— Այս դուռը խորտակել կարելի է միայն թնդանոթի ումքով։ Չփորձե՞մք թնդանոթ բարձրացնել ալատեղ։

— Թնդանոթն էլ չի օգնի, — ասաց մույն սակրավորը։

Տեսնելով իրենց անզորությունը՝ բոլորն ընկնվեցին, բռնորի ձեռքերը թուլացան։ Գիտակցելով իրենց պարտվածությունը՝ մարդիկ լուռ ու հուսակտուր մայում էին սոսկալի դռանը։ Նրա տակից երևում էր մի կարմրավուն շերտ՝ կրակի շողքը։ Նրա ետևը մոլեգնում էր հրդեհը, որ ավելի ու ավելի էր ծավալվում։ Նրա մոտ ընկած էր Իմանուսի զարհուրելի դիակը՝ չարագույժ ու հաղթական տեսքով։

Էլի մի քանի րոպե, և երևի ամեն ինչ փուլ կգար։ Ի՞նչ կարելի էր անել... Ոչ մի հույս չէր մնում։ Նայելով ետ քաշած քարին ու գաղտնի ելքին՝ Գովենը հուսակտուր գոչեց.

— Իսկ մարկիզ դը Լանտենակը, ահա, այս ճանապարհով է գնացել։

— Եվ մույն ճանապարհով էլ վերադառնում է, — լսվեց մի ձայն։

Ստորգետնյա անցքի քարե շրջանակի մեջ երևաց մի ալեհեր գլուխ։ Դա մարկիզն էր։

Գովենը երկար տարիներ մրան չէր տեսել։ Նա բնագրաբար ետ քաշվեց։ Մյուս բոլորը քարացան իրենց տեղում։

Մարկիզը ձեռքին մի մեծ քանափ ունէր: Տիրական հաշացքով նա իր ճանապարհին կանգնած մի քանի մարդուն ստիպեց ետ քաշվել, ինքն անցավ դեպի երկաթե դուռը, կոացավ և քանափին մոցրեց փականի մէջ: Փականը ճորճաջաց: Դուռը բացվեց և երևաց բոցը: Մարկիզը մտավ այդ հրաբորբոք ծովը, ներս մտավ հաստատուն քայլերով, գլուխը բռնած:

Բոլորը սրտի թրթիռով նրան էին նայում:

Բայց նա դեռ հագիւ մի քանի քայլ էր արել այդ բոցավառ սենյակում, երբ կրակով բռնված հատակը փլեց նրա թիկունքում և նրան դոնից բաժանեց հրավառ անդունդով: Նա նույնիսկ ետ չնայեց, այլ շարունակեց առաջ գնալ: Մի րոպե անց նա անհետացավ ծխի մէջ, և այլևս ոչինչ չերևաց:

Ի՞նչ պատահեց նրան: Կարողացա՞ւ արդյոք առաջ գնալ: Չկլանե՞ց արդյոք նրան մի նոր փլվածք: Ոչ ոք այս հարցերին պատասխանել չէր կարող: Երևում էր միայն ծխի ու հրի թանձր պատը: Եվ այդ պատի ետևը մարկիզն էր՝ մեռած կամ կենդանի:

### III. ԵՐԵՒԱՆԵՐՆ ԱՐԹՆԱՆՈՒՄ ԵՆ

Երեխաները, վերջապես, բաց արին աչքերը: Դղյակի երկրորդ հարկը դեռ հրդեհով չէր բռնվել: Գրադարանի առաստաղին խաղում էին նրա ցուլերը: Երեխաները երբեք այդպիսի արշալույս չէին տեսել: Երեքն էլ հիացմունքով էին նայում նրան:

Հրդեհը բորբոքվում էր իր ամբողջ թափով: Ծիրանագույն ծխի թանձր քուլաները մերթ սև ճիւղաղի կերպարանք էին ստանում, մերթ՝ կարմիր վիշապի: Հրավառ երկար ածխակոթերը ցրիվ էին գալիս օդում և լույս սփռում խավարում. թվում էր, թե գիսաստղեր են սլանում իրար ետևից: Կրակը շուալ բան է, նա քամում է տալիս իր գանձերը: Երրորդ հարկի պատերը տեղ-տեղ այրվել էին, և առաջացած ճեղքերից բոցն ամբողջ ալիքներով դուրս էր թափում իր թանկագին քարերը: Տանիքում այրվող վարսակից ու ծղոտից

լուսամուտներով ոսկե անձրևի հեղեղներ էին դուրս ժայթքում:

— Սիլվիա է,— ասաց Ժորժետան:

Երեքն էլ նստեցին ու վիզները ձգեցին:

— Նրանք արթնանո՞ւմ են,— գոչեց մայրը:

Ռենե-Ժանը վեր թռավ: Նրա ետևից վեր թռավ Գրո-Ալենը, ապա՝ Ժորժետան: Ռենե-Ժանը ձգվեց, մոտեցավ լուսամուտին ու ասաց.

— Ինչ շոգ է:

— Սո՛գ է,— կրկնեց Ժորժետան:

Մայրն սկսեց կանչել նրանց.

— Բալիկներս, Ռենե՛, Ալե՛ն, Ժորժե՛տա:

Երեխաները շուրջը նայեցին, աշխատելով հասկանալ, թե ով է կանչում իրենց: Այն, ինչ վախեցնում է չափահաս մարդուն, երեխային միայն զարմացնում է, իսկ ով հեշտությամբ զարմանում է, նրան հեշտ չէ վախեցնել. անտեղյակությունը վախ չգիտե:

Մայրը նորից կանչեց.

— Ռենե՛, Ալե՛ն, Ժորժե՛տա:

Ջայնի վրա Ռենե-Ժանը ետ նայեց: Երեխաները կարճ հիշողություն են ունենում, բայց արագ են վերհիշում: Ամբողջ անցյալը նրանց թվում է երեկվա դեպքեր: Ռենե-Ժանը մորը տեսավ, այդ նա ամենևին տարօրինակ չհամարեց, բայց իր համար արտասովոր այդ պայմաններում պաշտպանության աղոտ պահանջ զգալով, ձայն տվեց.

— Մայրի՛կ:

— Մայրի՛կ,— նրա ետևից կրկնեց Գրո-Ալենը:

— Մայրի՛կ,— թոթովեց Ժորժետան և թաթիկները մեկ-մեկ մոր կողմը:

— Բալիկներս,— գոչեց մայրը:

Երեխաները սեղմվեցին լուսամուտին. բարեբախտաբար հրդեհը դեռ այդ կողմը չէր անցել:

— Շոգ է,— ասաց Ռենե-Ժանը: Ապա քիչ մտածելով ավելացրեց.— այրվում է:— Եվ հայացքով մորը որոնելով, ձայն տվեց նրան.— Արի մեզ մո՛տ, մայրի՛կ:

— Մեզ մո՛տ,— կրկնեց Ժորժետան:

Թշվառ կիճը՝ տանջահար, քծնված, ոտքերն արյունոտ-

ված, թփերից կառչելով մի կերպ իջավ ձորը: Գեշանն ու Սիմորդենն արդեն այնտեղ էին և ցածում. նույնքան անգոր էին, որքան Գովենը՝ վերևում: Նրանց շուրջը խոնավ էին գիւմորները և իրենց անգորությունն զգալով վհատված դոփոփում էին տեղներում:

Շոգն անտանելի էր, բայց ոչ ոք այդ չէր նկատում: Բոլորը սոսկումով նայում էին վառվող դոշակին, կամրջի բարձր կամարներին, անմատչելի լուսամուտներին, հոգու խորքում գիտակցելով, որ անհրաժեշտ է անհապաղ գործի անցնել:

Երեք այրվող հարկեր, և նրանց հասնելու ոչ մի հնարավորություն...

Գեշանի մոտ վազեց Ռադուրը՝ ուսը վիրավոր, ականջը կտրված, ամբողջովին արյան ու քրտինքի մեջ: Հանկարծ նա տեսավ Միշել Ֆլեշարին:

— Ա՛յ քեզ հրա՛շք, — դուրս թռավ նրա բերանից: — Գընդակահարվածը հարություն է առել:

— Բալիկնե՛րս, իմ բալիկնե՛րը, — հագիվ խոսեց մայրը:

— Ինչ որ ճիշտ է, ճիշտ է, — ասաց Ռադուրը: — Հիմա մենք այն աշխարհից եկածներով զբաղվելու ժամանակ չունենք:

Եվ նա սկսեց մագլցել դեպի կամուրջը: Իզուր փորձեղունգներով քարերից կառչելով նա հագիվ մի քանի վերջով բարձրացավ: Կամրջի կամարները բոլորովին ողորկ էին. ոչ մի ճեղքվածք, ոչ մի ելուստ: Քարերն անբասիր խիտ էին կպած իրար: Ռադուրը պոկվեց և ցած ընկավ:

Իսկ հրդեհը մոլեգնում էր կատաղի ուժով: Լուսամուտի ճաճանչող շրջանակի մեջ երևում էին երեք խարտյաշ գլուխները: Ռադուրը տեսավ նրանց: Եվ հայացքը երկնքին զցելով՝ բռունցքով սպառնաց նրան.

— Ահա թե որն է քո արդարությունը, արարի՛չ, — ասաց նա չարացած:

Մայրը ծունկ չոքած գրկել էր կամրջի կամարի սյունը և գոռում էր.

— Փրկեցե՛ք, փրկեցե՛ք:

Այրվող ծառի խուլ ճարճատյունը խառնվում էր կրակի թշնոցին: Գրադարանում գրքերի պահարանների անվանի-



ներն սկսեցին կոտորովել և զրնգոցով հատակին թափվել: Պարզ էր, որ աղետը մոտենում է: Էլի մի րոպե՝ և ամեն ինչ փուլ էր գալու: Մարդկային ոչ մի ուժ այդ կանխել չէր կարող: Բոլորը սրտատրոփ սպասում էին այդ վայրկյանին: Լսվում էին թույլ ձայներ, որոնք կանչում էին՝ «Մայրի՛կ, մայրի՛կ»: Սոսկումը ծայր աստիճանի էր հասել:

Հանկարծ այն լուսամուտում, որի մոտ երեխաներն էին կանգնած, հրդեհի շառագունած ֆոնի վրա երևաց մի բարձր կերպարանք:

Բոլորը գլուխները բարձրացրին, բոլորի հայացքը դարձավ այդ լուսամուտին: Այնտեղ, վերևում, գրադարանի դահլիճում մարդ կար, մեծահասակ մի տղամարդ: Այդ մարդը չգիտես ինչ միջոցով մտել էր այդ դժոխքի մեջ: Նրա կերպարանքը որպես սև սիլուետ էր երևում կրակի կարմիր ֆոնի վրա: Նրա մազերը ճերմակ էին: Դժվար չէր ճանաչել նրան. դա մարկիզ դը Լանտենակն էր:

Նա մի ակնթաթ աճեցնեց, ապա նորից երևաց: Զարհուրելի ծերունին այժմ ձեռքին բռնած ուներ մի երկար ելարան: Դա փրկարար ելարանն էր, որ դրված էր գրադարանում, պատի մոտ: Մարկիզը ելարանը քաշեց լուսամուտի մոտ, բռնեց մի ծայրից, իսկ մյուս ծայրը ճարպկորեն, ատլետի ուժով դուրս հանեց լուսամուտից և սկսեց զգուշությամբ իջեցնել դեպի կիրճի հատակը: Ցածում կանգնած Ռադուքը ուրախությունից իրեն կորցրած ձեռքը մեկնեց, ելարանը բռնեց և կրծքին սեղմելով գոչեց.

— Կեցցե՛ հանրապետությունը:

— Կեցցե՛ թագավորը, — արձագանքեց մարկիզը:

— Գոռա քեզ համար ինչ ուզում ես, դուրս տուր ինչ ցնդաբանություն գլուխդ գա, բայց և այնպես ես պատրաստ եմ աղոթելու քեզ, ինչպես ասածուն եմ աղոթում, — մոթմոթաջ Ռադուքը:

Ելարանը դրված էր: Այրվող շենքի և գետնի միջև հաղորդակցություն էր ստեղծված: Մարդիկ մոտ վազեցին: Քսան հոգի Ռադուքի գլխավորությամբ մի ակնթաթում բարձրացան ելարանի վրա և շարվեցին նրա երկարությամբ, մեջքները դեմ արած ելարանին, ինչպես որմնադիրներն են անում շենքեր կառուցելիս, երբ պետք է քարեր բարձրաց-

Անն: Այսպիսով փայտե ելարանի վրա ստեղծվեց մարդ-  
կային ելարան: Վերին աստիճանին երեսը լուսամտոսի կող-  
մը դարձրած՝ կանգնած էր Ռադուքը: Նրա գլուխը հավա-  
սարվել էր լուսամտոսի գոգին: Փոքրիկ բանակը ամենաբազ-  
մապիսի զգացումներով հուզված խմբվել էր դարափույի  
լանջին, թփերի մեջ, սարահարթում, կիրճում: Զինվորների  
մի մասը նույնիսկ բարձրացավ աշտարակի դիտանոցը:

Մարկիզը վերցրեց առաջին իսկ ձեռքն ընկած երեխա-  
յին: Դա Գրո-Ալենն էր: Երեխան գոռում էր.

— Վախենո՞ւմ եմ, վախենո՞ւմ եմ:

Մարկիզը երեխային տվեց Ռադուքին: Սա էլ իր հեր-  
թին տվեց իրենից ցած կանգնած զինվորին, սա՝ հաջորդին  
և այսպես շարունակ: Մինչ Գրո-Ալենը սարսափից գոռա-  
լով ու ձեռքից ձեռք անցնելով ցած էր իջնում, մարկիզը,  
որ նորից էր անհետացել, վերադարձավ լուսամտոսի մոտ՝  
բերելով Ռենե-Ժանին: Ռենե-Ժանը նույնպես լալիս էր ու  
թայրտում: Նա հարվածեց Ռադուքին, երբ մարկիզը նրան  
սերժանտի ձեռքը հանձնեց:

Մարկիզը նորից անհետացավ բոցերով բռնված սենյա-  
կում: Այնտեղ մնում էր միայն Ժորժետան: Մարկիզը մոտե-  
ցավ նրան: Աղջիկը ժպտաց: Եվ իր համար էլ անսպասելի՝  
այդ դաժան մարդն զգաց, որ իր աչքերը խոնավանում են:  
Նա երեխային հարցրեց.

— Անունդ ի՞նչ է:

— Զոլգետա, — պատասխանեց նա:

Մարկիզը գրկեց նրան: Երեխան ժպտաց: Ծերունու  
մոայլ ու գոռոզ հոգին ասես հավվեց այդ անմեղ վստահու-  
թյունից, և երեխային Ռադուքին հանձնելիս համբուրեց  
նրան:

— Ահա նա, մեր պստիկ աղջիկը, — գոռում էին զին-  
վորները:

Եվ Ժորժետան էլ իր հերթին ձեռքից ձեռք անցնելով՝  
հանդիսավորապես ցած իջավ: Բոլորը հրճվանքով ծափ էին  
զարկում և ոտքերով թփթփացնում: Ծերունի գրեհադերները  
հեկեկում էին: Ժորժետան ժպտում էր նրանց:

Մայրն ուրախությունից խեղդվելով, անակնկալ երջան-

կությունից հարբած՝ կանգնել էր ելարանի տակ ձեռքերը վեր պարզած: Չափազանց ուրախությունը նույնպես կարող է մարդ սպանել: Նա գիրկն առավ նախ Գրո-Ալենին, ապա՝ Ռենե-Ժանին, հետո՝ Ժորժետային, համբույրներով ծածկեց նրանց, ապա մի հիստերիկ ծիծաղով բռնվելով վայր ընկավ անզգա:

— Փրկված եմ, բոլորը փրկված եմ,— գոռում էին ամեն կողմից:

Այո, բոլորը փրկված էին, բացի ծերունուց: Բայց ոչ ոք չէր մտածում նրա փրկության մասին և գուցե նաև հենց ինքք:

Նա մի քանի րոպե լուսամտոսի մոտ կանգնեց մտախոհ, ասես ցանկանում էր կրակին որոշում ընդունելու ժամանակ տալ: Հետո առանց շտապելու, հանգիստ, գլուխը հարստորեն բարձր բռնած մի քայլ արեց լուսամտոսի գոգի վրայով և առանց ետ նայելու իր հետևը մոլեգնող բոցին, երեսը դեպի սևին տվող անդունդը, դարձրած սկսեց լուռ ու վեհառես ցած իջնել ելարանով: Ելարանի վրա կանգնածները ցած վազեցին: Բոլորը սրտատրոսի նայում էին վերևից իջնող այդ մարդուն, բոլորը սրբազան սարսափով ետ էին քաշվում նրա առաջ, ինչպես ահել տեսիլքի առաջ ետ կքաշվեն: Իսկ նա հպարտ ու հանգիստ իջնում էր դեպի իրեն սպասող խավարը: Որքան ետ էին քաշվում նրա առաջ, նա ավելի ու ավելի էր մոտենում: Նրա մարմարային գունատ դեմքին ոչ մի մկան չէր շարժվում: Նրա քարացած հայացքի մեջ կյանքի ոչ մի կայծ չէր նշմարվում: Ամեն մի քայլն անելիս, որը նրան մոտեցնում էր խավարի միջից սնրսափով իրեն նայող մարդկանց, ասես մեծանում էր այդ մարդը: Ելարանը դողում էր նրա հաստատուն, ծանր քայլերից:

Հենց որ նա ցած իջավ, հենց որ նրա ոտքը ստորին աստիճանից գետնին դիպավ, մեկը ձեռքը դրեց նրա ուսին: Նա ետ նայեց:

— Ես քեզ ձերբակալում եմ,— ասաց Սիմոնը:

— Դու իրավացի ես,— պատասխանեց Լանտենակը:

## ՀԱՂԹԱՆԱԿԻՑ ՀԵՏՈ ՊԱՅՔԱՐ

## I. ԼԱՆՏԵՆԱԿԸ ԲՌՆՎԱԾ

Մարկիզին տարան:

Ստորգետնյա զննանը, որ գտնվում էր աշտարակի ցածի հարկի տակ, անհապաղ բացվեց Սիմուրդենի խիստ հրսկողությամբ: Այնտեղ մի լամպ դրին, մի գավաթ ջուր, զինվորական հացի մի կտոր և հատակին գցեցին մի խտիտ ծղոտ: Ծանր դուռը փակվեց մարկիզի ետևից:

Այս գործը վերջացնելով՝ Սիմուրդենը գնաց Գովենին գտնելու: Հեռավոր Պարիսյեի զանգակատունն այդ րոպեին զարկեց ժամը տասնմեկը: Սիմուրդենը Գովենին ասաց.

— Վաղը կգումարվի ռազմադաշտային դատարանը: Բայց դու դատավորների թվում չես լինի: Դու և Լանտենակը՝ երկուսդ էլ Գովենների տոհմից եք: Դու նրան շատ մոտիկ արյունակից ես, ուստի նրա դատավորը լինել չես կարող: Դատարանը կազմված կլինի երեք հոգուց՝ կապիտան Գեշանը, սերժանտ Ռադուրը և ես որպես նախագահ: Այս ամենը քեզ չի վերաբերում: Մենք կդեկլարվենք Կոնվենտի դեկրետով. կսահմանափակվենք նախկին մարկիզ դը Լանտենակի ինքնությունը հաստատելով: Վաղը դատը կլինի, մյուս օրը՝ գիլիոտինը: Վանդեան մեռավ:

Գովենը ոչ մի խոսքով չառարկեց, և Սիմուրդենը վաղվա իր կարևոր անելիքներով կլանված՝ հեռացավ: Հարկավոր էր մահապատժի տեղն ընտրել, ժամը նշանակել և բոլոր անհրաժեշտ կարգադրություններն անել: Սիմուրդենը սովորություն ուներ «լավ օրինակ տալ», այսինքն՝ անձամբ ներկա լինել իր նշանակած մահապատժների: Դատավորը նայում էր դահճի գործին:

Գովենը նույնպես մտահոգված էր:

Անտառի կողմից պաղ քամի էր փչում: Բոլոր պաշտոնական անհետաձգելի գործերը Գեշանին հանձնելով՝ Գովենը գնաց իր վրանը, որ գտնվում էր աշտարակից ոչ հե-

նու, անտառի եզրին մի մարգագետնում: Այնտեղ նա վերցրեց իր կնգուղավոր թիկնոցը և փաթաթվեց նրա մեջ: Այդ թիկնոցը ըստ հանրապետականների համեստ մոդայի, որը ոչ մի զարդ ու զարդարանք չէր ընդունում, երիզված էր հասարակ բյուզնեմտով, որը և ծառայում էր որպես ջոկատի հրամանատարի տարրերիչ նշան: Գուլենը մենակ էր: Նա սկսեց քայլել կովում ընկածների արյունով ներկված մարգագետնում. աշտարակի գրոհն այդ անկյունից էր սկսվել: Հրդեհը դեռ շարունակվում էր, բայց նրա վրա ուշադրություն չէին դարձնում:

Ռադուրն գբաղված էր Միշել Ֆլեշարի հոգսով, որը դեռ ուշքի չէր եկել, տեղավորում էր երեխաներին, համարյա փոխարինելով նրանց մորը: Դոչակն այրվում էր: Զինվորները գործ շատ ունեին: Գերեզմաններ էին փորում սպանվածներին թաղելու համար, փաթաթում էին վիրավորների վերքերը, բարիկադն էին քանդում, դիակներից մաքրում էին դահլիճներն ու աշտարակի աստիճանները, կովի վայրն էին կարգի բերում, աշխատելով ոչնչացնել հաղթանակի տուկալի հետքերը, մի խոսքով ճակատամարտը վերջանալուց հետո զինվորները գուտ զինվորական աշխույժով կարգավորում էին այն ամենը, ինչ կարելի է անվանել մարտական տնտեսություն:

Գուլենն այս ամենը չէր տեսնում ու չէր նկատում: Իր մտքով տարված՝ նա երբեմն միայն մտազբաղ հայացք էր գցում աշտարակի պատի ճեղքի վրա, որի մոտ Սիմուրդենի հրամանով կրկնակի ուժեղացված պահակախումբ էր կանգնած:

Մարգագետնի այն ծայրից, որտեղ աշտարակից մի երկու հարյուր քայլ հեռու քայլում էր Գուլենը, երևում էր այդ ճեղքը: Նա պարզ տեսնում էր այդ սև երախը: Երեք ժամ առաջ այնտեղ սկսվեց գրոհը: Ահա հենց այն ճեղքի միջով Գուլենն իր զինվորներով ներխուժեց աշտարակ: Այդ ճեղքի ետևը ցածի հարկն է, որտեղ նրանց առաջը փակեց բարիկադը: Այդ հարկում կար մի դուռ, որ տանում էր դեպի այն նկուղը, որտեղ մարկիզն էր նստած: Ահա հենց այդ զնդանն էլ պահպանում էր ճեղքի առաջ կանգնած պահակախումբը:

Եվ Գովենի հաչացքն ակամա դառնում էր այն կողմը, իսկ ականջների մեջ թաղման զանգահարության պես հընչում էին Սիմուրդենի խոսքերը՝ «Վաղը դատը կլինի, մյուս օրը՝ գիլիոտինը»:

Հրդեհը սանձահարել հաջողվեց, բայց, թեև հնարավորին չափ անընդհատ ջուր էին լցնում վրան, այն միանգամից չդադարեց և մերթ ընդ մերթ հսկայական հրեղեն լեզուներ էին դուրս ժայթքում: Երբեմն լսվում էր, թե ինչպես են ճարճատում այրվող գերանները, իսկ երբ որևէ հարկում հատակ կամ առաստաղ էր փլվում, կայծերը մորիկի պես ամեն կողմ էին թռչում: Ծուրջը ամեն ինչ լուսավորվում էր մինչև հորիզոն, և աշտարակի վիթխարի ստվերը ձգվում էր մինչև անտառ:

Գովենը դանդաղորեն ետ ու առաջ էր քայլում այդ ստվերով ծածկված մարգագետնում, ճեղքի մոտով, որտեղ պահակախումբն էր կանգնած: Երբեմն նա ձեռքերը բարձրացնում էր և մատներն իրար կցելով դնում կնգուղով ծածկված գլխին: Նա մտքերի մեջ էր ընկել:

## II. ԳՈՎԵՆԻ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԸ

Ծանր էին նրա մտորումները: Նրա աչքի առաջ աներեվակայելի փոփոխություն էր տեղի ունեցել:

Մարկիզ դը Լանտենակը կերպարանափոխվել էր:

Գովենը ներկա էր եղել դրան:

Նա երբեք չէր հավատա, որ հանգամանքները, ինչպիսիք էլ լինեին նրանք, կարող են այդպիսի արդյունքի հասցնել:

Նա երագում էլ չէր կարող տեսնել, որ այդպիսի բան կատարի:

Ի՞նչ էր մտածում նա այս ամենի մասին:

Նրա առաջ դրված էր մի հարց, որից նա ոչ մի կերպ խույս տալ չէր կարող:

Իսկ ո՞վ էր դրել այդ հարցը:

Իրադարձությունները:

Եվ ո՞չ միայն իրադարձությունները:

Գովենը հարցաքննության էր ենթարկվում:

Նա կանգնած էր ահեղ դատավորի առաջ:

Այդ դատավորն իր խիղճն էր:

Նա զգում էր, որ իր մեջ ամեն ինչ տատանվում է: Նրա ամենահաստատուն համոզմունքները, ամենասրբազան երդումները, ամենաանասան որոշումները՝ ամենը, ամենը սասանվել էր:

Որքան ավելի էր խորհում նրա մասին, ինչից հենց նոր ինքը ականատես եղավ, այնքան ավելի էր ուժեղանում նրա հոգու խռովքը:

Նա չէր կարողանում իրենից հեռացնել պատասխանատվությունն այն բանի համար, ինչ պիտի տեղի ունենար: Դա շատ մեծ կարևորություն ունեցող գործ էր, և ինքը՝ Գովենը դրա մասնակիցներից մեկն էր: Նա չէր կարող իրեն ազատ համարել դրանից, և որքան էլ Սիմոնդենն ասեր՝ «Այս ամենը քեզ չի վերաբերում», նա այնպիսի զգացում ուներ, որպիսին երևի կունենա ծառը, երբ նրան արմատախիլ են անում:

Գովենը ցնցված էր մինչև հոգու խորքը:

Նա երկու ձեռքով ամուր սեղմում էր գլուխը, ասես ուզում էր ճշմարտությունը քամել այնտեղից:

Ստեղծված դրությունը պարզելը դժուրին չէր:

Գովենը հենց նոր ներկա էր եղել հրաշքի:

Մարկիզի դաժան սիրտը պարտված էր:

Գովենի առաջ կանգնած էր մի մարդ, որին նա ճանաչում էր որպես եսամոլ ու բռնակալ: Նրա մեջ կար այն ամենը, ինչ վատ բան կարող է լինել մարդկային հոգում՝ դաժանություն, մոլորություն, կոտրություն, չար համառություն, մեծամտություն, եսամոլություն և այս մարդու մեջ հրաշք է տեղի ունեցել:

Գովենը տեսել էր մարդկայնության հաղթանակը մարդու նկատմամբ: Մարդկայնությունը հաղթել էր տմարդությանը:

Երեք փոքրիկ, նորածին ու անգիտակից եակները, լքված ու միայնակ երեք որբուկները, որոնք միայն թոթովել ու ժպտալ գիտեին, իրենց դեմն ունեին քաղաքացիական պատերազմը, վրիժառության օրերը, ընդհանուր կոտորածը, եղբայրասպանությունը, քաղցած դասային թշնամանք,

փրեծի ծարավ և ահա՝ հաղթանակեցին: Ստոր հրկիզումը, որը պետք է չլսված ոճրի հասցներ, իր նպատակին չհասավ: Հրեշավոր մտադրությունը չիրականացավ: Հնամենի ֆեոդալական թշնամանքը, արմատացած արհամարհանքը ցածունքների նկատմամբ, ինքնավստահությունը, որ արտացոլվում էր պատերազմական ժամանակի պահանջներով, պետական նկատառումները, մեծամտությունը, անհաշտ ծերության կանխակալ գաղափարները՝ այս ամենը հալվեց այն էակների պայծառ հայացքի մեջ, որոնք համարյա դեռ չէին ապրել:

Գովենը խորհում էր:

Մարկիզ դը Լանտենակը, որ դատապարտված էր մահվան, հայտարարված օրենքից դուրս, որ սեղմված էր պատին, հալածական գազանի պես քշված իր որջը, որը բանտ էր դարձել նրա համար, շրջապատված էր երկաթե ու հրե օղակով, կարողացել էր դուրս պրծնել: Այո, այս հրաշքը հաջողվել էր նրան: Նա զարմանալի ուզմական մանկ էր կատարել, ամենադժվարը այդպիսի պատերազմում. նա փախել էր: Նա վերադարձել էր անտառները, որտեղ կարելի էր թաքնվել: Նա անհետացել էր խավարի մեջ: Նրա տրամադրության տակ էր իրեն ծանոթ երկիրը, որտեղ նա հեշտությամբ կարող էր վերսկսել իր պայքարը: Նա նորից կարող էր դառնալ ահավոր մութ ուժ, թափառող չար ոգի, անտեսանելիների պարագլուխ, ստորերկրյա մարտիկների առաջնորդ, բոլորի վրա սարսափ տարածող անտառի տեր: Հաղթանակը Գովենն էր տարել, բայց Լանտենակը վերադարձրել էր իր ազատությունը: Լանտենակը վտանգից դուրս էր: Նրա առաջ նորից գործունեության անսահման ասպարեզ էր բացվել: Նա անհատնում ապաստաններ ուներ: Նա նորից դարձել էր անորսալի, անհասանելի, անմատչելի: Առյուծը ծուղակն էր ընկել և նորից դուրս պրծել այնտեղից:

Եվ ահա նա վերադարձավ ծուղակի մեջ:

Կամովին, ի՞ր իսկ ցանկությամբ մարկիզ դը Լանտենակը դուրս էր եկել իրեն պաշտպանող խավարից, հրաժեշտ էր տվել անտառներին, արհամարհել ապահովությունն ու ազատությունը և ընդառաջ էր գնացել հաստատ մահին՝ նախ նետվելով հրդեհի բոցերի մեջ, ողջակեզ լինելու վտանգիմ են-



թարկելով իրեն, ապա իջնելով այն ելարանով, որը փրկա-  
րար էր ուրիշների համար և կործանարար՝ իր համար:

Եվ ինչո՞ւ արավ նա այս:

Երեք երեխաներին փրկելու համար:

Իսկ հիմա ի՞նչ կանեն իրեն:

Նրան մահապատժի կենթարկեն:

Եվ այսպես, այդ մարդը երեք փոքրիկ երեխաների հա-  
մար... Ի՞ր երեխաների, ո՛չ, իր արյունակիցների՞, ո՛չ, իր  
դասակիցների՞, ո՛չ... Երեք ինչ-որ ընկեցիկների համար,  
որոնց նա չէր էլ ճանաչում, ցնցոտիապատ ու ոտաբորիկ  
այդ մանուկների համար նա, այդ արիստոկրատը, այդ իշ-  
խանը, այդ ծերունին, որ ազատ էր, փրկված ու հաղթական  
(որովհետև հաջող փախուստը հավասար էր հաղթանակի),  
ամեն ինչ թողեց, ամեն ինչ մոռացավ, ամեն ինչ վտանգի  
ենթարկեց՝ փրկելով երեխաներին, հպարտորեն զոհաբերեց  
իր անձը, որը զարհուրելի էր մինչև այժմ, իսկ այսուհետև  
դարձավ սրբազան:

Եվ ի՞նչ են ուզում անել նրան:

Ընդունել այդ զոհաբերությունը:

Մարկիզ դը Լանտենակը կարող էր ընտրություն կատա-  
րել՝ իր կյանքը փրկել, թե՞ մերձավորի: Նա իր համար  
մահ ընտրեց:

Եվ հիմա նրան կապանեն:

Ահա՛ քեզ հերոսության հատուցում:

Բարբարոսական պատասխան մեծահոգի արարքին:

Հանրապետության գաղափարի ինչպիսի՛ փոքրացում...

Եվ այս ամենը տեղի կունենա զորապետի ներկայու-  
թյամբ, իր՝ Գովենի ներկայությամբ: Եվ նա թույլ կտա այդ՝  
ունենալով խանգարելու հնարավորություն: Նա կհանգստա-  
նա իրեն նետված մի մեծամիտ խոսքով՝ «Այս ամենը քեզ չի  
վերաբերում»: Եվ ներքին ձայնը նրան չի թելադրի, որ այս-  
պիսի դեպքերում անտարբեր մնալը հավասար է հանցակ-  
ցության: Եվ նա չի հասկանա, որ այսպիսի խոշոր նշա-  
նակություն ունեցող գործում երկու մասնակիցներից շատ  
ավելի վատ է նա, ով թույլ է տալիս, որ այդպիսի բան կա-  
տարվի, քան թե նա, ով կատարում է այն:

Բայց մյուս կողմից մի՞թե ինքը համաձայնություն չի տվել

այդ մահվանը, այդ մարդու մահապատժին: Մի՞թե ինքք՝ մարդասեր Գովենը չէր, որ հանդիսավորապես չասաց Սիմուրդենին, թե՝ Լանտենակը բացառություն է, թե գթասրբությունը նրա վրա չի տարածվում, թե Լանտենակը գերի ընկնելուն պես կհանձնվի նրա ձեռքը:

Այո՛, ինքը պարտք ունի Սիմուրդենին տալու. ինքը խոստացել է Լանտենակի գլուխը, և հիմա այդ գլուխը տալով՝ միայն իր պարտքը տված կլինի:

Այս ամենն այսպես է: Բայց մի՞թե խոսքն այս գլխին էր վերաբերում:

Մինչև այժմ Գովենը Լանտենակին համարում էր միայն մի կատաղի ուզմիկ, արյունարբու գազան, ֆետդալիզմի ֆանատիկոս, գերիներից սպանող ճիվաղ, արյունարբու գազան, որ անպատիժ գազանություններ է անում կովի ժամանակ: Այդպիսի Լանտենակից նա չէր վախենում, այդ դահիճին նա առանց տատանվելու մահվան կդատապարտեր: Այդ անկոտորումը նույնպիսի անկոտորում դատավոր կգտներ: Բայց, ահա, հրապարակ էր եկել մի նոր, անսպասելի Լանտենակ: Հրեշը դարձել էր մարդ, դարձել էր սիրտ ունեցող մարդ: Գովենի առաջ արդեն ոչ թե մարդկանց սպանող ճիվաղ էր, այլ՝ փրկիչ: Լանտենակը շանթահարել էր նրան բարության շանթով:

Գովենի առաջ կանգնած էր էլի մի տանջալից հարց՝ ազգակցական կապը: Մի՞թե այն արյունը, որ ինքն ուզում էր թափել, իր արյունը չէր, Գովենների արյունը չէր: Նրա պապը վախճանվել էր, բայց պապի եղբայրը ողջ է, և այդ պապեղբայրը մարկիզ դը Լանտենակն է:

Երբ Գովենը վիճում էր իր սեփական խղճի հետ, հարցը հենց այդպես էր դրվում, և պատասխանը գալիս էր ինքն իրեն՝ պետք է փրկել Լանտենակին:

Այո՛: Իսկ Ֆրանսիա՞ն:

Այս հարցը խիստ փոխում էր ամեն ինչ:

Ֆրանսիան զարհուրելի ճնշման տակ էր: Ֆրանսիային դավաճանել էին. նա բաց էր թշնամու առաջ, անպաշտպան էր: Նա այլևս սահմաններ չունի. Գերմանիան անցել է Հռենոսը, Ֆրանսիան այլևս պաշտպանական պարիսպներ չունի: Իտալիան Ալպերի վրայով է անցել, Իսպանիան՝ Պի-

րեանյան լեռներով: Ֆրանսիային մնացել է միայն մեկ հե-  
նարան՝ անսահման ծովը, օվկիանոսը նրա կողմն էր: Ֆրան-  
սիան կարող է հենվել օվկիանոսի վրա և կովել իր հողերի  
համար: Նույնիսկ այս պայմաններում Ֆրանսիան անպար-  
տելի էր: Բայց ահա ուզում են նրանից խլել իր վերջին հե-  
նարանը. ուզում են խլել օվկիանոսը: Այդ օվկիանոսում  
Անգլիան էլ կա: Ծիշտ է, մինչև այժմ Անգլիան չգիտեր, թե  
ինչպես կարող է հասնել ֆրանսիական ափերին: Բայց հի-  
մա կա մի մարդ, որը ձեռք կմեկնի նրան, որը կամուրջ  
կգցի օվկիանոսի վրայով և Պիտին ու բոլոր այն ավազակ-  
ներին կասի՝ «Խնդրեմ, եկեք մեզ մոտ», որը Անգլիային  
ձայն կտա. «Ահա քեզ Ֆրանսիան, վերցրու»: Եվ այդ մարդը  
մարկիզ դը Լանտենակն է:

Այդ մարդն իրենց ձեռքում է: Երեք՝ ամիս նրա՝ ետևից  
էին ընկել, և երեք ամսվա համառ հետապնդումից հետո,  
վերջապես, բռնել են նրան: Հեղափոխության ձեռքը, վեր-  
ջապես, իջել է չարագործի ուսին: Իննսուներեք թվականի  
սեղմված բռունցքը բռնել է մարդասպան ոռյալիստի օձիքը:  
Ֆեոդալիզմի պաշտպանը նստած է ֆեոդալական զնդանում:  
Նրա սեփական ամրոցի քարերը իր դեմ են ելել. այդ քա-  
րերը պինդ են պահում նրան, և նրան, ով ուզում էր դա-  
վաճաճել իր հայրենիքը, հիմա դավաճաճել է իր տունը:

Հատուցման ժամը հասել է: Հեղափոխությունը գերի է  
բռնել ժողովրդի թշնամուն, որն այլևս չի կարող կովել, չի  
կարող պայքարել, չի կարող վճարել: Վանդալալիստ ձեռքեր  
շատ կային, բայց ուղեղը մեկն էր: Նրա ոչնչացումը հա-  
վասար է քաղաքացիական պատերազմի դադարելուն:

Եվ մի՞թե կգտնվի մեկը, որ կցանկանա փրկել նրան:

Սիմուրդենը, այսինքն իննսուներեք թվականը մամլիչի  
մեջ է սեղմել Լանտենակին, այսինքն միապետությանը, և  
հանկարծ կգտնվի՝ մի մարդ, որն այդ երկաթե մամլիչից  
դուրս կկորզի այդպիսի որսը: Լանտենակը բոլոր սարսափ-  
ների մարմնացումն է, որի ընդհանուր անունն է՝ անցյալ,  
մարկիզ դը Լանտենակը՝ գերեզմանում: Հավիտենականու-  
թյան ծանր դուռը փակվել է նրա ետևից, և հանկարծ կլի-  
նի՝ մեկը, որ բաց անի այդ դռան փականքը: Հասարակու-  
թյան դեմ չարիքներ գործող այդ մարդը մեռել է, դրանով

էլ վերջ է տրվել խոսվողյանը, եղբայրասպան գազանային պատերազմին, և կլինի՞ մեկը, որ հանկարծ մտածի հարություն տալ նրան:

Օ՛, ինչպե՛ս կքրքջա այդ մեռյալ գլուխը:

Ինչպիսի՞ չարախնդությամբ այն աշխարհից եկած այդ մարդը կասի. «Ընորհակալ եմ ձեզանից, հիմարներ, ահա ես նորից կենդանի եմ»:

Որպիսի՞ դաժանությամբ նա նորից ձեռնամուխ կլինի իր նողկալի գործին: Եվ նորից կմխան տներն ու գյուղերը, նորից կսկսվի գերիների կոտորածը, վիրավորների ջարդը, կանանց գնդակահարությունը:

Եվ, բացի այս բոլոր նկատառումներից, չի՞ չափազանցում արդյոք Գովենը իրեն զարմացրած այդ մեծահոգի արարքի նշանակությունը:

Ծիշտ է, երեք երեխա զոհ էին գնում, և Լանտենակը փրկեց նրանց:

Բայց հենց ինքը՝ Լանտենակը չէ՞ր, որ ցանկացել էր կործանել այդ երեխաներին:

Ո՞վ էր նրանց բոցերի մեջ գցել: Ո՞վ էր նրանց օրորոցները դրել ապագա հրդեհի տեղը:

Իմանուսը:

Իսկ ո՞վ էր Իմանուսը:

Լանտենակի ստորադրյալը և աջ ձեռքը:

Ուրեմն ո՞ւմ վրա է ընկնում հրդեհի պատասխանատվությունը:

Պետի վրա:

Եվ ուրեմն՝ հրկիզողն ու մարդասպանը էլի նույն Լանտենակն է:

Ուրեմն ի՛նչ մի արտասովոր բան է արել նա: Չի իրականացրել իր մտադրությունը, չի վերջացրել իր սկսածը, ուրիշ ոչինչ:

Հորինելով ու նախապատրաստելով ոճիրը՝ նա վերջին վայրկյանին հրաժարվել է նրանից: Նա սարսափել է ինքն իրենից: Մոր ողբը նրա մեջ շարժել է մոռացված մարդկային խիղճը, որը դարերով ապրում է ամեն մի նույնիսկ քարացած հոգու մեջ: Այդ ողբը նրան ստիպել է վերադառնալ: Նա նորից լույս աշխարհ է դուրս եկել այն խավարից, որ-

տեղ ուզում էր թաքնվել: Ոճիրն ստեղծելով՝ ինքն էլ խափանել է այն: Նա մինչև վերջ հրեշ չի մնացել, ահա նրա ամբողջ երախտիքը:

Եվ այսպիսի չնչին բանի համար ամեն ինչ վերադարձնել նրա՞ն: Վերադարձնել նրան օդը, ցերեկվա լույսը, լայնարձակ դաշտերն ու անտառները, որոնք նա կօգտագործի ավազակության համար, վերադարձնել ազատությունը, որ կօգտագործի նա մերձավորներից ստրկացնելու համար, կյա՛նքը վերադարձնել, որը նա կնվիրի իր շուրջը մահ սփռելուն:

Իսկ եթե փորձես համաձայնության գալ նրա հետ, փորձես համոզելով ազդել այդ հպարտ հոգու վրա, ազատություն ատաջարկես նրան որոշակի պայմաններով, հարցնես նրան, թե համաձայն է իր կյանքն իրեն նվիրելու փոխարեն այսուհետև հրաժարվել խոտվությունից և ամեն տեսակ թշնամական ելույթից: Օ՛հ, որպիսի՜ սխալ կլինե՞ր այդ: Ինչպիսի՜ արհամարհանքով կդիմավորե՞ր նա այդ ատաջարկությունը: Ինչպիսի՜ ապտակով կպատասխանե՞ր նա հարցին: Որպիսի՜ թունալից քմծիծաղով կսսե՞ր՝ «Անարգանքը ձե՛զ պահեցեք, ինձ՝ սպանեցե՛ք»:

Ո՛չ, այդպիսի մարդուն կարելի է միայն սպանել կամ ազատ արձակել:

Սպանե՛լ նրան: Ի՛նչ տոկալի բան: Ազատե՛լ: Ինչպիսի՜ պատասխանատվություն:

Ազատել Լանտենակին՝ նշանակում է նորից սկսել պայքարը Վանդեայի հետ, հիդրալի\* հետ, որի գլուխը դեռ տեղն է: Մի ակնթարթում, ասուպի արագությամբ նորից կբորբոքվի հրդեհի բոցը, որ մարել էր այդ մարդու անհատացումով: Նա չի հանգստանա, մինչև չիրականացնի իր վրդովեցուցիչ ծրագիրը, մինչև գերեզմանաքարի պես հանրապետությունը չծածկի միապետությամբ և Ֆրանսիան՝ Անգլիայով: Փրկել Լանտենակին՝ նշանակում է զոհաբերել Ֆրանսիան: Լանտենակի կյանքը հազարավոր անմեղ մարդկանց, կանանց ու երեխաների մահ է, այդ եղբայրասպան պատերազմի վերսկսումն է, այդ նշանակում է անգլիացի-

\* Հիդրա — բազմագլխանի առասպելական վիշապ:

ներին ասի հանել, ետ մղել հեղափոխությունը, քաղաքներ կործանել, արշուճով ներկել Բրետանը, ցիների կեր դարձնել թշվառ ժողովրդին: Լանտենակին ազատ արձակել՝ չի՞ նշանակում արդյոք ազատ արձակել վագրը:

Իսկ հետո հարցը կրկին իր սկզբնական կերպարանքն էր ստանում. դե լավ, մի՞թե Լանտենակը վագր է:

Գուցեև վագր է եղել, բայց հիմա՞... Գովենի միտքը պտույտ էր գալիս միևնույն տեղում:

Լանտենակն իր բոլոր գազանությունները քափել է այդ անձնուրաց արարքով: Հիմա նա մաքուր է:

Նա արժանի է հարգանքի:

Լանտենակը ցույց տվեց, որ ինքն արտասովոր մարդ է:

Հիմա հերթը Գովենինն էր: Ի՞նչ կպատասխանի նա Լանտենակի այդ արարքին:

Ինչպե՞ս կվարվի:

Եվ նա մտքում կրկնում էր. «Ես Լանտենակին կփրկեմ»:

«Հիանալի՛,— հնչում էր նրա հոգում մի ուրիշ ձայն:— Գնա օգնիր անգլիացիներին: Դասալիք դարձիր: Անձնատուր եղիր թշնամուն: Փրկիր Լանտենակին և դավաճանի ֆրանսիային»:

Այս ձայնից դողում էր նա: «Դու ոչինչ վճռել չես կարող, երագո՛ղ»,— ասում էր նա ինքն իրեն:

Այս պայքարը նրան փակուղի տարավ, որտեղ իրար էին բախվում հակասական ճշմարտությունները, որտեղ սպառնալիքով էին իրար նայում ամենաբարձր սկզբունքները, որոնց հասել է մարդը՝ մարդկությունը, հայրենիքը, ընտանիքը:

Գովենը տատանվում էր: Դա իսկական տառապանք էր:

Նրա առաջ բացվել էին երկու անդունդ: Նա պետք է կործաներ Լանտենակին կամ՝ փրկեր: Հարկավոր էր որոշել: Այդ երկու անդունդներից դեպի ո՞րն է հրում իր պարտքը:

### III. ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԹԻԿՆՈՅԸ

Խփեց կեսգիշերը, հետո՝ ժամը մեկը: Գովենն ինքն էլ չհկատեց, թե ինչպես մոտեցավ աշտարակի անցքին:

Մարող հրդեհը սոսկ թույլ լույս էր սփռում շուրջը:

Մարող բոցի շողը սարահարթի վրա էր ընկնում աշ-

տարակի մյուս կողմից, և սարահարթը մերթ դուրս էր գալիս խավարից, մերթ թաղվում էր մթի մեջ: Լույսի բուրնկումները հաջորդելով խավարին՝ շրջակայքի առարկաներին անբնական չափեր էին տալիս, և պահակ կանգնած ժամապահները հեռվից ուրվականներ էին թվում: Մտքերի մեջ խորասուզված Գովենը մտացրիվ հետևում էր հրի ու ծխի պայքարին: Լույսի ու խավարի անվերջ փոփոխությունը ինչ-որ տարօրինակ նմանություն ուներ նրա մտքի մեջ պայքարող հակադիր ճշմարտությունների փոփոխությունների հետ:

Հանկարծ ծխի քուլաների միջից դուրս ժայթքած բոցը պայծառ լուսավորեց սարահարթի կատարը, և Գովենի աչքին երևաց մի կարմրավուն սալի ուրվագիծ: Նա սկսեց ուշադիր նայել: Սալը պահպանում էին եռանկյունի գլխարկներ ծածկած ձիավոր զինվորներ: Գովենին թվաց, թե դա հենց այն սալն է, որ դրանից մի քանի ժամ առաջ, մայրամուտից առաջ ինքն ու Գեշանը տեսան հեռադիտակով: Սալի վրա մարդիկ էին պրպտում. երևի բեռն էին թափում: Նրանք, ըստ երևույթին, սալից ինչ-որ ծանր բան էին իջեցնում, որը երբեմն մետաղի ձայն էր հանում: Այդքան հեռվից դժվար էր որոշել, թե ինչ է այդ: Նա նման էր գերանաշեն շրջանակի: Երկու մարդ իջեցրին ու գետնին դրին մի արկղ, որի մեջ, ինչպես երևում էր նրա ձևից, ինչ-որ եռանկյունի առարկա կար: Բոցը մարեց, և նորից ամեն ինչ թաղվեց խավարի մեջ: Գովենը մտախոհ նայում էր այդ արկղին, աշխատելով հասկանալ, թե ի՞նչ կա նրա մեջ:

Սարահարթի վրա լապտերներ վառվեցին և ինչ-որ ստվերներ շարժվեցին. երբեմն թխկոցներ էին լսվում, որոնք նման էին կացնի հարվածների: Լսվում էր նաև մետաղի ձայն, ասես մեկը գերանդի էր սրում:

Խփեց ժամը երկուսը: Դանդաղ, անհաստատ քայլերով, կարծես ակամա, Գովենը շարժվեց դեպի պատի անցքը: Երբ նա մոտեցավ, ժամապահը կիսախավարի մեջ նկատեց հրամանատարի բուզմեններով երիզված թիկնոցը և պատվի առավ: Գովենը մտավ աշտարակի ցածի հարկի դահլիճը, որ պահակատուն էր դարձել: Առաստաղից կախված էր մի լապտեր: Այդ լապտերը դահլիճն այնքան էր լուսավորում, որ կարելի լինի անցնել առանց կոխարտելու

պահակներին, որոնք ամբողջ դահլիճում պառկել էին հատակին փռած ծղոտի վրա և համարյա բոլորն էլ քնած էին:

Երբ հրամանատարը ներս մտավ, պառկածներից մի քանիսը վեր թռան, նրանց հետ էլ՝ պահակապետ սպան: Գոլենը ձեռքով ցույց տվեց նրան նկուղի դուռը և ասաց.

— Բաց արեք:

Սողնակը ետ քաշվեց: Գոլենը ներս մտավ, և դուռը նրա ետևից փակվեց:

## Յ ո թ ե ր ո թ դ գ ի ր ք

## Ֆ ե ռ Դ Ա Լ Ի Զ Մ Ը Ե Վ

## ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

### I. ՆԱԽԱՀԱՅԻՐԸ

Ներքնատան քարե հատակին մի լապտեր էր դրված, մի աման ջուր և մի կտոր հաց: Հատակին գցված էր նաև մի խտիտ ծղոտ:

Այն բոլորին, երբ դուռը բացվեց, մարկիզը նկուղում անկյունից անկյուն էր քայլում վանդակը գցած վայրի գազանի պես:

Բացվող դռան ճոռոցի վրա նա գլուխը բարձրացրեց: Լապտերը, որ դրված էր նրա ու Գոլենի արանքում, երկուսի երեսն էլ լուսավորեց: Մարկիզը քրքջաց.

— Բարև, պարոն: Վաղո՛ւց ես բախտ չեմ ունեցել ձեզ տեսնելու: Դուք այնքան սիրալիր եք, որ շնորհ եք արել ինձ այցելելո՛ւ: Ծնորհակալ եմ: Ծառ ուրախ կլինեմ ձեզ հետ զրուցելու, ես արդեն սկսել էի ձանձրանալ: Ձեր բարեկամներն իզուր են ժամանակ կորցնում: Բոլոր այդ ինքնությունը պարզելը, ուղղադաշտային դատարանները և այլ ձեվականություններն ավելորդ բաներ են: Ես լինեի նրանց տեղը, ուղղակի գործի կանցնեի: Ես այստեղ իմ տանն եմ: Խնդրեմ, ներս մտեք: Ի՞նչ կասեք դուք այն ամենի մասին, որ կատարվում է այժմ: Տարօրինակ է, չէ՞: Եղել է, չի եղել,



մի ժամանակ մի թագավոր, ու մի թագուհի են եղել: Թագավորը թագավորն է եղել, իսկ թագուհին՝ Ֆրանսիան: Եվ ահա թագավորին գլխատել են, իսկ թագուհուն կնության են տվել Ռոբեսպիերին: Այդ պարոնից ու այդ տիկնոջից ծնվել է մի աղջիկ, անունը՝ Գիլիոտին, որի հետ, ըստ երևույթին, ես ծանոթանալու եմ վաղը առավոտյան: Ես շատ ուրախ եմ: Ուրախ եմ և նրա համար, որ տեսնում եմ ձեզ: Նրա համար չե՞ք եկել արդյոք, որ ինձ ներկայացնեք նրան: Գուցե ձեր աստիճանը բարձրացրե՞լ են, դահի՞ճ են նշանակել: Ո՞չ: Եթե սա միայն բարեկամական այցելություն է, ես զգացված եմ: Դուք, պարոն վիկոնտ, գուցե մոռացե՞լ եք, թե ինչ բան է ազնվականը: Լավ. նայեցեք. նրանցից մեկը կանգնած է ձեր առաջ: Եվ նա գոհունակությամբ կգնդակահարեր ձեզ: Բայց ինչո՞ւ եք կանգնել: Բարի եղեք, նրստեցեք: Ծիշո՛ւ է, ստիպված կլինեք հատակին նստել, որովհետև այս դահլիճում բազկաթոռներ չկան, բայց ցեխի մեջ ապրողը գետնին էլ կարող է նստել: Եվ այս ձեզ վիրավորելու համար չեմ ասում. չե՞ որ մենք ցեխ ենք կոչում այն, ինչ դուք կոչում եք ժողովուրդ: Հուսով եմ՝ դուք չեք պահանջի, որ ես սկսեմ գոռալ՝ «Ազատություն, հավասարություն, եղբայրություն»: Այս շենքն իմ տան հնամենի սենյակն է: Մի ժամանակ տերերն էին այստեղ բանտարկում ռամիկներին, հիմա ռամիկներն են այստեղ բանտարկում տերերին: Եվ այս հիմարությունը կոչվում է հեղափոխություն: Երեսունվեց ժամից հետո իմ գլուխը կկտրեն: Դեհ, ի՞նչ կա որ, ես չեմ առարկում: Բայց շատ գոհ կլինեի ձեզանից, եթե մարդ ուղարկեիք իմ ծխախոտի տուփը բերելու. ես այն մոռացել եմ վերևը, հայելապատ դահլիճում, որտեղ մի ժամանակ, երբ դուք երեխա էիք, թոչում, նրստում էիք իմ ծնկներին... Ես ուզում եմ, վիկոնտ, ահա թե ինչ ասել ձեզ. ձեր անունը Գովեն է և, որքան էլ տարօրինակ է, ձեր երակներում ազնիվ արյուն է հոսում, այնպիսի արյուն, ինչպիսին հոսում է իմ երակներում: Այդ արյունն ինձ ազնիվ մարդ է դարձրել, իսկ ձեզ՝ սրիկա: Դուք ինձ կառարկեք, թե դա ձեր մեղքը չէ: Բայց իմ մեղքն էլ չէ: Լինում են անգիտակից ոճրագործներ: Ամեն ինչ կախված է նրանից, թե ինչ օդ է շնչում մարդ: Այնպիսի ժամանակ-

ներում ոչ ոք իր արարքների համար պատասխանատու չէ։ Խարդախ հեղափոխությունը խաղում է մեզ՝ բոլորիս հետ, և մեր բոլոր մեծ չարագործներն ըստ էության մեծ պարզամիտներ են։ Սկսենք հենց թեկուզ ձեզանից։ Չի կարելի չաքանչաքանալ ձեզանով։ Չի կարելի չհիսնալ պատվավոր ընտանիքից ելած մի երիտասարդով, ինչպիսին դուք եք, որը հասարակության մեջ բարձր դիրք գրավելով, հնարավորություն ունենալով իր ազնիվ արյունը թափելու մեծ գործի համար, լինելով այս ևույն ամբողջի վիկոնտը, լինելով բրետոնյան իշխան, ըստ օրինաց հեռանկար ունենալով դուքս դառնալու և ժառանգելու Ֆրանսիայի պերի\* կոչումը, այսինքն, ունենալով այն ամենը, որ կարող է ցանկանալ աշխարհում ողջամիտ մարդը, գերադասում է դառնալ այն, ինչ դարձել եք դուք և այնպես է անում, որ թշնամիները նրան չարագործ են համարում, բարեկամները՝ հիմար։ Ի դեպ, իմ ողջույնը կհաղորդեք պարոն աբբա Սիմուրդենին։

Մարկիզը խոսում էր հասարակ, հանգիստ, ոչինչ չընդգծելով, բարեկամական գրույցի ձևով, մայելով Գովենին ուրախ, վճիտ աչքերով, ձեռքերը գրպանը դրած։ Նա դար առավ, շունչ քաշեց և շարունակեց.

— Ձեմ թաքցնի. ես ուզում էի սպանել ձեզ. դրա համար ես արի ամեն բան, ինչ ինձնից էր կախված։ Երեք անգամ ես իմ ձեռքով թնդանոթը ձեզ վրա եմ ուղղել։ Սա բարեկրթություն չէ, ընդունում եմ, բայց տարօրինակ կլիներ սպանել, որ թշնամին կովի ժամանակ աշխատի բարեկրթության կանոններ պահել։ Իսկ ես ու դուք կովի մեջ ենք, պարոն ազգականս։ Ծուրջն ամեն ինչ հրդեհով է բռնված և արյունով ներկված։ Սպանեցին թագավորին։ Լավ ժամանակներ են։

Նա մորից մի պահ լռեց, ապա շարունակեց ևույն տոնով.

— Եվ մարդ մտածում է, որ այսպիսի բաներ չէին լինի, եթե կախաղան հանեին Վոլտերին<sup>1</sup> և տաժանակրության

\* Պեր — բարձրագույն ազնվականության տիտղոս։

<sup>1</sup> Վոլտեր (1694—1778) — ֆրանսիական խոշորագույն լուսավորիչ գրողներից մեկը, փիլիսոփա, պատմաբան և հրապարակախոս։

ուղարկեին Ռուսոյին<sup>1</sup>։ Ա՛խ, գիտության մարդիկ, ի՞նչ սար-  
 սափելի չարիք են... Վատում էին նրանք գրքերը, փոխանակ  
 հենց հեղինակներին վառելու։ Բոլորի պատճառը գրչակներն  
 են ու հանգաթուխները։ Ինչպե՛ս հաշիվ կտեսնեի ես այդ  
 թուղթ մրոտողների հետ։ Մեր ժամանակ մենք կարողանում  
 էինք դատել ու պատժել։ Ահա հենց այս սեմյակում մաս-  
 նատում էինք մարդկանց. պատին նույնիսկ մնացել են անի-  
 վի հետքերը։ Մենք կատակ անել չէինք սիրում։ Ո՛չ, ո՛չ,  
 գրչակներ մեզ պետք չեն։ Քանի դեռ կլինեն վոլտերներ,  
 կլինեն և մարատներ։ Քանի դեռ կլինեն թուղթ մրոտող-  
 ներ, կլինեն և մարդասպաններ։ Քանի դեռ թանաք կլինի,  
 կլինի և սևություն։ Քանի դեռ մարդ չի մոռանա ձեռքին  
 գրիչ բռնել, հիմարությունն ու գոեհկությունը անիմաստ  
 դաժանություն կծնեն։ Գրքերը ոճիրներ են ստեղծում։ Մար-  
 դիկ ինչպե՛ս են կարողանում զվարճանալ այդպիսի հիմա-  
 րությամբ։ Ի՞նչ եք ասում դուք մեզ այդ բոլոր իրավունք-  
 ների մասին։ Մարդու իրավունքնե՛ր։ Ժողովրդի իրավունք-  
 նե՛ր։ Ցնդաբանությո՛ւն, դատարկ խոսքե՛ր, կատարյալ հի-  
 մարությո՛ւն։ Ձեր սրիկաները, ձեր քրջոտները ի՞նչն են  
 նրանք իրավունք կոչում։ Աստվածասպանությունն ու արքա-  
 յասպանությունը։ Մի՞թե նողկալի բան չէ դա։ Ես ձեր տեղն  
 ամաչում եմ, ողորմած պարոն։ Դուք բրետոնական հնամե-  
 նի տոհմից եք։ Իմ և ձեր նախահայրը միևնույն Գովեն դը  
 Տուարն է։ Դուք, պարոնս, պատիվ ունեք ապուշ լինելու և  
 շատ բարձր եք գնահատում իմ ախոռապանի հետ հավասար  
 լինելը։ Ես արդեն ծերունի էի, երբ դուք փոքրիկ տղա էիք։  
 Ես սրբում էի ձեր քիթը և հիմա էլ կսրքեմ։ Դուք թեև մե-  
 ծացել եք, բայց երեխա եք մնացել. մեծանալով՝ դուք թզուկ  
 եք մնացել։ Այն ժամանակից, ինչ մենք իրար չենք հանդի-  
 պել, մեր ճանապարհները բաժանվել են. ես ընթացել եմ  
 պատվի ուղիով, դուք՝ հակառակ ուղիով... Ես չգիտեմ, թե  
 ինչով կվերջանա այս ամենը, բայց գիտեմ, որ ձեր բարե-  
 կամ պարոնները արգահատելի սրիկաներ են։

Հիանալի, հիանալի, պարոնայք քաղաքացիներ։ Թա-

<sup>1</sup> Ռուսո Ժան-Ժակ (1712—1778) — ֆրանսիական մեծ լուսավո-  
 րիչ, որի գաղափարները խոշոր դեր կատարեցին ֆրանսիական առա-  
 ջին բուրժուական հեղափոխությունը նախապատրաստելու գործում։

գալորեցեք, տիրապետեցեք Ֆրանսիայում, կարգադրություններ արեք, մի՛ քաշվեք, եղեք ինչպես ձեր տանը: Բայց իմացած եղեք. կրոնը կմնա կրոն, և ինչ էլ դուք անելու լինեք, այն փաստը, որ թագավորական իշխանությունը լըցնում է մեր պատմության տասնհինգ դարը, կմնա փաստ, և ֆրանսիական հիմ արիստոկրատիան, նույնիսկ գլխատված, միշտ բարձր կլինի ձեզանից:

Դուք ամեն ինչ փշրել, ջարդել, ոչնչացրել եք ուժեղ հարվածով: Ձեզ ազնվականություն հարկավոր չէ: Դեհ, ի՞նչ կա որ, դուք այլևս ազնվականություն չեք ունենա, և դուք դեռ կզղջաք դրա համար: Դուք այլևս առաքելներ ու հերոսներ չեք ունենա: Մնաս բարով, Ֆրանսիայի վեհություն:— Ապա մի լուրջ լռելուց հետո ավելացրեց.— սպանեցեք թագավորներին, սպանեցեք ազնվականներին, սպանեցեք քահանաներին, ոչնչացրեք, ավերեցեք, ոտնատակ տվեք հին օրենքները, հին սովորությունները, հին բարքերը: Տապալեցեք գահերը, պղծեցեք եկեղեցիների սեղանները, ոչնչացրեք աստծուն և սպրեցեք ավերակների վրա, դա ձեր գործն է: Ես ամեն ինչ ասացի: Այժմ ինձ ուղարկեցեք գլխատելու, պարոն վիկոնտ: Պատիվ ունեմ գլուխ խոնարհելու:— Եվ ապա ավելացրեց.— Ես ձեզ շատ դառն ճշմարտություններ ասացի: Բայց ինչի՞ց պիտի վախենամ: Ես մեռած եմ:

— Դուք ազատ եք,— ասաց Գովենը:

Նա մոտեցավ մարկիզին, իր ուսերից վերցրեց թիկնոցը, գցեց Լանտենակի ուսերին և կնգուղը իջեցրեց նրա ճակատին: Նրանք մի հասակի էին:

— Այդ ի՞նչ ես անում,— հարցրեց մարկիզը:

Գովենն առանց նրան պատասխանելու ձայն տվեց.

— Պորուչիկ, բացեք դուռը:

Դուռը բացվեց:

— Նեղություն քաշեք դուռը փակեք իմ ետևից,— նորից ձայն տվեց Գովենը և շեմքից դուրս հրեց շվարած մարկիզին:

Աշտարակի ցածի դահլիճը, որ պահակատան էր վերածվել, եթե ընթերցողը հիշում է, լուսավորվում էր միայն մեկ լապտերով, որը շատ թույլ լույս էր սփռում: Այդ աղոտ լուսավորությամբ զինվորներից նրանք, որոնք քնած չէին, տե-

սան, թե ինչպես իրենց կողքով դեպի դուռն անցավ բարձրահասակ մի մարդ՝ հրամանատարական թիկնոցն ուտերին, կնգուղը երեսին: Նրանք պատվի առան, և նա անհետացավ դռան ետևը:

Մարկիզն առանց շտապելու անցավ ամբողջ դահլիճով, դուրս եկավ ճեղքվածքով, մի քանի անգամ գլուխը խփելով ցցված քարերին, և հեռացավ աշտարակից: Ժամապահը, նրան Գովենի տեղը դնելով, պատվի առավ:

Երբ մարկիզն արդեն ազատ էր, իր ոտքերի տակ զգաց մարգագետնի կանաչը, երբ մի երկու հարյուր քայլի վրա իր առջև տեսավ անտառի եզրը և լայնարձակ դաշտը, հասկացավ, որ այնտեղ, անտառում, իրեն սպասում են գիշերվա փրկարար խավարը, ազատությունն ու կյանքը, նա կանգ առավ: Մի րոպե նա կանգնած մնաց անշարժ ու անվճռական, ինչպես մի մարդ, որն անակնկալից շփոթված անխոհեմ քայլ է արել և հիմա խորհում է, թե ճիշտ է վարվել ինքը և ետ չվերադառնա՞ր արդյոք: Բայց մի րոպե խորհելուց հետո նա աջ ձեռքը բարձրացրեց, «Դե, ի՞նչ կա որ» մրմնջալով մատը չրթացրեց և առաջ գնաց:

Իսկ այնտեղ զնդանի դուռը փակվեց, դռան ետևը մնաց Գովենը:

## II. ՌԱԶՄԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

Սիմուրդենն առաջիկա ռազմական դատարանի նիստի վայր ընտրեց աշտարակի այն նույն դահլիճը, որտեղ գրոհից առաջ բարիկադ էր սարքված և որը հետո պահակատուն էին դարձրել: Սիմուրդենը կողմնակից էր այդ ամբողջ արարողությունը պարզեցնելու և ցանկանում էր կրճատել բանտից դատարան և դատարանից մինչև կառավարան տանող ճանապարհը:

Կեսօրին նրա կարգադրությամբ դատարանը նիստը բացեց: Սեղանին դրված էին երկու վառված մոմ, սեղանի մի կողմը դրված էին երեք ծղոտե աթոռ, մյուս կողմը, սեղանների դիմաց՝ մի փայտե աթոռակ:

Աթոռները նախատեսված էին դատավորների համար, աթոռակը՝ մեղադրյալի: Բացի դրանից, սեղանի երկու ծայ-

րերին էլ դրված էին երկու աթոռակ, մեկը դատախազի համար, որի պարտականությունը պիտի կատարեր գնդի ֆուրյերը<sup>1</sup>, մյուսը՝ քարտուղարի համար, որպիսին նշանակված էր ենթասպաններից մեկը:

Սեղանին դրված էին երկու թանաքաման, կարմիր գմուսի մի ձողիկ, պղնձե կնիք, մի կապ մաքուր թուղթ և երկու բացված տպագիր պլակատ, որոնցից մեկում օրենքից դուրս հայտարարվածների ցուցակն էր, մյուսում՝ Կոնվենտի դեկրետը:

Մեջտեղի սեղանի ետևը դրված էին մի քանի եռագույն դրոշմեր:

Այդ սեղանը, որ նախատեսված էր նախագահի համար, գտնվում էր ուղիղ ներքնատան դռան առաջ: Նրա երկու կողմերում կանգնած էին երկու ժանդարմ: Հասարակությունը կազմում էին զինվորները:

Մեջտեղի աթոռին նստած էր Սիմուրդենը, նրա աջ կողմում՝ դատարանի ավագ անդամ կապիտան Գեշանը և ձախ կողմում՝ կրտսեր անդամը՝ սերժանտ Ռադուրը: Սիմուրդենը գլխին եռագույն կոկարդով գլխարկ էր դրել, մեջքին մի թուր էր կապել և գոտին էր խրել երկու ատրճառակ: Թրի հարվածից ստացած վառ կարմիր սպին նրա դեմքին դաժան տեսք էր տալիս:

Ռադուրը, վերջապես, թույլ էր տվել, որ իր վերքը կապեն. նրա գլխին սպիտակ թաշկինակ էր փաթաթված, որի վրա երևում էր դանդաղորեն մեծացող արյունոտ բիծը:

Դատարանի նիստը դեռ բացված չէր: Դատավորների առաջ, սեղանի մոտ կանգնած էր մի սուրհանդակ, և լսելի էր, թե ինչպես աշտարակի մուտքի մոտ անհամբեր գետինն է դոփում նրա սպասող ձին: Սիմուրդենը զեկուցագիր էր գրում.

**«Հասարակական փրկության կոմիտեի քաղաքացի անդամներ, Լանտենակը բռնված է և վաղը մահապատժի կենթարկվի»:**

---

<sup>1</sup> Ֆուրյեր — այն մարդը, որ զորամասի տեղաշարժման ժամանակ զբաղվում էր զորքին ուտելեղեն և ձիերին կեր հայթայթելով, ինչպես նաև բնակարաններ ճարելով՝ սպաներին ու զինվորներին տեղավորելու:

Նա ամիս ամսաթիվը գրեց, ստորագրեց, թուղթը ծալեց, կնքեց և տվեց ստորհանդակին: Սա դուրս եկավ, ձին հեծավ ու սլացավ:

Այդ ժամանակ Սիմուրդենը բարձր ձայնով հրամայեց.

— Բացե՛ք դուռը:

Ժանդարմները սողնակը քաշեցին, դուռը բաց արին, ներս անցան:

Սիմուրդենը գլուխը բարձրացրեց, ձեռքերը կրծքին խաչեց և աչքը դռանը հառած գոչեց.

— Բերե՛ք կալանավորին:

Դռան մեջ երևացին երկու ժանդարմը և նրանց միջև՝ կալանավորը:

Սիմուրդենը ցնցվեց:

— Գովե՛ն, դո՞ւ,— դուրս թռավ նրա կրծքից: Եվ նա շտապ ավելացրեց.— Ես կալանավորին պահանջեցի:

— Կալանավորը ես եմ,— ասաց Գովենը:

— Ինչպե՛ս թե դու: Հասկա Լանտենա՞կը:

— Լանտենական ազատ է:

— Փախե՞լ է:

— Փախել է:

— Այո, այո, հասկանում եմ,— դողդոջում ձայնով մըրմընջաց Սիմուրդենը:— Չէ՞ որ նա այս ամիսի տերն է, և նրան հայտնի են բոլոր մուտքերն ու ելքերը: Երևի նկուղում գաղտնի անցք կա: Ինչպե՛ս այդ իմ մտքով չի անցել... Նա, իհարկե, կարող էր փախչել առանց ուրիշի օգնության դիմելու:

— Նրան օգնել են,— ասաց Գովենը:

— Օգնել են փախչե՞լ: Բայց ո՞վ:

— Ես:

— Դո՞ւ:

— Ես:

— Դու զառանցում ես:

— Ես մտա նրա խուցը: Մենք երկուսով էինք: Ես իմ թիկնոցը նրա վրա գցեցի, կնգուղը գլխին քաշեցի, և նա դուրս գնաց իմ փոխարեն, իսկ ես մնացի նկուղում: Եվ ահա ես այստեղ, ձեր առաջ եմ:

— Դու չէի՛ր կարող անել այդ:

— Ես արի այդ:

— Այդ անկարելի՛ է:

— Այդ այդպես է:

— Բերե՛ք Լամտեմակին:

— Նա այստեղ չէ: Զինվորները նրան իմ թիկնոցում տեսնելով՝ իմ տեղը դրին և բաց թողին: Չէ՞ որ դեռ մութ էր:

— Դու խելագարվե՛լ ես:

— Ես ձեզ ճշմարտությունն ասացի:

Լուրջություն տիրեց: Վերջապես Սիմուրդենը հազիվ բաներն արտասանելով ասաց.

— Եթե այդպես է, ուրեմն դու ես արժանի...

— ... մահվան, — նրա խոսքը լրացրեց Գովենը:

Սիմուրդենը գունատ էր մեռածի պես և անշարժ՝ շանթահարի նման: Թվում էր, թե նա չի շնչում: Ծակատին քրտինքի խոշոր կաթիլներ երևացին: Մի կերպ տիրապետելով իրեն՝ ասաց.

— Ժանդարմներ, մեղադրյալին տարեք իր տեղը:

Գովենն ընկավ աթոռակին:

— Ժանդարմներ, սրերը մերկացնե՛լ, — հրաման տվեց Սիմուրդենը:

Ռազմական դատարաններում դա ընդունված կարգ էր այն դեպքերում, երբ մեղադրյալին մահապատիժ էր սպասում:

Ժանդարմները սրերը մերկացրին:

Սիմուրդենի ձայնը նորից հաստատ էր ու հանգիստ, երբ ասաց.

— Մեղադրյա՛լ, ոտքի կանգնեք:

Եվ այնուհետև նրան «դու» չասաց:

### III. ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Գովենը վեր կացավ:

Սիմուրդենն սկսեց հարցաքննությունը:

— Ձեր անունը:

— Գովեն:

— Ձեր կոչումը:



— Հյուսիսային ասիերի էքսպեդիցիոն զորամասի հրամանատար:

— Դուք ազգակա՞ն եք փախած ոճրագործին:

— Ես նրա եղբոր թոռն եմ:

— Զեզ հայտնի՞ է Կոնվենտի դեկրետը:

— Այն, որ ձեր սեղանի՞ն է դրված: Այո, հայտնի է:

— Ի՞նչ կարող եք ասել այս դեկրետի մասին:

— Որ ես ինքս հաստատել եմ այն իմ ստորագրությամբ, հրամայել եմ խստորեն կատարել այն ամենը, ինչ պահանջում է դեկրետը, և ինքս եմ կազմել այն լրացումը, որի տակ կա իմ ստորագրությունը:

— Պաշտպան ընտրեցեք ձեզ համար:

— Ես ինքս կպաշտպանեմ ինձ:

— Խոսեցե՛ք:

Սիմուրդենը նորից տիրապետել էր իրեն, սակայն այդ ինքնատիրապետման մեջ ավելի շուտ զգացվում էր ժայռի անասանություն, քան կենդանի մարդու հանգստություն:

Գովենը լուռ էր, ասես ուզում էր իր մտքերը ժողովել:

— Ի՞նչ կարող եք ասել ձեզ պաշտպանելու համար,— հարցրեց Սիմուրդենը:

Գովենը գլուխը բարձրացրեց և առանց որևէ մեկին նայելու խոսեց.

— Ահա ինչ: Տարված լինելով հարցի մի կողմով՝ ես աչքաթող եմ արել մյուս կողմը: Մեծահոգի արարքը, որին ես ականատես եղա, իմ աչքում ծածկեց անհամար ոճրագործությունները: Ծերունին... փրկված մանուկները... այս ամենը կանգնեցին իմ և իմ պարտականության միջև: Ես մոռացա միացող գյուղերը, ամայացած դաշտերը, մոռացա գերիների կոտորածը, վիրավորների բնաջնջումը, կանանց գնդակահարումը, ես մոռացա, որ Ֆրանսիան մատնել եմ անգլիացիների ձեռքը և ազատեցի հայրենասպանին: Ես մեղավոր եմ: Գուցե կթվա, թե այսպես ասելով ես իմ դեմ եմ խոսում: Այո՛ ճիշտ չէ. ես իմ օգտին եմ խոսում: Երբ մեղավորը խոստովանում է իր հանցանքը, նա փրկում է միակ բանը, որ կարելի է փրկել՝ իր պատիվը:

— Ա՛յո՛ է ամբողջը, որ դուք կարող եք ասել ձեզ պաշտպանելու համար,— հարցրեց Սիմուրդենը:

— Ես կարող եմ ավելացնել միայն, որ իբրև պետ ես պարտավոր էի օրինակ տալ, այնպես որ դուք էլ ձեր հերթին, հրպես դատավոր պետք է օրինակ տաք:

— Ինչպիսի՞ օրինակ:

— Ինձ մահվան դատապարտեցեք:

— Դուք գտնում եք, որ այդ արդա՞ր կլինի:

— Ոչ միայն արդար, այլև անհրաժեշտ:

— Նստեցեք:

Դատախազ-ֆուրյերը վեր կացավ և նախ կարդաց այն որոշումը, որով նախկին մարկիզ դը Լանտենակն օրենքից դուրս էր հայտարարվում, ապա՝ Կոնվենտի դեկրետը, որը մահապատիժ էր որոշում նրան, ով կաջակցի գերի բռնված խոռվարարների փախուստին: Նա կարդաց նաև դեկրետի տպագիր պլակատի տակ ավելացրած այն մի քանի տողը, որով մահվան սպառնալիքով արգելվում էր օգնություն կամ աջակցություն ցույց տալ վերոհիշյալ խոռվարարին և որի տակ ստորագրված էր՝ «Էքսպեդիցիոն ջոկատի հրամանատար՝ Գոլվեն»:

Ընթերցումն ավարտելով դատախազը նստեց:

Սիմուրդենը ձեռքերը խաչեց և ասաց:

— Մեղադրյալ, լսեցեք ուշադիր: Հասարակություն, խնդրում եմ չաղմկել և դիտողություններ չանել: Բոլորը պարտավոր են հարգանքով վերաբերվել օրենքին: Մենք անցնում ենք քվեարկության: Դատավճիռը կընդունվի ձայների պարզ մեծամասնությամբ: Դատավորներից յուրաքանչյուրն իր կարծիքը կասի մեղադրյալի ներկայությամբ, որովհետև արդարադատությունը թաքցնելու բան չունի:— Ապա մի պահ լռելուց հետո ավելացրեց.— Խոսքը պատկանում է ավագ դատավորին: Կապիտան Գեշան, խոսեցեք:

Կապիտան Գեշանը կարծես չէր նկատում ոչ Սիմուրդենին, ոչ Գոլվենին: Նրա աչքերը, որոնք քարացած սուկում էին արտահայտում, կախված կոպերի տակից նայում էին սեղանին փռած դեկրետին, ասես նրա առաջ մի անհատակ անդունդ լիներ:

— Օրենքը պարզ է,— խոսեց նա խուլ ձայնով:— Դատավորը սովորական մարդուց և՛ բարձր է, և՛ ցածր: Ցածր է, որովհետև նա սիրտ չունի և չպետք է ունենա: Բարձր

է, որովհետեւ նրա ձեռքում է սուրը: Քրիստոսի ծնունդից առաջ չորս հարյուր տասնչորս թվականին հռոմեացի Մանլիուսը իր որդուն մահապատժի է ենթարկել այն պատճառով, որ նա հաղթանակ էր տարել առանց նախապես հոր թույլտվությունն ստանալու: Կարգի խախտումը հատուցում էր պահանջում: Ներկա դեպքում մենք տեսնում ենք օրենքի խախտում, իսկ օրենքը սահմանված կարգից էլ բարձր է: Մարդու նկատմամբ ունեցած հախտուն կարեկցությամբ մեղադրյալը վտանգի է ենթարկել հայրենիքը: Կարեկցությունը երբեմն ոճրագործություն է դառնում: Հրամանատար Գովենը խոռվարար Լանտենակին օգնել է փախչել: Գովենը մեղավոր է: Ես ձայն եմ տալիս մահապատժի օգտին:

— Քարտուղա՛ր, գրի առեք,— ասաց Սիմուրդենը:

Քարտուղարը գրեց. «Կապիտան Գեշանը մահապատժի կողմնակից է»:

Գովենն ասաց:

— Գեշան, ձեր որոշումն արդար է: Ծնորհակալ եմ:

— Խոսքը տրվում է կրտսեր դատավորին,— ասաց Սիմուրդենը:— Սերժանտ Ռադուր, խոսեցեք:

Ռադուրը ոտքի ելավ, դարձավ դեպի մեղադրյալը և պատվի առավ նրան: Ապա գոչեց.

— Այդ դեպքում ի՛նձ գլխատեցեք, որովհետեւ, երդվում եմ ասածո անունով, ես թանկ եմ գնահատում նախ այն, ինչ արեց ծերունին, ապա և այն, ինչ արել է մեր հրամանատարը: Երբ ես տեսա, թե ինչպես ութսուն տարեկան այն մարդը կրակի մեջ նետվեց երեք մանկիկներին փրկելու համար, մտքումս ասացի. «Կեցցե՛ս դու, ծերունի»: Իսկ երբ իմացա, որ հրամանատարը ծերունուն օգնել է խույս տալու ձեր ստոր գիլիոտինից, նզովյալ լինի նա, ես ինքս ինձ ասացի. «Դրա համար հրամանատարին գեներալ պիտի դարձնել. նա իսկական մարդ է»: Ես, գրողը տանի ինձ, նրան սուրբ Լյուդովիկոսի խաչ կշնորհեի, եթե մենք դեռ խաչեր ու սրբեր ունենայինք: Այս ի՞նչ է, իսկապես: Ամբողջ չորս ամիս հրամանատար Գովենը հալածում է այդ ոռյալիստ թափափուկին ոչխարների պես, և թուրը ձեռքին պաշտպանում է հանրապետությունը՝ վտանգի ենթարկելով իր կյանքը: Չէ՞ որ միայն նրա շնորհիվ մենք հաղթեցինք Դոլի

կովում: Այդպիսի գործի համար քիչ խելք չէր հարկավոր: Եվ դուք, ունենալով այդպիսի մի գանձ, այդպիսի հրամանատար, աշխատում եք ազատվել նրանից: Փոխանակ նրան գեներալ դարձնելու, ուզում եք գլուխը կտրել: Ախր ցնորամտություն է դա... Իսկ դուք էլ խելոքն եք հա՛, քաղաքացի Գովեն: Եթե դուք իմ հրամանատարը չլինեիք, այլ մի կապրալ լինեիք իմ գումարտակում, ես կասեի ձեզ, որ հենց նոր դուք ամենասոսկալի հիմարություններն ասացիք: Ծերունին փրկեց երեխաներին և շատ լավ արեց: Դուք էլ լավ եք արել, որ փրկել եք ծերունուն: Եվ եթե մարդիկ սկսեն լավ բանի համար մարդկանց գլխատել, ուրեմն թող ամեն ինչ գրողի ծոցը գնա: Ես կտրականապես հրաժարվում եմ որևէ բան հասկանալ... Նշանակում է հարկավոր էր, որ ծերունին թողներ երեխաները ողջ-ողջ այրվե՞ն, և որ մեր հրամանատարը թողներ ծերունու գլուխը կտրե՞ն: Ո՛չ, չեմ կարող: Ուղարկեցեք ինձ գլխատելու: Այդպես ավելի լավ կլինի... Ախր ինքներդ հասկացեք. եթե այդ երեխաներն այրվեին, Կարմիր գդակ գումարտակը կխայտառակվեր: Ի՞նչ է, ա՞յդ էիք ուզում դուք: Էլ ինչի՞ համար ենք մենք մեր ճակատը գնդակներից դեմ արել: Որպեսզի մեր հրամանատարին խլեն մեզանից և մեր աչքի առաջ սպանե՞ն: Մեր հրամանատարին գլխատե՞ն: Օ՛, ո՛չ, փչո՞ց է: Այդպիսի բան չի՛ լինի: Մենք սիրում ենք մեր հրամանատարին, մեզ հարկավոր է մեր հրամանատարը: Հիմա նա մեզ համար ավելի թանկ է: Նրան գիլիոտի՞ն... Լսելն անգամ ծիծաղելի է: Ո՛չ, ո՛չ, միայն թե ո՛չ այդ: Մենք այդ չե՛նք ուզում: Ծատ հիմարություններ լսեցի ես: Դուրս տվեք որքան ուզում եք, բայց այդ չի՛ լինի:

Եվ Ռադուքը նստեց: Նրա փաթաթանի տակից, որտեղ ականջն էր եղել, արյան մի շիթ դանդաղորեն հոսում էր դեպի վիզը:

Սիմուրդենը դարձավ նրան.

— Դուք կողմնակից եք, որ մեղադրյալին արդարացնե՞ն:

— Ես կողմնակից եմ, որ նրան գեներալ դարձնեն,— պատասխանեց Ռադուքը:

— Ես ձեզ հարցնում եմ. ուզում եք, որ մեղադրյալն արդարացվի՞:

— Ես ուզում եմ, որ նրան դարձնեն հանրապետության առաջին մարդը:

— Սերժանտ Ռադուր, պարզ պատասխանեցեք. ցանկանում եք, որ հրամանատար Գովենն արդարացվի: Այո, կամ՝ ոչ:

— Ես ուզում եմ, որ նրա փոխարեն իմ գլուխը կտրեն:

— Նշանակում է՝ դուք արդարացման կողմն եք,— ասաց Սիմուրդենը:— Քարտուղա՛ր, գրի առեք:

Քարտուղարը գրեց. «Սերժանտ Ռադուր. արդարացում»: Ապա ասաց.

— Մի ձայն մահապատժի կողմն է, մեկը՝ արդարացման: Չայները բաժանվեցին:

Չայն տալու հերթը Սիմուրդենինն էր:

Նա վեր կացավ տեղից, գլխարկը գլխից վերցրեց ու դրեց սեղանին:

Այժմ նա նույնիսկ գունատ չէր, նրա դեմքը հողի գույն էր ստացել:

Եթե դատարանի դահլիճում եղածները բոլորը պատկած լինեին գերեզմաններում, նույնիսկ այդ դեպքում լուրջությունն ավելի խոր չէր կարող լինել:

Հանդիսավոր, դանդաղ ու հաստատուն ձայնով Սիմուրդենն ասաց.

— Մեղադրյալ Գովեն, մենք քննեցինք ձեր գործը: Հանուն հանրապետության, ռազմական դատարանը երկու ձայնի մեծամասնությամբ, ընդդեմ մեկի...— Նա կանգ առավ, ասես ուզում էր իրեն մտածելու ժամանակ տալ: Ինչի՞ համար էր տատանվում նա: Մահվան դատավճռի՞, թե՞ արդարացման: Բոլորը շունչները պահել էին: Եվ նա վերջացրեց.— դատապարտում է ձեզ մահվան:

Նրա քարացած դեմքին հաղթանակած պարտքի մի անասելի տանջանք էր գրված: Բայց դա սուկ անցողիկ արտահայտություն էր, որ երևաց և իսկույն էլ չքացավ: Սիմուրդենի դեմքը մորից քար կտրեց: Նա նստեց, գլխարկը գլխին դրեց և ասաց.

— Գովեն, վաղն արևածագին դուք կգլխատվեք:

Գովենը վեր կացավ, դատարանին գլուխ տվեց և ասաց.

— Ծնորհակալ եմ, քաղաքացի դատավորներ:

— Տարեք դատապարտյալին, — հրամայեց Սիմուրդենը։  
Նա ձեռքով նշան արեց։ Ջնդանի դուռը բացվեց, Գո-  
վենը ներս անցավ, և դուռը նորից փակվեց։ Ժանդարմները  
մնացին դռան առաջ կանգնած, մերկ սրերը ձեռքներին։  
Ռադուրը ուշաթափ ընկավ հատակին։ Նրան դուրս տա-  
րան։

#### IV. ԴԱՏԱՎՈՐ ՍԻՄՈՒՐԴԵՆԻՑ ՀԵՏՈ ՌԻՍՈՒՑԻՉ ՍԻՄՈՒՐԴԵՆԸ

Ռազմական ճամբարը, մանավանդ հեղափոխության ժա-  
մանակ, նման է կրետի բնի։ Հանրապետական քաջարի ջո-  
կատը, որ գրավել էր Տուրգ ամրոցը, վերջին իրադարձու-  
թյուններից հուզված՝ դժժում էր ինչպես անհամաձայն արված  
փեթակ։ Իմանալով Լանտենակի փախուստը՝ զինվորները  
դժգոհ էին հրամանատար Գովենից։ Երբ զննանից, որտեղ  
Լանտենակը պիտի լիներ, դուրս բերին Գովենին, դատա-  
րանի դահլիճով ասես Էլեկտրական հոսանք անցավ, և մի  
րոպե էլ չանցած՝ այդ արդեն գիտեր ամբողջ ճամբարը։  
Փոքրիկ զորաբանակի մեջ տրտունջ բարձրացավ։ Զինվոր-  
ներն ասում էին. «Ահա հիմա նրանք դատում են Գովենին,  
բայց դա միայն ձևի համար է։ Մի՞թե կարելի է հավատալ  
այդ բոլոր «նախկիններին», և մանավանդ տերտերներին։  
Մենք արդեն տեսանք, որ նախկին վիկոնտը մարկիզին օգ-  
նեց փախչել։ Հիմա էլ կտեսնենք, որ քահանան արդարաց-  
նում է վիկոնտին»։ Իսկ երբ դատավճիռն իմացան, սկսեցին  
ուրիշ ոգով քրթմնջալ. «Ձե՛, սա արդեն չափից դուրս է։  
Գլխատել մեր պետի՞ն, մեր երիտասարդ քաջ հրամանա-  
տարի՞ն, մեր հերոսի՞ն։ Ծիշտ է, նա վիկոնտ է, բայց նա  
հանրապետական է։ Ուրեմն և ավելի մեծ է նրա արժանիքը։  
Ինչպե՛ս։ Պոնտոքսոնը, Վիլդեն, Պոնտ-օ-Բոն ազատագրո-  
ղին, Դոլում հաղթանակ տանողին, հենց նոր Տուրգը գրա-  
վողին, նրան, որ մեզ անպարտելի է դարձրել, նրան, որ  
հանրապետության կտրուկ թուրն է դարձել Վանդեայում,  
մի ինչ-որ Սիմուրդեն համարձակվում է մահվա՞ն դատա-  
պարտել։ Եվ ինչի՞ համար։ Նրա՞ համար, որ Գովենը փրկ-  
վել է մի ծերունու, որն իր հերթին փրկել է երեք երեխա։

Ի՛նչ է, տերտերնե՞րը պիտի զինվորներին սպանեն... Հենց ա՛յդ էր պակաս»:

Այսպես էր վրդովվում հաղթանակած ճամբարը՝ դժգոհ լինելով դատավճռից: Ընդհանուր ցասումի մի մոայլ մըթնոլորտ էր շրջապատել Սիմուրդենին: Ամեն ինչ նրանից էր կախված: Այն, ինչ նա արեց որպես ռազմական դատավոր, կարող էր փոխել որպես քաղաքացիական պատգամավոր: Միմիայն նա կարող էր ներումն շնորհել: Նա օժտված էր անսահման իշխանությամբ. նրա մի նշանով Գովենը կարող էր ազատություն ստանալ: Նա կյանքի ու մահվան տերն էր, նա գիլիոտինի տերն էր: Այդ ողբերգական պահին նա ամենակարող էր:

Մնում էր միայն սպասել առավոտյան:

Գիշերը վրա հասավ:

## V. ԶՆԴԱՆՈՒՄ

Դատարանի դահլիճը նորից պահակատուն դարձավ: Պահակախումբը կրկնապատկված էր, ինչպես նախորդ օրը: Նկուղի դուռն առաջվա պես պահպանում էին երկու ժանդարմ:

Կեսգիշերին մոտ լապտերը ձեռքին մի մարդ անցավ պահակատան միջով, իր անունը տվեց և հրամայեց զնդանի դուռը բացել: Այդ Սիմուրդենն էր: Նա մտավ խուցը և դուռը կիսաբաց թողեց:

Խուցը մութ էր ու լուռ: Սիմուրդենը շեմքն անցավ, լապտերը հատակին դրեց ու կանգ առավ: Կիսախավարի մեջ լսվում էր քնած մարդու հանդարտ շնչառությունը: Սիմուրդենը մտասույզ ականջ էր դնում այդ խաղաղ շնչառությանը:

Գովենը խցի հեռավոր անկյունում ծղոտի վրա պառկած խոր քուն էր մտել:

Սիմուրդենն անաղմուկ մոտեցավ, և երկա՛ր-երկար նայում էր նրան: Իր քնած մանկիկով հիացող մոր հայացքը չէր կարող ավելի քնքուշ լինել նրա հայացքից: Սիմուրդենի հայացքում ավելի շատ սեր էր արտահայտվում, քան, թերևս,

ինքը կուգեմար: Նա բոունցքներն աչքերին սեղմեց, ինչպես հաճախ երեխաներն են ամուսնի, և մի րոպե այդպես անշարժ կանգնած մնաց: Ապա ծունկ չոքեց, քնածի ձեռքը կամացուկ բարձրացրեց և հպեց իր շրթունքներին:

Գովենը շարժվեց և աչքերը բացեց հանկարծակի արթնացած մարդու անգիտակից զարմանքով: Լապտերն աղոտ լուսավորում էր խուցը: Գովենը ճանաչեց Սիմուրդենին:

— Ա՛խ, այդ դո՞ւք եք, ուսուցիչ:— Ապա մի րոպե լուրջումից հետո ավելացրեց.— հենց նոր ես երազում տեսնում էի, որ մահը համբուրում է իմ ձեռքը:

Մտքերի անակնկալ հորձանքը փոթորկեց Սիմուրդենի սիրտը: Մտքերի այդ ալիքը երբեմն այնքան բարձր է լինում և այնպես փոթորկալից, որ թվում է, թե ահա հոգին կծածկի: Բայց Սիմուրդենի լեփ-լեցուն սրտից ոչինչ դուրս չլուսավ: Նա միայն կարողացավ ասել.

— Գովեն՛ն:

Նրանք մայում էին իրար: Սիմուրդենի աչքերն այրվում էին այն մոսյլ կրակով, որից արցունքներն են ցամաքում: Գովենը հեզորեն ժպտում էր: Նա հենվեց արմունկին և խոսեց.

— Ահա ես մայում եմ ձեր դեմքի այդ սպիին, իմ թանկագին ուսուցիչ, սրի հարվածի այդ հետքին, որ դուք ստացաք ինձ փրկելու համար: Եվ հետո... Դեռ երեկ էր, որ դուք կովում էիք իմ կողքին. ինձ համար, ինձ պաշտպանելու համար դուք կովի մեջ մտաք: Եթե ողորմած մախախնամությունը ձեզ իմ օրորոցի մոտ բերած չլիներ, ի՞նչ էի լինելու ես: Ես խավարի մեջ էի մնալու: Եթե իմ մեջ պարտքի գիտակցություն կա, այդ ես ձեզ եմ պարտական: Ես ծընվել եմ կապանքների մեջ կաշկանդված. չէ՞ որ մախապաշարումներն էլ կապանքներ են: Դուք այդ կապանքները քանդեցիք իմ վրայից, դուք ինձ ազատ զարգանալու հնարավորություն տվեցիք և աշխույժ ու նորմալ երեխա դարձրիք նրան, որն ընդամենը մի մումիա էր: Չլիներիք դուք, ես թզուկ կմնայի: Ձեր շնորհիվ է, որ ես գոյություն ունեմ: Ես միայն ազնվական էի, դուք ինձ քաղաքացի դարձրեցիք: Դուք ինձ դաստիարակելով մտածող դարձրիք: Դուք ճշմարտության ու լույսի բանալի տվեցիք ինձ... Օ՛, իմ թան-



կագին ուսուցիչ: Շնորհակալ եմ ձեզանից, շնորհակալ եմ:  
Դուք եք ստեղծել ինձ:

Սիմուրդենը նստեց նրա կողքին, ծղոտի վրա և ասաց.

— Ես եկել եմ քեզ հետ ընթերցու:

Գովենը կիսեց սև հացի կտորը և կեսը տվեց նրան:  
Ապա նրան մեկնեց ջրով լի թասը:

— Նախ դու խմիր,— ասաց Սիմուրդենը:

Գովենը մի կում արեց և թասը տվեց նրան: Սիմուրդենը խմեց ազահորեն ու երկար:

Ընդհանրապես այդ ընթերցի ժամանակ Գովենը միայն ուտում էր, իսկ Սիմուրդենը՝ խմում: Դա առաջինի հոգեկան հավասարակշռության նշանն էր և երկրորդի՝ տենդագին հուզմունքի:

Ինչ-որ մի զարհուրելի անդորր էր կախվել իցի վրա: Ուսուցչի և աշակերտի միջև զրույց սկսվեց:

Գովենն ասում էր.

— Մեծ իրադարձություններ են պատրաստվում: Այն, ինչ հեղափոխությունն ստեղծում է ներկա պահին, մեր տեսողությունից ծածկված է գալիքի մշուշով: Տեսանելի աշխատանքի ետևը թաքցված է անտեսանելի աշխատանքը. առաջինը ծածկում է երկրորդին: Այն, ինչ մենք տեսնում ենք, դաժան է, այն, ինչ չենք տեսնում, սքանչելի է: Հիմա ես պարզ տեսնում եմ այն, ինչ լինելու է: Որքա՞ն զարմանալի է և որքա՞ն լավ... Իզուր չի կորել այն դասը, որ կտակել է մեզ անցյալը. նա է ստեղծել այս արտասովոր իմընսունքերը թվականը:

— Ավելի պարզ արտահայտվիր,— ասաց Սիմուրդենը:

— Խնդրեմ: Դուք ուզում եք ընդհանուր զինվորական ծառայություն՝ բոլորի համար պարտադիր: Բայց ո՞ւմ հետ եք պատերազմելու: Ուրիշ մարդկա՞նց: Իսկ ես, ա՛յ, ամենևին չեմ ընդունում զինվորական ծառայությունը: Ես պատերազմ չեմ ուզում, ես խաղաղություն եմ ուզում: Դուք ուզում եք, որ պետությունն օգնություն ցույց տա աղքատներին, իսկ ես ուզում եմ, որ աղքատությունն ամենևին չլինի: Դուք ուզում եք, որ հարկերը եկամուտների համեմատ լինեն, իսկ ես ուզում եմ, որ ոչ մի հարկ չլինի: Ես ցանկանում եմ, որ հասարակական ծախքերը ամենապարզ ձևերն

ունենան և վճարվեն հանրային եկամուտների ավելցուկից:

— Այդ ինչպե՞ս կարելի է անել:

— Ա՛յ ինչպես: Ամենից առաջ ոչնչացրեք ամեն տեսակ պարագիտիզմ՝ քահանայի պարագիտիզմը, դատավորի պարագիտիզմը, զինվորի պարագիտիզմը: Այնուհետև աշխատեցեք օգտագործել ձեր հարստությունները: Դուք պարտանյութը աղքատոցներն եք նետում, այն նետեցեք ակոսի մեջ: Ֆրանսիայում հողի երեք քառորդը չի մշակվում: Մշակեցեք ամբողջ հողը, վերացրեք ավելորդ արոտավայրերը, հասարակական հողերը հավասար բաժանեցեք բոլորին: Թող ամեն մի աշխատող իր հողակտորն ունենա և ամեն մի հողակտորի վրա աշխատավոր լինի: Այն ժամանակ երկրի ընդհանուր մթերատվությունը հարյուրապատիկ կավելանա: Ներկայումս Ֆրանսիայում գյուղացին տարեկան չորս օր է միս ուտում, իսկ հողի ճիշտ մշակման դեպքում Ֆրանսիան կկերակրի երեք հարյուր միլիոն մարդ՝ ամբողջ Եվրոպան: Օգտվեցեք այդ զորավոր դաշնակցից՝ բնությունից, որին դուք անտեսում եք: Ստիպեցեք, որ ձեզ համար աշխատեն քա՜մու ամեն մի պոռթկում, ամեն մի ջրվեժ, բոլոր մագնիսական հոսանքները: Երկրագունդը խճողված է ստորերկրյա ամենահարուստ երակների ցանցով, որոնք իրենց մեջ ջրի, յուղի, կրակի անսպառ պաշարներ ունեն: Բաց արեք այդ երակները, և դուք ջուր կստանաք ձեր շատրվանների համար, յուղ՝ ձեր լամպերի համար, կրակ՝ ձեր օջախների համար: Իսկ ծովի ալիքների շարժո՞ւմը: Իսկ մակընթացություններն ու տեղատվությունները: Ի՞նչ բան է օվկիանոսը: Մի վիթխարի ուժ, որ իզուր է կորչում: Որպիսի՞ անհեթեթություն է, որ երկիրը չի օգտագործում օվկիանոսը:

— Դու նորից երագում ես:

— Ամենևին: Ես իրականի սահմաններից դուրս չեմ գալիս:— Ապա քիչ լուելուց հետո Գովենն ավելացրեց.— Իսկ կի՞նը: Ի՞նչ եք դարձրել դուք կնոջը:

Սիմուրդենը պատասխանեց.

— Այն, ինչ որ նա կա. տղամարդու ծառա:

— Այո, բայց միայն մի պայմանով. որ տղամարդն էլ կնոջ ծառան լինի:

— Դու զառանցո՞ւմ ես,— գոչեց Սիմուրդենը:— Տղա:

մարդը կնոջ ծառա՞: Այդ երբե՛ք չի լինի: Տղամարդը տիրող է: Ես ընդունում եմ միայն մեկ միահեծան իշխանություն՝ տղամարդու իշխանությունն ընտանեկան օջախում: Տղամարդը թագավոր է իր տանը:

— Այո, բայց միայն մի պայմանով. որ կինն էլ թագուհի լինի այդ տանը:

— Ուրիշ խոսքով դու ցանկանում ես տղամարդկանց ու կանանց...

— ... հավասարություն:

— Հավասարություն՞: Դու խելագարվել ես: Երկու բոլորովին տարբեր արարածներ...

— Ես խոսում եմ հավասարության և ոչ նույնության մասին:

Տիրեց մի լուրջություն, երկու մարքերի մենամարտի զինադադար: Լուրջությունը խախտեց Սիմուրդենը.

— Իսկ երեխա՞ն: Դու ո՞ւմ ես տալիս երեխան:

— Նախ հորը, որ ստեղծել է նրան, ապա՝ մորը, որ ծնել է նրան, ապա՝ իսկական դաստիարակին, որ դաստիարակել է նրան, հետո այն քաղաքին, որտեղ մեծացել է նա, ապա՝ հայրենիքին, նրա հոգևոր մորը, վերջապես նրա նախահորը՝ մարդկությանը:

Գովենը մի պահ մտածեց, ապա ավելացրեց.

— Իմ նշանաբանն է՝ միշտ դեպի առաջ: Մեր հայացքը միշտ պետք է ուղղված լինի դեպի արշալույսը, դեպի կյանքի ծնունդը, բարգավաճումը: Երբ իր դարն ապրածն ընկնում է, կյանք մտնողին ասում է՝ «Ապրիր»:

Գովենը խոսում էր մարգարեի պես կենտրոնացած, Սիմուրդենը լսում էր նրան: Նրանք փոխել էին իրենց դերերը. այժմ արդեն ոչ թե ուսուցիչն էր ուսուցանում աշակերտին, այլ աշակերտը՝ ուսուցչին:

— Դու շատ ես շտապում,— մրմնջաց Սիմուրդենը:

— Ի՞նչ արած: Չէ՞ որ ես քիչ ժամանակ ունեմ,— ժրպտալով պատասխանեց Գովենը:— Ահա, ուրեմն, սիրելի ուսուցիչ, որն է մեր հայացքների տարբերությունը: Դուք երազում եք գորանոցներ՝ բոլոր զինապարտների համար, իսկ ես երազում եմ դպրոցներ: Դուք ուզում եք մարդ-զինվոր դաստիարակել, ես՝ մարդ-քաղաքացի: Դուք ցանկանում

էք, որ նա ահեղ մարդ լինի, իսկ ես ուզում եմ ճրան դարձնել մտածող էակ: Դուք ստեղծում էք սրերի հանրապետություն, իսկ ես ստեղծում եմ... ես կստեղծեի,— ուղղեց նա իրեն,— մտքերի հանրապետություն:

Սիմուրդենը գլուխը կախեց և առանց հայացքը բարձրացնելու ասաց.

— Իսկ առայժմ դու ինչ ես ուզում:

— Այն, ինչ որ կա:

— Նշանակում է դու արդարացնո՞ւմ ես ներկա պահը:

— Այո:

— Ինչո՞ւ:

— Որովհետև սա փոթորիկ է: Փոթորիկը միշտ էլ գիտե ինչ է անում: Երբ կայծակի զարկից մի կաղնի է այրվում, ապա որքա՞ն անտառների են հագեցնում մրրկահեղեղի ջրով: Քաղաքակրթությունը վարակված էր ժանտախտով, հեղափոխությունն սպանեց այդ վարակը: Հնարավոր է, որ երբեմն վատերի հետ լավն էլ զոհ գնա: Բայց ուրիշ կերպ կարո՞ղ է լինել: Չէ՞ որ հարկավոր է մի արմատական գտնում կատարել: Վարակի զարհուրելիության համեմատությամբ հեղափոխության ցատումն ի՞նչ է որ: Եվ հետո, ես ինչո՞ւ պիտի վախենամ փոթորիկից, քանի որ կողմնացույց ունեմ: Ինչո՞ւ պիտի վախենամ ամենաահեղ դեպքերից, եթե իմ մեջ կենդանի է խիղճս:

Երկունս էլ մի պահ լռեցին:

— Դու ասում ես՝ մարդկային հասարակությունը պետք է բարձր լինի բնությունից,— վերջապես լույությունը խախտեց Սիմուրդենը:— Իսկ ես ասում եմ՝ դա անհասանելի բան է, դա երազանք է:

— Ոչ, դա նպատակ է: Կլիներք մարդկային հասարակություն: Կբարձրանանք բնությունից: Ինձ հարկավոր է այն ամենը, ինչ պակասում է մեղվի փեթակին, ինչ պակասում է մրջնանոցին. ինձ հարկավոր է արվեստ, պոեզիա, ճարտարապետության հուշարձաններ, հանճարներ, հերոսներ: Մարդու կոչումն այն չէ, որ հավիտենապես կյանքի ծանրությունը կրի իր ուսերին: Ո՛չ, ո՛չ, ո՛չ: Այլևս չպետք է լինեն իրավագուրկներ ու ստրուկներ, չպետք է լինեն տաժանակիրներ, չպետք է լինեն թշվառներ: Ես ցանկանում եմ հո-

գու ազատություն, արտերի հավասարություն, հոգիների եղբայրություն: Կորչի՛ ամեն տեսակ լուծը: Մարդը նրա համար չի ստեղծված, որ շղթաներ քարշ տա, այլ՝ նրա համար, որ տարածի թևերը, ճախրի երկրի վրա: Այլևս պետք չէ սողացող մարդ:

Նա լուեց: Նրա աչքերը շողշողում էին: Նրա շրթունքները շարժվում էին անձայն:

Դուռը դեռ կիսաբաց էր: Դրսից ինչ-որ ձայներ էին լսվում: Թույլ, կարծես շատ հեռվից, թմբուկի ձայն էր գալիս. երևի լուսաբացն էին ազդարարում: Լսվում էին հրացանների կոթերի թխկոցը գետնին. այդ երևի ժամապահներն էին փոխվում: Ապա աշտարակին բավական մոտիկ, որքան այդ կարելի էր դատել ձայնի ուղղությունից, ինչ-որ շարժում սկսվեց, ասես ինչ-որ տախտակներ ու գերաններ էին տեղափոխում, և լսվում էին խուլ ու ընդհատ հարվածներ, մնաց մուրճերի հարվածների:

Միմուրդենը մահվան պես գունատ ականջ էր դնում այդ ձայներին: Գոլենը դրանք չէր լսում: Նա ավելի ու ավելի էր խորասուզվում իր մտքերի մեջ: Թվում էր, թե չի շնչում, այնքան էր տարված իր մտքում ծնունդ առնող պայծառ երազանքներով: Նրա ամբողջ էությունն անուշ դողով էր տոգորված: Նրա աչքերում արտացոլվող այգաբացի լույսն ավելի ու ավելի էր պայծառանում:

Այսպես բավական ժամանակ անցավ: Միմուրդենը նրան հարցրեց.

— Ինչի՞ մասին ես մտածում:

— Ապագայի մասին,— պատասխանեց Գոլենը և նորից սուզվեց իր մտքերի մեջ:

Միմուրդենը վեր կացավ ծղոտե անկողնից, որի վրա նրանք երկուսն էլ նստած էին: Գոլենն այդ չնկատեց: Դանդաղ, հուշիկ քայլերով, երիտասարդից չհեռացնելով իր վրձտահար, ջերմ քնքշությամբ լի հայացքը, Միմուրդենը մոտեցավ դռանը և դուրս եկավ: Դուռը նորից փակվեց:

Հորիզոնում լույսն սկսեց բացվել: Եվ օրվա լույսի հետ միասին Տուրգ ամրոցի դիմաց, ֆուժերյան անտառի գլխին, սարահարթի վրա երևաց մի օտարոտի, անշարժ բան, որ մինչ այդ տեսնված չէր այդտեղ և անծանոթ էր նաև երկնքի թռչուններին:

Նա անել էր գիշերվա ընթացքում:

Առաջին իսկ հայացքից մարդ ակամա մտածում էր, որ այդ առարկան այստեղ ավելորդ է: Հավամբգի ծաղկուն թփերի շրջապատում նա մի տեսակ աչք էր ծակում: Ակամա հարց էր ծագում, թե դա ինչի՞ համար է այստեղ, ապա մարդու մարմինը դող էր ընկնում: Դա չորս հաստ սյուների վրա կանգնած լաստակի, նման մի բան էր: Լաստակի մի ծայրում ցից տնկված էին երկու ուրիշ սյուն, որոնք վերելից միացված էին մի գերանով, իսկ այդ գերանից կախված էր մի եռանկյունի, որը վաղորդյան երկնքի կապուտակ ֆոնում սևին էր տալիս: Լաստակի մյուս ծայրից իջնում էր մի ելարան: Ցածում, երկու սյուների արանքում, եռանկյունու տակ երևում էր շրջանակի նման մի բան, բաղկացած երկու առանձին մասերից, որոնք կարող էին ետ քաշվել ու առաջացնել մի կլոր անցք՝ հավասար մարդու պարանոցի միջին չափի տրամագծին: Բոլոր մասերը փայտից էին, քացի երկաթե եռանկյունուց:

Այդ այլանդակ շինվածքը գիլիոտինն էր:

Նրա դիմաց, մի քանի քայլ հեռու կանգնած էր մի ուրիշ հրեշ՝ Տուրգ աշտարակը: Ասես այդ քարաշեն հրեշը կովի էր կանչում փայտաշեն հրեշին:

Տուրգ ամրոցը անցյալի այն օրհասական ժառանգությունն էր, որ Փարիզում կոչվում էր Բաստիլ, Լոնդոնում կոչվում է Թոուեր, իսկ Հոռնում՝ Սուրբ հրեշտակի ամրոց:

Տուրգում կենտրոնացված էր տասնհինգ հարյուրամյակ, բոլոր միջին դարերը՝ վասալությունը, ճորտությունը, ֆեոդալիզմը: Գիլիոտինն իր մեջ պարունակում էր միայն իննը-սուններեք թվականը: Եվ այդ տասներկու ամիսը հավասարվում էին տասնհինգ դարի:

Ողբերգական համադրություն: Մի կողմից պարտքը,

մյուս կողմից՝ հատուցումը: Մի կողմից ամենաբարդ միահյուսում՝ կալվածատեր ու ճորտ, տեր ու ստրուկ, տարատոհմիկ ու ազնվական, օրենքների խայտաբղետ ժողովածու, որ միահյուսում էր քահանայի սովորույթները դատավորի հետ, անհամար կապանքներ, որոնց մարդու ոտ ու ձեռքերն էին կաշկանդում, պետական գանձարան, աղի հարկ, գլխահարկ, անօտարելի գույքեր, հատուկ իրավունքներ, նախապաշարմունքներ, ֆանատիկոսություն, թագավորական արտոնություններ, գայիսոն, գահ, կամայականություն: Մյուս կողմից՝ գիլիոտինի դանակը: Մի կողմից՝ օղակ, մյուս կողմից՝ կացին:

Երկար ժամանակ Տուրգ ամբողջ միայնակ կանգնած է եղել այդ անապատում, սպառնալով իր հրակնատներով, որոնցից թափում էին եռացող ձեթ, վառվող կուպր և հալված կապար: Սպառնացել է իր ստորերկրյա գնդանով, որի հատակը ծածկված էին մարդկային ոսկորներով, իր բանտով, որտեղ քառատում էին մարդկանց, իր ամբողջ մոայլոդերգությամբ: Այդ դաժան վիթխարին իշխել էր այդ անտառի վրա, տասնհինգ դար չարագույժ խաղաղությամբ նա ապրել էր այդ անտառի հովանու տակ: Այդ վայրերում նա միակ ուժն էր եղել, պաշտամունքի միակ առարկան, միակ սարսափը: Մեն-մենակ մարմնավորելով բարբարոսությունը՝ նա իշխել էր անսահմանափակ: Եվ հանկարծ նրա առաջ ու նրա դեմ ելնում է գիլիոտինը՝ նույնպիսի մի սոսկալի բան, ինչպիսին էր ինքը:

Թվում էր, թե Տուրգ աշտարակը գննում է գիլիոտինին: Կարծես նա ինքն իրեն հարց էր տալիս. «Այս ի՞նչ բան է»: Գիլիոտինն ասես գետնից էր բուսել:

Եվ իրոք այն գետնից էր բուսել:

Օրհասական գետնից էր ծնունդ առել այդ չարագույժ ծառը: Այն գետնից, որ ողողված էր քրտինքով ու արցունքով, հագեցած էր արյունով, այն գետնից, որտեղ փորվորված էին խանդակներ, անձավներ ու դարաններ, այն գետնից, որտեղ այնքան շատ գերեզման կար, որտեղ այնքան շատ մեղալների, բոլոր տեսակի բռնակալների զոհերի ոսկորներ էին փտել, այն գետնից, որի մեջ թաղված էին այնքան շատ ոճիրներ, գալիքի սոսկալի սերմեր. ահա այդ

գետնից ճակատագրի նշանակած օրը բուսավ անձանոթ վրիժառուն, կախովի դանակով դաժան մեքենան, և իննը-սուններեք թվականը հին աշխարհին ասաց. «Ահա ես»:

Գիլիոտինն իրավունք ուներ ամբողջին ասելու. «Ես քո դուստրն եմ»: Եվ ամբողջն զգաց, որ դուստրը սպանեց իրեն:

Դեռ երբեք երկինքն այնպես քնքշորեն չէր ժպտացել, երբեք բացվող օրն այնպիսի թարմություն չէր ունեցել, ինչպես այդ ամառային առավոտն էր: Ջերմ հովիկն օրորում էր հավամրդի թփերը, այգաբացի մշուշի վերջին պատառները կամացուկ սահում էին կանաչ խոտի վրայով: Ամբողջապես թարմություն շնչող Ֆուժերյան անտառը վաղորդյան գոլորշի էր արձակում կնդրուկով լի մի վիթխարի բուր-վառի մման: Երկնքի լազուրը, ամպերի ճերմակությունը, ջրերի բյուրեղային վճիտությունը, կանաչի բոլոր երանգները, որոնք կապտականաչից զմրուխտագույնին էին հասնում, եղբայրաբար գրկախառնված ծառերի խմբերը, խոտի կանաչ նփոցը, լայնարձակ հարթությունները, խոր-խոր ձորակները, բոլորը, բոլորը անաղարտության ու անմեղության կնիքն էին կրում, որով բնությունը հավիտենապես ասում է մարդուն. «Սովորիր ինձանից»: Եվ այդ ամբողջ վեհության առաջ իրեն ցուցադրել էր մարդու անպատկառությունը. այդ ամբողջ գեղեցկության մեջ դեմ դիմաց կանգնել էին ամբողջն ու կառափնարանը, պատերազմն ու կոտանքը, արյունոտ դարերի ստեղծածն ու արյունոտ րոպեի ստեղծածը՝ անցյալի գիշերային բուն և գալիքի չղջիկը: Եվ ծաղկափթիթ, անուշաբույր, սիրագորով, չքնաղ բնության առաջ լիաբուռ երկինքն այգաբացի ոսկի էր շաղում և՛ աշտարակի, և՛ գիլիոտինի վրա, կարծես մարդկանց ուզում էր ասել. «Տեսեք, թե ինչ եմ անում ես և ինչ եք անում դուք»:

Այդ տեսարանն իր դիտողներն ուներ: Էքսպեդիցիոն ջոկատի չորս հազար գինվորները մարտական կարգով շարված էին սարահարթում, ամբողջի դիմաց: Նրանք երեք կողմից շրջապատել էին գիլիոտինը, կազմելով E տառի մման մի բան: Հրետանին, որ տեղավորված էր ամենաերկար, միջին շարքում, կարծես այդ E տառի միջին գիծը լիներ: Գիլիոտինը ցանկապատի պես շրջապատված էր այդ երեք մարտական շարքերով, որոնք երկու կողմից հասնում էին



կիրճի եզրերին: Այդ կենդանի ցանկապատի չորրորդ բաց կողմը կազմում էր անդունդի եզրագիծը և դարձած էր դեպի ամրոցը: Այդ երկար քառակյունու մեջտեղի ազատ տարածության վրա բարձրացել էր կառավարանը: Որքան ավելի էր բարձրանում արեգակը, այնքան ավելի էր կարճանում գիլիոտինի ստվերը կանաչ խոտի վրա:

Թնդանոթների մոտ կանգնած էին հրետանավորները:

Աշտարակի դիտարանն էին փոխադրել այն սեղանը, որի շուրջը նստած էր դատարանը և այն աթոռը, որի թիկնակին ամրացված էր եռագույն դրոշը: Արեգակը ծագեց Տուրգ ամրոցի վրա, և նրա ոսկեշող ճառագայթների մեջ երևաց փթխարի ծանրանիստ շենքը, աշտարակի դիտարանում՝ դատավորական աթոռը դրոշի հովանու տակ, իսկ աթոռին անշարժ նստած էր մի մարդ՝ ձեռքերը կրծքին խաչած:

Այդ մարդը Սիմուրդենն էր: Նախորդ օրվա նման նա հագել էր քաղաքացիական պատգամավորի համազգեստ, գլխին դրել էր եռագույն կոկարդով գլխարկ, կողքից կախված էր մի թուր և գոտին խրած ուներ երկու ատրճանակ:

Նա լուռ էր: Բոլորը լուռ էին: Զինվորները կանգնած էին գլխահակ, հրացանները ոտքի բռնած: Նրանք արմունկներով դիպչում էին իրար, բայց չէին խոսում: Նրանք մտածում էին այդ սոսկալի պատերազմի մասին, անթիվ անհամար կոիվների մասին, որոնց մասնակցել էին իրենք, անկյուններից կատարված կրակոցների մասին, որոնց դեմ էին գնացել իրենք այնպես հերոսաբար, մտածում էին գրաված ամրոցների, շահած ճակատամարտերի, հաղթանակների մասին և նրանց սկսում էր թվալ, թե այդ ամբողջ փառքը խաչատուակության էր փոխվում: Ծանր սպասումը ճմլում էր բոլորի սիրտը: Երևում էր, թե գիլիոտինի տախտակամածի վրա ինչպես է քայլում դահիճը: Ցերեկվա բոցավառ լույսը ճաճանչում էր ամբողջ երկնակամարը:

Եվ ահա լսվեց սգո ժապավեն քաշած թմբուկների խուլ դղրդյունը: Այդ մոայլ, մահասարսուռ ձայնը մոտենում էր: Ծարքերը ետ քաշվեցին: Երթը մտավ կենդանի ցանկապատի մեջ և շարժվեց դեպի կառավարան:

Նախ երևացին սև թմբուկները, նրանց ետևից գրեմա-

դերների մի դասակ՝ հրացանները ցած հակած, հետո ժանդարմների դասակը և ապա՝ դատապարտյալը: Երթը փակում էր ժանդարմների մի ուրիշ դասակ:

Գովենը քայլում էր ազատ. նրա ոչ ոտքերին, ոչ ձեռքերին շղթաներ չկային: Նա երթային համազգեստով էր, թուրը կողքից կախված:

Նրա դեմքը դեռ շողում էր այն մտազբաղ հրճվանքով, որ պայծառացրեց նրան, երբ Սիմուրդենին ասաց. «Ես մտածում եմ ապագայի մասին»: Հասնելով մահապատժի տեղը՝ նա նայեց աշտարակի դիտարանին: Գիլիոտինին նա հայացքի էլ չարժանացրեց: Նա գիտեր, որ Սիմուրդենը ներկա է մահապատժին, և նրան էր որոնում հայացքով: Ու գտավ:

Սիմուրդենը մեռած էր թվում, այնքան գունատ էր նա ու անշարժ: Նրա մոտ կանգնած մարդիկ չէին լսում նրա շնչառությունը: Մահապարտին տեսնելով՝ նա չցնցվեց, նույնիսկ հոնքը չշարժեց:

Գովենը մոտենում էր կառափնարանին: Նա քայլում էր ու նայում Սիմուրդենին, իսկ Սիմուրդենը նրան էր նայում: Թվում էր, թե Գովենի հայացքում նա նեցուկ էր որոնում:

Գովենը մոտեցավ կառափնարանի ստորոտին և բարձրացավ տախտակամածին: Գրեմադերների դասակի հրամանատարը ելավ նրա ետևից: Գովենը թուրն արձակեց և հանձնեց սպային, ապա արձակեց փողկապը և տվեց դահիճին:

Երբեք նա այդքան գեղեցիկ չէր եղել: Բամին ծածանում էր նրա թուխ մազերը. այն ժամանակներում տղամարդիկ կարճ չէին խուզում իրենց մազերը: Նրա ճերմակ պարանոցը նուրբ էր կանացի պարանոցի պես, իսկ առնական, տիրական հայացքը մեղմ էր արտակարգ չափով... Կառափնարանի վրա կանգնած էլ նա շարունակում էր երազել: Զէ՞ որ կառափնարանն էլ բարձունք է: Գովենը կանգնած էր ձգված, փառահեղ ու հանգիստ: Արեգակն իր լույսով ողողելով նրան՝ ասես լուսապսակ էր դրել նրա գլխին:

Հարկավոր էր մահապարտին կապկալել: Դահիճը պարանը ձեռքին մոտեցավ նրան:

Հայց այստեղ զինվորները տեսնելով, որ հիմա իրենց երիտասարդ հրամանատարին դանակի տակ կդնեն, չդի-

մացան. նույնիսկ պատերազմի արհաւիրքներին վարժված այդ մարդկանց արտերը լցվեցին: Լսվեց մի ահասարսուռ բան՝ զորքի հեկեկանք: Բարձրացավ ընդհանուր աղաղակ՝ «Խնայե՛լ, խնայե՛լ»: Ոմանք ծունկ չոքեցին, ուրիշները հրացանները նետեցին ու ձեռքները մեկնեցին դեպի աշտարակի դիտանոց, որտեղ Սիմուրդենն էր նստած: Մի գրեհադեր, ձեռքը դեպի գիլիոտինը մեկնելով, գոչեց. «Այստեղ փոխարինող չե՛ն վերցնի: Ի՛նձ վերցրեք նրա փոխարեն»: Բոլորը մոլեգնաբար կրկնում էին. «Խնայե՛լ, խնայե՛լ»: Վայրի գազանն անգամ կզգացվեր այդ ողբից կամ վախեցած փախուստի կոյմեր. զարհուրելի՛ բան է զինվորի արցունքը:

Դահիճը՝ վարանմունքի մեջ, չգիտեր ինչ անի:

Այն ժամանակ խուլ ու ցած մի ձայն, որը, սակայն, բոլորը լսեցին՝ այնքան չարագույժ էր այն, աշտարակի բարձունքից գոչեց.

— Թող կատարվի՛ օրենքը:

Բոլորին լավ ծանոթ էր այդ անողորմող, տիրական ձայնը: Սիմուրդենն ասաց իր խոսքը: Զորքի շարքերով մի դող անցավ:

Դահիճն այլևս չտատանվեց: Նա մեկնեց իր պարանը:

— Սպասեցե՛ք,— ասաց նրան Գովենը:

Դառնալով դեպի աշտարակը՝ նա իր ազատ ձեռքով հրածեշտի նշան արեց Սիմուրդենին, ապա թողեց, որ իրեն կապեն:

Երբ նրան կապկպեցին, նա դիմեց դահիճին.

— Ներեցեք, մի բույե ևս:— Եվ գոչեց.— Կեցցե՛ հանրապետությունը:

Նրան դրին տախտակի վրա: Վեհապանձ գլուխը մտցրին անարգ վզակալի մեջ: Դահիճը կամացուկ բարձրացրեց նրա ծոծրակի մազերը, ապա սեղմեց զապանակը: Դանակը տեղից շարժվեց և սկսեց ցած սահել նախ դանդաղ, ապա ավելի ու ավելի արագ: Լսվեց մի նողկալի ճրթոց...

Նույն վայրկյանին որոտաց մի ուրիշ ձայն. կացնի հարվածին պատասխանեց ատրճանակի կրակոցը: Սիմուրդենը դուրս էր քաշել իր գոտկի ատրճանակներից մեկը, և այն վայրկյանին, երբ Գովենի գլուխը գլորվեց զամբյուղի մեջ, ինքն էլ կրակեց իր սրտին: Արյունը հորդեց նրա բերանից, նա ընկավ անշնչացած:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն. Սլավյատինսկի—Վիկտոր Հյուգոյի «Իմնությունները» վեպի մասին	3
---	---

### Առաջին մաս ԾՈՎՈՒՄ

Առաջին գիրք Սողոմոնի անտառը . . . . .	19
---------------------------------------	----

### Երկրորդ գիրք «ԿԼԵՅՄՈՐ» ՌԱԶՄԱՆԱՎԸ

I. Բարեկամներ և թշնամիներ . . . . .	38
II. Նավը և ուղևորը գիշերային խավարում . . . . .	37
III. Ազնվականն ու շինականը . . . . .	38
IV. Պատերազմի սարսափները . . . . .	42
V. Ուժ և արիություն . . . . .	45
VI. Կշեռքի երկու ճժարը . . . . .	51
VII. Ով առազատ է բարձրացրել, խաղ է սկսել բախտի հետ . . . . .	54
VIII. $\theta=380$ . . . . .	57
IX. Մեկը փրկվում է . . . . .	68
X. Կփրկվի՞ արդյոք . . . . .	65

### Երրորդ գիրք ՀԱՄԱՐԱՆ

I. Խոսքը ուժ է . . . . .	67
II. Գեղջուկի ճիշտությունը զորապետի գիտությունն արժե . . . . .	72

### Չորրորդ գիրք ՏԵԼՄԱՐԾ

I. Ավագաթմբի գագաթը . . . . .	81
II. Ականջ ունի, բայց չի լսում . . . . .	86
III. Խոշոր տատերի օգուտը . . . . .	86
IV. Մուրացկանը . . . . .	89
V. Ստորագրություն՝ «Գովեն» . . . . .	95
VI. Զաղաքացիական պատերազմի անակնկալները . . . . .	98
VII. Ոչ մի գթություն . . . . .	108

## Երկրորդ մաս ՓԱՐԻԶՈՒՄ

### Առաջին գիրք ՍԻՄՈՒՐԱԵՆ

I.	Փարիզի փողոցներում . . . . .	109
II.	Սիմուրդեն . . . . .	113
III.	Դատարարակը . . . . .	119

### Երկրորդ գիրք ՍԻՐԱՄԱՐԳԻ ՓՈՂՈՑԻ ՊԱՆԳՈԿԸ

I.	Երեքը . . . . .	122
II.	Հանրապետությունը վտանգի մեջ է . . . . .	123
III.	Ծածուկ զգացմունքների թրթիռը . . . . .	129

## Երրորդ մաս ՎԱՆԳԵԱՅՈՒՄ

### Առաջին գիրք ՎԱՆԳԵԱ

I.	Անտառները . . . . .	138
II.	Մարդիկ . . . . .	139
III.	Մարդկանց և անտառների մեղսակցությունը . . . . .	141
IV.	Կյանքը գեանի տակ . . . . .	143
V.	Նրանց կյանքը պատերազմում . . . . .	145
VI.	Վանդեան վերջ տվեց Բրեռանին . . . . .	150

### Երկրորդ գիրք ԵՐԵՋ ԵՐԵՆԱ

I.	Քաղաքացիական պատերազմ և ընտանեկան պատերազմ . . . . .	151
II.	Դուր . . . . .	151
III.	Փոքրիկ բանակներ և մեծ կոիվներ . . . . .	164
IV.	Երկրորդ անգամ . . . . .	172
V.	Մի կաթիլ սառը ջուր . . . . .	174
VI.	Վերքը լավացավ, բայց սրտից արյուն էր ծորում . . . . .	177
VII.	Ճշմարտության երկու բևեռ . . . . .	183
VIII.	Վշտահարը . . . . .	190
IX.	Գալատական Բաստիլը . . . . .	192
X.	Պատանդներ . . . . .	195
XI.	Ջարճուրեղի, ինչպես ճակատագիրը . . . . .	201
XII.	Փրկություն է պատրաստվում . . . . .	204
XIII.	Ինչ է անում մարկիզը . . . . .	206
XIV.	Ի՞նչ է անում Իմանուը . . . . .	208

### Երրորդ գիրք ՓՈՋՐԻԿՆԵՐԸ ԳՐԱԳԱՐԱՆՈՒՄ

I.	. . . . .	211
II.	. . . . .	212

III.	,	,	,	,	,	,	,	,	,	,	,	,	,	,	215
IV.	,	,	,	,	,	,	,	,	,	,	,	,	,	,	217
V.	,	,	,	,	,	,	,	,	,	,	,	,	,	,	219
VI.	,	,	,	,	,	,	,	,	,	,	,	,	,	,	221

## 2 ո Ր Ր Ո Ր Պ գ ի Ր ք ՄԱՅՐԸ

I.	Մահն է գալիս	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	223
II.	Մահն է խոսում	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	226
III.	Գլուղացիների ամբոխի մեջ	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	228
IV.	Սխալը	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	231
V.	Ծանապարհի վերջը	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	233
VI.	Գործերի վիճակը	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	235
VII.	Մարտից առաջ	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	238
VIII.	Ծառ և մոռչոց	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	241
IX.	Հսկաները հսկաների դեմ	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	245
X.	Ռադուրը	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	248
XI.	Դատապարտվածները	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	256
XII.	Փրկիչը	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	259
XIII.	Դահիճը	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	262
XIV.	Իմանումս էլ է գնում	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	264
XV.	Բանալին ժամացույցի հետ միևնույն գրպանը չպետք է դնել	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	267

## Հ ի ն գ ե Ր Ո Ր Պ գ ի Ր ք ՄԱՐԴԸ ԳԱԶԱՆԻ ՄԵՋ

I.	Գտած, բայց՝ կորցրած	,	,	,	,	,	,	,	,	,	,	,	,	,	270
II.	Քարե դռնից երկաթե դուռը	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	277
III.	Երեխաներն արթնանում են	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	279

## Վ ե ց ե Ր Ո Ր Պ գ ի Ր ք ՀԱՂԹԱՆԱԿԻՑ ՀԵՏՈ ՊԱՅՔԱՐ

I.	Լանտենակը բռնված	,	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	285
II.	Գովենի մտորումները	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	287
III.	Հրամանատարի թիկնոցը	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	295

## Յ ո թ ե Ր Ո Ր Պ գ ի Ր ք ՖԵՌԴԱԼԻԶՄԸ ԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

I.	Նախաճաշը	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	297
II.	Ռազմական դատարանը	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	302
III.	Քվեարկությունը	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	305
IV.	Դատավոր Սիմուրդենից հետո ուսուցիչ Սիմուրդենը	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	311
V.	Զնդանում	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	312
VI.	Երբ ծագում էր արևը	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	.	319

Վիկտոր Հյուգո  
ԻՆՆՍՈՒՆԵՐԵԶԸ

ՎԵՊ

Միջին և բարձր տարիքի դպրոցականների համար

Виктор Гюго  
ДЕВЯНОСТО ТРЕТИЙ

Роман  
(На армянском языке)  
Для среднего и старшего школьного возраста  
Издательство «Советакан грох»  
Ереван, 1984

Խմբագիր՝ Մ. Գ. Բերրերյան  
Նկարիչ՝ Ռ. Ս. Զոպանկյան  
Գեղ. խմբագիր՝ Ս. Գ. Սաֆյան  
Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ժանճապանյան  
Վերատպող տրագրիչ՝ Ս. Մ. Բրվարյան

ИБ № 6218

Հանձնված է շարվածքի 29. 08. 84: Ստորագրված է տպագրության  
29. 07. 84: Ֆորմատ՝ 84×108<sup>1/32</sup>: Թուղթ՝ տպագրական № 2: Տառատե-  
սակ՝ «Նորք»: Տպագրություն՝ բարձր: 17,22 պայմ. տպագր. մամ.,  
17,32 պայմ. մերկ. թերթ, 15,0 հրատ. մամ.: Պատվեր՝ 737: Տպաքա-  
նակ՝ 30 000: Գինը՝ 65 կոպ.:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տեղյան 91:

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի  
գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆ-  
կոմբինատ, Երևան-9, Տեղյան 91:

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам  
издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-  
9, ул. Теряна, 91.



«Խաղաղությունը  
ապագայի խոսքն է,  
20-րդ դարի անունն է:

Ռե, ուրեմն,  
անդադրում խաղաղություն  
ազդարարե՞ր ամբողջ աշխարհին,  
բայց ամենք այն ամենը,  
ի՞նչ պարունակում է  
այդ վե՛ն խոսքը...

Զորաժողովի ենթարկվող  
քանակների  
անեղ ուրվականի մեջ,  
այդ ամբողջ մոսպ  
նուզմական փակխանալիայի մեջ  
զգացվում է  
անհաղթահարելի ձգտումը  
խաղաղության:  
Ես կրկնում եմ,  
ես պնդում եմ.

ո՞վ է պատերազմ ջանկանում:  
Թագավորը...

ո՞վ է խաղաղություն ջանկանում:  
Ժողովուրդները:

Ի՞նչ թվում է, որ ներկայումս  
ընդհարում է

նախապատրաստվում պատերազմի  
(որին ձգտում է անցյալը)  
և խաղաղության միջև,  
որին ծարավի է ներկան»:

Վիկտոր Հյուգո

